ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

Յ Ո Ւ Ն Ա Յ

ՄԱՑԵՆԱԳՐԱՑ

Ա

ՔՍԵՆՈՓՈՆ

9(38)
Ք-91
Արաբ.
88
ՄՍՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՈՐՍՏՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՋՈՐ ԹԱՐԳՄԱՆՆԱԼ Է

Հ. ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱԹԼՐՃԵԱՆՑ

ՅԱՇԱԿԵՐՏԱՅ ՄԵԾԻ ՀՕՐՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ԵՒ ԾԱԽՈՒՌ ԱԶՆՈՒԱԿԱՆ

ՏԵԱՌՆ ՍԵՐՈՎԲԷԻ ԳԱԹԼՐՃԵԱՆՑ

ԴՐՈՇՄԵԱԼ

3059

Ի ՎԻԵՆՆԱ

Ի ՎԱՆՍ Պ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1843 ՌՄԸՊ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅՈՒ ԴԱՍԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ոչ ինչ յաճախեցիլ վասն մատենին Քսենոփոնեայ զի կասկածեմ թէ դուցէ ի զարդախօս բանս ակամայ անկանիցիմ յորժամ զայն որ լոկն եւ առանց պաճուճանաց բանիւք հոյակապ եւ զարմանալի եղեւ, կամիցիմ գովել։ Ոչ ինչ սխալեցին որ կոչեցինն զնա մեղու ատտիկեցի. եւ ոչ Կիկերոն առ Բրուտոս գրեալ, թէ Մուսայք իսկ ի-ջեալ նորա բերանով բարբառեցան։ Սա զոր զնեստորէ Հոմերոս յառաջնում իլլիականին պատմէ, ի սա եւս ի դէպ է առնուլ թէ

ԲԱՆՔ ԵՒՍ ՔԱՂՑՐԱԳՈՑՆ ՔԱՆ ԶՄԵՂՐ ԾՈՐԱԾՈՑ Ի ԼԵԶՈՒԷՆ ՀՈՍԷԻՆ։

Հասանէր նմա յերրորդում ամի ութոներորդ երկրորդ ոլոմպիադին ծնանել յիշխանութեան Ուլթիդեմայ աթենացւոց. յայտ անտի է զի ի դեղիական պատերազմին որ աթենացւոց ընդ բիովատացւոց էր յառաջնում ամի ութոնե-

14.Ն3 - 29.08.2008թ

ղորդի ինքերորդի ողոմպիադին, զՔսե-
նոփոնեայ պատմեն ի ճակատուն լեալ,
հարկ է յանձն առնուլ թէ գոնէ քան
ամաց էր յայնժամ Քսենոփոն. քանզի
յաթենացւոց ռամկի անդ քսանամենի
զինուորէին մանկաին եւ երդմնի լինէին։

Եր նորա վարդապետ Սոկրատէս. եւ
այսպէս հաւանութեան թուի թէ յոր-
ժամ Սոկրատէս ի պեղոպոնեսացւոց
պատերազմն գնաց, չոգաւ եւ սա ընդ
նմա։ Իսկ յամին ութերորդի կռուին
սկիզբն լինելոյ էր նա ի խառնուրդս
ճակատուցն ի դեղեացւոց քաղաքին։
Յայնմ մարտի իբրեւ յերիւարէ անտի
անկանէր Քսենոփոն, Սոկրատէս առ-
եալ բառնայր զնա ի վերայ ուսոց իւրոց
եւ այնպէս ի մահուանէ ապրեցուցանէր
որպէս Ստրաբոն պատմէ ի մատենին։
Յետ այնր մարտի եկ գնաց Սոկրատաւ
հանդերձ ի քաղաք անդր աթենացւոց,
անդ փիլիսոփայութեան մտադիր լինէր
որպէս յառաջն։

Ապա ի ժամանակի զի Կիւրոս ի մարտ
պատերազմի ընդ Արտաշիսի եղբօրն
գրգռէր, վարձկանութիւնս օգնակա-
նութեան բերէր մի ի Յունաց ընդ իւր
գումարէր. էր ի զօրու անդ Պրոքսենոս

բիովտացի, որոյ եկեալ հասեալ ի քա-
ղաքն սարդիացւոց առ թագաւոր անդր
հինգարեւր զօրօք եւ հազար հինգհա-
րեւր սպառազէն զօրօք, կոչէր զՔսե-
նոփոն յիւրմէ աշխարհէն։ Նա տարաւ
ցոյց Սոկրատայ զԹուղթն յորում գը-
րեալ էր թէ գրեսցիս երբորդ բարեկամ
ազքայի, ապա հարցանէր երթայց եթէ
ոչ երթայց. նա տայր պատասխանի թէ
Ո՛եր խրատն որդեակ մարդկօրէն խրատ
է, իսկ զանյայտիցն ցՆ.պողոն պարտ է
հարցանել. քանզի երկեաւ թէ գուցէ
ընդ ակամբ հայիցին ի նա քաղաքա-
ցիք վասն ընդ Կիւրոսի բարեկամու-
թեանն, զի սրտի մտօք թիկունք օգնա-
կանութեան լեալ էր Կիւրոսի զակեդե-
մոնացւոց ընդ աթենացւոց մարտու-
ցելոց. վասն այնորիկ խրատ տայ ի
Դեղփիս երթեալ զՆ.պողոն հարցանել։
Նորա երթեալ հարցանէր թէ որում
դից զինչ նուէրս մատուցից զի աջողու-
թեամբ երթայցեմ զճանապարհն. ի-
բրեւ առ հրաման պատասխանւոյ ի դիցն
շրջեցաւ եկն յՆ.թէնս։ Աշտամբեաց
զնա Սոկրատէս թէ հիմ նախ զայն
չհարցեր ցՆ.պողոն թէ երթա՞յց. այլ
թէ զի՞արդ երթայց զայն հարցեր. բայց

որդ քանզի զայն հարցեր պարտ եւ պատշաճ զոր ինչ քեզ դիցն հրաման տուեալ է, առնել։

Յետ այնորիկ զոհս մատուցանէր Բաենոփոն եւ ինաւելեալ հասանէր առ Պրոքսենոս եւ առ Կիւրոս, եւ դառանէր նա զնոսա կազմեալ պատրաստեալ յասպատակ անդր։ Ապա Կիւրոս ի պատերազմին անկանէր, եւ զզօրավարսն նենդ գործեալ սպանին թշնամիքն։ Յայնմ վայրի խրատ տայր Բաենոփոն Յունացն վաղվաղակի զօրավարս փոխանակ սպանելոցն ընտրել. եւ ընտրեցան հազարապետք եւ Բաենոփոն այր ի Պրոքսենեայ տեղւոջէ։

Բայց թէ զինչ գործ յետ այնորիկ Յոյնք գործեցին, զոր վիշտս, քանի նեղութիւնս, որչափ աշխատութիւն եւ տառապանս կրեցին մինչեւ եկին հասին յաշխարհն Յունաց, վասն այսր ամենայնի գրեաց մի ըստ միոջէ Բաենոփոն եւթն գիրս, եւ գրոցն անուն կոչի Կիւրոսի ասպատակ։ Պատմեն թէ յորժամ Անտոնիոսն ընդ նոյն տեղիս զօրաք անցանէր եւ իբրեւ ի վայրացն եւ ի ծարաւոյ տագնապեալ կայր ի տարակուսի եւ բաղումք սովամահէին, բա-

զում անդամ բողոք բարձեալ աղաղակէր թէ Ո՞ բեւրք. յայտ իմն կամէր առնել թէ բազմապատիկ դովութեան արժանի են Յոյնք որ Ռսենոփոնտեայ զօրավարութեամբն ողջանդամք յայնմ ամենայնէ ապրեցան։

Իբրեւ այն ասպատակ արշաւանի թագաւորին այնպէս ի գլուխ ելանէր, յերկարեալ ամ մի եւ ամիսս երիս զզօրսն տայր Ռսենոփոն Թիմբրոնեայ զակեդեմոնացւոյ որ կազմ եւ պատրաստ լինէր տալ մարտ պատերազմի ընդ Տիսաբեռնեայ. եւ ինքն ընդ Ագեսիղայ զակեդեմոնացւոյ թագաւորի երթայր ի կողմանս ասիացւոցն։

Ապա պատիժս ի վերայ հասուցանէին նորա աթենացիքն յաշխարհէն ի բաց անկանել, զի չոգաւ զհետ Կիւրոսի ի ճակատս ի վերայ Արտաշիսի. քանզի զօրաւիգն օգնականութեան էին Արտաշիսի աթենացիքն եւ զԿիւրոս թշնամի հակառակորդ համարէին, որպէս կանխագոյն ասացաք։

Նա մերժեալ գնայր ի Սկիղուռնատացւոց քաղաքն. իսկ զակեդեմոնացւոց յեղիացւոց հանեալ այնու հետեւ ի բաց զաշխարհն տային նմա պարգեւ. եր-

թային ընդ նմա եւ կին նորա Փիղեսիա անուն, եւ երկու որդիք Գրիւղոս եւ Դիոդորոս որք եւ դիոսկուրացիք կոչեցան։ Իսկ Սկիղոնան քաղաք էր ոչ ինչ կարի հեռի յՈղոմպիայ։ Ընդ դայր Մեգաբիւզոս որ էր մեհենին Ա-նահտայ եփեսացւոց սպասիկ, տեսանել զհանդէս խաղալկացն, տայր Բռենոփոնեայ զարծաթին զոր առն իսկ ի նմանէ յորժամ երթայր նա ընդ Ադեսիղայ ի կողմանցն ասիացւոց ի բիովտացւոց աշխարհն։ Այն դանձ առեալ Բռենոփոն գնէր ագարակիկ մի, եւ ի նմին մեհեան եւ բազին կանդնէր, զմեհենիւն շուրջ անտառախիտ մայրիք մատաղատունկ ծառովք, եւ Սեղենոս զետ առ նմին հոսէր, գեղեցիկ ամենալից եւ բազում մրգաբերք եւ ընտիր ընտիր երէոց ի նմա, եւ ի մեհենին էր արձան յորոյ վերայ գրեալ կայր այսպէս.

«Սուրբ է տեղիս Արտեմեայ. որ ոք ունիցի զտեղիս զայս եւ առնուցու ի սմանէ շահս, զտասանորդսն ամ ըստ ամէ զոհս մատուցանիցէ, եւ ի յաւելուածոյ անտի յօրինեալ առնիցէ կազմածս մեհենին։ Ապ-

եթէ ոչ այսպէս ոք առնիցէ, այնու-
հետեւ դիցն իսկ փոյթ լիցի։

Մինչ դեռ ի քաղաքի անդ էր Ռսե-
նոփոն փիղիսոփայութեան եւ պա-
տմութեան գիրս մատենագրէր։ Բայց
ոչ թէ այնչափ ինչ զնոքօք էր մինչ զիւրսն
մոռանալ եւ զառողջութեան կենաց
անփոյթ առնել, քանզի եւ յորսս
զբօսնոյր եւ երթայր յամենաժողով
տօնս եւ ի կացուրդս դիցն անահտա-
կանաց։ Բայց իբրեւ պատերազմ ընդ
եղիացիս եւ ընդ ղակեդեմոնացիս զբը-
դռէր, եղիացիք զՍկիւղուս առեալ
կապուտ կողոպուտ առնէին. քանզի
չժամանեցին հասանել ի թիկունս ա-
թենացիքն։ Ընդ որդիքն նորա հան-
դերձ սակաւ ծառայիւք պրծեալ զան-
ձինս ապրեցուցանէին եւ անկանէին ի
քաղաքն ղեպրացւոց. ապա անտի փա-
խեալ ատեայ ելանէր Ռսենոփոն, յետ այնո-
րիկ նոքօք հանդերձ ի Կորընթոս չոդաւ
եւ անդ կայր մինչեւ ցվախճան կենաց
իւրոց։

Բայց յորժամ կամք եղեն աթենա-
ցւոցն ղակեդեմոնացւոց զօրաւիդն օ-
գնականութեան լինել, քանզի աքայ-
եցիք եւ արկադացիք եւ թեբացիք

խումբ գործեալ տային մարտ պատե-
րազմի ընդ զակեդեմոնացւոց։ Ապա-
քեաց Քսենոփոն զորդիսն իւր Ամթե-
նատան մարտընչել ի բանակին։ Իբրեւ
խառնուրդք առ Մանտինեաւ լինէին,
ի պարտութիւն մատնեցան զակեդեմո-
նացիքն. Դիոդորոս ողջանդամ ի ճա-
կատուէ ելանէր ոչ ինչ արժանի յիշատա-
կի գործ գործեալ. բայց Գրիւղոս ար-
ժանի ըստ հօրն քաջութեան գտանէր
եւ զԱրպամինոնդաս ապանեալ պատեալ
ի բազմամբոխ թշնամեացն քաջու-
թեամբ մեռանէր։ Գուժկան հասանէր
առ Քսենոփոն յորժամ զոհս ի մեհե-
նին առաջի ամբոխին մատուցանէր թէ
երէց որդին առ Մանտինեաւ ի ճակատու
անկաւ։ Իբրեւ զայն բան լուաւ, չե-
թող զսպան, այլ զպսակն միայն ի
գլխոյն ի բաց դնէր, քանզի պատմեն
թէ պսակ ի գլուխ զոհս մատուցանէր։
Բայց իբրեւ եհարց թէ որ գունակ ան-
կաւ եւ լուաւ թէ ի պատերազմելն սպա-
նաւ, առ եդ միւսանգամ զպսակն ի
գլուխ իւր։ Այլք ասեն թէ եւ ար-
տասուեաց իսկ ոչ ընդ օրհասն նորա,
այլ այսպիսի ինչ եւեթ արժանի ըստ
առնն առաքինութեան բարբառ արձա-

կեալ թէ Յորժամ ծնայ ես զնա գի-
տէի թէ մեռանելոց էր։

Բայց զի՞ իսկ երկայնիցեմք զբանս,
քանզի մատեանս իսկ նորա, զնորա
մատցն առաքինութենէ յայտ առնի-
ցէ։ Քանզի դոյն իսկ ի նմին բազում
առաքինութեանց հրահանգք որ ամե-
նեւին քրիստոնէից վայել իցեն. զի
զամենայն առաքինութեան որ առ ծա-
ռայս է, զհանգամանս ի նմին գտանէ
տէր այր, մանաւանդ զբարս քաղցունս
առ ծառայս. վասն որոյ յիրաւի եւ
յարժանի կշռամբիցէ Կիկերոն զիւր զեղ-
բայրն թէ յետ զՌաենոփոնեայ Կիւրոսի
խրատու գիրան ընթեռնլոյ, տակաւին
ոչ ուսաւ թէ որպէս մարթիցի զանձն
սիրելի իշխանաւորացն առնել։

29.08.2008

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՎԱՄՆ ԱՄԵՆԱՑՆԻ ԶՈՐ ԶԿԻՒՐՈՍԷ ԳՐԵԱՑ ՔՍԵՆՈՓՈՆ

ՎԱՄՆ Քսենոփոնտեայ կենաց բաւական են որ ասացանս։ Այժմիկ եկեսցուք ի խնդիր ճշմարտութեան գրոց Կիւրոսի խրատու, քանզի վասն նորա բազում հակառակութիւն կրի։ Որք զԿիւրոսի պատմութիւնն գրեցին սոքա են Երոդոտոս, Կտեսիէս, եւ Քսենոփոն. կէսք զառաջինն արժանի հաւատարմութեան համարին, եւ կէսք զՔսենոփոն։ Մեք գերկոցունց կողմանց զպատասխանիս մի ըստ միոջէ կարդեսցուք, քանզի այս իսկ ճշմարտասէր մտաց է մի զհակառակորդաց կարծիս նուազեցուցանել։

Հին իմն կարծիք են անդբատին ի [1] Պղատոնի ժամանակաց թէ որ ինչ յայսմ մատենի պատմէ Քսենոփոն առասպելք են։ Յիշատակէ եւ [2] Ա թենէոս զՊղատոնի բանս յորժամ զթշնամութենէն որ էր Քսենոփոնտեայ ընդ Պղատոնի, պատմիցէ։ Մեւս եւս վկայութիւն ի [3] Կիկերոնեայ բանից, որ թերեւս ըզ-Պղատոնի կարծեաց զհետ երթեալ ասէ. Կիւրոս ի Քսենոփոնտեայ ոչ եթէ առ հաւատ պատմութեան գրեցաւ, այլ ի կերպարանս արդարակորով տերութեան, զոյր ցածութիւնն խառն ընդ ընկերասէր բարոյից փիլիսոփոսն ցուցանէ։ Նմին հանդոյն եւ [4] Աւսոնիոս. Կամէի, ասէ, թէ ի մեր իսկ ժամանակս գոյիր, Քսենոփոն ատտիկեցի, եթէ առնոյր յանձն իրացս բնութիւն. որ ի պատմելն քում զԿիւրոսի առաքինութիւնս ըստ ըղձանալոյ եւ ոչ եթէ ըստ պատմութեան յօրինեցեր. յորժամ ասիցես ոչ որպիսի ոք նայն

էր, այլ որպիսի ինչ ոք պարտէրն լինել։ Ի-
ցեն ոմանք որ ի նոցա բանս հայեցեալ զնոյն
կարծիս կարծեն որպէս [5] Յովսեփոս Սկաղիգէր,
եւ Դի. Պետաւիոս, եւ [6] Սեթոս Կաղուիսիոս,
եւ [7] Գերարդ Վոսիոս եւ այլ բազումք։ Բայց
զի սոքա ոչ ինչ կասկած ստուգեան ի կարգէ
պատմութեան Քսենոփոնեայ մարթեն ցու-
ցանել, զայն յայտ յապա արասցուք։

Արդ վասն Պղատոնի տացուք պատաս-
խանի թէ ըստ բազմացն կարծեաց թշնամու-
թեամբ էր նա ընդ կողմն Քսենոփոնեայ. եր-
կրորդ անգամ թէ ինքն իսկ Պղատոն կարծեաց
եւ կասկածանաց բարբառի որպէս յայտ իսկ
ի բանից է. երրորդ անգամ զի թէպէտ եւ
ոչ կարծեաց այլ հաստատութեամբ բարբա-
ռէր, սակայն տակաւին ի դէպ էր թերա-
հաւատ ի նմանէ լինել յորժամ զՔսենոփո-
նեայ կամէր խօսել։ Քանզի [8] նա առ սոկրա-
տեանսն բազում անհաւատ կարծեաց ախտա-
նայր. եւ ոչ Քսենոփոն միայն այլ եւ [9] Սո-
կրատէս զայն ի բիծ տանէր նմա զի բազում
ինչ խառնիխուռն խօսէր եւ ըստ իւրոց կա-
մացն յօդէր. վասն այնորիկ չէն ինչ զարմանք
թէ [10] զՔսենոփոնեայ գովութիւնն անարժան
կարծեաց ջանայր նուազել։

Նա աւանիկ ի Պղատոնի բանից այսչափ
ինչ մարթի ի միտ առնուլ, թէ նա ոչ իբրեւ
զՔսենոփոնն այլ այլ ինն ազգ ածէր զմտաւ
վասն խրատու եւ կրթութեան Կիւրոսի. եւ
այնպէս մեծ ինն եւ այս հաստատութիւն է
հաւատարիմ զհինն պատմութեանն համարե-
լոյ, զի եւ ոչ կասկածանաց եւ կարծեաց կա-
բաց այրն հաստատութեամբ վճիռ բերել,
թէպէտ եւ մեր ի խաբէութիւն էր եւ ի յան-
դիմանութիւն։

Իսկ զՍիկերոնեայ վասն այսց գրոց բանս
զոր իւր ամբութիւն համարի ընդդիմակաց

կողմն, պարտ էր նոցին քաջ յուզել, զի ոչ եթէ զպատմութենէն ինչ գլխովին ասիցէ Կիկերոն այլ զվարուց եւ զբարուց զոր Կիւրոսի գրիցէ Քսենոփոն. եւ եթէ մանր ոք միտ բանիցն դնիցէ, վաղվաղակի առնու ի միտ։ Եւ զԱւսոնեայ նոյն բանք են։

Բազումք են եւ յարանց իմաստնոց որ զսոցին կարծեաց զհետ գնացին, որոց սակի են [11] Ոսերիոս, [12] Դուպինոս, [13] Բոսուեթիոս, [14] Պրիդեաւքսիոս, յորս պարտ է եւ [15] զԿղ. Քարպենտերիոս համարել։ Զայլոց եւս բազմաց անուանս դանդաղիմ հարկանել ի նամակի. քանզի ոչ այնր է որ զճշմարտութիւն սիրիցէ խառնիխուռն զանձն յուրուք վկայութիւն ապաստան առնել. զվկայութիւնան ես արժան համարիմ կշռել եւ ոչ թուել։ Արդ այսուհետեւ ընդ ուղղորդ ճանապարհն եկեսցուք, տեսցուք թէ զինչ Քսենոփոն պատմիցէ եւ զինչ Երոդոտոս կամ զինչ Կտեսիէս. զի ի պատմութեանն համեմատութենէ ի մէջ դայցէ ճշմարտութեան ընծայութիւն։

Արդ աշխատութիւն յանձն առից վասն ճշմարտութեանն, մանաւանդ վասն այնորիկ զի անկ եւ ի գրոց սրբոց պատմութիւնն է. եւ թարգմանեալ բերիցի ի մէջ զԵրոդոտայ վասն Կիւրոսի բանս, եւ է այսպիսի ինչ։

Ամասարիս, ասէ, թագաւորեալ ամս քառասուն խառն ընդ ամացն զորս Սկիւթացւոց տիրէր, վախճանի։ Զթագաւորութիւնն պայազատէր Աժդահակ Կիաքսարեայ որդի. որում լեալ, ասէ, դուստր մի որում անուն կոչիցի Մանդանէ. եւ երազ ես պատմէ զնմանէ տեսեալ, եւ զահի հարեալ նորա յարհաւրաց անտի չտայ զդուստրն՝ Մարաց կնութեան, այլ առն ումեմն պարսկի որում Կամբիւսէս անուն էր։ Եւ յետ սակաւ բանից զնովիմբ

ածեալ յարէ[16] թէ եւ մեւս եւս տեսիլ տեսա-
նէր Աժդահակ եւ զահի հարեալ երկընչէր.
պատմէր, ասէ, զիրան երազագիտացն, ան-
դէն առաքեալ կոչէր ի Պարսից աշխարհէն
զդուստրն մինչդեռ յղի էր, եւ իբրեւ եհաս,
ունէր զնա ի պահեստի, զի կամէր զմանուկն
որ ի նմանէ ծնանիցի, սատակել. քանզի ի
տեսլենէ անտի երազոյն մոգուց երազագէտքն
գուշակէին, թէ որ ի դստերէ անտի որդի
լինիցի փոխանակ նորա թագաւորելոց է։
Քանզի այսմ ամենայնի զդոյշ լինէր Աժդա-
հակ, իբրեւ ծնաւ Կիւրոս կոչէր զԱրպագոս
զայր ընտանի եւ հաւատարիմ քան զամենայն
Պարս եւ զանդերձապետ իւր եւ խօսէր ընդ
նմա ըստ ամենայն բանից այսպէս. Արպագէ,
գործ ի ձեռն տամ ես քեզ, մի իցէ եթէ
անփոյթ առնիցես. մի զիս տարագիր հանի-
ցես եւ այլոց ցանկացեալ, ապա յետոյ դու
քեզէն քոյին ընդ անձին մոռանիցես։ Առ զոր
Պանդանէն ծնանիցի զմանուկն եւ տար ընդ
քեզ եւ ապա սպան, եւ թաղեա զայն գոյն
օրինակի որպէս դու կամիցիս։ Բայց Ար-
պագոս, ասէ, իբրեւ ետես զմանկիկն զարդա-
րեալ ի զարդ մահու, գնաց լալով յապա-
րանան, եւ երթեալ խօսէր ընդ Իւրումուրոյն
կնոջն զամենայն բանն զոր խօսեցաւ Աժդա-
հակ։ Ասէ կինն ցնա. զինչ խորհիցիսդ առ-
նել ի ժամանակի սատ յայսմիկ։ Նա տայր
պատասխանի, թէ ոչ որպէս Աժդահակն թէ-
պէտ եւ յանմտութիւն հատանիցի եւ եւս չար
մոլիցի քան որչափ այժմ մոլի կողի, սակայն
չառիցյանձն հնազանդել կամաց նորա եւ
ոչ այնպիսում սպանութեան սպասաւոր լի-
նիցիմ. եւ բազում պատճառք են չսպանա-
նելոյ իմ զնա. քանզի իմ իսկ ազգակից է
մանուկն, եւ Աժդահակ ծերացեալ է եւ ան-
ժառանգ յարու մանկանէ։ Իսկ եթէ յետ

նորա վախճանելոյ, հարստութիւնն ի դուս-
տըրն անցանիցէ, զորոյ այժմ զորդին յիմ
ձեռն սպանանէ, զինչ այլ ինչ քան զայն ինձ
չար տադնապ կայցէ. բայց վասն ինձ ի զգու-
շութեան լինելոյ, պարտ է մանկանն մեռա-
նել. պարտ եւ պատշաճ է միում ումեք յա-
րանց անտի Աժդահակայ սպանող լինել մա-
նկանն եւ ոչ յիմոց աստի։ Զայս ինչ խօսե-
ցաւ եւ անդէն առաքէր պատգամաւոր առ մի
ոք յանդիորդացն Աժդահակայ որ զընտիր ըն-
տիր ճարակաց ունէր եւ լերինս երէովք, եւ
անուն էր նորա Միտրադատէս, ընակէր նա
ընդ իւրում ծառայակցին, եւ կնոջն անուն
կոչէր Կիւնով ըստ յոյն լեզուի, իսկ ի Պա-
րսից լեզուն Սպակոյ, քանզի զշունն Պարք
սպակ անուանեն։ Իսկ լերանցն ստորոտքն յո-
րում վայրի արօտքն էին անդուոց անդիորդին
ի հարաւակողմն կողմանէ էին Ագբատանաց-
ցւոց աշխարհին եւ Եւքսինոս ծովու։ Զի Պա-
րսից աշխարհն առ Սառպիրացւոց կողմամբն
լեռնային է կարի յոյժ, բարձաւանդակ եւ
անտառախիտ, իսկ այլ եւս Պարսատան ամե-
նեւին դաշտային է։ Իբրեւ եկեալ հասանէր
անդիորդն մեծաւ տադնապաւ, խօսէր Ար-
պակէս այսպէս. Հրաման տայ քեզ Աժդահակ
զմանուկդ զայդ առնուլ եւ դնել զնա յանա-
պատի լերանց, զի վաղվաղակի սատակիցի.
եւ պատուիրեաց այսպիսի ինչ ասել քեզ,
եթէ ոչ սպանանիցես զնա, այլ որդունակ ա-
պրեցուցանիցես զնա, չարաչար սատակումն
ընդունէցիս. եւ իմ հրաման առեալ է դի-
տել զիրան։ Զայն լուեալ անդիորդին առ
զմանուկն եւ դարձաւ յետս ընդ նոյն ճանա-
պարհ եւ երթեալ հասանէր ի հանդրուանան։
Ապա դէպ լինէր զի կին նորա ի նմին աւուր
որդի ծնանէր մինչ անդիորդն երթեալ ի քա-
ղաքն։ Եւ էին երկոքեան ի հոգս եւ ի տա-

տամուրեան վասն միմեանց. նա երկրնչէր
վասն կնոջն ծնընդեան. իսկ կինն զի չէր սո-
վոր Արպագէս կոչել զայրն նորա. եւ իբրեւ
եկեալ անդէն եկաց առ նմա, յորժամ առանց
ակնկալութեան եսես զնա կինն, հարցանէր
թէ զի՞ է զի կոչեաց զնա վաղվաղակի Ար-
պագոս։ Եւ նա ասէ. Կին դու ի քաղաք եր-
թեալ տեսի եւ լուայ զոր չէր իսկ պարտ տե-
սանել եւ ոչ լինել ի մեր տեարս։ Համօրէն
տուն Արպագայ լի էր ողբովք. եւ ես սքան-
չացեալ մտի ի ներքս. եւ իբրեւ մտի ի
ներքս, ապա հայեցեալ տեսի զմանուկն զի
անկեալ դներ եւ ճչէր զարդարեալ ոսկւովք
զարդուք եւ հանդերձիւք պէսպէս նարաւ-
տուց։ Իսկ Արպագոս իբրեւ եսես զիս, հրա-
ման ետ փութանակի առնուլ զմանուկն եւ եր-
թալ դնել ի լերինսն ի մէջ դազանաց։ Ա-
սէր թէ Աժդահակ է որ զայս հրաման ետ
ինձ, եւ բազում ինչ սպառնայր եթէ ոչ առ-
նիցեմ. եւ իմ առեալ բերի, կարծեալ այս-
պէս թէ մոյ ուրուք յընտանեաց անդի որդի
է, քանզի չառի իսկ ի միտ թէ ուստի էր։
Բայց ի զարմացման լինէի տեսեալ ոսկւովք
հանդերձիւք զարդարեալ. լուեալ զձայն աշ-
խարանացն. եւ անդէն զճանապարհայն հար-
ցանէի ցսպասաւորն զամենայն բանն, որ յու-
ղարկէրն իսկ զիս արտաքս քան զքաղաքն, եւ
ետ ցիս զմանուկն. եթէ Մանդանեայ որդի
է Աժդահակայ դստեր եւ Կամբիւսեայ պար-
սկի, եւ Աժդահակ պատուէր ետ սպանանել.
արդ սա նա է։ Իբրեւ զայս ասէր անդիորդն,
բացեալ ցուցանէր։ Իսկ կինն իբրեւ եսես
զմանուկն յաղթ եւ բարենշան եւ գեղեցիկ,
զարտասուս հարաւ, եւ բուռն հարեալ զծըն-
դաց առն իւրոյ, աղաչէր մի յայնպիսի տագ-
նապ զմանուկն հասուցանել. եւ նա բայ ասէ
չէ մարթ չէք հնար այլազգագոյն ինչ առնել,

քանզի եկեսցեն հասցեն դէտք յԱրպագայ դիտել զերսն, եւ չարաւ կորընչիցիմ եթէ զայն ոչ առնիցեմ։ Իբրեւ չկարաց զմիտս հաճել զառնն երկրորդ անգամ խօսէր կինն այսպէս զսոյն ձեւ։ Որովհետեւ չկարեմ ածել զքեզ ի հաւան չառնել ընկեցիկ, դու զայս ինչ արա, եթէ ամենեւին հարկ իցէ երեւել մանկանն ընկեցիկ եղելոյ. քանզի ծնայ եւ ես, եւ ծնայ մեռեալ. զնա առ տար, եւ զԱժդահակայ դրստեր զորդին իբրեւ զմեր ծնունդ անուցանիցեմք. եւ ապա ոչ դու անիրաւ դատանիցիս ի տեարս քո եւ ոչ մեք անձանց խորհուրդ չարութեան խորհիցիմք. զի մեռեալն արքունական պատանաց արժանի լինիցի եւ մի մանուկն յարեւէն անկանիցի։ Զմտաւ ած անդիորդն, թէ առ այն որ առաջի կայր բարւոք խօսեցաւ կինն, եւ առնէր անդէն այնպէս. զմանուկն զոր ած ապանանել, զնա ձեռն ի ձեռն տայր ցկինն, եւ զիւրն զդիակնն առեալ արկանէր յանօթ անդր յորում զմեւսն տանէր, զարդարէր ամենեւին ի զարդ միւսոյ մանկանն եւ տարեալ յանապատ տեղի լերանցն դնէր։ Իբրեւ օր երրորդ հասանէր մանկանն ընկեցիկ եղելոյ, չոգաւ ի քաղաք անդր անդիորդն թողեալ զմի ոք պահապան ի խաշնարածաց անտի, եւ երթեալ առ Արպագոս, պատրաստ եմ ասէ ցուցանել զմանկան դին։ Իսկ. Արպագոս առաքէր հաւատարիմս իսպառաւորաց իւրոց եւ նոքօք տեսանէր եւ թաղէր զորդի անդիորդին։ Նա թաղեցաւ, իսկ զայն որ յետ այնորիկ Կիւրոսն կոչեցաւ, առեալ անուցանէր կին անդիորդին, եւ այլ ինն անուն եդեալ կարդայր զնա եւ ոչ Կիւրոս։

Յորժամ տասնամեայ էր մանուկն, այսպիսի ինչ գործ ի դլուխ ելեալ նմին դուշակ լինէր։ Խաղայր ի դեղջն յորում եւ անդուոցն պառակքն էին, եւ խաղայր ընդ այլոց եւս հա-

սակակցացն յանցս ճանապարհացն, եւ մա-
նըկտին որ խաղային, ընտրէին զնա իւրեանց
թագաւոր. զոր անուանեալ կոչէին անդիորդի
որդի. եւ նա կարգէր ի նոցանէ զոմանս ճար-
տարապետս շինուածոց ապարանիցն, եւ զո-
մանս սպասաւորս, եւ զմի ոմն ի նոցանէ ակն
արքայի. եւ միւսումն գործ ի ձեռն տայր ըզ-
զարդացն բերել. զի իւրաքանչիւր մի մի գործ
հրամայէր։ Մի ոմն ի մանկտւոյ որ խաղային,
որ Արտեմբարեայ ուսուր էր առն աւագի ի
Մարաց աշխարհին, քանզի չարար զայն որ ի
Կաւոսէ հրամայեցաւ, հրաման տայր անդէն
այլոց մանկտւոյ զնա ձերբակալ կապեալ ու-
նել։ Ի մանկանցն անսալ, խոտիւ գանալից
տանջէր զմանուկն։ Եւ նա վաղվաղակի իբրեւ
փոխեցաւ, որպէս թէ անարժանս ինչ անձինն
կրեալ. եւ երթեալ ի քաղաքն եւ զՍիւրոսէ
ասէր, քանզի չեւ եւս էր այն անուն, այլ
յորդւոյ Աժդահակայ անդիորդին։ Իսկ Ար-
տեմբարէս մեծաւ ցասմամբ առ Աժդահակ
հասանէր մանկամբն եւ անարժան իրս կրեալ
պատմէր, ասէ. Արքայ ի ծառայէ քումմէ յան-
դիորդի որդւոյ այսպէս թշնամանեալ նախատ
եղէ. եւ զուս մանկանն ցուցանէր։ Իբրեւ
լսէր եւ տեսանէր Աժդահակ, կամէր իմն պա-
տուհասակոծ զմանուկն առնել վասն Արտեմ-
բարեայ մեծարանս դնելոյ, առաքեալ կոչէր
զանդիորդն եւ զմանուկն. իբրեւ եկին հասին
երկոքեան, հայեցեալ Աժդահակայ ընդ Կիւ-
րոս, ասէ. Դու որ այնպիսւոյ մանուկդ էիր
իշխեցեր ժպրհութեամբ զմանուկն դորա որ
առաջին բարեկամ է իմ, այնպէս թշնամա-
նել։ Եւ նա տայր պատասխանի այսպէս.
Տէր ես զայդ ամենայն յիրաւի գործեցի. զի
մանկտին որ ի գեղջէ անտի էին խաղս խա-
ղային, ի նոցանէ մի ոմն եւ սա էր եւ զիս ա-
ռին կացուցին իւրեանց թագաւոր, քանզի ի

թագաւորութիւն պիտանացու թուեցայ նոցա։ Արդ այլ մանկանին զհրամայեալսն ի գլուխ հանէին, բայց սա ստունդանէր եւ առ ոչ ինչ գրէր, եւ վասն այնորիկ ընկալաւ ըզպատիժ պատուհասին։ Թէ վասն այսր արժանի ինչ տանջանաց իցեմ, աւասիկ հասեալ կամ։ Իբրեւ զայն խօսէր մանուկն, ծանեաւ զնա Աժդահակ. եւ նշանակ երեսացն հանդոյն թուէր եւ ազատագոյն պատասխանին եւ ժամանակ ընկեցիկն լինելոյ մանկան տիոցն միաբան թուէր։ Զարմացեալ սխրացեալ կայր, ցժամանակ մի անշշունջ կայր անբարբառ. հազիւ ուրեմն ի միտս լինէր. քանզի կամէր զԱրտեմբարէս արձակել զի զանդիորդն միայն առեալ հարցանիցէ. ասէ, Ես, Արտեմբարէս, զայս արարից, զի դու եւ որդեակն քո չիցէք ամբաստան զիմեքէ։ ԶԱրտեմբարէս արձակէ, իսկ զԿիւրոս ածին սպասաւորքն ի ներքս ի սենեակն հրամանաւ Աժդահակայ։ Իբրեւ անդիորդն միայն մնաց, միայն ցմիայն հարցանէր Աժդահակ, ուստի՞ առեալ իցէ քո զմանուկդ կամ ո՞ր իսկ տուեալ իցէ։ Յինէն, ասէ, ծնաւ, եւ կինն որ զնա ծնաւ առ իս է։ Իսկ Աժդահակ. Զէ քաջ խորհուրդդ, ասէ, ի մեծ տագնապ հասանել վասն խոստովանութեան. Իբրեւ զայս ասէր, սպասաւորացն նշանակէր ձերբակալ առնել. նա իբրեւ տագնապեցաւ, ապա զբանն որ ինչ էր զայն հան ի վեր. իսկզբանէ սկիզբն արարեալ մի ըստ միոջէ պատմէր ճշմարիտ, ապա յողոք անկեալ աղերսէր եւ խնդրէր ներել թողութեան։ Բայց Աժդահակ յետ անդիորդին յայտ զճշմարտութիւնն առնելոյ, զայն փոքր ինչ համարէր։ Առաւելագոյն Արպագայ մեղ դնէր, եւ հրաման տայր սպասաւորացն զԱրպագէս կոչել։ Արպագէս իբրեւ եկեալ հասանէր, հարցանէր Աժդահակ. Արպագ

որով օրհնութիւն սպաներ զմանուկն զոր քեզ
ետու, զայն որ յիմէ դատերէ ծնաւ։ Ար-
պագէս իբրեւ ետես ի ներքս զանդիորդն ոչ
շրջեցաւ ընդ սուտ ճանապարհն զի մի յան-
դիմանեալ եւ ըմբռնիցի, այլ ասէր այսպիսի
ինչ օրինակ. Ցորժամ զմանուկն առի արքայ,
խորհեցայ ի մտի իմում զմտաւ ածի թէ զինչ
օրինակ արարիցէ քեզ ըստ միտս, եւ ես լինի-
ցիմ առաջի քո առանց յանցանաց, մի դըս-
տերն քում եւ քեզ լինիցիմ դահիճ. արդ
այսպէս խորհեցայ առնել. կոչեցի զանդիորդդ
զայդ, ետու զմանուկն ի ձեռս, եւ ասեմ թէ
քո իսկ հրաման տուեալ է զմանուկն սպա-
նանել. եւ զի զայդ ասէի ոչ ինչ սուտ խօ-
սէի, քանզի դու իսկ այսպէս հրամայեցեր։
Բայց ետու զնա նմա, այսպէս պատուէր
տուեալ ընկենուլ ի լեառն մի յանապատ եւ
կալ պահել մինչեւ վախճանիցի. բազում ինչ
սպառնալիս յաճախեցի դմա եթէ զայն ա-
մենայն ի գլուխ հանիցէ։ Իսկ իբրեւ յետ կա-
տարելոյ նորա զհրամանն, մանուկն վախճա-
նեցաւ, յղեցի զհաւատարիմս ի ներքինեացն
եւ տեսի ի ձեռն նոցա եւ թաղեցի։ Արդ որ
ինչ վասն իրացս այսոցիկ այս ինչ է, արքայ,
եւ այսպիսի մահու մանուկն վախճանեցաւ։

Արպագոս ճշմարտիւ հան զբանն ի վեր։
Իսկ Աժդահակայ թագուցեալ զայն որ ի
ներքս ցասումն էր վասն իրացն եղելոց, նախ
որպէս յանդիորդէն ինքն զիրսն լուաւ միւս-
անգամ պատմեաց Արպագայ. եւ յետ այ-
նորիկ իբրեւ զայն պատմեաց, զիջաւ եւ ասէ.
թէ մանուկն տակաւին կենդանի է, եւ իրքն
որ եղեն բարւոք են։ Զի ընդ այն որ ի մա-
նուկ անդր գործեցաւ ծիւրեալ ծնդէի, եւ
յիմէ դատերէն կշտամբէի։ Բայց արդ քանզի
շրջեցաւ պատահարն, դու զքո որդիդ յղեա
այսր առ մանուկն նոր. եւ զի վասն մանկանն

փրկութեան զոհս կամիմ մատուցանել քան-
զի նոցա իսկ վայելէ այն պատիւ, եկ առ իս
յընթրիս։ Արպագոս իբրեւ զայն բան լուաւ,
երկիր եպագ եւ յանձն իւր առաւել զուար-
ճացեալ լինէր զի ոչ ինչ յանցեաւ ի պատ-
շաճիցն եւ յընթրիս եւս կոչեցաւ։ Յարու-
ցեալ չոգաւ յապարանսն. իբրեւ եմուտ վաղ-
վաղակի, քանզի որդի մի է նորա միամօր
լեալ ամաց երեքտասանից ուրեմն, զնա ա-
ռաքէ հրաման տուեալ երթալ առ Աժդա-
հակ եւ առնել զոր ինչ նայն հրամայիցէ. եւ
ինքն երթեալ պատմէր ուրախութեամբ կնոջն
որ ինչ եղեւն։ Իսկ Աժդահակ, իբրեւ եհաս
առ նա Արպագայ որդին, սպան զնա եւ ան-
դամ անդամ յօշէր, զկէսն արկանէր ի խո-
րովս եւ զկէսն եփէր. եւ իբրեւ յօրինեաց,
պատրաստեալ պահէր։ Իբրեւ ընթրեացն
ժամն էր, եկին կացին այլ եւս կոչնականք
եւ Արպագոս, այլոցն եւ Աժդահակայ գլխո-
վին սեղանք առաջի յօրինէին լցեալ գառանց
մսովք. իսկ Արպագայ իւրոյուրոյն որդւոյ
միս բաց միայն ի գլխոյն եւ ի ծայրից ձե-
ռացն եւ ոտից, քանզի զայն ամենայն ի ծա-
ծուկ թագուցեալ եդին. իբրեւ յադեցաւ Ար-
պագոս ի կերակրոյ անտի, հարցանէր Աժդա-
հակ թէ եղե՞ր ուրախ սեղանովս, եւ յասել
Արպագայ թէ յոյժ ուրախ եղէ, բերին ա-
ռաջի որոց հրաման իսկ առեալ էր, զգլուխ
մանկանն ծածկեալ, եւ զձեռս եւ զոտս։ Եւ
որ մերձն կային ասէին թէ բա՛ց ա՛ռ զինչ կա-
միցիս ի նոցանէ. իբրեւ յանձն առ Արպա-
գոս եւ բացեալ ետես զմանկանն նշխարս
թէպէտ եւ ետես ոչ ինչ սքանչացեալ սխրա-
ցաւ, այլ համբեր յանձն իւր։ Հարցանէր
զնա Աժդահակ թէ դիտիցե՞ս թէ զորոյ դա-
զանի միս կերար. եւ նա, ասէ, դիտեմ, եւ
պարտ եւ պատշաճ է թէ ամենայն ինչ զոր

արքայ կամիցի հաճոյ լինիցի։ Յորժամ զայս խօսեցաւ առ զնչխարս մեղն եւ չոգաւ անդրէն յապարանսն. որպէս ինձ թուի կամէր իմն անդէն թաղել։

ՅԱրպագայ այսպէս վրէժ առ Աժդահակ։ Բայց զԿիւրոսէ զմնաւ ածեալ կոչէր զնոյն կախարդս ի կախարդացն, որ զերազն նորա այնպէս ընտրեցին. իբրեւ հասին, հարցանէր զնոսա Աժդահակ թէ զիարդ ընտրեցին զտեսիլն. եւ նոքա ըստ նմին բանից բարբառեցան, ասեն, թէ պարտ է մանկանն թագաւորել եթէ կենդանի կայցէ եւ ոչ վաղ մեռանիցի։ Եւ նա տայր նոցա պատասխանի զայս գոյն օրինակ. Է մանուկն եւ կայ իսկ կենդանի, եւ յորժամ յանդի էր որ ի գեղջէ անտի մանկտին էին, թագաւոր կացուցին. եւ նա զամենայն զոր ճշմարիտ թագաւորքն առնեն, արար եւ վճարեաց, քանզի սպասաւորս եւ բարեպանս եւ համբաւաբերս եւ զայլն ամենայն յարդարեալ յօրինէր. բայց արդ ձեզ զի՞նչ թուիցի, ցո՞ր վայր իրքն հասանիցեն։ Ասեն մոգքն. Եթէ կենդանի է մանուկն եւ թագաւորեաց ոչ ի սեսչութենէ իմեքէ, վասն դորին իսկ քաջալերեաց եւ քաջ լեր, քանզի ոչ եթէ այսուհետեւ երկիցս անգամ թագաւորեսցէ. քանզի եւ ի մանուկնսն բազում անգամ ի գլուխս ելին պատգամք ինչ ի պատգամաց, եւ որ յերազոց անտի են, ի տկար ինչ վճարին։ Տայր նոցա Աժդահակ պատասխանի. Եւ ես ինքնին զնոյն ածեմ զմտաւ թէ քանզի թագաւոր անուանեցաւ մանուկն, եւ ի գլուխս երազն, եւ չէ ինչ այսուհետեւ վնաս մանուկն. բայց սակայն դիտեցէք տեսէք եւ տուք ինձ խրատ թէ որ զգուշաւոր իցէ եւ իմում տանս եւ ձեզ։ Ասեն մոգքն. Եւ մեզ արքայ օգուտ է թէ կայ ի հաստի՛ քո իշխանութիւնդ. քանզի այնպէս

օտարանայ տէրութիւն եթէ ի մանուկդ անցանէ որ պարսիկ իսկ է. եւ մեք քանզի մարք իցեմք ի ծառայութիւն վտարանդիմք եւ չհամարիցիմք ինչ առաջի Պարսից, քանզի օտարք եւ պանդուխտք իցեմք։ Բայց եթէ դու կայցես մնայցես ի թագաւորութեան քում, քանզի մեր իսկ քաղաքացի ես, եւ իշխեմք ի կողմն մի եւ մեծամեծ եւս պատիւս ի քէն ունիմք. այսպէս ամենեւին իսկ քեզ եւ քում իշխանութեանդ մեզ պարտ է զդոյշ լինել։ Եւ այժմ եթէ ահագին ինչ տեսանէաք զբնաւ պատմէաք քեզ. բայց արդ զի ի թեթեւ ինչ եւ երազն, մեք համարձակիմք, եւ քեզ եւս զդոյն ասամք հրաման. բայց զմանուկն յաչաց քոց ի բաց ի Պարսս յղեա առ ծնանելիսն։ Զայն լուեալ Աժդահակայ զուարճանայր զուարթանայր, զԿիւրոս կոչէր եւ խօսէր զայս ձեւ զսոյն դոյն. Մանուկ դու ես զքեզ վասն տարապարտ տեսլեան երազոց զրկեալ զլացայ, այլ քոյովք հրամանօք գերիվերոյ եղեր. այժմիկ երթ դու ի Պարսս, յուղարկաւորս եւս միանգամայն արձակեցից. անդր երթեալ զհայր եւ զմայր գտանիցես, ոչ ըստ Միտրադատայ անդիորդի եւ ըստ կնոջ նորա։

Զայս իբրեւ խօսեցաւ Աժդահակ արձակեաց զԿիւրոս. ի հասանել նորա յապարանս Կամբիւսեայ, ընկալան զնա հայրն եւ մայրն եւ իբրեւ ընկալանն եւ իմացան, գիրկս արկին, քանզի այսպէս գիտէին թէ յայնժամ իսկ եւ իսկ վախճանեցաւ. հարցանէին թէ որպէս որդունակ գերիվերոյ եղեւ։ Նա պատմէր նոցա եւ ասէր թէ յառաջն ոչ ինչ գիտէի այլ բաղում իւիք սխալեալ էի, բայց ի ճանապարհին ազդ եղեն ինձ ամենայն որ ինչ անցք անցին ընդ իս. քանզի համարէի թէ որդի իցեմ անդիորդին Աժդահակայ, եւ

ի ճանապարհի զամենայն յուղեկցացն առի ի միտ. եւ անանէի, ասէ, յանդիւորդի կնոջէն. եւ զնա համակ գովէր, եւ էր նորա ամենայն բանից նշանակ Կիւնոմն։ Իսկ հօրն եւ մօրն, առեալ զանուանն զայն, զի յաստուածակոյս կողմանէ համարեցաւ Պարսից թէ կենդանի մնացեալ իցէ մանուկն, հանին համբաւ թէ զԿիւրոս, յորժամ ընկեցիկն եղեւ, շուն սնոյց։ Եւ յայնմ հետէ համբաւն տարածանէր։ Իբրեւ յարութիւն հասանէր Կիւրոս եւ քան զհասակակիցսն ազնուագոյն երեւէր եւ սիրուն, առաքէր պատարագս Արպագոս եւ գրգռէր, քանզի ցանկայր յԱժդահակայ վրէժ խնդրել. զի տեսանէր իսկ թէ յանձնէ, քանզի ինքն շինական էր չկարէր վրէժ առնուլ։ Իբրեւ ետես նա զԿիւրոս աճեցեալ եւ զարգացեալ, առնէր զնա զօրաւիդն օգնականութեան, զԿիւրոսի վիշտն իւրոց վրշտացն համեմատէր. բայց յառաջ իսկ քան զայն նա զայն յարդարէր զի դառնագոյն էր Աժդահակ ի վերայ Մարացն, ի բանի առնէր Արպագոս զմի մի իւրաքանչիւր յաւագացն Մարաց, հաճէր հաւանեցուցանէր թէ պարտ է զԿիւրոս կացուցանել թագաւոր եւ զԱժդահակ հանել ի տերութենէ։ Իբրեւ զայս ամենայն վճարէր եւ պատրաստ լինէր, ապա Կիւրոսի որ անդէն ի Պարսս էր, կամէր Արպագոս զխորհուրդսն ի վեր հանել, եւ այլազգ ինչ չմարթէր յայտ առնել, քանզի էր պահ զգուշութեան պահապանացն, եւ նա հնարէր այնպիսի ինչ։ Հնարէր նապաստակ մի եւ զպորտն հերձոյր եւ ապա դնէր անդէն ի նմին գիր գրեալ որ ինչ հաճոյ թուէր, եւ միւսանգամ ի միմեանս կարեալ զպորտ նապաստակին եւ վարսն եւս տուեալ իբրեւ որսորդի միում ումեք ի հաւատարիմն ծառայից արձակէր ի Պարսս. եւ իւրով իսկ լեզուաւ

պատուէր տայր թէ ի տալն քում Կիւրոսի զնապաստակն, առա, թէ ինքնին իսկ իւրով ձեռամբք յաւշեսցէ, եւ մի ոք մօտ իցէ յորժամ զայս առնիցէ։ Իբրեւ այն ի գլուխ ելանէր, եւ Կիւրոս զնապաստակն ի ձեռն առեալ ընդ մէջ հերձանէր. եւ գտեալ ի նմին մատեան, առեալ ընթեռնոյր եւ գիրն ասէր այսպիսի ինչ. Ով մանուկդ Կամբիւսեայ, քեզ դիքն տեսուչ լինին, քանզի եւ ոչ յայնպիսի ինչ պատահար հասանէիր. արդ յԱժդահակայ ի քում ապանողէ առ վրէժս, քանզի ըստ ցանկութեան իսկ նորա դու մեռեալ էիր, բայց ի դիցն եւ յինէն կացեր կենդանի։ Զայս ամենայն կարծեմ թէ վաղ իսկ գիտես, եւ զոր դուն կրեցեր եւ որովք եան վշտացայ յԱժդահակայ, զի զքեզ ոչ ապանի այլ ետու զքեզ անդիորդին։ Դու այժմիկ եթէ կամիցիս իմոյ խորհրդոյս անսալ. ամենայն աշխարհին որում Աժդահակն տիրէ, դու իշխեսցես։ Հաւանեցո դու զՊարսիկսն զի եկեսցեն ի մարտ պատերազմի ընդ Մարաց. եւ եթէ ես յԱժդահակայ կացից զօրավար հակառակ քո կամ եթէ այլոմն ի պատուականացն Մարաց, եղիցի որ ինչ դու կամիցիս։ Քանզի նախ նոքա ապստամբեն ի նմանէ եւ ընդ քեզ միաբանեն եւ ջանայցեն զԱժդահակ սատակել։ Արդ քանզի ասա պատրաստ է ամենայն, արա դու զայդ եւ վաղվաղակի առնիցես։

Զայս լուեալ Կիւրոսի, խորհէր թէ որպէս իմաստութեան հնարիւք ածիցէ ի հաւան զՊարսիկսն ապստամբել։ Եւ զմտաւ ածեալ, զայս ինչ դիպօղ գտանէր, եւ առնէր այսպէս գրեալ ի գրի զոր ինչ կամէրն, ժողովեաց ի մի վայր զՊարսիկսն, եւ ապա տարածեալ զգիրն ընթեռնոյր եւ ասէր թէ Աժդահակ զիս Պարսից սպարապետ կացոյց. եւ արդ, ասէ, ով Պարսիկք, հրաման տամ իւ-

բաքանչիւր ումեք մանկաղ առնուլ եւ գալ։ Կիւրոս զայս ինչ պատուիրեաց։ Բազում ազգք են Պարսից, եւ զոմանս ի նոցանէ կոչեաց Կիւրոս եւ հաւանեցոյց ի բաց կալ ի Մարաց. եւ այնոքիկ իսկ են յորոց այլ եւս Պարսիկքն ամենայն կախեալ կան. Պասարգադացիք, Մարափիացիք, Մասպիացիք. ի սոցանէ Պասարգադացիքն ազնուագոյնք են, յորս եւ աքեմենիդեանքն տոհմ է, անդի ելերսիսեան թագաւորքն ծնան. իսկ այլ Պարսիկք սոքա են. Պանթիաղեացիք, Դելասիացիք Գելմանիացիքն սոքա ամենեքին արօրադիր առնեն, իսկ այլքն արօտականք են, Դայքն Մարդացիքն, Դրոպիկացիքն, Սագարտիացիքն։ Իբրեւ եկին հասին ամենեքին առեալ որ ինչ հրամայեալն էր, յայնմ վայրի Կիւրոս, զի էին վայրք ինչ ի Պարսից աշխարհին փշալից տատասկաբեր որչափ թէ ուխտեւտան վտաւան կամ բնաւ քաջ քսան, զայն տեղի հրամայէր հատանել յաւուր յայնմիկ։ Զայն գործ ի գլուխ հանեալ Պարսից երկրորդ գործ հրամայէր նոցա ի վաղիւ անդր լուանալ եւ գալ։ Յայնմ ժամանակի զամենայն զայծիս եւ զհօտս եւ զանդեայս հօրն ժողովէր Կիւրոս եւ զենոյր եւ կարգեալ կազմեալ յօրինէր զի ընդունիցի զզօրսն Պարսից. եւ յայնր վերայ գինով եւ ազնիւ հացիւ։ Ի վաղիւ անդր ի գալ հասանել Պարսից հրամայեաց բազմել ի մարդին ուրախ առնէր։ Իբրեւ ընթրիքն կատարէին, հարցանէր զնոսա Կիւրոս. թէ ո՞ր լաւ եւ ցանկալի ւցէ ձեզ որ ինչ երէկն էր եթէ որ ինչ այսօր. նոքա ասեն թէ բազում կրճիմ ի միջի է, զի երէկ ամենայն ինչ չար էր, իսկ որ այժմս են բնաւ բարի։ Զայն բան ի մէջ առեալ Կիւրոսի, զամենայն բանն ի վեր հանէր եւ ասէր. Ա՛լք պարսիկք, այս ձեզ այսպէս է. եթէ ինձ

կամիցիք անսալ եղբցին այսպիսի եւ այլ եւս բիւրուց բեւեր բարութիւնք եւ ոչ ի վաստակս ծառայութեան կայցեն. իսկ որոց ոչն հնազանդին անհամար աշխատութիւնք հանգոյն երեկի հասանիցեն։ Արդ անսացէք ինձ եւ եղիջիք ազատացեալք։ Քանզի եւ ինձ իսկ թուի թէ ծնայ ես ի դիցն պատահարաց զայս ամենայն ձեզ հասուցանել ի ձեռս, եւ զձեզ քան զարս Մարացն ոչ ինչ ապաժամն համարիմ ոչ ի պատերազմի եւ ոչ յայլ եւս իրս։ Եւ զի այս այսպէս է, ապատամբեցարուք վաղվաղակի յԱժդահակայ։

Արդ գտեալ նոցա վերակացու յօժարէին յապատութիւն ելանել. յառաջագոյն իսկ դժկամակ լեալ ընդ Մարաց իշխանութեամբ։ Իբրեւ ազդ լինէր Աժդահակայ զԿիւրոսէ թէ զայս արար, հրեշտակ առաքեալ կոչէր զնա։ Իսկ Կիւրոս հրամանն տայր հրեշտակին պատմել ելիծէ վաղ հասանիցէ առ նա, քան ինքն Աժդահակ կամիցի։ Զայն լուեալ Աժդահակայ, վառեցուցց զամենայն Մարս եւս նոցին զօրավար իբրեւ ի դից անտի ճեռաեալ զԱրպագոս կացուցանէր, քանզի մոռացօնս արար ամենայնի զոր գործեացն։ Իբրեւ Մարք խումբ գործեցին եկին խառնեցան ի մարտ պատերազմի ընդ Պարսից, ոմանք ի նոցանէ որ չէին ընդ նոսա ի բանի կռուէին, եւ կէսք միաբանէին ընդ Պարսից. եւ բազմապոյնք վատթարեալ փախստեայ ապրեալ երթային։ Յորժամ քակէր ամօթալից մարդական բանակն եւ ազդ լինէր վաղվաղակի Աժդահակայ առէր ապառնացեալ Կիւրոսի. Սակայն եւ ոչ այնպէս ուրախ լեցի Կիւրոս։ Զայս իբրեւ առէր զմոգուցն երազապէտս որ խրատն ետուն արձակել զԿիւրոս, զնոսա զփայտէ կախէր. յետ այնորիկ զորս ի քաղաքի անդ ծնացեալ Մարքն էին վառեաց զծեր եւ զմանկտի. եւ

հանեալ զնոսա եւ Պարսից ի դիմի հարեալ ի պարտութիւն մատնեցաւ. եւ ինքնին իսկ Աժդահակ կենդանոյն անկաւ ի բուռն, եւ զայնոսիկ ի Մարաց զոր ընդ իւրն եհան, կորոյս։ Իբրեւ երթայր ի գերութեան Աժդահակ, եկեալ կայր առ նմին Արպագոս, ծափ զծափի հարկանէր եւ ոտնհար լինէր եւ այլ եւս բանս կսկծելիս թշնամանաց ի նա խօսէր, եւ հարցանէր եւս նմա ըստ իւրոց ընթրեացն, յորժամ ետ նա զմարմին որդւոյն ուտել, թէ հաճոյ թուիցի՞ քեզ ծառայութիւն ընդ թագաւորութեանն։ Եւ նորա հայեցեալ հարցանէր եթէ իւր առնիցէ զկիւրոսի գործս։ Իսկ Արպագոս ասէ. Ես իսկ գրեցի, եւ յիրաւի ինձ զիրսն համարիմ։ Տայր Աժդահակ բանիցն պատասխանի թէ անպիտան քան զամենայն մարդիկեւ ապաժամանեա. անպիտան՝ զի մարթ էր քեզ իսկ թագաւորել, եթէ ի ձեռն քո գործեցաւ ամենայն, եւ այլում եառուր զտէրութիւնն. անիրաւ ես, զի վասն ընթրեացն զՄարս ի ծառայութիւն վտարանդեցեր։ Զի եթէ պարտ ինչ էր ընաւ այլում ումեք զթագաւորութիւնն տալ եւ մի ինձ ունել, իրաւամբք այն էր եթէ միում ումեք ի Մարացն տուեալ էր եւ ոչ ի Պարսից. բայց այժմ Մարքն որ չիցեն այնց յանցանաց յանցաւորք, ծառայս փոխանակ տերանցն լինիցին։

Արդ թագաւորեալ Աժդահակայ ամս երեսուն եւ երիս, ապա յարքայութենէ անտի ի բաց քակէր։ Եւ Մարք ընդ Պարսից իշխանութեան նուաճեցան, իշխեալ ի վերայ քան զԱղիւս գետ ասիացւոց աշխարհին ամս հարեւր եւ երկուք սխալ յերեսնէ, բաց յայնց զորս Սկիւթացիքն տիրեցին։ Բայց ի ժամանակսն յետինս ապրջացան զի զայս աբարին եւ ապստամբեցին ի Դարեհէ, եւ յետ

ազատամրութեանն վանեալ վկանդեալ կը-
ուով ի պարտութիւն մատնեցան։ Յայնմ ժա-
մանակի յետ Աժդահակայ Պարսիկքն եւ
Կիւրոս յարուցեալ ի մարտ պատերազմի ի
վերայ Մարաց, յետ այնորիկ Ասիացւոց տի-
րեցին։ Իսկ զԱժդահակ Կիւրոս ոչ ինչ այ-
նուհետեւ լլկեալ, առ իւր ունէր մինչեւ
վախճանեցաւ։ Այսպէս ծնեալ եւ սնեալ
Կիւրոսի թագաւորեաց. եւ յետ այսր ամե-
նայնի զԿրիւսոս որ անիրաւութեան առնէր
սկիզբն վանեաց, որպէս յինէն յառաջագոյն
պատմեցաւ [17]. եւ զնա վկանդեալ ամենայն
ասիացւոց աշխարհին իշխեաց։

Ապա եւ զմահուանէն Կիւրոսի ի նմին
մատենի պատմէ թէ զայրացեալ ընդ նա Տո-
միւրեայ Մասագետացւոց բամբշան, զզօրն
միանգամայն գումարէր եւ Կիւրոսի ի վերայ
գիմէր. յաղթէին Մասագետացիքն եւ Կիւրոս
ի ճակատուն անկանէր։ Յետ պատերազմին
իբրեւ յուզեաց եգիտ Տոմիւրիս զդիակն Կիւ-
րոսի, զկառափն հրամայէր հատանել եւ ի տիկ
լի մարդկեղէն արեամբ արկեալ ասէն. Ես զքեզ
արեամբ զմայլեցուցից։ Բայց այլք, ասէ,
այլազգագոյն իմն զմահուանէն պատմեն, ես
ասէ, զոր արժանի հաւատարմութեան համա-
րեցայ զայն յիշեցի։

Այս պատմութիւն է Երոդոտեայ, եթէ
պատմութիւն եւս արժան իցէ կոչել։ Օն առ
այժմ առ ընթեր գնիցեմք եւ զԿտեսիայ բանս
զորոյ եւ Յուստինոս զհետ երթայ։ Այս
Կտեսիէս գրեաց գիրս զՊարսից իրաց բայց
այժմ մատեանն չիք ի միջի. այլ [18] Փոտիոս որ
ի նմին մատենէ համառօտեաց, այն կայ։

Կիւրոսի, ասէ, չիք իսկ ամենեւին ընդ
Աժդահակայ ազգականութիւն։ Յորժամ
երթեալ անկաւ Աժդահակ յԵկբատանս զի
ապրեսցի ի ձեռանէ Կիւրոսի, անդ կալեալ

արկաւ յատնակապս. յորոց զերծոյց զնա Կիւ-
րոս յետ ոչ բազում ժամանակի. եւ յետ այ-
նորիկ իբրեւ հայր զգուշանայր նմա։ Էր
դուստր մի Աժդահակայ որոյ անուն կոչէր Ա-
միտիս, զոր առ ի կնութեան Սպիտամայ ոմն
անուն։ Զսա զառաջինն իբրեւ մայր մեծա-
րէր. ապա իբրեւ զՍպիտամայ սպան զնա ա-
բար կին։

Յետ այնորիկ ի պատերազմ ի վերայ Բակ-
տրիացւոց դումարէր, եւ նոքա անձնատուր
եղեն. ընդ Շակաց եւս եւ պատերազմ եւ
ձերբակալ զթագաւորն նոցա զԱմորգէս առ-
նէր։ Նորին կին Սպարեթրա անուն, իբրեւ
ազգն եղեւ թէ ամուսինն անկաւ ի բուռն,
երեքարիւր հազար արանց եւ երկերիւր հա-
զարս կանաց զիւրեաւ դումարէր, հասանէր
անդանէր անդէն ի վերայ Կիւրոսի, եւ կեն-
դանւոյն ձերբակալ կալեալ կապեալ ունէր
հանդերձ բազում զօրավարօք։ Ապա արձա-
կեաց զնոսա կինն զի զայրն յազատութիւն
հանիցէ։ Յետ այնորիկ Կիւրոս զՍարդս առ
եւ զԿրիւսոս կալաւ։

Իբրեւ ամք քանի մի ի վերայ անցանէին,
Կիւրոս եւ Ամիւտիս նորին կին զԱժդահակ՝
որ ի Բարկանիացւոց աշխարհին էր ցանկա-
ցան տեսանել։ Կիւրոս զՊեռիսակաս զիւր
մտերիմ առաքէր երթալ բերել զնա։ Պե-
ռիսակաս Իբարեայ խրատու զԱժդահակ թող
լիք յանապատ տեղիս աշխարհին եւ անդ ի
սովոյն եւ ի ծարաւոյն սատակէր։ Իսկ ի դին
նորա չեւ էր հուպ լեալ գազանաց, զի առ-
եւծք պահ ունէին մինչեւ դարձաւ այսրէն
Պեռիսակաս եւ եբարձ. ապա թաղեցաւ մե-
ծաշուք փառաւորութեամբ։

Յետոյ ի մարտ պատերազմի ընդ Դեր-
բիկացիս գրգռէր։ Թէպէտ եւ առ ժամանակ
մի զդէմ կալան Դերբիկացիքն, ապա նուա-

ճէին ընդ իշխանութեամբ Կիւրոսի. բայց ի նմին աւուր յերիւարէն անկանէր Կիւրոս, եւ վերս առեալ յետ երից աւուրց մեռանէր. տուեալ զթագաւորութիւնն որդւոյ իւրում անդրանկան Կամբիւսեայ, եւ Տանիոքսարկեայ զիշխանութիւն Բակտրիացւոց աշխարհին եւ զՊարթեւաց եւ զԿրմանից եւ զՔորասմիացւոց. եւ խրատեաց եւս զնոսա լինել միմեանց բարեկամս. եւ թագաւորեաց նա ամս քսան։

Արդ կարդեցաք եղաք առաջի զամենայն, արդ ո՞ւմ յերեցունց պարտ իցէ աւատալ մոացեացն. եթէ քաջ ոք միտ դնիցէ Երոդոտայ եւ Կտեսեայ բանիցն, անդէն ի կարգի պատմութեանն ոչ ինչ միաբան բարբառին, այլ ընդ միմեանս բանքն հակառակեալ եւ սքանչելի իրս յաճախեն պատմել եւ արտաքոյ քան զհասարակաց կարգ բնութեան. ուր ի Քսենոփոնեայ պատմութեանն ամենեւին չկայ իսկ այնպիսի իրաց նշանակ։ Եթէ տակաւին թերահաւատ ոք իցէ ի բանիցն ասացելոց, օն առ այսր ճշդիւ հանդէս արարեալ ցուցանիցեմք զկրացն ընծայութիւնն։

Ասէ Երոդոտոս. Երազ, պատմէ, ընդ քուն երեւեալ Աժդահակայ եւ զահի հարեալ խուճապել վասն մանկանն որ ի դստերէն ծնանիցի, եւ վասն ահին եւ խուճապանացն փոխանակ առն մարի տալոյ զդուստրն կնութեան, որպէս ի դէպ իսկ էր, տալ առն ումեմն աւագի ի Պարսից ազգէն։ Գեղեցի՛կ սկիզբն պատմութեանն։ Երկեաւ Աժդահակ վասն մանկանն, բայց սակայն յայնչափ ապշութիւն կործանեցաւ զի փոխանակ զահագին ծնունդն խափանելոյ, հարսանիս եւս անդէն իսկ ճեպէր պատրաստել։ Այդ պարսկի, ասեն, եւ ոչ մարի տայ զնա կնութեան։ Բայց եւ քան զայն չէր ինչ փոքր երկեւղ վասն թոռինն զոր յիւրմէ իսկ դստերէն ծնա-

նելոց էր այրն տոհմական յայլմէ ազգէ [19] որ յառաջագոյնն իսկ ակամայ կամօք նուաճեալ էին ընդ Պարսացն իշխանութեամբ, եւ ոչ այն երկեւղ յաճախագոյն էր որ վասն ի մար հօրէ եւ ի մօրէ ծնելոյ մանկանն էր։ Բայց ազէ զայն իսկ տեսցուք թէ զինչ վիշտք ի վերայ հասեալ կային կամ զինչ ահ շուրջ մածեալ շտապէր. այս իսկ թէ իւր թոռն ամենայն ասիացւոց աշխարհին տիրելոց էր, եւ զնորա թագաւորութիւնն պայազատելոց։ Ո՞հ տեսիլ ահագին, ո՜հ հոգ ծանրատաղտուկ։ Տեսէք որպիսի՞ իրս մատենագրիցէ որ [20] Հայրն կոչեցի պատմութեան։ Ինձ ոչ փոքր հաւանութեան թուի թէ հեշտականութիւն եւս քաջ եւ խնդութիւն երազքն բերելոց էին Աժդահակայ, որ ոչ նմին չար ինչ եւ ոչ տերութեանն վնաս ինչ էին, այլ այնմ իմն դուշակ լինէին թէ թոռնն զթագաւորութիւնն առնելոց է եւ մեծացուցանելոց։

Ապա իբրեւ զմանկանն ծնընդենէ, ասէ, լսէր, յերկեղէն ի տմարդիկ անագորունութիւն հասանէր։ Վասն այնորիկ Արպագայ լինի յետ այնորիկ տայ զնա Արպագոս անդիորդի ընկենուլ։ Իսկ եւ իսկ վաղվաղակի ի տաղնապէն փութայ զմանուկն թափել քանզի բազում գործ ի ձեռն նորա վճարելոց էին։ Վաղվաղակի ածէ կացուցանէ զնա առաջի հաւուն։ Ուղի՞ղ։ Բայց զիարդ կամ որով օրինակաւ, տես։ Պանուկն մինչ դեռ տասն ամաց էր եկաց թագաւոր ի մէջ հասակակից մանկտւոյն եւ քանզի զբնաւ ըստ տերութեանն կարդէր, զորդի մարի ուրումն քանզի անսաստէր, ետ գան հարկանել։ Որ գանն արբ երթ պատմեաց հօրն եւ հայրն թագաւորին։ Արդ մի թէ այնչափ մեծ ինչ ոք էր Կիւրոս յայնպիսում տիս մանաւանդ յորժամ անդիորդի եւս որդի կարծէր, զի

չէր ձեռնհաս մաբ ոք աւագ առնուլ զվրէժ մանկութեան խակութեանն. միթէ այնչափ ինչ մեծ ոճիրս գործեալ էր նորա մինչեւ պարտ էր ի թագաւոր անդր հասուցանել։ Երոդոտոս այսպէս կամեցաւ, քանզի յօժարեաց զմանուկն անդէն ի մանկութեան հասուն եւ հօրն եւ մօրն յայտ եւ ծանօթագոյն գործել։ Այնուհետեւ ի թագաւոր անդր կոչի թագաւորազնն որ զիւր հասակակիցն յանդգնեալ գան եհար։ Ծաղրալից ատեան յօրինէր, ի մէջ անցեալ կայր թագաւորն Մարաց, որ ոչն ուրեք յայնպիսի անարգութիւն զանձն իջուցանէր, եւ անդէն վասն տասն ամաց մանկան թեթեւագոյն ինաստ առնէր հարցափորձ քննութեան։ Այլ մի ըստ միոջէ ծաղրալից պատմութիւնք տողին, ի միոջէ մեւս եւս ծաղրալից պատմութիւն ծնանի. զի որ մանկանցն իրաւարարն է նայեցեալ ի մանուկ անդր, յանկարծակի զերեսացն նշանակս ճանաչէր զտասն ամաց մանկան զոր յառաջն յորժամ այն ինչ ծնեալ էր, եռեսս ի հարեւանցի։ Յետ ի միտ առնլոյ թէ Մանդանեայ որդին է, զինչ գործիցէ թագաւորն. ոչ ապաքէն միւսանգամ ի կարծիս եւ ի հոգս անկանիցի ծանրացեալ նեղեալ։ Ոչ ուրեք. ուրախ եւս լինի ընդ ապրել մանկանն. եւ վասն որոյ ուրախն լինի, վրէժ առնու։ Ընդ բարբարիկ անագորոնութիւնն զարմացայց եթէ ընդ անպատեհ պատմութիւնն։ Բայց զինչ յետ այնորիկ ընդ Կիւրոս առնիցէ Աժդահակ. Ցկախարդն հարցանէ թէ զինչ իրք լինիցին. նոքա խորամանգ մտօք ճարտարեն թէ ելին իսկ իրքն ի գլուխ յորժամ ի մանչկտոյ մէջ եկաց թագաւոր։ Տեսեր զհանդարտ եւ զմեղմական միտս Աժդահակայ. եւ զի իմացիս թէ մեղմական միտք էին առն հայեաց ի կոչունսն զոր Արպագայ առաջն

յօրինէր։ Յանկարծակի վաղվաղակի ամենայ-
նի եւ բնաւի մոռացօնս առնէ եւ զայն թէ ա-
մենայն աշխարհին ասիացւոց թագաւորելոց
է մանուկն, զԿիւրոս իրագէտ անցիցն որ ընդ
նա անցին, ի Պարսից աշխարհն արձակէր։
Դարձեալ մեւս եւս անհանճար պատմութիւն։
Լուեալ Աժդահակայ թէ Կիւրոս ապստամ-
բեցոյց զազգն, զօրաժողով լինէր գունդ վա-
ռէր եւ զԱրպագոս կացուցանէր զօրավար։
Ո՞հ անմիտ մորոսութիւն. մի՞թէ այնչափ ան-
միտ ոք էր Աժդահակ զի որում սակաւ մի
յառաջ ցասուցեալ վրէժ առ, զնա անդէն
սպարապետ զօրացն առեալ կացուցանէր։ Թէ
զինչ զրաւ մարտին ելցէ, զայն թէպէտ եւ ես
լռեցից, մարթի որ ընթեռնուն առնուլ ի
միտ։ Ի պարտութիւն մատնեցան Մարքն,
եւ Աժդահակ ի բուռն անկաւ, եւ յետ այնո-
րիկ Կիւրոս [21] զԿրիւսոս կալաւ։ Արդ նախ
զՄարաց իշխանութիւն առ, եւ ապա ի Ղիւ-
դացիս դիմեաց, տես որչափ խառն ի խուռն եւ
անկարգ զՊարսից իրս մատենագրեաց Երո-
դոտոս. կանխագոյն ասացեալ է նորա ի նմին
մատենի [22] թէ Պարսիկքն տկարք եւ անզօրք
էին յորժամ կալան զՂիւդացւոց թագաւորն,
եւ կապուտ կողոպուտ զՍարդիացւոց քա-
ղաքն արարին եւ ոչ ընդ [23] փափկութիւն եւ
բարեկեցութիւն ընդելեալք եւ աղքատք եւս
եւ տնանկք էին մինչ չեւ զՂիւդացիս վանեալ։
Եւ արդ զիարդ տկարք ոք եւ անզօրք եւ
աղքատք էին որոց յաղթեալ ի ճակատու
զամենայն մեծութիւն եւ զարարս Պարսից
աշխարհին յափշտակեցին։ Դանդաղիմ զա-
մենայն ի մէջ բերել որ անհաւատ իսկ են եւ
անդէն ընդ միմեանս մարտ եղեալ կռուին։
Բայց աղէ դու եկ լուր զինչ զԿիւրոսէ պա-
տմիցէ մատենագիրն. այն որ ցայժմ զամենայն
իմաստութեան խորհրդով վճարէր [24] Կիւրոսի

առպատակ եդեալ ի կողմանս բաբեղացւոց աշխարհին, առ Գիւնդոս գետ հասանէր, իբրեւ միջամուխ ի գետ անդր խառնէր, եւ բիւար մի ի մեհենական սպիտակ ջրոցն անդէն իջեալ մխրճեալ ի գրդանսն սատակէր։ Զայրացաւ դժդմեցաւ թագաւորն, վաղվաղակի բարկութեամբ ի գետ անդր դիմէր եւ անդէն թողեալ զարշաւանն՝ զգետն տանջէր։ եւ զամենայն ամառն ընդ տանջելն հանէր։

Ինձ այսպէս թուի թէ յորժամ ճշդիւ ոք զգուշութեամբ խորհիցի, ոչ ինչ մեզ մեղ դնիցի որպէս թէ զուր պարսաւիցեմք զԵրոդոտոս։ Մարթի այնպիսին եւ զայն ի միտ առնուլ թէ ոչ տարապարտ ասիցէ [25] Կիկերոն զնմանէ, թէ անթիւ առասպելս տողէ. զի եւ այլք ի [26] մատենագրաց առասպելական զմատեանն համարին։

Բերաք ի մէջ եւ մեւս եւս պատմագիր իրացն Պարսից զԿտեսիաս կնիդացի. բայց քանզի ի քսան եւ երեք գրոց անտի հատակոտոր իմն կայ, ոչ ինչ մարթեմք ճշդիւ վասն նորին վճիռ բերել։ Այլ եթէ հաւանեալ անսայցեմք բանից բազմաց ի հնոցն եւ ի նորոց, չէ զգուշութեան աւատալ Կտեսիայ. [27] Արիստոտեղէս. ասէ, թէ չէ արժանի հաւատարմութեան. եւ [28] Ստրաբոն վճիռ բերէ, թէ եւս դիւրագոյն իցէ ումեք պւետեայց առասպելարկութեանց հաւատալ, քան Երոդոտայ եւ Կտեսիայ. իսկ [29] Անտիգոնոս յայտնապէս իսկ, ասէ, թէ նա բազում ինչ ստէ. եւ [30] Պղուտարքոս՝ թէ ի ճշմարտութենէ յառասպելս կործանի։

Բայց զի Քսենոփոն արդարեւ ճշմարիտ պատմութեամբ ի հնոցն յիշատակարանաց առեալ մատենագրեաց, եւ զի հաւատարիմ քան զամենայն պատմագիրս որ վասն սոցին իրաց գրեցին Քսենոփոն է՝ ինձ ամենեւին

ճշմարտութեան թուի։ Նախ վասն այնորիկ իսկ զի քաջանուն եւ հաւատարիմ միշտ *դրուատէր, ուստի չառնոյր յանձն յայնպիսի ինչ յանդգնել ձեռն արկանել որ ոչ ի գովութիւն էր այլ ի պարսաւանս։ Երկրորդ անգամ զի ոչ միայն խոստանայ եւեթ հաւատարիմ զԿիւրոսի պատմութիւնն գրել, այլ եւ ի դէպ էր թէ յորժամ անդ իսկ յապարանսն Կիւրոսի կրսերոյ էր, եհարց եւ ի միտառ որպէս բարք իսկ էին նորա, զամենայն ինչ աքանչելի հարցանել եւ իմանալ։ Երրորդ զի ինքն զամենայն գործս եւ զկարգս եւ զխրատ բովանդակ յօրինեալ կարդէ մանր մանր մասամբք, ուր այլք ի պատմագրաց սակաւ մի ինչ ի հարեւանցի առնիցեն յիշատակս։ Չորրորդ անգամ զի սեռն եւ պարզ եւ յստակ է պատմութիւնն, առանց պաճուճանաց, հանդոյն եւ ի դէպ ճշմարտութեան։ իսկ այլոցն պատմութիւնք երազովք եւ նշանօք եւ չքնաղ զարմանալեօք որ միմեանց քակիչք լինիցին, յաւելեալ ի նոյնս եւ զառասպելական զգազանացն մնունդս**։

* Դիոդորոս սիկիլացի ասէ ի պատմական գրանին, թէ Քսենոփոն եւ Թեոպիդիդէս վասն ճշմարտութեան գովեցան։

** Որպէս ինչ Յոսեփոս յաղագս գիրքն եւ Ղիւսս յաղագս ՀՌոմէլոյ եւ ՀՌեմայ ընկերսի լինելոյ ասիցեն, եւ գայլոց նոցին դայեակ մտեալ անուսիչ լինելոյ. զնոյն եւ Դիոնեսիոս Ալիկարնասցի յաղագս մատենի Հռոմայեցւոց նախնեաց պատմութեան վիպէ։ Եւ Դիոդորոս ի մատենագրանին ի Կտեսեայ պատմութենէ ազանեաց պատմէ Շամիրամայ անուսիչ լինել։

Հինգերորդ անգամ զի Քսենոփոնեայ պատմութիւնն ի միաբանութեան անդ դրոց սրբոց բարձեալ բերէ զյաղթութիւնն։ Եւ զի այս այսպէս է, իսկզբանէ իսկ արասցուք սկիզբն ցուցանել։

Քսենոփոն ասէ. Աժդահակ զիւր դուստր Մանդանէ ետ կնութեան դրացի թագաւորին. այս արժանի հաւատարմութեան է, բայց ժամանակագրացն մատենից հակառակ կայ, որ ասեն թէ ի Մարաց թագաւորութեան չգոյր Պարսից թագաւոր։ Այլ զայնմանէ մեզ չէ փոյթ, նոքին տեսցեն որ այլոց գրագրաց ջատագով մտանիցեն. քանզի ճոխութիւն գրոց սրբոց՝ վկայութիւն թուի մատուցանել Քսենոփոնեայ բանիցն։ Զի Եսայեայ զԲաբեղացւոց քաղաքէն մարգարէացեալ թէ ընդ հուպ առցի. ասէ բայ. [31] Զայն, ասէ, ազգաց բազմաց ի վերայ լերանց ի նմանութիւն ազգաց բազմաց. ձայն ԹԱԳԱՒՈՐԱՑ եւ ազանց միահամուռ ժողովելոց։ Թագաւորքն զՄարաց եւ զՊարսից թագաւորացն յայտ կամի առնել։ Ի նմին վայրի եւ զՄԱՐՍ [32] յականէ կարդայ մարգարէն, եւ առ նոսին ի նոյնս վաղվաղակի [33] զԵՂԻՄԱՑԻՍՆ յարեալ յաւելու, զոր եւ Պարսիկս ի նմին վայրի կոչիցէ։ Քանզի որ զգրոց սրբոց գիրսն գրեցին, ոչ զԵղիմացիսն միայն, այլ զնոցին սահմանորդս զՊարսիկս Եղամ գիտեն անուանել։

Դարձեալ պատմէ Քսենոփոն զԿիւրոսէ, թէ ի մանկութենէ համակ ընդ պատերազմի հրահանգս ելանէր, եւ զի աշխատասէր եւ վշտասէր եւ մարդասէր բարք էին նորա։ Եւ զի այս ճշմարիտ է, բազումք են յարտաքնոցն մատենագրաց որ նմին վկայք լինիցին, որոց սակի [34] Նիկողաւոս սիրակուսացի է, եւ [35] Իմերիոս եւ Պղուտարքոս եւ [36] Ամիանոս։

Արդ զսոսա * թողեալ եկեսցուք ի գրոց սրբոց ճոխութիւն։ Եւ արդ զի՞նչ զարմանք իցեն թէ զնա այնպէս առաքինի քարոզիցէ Քսենոփոն, զայն զումէ [37] նուիրական մարգարէն ասիցէ Աստուծոյ իսկ բանիւ. Կալայ զաջոյ ձեռանէ նորա հնազանդեցուցանել առաջի նորա զազգս. եւ զորմէ Աստուածն ասէ ի նմին մարգարէի թէ [38] Ես յարուցի զնա ԱՐԴԱՐՈՒԹԵԱՄԲ թագաւոր, եւ ամենայն ճանապարհք նորա ուղիղ են։ Եւ միւսանգամ թէ [39] Ո՞ զարթոյց յարեւելից զԱրդարութիւն եւ կոչեաց զնա զհետ իւր։ Ո՞չ ապաքէն այս բանք զարութիւն քաջութեանն Կիւրոսի եւ զմիտսն արդարակորովս եւ զմարդասիրութիւն միաբան ըստ Քսենոփոնեայ պատմութեանն յայտ առնիցեն։

Դարձեալ յորժամ ասիցէ տէր նովին մարգարէիւ թէ [40] Ես զարթուցից զՀիւսիսայինն եւ զարեւելեայն, որ կարդասցէ զանուն իմ. այս ինքն՝ զԿիւրոս, զի ի հիւսուսակողմն կուսէ զօրաժողով վառեալ խաղացեալ գայր ի մարաստան աշխարհէն առ հիւսուսով բաբիղացւոց եւ Հրէաստանեայց աշխարհին։ Իսկ այն՝ զոր ասէ թէ Արեւելեայն, յայտ առնէ թէ ի Պարսից աշխարհէն գայր, քանզի Պարսից աշխարհն յարեւելից Բաբեղոնի եւ Հրէաստանի կայ։ Բայց զի կարդաց Կիւրոս զԱստուած, այս ինքն զի ** ծանեաւ նա ըզ-

* Իսկ Երդոպոս է՝ Տրոգոս բազմամ ինչ յորոնիան գործս խառնէն։ Այլ Արինէս է՝ Իսոկրատէս բազմամ լրեայ է՝ պատանոնիան է՝ իրոյ հանոյն պարս առնէն։

** Հանանոնիան է երիկ եհաս Կիրոս յապոստծանօր գիտոնիանն իրապոս Դանիէղ է՝ Հրէից ապոստծապալրոց որ էին յապարոնան Կիսոփոսրոյ. որպէս է Դանիէղ

ճշմարտութիւն Աստուծոյ Իսրայէղի, յոյժ ի հրովարտակէն է, որ յԵզրայ գիրսն կայ։

Իսկ փոխանակ այնր զի, ասէ, բայ Որ ասեմ ցԿիւրոս թէ իմաստնասջիր. հռոմայեցին ասէ. Որ ասեմ ցԿիւրոս թէ հովիւ իմ ես. այն իսկ է զի յԱստուծոյ խնամակալութենէ զԱստուծոյ ժողովուրդն յառաջին արօտն դարձուցանելոց էր յերկիրն Քանանացւոց, եւ ի դոյն իսկ ընտրեալ էր կանխագոյն քան զհարեւր եւ զեւթանասուն ամ եւ աւելի եւս։

Անուանի եւս [41] Օձեալ Աստուծոյ, կոչի եւ [42] Աստուծոյ սիրելի, զի զԱստուծոյ խորհուրդսն կատարելոց էր եւ զԱստուած փառաւորելոց. ուստի [43] յԵրեմիա. ընտրեալ յորջորջի, եւ յԵսայի Կատարիչ Աստուծոյ [44] խորհրդոցն։

Վասն այսորիկ ի գալ հասանել Ասորեստանեացն եւ Ղիւդացւոցն ասպատակաւ. յարուցեալ Կիւրոսի ի կողմանցն Պարսից ի մարտ պատերազմի որ ոչ առանց [45] իրաւանց եւ արդարութեան էր, ճեպեալ հասեալ զՔաղդէացիս վանէր, եւ Ասորեստանեաց զօրօք ընդ առաջ ելանէր, եւ եւ գունդ առ գունդ յօրինեալ ճակատեալ յաղթէր. զահի հարան Ասորեստանեայքն. ձեռս տային ի նա Վրկանքն. միւսանգամ Ասորեստանեաց ի վերայ դիմէր եւ զբազմագոյնս տապաստարկեալ կոտորեալ ցան խորոց ձորոց դաշտաց կացուցանէր, սատակեալ ի ճակատու

գիրն կայ ԼԵ անդ էին. մանաւանդ յորժամ զԽոսրովայ մարգարէութիւնն բերեալ ցուցանէին, է՝ վասն այսորիկ Յովսեպոս է ի Հրէից նախնեաց պատմութեան ի մեծաւանէրորդաւ գրքաւնն յաւաջնաւմ գլուխ գրոցն։

եւ զԳամրաց եւ զԱրաբացւոց թագաւորսն. այրուձի եւս Պարսիցն կացուցանէր. եկին յարեցան ի նա Գոբրիաս եւ Գադատաս եւ Աբրադատաս, խաղացեալ երթայ զօրօք հանդերձ ի Ղիւդաստան եւ զԱրդիացւոց քաղաքն առնու. եւ զԿարիա եւ զՓռիգիա նուաճէ. զԲաբիղոն յարգել արկեալ պաշարեալ առնու։ Բայց զայս ամենայն Կիաքսարայ Մարաց թագաւորի իշխանութեամբն վճարէր։ Այլ մի ոք զարմասցի, եթէ զայնչափ անչափ ազգս նուաճեաց, զորմէ Աստուածն [46] ասաց, թէ Երթիցէ եւ տացէ հատուցումն յանդիման հեթանոսաց, զարհուրեցուսցէ զթագաւորս։ Եւ զի դողացին եւ զահի հարան Ասորեստանեայքն եւ նոցին թիկունք օգնականութեանն վկայեսցէ ի մօտոյ նոյն մարգարէ թէ, Տեսին կղզիք եւ երկեան, եւ սարսեցին ամենայն ծագք երկրի. ուր կըղզին բան ոչ եթէ գկղզոյ կամ զկղզեացն բնակչաց յայտ առնիցէ, այլ այս տառանձինն բարբառ է մարգարէական ճառից, որ զամենայն ծովու բնակչաց եւ զծովեզերեայցն, այս ինքն զփոքր աշխարհէն Ասիացւոց գուշակէ։

Իսկ զարագ արագ հասանելն Կիւրոսի, զվաղվաղակի հարկանել կոտորել որպէս Քսենոփոն աւանդէ, ոչ ինչ անհաւատ համարիմ, ուր Եսայի ի Հոգւոյ անտի կրեալ ասիցէ. Տացէ իբրեւ փոշի զսուրս նոցա եւ իբրեւ ըզխռիւ մերժեսցէ զնետս նոցա. այն իսկ է զի այնչափ արագունք իցեն սոքա յաղեղն եւ ի սուսեր եւ այնչափ երագունք զհետ մոանիցեն, զի զէնք նոցա իբրեւ փոշի ի մրրկէ կուտիցին եւ իբրեւ խռիւ ի բռնութենէ բռնաշունչ սքոց շեղջաշեղջ վարիցին։ Զնոյն առակաւ ակնարկէ մարգարէն յորժամ նուագեալ հնչիցէ, Կոչել յարեւելից զթռչունն

յափշտակիչ եւ յերկրէ հեռաստանէ վասն
որոյ խորհեցայն։

Եւ զի հեծելազօրօք եւ պարսաւորօք Մա-
բաց եւ Պարսից եւ այլոց ազգաց ազգաց ի
մի վայր գումարելոց առաւ քաղաքն Բաբի-
ղացւոց, աւանիկ ասաց իսկ զԲաբեղայ Ահիահ։
47 Հասին ԵՂԱՄԱՑԻՔ եւ հրեշտակք ՊԱՐ-
ՍԻՑ գան։ Դարձեալ այլ մարգարէ ասէ, թէ
48 Զարթ-ոյց տէր զոգի թագաւորին ՄԱՐԱՑ։

Բայց յայտնի իսկ * զՏիգրանայ զար-
քայորդւոյ յայտ արարեալ ասէ նոյն մարգա-

* Բայց ոչ այլ ազգ էր զՏիգրանայ պարտ-
ուկ քրիստոնէն է՝ ոչ որպէս մարդիանոսէրն
առանդէ, այն ոչ ինչ աղարտէ զճշմարտութիւն
գրոցն, քանզի է դէպ է ոչ քրիստոնէն այն-
պէս լաւ է Պարսից յորժամ էր նա է բա-
նալի անդ նոցա. մանաւանդ զի ոչ ան-
ուէրին սուտ է ամենայն զոր զՏիգրանայ պա-
տմիչն է, քանզի է ինչ մատն է նմա որ ճշմար-
տութիւնն է՝ միթէ մերոյ պատմագրոյ է,
այս իսկ՝ ոչ յերանդս է՝ ոչ ուղղա-
նաւորեան էր Տիգրան կիրուոյ է՝ ոչ ծա-
ռայ, է՝ նմին միթէ համարձակ առանդէ է՝
մեր իսկ մարդիանոսէրն Մովսէս խորենացի.
իսկ զպարտութիւնն է՝ զլինելոնն, որպէս
ճանաչեցն սոցի, ի դէպ է ոչ է Պարսից
լաւ որ յամենի էր զարանել զայլ ոչ որ-
ուրանցն կիրուոյ բաժանուիցս։

Իսկ այն զոր ասէ, կիրուոյ սանել զկրի-
սոս ամենէն ճշմարիտ իսկ է՝ է՝ սառանց
երկիւղութեան, է՝ մարդոյ յայտնացն.
Բայց զոր Մովսէս խորենացի պատմէ Արտա-
շէսի խալէալ զկրիսոս, է՝ այն ճշմարիտ է.
քանզի այլ այս պատմութիւն է է՝ այլ այն,
է՝ էբրէ՝ երէքարիւրոց ամաց անքրիստոս-

ըէ թէ [49] Պատուէր տուք յինէն այրարա-
տեան թագաւորութեանցն եւ ազքանազեան
գնդին։ Եւ զայլոց ազգաց ասէ. [50] Հրաւիրե-
ցէք ի վերայ նորա զազգս եւ զթագաւորն
Մարաց։ Եւ դարձեալ ասէ իսկ տէր. [51] Ես
յարուցանեմ ի վերայ ձեր զՄարս որ ոչ ինչ
համարին զարծաթ եւ զոսկի։ Գրեթէ զնոյն
բանս ասիցէ զնոցանէ Քսենոփոն, յորժամ
խօսիցի ընդ նոսա Կիւրոս թէ [52] Արք պար-
սիկք եւ ամենեքին որ աստ կայք, ես ճար-
տար գիտեմ եթէ չէք դուք ընչիւք կարօտ։
Յիշէ եւ Եսայի [53] զթագաւորութեանց միա-
համուռ գումարելոց։ Ապա ուրեմն ճշմարիտ է
զոր Քսենոփոն պատմէ, թէ ազգք եւ արքու-
նականք եւ շահապք եկին ի դաշն մտին ընդ
նմա երթալ ի մարտ պատերազմի ի վերայ
Ասորեստանեացն։ Նոյնպէս ճշմարիտ են
բանք նորա վասն արշաւանին ի գլուխ ելա-
նելոյ. յորժամ ասիցէ թէ զԼուրսն Արածա-
նուղ ի փոս անդր զոր զպարսպօքն խորացու-
ցեալ էր, դարձոյց, եւ հանդերձ իւրովք
զօրականօք մտեալ ընդ գետն ցամաքեալ ի
Բաբեղոն մտանէր եւ անդր իսկ յարքունիսն
յաւուր տօնին յորժամ արբեալք եւ զեղխեալ
էին մարդիկն, եւ անդէն թագաւորն եւ որ
զնովաւն կային սատակէին. զի յայսմ ամե-
նայնի ճշմարիտ մատենագիրն է նուիրական
մատեանք վկայեացեն։ Իսկ իբրեւ առ Կիւրոս
զքաղաքն եւ զտէրութիւն բաբեղացւոցն

[illegible]

զիշխանացն վանն իւրոց Նիզակակցացն բաժանէր տայր. Թուի թէ զայնմանէ ակնարկիցէ Եսայի, մինչ ասէն բայ * Կոչեցէք ձեռամբ, բացէք իշխանք։

Վասն Կիւրոսի եւ վասն արուեստեանց եւ քաջութեանց որ ի նմանէ գործեցան բաւական է այսչափ. եւ վասն Կիաքսարայ խօսեցայց կարճառօտս, քանզի ակամայ երկայնեցաք զճառս։

Կիաքսարէս այս ըստ Քսենոփոնեայ պատմութեանն յետ Աժդահակայ իւր իսկ հօրն մեռանելոյ, Մարաց կայր թագաւոր, եւ ըզ-Կիւրոս զուստր Կամբիւսեայ Պարսից թագաւորի եւ զՄանդանեայ զիւրոյ քեռն, զօրավար զօրացն զոր ի վերայ Ասորեստանեացն գումարեաց կացուցանէր։ Իսկ ինքն յառաջին արշաւանսն ոչ միայն ի գնդի անդ էր այլ եւ զիշխանութիւն պատերազմին ինքն ունէր։ Այս պատմութիւն ամենեւին իսկ միաբան է գրոց սրբոց, զի յորժամ զԲաբեղացւոց քաղաքին կործանմանէ ճառիցէ մերթ զՄարաց մերթ զՊարսից բանք ճառին, եւ երբեմն Եղիմացւոցն եւ ** Մարացն անուամբք զՊարսից եւս ակնարկէ, քանզի չեւ եւս էր ընդելական պարսկական անունն յաւուրսն Եսայեայ եւ Երեմիայ, եւ Մարք քան զՊարսիկսն ազնուագոյնք էին եւ սոքա ընդ նոքօք, մա-

* ԳԺ. 2. Ո՞ր այլ ներքմեն ասէ. Շարժեա զյիսն զի լինիցի հաւ դրանց իշխանացն։

** Վասն այսորիկ է՝ Երեմիա է ԾԱ, 11, 28, բազմաբար ասէ թագաւորք Մարաց. զի կիսաւորքն բան Մարաց նոքա էր, է՝ կիսաւորքն Պարսից, բայց հարքարքն Մարաց անուամբն զերկոսանցն միանգամայն յայտ արանէ։

նաւանդ զի եւ պատերազմն որ ընդ Ասորեստանեայս եւ ընդ Բաբեղացիս էր ի Մարաց անուն վճարէր, եւ Պարսիկք նոցին իբրեւ Թիկունք օգնականութեան էին։

Բայց եւ ընդ այն չէ ինչ պարտ լռութեամբ անցանել, զի մինչ դեռ Կիւրոս ի ներքս ի Ղիւդաստան եւ յԱսորեստան մնեալ երթայր ասպատակաւ, Կիաքսարէս ի պատերազմէն մեկնեցաւ եւ կայր մնայր անդէն յիւրում աշխարհին։ Այլ Կիւրոս պնդեալ երթայր ստէպ զհետ, եւ նախ զՍարդիացւոց քաղաքն եւ ապա զԲաբիղոն ի բուռն առնոյր. յորս մեծ իմն միաբանութիւն գտանի Քսենոփոնտեայ պատմութեան եւ պատգամաց գրոց մարգարէիցն. քանզի կանխագոյն * յականէ յանուանէ կոչեն զԿիւրոս պատգամք մարգարէիցն, եւ զգանձան թագուցեալս խոստանան, եւ զսոյն իսկ գործ ի ձեռն տան նմա, կատարել զԱստուծոյ խորհուրդսն ի վերայ Բաբիղացւոց աշխարհին։

Յետ Բաբիղոն քաղաքի առնլոյ եւ [54] Բաղտասարայ սպանանելոյ, զԲաբեղացւոց թագաւորութիւնն ոյր իսկ առեալ է, աղէ ասա։ Յայտ է թէ [55] ԴԱՐԵՀԻ ՄԱՐԻ, ըստ վկայութեան մարգարէին։ Այլ ո՞ ոք Դարեհն իցէ։ ** Են որ տան պատասխանի թէ Աժդահակ

* Ըստ նմին օրինակի է Յովսիայ անուն, մարգարէութիւամբ կանխագոյն երեւարեր յանուն ամօտ կոչեցաւ որպէս յայտ իսկ էր յերբորդ դպրութենէ գրոց Ներգաւորութենոյ յերեւոյթանէրորդ գլխոյ. իսկ Կիւրոս կոչեցաւ ի գործ անդր յանուանէ իսկ վաղագոյն քան զհարիւր ամս։ Եսայի ԽԴ. 28։

** Տայ պատասխանի Սլաղէգեր, թէ Նաբոնադիս վերջին Ներգաւոր Բաբիղացւոց

է Դարեհն մար, քանզի ըստ Երոդոտոսայ եւ Կտեսիայ Աժդահակ է հուսկ վերջին թագաւոր Մարաց. բայց զի որչափ անհաւատ են պատմութիւնք նոցա զայն վերագոյն յայտ արարաք. ապա թէ տակաւին ի նոյն միտս պնդեալ ոք կայցէ, ցուցից զանպատեհութիւնն։ Կիւրոս ըստ նոցա բանիցն մերժեաց զԱժդահակ ի Մարաց թագաւորութենէն, եւ իբրեւ ոչ բազում ամք ի վերայ անցանէին, զԲաբեղացիս նուաճէր, եւ զնոցա թագաւորութիւնն սուռ Աժդահակ. ո՞հ անհանճար ճառք։ Կարծեմ թէ ստրջացաւ Կիւրոս զի զԱժդահակ հան ի թագաւորութենէ. եւ այն այնպէս զի փոխանակ առաջնոյ թագաւորութեանն զոր հան, այլ եւս։ Այլ յետ առնլոյ, ասեն, Բաբիղոն քաղաքի հան Կիւրոս զԱժդահակ ի թագաւորութենէ։ Նա եւ ոչ այնպէս հաւանութեան բանքն թուին։ Նախ յայն սակս իսկ զի չիցէ հաւանութեան թէ ի ժամանակի զի Բաբեղոն առաւ, տակաւին կենդանի էր Աժդահակ որ հաւն էր Կիւրոսի, մանաւանդ զի թէ կենդանի եւս էր, սակայն չէր մարթ չէր հնար վաթսուն եւ երկուց ամաց յայնժամ լինել, քանզի ասէ իսկ Դանիէղ թէ [56] այնչափ ամաց էր Դարեհ յորժամ զթագաւորութիւն Բաբեղացւոց աշխարհին առ։ Դարձեալ ոչ ինչ ակնարկէ մարգարէն թէ հան զսա Կիւրոս յարքայութենէ, յորժամ ապստամբութիւն ի Դարեհի վերայ դրգռէր, այլ մանաւանդ յայտ է բանիցն լինիցի եթէ ամենեւին հաւանք եւ միաբանք ընդ միմեանս էին. քանզի Կիաքսարէս

[56] ԸՐՄԷ ՊՈՂՈՄԷՈՅԻՆ ԿԱՆՈՆՆ ՅԻՇՈՒՑԱԼԷ. ԸՐԵՑ ԴԱՆԴԱՂԱՆՈՍ ԲԱՂԱՐՄ ՄԵՐԺԵՑԻՆ ՅՈՐՈՑ ՄԻ ՈՄՆ Է– ՊՐԻԴԷՍԱՐԻՈՍ Է։

ըստ երկոցունց օրինացն զՊարացն ասեմ եւ զՊարսից զթագաւորութիւնն ի Բաբեղոնի վարէր, եւ Դանիէղ յերկոցունց թագաւորացն արքունիսն մեծաւ փառաւորութեամբ շրջէր։

Արդ քանզի նոցա կարծիք քակեցան, աւն առ այսուհետեւ զայն որ մեզ հաւանութեան թուիցի, ասասցուք. նախ դիտեսցուք տեսցուք թէ զի՞նչ զնմանէ գրիցէ Դանիէղ, եւ յետ այնորիկ թէ արդեւք ճշմարտիւ ի դէպ իցեն բանք մարգարէին Կիւրոսայ որ ի Քսենոփոնեայ պատմութեանն կայ, տեսցուք։

Ա. Յայտ իմն առնի ի Դանիէղի մատեանէն թէ Դարեհ մար վաղվաղակի յետ Բաղտասարայ մեռանելոյ զթագաւորութիւնն առ։ Բ. Յայտ առնէ մարգարէն թէ ամաց վաթսուն եւ երկուց էր նա ի ժամանակին։ Գ. թէ մար յազգէ էր։ Դ. Եւ Կիւրոսի ասէ Փոխանակել զթագաւորութիւն նորա։

Զայս ամենայն վասն Դարեհի մարի մարթի ումեք դիւրաւ ի Դանիէղի գրոցն ժողովել։ Իսկ զԿիւրոսարեայ եթէ զնոյնս ոչ, սակայն զնմանագոյնսն աւանդէ Քսենոփոն։ Ա. Զի յառաջնում նուագին յորժամ յօրինեալ կարգեալ զամենայն դարձաւ անդէն ի Մարաստան ասէր ցԿիւրոսարէս եթէ ապարանք ընտրեալ են քեզ ի Բաբեղոնի եւ իշխանաց վանս, զի ունիցիս եւ յորժամ անդր երթայցես իբրեւ ի տան ագանիցիս։ Քանզի Կիւրոս որպէս յառաջն նոյնպէս եւ յետոյ զգլխաւոր իշխանութիւն ի նա առնէր ապաստան եւ ինքն զերկրորդական պատիւն առ նորա կենդանութեամբն ունէր։ Եւ ընդ այնր չեն ինչ զարմանք, քանզի Կիւրոսարէս անժառանգ էր յարու մանկանէ եւ զդուստրն ետ Կիւրոսի կնութեան տուեալ ի թախանձն զՄարաստան։

Զդոյն պատմութիւն վկայութեամբ հաւատարիմ առնէ [56] մարգարէն, քանզի ասէ իսկ ցԲաղտասար բայ Բաժանեցաւ թագաւորութիւն քո. եւ զնովիմբ ածեալ յարէ, թէ Տուաւ Մարաց եւ Պարսից։ Եւ անդէն ի հինգերորդում գլուխն պատմէ Դարեհի առաջնորդել թագաւորութեանն ըստ օրինաց Մարաց եւ Պարսից։ Զի՞նչ հարկ էր արդեւք երկոցունց ազգաց օրինացն զգուշանալ, յայտ ուրեմն է թէ մասն մի թագաւորութեանն Մարացն էր եւ մասն մի Պարսից, այն իսկ է զի զառաջին պատիւն նա ունէր եւ զերկրորդականն սա. եւ այս անտի յայտ է, զի ամենայն ուրեք նախ զՄարսն քան զՊարսիկս անուանէ։ Իսկ յայլ եւս տեղիս գրոց որբոց պատմութեան [57] ոչ նոյնպէս, զի յետ Դարեհի վախճանելոյ եւ Կիւրոսի զգլխաւոր իշխանութիւնն առնլոյ նախամեծար քան զՄարս Պարսիկքն լինին։

Վկայէ եւ Յովսեպոս ի Հրէից նախնեաց պատմութեան [58], զի ասէ իսկ այսպէս. Դարեհի որ զԲաբիղացւոց հարստութիւնն Կիւրոսիւ հանդերձ քակեաց։ վաթսներորդ երկրորդ ամն էր յորժամ զԲաբեղոն առ. որ Աժդահակայ ուստր էր, եւ այլ իմն ի Յունաց նմին անուն կոչեցաւ. այս ինքն Կիաքսարէս։

Ընդ այս ամենայն հայեցեալ բազմաց ի քաջացն մատենագրաց* յանձն առին թէ Դարեհ մար որ ի Դանիէղի գիրսն կայ, Կիաքսարէս է զորմէ Քսենոփոնն պատմէ։ Իսկ որ զայս մերժեցին յանձանց որոց սակի Սկալիգեր եւ Պետաւիոս եւ Մարսամոս են, զամենայն կարգ պատմութեանն խանգարեցին։

* Ոսերիոս, Պրիդէաս-ոսիոս, Վիքտրինոյ, Կոզ-մեոս եւ այլք։

Իսկ վասն մահուն Կիւրոսի դարձեալ բազում չմիաբանութիւն ի մէջ պատմագրացն կրի։ Երոդոտոս եւ Տրոգոս թէ ի ճակատուն որ ընդ Մասագետացւոցն՝ անկաւ, բայց[59] Երոդոտոս ասէ, թէ բազում եւ այլ ինչ համբաւ է. իսկ Կտեսիաս՝ ի վիրացն, ասէ, մեռաւ զոր ի Դերբիկացւոց մարտին առ։[60] Դիոդորոս սիկեղացի ասէ, ի խաչ բեւեռեալ։ Յովհան Մաղաղա, ասէ, բայ ի նաւամարտիկ կռուէ ընդ Սամիացւոց գումարելոյ մազապուր փախստեայ ելեալ յիւր երկիրն դառնայր եւ անդէն սատակէր։ Նոյն անտիոքացի զՊիւթագորայ սամիացւոյ վկայէ գրեալ թէ Կիւրոս ի նմին պատերազմի անկաւ։ Իսկ զՂուկիանեայ բանսն ընաւ չհամարիմ իսկ ինչ, քանզի ոչ իմաստութեան խորհրդով գրէ ինչ նա զպատմութիւնն, եւ ինքն ընդ ինքն մարտ եղեալ կռուի։ Քսենոփոն պատմէ յապարանն խաղաղիկ յախտէ վախճանել։ Եւ Քսենոփոնեայ լաւ համարիմ հաւատալ քան եթէ այլոց։ Քանզի նախ այն իսկ չէ հաւանութեան թէ որ եւթանասնամենի էր ի ճակատ մոանէր *։ Երկրորդ անգամ վկայ իսկ Առիանոս եւ Կուինտոս Կուրտիոս են զի Աղէքսանդրոս արքայ Մակեդոնացւոց ի Պարսագատացւոց աշխարհին զԿիւրոսի շիրիմն եգիտ յորում Կիւրոսի դիակն կայր. արդ եթէ Մասագետաց անագորոյն տիկնոջն ըմբռնեալ էր զնա, ոչ այնպէս մեծապայծառ շիրիմ կանգնեալ թաղէր։

* Կիկերոն (վասն ըստ-. գրգ. Ա) ե- Ղ-ինանոս ի Մակրոբիոսին ասէն ոչ ի հարիւրորդ ամն եհաս.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ

1. Գիրք Գ վասն օրի։ 2. ԱԹ. դպր. ԱԺ։ 3. Ա. թուղթ առ Կուինտոս եղբայրն։ 4. Ամենաժողով տօնից ճառք առ Գրատիանոս։ 5. Բանք վասն Եւսեբ. եւ յառաջին ճառս գրոց ժամանակն ուղղելոյ։ 6. Ընծայ. ժամանակագր. ԳԼ. ԻԶ։ 7. Վասն յունական. պատմ։ 8. Քսենոփոն. թուղթ առ Եսքինէս. Աթենէոս դպր. ԱԺ. ԳԼ. ԵԺ. 9. Ղայերտիոս, Գ. 35։ 10. Գեղղ. ԴԺ. գ։ 11. Ի մատեանս յիշատ։ 12. Տիեզերական մատենա։ 13. Տիեզերական պատմ։ 14. Բիաբանու հնոց եւ նորոց կտակարանաց. 15. Որոյ խոստացեալ եւս էր ի գաղիական թարգմանութեան գրոցն գրել վասն սոցին իրաց մաքառումն. բայց մահու ի վերայ հասեալ գործն խափանեցաւ։ 16. ԿՂ. ՃԸ. 17. ԿՂ. ԶԴ. եւ ՃՂԱ։ 18. Ի պատմական դարանին։ 19. Երոդ. դպր. Ա. ԳԼ. 127։ 20. Կիկեր. վասն օրին. Գիր. Ա. ԳԼ. Ա։ 21. Երոդ. դպր. Ա. ԳԼ. ՃԸԺ։ 22. ԳԼ. ՃԼ։ 23. ԳԼ. ՁԹ։ 24. ԳԼ. ՀԱ։ 25. Վասն օրի. դպր. Ա. ԳԼ. Ա։ 26. Դիոն Քրիւսոստոմոս, ճառ ԸԺ. Ստրաբոն դպր. Ա. եւ այլք։ 27. ՈԳ. պատմ. դպր. Ը. ԳԼ. ԻԸ։ 28. Դպրու. ԱԺ եւ Ա։ 29. Ի պատմ. սքանչ. ԶԺ։ 30. Ի կեանս Արտաշիսի։ 31. ԳԼ. ԳԺ. 4։ 32. ԳԼ. ԳԺ. 14։ 33. ԳԼ. ԻԱ. 2։ 34. Դիոդ. սիկ. դպր. ԳԺ։

35. Ի Փոտայ գիրսն։ 36. Գիրք ԻԲ։ 37. Եսայի ԽԵ, 1։ 38. ԽԵ, 13։ 39. ԽԱ, 2։ 40. ԽԱ. 25։ 41. ԽԵ, 1։ 42. ԽԸ. 14։ 43. Ծ, 44։ 44. ԽԶ. 11։ 45. ԽԵ, 13։ 46. ԻԲ, 2։ 47. Երեմիա ԾԱ, 11. 48. ԾԱ, 27։ 49. ԾԱ, 28։ 50. Եսայի ԳԺ, 17։ 51. ԷՀ 265։ 52. Եսայի ԳԺ, 4։ 53. Դանիէղ Ե, 30։ 54. Ի նմին վայրի Ե, 31։ 55. Ի նմին վայրի։ 56. Նոյն Դանիէղ Ե, 28։ 57. Ի գիրս Եսթերայ ուրեք ուրեք։ 58. Յովսեպոս Գիրք Ժ, ԳԼ. ԱԺ։ 59. Երոդ. դպր. Ա։ 60. Դիոդորոս սիկեղացի դպր. Բ։

ԱՌԱՋԻՆ

ԳՊՐՈՒԹԻՒՆ

29.08.2008թ. J15

ՎԱՍԵՈՓՈՆՏԵԱՅ
ԿԻՐՈՍԻ ԽՐԱՏՈՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ
Ա ԳՊՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա

ՆՐԲԵՄՆ խորհուրդ ի մտի եղեւ մեր թէ ո՛րչափ ընկերհաշտութիւնք քակեցան յայնցանէ՝ որ այլազգ ինչ կամէին մանաւանդ առաքինանալ եւ ոչ յընկերհաշտութեան, եւ ո՛րչափ դարձեալ միահեծան իշխանութիւնք եւ քանի՛ սակաւ հարստութիւնք ի բաց քակեցան ի խառնիճաղանճ ռամկէ. եւ եթէ քանի՛ք իսկ իցեն որոց ձեռն արկեալ ժպրհել բռնանալ, կէսք ի նոցանէ վաղվաղակի ամենեւին իսկ ի միջոյ բարձան, եւ կէսք թէպէտ եւ սակաւիկ ինչ ժամանակ յիշխանութեան կացեալ բաւեցին, զարմանալի եղեն, որպէս թէ իմաստունք իցեն եւ արք փառաւորք։ Եւ զբազմայզմնաւ ածպք թէ յիւրաքանչիւր իսկ տունս իցեն, որոց բազում գերդաստանիկք իցեն, եւ իցեն որոց բնաւ սակաւք իսկ,

սակայն եւ զսակաւաւորսն եւս զայնոսիկ չկարիցեն ի կիր արկանել ի հնազանդութիւն տեարքն։

Անդերձ նոքիմբք զմտաւ ածաքթէ եւ անդիորդքն անդւոյն իշխանք են, եւ որք զերիւարս ասպաստանացն բուծանիցեն, եւ ամենեքին որ հովիւքն կոչիցին, որոց անասնոց տիրիցեն, նմանագոյնս նոցին իշխանք կարծիցին։ Այս աւանիկ զդասակսն զայնոսիկ համարէաք աւելագոյն յօժարեալս տեսանել հնազանդել հովուացն, քան զմարդիկ՝ իշխանաց։ Զի գնայցեն երամակքն յո ուրեք գնացուցանեն զնոսա հովիւքն եւ ճարակիցին զարօտս վայրացն յորոց վերայ արձակիցեն զնոսա, եւ մերժիցին ուստի արգելուցուն զնոսա։ Այս եւ զշահսն եւս որ ի նոցանէն առնիցին, այնպէս ինչ հովիւքն ի կիր արկանեն որպէս զիարդ ինքեանք կամիցին։

Արդ եւ ոչ զմիոջէ իսկ երբեք զդասուէ լուաք ուրեք եթէ ընդ հակառակս ինչ ելեալ կայցեն հովուին, ոչ առ անսաստելոյ եւ ոչ առ չհամարձակելոյ զպտուղսն ի կիր արկեալ վարել։ Այլ հօտքն եւս դժընդակագոյնք այլոցն ամենեցուն են, քան որոց իշխիցեն նոցա եւ օգտիցին ի նոցանէ։ Իսկ մարդիկ ոչ ընդ ումեք առաւել ի վէգ եկեալ խեռիցեն քան զորոց ազգն լինիցի նոցա եթէ իշխել մտաբերեն։

Յորժամ զայս ամենայն զմտաւ ա-
ծէաք, ապա նոքիմբք լինէաք խելա-
մուտ թէ դիւրագոյն իցէ մարդոյ ա-
մենեցուն այլոց անասնոց իշխել քան
եթէ մարդկան։ Զայց քանզի զմտաւ
ածաք եթէ եղեւ իսկ Կիւրոս պարսիկ
որ զբազում մարդիկ արար իւր հնա-
զանդեալս, եւ զբազում քաղաքս եւ
զբազում ազգս, անտի այնուհետեւ
տաղնապեցաք ի հարկէ իսկ առնուլ
ի միտ, եթէ ոչ անհնարին եւ դժուա-
րին ինչ գործ իցէ մարդկանն տիրել,
թէ իմաստութեամբ եւ խելամտու-
թեամբ զայն ոք վճարիցէ։ Եւ արդ
գիտեմք եթէ յօժարեցին հաւանել
հնազանդ լինել Կիւրոսի ոմանք որ ի
բացեայ էին բազում աւուրց գնաց
ճանապարհի, եւ կէսք՝ ամսոց. եւ այլք
որոց եւ տեսեալ իսկ երբեք չէր գնա,
եւ ոմանք որ գիտէինն քաջ թէ տե-
սանիցեն իսկ ոչ, սակայն կամէին նմին
հնազանդ լինել։

Զի այսչափ ինչ լաւ քան զայլ
թագաւորսն էր եւ որ զՀայրենի իշխա-
նութիւնսն առին եւ որ յանձանց իսկ
ստացան. զի սկիւթացին թէպէտ եւ
բազում Սկիւթացիք են, այլում ազգի
չկարէ տիրել եւ սիրելի լինել, եւ զայն
եւեթ սիրիցէ թէ իւրում ազգին կայ-
ցէ մնայցէ իշխան. եւ թրակացին Թրա-
կացւոց, եւ զիւրիկեցին Զիւրիկեց-

ւոց. եւ զայլոց եւս ազգաց նոյնդունակ լսեմք։ Արդ յԵւրոպն եւ այժմիկ եւս ինքնաւրէնս աղիկամիս ասեն լինել եւ յիրերաց քակել եւ ի միմեանց պառակտել։

Բայց Կիւրոս առ ընդ իւր զազգսն որ յԱսիացւոց աշխարհին էին ինքնաւրէնս աղիկամիս, եւ երթեալ հասեալ սակաւ ինչ պարսիկ զօրու իշխեաց Մարաց եւ Վրկանացւոց նոցա իսկ կամաւ։ Եւ վանեալ վկանդէր զԱսորիս, զԱսորեստանեայս, զԱրաբացիս, զԴամիրս, զերկոսին զՓռիւգացիսն, զԼիւդացիս, զԿարիացիս, զՓիւնիկեցիս, զԲաբեղացիս։ Իշխէր եւ Բակտրիացւոց եւ Հընդկաց եւ Կիղիկեցւոց. ապա եւ Շակաց եւ Պափղագոնացւոց եւ Մեդադինացւոց եւ այլոց եւս բազում ազգաց զորոց եւ ոչ զանուանսն ոք կարիցէ ասել։ Իշխէր եւ Յունաց որ յԱսիացւոց աշխարհին էին. եւ ի-ջեալ ի ծովակողմն տիրէր Կիւպրացւոց եւ Եգիպտացւոց։

Արդ այսց ամենայն ազգաց տիրեաց, որ ոչ իւր միաշուրթն համալեզուք էին, եւ ոչ միմեանց իսկ։ Բայց սակայն կարաց յայնչափ աշխարհ ահիւն հասանել, մինչեւ ամենեցուն իսկ երկրնչել եւ ի նա ձեռն ումեք չմխել։ Կարաց եւ այնպիսի ինչ յօժարութիւն արկանել ամենեցուն նմա պաշտօն առնելոյ,

որպէս զի միշտ իսկ եւ հանապազ նո-
ցա կամքք արժան համարէին վարել։
Զայնչափ անչափ ազգս նուաճեաց ընդ
որս դժուարին է անցանել, ընդ որ կոյս
ոք եւ սկսանիցի գնալ յարքունեացն,
թէպէտ ընդ արեւելս ոք գնայցէ թէ-
պէտ ընդ արեւմուտս, եթէ ընդ հա-
ցաւ եթէ ընդ հիւսիսի։

Ցայց մեք, քանզի արժանի զարմա-
նալոյ այրս է, դիտեսցուք տեսցուք թէ
ո՞ք երբեք էր ազգաւ, եւ զի՞նչ բարք
էին նորա, եւ որպիսի՞ ինչ խրատու
խրատեալ եւ այնպէս ընտիր եւ ազ-
նուագոյն գտաւ յիշեալ անդ մար-
դկան։ Եւ արդ զոր հարցաք ինչ եւ զոր
կարծեմք թէ ազդ եղեւ մեզ, զայն
ջանասցուք պատմել։

Գ Լ Ո Ի Խ Բ

Պիւրոսի ասեն ի Կամբիւսեայ ծնանել
ի Պարսից թագաւորէ. Կամբիւսէս այս
ի Պարսից ազգէ էր, եւ Պարսիկքն ի
Պերսեայ անուանեալ կոչին. եւ մայր
ասեն լեալ զԱնդանէ. իսկ Անդա-
նէ ինքն դուստր էր Աժդահակայ Ա-
բաց եղելոյ թագաւորի։ Զկիւրոսէ
պատմեն եւ նուագեալ եւս հնչի ցայժմ
ի բարբարոսաց անտի թէ բարենշան
եւ գեղեցիկ էր տեսլեամբ, եւ մար-
դասէր անձամբ, եւ ուսումնասէր, եւ

առատ. որպէս զի զամենայն իսկ աշ-
խատութիւն յանձին ունել եւ ի բնաւ
վիշտս մտել վասն յարգանացն գո-
վութեան։

Այսպիսի ինչ շունչ եւ ոգի եւ կեր-
պարանս յիշատակեն թէ ունէր։ Խրա-
տեցաւ ի Պարսից օրէնս. այս օրէնք
ի հասարակաց բարութեանցն առնեն
սկիզբն, քանզի ոչ եթէ անտի առնի-
ցեն սկիզբն, ուստի ի բազում քաղաքաց
սկսանիցին. զի կէսք ի քաղաքաց թո-
ղուն զեւրեանց մանկտին որպէս զիարդ
ոք ինչ կամիցի՝ խրատել, եւ զնոսին
իսկ զերիցագոյնսն զիարդուպէտ ըստ
իւրեանց իսկ հեշտի գնալ։ Այպա յե-
տոյ դուլ եւ պատուէր տան մի գողա-
նալ, մի յափշտակել, մի բռնութեամբ
յուրուք տուն հասանել, մի հարկանել
զուր յանիրաւի, մի շնալ, մի անսաս-
տել իշխանին, եւ այլ եւս ինչ նոյն-
պիսիս նոյնգունակ. ապա թէ յանցեալ
ինչ ուրուք ի նոցանէ իցէ, պատիժս
պատուհասից ի վերայ դնիցեն։

Իսկ Պարսից օրէնք կանխեալ իբրեւ
զսկզբանէն փոյթ յանձին ունին, զի մի
այնպիսիք ոք քաղաքացիքն իցեն, զի
զյուռութեան իրիք գործոյ կամ զծա-
նակութեան զհետ իցեն. եւ հոգան
այսպէս զսոյն ձեւ։ Գոյ նոցա հրա-
պարակ, որում անուն կոչիցի եղեւթե-
ա, որ թարգմանի ազատ, անդ են եւ

արքունիքն եւ այլ եւս վանք. անտի գինք եւ վաճառք եւ վաճառորդք եւ նոցին բարբառքն եւ աղմուկք մեկնեալ որոշեալ են յայլ ինչ տեղի, զի մի իցէ թէ նոցին ամբոխն եւ ժխորն ի խրատելոցն պարկեշտութիւն խառնիցի։

Բայց հրապարակն որ շուրջ զապարանօք իշխանացն իցէ, ի չորս բաժինս բաժանիցի. մի մասն ի նոցանէ մանկտւոյ է, եւ մին երիտասարդացն, մեւս եւս արանց կատարելոց, եւ չորրորդն այնոցիկ որ արտաքոյ քան զզինուորութեան ամսն իցեն։ Եւ օրինօք իւրաքանչիւր ի նոցանէ դան հասանեն յիւրեանց տեղիս. մանկտին ընդ այգն, եւ արքն կատարեալք. բայց ծերագոյնքն երբ նոցա հաճոյ թուիցի, բայց եթէ յաւուրսն կարգեալս յորս պարտ իցէ նոցա անդէն իսկ դտանել։ Իսկ երիտասարդքն ննջեն զապարանօքն հանդերձ հանդիսին զինուք բայց միայն յամուսնացելոցն. եւ պահանջին իսկ ոչ սոքա, թէ ոչ կանխագոյն պատուէր տուեալ իցէ նոցա դալ. բայց չէ իսկ վայելուչ նոցա բազում անգամ ի բացեայ դտանել։

Ի վերայ իւրաքանչիւր բաժնից երկոտասան իշխանք կան, քանզի եւ երկոտասան տոհմք զատանին Պարսից, եւ ի վերայ մանկտւոյն ի ծերագունացն ընտրանաւ կան, որք թուինն եթէ

մարթեն զմանկտին աղնուագոյնս ի հանդիսի ցուցանել. եւ ի վերայ պատանեկացն յարանց անտի կատարելոց որ զնոսին իսկ զպատանեական թուիցին լաւագոյնս ընծայեցուցանել. իսկ ի վերայ արանցն կատարելոց նոքա որ առաւել առնելիս կատարիցեն զնոսա հրամանացն աւագ իշխանութեանցն։ Զոն եւ ծերոցն վերակացուք ընտրանաւ, որք վերակացու լինիցին զի եւ նոքին զպատշաճան ի գլուխ հանիցեն։

Զոր ինչ իւրաքանչիւր հասակի հրամայեալ իցէ գործել, պատմեացուք, զի յայտ առաւել լինիցի թէ որպիսի ինչ փոյթ յանձին ունիցին զի աղնուագոյնք քաղաքացիքն իցեն. մանկտին ի վարդապետանոցն յաճախեալք զարդարութիւն ուսանին զիրաւն եւ զարժանն կորովել, եւ ասեն թէ ի դոյն իսկ գնան, զոր օրինակ առ մեզ իսկ որ զդպրութիւնն ուսանիցին։ Եւ նոցին իշխանքն զմեծ մասն աւուրն ծախեն եղեալ նոցա դատաւորս։ Զանգի առնին իմն եւ մանկուց առ միմեանս որպէս եւ արանց՝ գողութեան եւ յափշտակութեան եւ բռնութեան եւ խաբէութեան եւ չարախօսութեան բամբասք, եւ այլոց եւս նոյնպիսեաց մեղադրութիւն. որոց եթէ անիրաւեալ ինչ իցէ յայնցանէ եւ հասանիցեն ի վերայ, պատիժս ի վերայ ածեն։

Տանջեն եւ ըրա գտանեն զի զուր բամբասիցէ տարապարտուց ձգձգիցէ։ Դատին եւ զապախտաւորութեան մեղադրութիւն, վասն որոյ առաւել զմիմեանս ատեան մարդիկ, բայց դատին ոչ. եւ զումէ գիտիցեն թէ մարթի զձիրն հատուցանել՝ եւ չհատուցանէ, լակեն եւ զնա սատիկ։ Զի զապախտաւորայն այսպէս ածեն զմտաւ թէ եւս առաւել զդից եւ զհարց եւ զմարց եւ զաղդէ եւ զտոհմէ անփոյթ առնիցեն։ Այսպէս թուի թէ զապախտաւորութեան՝ լպրշութիւն եւ անամօթութիւն զհետ դնայցէ. քանզի այն իսկ է որ ամենեւին իսկ ի բնաւ քարուկանան լինիցի առաջնորդ։

Ուսուցանեն մանկուոյ եւ ցածութիւն, եւ մեծ իմն նպաստ լինիցի նոցա առ ուսանել զգաստանալ, զի եւ զերիցագոյնսն տեսանիցեն զօրն ողջոյն ցածութեամբ կեցեալ։ Ուսուցանեն նոցա եւ իշխանաց հնազանդ լինել. եւ ի դոյն յաճախագոյն այն նպաստ լինի, զի եւ զերիցագոյնսն տեսանեն հնազանդեալս յոյժ իշխանացն։ Ուսուցանեն եւ ժուժկալս լինել պորտոյ եւ ըմպելւոյ. լինի եւ ի նոյն բազում օգնականութիւն, զի տեսանեն եւ զծերսն զի ոչ յառաջագոյն երթան վասն պորտոյ մինչ չեւ իշխանացն արձակեալ։ Զի ոչ եթէ առ մարցն ու-

տեն մանկտին, այլ առ վարդապետին, յորժամ իշխանքն նշանակիցեն։ Բռե-
րեն եւ ի տանէ ուռճիկ՝ հաց, եւ խոր-
տիկ՝ կոտիմն. իսկ վասն ըմպելոյ՝ բա-
ժակ, զի եթէ ծարաւիցէ ոք հանցէ ի
գետոյ անտի։ Հանդերձ սոքումբք ու-
սանին եւ ընդ գիրկս մտանել եւ նե-
տաձիգ լինել. մինչեւ ցվեշտասան եւ
ցեւթնուտասն ամն ի ծնընդենէ զայս
ինչ մանկտին առնեն. եւ այնուհետեւ
անցանեն ի պատանեական։

Ընդքին իսկ պատանեակքն դարձեալ
ընդ հրահանգս ելանեն այսպէս։ Ամ-
սրն ամ յորմէ հետէ ի մանկանցն ե-
լեալ իցեն, զիշխանացն ապարանօքն
ննջեն, զոր օրինակ կանխագոյն ճառե-
ցաւ, եւ պահպանութեան աղագաւ
քաղաքին եւ վասն ցածութեան։ Ի
թուի իսկ այսպէս թէ այն հասակ մա-
նաւանդ խնամակալութեամբ կարօ-
տանայցէ։ Պատուցանեն եւ զցերեկ
զանձինս իշխանացն՝ ի կիր արկանել,
եթէ պէտք ինչ հասարակաց իցեն. եւ
յորժամ պարտ եւ պատշաճ իցէ, ա-
մենեքին զապարանօքն մնան։ Եւ
յորժամ թագաւորն յորս ելանիցէ, ա-
ռեալ տանի զկէս պահապանացն. զայդ
առնէ բազում անգամ ի միում ա-
մսեան։ Պարտ է այնոցիկ որ ելանեն,
նետս ի կապարճսն ունել, եւ սուսեր
ի պատենի, եւ թուր զգօտւոյ, եւ

ասպար եւս եւ նիզակս երկու, զմին առ արձակելոյ եւ զմեւսն եւս թէ պիտոյ լինիցի, ձեռամբ ի գործ արկանելոյ։

Զմին իրի իսկ հրապարակաւ փոյթ յանձին ունին զորսոյ երէոց, եւ թագաւորն իբրեւ ի պատերազմի զօրավար է նոցա, եւ ինքնին իսկ գլխովին որս առնէ եւ զայլոց հոգայ թէ զիարդ արդեւք որսայցեն, զի ճշմարիտ իսկ կրթութիւն թուին իրքն ամենայնի որ ինչ ի պատերազմի լինիցի, քանզի ընդելուցանէ իմն այգունն յառնել եւ ցողահար եւ ցրտաբեկ եւ խորշակառ լինել, կրթէ եւ ի ճանապարհ երթալ եւ արշաւել։ Հարկ է եւ ի գազան աղեղամբ նետաձիգ լինել յոր վայր հասեալ ամրանայցէ. հարկ է բազում անգամ եւ ժրանալ եւս յորսն, յորժամ գազան ինչ յուժգնագոյն գազանաց ի դիմի հարկանիցի. քանզի պարտ եւ արժան է զայն որ մօտ հասանիցէ հարկանել եւ զգոյշ լինել եթէ ի վերայ դիմեալ խաղայցէ. որպէս զի չէ ինչ դիւրին գտանել թէ զինչ այն ինչ իցէ որ յորսսն չիցէ, յամենայնէ որ ի պատերազմի գտանիցի։

Յորժամ յորսն ելանիցեն ունին ճաշ աւելի քան զմանկտուոյ, որպէս ի դէպ է. բայց զայլն ամենայն հանգոյն նոցին. եւ յորժամ որս առնիցեն, չուտեն

ճաշ։ Ապա թէ պէտք ինչ լինիցին վասն երէցոյն տեսել յամել, կամ այլ ազգ ինչ կամիցին դեգերել վասն որսոյն, զճաշն ընթրիս առնիցեն, եւ ի վաղիւ անդր միւսանգամ որսայցեն մինչեւ ցընթրիսն, եւ մի օր զերկոսին աւուրսն հաշուիցին, քանզի միոյ աւուր ռոճիկ ծախեն։ Այս առնեն վասն ընդելանելոյ, զի թէ եւ ի պատերազմի պիտոյ ինչ լինիցի, կարիցեն զդոյն գործել. եւ խորտիկ զայն ունին այնպիսիքն, զոր որսայցեն ինչ, ապա թէ ոչ՝ զկոտիմն։ Իսկ եթէ կարծիցէ ոք ինչ զնոցանէ եթէ չախորժելով ուտիցեն, քանզի կոտիմն եւեթ ունիցին ընդ ռոճկի, կամ չախորժութեամբ ըմպիցեն, յորժամ ջուր ըմպիցեն, զմտաւ ածիցէ թէ զիարդ հեշտական իցէ քաղցելոյ փոխինդ եւ հաց ուտել, եւ որպէս քաղցր ծարաւելոյ ջուր ըմպել։

Իսկ տոհմք որ մնայցեն, դարձեալ ընդ այլ հրահանգս ելանեն, զոր մինչ դեռ մանկտին էին, ուսան, աղեղն առնուլ եւ նետ ձգել. եւ վասն նոցին ընդ միմեանս ոգորին. են եւ ի հրապարակի մրցութեան հրահանգք, զոն եւ ընդ նահատակութեանն վարձք։ Եթէ ի միում ի ցեղիցն բաղումք իցեն խելամտագոյնք եւ առաքինիք եւ հաւատարիմք, յարգեն եւ գովեն զնոսա քաղաքացիքն, եւ մեծարանս դնեն ոչ այնմ

եւ եթէ որ ի ժամուն իշխիցէ նոցա, այլ եւ որ գնոսա ոք մինչ մանկտին էին, խրատեաց։ Իսկ իշխանքն ի կիր արկանեն եւ զմնացեալ պատանեսկսն, եթէ պէտք ինչ լինիցին կամ պահպանել կամ զմնասակարսն խուզել կամ զաւաղակաց գհետ արշաւել, եւ կամ այլ ինչ որ պնդութեան եւ երագութեան պէտք իցեն։ Պատանեակքն զայս ինչ վճարեն. իսկ յորժամ զտասն ամս ի գլուխ հանիցեն, ի կատարեալ արսն ելանեն։

Ի ժամանակէ յորմէ հետէ ի պատանեկացն ելանիցեն, նոքին դարձեալ զքսան եւ զհինգ տարիսն այսպէս անցուցանեն։ Զառաջինն, որպէս զպատանեական զանձինս իշխանացն մատուցանեն ի գործ արկեալ վարել թէ պէտք ինչ հասարակաց լինիցին, որք ցածնոց իսկ գործք իցեն եւ կարողաց։ Եւ եթէ զօրաժողով ի մարտ պատերազմի ուրեք հասանիցէ երթալ, որ այնպէսն խրատեալ իցեն, չունին աղեղունս եւ գեղարդունս յորժամ երթայցեն ի ճակատս, այլ զզէնսն որ անքեմաքայն կոչիցին, պատենազէնք զրահապատք զլանջօքն, մինդաւորք որպէս ինչ Պարսիկքն նրկարին եւ յաջում ձեռին սուսեր պողովատիկ կամ թուր։ Ամենայն իշխանք ի նոցանէ կան, բայց միայն մանկանց վար-

դապետքն։ Իսկ իբրեւ զքսան եւ զՀինգ ամսն կատարիցեն, արձակիցին եւ սոքա որ աւելի քան զյիսուն ամաց իցեն ի ծնընդենէ իւրեանց. եւ ապա ի ծերագոյնսն անցանեն ոքք եւ ծերագոյնք իսկ կոչին։

Բայց եւ ծերքն դարձեալ ոչ արտաքս քան զիւրեանց աշխարհն ի պատերազմ երթան, այլ անդէն կան, դատին զՀասարակաց ինչ դատաստան կամ զառանձինն ինչ ուրուք. նա եւ զմահու դատաստան նոքին դատին, եւ զբնաւ իսկ զիշխանսն նոյնք ընտրեն։ Եւ եթէ ոք ի պատանեկաց անտի կամ յարանց կատարելոց յանցանիցէ ինչ յօրինացն, գուշակեն իւրաքանչիւրնահապետք ցեղիցն, եւ յայլոց անտի՝ որ կամիցին։ Իսկ ծերոցն լուեալ տարագիր հանեն, եւ որ տարագիրն ելանէ, անարգ եւ արհամարհ այնուհետեւ ըզկեանսն վախճանէ։

Այլ զի հաւաստեաւ յայտ լինիցի ամենեւին Պարսից առաքինութիւնն, սակաւիկ ինչ ընդ նոյնս եկիցայսրէն. զի այժմիկ համառօտիւք կարճառօտս ցուցցի վասն բանիցն ասացելոց յառաջագոյն։ Վասնզի պատմեն իմն զՊարսից այսպէս թէ իբրեւ երկոտասան բեւրք են. եւ ոչ ոք ի նոցանէ արգելեալ է օրինօք ի պատուոց եւ յաւագ իշխանութեանց. այլ իշխանութիւն

է ամենայն Պարսից զիւրեանց որդեակս
ի հասարակաց արդարութեան հրա-
հանգս յղել։ Այլ որ կարօղքն իցեն
սնուցանել զորդիսն զպարապորդս, ա-
ռաքեն, իսկ որ չիցեն ձեռնհաս, ոչ
յղեն. բայց որ յարքունական վարդա-
պետացն խրատիցին, համարձակ է նո-
ցա ի պատանեկաց միջի յերիտասար-
դութիւն հասանել, իսկ որ ոչ այն-
պէսն խրատիցին, չիք հնար։ Իսկ ի
պատանեսկսն որք վճարիցեն առնել
զօրինականսն, մարթ է նոցա յարս կա-
տարեալս խառնել եւ յիշխանութիւնս
եւ ի պատիւս վայելել։ Դարձեալ ե-
թէ ի մանկանցն չվճարիցին կամ ի
պատանեկացն, ի կատարեալսն չմտա-
նեն. եւ ի կատարելոց անտի որ առանց
յանցանաց անարատ կեցցեն, նոքա ի
ծերակոյտ անդր խառնին։ Այսպէս
ծերքն ընդ ամենայն լաւութիւնսն ան-
ցեալ կան ի կարգին։ Այս է առաքի-
նութիւն նոցա, որով թէ վարիցին, հա-
մարին ազնուագոյնք իսկ լինել։

Նա ցայժմ եւս կայ մնայ վկայու-
թիւն չափաւոր կերակրոյ նոցա եւ վաս-
տակելոյ նոցա ի կերակուրսն նշանակ։
Դանդի եւ այժմ առականք են Պար-
սից թքանելն եւ գայռութիւնքն եւ
շուայտութիւն, ամօթ է յայտ երթալ
ուրեք վասն միզելոյ կամ վասն այլոց
ինչ այնպիսի իրաց։ Օ՛այդ չկարէին

առնել թէ ոչ եւ չափ ինչ կերակուր կերակրէին եւ զխոնաւութիւնն սպառէին ճգամբքն եւ աշխատութեամբք։

ԳԼՈՒԽ Գ

ՅԱՅՍ վասն ամենայն Պարսից պատմեցաք. իսկ այժմ վասն որոյ բուռն հարեալ ի՞նչ բանս, զերաց եւ զարուեստեանց Կիւրոսի ճառեսցուք, եւ ի մանկութենէ իսկ առնիցեմք սկիզբն։ Զանգի Կիւրոս մինչեւ ցերկոտասան ամն կամ թէ սակաւ ինչ աւելի, նովին խրատու եւ իմաստութեամբ խրատեցաւ, եւ քան զընաւ իսկ զհասակակիցսն ընտիր երեւէր, եւ այնու՝ զի արագ արագ ուսանէր զայն որ արժանն ինչ էր, եւ բարուք եւ առաքինութեամբ զիւրաքանչիւր պատշաճն գործէր։

Յայնմ ժամանակէ հետէ կոչեաց Աժդահակ զիւրուրոյն դուստր եւ զնորին որդի. զի ցանկացաւ տեսանել, քանզի լսէր իսկ զնմանէ թէ բարուք եւ գեղեցիկ է։ Եւ Մանդանէ ինքնին եւ չոգաւ առ հայր իւր եւ ունէր զԿիւրոս զորդի իւր ընդ իւր։ Իբրեւ փութանակի երթեալ հասանէր, եւ ի միտ առնոյր Կիւրոս եթէ մօրն հայր է Աժդահակ, իսկ եւ իսկ վաղվաղակի քանզի իբրեւ որդի յաճախագութ էր ի բնէ, ողջոյն ետ նմա, զոր օրինակ յառաջա-

գոյն ընընդակից ոք կամ բարեկամ ողջունիցի։

Եւ տեսեալ զնա ընդ զարդ եկեալ եւ ամացեալ ծարիր յաչս եւ երփն երփն գունակաց եւ զգէսան յօրինեալ եւ զգանգուրսն, որպէս օրէնք էին Մարացն. քանզի այս ամենայն մարական է, եւ ծիրանի պարեգօտկունքն եւ գրատքն եւ քայտքն ի պարանոցի եւ ապարանջանք ի ձեռս եւ պախճաւանդքն եւ լանջագեղ կամարք. իսկ Պարսից եւ այժմ իսկ ի տունս ձորձք յոռիք են եւ կերակուրք խոտանք։ Արդ տեսեալ զզարդ հաւուն, հայեցեալ ընդ նա ասէր. Մայր իբրեւ զի գեղեցիկ է հաւս։ Եւ մօրն հարցեալ զնա թէ ո՛ քան զո գեղեցիկ թուիցի, հաՅրդ եթէ սա։ Պատասխանի տայր Կիւրոս թէ Մայր՝ քան զամենայն Պարսիկս՝ իմ հայրն վայելուչ եւ գեղեցիկ է, բայց քան զամենայն Մարս որչափ ես տեսի ի ճանապարհս եւ ի դրունս, կարի հաւս իմ գեղեցկագոյն է։

Ողջոյն տայր նմա Աժդահակ եւ ասէր պատմուճան գեղեցիկ, եւ քայտամանեկօք եւ ապարանջանօք մեծարոյ զարդարէր. եւ եթէ ուրեք հասանէր գնալ յոսկեսանձ երիւարի վերայ շրջեցուցանէր ոսկեւովք զարդուք ականակապ աճառօք, որպէս եւ ինքն իսկ սովոր էր երթալ։ Եւ Կիւրոս քան-

զի մանուկ էր եւ ընդ զարդ կամէր, ուրախ լինէր ընդ պատմուճանն եւ խնդայր յորժամ ուսանէր յերիւար հեծանել. քանզի ի Պարսից աշխարհին վասն դժուարին լինելոյ եւ զերիւարսն բուծանել եւ ձի վարել, քանզի լեռնային է աշխարհն, եւ երիւար անդամ տեսանել անօսր էր։

Յորժամ ընթրիս ուտէր Ա.ժդահակ հանդերձդատերաւն եւ Կիւրոսիւ, իբրեւ կամէր թէ ախորժելով կերիցէ զընթրիսն մանուկն, զի մի տան խորտակացն տենչանայցէ, ած առաջի նորա սկաւառակս եւ պէսպէս ազգի ազգի համեմանս եւ խորտիկս։ Իսկ զԿիւրոսէ պատմեն ասել այսպէս. թէ Ով հաւ, քանի՛ աշխատութիւն է քեզ յընթրիսն քում, թէ հարկ իցէ քեզ ի բնաւ իսկ իսկաւառական ձգել զձեռս եւ ճաշակել յազգի ազգի խորտկաց պտի։ Ասէ Ա.ժդահակ. Իսկ արդ զի՞րդ, ո՞չ քան զՊարսից ընթրիսն բարւոք թուիցին քեզ ընթրիքս։ Եւ Կիւրոսի ասեն տալ առ այն պատասխանի, թէ Ո՛չ հաւ. այլ յոյժ իսկ լոկ եւ վարկպարազի առ մեզ ճանապարհ է առ յագեցնալ, քան առ ձեզդ։ Վասանզի զմեզ հացիկն եւ միսն յագեցուցանէ, եւ դուք ի նոյն փութայք ընդ մեզ, եւ ընդ բազում իմն արահեաս ի վեր եւ ի խոնարհ յածիք շրջիք մոլորեալք թափառական

եւ հաղիւ եկեալ հասանէք յոր մեք վաղագոյնն հասաք։

Աժդահակ ասէ. Մանուկ դու ոչ ինչ ծանրացեալ նեղիմք յորժամ յաճիցիմքն եւ շրջիցիմք. եւ դու, ասէ, թէ ճաշակիցես ապա ի միտ առցես եթէ հեշտական է այն։ Ասէ Կիւրոս. Նա եւ քեզ աւանիկ հաւ, տեսանեմ զի ատելի եւ գարշելի են խորտիկքս։ Եհարց ցնա Աժդահակ, թէ Ի՞նչ իմացեալ մանուկ դու ասես. Ոչ տեսանեմ, ասէ, զքեզ, զի յորժամ ի հաց հուպ լինիցիս, ոչ ուրեք զձեռսդ սրբես, իսկ յորժամ մխիցիս ի մի ինչ ի նոցանէ, վաղվաղակի զձեռսդ ի դաստառակսն սրբես, որպէս զի բնաւ տաղտկաս իսկ լի լինել նոքօք։

Ասէ Աժդահակ. Այսուհետեւ եթէ այդպէս գիտես ով մանուկ դու, զոնէ միս կեր զի զօրագոյն երթայցես ի տուն. իբրեւ զայս ասէր, բազում պատրուճակս երէոց եւ զգօն անասնոց բերէր առաջի. եւ Կիւրոս իբրեւ ետես շաղիղ բազում. Ցա՞ս ինձ ասէ, ով հաւ, զայս ամենայն միս որպէս ինչ ինձ կամ իցէ, արկանել զնոսա ի կիր։ Ասէ. Երդուեալ իցէ իմ Աբրամազդ, յինէն տուեալ քեզ մանուկ դու։ Յայնմ վայրի առեալ Կիւրոսի զմիան տայր ասեն ցայնոսիկ որ շուրջ զհաւուն իսպառաս կային. եւ ցիւրաքանչիւր

ոք ասէր թէ քեզ այդ, քանզի մտադիւ-
րութեամբ ուսուցանես ինձ յերիւար
հեծանել. եւ քեզ, զի սուսեր ետուր
ինձ. քանզի այժմ զայս ինչ ունիմ.
իսկ քեզ, զի հաւուս քաջ դարման
տանիս, եւ քեզ, զի մեծարանս դնես
մօրն իմում. զայս առնէր մինչեւ ետ
զամենայն զմիան զոր առ։

Ասէ Աժդահակ. Շակայ մատռուա-
կի զոր ես առաւել մեծարեմ, չտա՞ս
ինչ։ Եւ Շակասն գեղեցիկ էր եւ ու-
նէր պատիւ մուծանել զաղաչելիսն առ
Աժդահակ, եւ արդելուլ եթէ չթուէր
նմա ժամ մուծանելոյ զնոսա։ Եւ
Կիւրոս եհատոյց համարձակութեամբ ի-
բրեւ մանուկ զի ոչ ինչ կասկած կամ
կարծիս ի մտի ունէր, թէ Ո՞մէ կամ
ընդէ՞ր հաւ, դմա այդպէս շուք դնի-
ցես։ Աժդահակ խաղալով ասէ. Ձտե-
սանիցե՞ս ասէ, զիարդ գեղեցիկս մա-
տռուակիցէ եւ պատշաճ կերպարանօք։
Իսկ թագաւորացն մատռուակքն շքով
մատռուակեն եւ ջինջ խառնեն եւ զտաշ-
տրն յերիս մատուանն յօրինեալ մատու-
ցանեն զի լինիցի դիւրին առ առնուլ
բաժակն այնմ որ կամիցին ըմպել։

Հրաման տուր, ասէ, Շակայ, եւ
ինձ տալ զբաժակն, զի եւ ես բարւոք
խառնեցիս քեզ ըմպելի, եւ զմիտոդ
հաճեցիս, եթէ կարիցեմ։ Եւ հրա-
մայեցաւ տալ։ Իսկ Կիւրոսի ի ձեռն

առեալ զբաժակն աղնուագոյն ողողէր, զոր օրինակ տեսեալ էր Նորա զՇ.ակաս, եւ այնպէս յօրինեալ զկերպարանսն փութով եւ պատշաճութեամբ մատուցեալ տայր զտաշան հաւուն, մինչեւ մօրն եւ Ս.ժդահակայ ի ծաղուէն թալանալ։ Եւ Կիւրոսի իսկ ծաղու ընթացեալ առ հաւն, եւ միանգամայն ընդ համբուրելն ասէր. Ով Շ.ակա, կորեար մերժեցար, արկանեմ զքեզ ի պատուոյ այտի քումէ, զի այլովք բազմօք քան զքեզ աղնուագոյն մատռուակիցեմ եւ զդինին ոչ ըմպիցեմ։ Զի թագաւորաց մատռուակք յորժամ զտաշան մատուցանիցեն, հանեալ ի նմանէ ի ճաշակ անդր յահեակ ձեռն հեղեալ ըմպեն զի մի աջողեսցի նոցա եթէ դեղ խառնիցեն։

Յետ այնորիկ ասէ ընդ խաղ Ս.ժդահակ. Զի՞ է Կիւրոս զի այլով ամենայնիւ նմանեցեր Շ.ակայ, բայց զդինիդ չարբեր։ Զի երկեայ ասէ, թէ գուցէ դեղ իսկ խառնեալ իցէ ի խառնելիսն. զի յորժամ հացկերոյթն առնէիր բարեկամաց յաւուր ծնընդոց, ստոյգ ի վերայ հասի եթէ սա ձեզ դեղ խառնէ։ Եւ ինքն ասէ, գիտացեր զայդ մանուկդ։ Պանզի տեսի ասէ, զձեզ զի եւ մտօք եւ մարմնովք ձերովք սխալակեալ էիք. զի նախ զոր չտայք մեզ մանկտուոյ գործել, զայն դուք առ-

նէիք. քանզի ամենեքին իսկ միանգամայն ճչէիք գոչէիք, եւ իմանայիք ոչ զմիմեանս, եւ երգէիք եւս յաճախ ծաղրալից կերպարանօք. այնմ որ երգէրն չլսէիք, բայց երգնուիք եթէ քաջ նուագիցէ։ Պատմէր իւրաքանչիւր զք ի ձէնջ զիւրոյ անձինն զօրութիւն. յորժամ յառնէիք կաքաւել, ոչ եթէ կաքաւաձեւ ինչ զոտս բախել, այլ եւ ոչ թէ կալ իսկ ուղղորդ կարէիք. ամենեւին իսկ յապուշ միտս հարեալ էիք, դու մոռացեալ եթէ թագաւոր իցես, եւ այլքն՝ եթէ դու իշխան ես. քանզի եւ ես յայնժամ ի միտ առի զառաջինն եթէ այն իսկ էր բանից հանգոյն հաւասարութիւն, զոր դուք յայնժամ առնէիք. քանզի եւ ոչ լռէիք իսկ երբէք։

Ընդդահակ ասէ. Իսկ քո հայրն յորժամ ըմպիցէ, ո՞չ արբենայ։ Ոչ, ասէ։ Այլ զի՞ գործէ։ Ի ծարաւոյն դադարէ եւ ոչ այլ ինչ փաշաման կրէ. զի ոչ եթէ որպէս ինձ թուի ով հաւ, Շակաս մատռուակ է նորա։ Եւ մայրն ասէ. Չիմ իցէ որդեակ զի այնպէս համակ ընդ Շակայ գոռայցես։ Եւ Կիւրոս ասէ. Ոչ ատեամ, ասէ, զնա. զի բազում անգամ իմ ցանկացեալ երթալ առ հաւս, ժանտս այս արդելու. այլ աղաչեմ ասէ, ով հաւ, տուր դու ինձ զերիս աւուրս իշխել նմա։ Ընդդա-

հակ ասէ. Եւ զիաՐդ տիրիցես դու նմա։ Կիւրոս ասէ. Կացեալ որպէս եւ նայն ի մուտս, եւ յորժամ ի ճաշն կամիցի մտանել, ասիցեմ բայ Ձէ հնար դեռ եւս ի ճաշ անդր երթալ, զի կարեւոր ինչ իրս ընդ ոմանց խորհի. ապա յորժամ յընթրիս գայցէ, ասիցեմ թէ լուանայ. եւ եթէ ամենեւին իսկ յուտել իցէ, ասիցեմ եթէ առ կանացն է, մինչեւ ձգեալ յապաղիցեմ զնա, որպէս եւ նա զիս յապաղէ եւ արգելու ի քէն։

Այսպէս ուրախ առնէր զնոսա ի վերայ ընթրեացն, եւ զցերեկ եթէ ազդ լինէր նմա թէ կարօտ ինչ իւիք է կամ հաւն կամ մօրն եղբայրն, դժկամակ լինէր եթէ այլ ոք աճապարէր զնոյն առնել. զի ուրախ լինէր Կիւրոս եթէ որչափ ինչ ձեռնհասն էր, պաշտօն առնէր նոցա։

Իսկ յորժամ կազմ եւ պատրաստ լինէր Մանդանէ գնալ միւսանգամ առայր իւր, աղաչէր զնա Աժդահակ զԿիւրոս թողուլ։ Նա տայր պատասխանի թէ կամիմ իսկ ամենեւին հօրդ շնորհել. բայց խիստ համարէր յակամայ կամս զմանուկն թողուլ։

Յայնմ վայրի Աժդահակ զԿիւրոս ասէ. Որդեակ, եթէ ասա առ իս մնայցես, նախ ոչ իշխեսցէ Հակաս մտանելոյ քո առ իս, այլ երբ եւ կամիցիս

մտանել առ իս, ի քեզ ապաստան ի-
ցէ։ Հնորհակալ եւս ասէ եղէց քեզ
որչափ յաճախագոյն մտանիցես առաջի
իմ. եւ ապա զիմ երիւարս արկանիցես
ի կիր, եւ այլ եւս որ ինչ քեզ կամ
իցէ. եւ յորժամ երթայցես ուրեք,
առ ընդ քեզ զորս դուն կամիցիս։ Ա-
պա եւ յընթրիսն եւս յայն՝ որ քեզ
համովն եւ պարկեշտութեամբ թուիցի,
երթ, ընդ որ ճանապարհ եւ ախորժի-
ցես։ Յետ այնր ի բուրաստանն զգա-
զանն քեզ տամ, եւ զայլ ազգի ազ-
գի երէս ժողովեցից, զորոց դու իսկ
եւ իսկ յորժամ ուսանիցիս երիւար ար-
շաւեցուցանել, զհետ պնդիցիս, եւ
նետիւք եւ աղեղամբք տապաստ արկա-
նիցես, որպէս եւ աւագ որեարն։ Ա-
եւ մանկտի եւս տայ ես քեզ խաղալ
ընդ նոսա. եւ այլ զինչ եւ կամիցիս,
ասիցես ցիս եւ ոչ վրիպեսցիս։

Այս իբրեւ առաց Աժդահակ, ե-
հարց մայրն ցԿիւրոս թէ զոր առաւել
կամիցի, մնալ եթէ ելեալ երթալ։ Ա-
ոչ դանդաղեաց, այլ ասէ վաղվաղակի
թէ կամիմ մնալ։ Միւսանգամ հար-
ցեալ ի մօրէն թէ ընդէր. Ասէ. Ի մե-
րում աշխարհին քան զամենայն հա-
սակակիցս համարիմ աղնուագոյն լեալ
եւ յաղեղն եւ ի նետ, եւ եմ իսկ ազ-
նուագոյն. իսկ ասա տեղեկացեալ դի-
տեմ թէ երիւարաւ ի վայր քան զհա-

սակակիցս եմ. եւ զայն դու իսկ քաջ գիտես մայր թէ ամենեւին իսկ ի խոր խոցիմ. ապա եթէ ասա զիս թողուցուս եւ ուսանիցիմ յերիւար հեծանել, յորժամ ի Պարսից աշխարհին իցեմ, ինձ այսպէս թուի, թէ զնոսին իսկ զընտիր ընտիր հետեւակացն ամենեւին գլեցեմ. ապա յորժամ այսրէն ի Սարս եկիցս, ջանացայց զօրաւիգն օգնականութեան հաւուս լինել, զի իցեմ իսկ քան զամենայն քաջ այրուձի ազնուագոյն։

Այրն ասէ. Չարդարութիւն, մանուկ դու, զիա՞րդ ուսանիցիս, զի վարդապետք անդ են։ Դու Կիւրոս ասէ. Ընդ եմ հաւատեաւ եւ ճշգրիտ խելամուտ եղէ։ Անդանէ ասէ. Իսկ զիա՞րդ եղեր դու խելամուտ։ Զի վարդապետն, ասէ, զիս՝ քանզի հաստատութեամբ զարդարութիւն ուսայ, այլոց դատաւոր կացոյց։ Արդ, ասէ, երբեմն ուրեմն ի միում դատաստանի գան արբի, զի անուղղայս դատեցայ։ Դու էր դատաստանն այսպիսի ինչ։ Անուկ յաղթանդամ որ փոքր պարեգօտ ունէր, զմեւս եւս մանուկ փոքրիկ, որ մեծ բաճկոնն էր, զնա մերկացեալ եւ զիւրն զնուաւ արկ, եւ զնորայն ինքն ագաւ, ապա ես իբրեւ դատ կամեցայ առնել նոցա, այսպէս ածի զմտաւ թէ լաւ այն է, երկոցունց զպատշաճ իւ-

բաքանչիւր պարեգօտն ունել։ Եւ վասն նորին իսկ այնորիկ գան ԵՀար զիս վարդապետն եւ ասէ. Եթէ կայիր դու դատաւոր եւ իրաւընտիր այնր որ պատշաճականն էր, ապա այսպէս պարտ եւ պատշաճ էր առնել. իսկ եթէ հասանիցէ ընտրել թէ ո՞ր պարեգօտն իցէ, այնմ ասէ, պարտ է դէտ ակն ունել թէ ո՞ր ստացուած արդար եւ իրաւական է, արդեւք այնմ որ հան ինչ բրոնութեամբ, ունի՞լ. եթէ որ գործեաց ոք ինչ կամ գնոց առ, զայն ստանալ. եւ ապա ասէ թէ որ օրինօք ինչ է, արդար է, եւ որ չէն օրինօք, այն բրոնութեամբ։ Արդ եւ հրաման թէ պարտուպատշաճ է դատաւորի օրինօք զվճիռն դնել։ Այսպէս ես, ասէ, մայր, բնաւին իսկ գիտեմ հաստատութեամբ զերաւն եւ զարժանն. ապա թէ կարօտիցիմ եւս ինչ, հաւս իմ, ասէ, այս ուսուցէ զիս։

Այլ ոչ նոյն իրաւունք են, ասէ, որդեակ առ հաւուն քում եւ ի Պարսից աշխարհին։ Զանգի սա ամենեցուն որ ի Արաստանի իցեն զանձն տէր կացոյց. իսկ ի Պարսս զկշիռն ունել իրաւունք համարին։ Եւ նախ քո իսկ հայրն զհրամայեալն առնէ զոր ինչ առնէ ի քաղաքի անդ, եւ զպատուիրեալն առնու. եւ նմա չափ ոչ իւր միտք են, այլ օրէնքն։ Եւ արդ զիարդ

ոչ ի գանէ կորընչեցիս յորժամ եր-
թայցես յաշխարհն, եթէ ի նմանէ
փոխանակ ընդ թագաւորութեանն՝
բռնութիւն ուսեալ գայցես։ Այս հա-
մարի թէ պարտ է աւելի քան զամե-
նեսեան ունել։ Այսէ Կիւրոս. Զոր հայրն
առաւել կարօղ է ուսուցանել ունել
սակաւ ինչ եւ ոչ շատ։ Զտեսանի-
ցե՞ս, ասէ, զի ամենեցուն իսկ Մարաց
ուսոյց նուազագոյն քան զինքն ունել։
Որպէս զի վատահ լեր, զի հայրդ ոչ
զայլ դք եւ ոչ զիս արձակիցէ ադա-
հութեան ուսումն ուսեալ։

ԳԼՈՒԽ Դ

Օձաց եւ բազում ինչ քան զսոյն խօ-
սէր Կիւրոս։ Եւ գլուխ իսկ ամենայնի,
մայրն մեկնեալ երթայր, իսկ Կիւրոս
մնաց եւ անդէն մնանէր։ Վաղվաղակի
ընդ հասակակիցսն խառնէր ընտանե-
բար. իսկ եւ իսկ զնոցին հարս զիւրեւ
ածէր, զի երթեալ յանդիման լինէր
նոցա եւ յայտնի իսկ երեւէր եթէ սի-
րէր զորդեակս նոցա. մինչեւ եթէ հա-
սանէր խնդրել ինչ ի թագաւորէ ան-
տի, հրաման տային մանկանցն զԿիւրոս
աղաչել զի զերսն վճարիցէ։ Եւ Կիւ-
րոս զոր ինչ աղաչէինն զնա մանկտին,
վասն մարդասիրութեանն եւ առատու-
թեան հանապազ հանէր զերսն ի գլուխ։

Եւ Աժդահակ զոր ինչ Կիւրոսն խնդրէր ի նմանէ, չկարէր դիմադարձ ինչ լինել եւ չընորհել։ Զի եւ ի խոթանալ նորա չեթող երբեք զհաւն եւ ոչ ի լալոյն դադարեաց. եւ յայտնի իսկ ամենեցուն էր, եթէ զահի հարեալ էր թէ զուցէ հաւն մեռանիցի. զի եւ գիշերի, եթէ խնդրէր ինչ Աժդահակ, նախ Կիւրոս զդայր, եւ յառաջ դան զամենեսին առանց դանդաղանաց ոստուցեալ աճապարէր սպաս հարկանել զոր օրինակ հաճոյ իսկ համարէր նմա, մինչեւ ամենեւին յանկուցանէր զԱժդահակ։

Սակայն շատխօս էր Կիւրոս, վասն խրատուն եւ իմաստութեան, զի ստիպէր ի վարդապետէ անտի տալ համարս ընդ որոց գործէր, եւ յայլոց առնուլ յորժամ դատիցի զնոսա։ Ա՛յ՝ վասն ուսումնասէր եւս լինելոյ, բազում ինչ ինքն հանապազ ցմօտակայսն հարցանէր. թէ զի՞արդ իցէ կամ ո՞րպէս կամ զմէ. եւ որչափ ինչ յայլոցն հարցեալ լինէր, առ կորովութեան արագ արագ առնէր պատասխանի. որպէս զի յայնմ ամենայնէ գումարէր իմն շատխօսութիւնն։ Այլ զոր օրինակ ի մարմինս որ ի մատաղութեան լինիցին անդամայաղթք, մարմնագեղք, սակայն երեւիցի իմն ի նոսա մանկութեան նշանակ որ մատաղօրեայ տիոցն գուշակ լի-

նիցի. նոյնպէս եւ Կիւրոսի ի շատխոս-
սութենէ ոչ խարխալանք երեւէին,
այլ միամտութիւնն եւ գութն եւ
խնամն. որպէս զի առաւել ցանկու-
թիւն ոք համարէր ունկն դնել նմա,
քան լինել առ նմա մինչ լուռն կայր:

Իսկ իբրեւ ածէր զնա ժամանակն
յաղթանդամութեամբ հանդերձ ի չափ
հասակի, այնուհետեւ սակաւ բանս ի
կիր արկանէր եւ բարբառ հանդարտու-
թեան, ցածութեամբ եւ ակնածու-
թեամբ լի լինէր. մինչեւ ամաչել իսկ
եւ շիկնել յորժամ ծերոց հասանէր
դիպել: Եւ ոչ եւս զնոյն օրինակ զշան
կորեան բարոյս ցուցանէր, ամենեցուն
ընդ անձն անկանել քծնելով: Նոյն-
պէս հեզ էր եւ հանդարտ եւ ի ժողովս
ամենեւին զուարճացեալ: Զի բա-
զում անգամ յորժամ մրցէին եւ գու-
պարէին ընդ միմեանս հասակակիցքն,
ոչ որով իւիք գիտէր թէ ինքն աղ-
նուազոյն է յայն կոչէր զընկերսն, այլ
զորոց գիտէրն թէ ինքն նուազագոյն
է, այնմ առնէր սկիզբն, եւ ասէր թէ
բարւոք իսկ քան զնոսա առնիցէ. յե-
րիւար հեծանել սկսանէր կամ նետ
ձգել յերիւարէ անտի մինչ չեւ բնաւ
ուսեալ հեծանել. եւ ի պարտելն ինքն
ընդ ինքն առաւել ծիծաղէր:

Բայց քանզի ոչ ինչ խորշէր ի պար-
տութենէ անտի, չառնել որով պար-

տեցաւն, այլ յաճախէր հանդէս առ-
նել միւսանգամ՝ եւս աղնուագոյն գոր-
ծել, իսկ եւ իսկ ի նոյն կշիռ ընդ հա-
սակակցացն հասանէր եւ վաղվաղակի
ելեւել առնէր, վասն ցանկութեան
գործոյն։ Որ ի բուրաստանին գազանքն
էին, անդէն բարձ ջնջեաց ի միջոյ,
քանզի զհետ պնդեալ տապաստ ար-
կանէր եւ կոտորէր. մինչ զի Ս.ժդահակ
ոչ ժամանէր այնուհետեւ ածել կու-
տել նմին գազանս։ Իբրեւ ազդ լինէր
Պիւրոսիեթէ կամի տալ նմա անասունս
եւ չէ ձեռնհաս, բազում անգամ ա-
սէր ցնա, թէ Ով հաւ զի՞ պիտոյ իցէ
քեզ աշխատ լինել եւ խնդրել գա-
զանս, այլ եթէ առաքիցես զիս յորս
հանդերձ քեռւովս, որչափ երէս տե-
սանիցեմ, համարեցայց եթէ դու իսկ
քեզէն ինձ զայն պարարեցեր։

Ցանկայր յոյժ յորս ելանել, բայց
չկարէր այնուհետեւ նոյնպէս թախան-
ձեցուցանել որպէս մինչ մանուկն էր.
այլ դանդաղէր մատչել. եւ որ յառաջն
զՇ.ակաս բամբասէր թէ չտայ թոյլ եր-
թալ առ հաւն, ինքն իսկ անձինն գըլ-
խովին լինէր այնուհետեւ Շ.ակաս.
քանզի ոչ երթայր առ նա, եթէ չէր
յառաջագոյն գիտացեալ թէ ժամ է,
եւ բնաւ զՍակաս աղաչէր նշանակել
նմա թէ երբ ի ժամու իցէ մտանել եւ
երբ տարաժամու. մինչեւ եւ Շ.ակաս

իսկ սիրէր զնա որպէս եւ այլքն ամենեքին։

Իսկ իբրեւ գիտաց Ա.ժդահակ եթէ ցանկացեալ է արտաքին որսոց, արձակէ զնա քեռւոյն հանդերձ, եւ առաքէ աւադ պահապանս ընդ նմա երիւարաւքս, զի ի դժուարին վայրաց զգուշասցին նմա, եւ եթէ գազան ինչ ի գազանաց վայրի երեւիցի։ Կիւրոս ցայնոսիկ որ զհետն գային, մոադիւրութեամբ հարցանէր թէ որոց երէոց հուպ երթալ պարտ իցէ, եւ զորոց պատշաճ խրախուսել եւ զհետ պնդել։ Եւ նոքա պատմէին թէ արջք զբաղումս որ մօտն գնացին՝ սատակեցին, եւ առեւծքն եւ վարազք եւ ինձք. իսկ եղջերուք եւ այծեմունք եւ առինք եւ իշավայրք չեն վնասիչք. եւ զայն եւս ասէին թէ պարտ եւ պատշաճ է ի դժուարին վայրացն զգոյշ լինել ոչ ինչ ընդհատ ի գազանաց. զի բազումք ձի ածեալ խառն ի խուռն քարավէժ դարահոս ի վախէ կործանեցան։

Եւ Կիւրոս զայս ամենայն ի միտ առնոյր յօժարութեամբ. բայց իբրեւ եւ տես եղջերու զի սրացաւ, զամենայն զոր լուաւն մոռացաւ, պնդեցաւ եւ եմուտ զհետ, եւ ոչ ինչ այլ ինչ տեսանէր, բայց թէ յոր վայր արդեւք երթեալ ամրանայցէ փախստեայ։ Իսկ երիւարն յօցտելն եւ ի խայտալն ան-

դէն ի գուճան հարաւ, եւ փոքր մեւս
եւս եւ զնա անդէն փողոտէր. այլ
ժուժեաց մնաց Կիւրոս հաղիւ ուրեմն,
եւ երիւարն կանգնեցաւ: Իսկ իբրեւ ե-
կեալ հասանէր ի դաշտ անդր, հար
կործանեաց նետիւ ղեղջերուն. մեծ ին
եւ գեղեցիկ էր որան: Նա ուրախ լի-
նէր, եւ պահապանքն մատուցեալ պա-
տուհասակոծ առնէին զնա, եւ ասէին
թէ յորպիսի ինչ վիշտս դիմեալ եր-
թաս. եւ խոստանային պատմել միրատ
միոջէ հաւուն իւրում: Ընդ Կիւրոս ի-
ջեալ կայր եւ զայն լուեալ արտմէր.
իսկ իբրեւ գոչիւն լուաւ, միւսանգամ
յերիւարն ելանէր, եւ տեսանէր ի հան-
դիպոյ անտի վարազ զի գայր, ընդ ա-
ռաջ երթեալ հասանէր, եւ ձգեալ զա-
ղեղն կորովութեամբ, զճակատն հար-
կանէր եւ ըմբռնէր զվարազն:

Յայնմ վայրի եւ քեռին սատեաց
նմա յորժամ զհամարձակութիւնն ե-
տես: Եւ նորա պատուհասեալ՝ սակայն
աղաչէր թէ զոր ինչ ինքն կալաւ, զայն
թողցեն նմա տանել տալ հաւուն:
Իսկ քեռին ասէ. Այլ եթէ աղդ լի-
նիցի նմա թէ զհետ մտեր, ոչ միայն
զքեզ, այլ եւ զիս պատուհասիցէ զի
թողիս զքեզ: Թէպէտ եւ այնպէս ինչ
կամ իցէ, ասէ, դան հարցէ զիս, յոր-
ժամ տաց եանմա: Եւ դու թէ կամիս,
ասէ ով քեռիդ, որ զինչ եւ պատու-

հաս հասանիցէ քեզ, սակայն զայն դու ինձ շնորհ արա։ Եւ Կիւրոսարէս յանդ հանեալ ասէ. Երթ դու քեզ, արա որպէս զիարդ կամիս, զի այժմիկ իսկ դու մեր թագաւոր թուիս լինել։

Ապա տարեալ Կիւրոսի զդազանն, տայր հաւուն եւ ասէր եթէ ինքն զայս ինչ որսաց նմա. զնեռսն եցոյց իսկ ոչ, այլ արեամբ թաթախ տարաւ եդ ուր սովոր էր հայել հաւն իւր։ Եւ Աժդահակ ասէ. Ո՞անուկ, ունիմ յանձին քաղցրութեամբ զոր ինչ ինձ շնորհես։ Ոչ միով իւիք յայսցանէ կարօտ եմ առ ի մտանելոյ քեզ ի վիշտս եւ ի ճգունս։ Կիւրոս ասէ. Ուրդ եթէ դու չես կարօտ, աղաչեմ տուր ինձ զսոսա զի ես տաց հասակակցացս։ Ասէ Աժդահակ. Ո՞ զայս եւ տուր ում եւ կամիս եւ որ ինչ միանգամ յայլմէ եւս յամենայնէ յօժարիցիս տալ, տուր։

Եւ Կիւրոսի առեալ տայր մանկանց եւ ասէր. Ով մանկտի իբրեւ զառանցեալ իմն էաք յորժամ ի բուրաստանին երէ որսայաք։ Զի ինձ այնպիսի ինչ թուի, որպէս զի թէ կապեալ ոք անասունս որսայցէ. նախ այն իսկ զի ի փոքու վայրի էին, եւ ապա զի վտիտք էին եւ քոսոտք, կէսք ի նոցանէ կաղք էին եւ կէսքն կրճատք։ Իսկ որ ի լերինսն եւ ի մարգս դազանք իցեն ո՛րպէս դեղեցիկք իցեն, զիարդ յաղթք երեւիցին

եւ իբր գէրք եւ սոնքացեալք. եւ եղ-
ջերուք իբրեւ զթեւականս ընդ երկինս
վերանայցեն։ Իսկ վարագքն որպէս
զարանց քաջաց պատմեն, ի վերայ դի-
մէին. եւ վասն լայնութեան պառա-
կացն չէր հնար սխալել։ Ինձ ասէ,
եւս գեղեցիկ թուին սոքա որ մեռեալս
են քան զկենդանիսն որ փակեալ պա-
տեալ կայցեն յորմածս արգելոցացն.
այլ թողուն արդեւք եւ զձեզ յորս
հարքն ձեր։ Դիւրին է, ասեն, թո-
ղուլ նոցա եթէ Աժդահակ հրաման
տայցէ։

Եւ Կիւրոս ասէ. Ո՞ իցէ որ յիշեսցէ
զձէնջ առաջի Աժդահակայ։ Ո՞ ոք ա-
սեն, բաւական իցէ քան զքեզ ածել
զնա ի հաւան։ Այլ զայն ոչ գիտեմ,
ասէ, թէ որպիսի ինչ ոք եղէ, զի խօ-
սել իսկ ինչ ոչ կարեմ, նա եւ հայել
եւս ընդ հաւն իմ իբրեւ զառաջինն,
ոչ մարթեմ. եւ եթէ այսպէս իսկ ի
սոյնս յաճախիցեմ, երկրնչիմ ասէ,
թէ գուցէ բնաւ անմիտ եւ յիմար ու-
րեմն լինիցիմ։ Յորժամ մանկիկն էի,
զօրագոյն իմն խօսելն թուէր։ Ման-
կտին ասեն. Դու ամենեւին յոռու-
թեան իմն իրս խօսիս, որպէս թէ ար-
դարեւ չիցես ձեռնհաս վասն մեր, որ
ինչ պիտոյն իցէ, վճարել. այլ զայլ
ոք հարկ հասանիցէ աղաչել զայն ինչ
որ ի քեզ իսկ ապատան իցէ։

Այս իբրեւ լուաւ Կիւրոս ծանրա-
ցեալ տրտմեցաւ, եւ գնաց լուիկ, եւ
տայր անձինն հրաման լրբել ժտել եւ
անդէն մտանէր։ Այնուհետեւ ասէր թէ
զիարդ խօսեսցի ընդ հաւուն առանց
տրտմեցուցանելոյ զնա, եւ ի գլուխ
հանիցէ զոր ինչ ինքն եւ մանկտին
հայցէին. եւ սկիզբն առնէր զայս ձեւ
օրինակ։ Աղէ ասա դու ցիս, ասէ, ով
հաւ, եթէ ոք ի գերդաստանկաց այսի
քոց ի բաց երթայցէ, եւ ըմբռնիցես
զնա, զի՞նչ ընդ նա առնիցես։ Այ՛նչ
այլ ինչ, ասէ, բայց պրկեմ, եւ ստի-
պեմ ի գործ ժրանալ։ Ապա թէ միւս-
անգամ ինքնակամն գայցէ առ քեզ,
զի՞նչ գործիցես։ Այ՛նչ ինչ գործի-
ցեմ, ասէ, բայց գանալեց առնիցեմ
զնա, զի մի զնոյն դարձեալ գործ գոր-
ծիցէ, ապա որպէս յառաջն ի գործ
անդր վարեմ։ Ասէ Կիւրոս. Ապա ու-
րեմն պարտ իցէ քեզ պատրաստել ինչ
որով զիս գան հարկանիցես, զի խոր-
հեցայս թէ զիարդ երթայցեմ փախըս-
տեայ յորս, առեալ զիմ հասակակիցս։
Եւ Աժդահակ ասէ. Այդ լաւ եւ
բարւոք արարեր զի կանխեալ ասացեր.
քանզի պատուէր տամ քեզ ատի մի
մեկնել. զի արդարեւ, ասէ, գեղեցիկ
իմն լինիցի եթէ վասն պատառի միոջ
մսոյ ընդ վայր թողեց զորդեակ դստերն
իմոյ։

Այն լուեալ Կիւրոսի հնազանդեալ մնայը. տրամէր տխրէր եւ լուռ եւեթ կայը։ Իբրեւ ետես զնա Ա.ժդահակ թէ սաստիկ տրամեցաւ, կամէր իմն շնորհել նմա եւ առեալ ածէր զնա յորս։ Յամ տայը, բաղում հեռեւակս եւ հեծեալս գումարէր եւ մանկտի, եւ զգազանսն ածեալ կուռեալ ի դաշտս երիվարացն արշաւելոյ, որս մեծ առնէր. եւ ինքնին յայն վայր հասեալ իբրեւ զթագաւոր պատուէր տայր թէ մի նետ ոք ձգիցէ, մինչ չեւ Կիւրոսի յագեալ իցէ ի ձգելոյ անտի։ Իսկ Կիւրոս չառ յանձն զարգելուլն. Ա.յլ եթէ այն կամ իցէ քո, ասէ, թէ ես ուրախութեամբ որս առնիցեմ, թոյլ տուր ամենեցուն որ ընդ իս իցեն, զհետ մտանել եւ ոգորել որպէս զիարդ իւրաքանչիւր ոք բաւական իցէ։

Յայնմ վայրի թոյլ տայր Ա.ժդահակ, եւ կայր նայէր ընդ նոսա յորժամ ընդ հակառակս գազանացն ելեալ ջանային, եւ զհետ պնդեալ ստէպ նետալից առնէին. եւ ընդ Կիւրոս ուրախ լինէր, որ առ խնդութեան չկարէր լուռ իսկ լինել, այլ իբրեւ բարակ մի քաջ այնպէս զաղաղակ եղեալ գոչէր յորժամ մօտ հասանէր ի գազան անդր, եւ աղաչէր յորդորելով զիւրաքանչիւր յականէ. ուրախ լինէր իբրեւ տեսանէր զԱ.ժդահակ զի ծիծաղէր ընդ մի ոք ի

նոցանէ, եւ եթէ զմեւս ոք դրուատէր ոչ ինչ չարակնէր։ Դարձեալ դայր Ա-ժդահակ բազում երէովք հանդերձ. եւ այնպէս հեշտական զայնժամու որսն համարեցաւ, զի ցանգ իսկ հանապազ յորժամ յորս երթալ հասանէր, ելանէր ընդ Կիւրոսի եւ զայլ եւս բազում մանկտի առնոյր վասն Կիւրոսի։ Բազում ժամանակս այսպէս ի գլուխս հանէր Կիւրոս, ամենեցուն ուրախութեան եւ լաւութեան իմն պատճառք լինեալ, իսկ չարեաց, ոչ ումեք։

Յորժամ զհնգետասանամենիւք կամ զվեշտասանամենիւք ուրեմն էր, որդի արքային Ասորեստանեաց որ ամուսնանալոցն էր, ցանկացաւ ինքնին որս առնել ընդ նոյն ժամանակս։ Արդ իբրեւ լուաւ եթէ ի մէջ Իւրեանց սահմանաց եւ Մարացն, բազում երէկոյ, որ ոչ որսացան վասն մարտից պատերազմաց, անդր տենչացաւ ելանել։ Արդ զի զգուշութեամբ իմն որսայցէ, հեծելազօրս եւս ընդ իւր առեալ երթայր եւ բազում տիգաւորս եւ սրնաւորս, որք զգազանսն ի թանձրախուռն մայրեացն ի վարս եւ ի դեւրս հանիցեն։ Եւ հասեալ ուր իւր պահակապանքն էին անդէն ճաշ ուտէր որպէս թէ վաղիւ վաղորդայն որս առնիցէ։

Իսկ իբրեւ երեկոյ լինէր, պահակափոխ դային ընդ առաջին պահապանացն

ի քաղաքէ անտի հետեւակազօրք եւ հեծեալք։ Ասմա այսպէս թուեցաւ, թէ բազում զօրականաց բանակք եկեալ հասեալ կան, զի երկու գունդք պահապանաց խառն էին, եւ ինքն եւս բազում հեծեալ եւ հետեւակ ունէր։ Զմտաւ ած թէ եւս իմն լաւ այս է, զԱրաստան աւար հարկանել, եւ մեծապայծառ իմն կարծէր որսոցն երեւել եւ մեհենական զոհիցն բազում յաճախութիւն լինել։ Ապա յարուցեալ ընդ այգն ընդ առաւօտն ածէր հասուցանէր զզօրսն, եւ զբազմամբոխ հետեւակացն ի մէջ սահմանացն թողոյր, եւ ինքն հեծելովքն ի Արացն պահական մատուցեալ եւ զընտիր ընտիրսն գունդագունդ ընդ իւր առեալ անդէն զետղ առեալ կայր զի մի Արացն պահապանքն ի վերայ ասպատակաւորացն հասցեն։ Իսկ զայլ եւս զպիտանիսն արձակէր ցեղընտիր այսր անդր ասպատակ դնել. եւ հրաման տայր շրջել եւ յինչ ինչ ոք հանդիպէր, զայն ի բաց զերծանել եւ բերել առ ինքն։ Ոչ ոք զայն ինչ առնէին։

Ազդ եղեւ Աժդահակայ եթէ թըշնամիք եկեալ կան յաշխարհն, դիմէր եւ նա ի սահմանակողմն անդր նոքօք որ զնուրեան էին. եւ նորին որդի նոյնպէս հասեալ հեծելովքն եւ այլոցն ամենեցունց նշանակէր ի թիկունս հա-

սանել։ Իսկ իբրեւ տեսին բազում մարդիկ Ասորեստանեաց անտի առ միմեանս կարգեալ առ իրեարս ճակատեալ, եւ զվաշտս հեծելոցն անշարժ անխաղաց, պնդեցան կացին եւ Սարք։ Իսկ Կիւրոս իբրեւ ընդ այլն հայեցաւ թէ յօգնականութիւն դիմեն, եւ ինքն ի վերայ խաղայր, յայնժամ նախ զէն ընդ անձն արկեալ, զի չեւ եւս թոյլ տուեալ էին նմա վառել զարդարել սպառազէն նովին զինուքն. քանզի զէնն եւ զարդն գեղեցիկ կարի էին եւ նմին համեմատ, զոր հաւոյն գործեալ էր հանդոյն մարմնոյն։ Այսպէս վառեալ պատրաստեալ հասանէր երիւարաւն։ Եւ Ասիդահակայ հայեցեալ զարմանայր, զոր հրամանաւ իսկ եկեալ կայր. բայց պատուէր տայր նմա առ իւր կալ։

Իսկ Կիւրոս իբրեւ ետես բազում հեծելազօր ի հանդիպոյ, հարցանէր թէ զոքա՞ իցեն, ասէ, թշնամիքն, հաւ, որ ի նուս երիւարացն հեծեալ կան հանդարտեալ։ Զոքա են, ասէ, հակառակորդք մեր։ Զի թէ եւ նոքա որ դիմեալ գան, թշնամիք են։ Եւ նոքին եւս, ասէ, թշնամիք են։ Այլ զոքա, ասէ, հաւ, անզգամք թուին եւ ի վերայ յոռեաց երիւարաց հեծեալ գան զմեր կարասին կրել։ Արդ պարտ է ամանց ի մէջ ի նոսա արշաւել։

Ղտեսանիցես, ասէ, մանուկ դու թէ քանի ամբոխ հեծելոցն իցէ որ կարգեալ կայցեն ճակատեալ. եթէ մեք ի նոսա դիմեսցուք, նոքա այսրէն գան կրճատեն զմեզ. եւ դեռ չեւ եւս կայ մեր ոյժ եւ զօրութիւն։ Կիւրոս ասէ. Ութէ դու կացցես մնասցես, եւ ունիցիս զդէմ այնոցիկ որ ի թիկունս հասանեն, նոքա զահի հարկանիցին եւ չխլրտիցեն, եւ որ զառն եւ զաւարն կրեն, իսկ եւ իսկ ի բաց ընկենուցուն յորժամ տեսանիցեն եթէ գան ոմանք ի վերայ նոցա։

Յորժամ զայս ասաց, հաճոյ թուեցաւ Ս.ժդահակայ հրաման ինչ տալ, եւ միանգամայն զարմանք ունէին զնա, թէ այնպէս հոգայ եւ տքնի, եւ պատուէր տայր իւրում որդւոյն զգունդս հեծելոցն առնուլ եւ ի վերայ աւարառուաց աւարին դիմել։ Դու ես, ասէ, ի նոսա յարձակեցայց եթէ խաղայցեն ի վերայ քո. մինչեւ ի հարկէ իսկ տագնապեալ մեզ ուշ ունիցին։ Կիաքսարայ առեալ զընտիր ընտիր երիւարացն եւ արս հզօրս ի վերայ դիմէր։ Իսկ Կիւրոս իբրեւ ետես եթէ դիմեցին, իսկ եւ իսկ վաղվաղակի խառն յարձակէր. նախ ինքն վարեաց չոգաւ տագնապաւ եւ Կիաքսարէս զհետ խաղայր եւ ապա այլքն։ Իբրեւ տեսին զնոսա աւարառուքն թէ մօտ եկին հասին,

վաղվաղակի թողեալ զկարասին փա-
խստեայ գնային։

Բայց որ զԿիւրոսիւն էին, հասա-
նէին կրճատէին, եւ որոց միանգամ
հասանէին վաղվաղակի խոցէին, եւ ա-
ռաջին Կիւրոս էր։ Իսկ որք ընդ այլ
ածապարեցին, զնոսա զհետ մտեալ
հալածական տանէին. եւ ոչ ուրեք
դադարէին մինչեւ զոմանս իսկ ի նոցա-
նէ սատակէին։ Զոր օրինակ շուն քաջ
որ խամ եւ անտեղեակ իցէ յանդրդ-
նագոյնս ի վարազ յարձակիցի այնպէս
Կիւրոս դիմեալ երթայր. ընդ այն եւեթ
հայէր թէ ըմբռնեալ խոցեսցէ, եւ
այլ ինչ զմտաւ ոչ ածէր։ Իբրեւ տե-
սին հակառակորդքն եթէ իւրեանց
զօրքն վաստակեցան, զգունդն խախ-
տէին, որպէս թէ դադարեցին այնու-
հետեւ զհետ մտանել յորժամ տեսին
զնոսա ի վերայ յարձակեալ։

Բայց Կիւրոս ոչ հանգչէր ի խնդու-
թենէ անտի, զքեռին կոչէր եւ զհետ
մտեալ փախստեայ խուճապէր զհակա-
ռակորդսն. եւ Կիաքսարէս երթայր
զհետ, զի թերեւս ի հօրէն իսկ ամա-
չէր. եւ այլքն եւս զկնի երթային յոր-
դորեալք պնդել եւ հալածել, եւ որք
չէինն իսկ ամենեւին քաջք եւ առա-
քինիք եւ խրախուսեալք ի թշնամիս
անդր։ Իսկ Ը.ժդահակ իբրեւ ետես
զնոսա խառն ի խուռն զհետ պնդեալ,

զԹշնամին բազմամբոխ ճակատեալ ի դիմի հարեալ, կասկածէր երկուցեալ վասն որդւոյն եւ Կիւրոսի թէ մի գուցէ ի պնդակազմ գունդսն անկարդ անկեալ վիշտք ինչ ընդ նոսա անցանիցեն, անդէն վաղ ի Թշնամին հասանէր։

Դարձեալ իբրեւ զայն նշմարէին հակառակորդքն թէ Ա՛ռաք շարժեցան ի տեղւոջէ անտի իւրեանց, պնդեցան կացին, կիսոց զտէգս արձակեալ, կիսոց զաղեղունս լարեալ, քանզի ցնետընկէց մի հասեալ կային, որպէս սովոր էին բազում անգամ առնել. զի յորժամ կամէին մօտ գալ, մինչեւ ցայն վայր առ միմեանս հասանէին եւ ի հեռաստանէ բազում անգամ նետ ձգէին մինչեւ ցերեկոյ։ Եւ իբրեւ տեսին թէ իւրեանց զօրքն փախստեայ գան ի նոսա, եւ զորս շուրջ զԿիւրոսիւն էին ի նոսա դիմեալ, եւ զՄ.ժդահակ զի նետընկէց մի հեռի էր հեծելովք հանդերձ, խոտորեցան եւ ի փախուստ շրջեցան։ Ապքա միահամուռ զհետ մտեալ զբազումս սատակէին զօրութեամբ իւրեանց, եւ զորս ի բուռն անկանէին, հարկանէին զերիւարս եւ զմարդիկ, եւ զանկեալսն կոտորէին. եւ մինչ չեւ ցհետեւակս Ս.սորեստանեայ էին հասեալ, ոչ դադարէին։ Յայնմ վայրի զանգիտեալ թէ մեծ եւս դարան գործեալ իցէ, կարձեցան։

Պառնայը այնուհետեւ Աժդահակ, յանձն իւր առաւել զուարճացեալ լինէր ընդ այրուձիոյն զօրութիւն, եւ թէ զինչ ցԿիւրոս արժան էր ասել, ոչ գիտէր. ի միտ առ թէ պատճառք նա է գործոյն. բայց ծանեաւ թէ մոլեգնեալ իմն ժպրհութեամբն է, զի յորժամ այլքն մեկնեալ գնացին յիւրեանս, նա միայն շուրջ եկեալ զդիակունսն անկեալս նշմարէր, եւ հազիւ ձգեալ զնա յիւրեանս որոց հրամանն առեալ էր վասն նորին, տարան առ Աժդահակ. բայց նա առաջոյ զբերելիսն արձակէր, զի ետես զդէմս երեսաց հաւուն վայրենեալ իմն ի հայել նորա ընդ նա։

Ի Մարաց աշխարհին այս ինչ գործեցաւ. եւ յայլոց ամենեցունց բերանս էր Կիւրոս եւ ի զրոյցս նոցա եւ յերգս։ Իսկ Աժդահակ որ յառաջագոյն մեծարէր զնա, յայնժամ սքանչանայր եւս ընդ նա։ Իսկ Կամբիւսէս հայր Կիւրոսի, լուեալ զայն ամենայն ուրախ լինէր։ Բայց քանզի լուաւ եթէ չափոյ արուեստեան գործ վճարէ Կիւրոս, կոչէր զնա անդրէն զի ի Պարսս զգաւառական հրահանգան ի գլուխ հանիցէ։ Զ Կիւրոսէ պատմեն յայնմ վայրի ասել բայ Կամիմ երթալ, զի մի հայրս ինչ սրբումիցի, եւ քաղաքն բամբասիցէ։ Այնուհետեւ հարկ համարեցաւ եւ Աժ-

դահակ արձակել զնա։ Եւ անդէն տայր նմա անդրուարս զորս ինքն ցանկացաւ առնուլ, եւ այլ ինչ պէսպէս ազգի ազգի կազմած պատրաստեալ յուղարկէր, եւ վասն զի սիրէր զնա, եւ մեծամեծ եւս յոյս ի նմանէ ունէր, թէ այր հոյակապ լինիցի, եւ բարեկամացն օգուտ բաւական իցէ լինել, եւ զթընամիս չարչարել։ Եւ յորժամ մեկնէրն Կիւրոս ամենեքին յուղարկ երթային եւ մանկտին եւ հասակակիցք եւ արք եւ ծերքն հեծեալք յերիւարս, եւ Աժդահակ ինքն ի գլխովին. եւ չէր ոք, ասեն, որ ոչ զարտասուս հարկանէր յորժամ դառնայրն։

Նա զԿիւրոսէ իսկ պատմեն թէ բազում արտասուօք մեկնեցաւ, եւ յաճախ պարգեւս հասակակցացն ասեն բաշխել, զորս Աժդահակայ տուեալ էր նմա։ Զմարական պատմուճանն զոր ունէր, հանեալ տայր միումն, յայտ արարեալ թէ զնա քաջ սիրիցէ. եւ որ զպարգեւսն, ասեն, առին, տարան առ Աժդահակ։ Եւ Աժդահակայ առեալ յղեաց առ Կիւրոս, եւ նա, ասեն, միւսանգամ ի Պարս առաքեաց եւ ասէ թէ Ով հաւ եթէ կամիս զի այսրէն եկիցս առ քեզ ուրախութեամբ եւ ոչ եթէ ամօթով, թող զի կալցին ում զինչ ես եառ։ Զայս լուեալ Աժդահակայ արար որպէս առաքեաց Կիւրոս։

Եւ եթէ զմանկութեան ինչ բանս պարտ իցէ յիշատակել, պատմեն այսպէս, թէ մինչ երթայրն Կիւրոս եւ յիրերաց մեկնէին, համազգիքն համբուրէին բերանով զԿիւրոս եւ յուղարկէին ըստ Պարսից օրինակին, քանզի եւ այժմ ինն զնոյն գործեն Պարսիկք. այր ոմն ի Մարաց անտի լաւ բարոյիւք եւ ազնիւ, բազում ժամս զարմացեալ սխրացեալ կայր ընդ գեղն Կիւրոսի։ Յորժամ եառեալ զազգակիցսն թէ համբուրեն զնա, զտեղի առ. իբրեւ այլքն ի բաց գնացին, մատուցեալ առ Կիւրոս ասէ. Ո՞ւ՞ր եւ եթէ ոչ ճանաչես ով Կիւրէ, ի համազգեաց այսի։ Ասէ Կիւրոս. Իսկ արդ զի՞նդ, մի թէ եւ դու ազգակի՞ց իցես։ Այո՛, ասէ։ Կիւրոս ասէ. Ապա ուրեմն վասն նորին իսկ ընդ իս հայէիր պշուցեալ. զի թուի ինձ թէ զայդ դու բազում անգամ առնես։ Ո՞ւ կամէի, ասէ, ցանգ մատչել առ քեզ, այլ ամաչէի։ Կիւրոս ասէ. Քեզ չէր պարտ ամաչել որ համազգի էիր. եւ մատուցեալ համբուրէր զնա։

Իբրեւ առ զհամբոյրն մարն հարցանէր. թէ եւ ի Պարսս դո՞ն օրէնք են զհամազգիս համբուրել։ Պարի իսկ քաջ, ասէ, յորժամ զմիմեանս տեսանիցեն յետ բազում ժամանակաց կամ մեկնիցին ուրեք յիրերաց։ Ապա

ուրեմն ժամ է, ասէ, քեզ միւսանգամ համբուրել զիս, զի մեկնիմ երթամ որպէս տեսանես իսկ։ Ապա իբրեւ միւսանգամ համբուրեաց Կիւրոս, արձակեաց զնա, եւ մեկնեցաւ գնաց։ Մինչ չեւ էին կարի բացարձակ ի միմեանց, եկն դարձեալ մարն եւ էր ձին համակ ի քրտան. իբրեւ ետես զնա Կիւրոս, թերեւս մոռացար ինչ ասէ, յորոց կամէիր ասել։ Ոչ, ասէ, այլ վասն ժամանակին եկի։ Կիւրոս ասէ. Սակաւ ինչ ժամանակ է։ Մարն ասէ. Չիա՞րդ իցէ փոքր մի ժամանակ. չիցե՞ս ասէ խելամուտ թէ եւ ական թօթափել ինձ ամենեւին շատ թուի, եթէ ոչ տեսանեմ զքեզ։ Յայնմ վայրի ծիծաղեցաւ Կիւրոս յառաջին արտասուացն, եւ հրամայեաց նմա երթալ, քաջալերեալ թէ դամ առ ձեզ ընդ հուպ, որպէս զի մարթիցի եթէ կամիցիս, տեսանել առանց զաչս իսկ թարթափելոյ։

ԳԼՈՒԽ Ե

Ապա եկն եհաս Կիւրոս ի Պարսս. տարեւոր ժամանակ ասեն ի մանկունան կալ։ Չառաջինն դասրովէին զնա մանրկտին, որպէս թէ դիւրութիւն ուսեալ ի Մարաց աշխարհին եկն։ Իսկ իբրեւ տեսին զնա թէ որպէս նոքա նոյնպէս

եւ նա ուտէր եւ ըմպէր ուրախութեամբ, եւ եթէ մեծամեծ եւս ինչ ուրախութիւն երբեք հասանէր ի տօնս, ի միտ առնուին թէ նա եւ զիւր իսկ բաժինն այլոց շնորհէ եւ ոչ եթէ կարօտի։ Ա՛ռ ոյնս տեսանէին թէ եւ այլովք եւս ամենեքումբք նա իմն գլէր զնոսա. եւ միւսանգամ ակն ածէին ի նմանէ հասակակիցքն։ Յորժամ ընդ այն խրատանց եւ ի պատանեական եմուտ, դարձեալ եւ ի նոցա միջի լաւագոյն երեւէր, եւ կրթէր յորս պարտ էր կրթել, եւ համբերէր որոց արժան էր ժուժկալել, ի ծերոցն ակն ածէր եւ իշխանացն հնազանդ լինէր։

Իբրեւ ժամանակ ինչ ի վերայ անցանէր, Ա՛ժդահակ ի Ա՛արս մեռանէր, եւ Կիաքսարէս Ա՛ժդահակայ որդի, Կիւրոսի մօրն եղբայրն զհարստութիւնն առնոյր զԱ՛արացն։ Իսկ արքայն Ա՛սորեստանեաց վանեալ վկանդեալ զամենայն Ա՛սորնեայսն, ոչ զփոքր ազգ, եւ ընդ ձեռամբ նուաճեալ զԱ՛րաբացւոց թագաւորն, եւ զԿ՛րկանացիս եւս ունէր ի հնազանդութեան, պատեալ պաշարեալ եւ զՌ՛ակտրիացիսն, զմտաւ ած թէ յորժամ զԱ՛արս տկարս եւ անզօրս առնիցէ, դիւրաւ այնուհետեւ ամենեցունց տիրիցէ, զի քան զամենայն ազգսն դրացիս այն ազգ ուժգնագոյն թուէր։

Այպա առաքէր առ ամենեսին որ ընդ իւրեւն էին եւ առ Կրիւսոս Ղիւդացւոց թագաւոր, եւ առ թագաւորն Կամրայ եւ յերկոսին գաւառս Փռիւգացւոցն եւ ի Կարիացիս եւ ի Պափլագոնացիս եւ ի Հընդիկս եւ ի Կիղիկեցիս. աղաղատէր առաջի նոցա զԱ՛սրս եւ զՊարսիկս, եւ ասէր այսպէս թէ մեծացան յաղթ եղեն զօրացան ազգքն այնոքիկ, համագունդ միախուռն ի մի վայր գումարեցան, եւ խնամութիւնս ընդ միմեանս արարին առ իրեարս հասին, եւ վիշտ վտանգի է, եթէ ոչ աճապարեալ ուրուք տկարացուցանէ զնոսա, ի միոյ միոյ իւրաքանչիւր յաղագացն ի վերայ երթեալ վանիցեն զնոսա։ Կիսոց ընդ բանսն հաճեալ, թիկունք օգնականութեան լինէին, եւ կէսքն պատարագօք եւ ընչիւք գոյին ի հաւան. զի գանձք բազում էին նորա։

Իսկ Կիւքսարայ Մեծդահակայ որդւոյ իբրեւ զգաստ զնենգութենէն լինէր, եւ զպատրաստելոյն նոցա կազմութեամբ եւ համօրէն յիւր վերայ գումարելոյ, եւ նա իսկ եւ իսկ վաղվաղակի որչափ ինչ ձեռնհաս էր հանդերձէր կազմէր եւ ի Պարսս առաքէր, եւ առ Կամբիւսէս առ քեռն այրն որ ի Պարսից աշխարհին թագաւորէր։ Յղէր եւ առ Կիւրոս, աղաչէր եւս զնա փութալ հասանել լեալ զօրավար արանցն, եթէ

առաքեսցեն Պարսիկք զօրս։ Քանզի Կիւրոս վճարեալ զտասն ամսն ի պատանեկան, ընդ արան էր։

Իբրեւ յանձն առ Կիւրոս, խորհուրդ առեալ ծերոցն զնա ընտրէին զօրավար զօրօք հանդերձ ի պատերազմ ի Մարս երթալոյ։ Եւ թոյլ ետուն նմա ընտրել իւր երկերիւր այր ի պատուակցացն. եւ դարձեալ միում միում իւրաքանչիւր յերկերիւրոցն թոյլ ետուն չորս չորս արս ի նմանեաց անտի ընտրել. եւ եղեն նոքա հազարք. եւ դարձեալ իւրաքանչիւր ումեք ի հազարէ անտի ետուն ի խառնիճաղանճ զօրուէն Պարսից տասն տասն շերտաւոր եւ տասն տասն պարսաւոր եւ տասն տասն աղեղնաւոր ընտրել. եւ գումարեցան բեւր աղեղնաւորք եւ բեւր շերտաւորք եւ բեւր պարսաւորք. արտաքոյ քան զսոսա էին հազարաւորքն։

Այսչափ գունդ ի ձեռն գումարեցաւ Կիւրոսի։ Յորժամ ընտրեցաւն վաղվաղակի, սկիզբն նախ ի դիցն առնէր։ Գեղեցիկ գեղեցիկ նուէրս մատուցեալ ապա զերկերիւրսն ընտրէր. եւ յորժամ ընտրեցին եւ նոքա իւրաքանչիւր չորս չորս արս, ապա խօսէր ընդ նոսա նախ ձեւ զայս օրինակ։

Արք բարեկամք ես ընտրեցի զձեզ, իբր ոչ եթէ այժմ ինչ հաճեցայ ընդ ձեզ. այլ զի ի մանկութենէ իսկ տեսի

զձեզ, թէ զոր լաւն համարիցի քա-
ղաքս, փութով յօժարութեամբ ի
նոյնս վաստակեցէք, եւ զոր ծանա-
կանս իմն հաշուիցի, ի նոցունց ամե-
նեւին իսկ մերժեցէք զանձինս։ Բայց
թէ յոր սակս արդեւք ես ոչ ակամայ
կամՔք յանձին կալայ զգործդ եւ զձեզ
կոչեցի, կամիմ յանդիման կացուցա-
նել։

Վանզի զմտաւ ածի թէ մեր նա-
խնիք ոչ ապաժամանք ինչ քան զմեզ
էին. զի եւ նոքին թեւակոխեալ, որ
ինչ գործք քաջութեան կարծիցին,
զայն ի գլուխ հանեալ վճարեցին։ Իսկ
թէ զինչ ինչ լաւութիւն այնպիսիքն
ստացան կամ հասարակայ Պարսից աշ-
խարհին կամ թէ անձանց իսկ, զայն
չկարեմ նշմարել։ Ինձ այսպէս թուի
թէ ոչ ընդ մի ինչ առաքինութեան
հրահանգս մարթ իցէ թեւակոխել
մարդկան, եւ այնոցիկ որ ի կրթութե-
նէն պիտանիք լինիցին, չունել ինչ
քան զչպիտանիսն առաւելութիւն։

Այլ որ ի մօտաւորն հեշտականու-
թեանց զանձինս մերժիցեն, ոչ եթէ
զի ոչ ուրախ երբեք լինիցին, վասն
այնորիկ առնիցեն, այլ զի ընդ այնր
համբերութեան բազմապատիկ ուրախ
յառյապա ժամանակս առնիցին։ Եւ
որ խօսող ոք անհնարին ի բանս ա-
խորժիցէ լինել, իբր ոչ եթէ զի ի բար-

ուքն խօսելոյ ոչ դադարիցէ, յայն սակս ընդ այն կրթիցի, այլ ակն ունիցի եթէ աղնուագոյնն խօսելով զբաղում մարդկան միտս հաճիցէ եւ յաճախագոյն մեծամեծ լաւութիւնս վճարիցէ։ Դարձեալ եւ որք ի պատերազմունսն թեւակոխեն, ոչ եթէ զի ի կռուոյ ոչ ուրեք հանդչիցին, յայն աշխատ լինիցին. այլ թուի իմն եւ սոցա, թէ յորժամ առաքինիք ի պատերազմի լինիցին, բազում մեծութիւն եւ յաճախ փառաւորութիւն եւ մեծամեծար մեծարանս եւ անձանց եւ քաղաքին յաճախիցեն։

Ապեթէ ոմանք որ ի սոյնս խոնջիցին, եւ մինչ չեւ ինչ կրթեալ շահ ի նոցանէ իցէ, տեսանիցեն զանձինս ի ծերութեան, պակասեալս ի զօրութենէ, թուի ինձ թէ այնմ իմն հանգոյն անցք անցանիցեն, որպէս՝ թէ ժրագլուխ ոք մշակ իցէ եւ լինիցի յառաջամիտ եւ բարւոք զսերմանսն սերմանիցէ եւ տընկել տնկիցէ բարւոք, եւ յորժամ զտոհմականս արդեանցն հասանիցէ առնուլ, չժողովիցէ եւ թողուցու անդէն յերկիր հոսել. կամ թէ մարտիկ ոք իցէ եւ բազում ճգանց ժուժկալ լինիցի եւ արժանի յաղթութեան գտանիցի, եւ առանց մրցութեան վախճանիցի։ Ինձ թուի թէ չէ իրաւացի այնպիսումն առանց անմտութեան բամբասանաց լինել։

Այլ մեք, ով արք, մի այնպիսի ինչ կրեսցուք. այլ քանզի մեզոյն իսկ զանձանց գիտեմք ի մանկութենէ սկիզբն արարեալ ընդ լաւութեան գործոց կրթութիւնս անցանել, ելեալ երթիցուք ի վերայ թշնամեացն եւ հակառակորդաց, յորոց եսս ստոյգ ի վերայ կացի, քանզի ինքնին իսկ տեսի թէ չեն հմուտ տալ ընդ մեզ ճակատս։ Զի ոչ եթէ քաջ ինչ ուրեք պատերազմողք իցեն որ նետիցեն եւ յերիվար հեծանիցին տեղեկութեամբ, եւ եթէ աշխատ ուրեք լինել հասանիցէ, լուծանիցին լքանիցին. եւ սոքա չեն հմուտ աշխատութեանց։ Եւ ոչ նոքա քաջ պատերազմողք են որ յորժամ սկեղն պարտ իցէ, չկարիցեն սկել. այլ սոքա եւ ի քնոյ չմարթեն ժուժկալել։ Եւ եւ որք այնմ ամենայնի բաւական իցեն, բայց չիցեն խրատեալ թէ զիարդ օգնականաքն պարտ իցէ վարել եւ որպէս հակառակորդաքն, չեն եւ նոքա քաջք. յայտ է թէ եւ սոքա մեծամեծ ինչ խրատուց չեն տեղեակք։

Բայց դուք զգիշեր մարթէք ի գործ վարել, զոր օրինակ այլք զտիւ. զվաստակս առաջնորդ առ կեանն հեշտական համարիք. զքաղց իբրեւ ոսկի ի կիր արկանէք. իսկ ջուր ըմպելոյ քան զառեւծս եւս դիւրագոյն ժոյժ ունիք. զդեղեցիկ քան զամենայն եւ զպատե-

բազմական ստացուած յանձինս բարձեալ բերէք, զի քան այլովք ինչ ամենեքումբք, առաւել յորժամ յարգիցիքն ուրախ լինիք. եւ որ ցանկացողք դք գովութեան իցեն, հարկ է ընդ այնր զամենայն վաստակս զբնաւ աշխատութիւն եւ զվիշտս ուրախութեամբ ամենեւին յանձին ունել։

Ապա թէ զայս զձէնջ ասիցեմ, եւ այլագոյնս իմն ունիցիմ ի մտի, ապա ինձէն անձամբ զանձն խաբիցեմ։ Քանզի եթէ ոչ ինչ այնպիսի առ ի ձէնջ ի գլուխս ելանիցէ, յիս կրթիցին յանցանքն, այլ վստահ եմ ի փորձ արդեանցն եւ ի ձերոց կամացն մտադիւրութիւն եւ ի հակառակորդացն տըխմարութիւն, թէ մի վրիպեալ կացուցանիցեն զիս այսպիսի բարութեանցն յոյսքն։ Այլ խրախուսեալ դիմեսցուք, քանզի հեռի է ի մէնջ կարծիս կարծել թէ զուր ինչ տարապարտուցանն եղեալ զօտարին խնդրեմք։ Քանզի արդ իսկ խաղան գան թշնամիքն հակառակորդք եւ զրկելոյն սկիզբն առնեն. կոչեն եւ զմեզ բարեկամք ի թիկունս օգնականութեան։ Եւ արդ զի՞նչ ինչ քան զարգելուլ իրաւական կայցէ, կամ քան զբարեկամացն թիկունս լինել գեղեցիկ։

Այլ ինձ թուի թէ վասն այնորիկ իսկ ոչ սակաւ քաջալերիցիք, զի ա-

ռանց զդիցն անփոյթ առնելոյ, առնի արշաւանս. զի ընդ իս իսկ էք բազում ժամանակս եւ գիտէք թէ ոչ միայն յորժամ մեծամեծս, այլ եւ թէ մանունս ինչ կամիցիմ առնել, ի դիցն առնեմ սկիզբն միշտ։ Զի՞ եւ զս իսկ պիտոյ իցէ խօսել, այլ դուք որ ըստ արանց ընտրեցարուք, այլով ամենայնիւ կազմեալք պատրաստեալք գնացէք ի Պարս, եւ ես երթամ առ Հայրս եւ գամ, զի վաղվաղակի իսկ ուսեալ զերս թշնամեացն թէ որպիսի ինչ իցեն, պատրաստեցից կազմութեամբ ձեզ զոր ինչ կարօղ եւ ձեռնհաս իցեմ, զի աղնուագոյն տացուք մարտ պատերազմի դիցն օգնականութեամբ։ Նոքա զայն առնէին։

ԳԼՈՒԽ Զ

Ինկ Կիւրոս ի տուն երթեալ եւ յաղօթս կացեալ Աստեայ եւ գաւառական Արամազդայ եւ այլոց եւս դիցն երթայր ի բանակ անդր։ Յուղարկէր գնա եւ Հայրն. իբրեւ ելին արտաքոյ քան զապարանսն, փայլատականց պատմեն ճեպել, եւ ճայթել որոտմանց բարբառոյ։ Իբրեւ այն ամենայն երեւեցաւ, չեղեն այնուհետեւ հաւահարց եւ գնացին. քանզի չէր ծածկեալ յումեքէ թէ մեծին աստուածոյ նշանք են։

Մինչ դեռ գնացեալ երթայր Կիւ-
րոս, խօսել սկսաւ Հայրն ըստ սմին օ-
րինակի բանից. թէ Որդեակ, դիւրն հաշ-
տութեամբ եւ քաղցրութեամբ յու-
ղարկեն զքեզ, եւ յայտ ի նուիրական
զոհիցն է եւ յերկնից նշանաց. նա դու
իսկ ինքնին գիտես թէ զայդ իսկ ու-
սուցի քեզ, զի մի ի ձեռն այլոց թարգ-
մանաց լինիցիս խելամուտ դիցն խոր-
հրդոց. այլ ինքնին տեսեալ զտեսիլն
եւ լուեալ զզրոյցսն ի միտ առնուցուս,
եւ մի առ իղձսն երթայցես, որք եթէ
կամիցին պատրիցեն զքեզ, եւ այլ ինչ
խօսեսցին եւ ոչ զառ ի դիցն երեւեալ
նշանսն բարբառիցին. եւ մի դարձեալ
եթէ առանց ըղձի երբեք հասանիցէ
լինել, ի վարանս ընդ դիցն նշանս
մտանիցես, թէ զինչ ինչ պարտ իցէ
գործել, այլ ըղձութեամբ գիտացեալ
զառ ի դիցն խրատսն, անսայցես նոցա:

Ասէ Կիւրոս. Հայր քանզի հաշտ
լեալ դիցն կամին զօրաւիգն օգնակա-
նութեան մեզ լինել, զոր ինչ կարօղ
իցեմ ըստ քում բանիդ ի գլուխ հա-
նից յօժարութեամբ: Յուշ առնի ինձ
եթէ լուայ երբեմն ի քէն եթէ յի-
րաւի առ ի դից, որպէս եւ ի մարդկա-
նէ, բարութիւնս ոք գտանէ, որ ոչ
յորժամ ի վարանս եւ յաղէտս կայցէ,
յայնժամ երթեալ ատկիցէ, այլ յոր-
ժամ յաջողութիւնս իցէ, յայնժամ

մանաւանդ զդիցն յիշեսցէ. զբարեկամաց եւս ասէիր թէ ըստ նմին օրինակի պարտ եւ պատշաճ է փոյթ առնել։

Եւ արդ, ասէ, այժմիկ որդեակ նովին փութով երթայցես մտադիւրագոյնս առ դիան պաղատել։ Ակն ունիս թէ քաջ առնուցուս զոր աղաչիցես, զի գիտեսդ զանձին քո եթէ ոչ երբեք ուրեք անփոյթ զնոցանէ արարեր։ Ամենեւին, ասէ, հայր այնպիսի միտս ունիմ եթէ բարեկամք իմ են դիքն։

Յիշեցէ՞ս արդեւք, ասէ, որդեակ, զոր երբեմն ասէաք թէ զոր ինչ աստուածոցն տուեալ իցէ, մարդիկ որ դիտակքն իցեն աղնուագոյնս ունիցին քան որ չիցեն այնմ ամենայնի հմուտ. եւ աւելի իմն որ գործեսցեն վճարիցեն քան որ ի վատութիւն հատանիցին եւ յանգործ դատարկութիւն. եւ որ հոգ ի մտի ունիցին, եւս յամրի կայցեն քան զայնոսիկ որ չլինիցին զգոյշ։ Արդ այսպէս թուէր մեզ թէ պարտուպատշաճ է այնպէս զանձինս ընծայեցուցանել որպէս պարտ իցէ ընծայեցուցանել, եւ ապա յետ այնորիկ խնդրել ի դիցն զբարութիւնսն։

Յիշեմ թէ զայս լուայ ի քէն. քանզի հարկ էր անսալ բանիցն այնոցիկ. զի գիտեմ թէ ասէիր դու ցանդ թէ չէ արժան այնոցիկ որոց չիք ուսեալ յերիվար հեծանել, խնդրել ի դիցն

եթէ ի ձիամարտիկ կռուի յաղթիցեն. եւ ոչ որոց չիցենն աղեղնաւորութեան հմուտ, թէ նետիւք եւ աղեղամբք զաղեղնաւորութեան հմուտսն պարտիցեն. եւ ոչ որ նաւավարութեան չիցեն տեղեակք, թէ յաղօթս կայցեն ճարտարապետս լինել նաւաց եւ ապրեցուցանել. եւ ոչ որ ցորեան չսերմանիցեն եւ ըղձանայցեն եթէ ցորեան ատոք բուսանիցի. եւ ոչ որ չզգուշանայցեն ի պատերազմի, թէ փրկութիւն խընդրիցեն. զի ամենայն ինչ այնպիսի ի դիցն հրամանաց լինիցի։ Իսկ որ զայն յաղօթս կայցեն որ չիցէ արժան, յիրաւի, ասէիր, չառնուն նոքա ի դիցն, զոր օրինակ եւ առ ի մարդկանէ չառնուն որ արտաքոյ ինչ քան զօրէնսն խնդրիցեն։

Իսկ զայն մոռացար արդեւք որդեակ, զոր ես եւ դու երբեմն ճառ արկեալ խօսէաք. թէ բարւոք այն գործ է մարդոյ, եթէ կարիցէ ոք փոյթ ի մտի ունել, զի եւ ինքն լաւ եւ ընտիր եւ պիտանի լինիցի, եւ զպիտոյսն ինքն եւ ընտանիքն ունիցին բաւական։ Այս թէ այն այնպէս մեծ ինչ գործ իցէ, իսկ գիտելն վերակացու լինել այլոց եւս մարդկան զի ունիցին զպէտսն լիով եւ լինիցին ամենեքին որպէս պատշաճ իցէ լինել, այն մեզ ոքանչելի եւ զարմանալի թուէր։

Այր, ասէ, եւ զայդ յիշեմ թէ ասէիր. եւ ինձ նոյն բարեդք թուէր, թէ մեծ գործ իցէ բարիոքն իշխել. եւ այժմ, ասէ, այն նոյնպէս թուի, յորժամ ինքնին միտ եդեալ զիշխանութենէ խորհիցիմ։ Յորժամ զայլոց մարդկանէ զմտաւ ածիցեմ թէ որպիսիք ոք իցեն եւ լինիցին իշխանք, եւ մեզ ախոյան ելանիցեն, թուի ինձ թէ ամենեւին իսկ ծանակութիւն իցէ յայնպիսեացն զարհուրել, եւ չկամել երթալ նոցա ասոխ. զորոց եւ ես ասէ գիտեմ սկսեալ ի մերոց բարեկամաց ասի, զի համարին իմն թէ պարտ իցէ իշխանին յիշխանաւորացն այնու ընտրել, զի ամենալից ընթրիս ուտիցէ, եւ բազում ի ներքս մթերեալ ունիցի ոսկի, եւ բազում ժամս ի քուն լինիցի, եւ զենաւ անվաստակ գործիցէ քան զայնոսիկ որոց իշխէն։ Բայց ինձ, ասէ, այնպէս իսկ թուի թէ ոչ դիւրութեամբ ինչ պարտ իցէ իշխանին ընտիր յայնցանէ՝ որոց իշխիցէն, լինել, այլ մտադեւրն դարմանօք եւ խոնջութեամբ։

Բայց գոյ ինչ ինչ, ասէ որդեակ, յորս ոչ եթէ ընդ մարդկան հասանիցէ կռուել, այլ ընդ իրան իսկ ի գլխովին, որոց չէ ինչ դիւրին գերիվերոյ լինել։ Նա աստուծին իսկ, ասէ, գիտես, զի եթէ չգուցեն ուռճիկք զօրացն,

իսկ եւ իսկ քակիցի հարստութիւնդ։ Հայր, ասէ, Կիպքսարէս ասաց թէ զդարմանսն ես տաց ամենեցուն որ անոի եկեսցեն, որչափ եւ իցեն։ Որդեակ, ասէ, դու յա՞յն ինչս Կիպքսարայ յուսացեալ երթայցես։ Ասէ Կիւրոս. Այո։ Իսկ արդ գիտիցե՞ս, ասէ, որչափ ինչք դուցեն նորա։ Ասէ Կիւրոս. Ոչ։ Ապա ուրեմն, ասէ, զանյայտսն ինն հաւատարիմ համարիս. իսկ եթէ բազմո՞ք կարօտանայցես, եւ այլ եւս ինչ յաճախագոյն հարկ իցէ ծախել, զայն ո՞չ գիտես։ Ասէ Կիւրոս. Գիտեմ։ Արդ յորժամ պակասիցեն համբարք նորա, կամ թէ կամաւ իսկ ստեսցէ, զի՞արդ իցեն պէտք զօրացն, յայտ է թէ ոչ բարւոք։ Հայր, ասէ, դու եթէ գիտիցես ինչ հնարս շահաւորութեան, մինչ դեռ ի խաղաղութեան իցեմք, ասա։

Հարցանես, ասէ, որդեակ, զի՞նչ օրինակ ժողովիցես շահս։ Ո՞ւմ մանաւանդ ի դէպ իցէ կուտել մթերս քան այնմ որ զօր ունիցի. դու աւադիկ զհետեւակ զօրութիւնն առեալ ասես երթաս, ընդ որում չգիտեմ թէ մարթիցի այլ ինչ զօր բազմամբոխ փոխանակել. եւ այրուձին Պարսց, որ ազնուագոյն է, զօրաւիգն օգնականութեան է քեզ։ Եւ արդ զո՞ւմ ազգէ որ շուրջ զմեզ իցեն, կարծիցես թէ

ոչ շնորհ իմն կամեցեալ առնել ձեզ սպասս հարկանիցեն, եւ կամ առ ահի իսկ թէ մի գուցէ վնաս ինչ կրիցեն։ Զորս պարտ է ընդ Կիպրոսարայ հասարակ դիտել տեսանել, զի մի ինչ պակաս իցէ ի պիտոյից ձերոց։ Եւ վասն սովորութեան զմտից շահն պարտ է հայթայթել։ Զայս ինչ քաջ ի մտի ունիցիս, մի երբեք տեւել մնալ զկարեւորսն շահելոյ յայնժամ յորժամ պէտքն ի վերայ հասեալ անդէն տագնապիցեն. այլ յորժամ աջողեալ իցես շահիւք, յայնժամ պաճարեա վասն կարօտութեանն. զի առնուցուս քաջ յորոց խնդրիցես, յորժամ չտայցես կարօտութեան կարծիս եւ առանց բամբասանաց գտանիցիս ի քոց զօրաց այտի։ Եւ զովին իմն ակն ածիցեն ի քէն, եւ եթէ մնաս ումեք զօրօք կամիցիս առնել կամ օգուտ, մինչ դեռ զպատշաճն ունիցին զօրականքն արբանեկիցեն քեզ. եւ որպէս ճարտար դիտես, հաստատութեամբ բանս յայնժամ կարիցես բարբառել, յորժամ մարթիցես յանդիման կացուցանել, թէ եւ օգնել բաւական ես եւ մնասել։

Այր, ասէ, թուի թէ զայդ ամենեւին բարեղք իսկ խօսեցար, քանզի զոր ինչ այժմ առցեն զօրքն, ոչ ոք իցէ որ վասն նոցին շնորհակալ ինձ լինիցի. քանզի գիտեն թէ որովք բա-

նիւք կոչեաց զնոսա Կիպքսարէս ի թի-
կունս օգնականութեան։ Ապա թէ
աւելի քան զասացեալսն առնու ոք
ինչ, զայն պատիւ իսկ այնուհետեւ
համարիցին, եւ ի դէպ է թէ շնորհա-
կալ եւս այնմ որ ետ, լինիցին։ Իսկ
եթէ զօրականս ոք ունիցի որովք մար-
թիցի երախտիս ինչ բարեկամացն առ-
նել եւ օգուտ ինչ ի նոցանէ գտանել.
կամ թէ թշնամիք ուրուք իցեն, եւ
կարող իցէ ջանալ եւ շահել ինչ ի
նոցունց, եւ ինքն անփոյթ զշահսն առ-
նիցէ, սակաւ ինչ, ասէ, զայն նշաւա-
կութիւն համարիցիս քան եթէ անդ
եւ ագարակ ոք ունէր, եւ մշակք եւս
էին նորա, որովք մարթէր ի գործ ար-
կանել եւ ապա յետ այնորիկ լքեալ
թողոյր զերկիրն դատարկ, անօգուտ
լինել։ Եւ, ասէ, ոչ երբեք անփոյթ
առնիցեմ հնարել գտանել զկարեւորն
պէտս զօրականացն ոչ ի բարեկամաց
միջի եւ ոչ ի թշնամեաց. եւ դու այս-
պիսի իսկ միտս կալջիր։

Որդեակ, յիշեցո՛ս արդեւք եւ զայլ
եւս ամենայն որ կարեւոր հարկ թուէր
մեզ երբեմն չառնել անփոյթ զնոքօք։
Յիշեմ, ասէ, յորժամ վասն արծա-
թոյ գայի առ քեզ զի տարայց տաց
այնմ որ ինձ զօրավարութիւն ուսու-
ցանէր. եւ քո տուեալ ցիս հարցա-
նէիր այսպէս եւ ասէիր. թէ Ո՞անուկ

դու ի զօրավարութեան գործս զինչ ինչ քեզ ի տան խնամակալութենէ յուշ արար այրն ում զգինոդ առեալ տանիս. զի ոչ ինչ պակաս զօրականք կարօտ կարեւորօքն իցեն քան որ ի տան գերդաստանքն են։ Իբրեւ զճշմարիտն բարբառեցայ քեզ եւ ասէի թէ ոչ մի ինչ վասն նորին այնորիկ յիշեաց. միւսանգամ հարցեր դու ցիս թէ զինչ ինչ առողջութեան վասն պատուիրեաց եւ զօրութեան եւ պնդութեան. զի եւ զնոցունց իմն պատշաճ է զօրավարի իբրեւ զզօրավարութենէ հոգալ։

Իսկ իբրեւ ասացի թէ չասաց ինչ. դարձեալ հարցեր դու զիս, թէ զո՞ր հոգաբարձութիւն ուսոյց, զի բարեկամք որ զօրաւիդն իցեն քեզ, լինիցին քաջք եւ պիտանիք յիւրաքանչիւր գործ պատերազմի։ Իբրեւ ասացի թէ եւ զայն ոչ. հարցեր միւսանգամ թէ ուսո՞յց ինչ հնարս, զի կարիցես յօժարութիւն ի զօրսն արկանել. եւ ասէիր եւս թէ ամենեւին ի բնաւ իսկ ի գործս կրճիմ ի միջի ընդ յօժարութիւնն եւ ընդ տրտմութիւն կայ։ Իսկ իբրեւ ասացի թէ ոչ. դու քննէիր եւ թէ զի՞նչ արդեւք հնարս ուսուցեալ իցէ վասն ի հնազանդութեան զզօրսն պահելոյ։

Եւ իբրեւ յայտ լինէր թէ եւ զայն ամենեւին չիք պատուիրեալ. հարցա-

նէիր դու ցիս, թէ զի՛նչ ուսուցեալ
ասիցէ թէ զօրավարութիւն ուսուցա-
նեմ։ Յայնմ վայրի պատասխանի ե-
տու թէ զճակատ առ ճակատ յարդա-
րել եւ գունդ առ գունդ կազմել, եւ
դու ծիծաղեալ մի ըստ միոջէ անցա-
նէիր կարգեալ եղեալ թէ զի՛նչ օգուտ
իցէ կամ ո՞ր շահ զօրավարութեան ի
ճակատուց առանց կարեւորն պիտոյից.
եւ զի՛նչ առանց առողջութեան, եւ
ո՞ր օգուտ առանց զարուեստսն որ վասն
պատերազմաց գտան, գիտելոյ. կամ
զի՛նչ ինչ վճարիցի առանց ի հնազան-
դութեան կալոյ. որպէս զի յայտ իմն
այսպէս առնէիր թէ ճակատելն խուն
ինչ մասն զօրավարութեան է։ Եւ ի-
բրեւ հարցի թէ զի՛նչ ինչ յայնմ ամե-
նայնէ բաւական իցես ուսուցանել դու
ինձ, հրաման ետուր երթալ առ արան
որ զօրավարքն համարիցին եւ ընդ նոս-
սա խօսել եւ հարցանել թէ որպէս մի
մի իւրաքանչիւր ի նոցանէ լինիցի։

Յայնմ հետէ ընդ նոսա էի եւ առ
նոսա կանխէի, զորոց լսէի թէ աւելի
իմն հանճարեղք նոքիմբք են։ Վասն
համբարոցն ես հաւանեալ եմ ենթէ
այն շատ եւ բաւական է, զոր կիա-
քսարէս տալոց իցէ մեզ։ Իսկ վասն ա-
ռողջութեանն, քանզի լուայ եւ տեսի
թէ եւ քաղաքք եւս որ բժշկութիւն
ի կիր արկանիցեն, բժիշկս ընտրեն. եւ

գօրավարք վասն զօրականացն բժիշկս առեալ տանին. նոյնպէս եւ ես իբրեւ զայս գործ ի ձեռն առի, իսկ եւ իսկ վասն նորին հոգ յանձին կալայ. եւ թուի ինձ, ասէ, հայր, թէ արքն որ ընդ իս իցեն, ամենեւին իսկ հմուտ են բժշկական ճարտարութեան։

Ա՛ռ այն հայրն ասէ. Դոքա զորոց ասես, զոր օրինակ պատառատուն ձորձոց կարկատիչք են, նոյնպէս եւ բժիշկքն են, յորժամ յախտ ոք անկեալ դնիցի, յայնժամ բժշկիցեն. բայց դու աւելի իմն փոյթ ի մտի ունիցիս վասն առողջութեան, զի մի յառաջնումն խօթանայցէ զօրն, զայնմանէ իմն պարտէ քեզ հոգալ։ Ընդ ո՞ր ճանապարհ, ասէ, հայր, յուզի անկեալ, բաւական լինիցիմ զայն վճարել։ Եթէ ժամանակ ինչ ի նմին վայրի կամիցիս յամել, մի անփոյթ առնիցես նախ յաղնիւտեղիս բանակ հարկանել։ Եւ ոչ սխալիցես յայնմանէ եթէ ունիցիս հոգ ի մտի. քանզի չդադարեն մարդիկ վասն վայրաց հիւանդութեան եւ առողջութեան խօսել. եւ երկոցունց ի նոցանէ ստոյգ վկայք մօտ կան, մարմինքն եւ գոյնք երեսաց։ Ապա չէ շատ վայրացն եւեթ դէտակն ունել. այլ յուշ լիցի քեզ թէ որպէս գուն գործիցես հոգ ի մտի ունել զանձնէ զի առողջագոյն լինիցիս։

Դ. Կիւրոս ասէ. Նախ ջանամ մի իսկ երբեք շուայտել մի մցռել, զի այն դժընդակ իմն է։ Ապա ի դժուարին աշխատութիւնս խոնջեցիմ. քանզի ինձ թուի թէ այնպէս եւ առողջութիւնն եւս քաջ լինիցի տեւական եւ ոյժ եւ պնդութիւն յաւելցի յիս։ Ասա նմին օրինակի պարտ է, ասէ, որդեակ, եւ վասն այլոցն փոյթ յանձին ունել։ Եթէ լեցի՞, ասէ, հայր պարապ կրթեալոյ մարմնոց զօրացն։ Ասէ հայրն. Ոչ միայն պարապ, այլ եւ հարկ եւս իցէ։ Քանզի պարտ է զօրականին որ զպատշաճան կամիցի վճարել, մի երբեք դադարել, այդ կամ թշնամեաց մեղանչել կամ անձանց ժողովել բարութիւնս. զի դժուարին է մարդ մի դատարկ սնուցանել եւ եւս բազմապատիկ դժընդակ զողջոյն տուն մի, եւ ամենեւին իսկ քան զբնաւ դաժանագոյն զզօր ի վատութիւն հատեալ կերակրել. քանզի բազում է ի զօրու ուտելի, եւ սակաւ ինչ եւ նուազ այն որ ուտիցի, եւ զոր գտանիցեն ինչ վատնելով ի կիր արկանիցեն, որպէս զի չէ ի դէպ երբեք զօրու դատարկ կալ։

Հայր թուի ինձ եթէ ասիցես թէ զոր օրինակ հողագործն ի վատութիւնս հատելոյ չիք շահ, նոյնպէս եւ դատարկ զօրավարի չգոն օգուտք։ Դս, ասէ, ունիմ յանձին զօրավար ժիր լինել,

եթէ ոչ գնաս ինչ ոք ի գիցն առնիցէ, եւ զպաշարս զօրականացն պատրաստել, եւ յարդարել զի յաջողեալ իցեն անձինք նոցա։ Այլ վասն յիւրաքանչիւր գործ պատերազմի կրթելոյ, թուի ինձ թէ եւ հրահանգս իւրաքանչիւր ումեք սահմանելով եւ վարձս առաջի եդեալ, արարից զի բարւոք յիւրաքանչիւր ճգուանս թեւակոխիցեն, մինչ զի յորժամ պիտոյ լինիցի, ունիցիմ կազմս եւ պատրաստս ի գործ վարել։ Բայց խօսեցար, ասէ, որդեակ, զի եթէ զայդ առնիցես, իբրեւ զպարս գնդաց պարաւորացն ցանգ տեսանիցես զգունդսն ի պատշաճան կրթեալ։

Այլ վասն յօժարութիւն ի զօրսն արկանելոյ, ոչ մի ինչ այնպէս ինձ բաւական թուիցի, բայց կարօղ լինել ի բարւոք ակնկալութիւն զարան յորդորել։ Բայց այս այնմ նման է, որդեակ, որպէս զի թէ պառականս ոք յորս կոչիցէ ցանգ իսկ եւ միշտ կոչմամբն որով կարդայցէ յորժամ երէ նշմարիցէ. զի գիտեմ եթէ յառաջնում նբաւագին յորդորագոյնս լինիցին ուկնդիրք, ապեթէ բաղում անգամ պատրիցին, յետոյ յորժամ ճշմարտիւ իսկ գաղան տեսեալ կոչիցես, չլինին հնազանդ. եւ վասն ակնկալութեան նոյն բանք են։ Եթէ բաղում բարութեանց յոյսս խոստացեալ եւ ստիցէ ոք, ապա

եւ ոչ թէ յորժամ ճշմարիտ ինչ յոյս պատմիցէ այնպիսին, կարիցէ ածել ի հաւան։ Այլ պարտ է անխայել, որդեակ, զի մի զոր ստոյգ ոք չգիտիցէ, ինքնին ասիցէ, այլ երբեմն յորժամ այլք ասիցեն, մարթի զնոյն գործ վճարել. իսկ զիւր խրատն ի մեծամեծ ինչ նեղութիւնս պահել զի առաւել հաւատարիմ լինիցի։ Այր ասէ բարեղք խօսեցար, զի եւ ինձ այսպէս քաղցր է։

Իսկ զզօրականն ի հնազանդութեան ունելոյ թուի ինձ թէ չեմ ինչ անտեղեակ. քանզի դու ինձ իսկ եւ իսկ զդոյն ի մանկութենէ ուսուցեր յորժամ ստիպէիրն քեզ հնազանդ լինել։ Այս եաուր զիս ի վարդապետաց ձեռս, եւ նոքին դարձեալ զնոյն առնէին. եւ յորժամ ի պատանեկաց միջի էի, որ իշխան էր մեր վասն նորին իսկ փոյթ արար։ Թուի ինձ թէ եւ բազում օրէնք են որ զայս երկուս քաջ ուսուցանեն, իշխել եւ ընդ իշխանութեամբ լինել։ Այսուհետեւ զմտաւ ածեալ վասն սոցին իրաց, յամենայնի տեսանեմ զի առաւել իմն քաջալերութիւն է ի հաւանութիւն, զհնազանդն յարգել եւ մեծարել եւ զանհնազանդն անարգել եւ ի պատիժս մատնել։

Այդ ճանապարհ, որդեակ, ի հարկէ իմն հնազանդելոյ է. այլ այլ իմն կարճոյ ճանապարհ է լաւ քան զայն, կա-

մակարն հնազանդել։ Օ՛յ զումն կարծիցեն մարդիկ թէ իմաստութեամբ քան զնոսա զնոցա օգուտն խորհիցի, նմին ախորժութեամբ կան ի հնազանդութեան։ Եւ զի այդ այդպէս է, ի միտ առցես այլովք բազմօք, նա եւ ի ցաւածսն իսկ, քանզի յօժարութեամբ զայնոսիկ որ կարծիցին առնել որ ինչ պատշաճն իցէ, կոչեն. եւ ի ծովու յօժարութեամբ նաւավարացն որ նաւարկենն հնազանդ լինին. եւ ոչ զոմանց կարծիցեն եթէ տեղեկագոյն քան զնոսա զճանապարհսն գիտեն, չառնուն յանձն թողուլ զնոսա։ Իսկ իբրեւ կարծեն թէ յորժամ հնազանդիցին վիշտս ինչ իցեն կրելոց, չկամին յանձին ունել զվնասսն եւ ոչ պարգեւօք խոտղել, քանզի ոչ եթէ առ անձինն եղեռան ոչ կամաւ առցէ կաշառս։

Հայր, ասէ, ասես թէ առ ի հնազանդութեան ունելոյ չիք ինչ կարեւոր քան զիմաստանագոյնն երեւել քան զնոսա որ ընդ իշխանութեամբ իցեն։ Եւ արդ ասեմ, ասէ, Հայր, զիարդ ոչ եւ որգունակ զայնպիսի կարծիս վաղվաղակի զանձնէ կարիցէ ընծայեցուցանել։ Զիք ասէ որդեակ կարճոյ ճանապարհ, այլ որովք իմաստունն կամիցիս երեւել, ի նոսին իմաստուն լինիցիս։ Եթէ ընդ մի մի իւրաքանչիւր ի նոցանէ միտ եդեալ նայիցիս, ծանիցես

եթէ զճշմարիտն ասեմ ես. զի եթէ կամիցիս թէ չիցես քաջ մշակ եւ համարիցիս քաջ հողագործ կամ հեծեալ կամ բժիշկ կամ փողար կամ այլ ինչ այնպիսի, զմտաւ ած որչափ հնարս քանի պաճարս պարտ էր պաճարել վասն այնպէսն կարծեցուցանելոյ։ Եւ եթէ զբազմաց միտս հաճեսցես գովել զքեզ զի այնպիսի կարծիք կարծիցին, եւ բարուք կազմածս առ իւրաքանչիւր ի նոցանէ ստացեալ ունիցիս, արդ խաբեբայ եւ գրթիչ լինիցիս, եւ յետ սակաւ ինչ միոյ, ուր հանդէս եւս ցուցանիցես, յանդիմանեալ լինիցիս եւ ամբարտաւան եւս երեւիցիս։

Իսկ զիա՞րդ լինիցի ոք իմաստուն առ ի խելամուտ հանդերձելոցն լինելոյ։ Յայտ է, ասէ, թէ որ ինչ մարթիցի ուսմամբ գիտել, ուսանելով, զոր օրինակ զճակատն ուսար. իսկ որ ինչ մարդկան չիցէ ուսանելի եւ ոչ յառաջագոյն երեւելի մարդկեղէն մտաց, ըղձութեամբ ի դիցն հարցեալ իմաստնագոյն քան զայլսն լինիցիս։ Եւ զոր գիտեսն եթէ լաւագոյն լաւ է առնել, փոյթ ի մտի ունիցիս զի ի գլուխ ելանիցէ։ Զի հոգալ զայնմանէ որով կարօտ իցէ եւ չառնել անփոյթ առն իմաստնոյ է։

Այլ վասն սիրելի իշխանաւորացն լինելոյ, որ մեծ իմն թուի ինձ, յայտ

է եթէ նոյն ճանապարհ է, եթէ յօ-
ժարիցէ ոք զի գուցէ անկանիցի ընդ
նա բարեկամացն։ Զանգի ինձ թուի
թէ երախտեաքն պարտ է երեւելի լի-
նել. բայց այն դժուարին է, ասէ, որ-
դեակ, միշտ առնել բարի այնոցիկ ո-
րոց կամիցի ոք. մեւս եւս ուրախ լի-
նել ընդ նոսա եթէ լաւ ինչ նոցա դի-
պեսցի, եւ տրտմակից, եթէ չար ինչ
պատահար պատահեսցի, եւ յօժարել
լինել օգնական ի վարանս նոցա, եր-
կընչել թէ մի սխալեսցեն, եւ փութալ
խնամակալ լինել զի մի վրիպեսցին.
սոքիմբք պարտ եւ պատշաճ է օգնական
լինել նոցա։

Իսկ վասն գործոց եւ արուեստեանց.
եթէ ամարայնի իցեն, պարտ է իշխա-
նին յայտ յանդիման տապոյ արեգա-
կան յաղթել. եւ եթէ ի կարեճմեռն
ճմերայնի իցեն, ընդ ցուրտ ոգորել.
եւ եթէ վաստակել հասանիցէ, առա-
ւել լինել աշխատութեամբ. զի այս
ամենայն նպաստ լինիցի առ ի սիրելի
իշխանաւորացն լինելոյ։ Այր, ասէ,
ասես թէ պարտ է իշխանին յամենայնի
հզօրագոյն քան զիշխանաւորան լինել։
Արդարեւ, ասէ, զայդ ասեմ. բայց
դու քաջալերեաց որդեակ, զայդ գի-
տասջիր, թէ մարմնոց նմանեաց աշ-
խատութիւնք ոչ հանգոյն միմեանց
են, առն իշխանի եւ շինականի. այլ

փոփոդէ իմն զցաւս իշխանին պատիւն, եւ գիտելն թէ ոչ թագչի որ ինչ գործ գործէ։

Այր յորժամ զռոճիկսն ունիցի զօրականն եւ ողջ իցեն եւ վաստակել մարթիցեն եւ ի պատերազմաց արուեստս թեքեալք եւ կրթեալք իցեն, եւ համարիցին պատիւ պարծանաց քաջ եւ առաքինի երեւել, քան զանասատելն հնազանդելն հեշտական թուիցի նոցա. ոչ ապաքէն իմաստուն թուիցի քեզ որ կամիցի ոք վաղվաղակի ընդ թշնամիս մարտ եդեալ կռուել։ Այո, ասէ, եթէ ունելոց իցէ առաւելութիւն. ապա թէ ոչ եւ ես որչափ թուիմն թէ ինքնին աղնուագոյն իցեմ եւ սպասաւորս պիտանիս ունիցիմ, դոյնչափ եւս աւելի զգոյշ լինիցիմ. զոր օրինակ եւ զայլ եւս ինչ զոր մեծագինն համարիմք, զայն ջանամք յամուր վայրի պահել։

Իսկ զի՞արդ ոք մարթիցի զօրագոյն քան զթշնամիս լինել։ Ոչ զթեթեւ ինչ եւ զդոյզն գործոյ հարցանես, որդեակ. այլ գիտասջիր թէ որ զայն կամիցի գործել, հարկ է նենգաւոր լինել եւ կեղծաւոր եւ խաբեբայ եւ պատրիչ եւ գող եւ յափշտակող եւ ամենեւին ժլատել ի թշնամիսն։ Եւ Կիւրոսի ծիծաղեալ ասէ. Ոհ որպիսի իսկ ոք այր հրամայես ինձ լինել։ Թէ այնպի-

սի լինիցիս որդեակ, ապա այր արդար եւ օրինաւոր լինիցիս։

Բայց զիա՞րդ, ասէ, մինչ մանկտին էաք զնոցին հակառական մեզ ուսուցէք, նա աւանիկ եւ այժմ, առ բարեկամս եւ առ քաղաքացիս։ Ո՞չ դիտես, ասէ, եթէ բազում խարդախութիւն ուսայք եւ մեղմեխանս զի թշնամեացն կարիցէք չար առնել։ Ոչ, ասէ, հայր։ Իսկ արդ վասն էր իրիք, ասէ, ուսանէիք նեա ձգել, հի՞մ զեղարդն առնուլ, ընդէր վարազաց վայրի նենդէիք կարս մանեալ երագաղ ձգեալ փոս հատեալ, եւ այծեմանցն որոգայթ ափռեալ։ Ընդէր եւ ընդ առիւծուց եւ արջուց եւ ընձուց ոչ կշիռ զնոյն օրինակ կռուէիք, այլ աւելի իմն ընդ նոսա ջանայիք ոգորել։ Եւ ո՞չ գիտիցես եթէ այս ամենայն խարդախութիւնք են եւ խաբէութիւնք եւ նենգութիւն եւ ժլատութիւն։

Ներէց, ասէ, է խաբէութիւնն։ Ապա թէ կարծիցիմ եթէ ի մարդկանէ զոք կամիմ խաբել, բազում գան ըմպիցեմ։ Եւ ուի ինձ, ասէ, թէ չհամարձակէաք ձեզ նեռալից զմարդ առնել. այլ ուսուցանէաք ձգել ի նպատակ անդր, զի մի այժմ բարեկամաց մեղանչիցէք. իսկ եթէ պատերազմ ի վերայ հասանիցէ, մարդիկ եւս կարիցէք հարկանել, եւ ուսուցաք ձեզ

խաբել եւ պատրել եւ յաղթել, ոչ եթէ մարդկամբ այլ գազանօքն, զի մի եւ նոքիմբք բարեկամաց ՛ի նապատիցէք. իսկ եթէ լինիցի երբեմն մարտ պատերազմի, մի առանց կրթուլթեան այնր ամենայնի իցէք։

Այր ասէ, եթէ արդարեւ պիտանացու իցէ երկոցունց կողմանց հմուտ լինել, բարի ինչ եւ չար առնելոյ մարդկան, պարտ էր զերկոսեան իսկ ուսուցանել ի մարդկան միջի։ Պատմեն, ասէ, որդեակ, առ մերովք նախնեօք եւ հարբք եւ հաւուք լեալ այր վարդապետ մանկտւոյ, որ ուսուցանիցէ մանկտւոյ զիրաւն եւ զարժանն, որպէս դուդ տաս հրաման, եւ զզրկանան, մի ատել եւ ատել, եւ մի խաբել եւ խաբել, մի բամբասել եւ բամբասել, մի ագահել եւ ագահել. եւ զատանէր զայն ինչ որ առ բարեկամն առնելի էր, եւ զայն զոր առ թշնամիս։ Եւ եւս յառաջ մատուցեալ զայս ուսուցանէր թէ զբարեկամն արժան է խաբել ի բարիս, եւ գողանալ զբարեկամացն ի լաւ։

Եւ որ զայսն ուսուցանէր, հարկ էր եւ զմանկտին ի հանդիսի անցուցանել զնոյն ընդ միմեանս առնել. զոր օրինակ եւ ի հրահանգս կռուանոցացն զՅունաց պատմեն ուսուցանել պատրանս խաբէուլթեան, եւ վարժել զմանկտին զդոյն առ միմեանս առնել։ Արդ ոմանք

քանզի մտավարժ էին եւ առ պատրել եւ առ ագահել, թերեւս եւ առ շահել իսկ, ոչ կարճէին եւ ոչ ի բարեկամաց առ ի չյաղթահարելոյ զնոսա։ Յայնմ հետէ հրաման լինէր, որով եւ այժմ վարիմք, ուսուցանել լոկ զմանկտին, որպէս զծառայս ուսուցանեմք ճշմարիտս լինել նոցա առ մեզ եւ մի խաբել եւ մի գողանալ եւ մի ագահել. եւ եթէ արտաքոյ քան զայս գործիցեն, պատիժս ի վերայ ածել, որպէս զի ընդ այնպիսի բարս ընդելեալք, զգօնագոյնք քաղաքացիքն լինիցին։

Յետոյ իբրեւ յայն տիս հասանիցեն, յորում դու այժմիկ իցես, եւ զօրէնս եւս պատերազմացն ուսուցանել զգուշութիւն կարծեցաւ. զի այսպէս թուիք եթէ չէք այսուհետեւ խոտորելոց խակ քաղաքացիս լինել։ Որպէս եւ զաստղկան ցանկութենէ ընդ համօրէն երիտասարդսն չխօսիմք, զի մի ի սաստիկ ցանկութիւն անդր նոցա յաւելցի դիւրութիւնն, եւ առանց չափոյ նովին վարեսցին երիտասարդքն։ Դու արդ քանզի զայն ես անագան ուսանիմ. հայր, մի խնայեր յինէն եթէ կարիցես ուսուցանել ինչ զի առաւել լինիցիմ քան զթշնամիսն։

Դու արդ հնարեսջիր, ասէ, որչափ կար իցէ քո, քոյովքն ճակատելովք

զանկարդ եւ զչճակատեալ թշնամիսն ըմբռնել, եւ վառելովք զանզէնսն, եւ արթնովք զքուն եղեալսն, եւ երեւեսցին նոքա քեզ, եւ դունոցա աներեւոյթ իցես, նոքա ի դժուարս իցեն եւ դու յամուր վայրի։

Իսկ զիարդ իցէ, ասէ, հայր, թէ կարիցէ ոք ըմբռնել զթշնամիսն որ այնպիսի ինչ յանցուցեալ իցեն։ Զանզի բազում ինչ յայսցանէ, ասէ, որդեակ, հարկ է եւ ձեզ եւ հակառակորդաց ձերոց կրել. հարկ է երկոցունցդ հաց ուտել, երկոցունցդ ի քուն լինել, եւ ընդ առաւօտն գրեթէ ամենեցուն միանգամայն պարտ է մեկնել վասն պիտոյից, եւ որպիսի ինչ ճանապարհքն իցեն, սակայն հարկ է ընդ այն յուղի անկեալ երթալ։ Օրս պարտ է քեզ զամենայն մի ըստ միոջէ ածել զմտաւ, եւ յորս գիտեսն թէ տկար եւ անզօր էք դուք, այնմ իմն առաւել պահունել, իսկ յորժամ ազդ լինիցի քեզ զթշնամեացն եթէ դիւրին է ի բուռն առնուլ զնոսա, յայնժամ մանաւանդ ի դիմի հարկանել։

Ասէ Կիւրոս. Ո՞ր թէ սոքօք եւեթ մարթիցի առաւել լինել, թէ այլովք եւս ինչ իրօք։ Եւ կարի քաջ, ասէ, որդեակ այլովք իրօք. զի ի դոսա բազում անգամ ամենեքին սաստիկ պահպանութիւնս առնիցեն, քանզի գիտեն

թէ կարօտանան։ Իսկ որք զԹշնամին պատրեն, մարթեն վատահս առնել զնոսա եւ զեղծս ըմբռնել, եւ թոյլ տուեալ զկնի մտանել, զկարդան յանկարդութիւն հանիցեն, եւ փախստեամբ ի դժուարս ածեալ անդ ի դիմի հարկանիցին։

Պարտ եւ պատշաճ է, ասէ, որդեակ, քեզ որ զայս ամենայն սիրես ուսանել, ոչ զոր ուսանիցիսն, նոքիմբք եւեթ վարել, այլ եւ ինքնին իսկ ընդ հակառակորդսն մենքենայել հնարս, որպէս եւ գուսանականքն, ոչ զոր ուսանն զայն եւեթ արկանեն ի կիր այլ այլ եւս նուագս գեղգեղեն բազմախառն տաւղօքն. եւ կարի յերաժիշտսն որ նոքքն իցեն եւ ի ծաղկի, այն հաճոյ թուիցին. եւ բազմապատիկ իսկ աւելի ի մարտի նոր մենքենայք. զի սոքա առաւել մարթեն զԹշնամին պատրել։

Բայց դու ասէ, որդեակ, եթէ ոչ այլ ինչ հասուցանիցես մարդկան, այլ զհնարս մենքենաւորութեանն զոր բնաւ մանր մանր գազանաց մենքենայէիր, կարծիցե՞ս թէ չլինիցիս ամենեւին գամագիտ թշնամեացն։ Վանդի դու ի սաստիկ ձմերայնի յարուցեալ ի հաւուց որսս, երթայիր գիշերի. եւ մինչ չեւ հաւուցն շարժեալ յիւրաքանչիւր բունոց թակարդք ձգէին խուճապականք սփռէին, եւ երկիրն պեղեալ

նման էր կորդացեալ գեանոյ։ Եւ հաւքն խրատեալ էին ի քէն, մինչ զի քում օգտութեանգ սպասաւոր լեալ արբանեկէին եւ զհամազգի թռչունսն պատրել. եւ գու դարանեալ նստէիր, որպէս զի դու նշմարէիր զնոսա եւ նոցա չլինէիր երեւելի. եւ ունէիր հոգ ի մտի ածապարել եւ ձգել զթռչունսն մինչ չեւ փախուցեալ նոցա։

Դարձեալ եւ առ նապաստակսն քանզի ի խաւարի արածին եւ զցերեկ խուսխուսեն, պառակսն բուծանէիր, որք հոտոտելովն գտանէին զնոսա. եւ քանզի երագ փախուցեալ ապրին յորժամ գտանին, այլ եւս պառակսն պատրաստակսն ունէիր ի փախստեան ըմբռնել. ապա թէ անտի եւս զերծանիցին, ուսեալ զճանապարհս նոցա, եւ թէ յոր վայր ախորժիցեն դիմել նապաստակքն, անդէն զաներեւոյթ վարմանն տարածանէիր, զի ի սաստիկ փախստեանն ինքն զինքն շաղեալ պատիցէ։ Եւ առ անտի եւս չապրելոյ փախստեայ, դէտս իրացն կացուցանէիր, որք ի մօտոյ իսկ վաղվաղակի ի վերայ դիմիցեն. եւ դու յետոյ կուսէ աղաղակ եդեալ ի նապաստակ անդր զարհուրեցուցանէիր զնա, որպէս զի յանզգաստից ի բուռն անկանիցի. եւ ցայնոսիկ որ յառաջոյ դարանամուտ լեալ ի ցեղն պատուէր տայիր լուռ լի-

նել, եւ այնպէս թագուցանէիր զնոսա։

Արդ որպէս կանխագոյն ասէի, եթէ այսպիսի հնարս եւ ի մարդիկ հնարիցիս, չգիտեմ թէ թողուցուս զդք ի հակառակորդաց անտի։ Ապա թէ հարկ հասանիցէ երբեմն ի դիւրի եւ ի դաշտի յայտյանդիման վառեալ երկոցունց կողմանց ի մարտ պատերազմի ընդ միմեանս բախել յայնմ վայրի, որդեակ, առաւելութիւնքն որ ի բազում ժամանակաց պատրաստեալ կայցեն մեծ իմն զօրութիւն ունիցին։ Դու եւ, ասէ, յայնժամ ասեմ թէ առաւելութիւնք են, յորժամ զօրականացն անձինք կիրթք իցեն եւ ոգիքն զուարթացեալք, եւ զպատերազմական ճարտարութեանց փոյթ լեալ։

Պարտ է եւ այնմ եւս քաջ գիտակ լինել, թէ զորս ստիպես հնազանդ լինել քեզ, եւ նոքա ամենեքին այսպէս համարին թէ եւ քեզ պարտ է զնոցանէ խորհել։ Դու արդ մի անհոգ կայցես, այլ գիշերայն տեսջիր թէ զինչ իշխանաւորքն առնիցեն յորժամ տիւ լինիցի. իսկ զցերեկ թէ զիարդ բարուք իցեն ցայգութեանն պէտքն։

Բայց թէ զիարդ պարտ իցէ ի կռիւ զզօրսն ճակատեցուցանել կամ որպէս տանել զցերեկ կամ զցայգ կամ ընդ նեղ կամ ընդ լայն ինչ ճանապարհ

կամ ընդ լեռնականս կամ ընդ դաշ-
տականս, կամ որդունակ զօրաժողով
ի պատերազմ երթալ կամ զիարդ ցայ-
գութեան եւ ցերեկութեան պահա-
կապանս կացուցանել, կամ որպէս առ
թշնամիսն հակառակորդս մատուցա-
նել, կամ ի բաց տանել ի նոցանէ,
կամ որպէս առ պատերազմօղ քաղա-
քաւ տանել կամ ի պարիսպսն մատու-
ցանել, կամ մեկուսի ի պարսպաց ան-
տի տանել, կամ ընդ խոխոմս եւ ընդ
սորս եւ ընդ գետս անցանել, կամ
զգոյշ լինել հեծելազօրուն կամ տի-
գաւորացն կամ աղեղնաւորացն։ Եւ ե-
թէ դու յորժամ թեւ ի թեւ առեալ
տանիցիս, յանդիման լինիցին թշնա-
միքն, ո՛րպէս պարտ իցէ ի դիմի հար-
կանել. եւ եթէ կարգեալ ճակատեալ
տանիցիս այլուստ ուստեք թշնամիքն
յայտնիցին եւ ոչ ի հանդիպոյ, զիարդ
պարտ իցէ տանել ընդ նոցա դէմ. կամ
ո՛րպէս զերս թշնամեացն ոք զգայցէ
եւ զքոյսն թշնամիք չգիտիցեն. եւ
զի՞ իսկ ես զայս ամենայն քեզ յաճա-
խիցեմ. զոր ինչ գիտէի, զայն բա-
զում անգամ լուար։ Եւ եթէ թուէր
ոք միոյ իրիք յայնցանէ հմուտ, չառ-
նէիր անփոյթ զնմանէ, եւ չլինէիր ան-
տեղեակ. այսուհետեւ պարտ է ըստ դի-
պացն պատահելոց նոքիմբք վարել,
որ ինչ քեզ միշտ օգուտ թուիցի։

Եւ զայս եւս մեծամեծս ուսիր յինէն որդեակ։ Մի երբեք առանց զոհից եւ հմայից մի անձամբ եւ մի զօրօք ի վիշտս մխիցիս, ի միտ առեալ թէ մարդիկ յօժարեն ի գործս յորժամ զգործսն նկատեն, թէպէտ եւ գիտիցեն իսկ ոչ թէ ուստի արդեւք լինիցին նոցա բարութիւնքն։ Եւ ծանիցես իսկ յարդեանց իրացն եղելոց. քանզի բազումք ածին ի հաւան, եւ այն զի իմաստնագոյնք եւս թուէին թէ իցեն, զի ի պատերազմ ընդ նոսա գրգռիցին, յորոց որք հաւանեցանն երթալ եւ ի դիմի հարկանել, սատակեցան։ Հապա զբազում արս շինականս եւ քաղաքս մեծացուցին, եւ յայնցանէ որ մեծացանն եւ աճեցին զմեծամեծ չարիսն կրեցին։ Եւ բազումք իսկ, զորս մարթէր իբրեւ բարեկամս վարել եւ երախտիս առնել եւ ի նոցունց երախտիս գտանել, կամեցեալ ծառայս վարել զնոսա եւ ոչ բարեկամս, անդստին ի նոցունց իսկ ետուն վրէժս։ Եւ բազմաց որ զկողմն մի ունէին. չեղեւ բաւական կեալն հեշտականութեամբ, այլ ցանկացան ամենեցունց տեարս լինել, յայն սակս իսկ եւ յորոց ունէինն վրիպեցին. եւ յոլովք որ զցանկալի ոսկին ունէին, վասն նորին կորեան։

Այսպէս մարդկեղէն իմաստութիւնս ոչ մի ինչ աղնուագոյն գիտէ ընտրել,

բայց յորժամ որ ինչ վիճակ ելանիցէ, զայն առնիցէ ոք։ Իսկ դիքն, որդեակ, քանզի միշտ իսկ են եւ յաւէժ կենդանականք զընաւ գիտեն որ ինչ եղեւն եւ որ էն եւ որ զինչ անցք ընդ իւրաքանչիւր ոք ի նոցանէ անցանիցեն. եւ մարդկան որ հարցանեն զնոսա եթէ հաշտ իցեն ընդ նոսա, դուշակեն թէ զինչ պարտ իցէ առնել եւ զինչ չիցէ պարտ։ Ապա եթէ ոչ ամենեցուն կամիցին օգնական լինել, չեն ինչ զարմանք, քանզի չգոյ ինչ նոցա հարկ ի վերայ, զորոց ոչն կամիցին, հոգալ։

ԵՐԿՐՈՐԴ

ԳԳՐՈՒԹՒՒՆ

ԳԱՂԹՈՓՈՒՆՏԵԱՅ
ԿԻՐՈՍԻ ԽՐԱՏՈՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ
Ի ԳՐՊՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա

Այսպէս ճառ արկեալ ընդ միմեանս դային հասանէին ի սահմանս Պարսից աշխարհին. եւ իբրեւ արծուի յաջողակ յայտ յանդիման ընթանայր առաջի նոցա, յաղօթս կացեալ դիցն եւ դիւցազանց որ զՊարսից աշխարհն ունէին, ուրախութեամբ յուղարկել զնոսա, այնպէս ընդ սահմանսն անցանէին: Եւ իբրեւ անցին, դարձեալ աղօթս դիցն մատուցանէին այնոցիկ որ զՍարաստան երկիրն ունիցին մտադիւրութեամբ ընդունել զնոսա: Այս արարեալ ողջոյն ետուն միմեանց որպէս ի դէպ էր. եւ հայրն միւսանգամ ի Պարսս մեկնեալ երթայր եւ Կիւրոս ի Մարս առ Կիաքսարէս չոգաւ:

Իբրեւ եհաս Կիւրոս ի Մարս առ Կիաքսարէս, զառաջինն որպէս արժան էր, միմեանց ողջոյն տային. ապա հար-

ցանէր զԿիւրոս Կիաքսարէս թէ ո՞րչափ զօրս ածեր։ Եւ նա ասէ թէ երիս հազարս, որ յառաջ ժամանակաւ վարձ-կանութեամբ գային առ քեզ. եւ այլք եւս ի հանդիտապատուաց անտի, որոց ոչ երբեք ելեալ է, եկեալ կան։ Ասէ Կիաքսարէս. Ո՞րչափ են։ Ասէ Կիւրոս. Ոչ համարն ինչ ուրախ առնի-ցէ զքեզ յորժամ լսիցես, այլ զայն ած դու զմտաւ, եթէ սոքա սակաւքս որ պատուակիցքն կոչէիցին, այլոց բազ-մաց Պարսից իշխեն։ Կարօ՞ տ ինչ արդեւք նոքօք իցես, եթէ զուր երկըն-չէիցիս ընդ վայր կասկածիցիս եւ չգայ-ցեն թշնամիքն։ Զալոց են ասէ, եւ բազումք իսկ։ Բայց այն ուստի՞ յայտ իցէ։ Զի բազումք, ասէ, որ անտի եկին, այլ ոք այլ ինչ օրինակ, սակայն ամենեքին զդոյն իմն ասեն։ Ապա ու-րեմն, ասէ, պարտ իցէ կռուել ընդ արանցն։ Հարկ է, ասէ, կռուել։

Ասէ Կիւրոս. Զի՞ իսկ չասացեր ինձ զզօրացն, եթէ գիտէիր թէ քանի ինչ եկեալ հասեալ զօրքն իցեն եւ հմուտ էիր մերոց զօրութեանց. որպէս զի տե-ղեկացեալ երկոցունց կողմանց, ընդ այն խորհեսցուք զի ազնուագոյն մար-տիցեմք։ Ասէ Կիաքսարէս. Ուղէ դու լուր. Կրիւսոս զիւդացի ասեն ածէ բեւր հեծեալ եւ շերտաւորս եւ աղեղնաւորս աւելի քան զչորս բի՝ւրաւորս։ Եւ զԱ-

տամանայ զմեծի Փռիւգացոց աշխարհին իշխանէ ասեն ածեալ այրուձի ուԹհազար մի, եւ Նիզակաւորս շերտաւորօք հանդերձ ոչ ինչ ընդհատ ի քառասուն հազարաց. եւ զԱրիբեայ Գամրաց Թագաւորէ, վեց հազարս առնեւձիոյ, իսկ աղեղնաւորս եւ շերտաւորս ոչ ինչ սխալ յերից հազարաց. զԱրագդեայ արաբացւոյ բեւր հեծեալ պատմեն բերել եւ կառս հարեւր, եւ պարսաւորաց բազում իմն ամբոխ։ Իսկ զՅունայ որ Յասիացւոց աշխարհին բնակիցեն ոչ ինչ ճշդիւ ուրեք պատմի Թէ գայցեն զհետ. եւ զայնոսիկ որ ի Փռիւգաստանէ իցեն որ առ Եղղէսպոնտոս ծովու կայ, Գաբէոս ասեն նպաստ լինիցի, որոյ ի Կայիստրոս դաշտի վեց հազար հեծեալք եւ բեւր շերտաւորք իցեն։ Օկարիացւոց եւ զԿիղիկեցւոց եւ զՊափղագոնացւոց ասեն Թէ կոչեցեալ չեկին։ Իսկ ասորեստանեայն որ զԱբիղացւոց քաղաքն ունի եւ զայլ եւս զԱսորեստան, Թուի ինձ Թէ հեծելազօրս ածիցէ ոչ պակաս յերկուց բիւրուց եւ կառս ոչ ինչ աւելի քան զերկերիւր, եւ հետեւակս բազումս. քանզի այնպէս իսկ սովոր էր յորժամ այսր դիմեալ գայր։

Ասէ Կիւրոս. Դու զԹշնամեացդ աւադիկ պատմես Թէ վեց բեւր հեծեալք են, եւ շերտաւորք եւ աղեղնաւորք ա-

ուելի քան զքսան բեւրս։ Ընդ առ այսուհետեւ զինչ բազմութիւն ասիցես զքո զօրացն։ Նոն, ասէ, Սարաց այրուձին աւելի քան զբեւրս, շերտաւորք եւ աղեղնաւորք իցեն առ մեզ վեց բեւր։ Ի Հայոց ի մերոց արուարձանեաց հասցեն չորեքհազար հեծեալք եւ հետեւակք երկու բեւր։ Ասէ Կիւրոս. Ասես թէ մեր այրուձին պակաս քան զերիր մասն հեծելազօրու թշնամեացն են, եւ հետեւակք զոգ կէս իսկ նոցա։ Կիաքսարէս ասէ. Իսկ արդ զի՞ արդ սակաւաւորս համարիցիս զՊարսիկս, զորոց դուդ ասես թէ ածեմ։ Կիւրոս ասէ. Ամլ թէ իցէ՞ արդեւք մեզ կարօտութիւն արանց եթէ ոչ, աստատին իսկ զայն խորհեացուք։ Բայց զկռիւն, ասէ, պատմեա թէ զինչ կռիւ իցէ։

Կիաքսարէս ասէ. Գրեթէ ամենեցուն նոյն պատերազմ է. քանզի աղեղնաւորք եւ տիգաւորք են եւ նոցայն եւ մերքն։ Ասէ Կիւրոս. Ապա ուրեմն հարկ է ի մեծ հեռաստանէ կռուել, եթէ այնպիսի զէնք իցեն։ Ասէ Կիաքսարէս. Հարկ է թէ ի հեռաստանէ կռուիցիմք։ Կիւրոս ասէ. Ապա ուրեմն, յայնժամ բազմացն լինիցի յաղթութիւն. քանզի կարի քաջ արագ սակաւաւորացն ի բազմաց անտի խոցեալ սատակիցին եւ ոչ եթէ ի սակա-

ւուցն բազումքն։ Ապա թէ այդ այդ-
պէս իցէ, ասէ, ով Կիւրէ, զինչ այլ
ինչ լաւ ինչ ոք գտանիցէ, այլ առա-
քել ի Պարսս, եւ տեղեկացուցանել
եթէ վշտանայցեն ինչ Մարքն, աղէտք
ի Պարսիկս հասանիցեն, եւ խնդրել
բազում եւս զօր։ Իսկ Կիւրոս. Ոչայս,
ասէ, ի միտ առ թէ եւ ոչ եթէ ամե-
նայն իսկ Պարսիկքն միաժողով գայ-
ցեն, բազմութեամբ չառաւելումք քան
զթշնամիսն։

Իսկ դու զի՞նչ ազնուագոյն քան
զսոյն ածիցես զմտաւ։ Այս, ասէ Կիւրոս,
եթէ իբրեւ զքեզդ էի, վաղվաղակի
զէն եւ զարդ դորձէի ամենայն Պարսից
որ եկեալ հասեալ կան, զոր օրինակ
որ ընդ մեզն իցեն, ունին, որ հանգի-
տապատիւքն անուանեալ կոչիցին. այն
իսկ է, զրահապատ պատեանք զլան-
ջօքն եւ ասպար յահեակ ձեռին, եւ
սուսեր պողովատիկ կամ թուր յա-
ջում. եթէ զայդ պատրաստիցես, մեզ
տայցես մօտ երթալ հակառակորդացն
զդուշութեամբ, եւ թշնամիքն փախ-
չել լաւ համարիցին քան կալ մնալ։
Այս մեք ինքնին կացցուք ճակատես-
ցուք ընդ մնացելոցն. եւ որք փախչ-
տեայ ելանեն ի նոցանէ, զնոսա ձեզ
եւ հեծելոց ապաստան առնեմք, որ-
պէս զի չլինիցի նոցա պարապ ոչ փախ-
չելոյ եւ ոչ դառնալոյ յեռս։

Այս խօսեցաւ Կիւրոս. եւ հաճոյ թուեցաւ բանն Կիպաքսարայ. եւ ոչ եւս այնուհետեւ յիշէր առաքել կոչել ամբոխ, եւ կազմէր պատրաստէր զզէնսն որ յառաջագոյն ասացան, եւ զոգ պատրաստ իմն էր եւ ի Պարսից անտի գային հասանէին պատուակիցքն որք զՊարսից զօրսն ունէին։ Յայնմ վայրի Կիւրոս, ասեն, ի մի վայր գումարեալ զնոսա խօսէր զսոյն ձեւ օրինակի բանից։

Արք բարեկամք, իմ տեսեալ զձեզ այսպէս վառեալ ի զէն եւ ի զարդ եւ կազմն եւ պատրաստս ոգւովք եւ մտօք որպէս թէ գիրկ ընդ գիրկ խառնելոց իցէք ախոյենից. եւ գիտացի թէ Պարսիկք որ զհետ ձեր գան այնպէս վառեալ են, զի ի հեռաստանէ եւեթ ճակատեալ մարթեն կռուել, երկեայ թէ մի վասն զի սակաւաւորք իցէք եւ լոկ եւ թափուր յօգնականաց, անկեալ ի բազմամբոխ թշնամիսն, վնասս ինչ կրիցէք։ Արդ այժմիկ արս հուժկուս ընդ ձեզ առեալ գայք. լինիցին եւ նոցա զէնք հանգոյն մերոց զինուց. իսկ զմիտս նոցա յորդորել, այն մեր գործ լիցի։ Քանզի իշխանի գործ այն է, ոչ ինքն եւեթ առաքինի լինել, այլ եւ զայնցանէ որ ընդ իշխանութեամբ իցեն, հոգալ, զի լաւագոյնք լինիցին։

Իբրեւ նա զայն խօսէր, նոքա ամենեքին ուրախ լինէին, զմտաւ ածեալ

եթէ ընդ բազմաց կռուիցին. եւ մի ոմն խօսէր այսպէս. Թերեւս, ասէ, զարմանալի ինչ թուիցիմ բարբառել, եթէ Կիւրոսի խրատ տայցեմ խօսել ինչ զմինչ, յորժամ զզէնսն առնուցուն որք մեզ թիկունք օգնականութեան լինելոց իցեն։ Բանզի գիտեմ ես, ասէ, զի ճառք այնոցիկ որ բարի ինչ կամ չար բաւական իցեն հասուցանել, նոքին առաւել յորդորեն զմիտս լսողացն։ Եւ պարգեւս եթէ տայցեն այնպիսիքն, թէպէտ եւ նուազագոյն եւս դիպեսցի քան զառ ի հաւասարիցն պարգեւս, սակայն մեծամեծար զնոյնս առնլիքն մեծարիցեն։ Եւ այժմ, ասէ, Պարսիկք թէ ի Կիւրոսէ քաջալերիցին, կարի իսկ անսայցեն, քան ի մէնջ մխիթարութիւն գտեալ։ Եւ եթէ ընդ հանգիտապատիւսն կարգիցին, հաստատագոյն զայն համարիցին յորժամ ի թագաւորի որդւոյ եւ խպարապետէ, քան եթէ ի մէնջ յայս եւ ի սոյն հասանիցեն. թէպէտ եւ ոչ մերոցն ինչ պարտ է հեռի լինել, այլ արժան է ամենայն հնարիւք զմիտս արանցն յորդորել ամենեւին, զի դոյն մեզ օգտակար եւ շահաւոր է թէ սոքա լաւագոյնք եւ առաքինիք լինիցին։

Ապա զզէնսն ի միջի անդ դնէր Կիւրոս, եւ կոչեցեալ զամենայն զօրսն Պարսից, խօսէր զայս գոյն օրինակ բա-

նից. Ազգ պարսիկք դուք անդէն ի նմին աշխարհի ծնայք սնայք, եւ մարմինս ոչ ի վայր ինչ քան զմեզ ունիք, ըմբռն եւ ի դէպ է մի եւ միտս ապաժամանն քան զմեզ ունել։ Իսկ արդ թէպէտ եւ այսպիսիք ոգք էիք, բայց ի մերում աշխարհին չունէիք հաղորդութիւն հաւասար ընդ մեզ, ոչ զի ի մէնջ մերժեալ էիք, այլ զի հարկ ի վերայ կայր ձեր զպէտսն կարեւորս շահել։ Բայց զի զպէտսն ունիցիք, ինձ փոյթ լիցի հանդերձ ասատուածովքն։ Այսուհետեւ իշխանութիւն է եւ ձեզ, եթէ կամիք, առնուլ զէն որպէս եւ մեքն ունիմք, եւ թէպէտ եւ ի վայր եւս քան զմեզ իցէք, ի նոյն վիշտս ընդ մեզ մնել, եւ եթէ լաւութիւն ինչ եւ շահ ի նոցունց գործիցի, այնմ՝ հանգոյն մեզ արժանի լինիցիք։

Զառաջին ժամանակն եւ դուք աղեղնաւորք եւ տիգաւորք էիք եւ մեք, եւ եթէ նուազագոյն քան զմեզ ժրանայիք, ընդ այն չեն ինչ զարմանք, քանզի չէր ձեր պարապ իբրեւ զմեզ ընդ նոյնս կրթել. բայց զինուքդ այդոքիւք ոչ մի ինչ աւելի մեք քան զձեզ ունիցիմք։ Քանզի գոն զրահք զլանջք ըստ իւրաքանչիւր պատշաճի, ասպար յահեկի, զոր ամենեքին իսկ սովոր իցեմք կրել, սուսեր կամ թուր յոջում ձեռին որով զհակառակորդսն

պարտ իցէ խոցել եւ այնմ եւեթ զդոյշ լինիցիմք թէ մի ի հարկանելն վրիպիցիմք։ Եւ արդ զի՞նչ իցէ յայսմ ամենայնէ, իւ այր քան զընկեր լաւ իցէ, բայց քաջութեամբ, զոր եւ ձեզ անկ է ոչ ինչ ընդհատ ի մէնջ յանդգնել. զի յաղթութեան ցանկանալ, որ զընաւ իսկ զբարութիւնն ծնանի եւ պահէ, զի՞ մեզ առաւել քան ձեզ դէպ իցէ։ Եւ յետ յաղթութեանն յորժամ ամենեայն որ ինչ պարտելոցն իցէ այն յաղթողացն լինիցի, զինչ նման է եթէ մեք աւելի իմն քան զձեզ կարօտ յաղթութեանն իցեմք։

Եւ ապա ասէ. Լսէք զամենայն, տեսանէք զզէնդ եւ զզարդդ, որ կամիցի ոք ի կիր արկանել, առցէ զդոսա, եւ գրեսցի ի հաղարապետէն ի նոյն կարգ հաւասար մեզ։ Իսկ որ բաւական համարիցի ի վարձկանաց համարի լինել, կացցէ մնասցէ ի զէնս սպասաւորութեանն։

Սա այսպէս ըստ սմին բանից խօսեցաւ. եւ լուեալ Պարսից զմտաւ ածէին թէ աղաչեցեալք զի ի նոյն վաստակս աշխատեալ նոցին պսակաց հասանիցեն եւ չկամիցին յանձին ունել, յիրաւի եւ յարժանի այնուհետեւ ցանդ իսկ զանհնարին տառապանաց զկեանսն կեցցեն, եւ այնպէս ամենեքին գրէին ի մատենին, առնուին եւ զէն

բոլորեքին։ Եւ ի ժամանակի զի ասէին թէ թշնամիք մօտ են, եւ չեւ եւս էին եկեալ հասեալ, ջանայր Կիւրոս զանձինս այնոցիկ որ ընդ իւրն լեալ էին ի զօրութիւն կրթել, զճակատն ուսուցանել եւ յորդորել զմիտս նոցա ի կռիւ։

Եւ նախ սպասաւորս ի Կիաքսարայ առեալ հրաման տայր նոցա իւրաքանչիւր ումեք ի զօրականացն զամենայն մատուցանել պատրաստական, որովք կարօտ իցեն։ Իբրեւ զայն կազմեր պատրաստեր, չէր ինչ այնուհետեւ նոցա պակաս, այլ ի մարտի հրահանգս թեւակոխել, զի այսպէս իսկ ածէր զմտաւ, թէ նոքին քաջք յիւրաքանչիւր գործս լինիցին, որք ի բաց մերժեալ ի բազմաց միտ դնելոյ, ի մի ինչ գործ ուշ առնիցեն։ Եւ ի պատերազմականաց անտի արգել զաղեղնաւորութեանն կրթութիւն, եւ զայս եւեթ թողոյր նոցա, սուսերաւ եւ նիզակաւ զրահապատ մարտ եղեալ կռուել, որպէս զի իսկ եւ իսկ վաղվաղակի զնոցունց զմիտսն յարդարէր, զի կամ ի մօտոյ կամիցին կռուել ընդ թշնամեացն կամ յանձին ունիցին թէ չեն ինչ արժանի զօրաւիգն օգնականութեան լինելոյ. եւ զայս դժուարին էր յանձն առնուլ նոցա, որք հմուտ էին, եթէ ոչ վասն այլ ինչ իրիք կերակրիցին, այլ զի ի

վերայ այնոցիկ՝ որ կերակրեն, կը-
ռուիցին։

Եւ զայն եւս ածեալ զմտաւ թէ
վասն որոց հակառակութիւնքն լինի-
ցին ի մարդիկ, կարի իսկ քաջ ընդ
նոյնս կամիցին թեւակոխել, մրցու-
թեան հրահանգս հրամայէր նոցա, ա-
մենայնի որ ինչ գիտէր եթէ լաւ է
կրթել ընդ նոյնս զօրացն։ Եւ զոր պա-
տուիրէրն, այսպիսի ինչ էր։ Դոյզն զօ-
րականի լաւ զանձն ընծայեցուցանել,
եւ հլու իշխանացն լինել եւ աշխատա-
սէր եւ վշտասէր հանդերձ յօրինուա-
ծութեամբն եւ զինուորութեան հմուտ
եւ զզինուցն սրբութիւն սիրել եւ առ
այնպիսի ինչ ամենայն առատանալ։
Եւ հնգապետին պատուիրէր ըստ դոյզն
զօրականի առաքինւոյ նոյնպէս եւ նմա
լինել, եւ զհինգսն ըստ իւրումն կարի
նոյնգունակ ընծայեցուցանել. եւ տա-
սնապետին զտասունսն. նոյնպէս եւ
զօրագլխին զվաշտն, ըստ նմին օրինակի
եւ սպարապետին զիւրաքանչիւր յայլոց
իշխանացն, զի եւ ինքն առանց բամ-
բասանաց իցէ, եւ զայնցանէ որ ըստ
նմանէ իշխանք իցեն հոգ ի մտի ու-
նիցի զի եւ նոքին այնոցիկ որոց տիրի-
ցեն, տայցեն զպատշաճան գործել։

Եւ վարձս եւս խոստանայր զօրավա-
րացն եթէ զգունդսն աղնուագոյն կազ-
միցեն, հաղարապետս լինել, եւ զօ-

բագլխացն որ լաւագոյն զգունդսն ցու-
ցանիցեն, ի զօրավարաց տեղիս ելանի-
ցեն. դարձեալ եւ աղնուագունաց ի
տասնապետաց անտի ի զօրագլխաց տե-
ղիս կալ. եւ հնգապետացն նոյնպէս ի
տասնապետաց տեղիս. եւ ի դոյզն զօ-
րականաց որ յաղթիցեն ի հնգապե-
տաց կարգս անցանել։ Համարձակ էր
ամենեցուն իշխանացն այնոցիկ նախ
յիշխանաւորացն պաշտօն առնուլ. եւ
ապա այլ եւս ինչ պատիւք որ իւրա-
քանչիւր ումեք վայելէին, զայնը զհետ
դային, եւ մեծ եւս ակնկալութիւն
գովութեան արժանաւորացն ցուցա-
նէր, եթէ յապա ժամանակն յաճա-
խեսցեն բարութիւնքն։

Խոստանայր յաղթութեան պարգեւս ամենեցուն գնդացն եւ ողջոյն իսկ վաշտուց եւ տասանցն որպէս եւ հնգիցն, եթէ հպատակագոյնք իշխանացն երեւիցին, եւ յօժարագոյնս կրթեալ յայնոսիկ որ արդ ճառեցան. եւ էին նոցա յաղթութեան պարգեւքն, որպէս ինչ վայելիցեն բազմամբոխն բազմութեան. զայս ինչ պատուիրէր եւ սոյն էր կրթութիւն զօրացն։

Խորանս եւս կազմէր, որչափ զօրագլուխքն էին, մեծամեծս որպէս զի բաւական լինիցին իւրաքանչիւր գնդացն. իսկ գունդն հարեւր այր էր. եւ հարկանէին վրանս ըստ գնդաց գնդաց,

եւ առ միմեանս զխորանսն հարկանելով համարէր ի միտս թէ այն օգուտ առ յապա պատերազմին լինիցի, զի յորժամ տեսանիցեն զերեսաս նոյնպէս զմի օրինակ կերակրեալ, եւ չգուցեն ի միջի նուազութեան բարուրք առ ի լքանելոյ ոմանց եւ ի վայր քան զմիմեանս լինելոյ ի թշնամիս անդր. եւ այնմ եւս շահ համարէր ճանաչել զմիմեանս յորժամ առ իրեարս խորան հարեալ նստիցին։ Զի այսպէս կարծէր թէ ճանաչելովն ամենեցուն առաւել իմն լինիցի ամաչել. զի որ անծանօթքն իցեն, դիւրին իմն զչարիսն գործիցեն իբրեւ զայնոսիկ որ ի խաւարի կայցեն։

Եւ եւ խորանակից բնակութեամբն մեծ իմն օգուտ համարէր լինել առ ի կարգել ճշդիւ զգունդսն. քանզի ունէին ընդ իւրեամբք զօրավարքն զգունդսն կազմեալս վառեալս ի զարդ, որպէս յորժամ մի մի յուղի անկեալ երթայցէ գունդն, եւ զօրագլուխքն զվաշտսն ունէին, ըստ նմին օրինակի եւ տասնապետքն զտասունսն եւ հընգապետքն զհինգսն։ Իսկ զգնդացն համար ստոյգ գիտել, յոյժ իսկ լաւ թուէր նմա առ չամբոխելոյ եւ խռովելոյ, եւ եթէ ամբոխիցի առ վաղվաղակի յարդարելոյ. զոր օրինակ քար եւ փայտ յորժամ ընդ միմեանս հասանիցէ պատշաճեցուցանել, թէպէտ

եւ ասա անդ վայրավատին կայցէ, դիւ-
րին իցէ առ իրեարս մատուցանել, ե-
թէ ունիցին ծանօթս, որպէս զի յայտ
առնիցի քաջ թէ յորոց վայրաց իւրա-
քանչիւր ի նոցանէ իցեն։ Եւ այնմ
իմն եւս օգուտ համարէր զի ի միասին
միանգամայն սնեալք զմիմեանս չկա-
միցին թողուլ, քանզի եւ զգաղանսն
տեսանէր զայնոսիկ որ առ միմեանս
պառակ պառակ արածիցին, դժկամակ
լինիցին եթէ քակեսցէ ոք զնոսա յի-
ւրերաց։

Եւ զայնմանէ եւս փոյթ առնէր Կիւ-
րոս, զի մի երբեք առանց քրտանց ի
ճաշ կամ յընթրիս մատչիցին. զի կամ
յորս հանեալ տայր նոցա ընդ քիրտն
մտանել, կամ այնպիսի խաղուց հնա-
րագիւտ լինէր ոք քիրտն բերիցեն.
կամ եթէ գործոց ինչ պէտք լինէին,
այնպէս առաջնորդէր գործոյն զի մի
առանց քրտանց ի բաց գնայցեն. զի
եւ զսոյն լաւ համարէր առ յօժարու-
թեամբ ուտել եւ ողջ լինել եւ առ
կարօղ լինել ի գործ ինչ վաստակել։
Եւ զգօնագոյնս առ միմեանս լինելոյ
հնարս զաշխատութիւնսն համարէր.
քանզի եւ երիւարք որ ընդ միմեանս
վաստակիցին, հանդարտագոյնք լինի-
ցին։ Եւ ի թշնամիս անդր յորդորա-
գոյնք լինիցին ոք գիտիցեն զանձանց
թէ քաջք են եւ կրթեալք։

Իւր եւս վրան կազմէր Կիւրոս, առ ի բաւական լինելոյ տանել զորս յընթրիս կոչիցէ։ Կոչէր զբազումս ի զօրագլխացն զոր ինքն ի դէպ համարէր. էր զի եւ ի հազարապետաց եւ ի տասնապետաց, զոմանս եւ ի հնգապետաց կոչէր. էր երբեք զի եւ ի զօրաց անտի, էր զի եւ զՀինգան ողջոյն եւ զտասունսն բովանդակ, եւ զբնաւ վաշտն եւ զողջ իսկ գունդն։ Կոչէր եւ մեծաշուք մեծապատիւ մեծարէր յորժամ զոմանս տեսանէր այնպիսի ինչ գործեալ, զի զամենեսին կամէր թէ գործէին։ Եւ որ ինչ առաջի յօրինէր հանապազ հասարակաց էր նմա եւ հրաւիրելոց յընթրիս անդր։

Իսկ զսպասաւորս շուրջ զզօրօքն բաժանակիցս միշտ ամենայնի առնէր. զի ոչ խուն ինչ պատուոյ արժանի զսպասաւորս զօրականացն հաշուէր քան զքարոզսն եւ զհրեշտակս։ Զի պարտ եւ պատշաճ համարէր լինել նոցա հաւատարիմս եւ խելամուտս զինուորութեան եւ հանճարեղս եւ սաստիկս եւ երագունս եւ անդանդաղս եւ աներկեւղս։ Եւ առ սոյնս գիտէր Կիւրոս թէ որ ինչ աղնուագոյնքն ունիցին պարտէ եւ սպասաւորացն ունել եւ ընդ նոյն կրթել, զի մի իցէ թէ չառնուցուն գործ ինչ յանձին, այլ զամենայն անձանց վայելուչ համարիցին որ ինչ իշխանն հրաման տայցէ։

ԳԼՈՒԽ Բ

ՅԱՆԳ իսկ փոյթ առնէր Կիւրոս յորժամ առ միմեանս խորան հարեալ նստէին, զի ուրախութեան ճառք ի մէջ անկանիցին որ եւ ի լաւութիւն յորդորիցեն։ Արդ հասանէր երբեմն յայսպիսի ինչ բանս։ Միթէ, ասէ, ով արք, ապաժամանք ինչ ընկերքն քան զմեզ յայն սակս թուիցին, զի ոչ զնոյն օրինակ հանգոյն մեզ խրատեալ իցեն, կամ չիցէ ինչ ի միջի խրատրոց ի մէնջ, ոչ յորժամ ի միասին իցեմք եւ ոչ յորժամ ընդ թշնամիս հասանիցէ մարտընչել։

Վ ըշտասպէս պատասխանի տուեալ ասէ. Այլ թէ որպիսի՛ք դք ի թշնամիան լինիցին, ես չեւ ես կացի ի վերայ, զի եւ ի հաղորդութեանն ոմանք ի նոցանէ դժուարինք երեւէին։ Արէկ, ասէ, առաքեաց Կիաքսարէս նուէրս առ գունդ գունդ, եւ եղեն իւրաքանչիւր ումեք ի մէնջ երեք երեք բաժինք կամ թէ աւելի եւս, եւ զայն շրջեցուցանէին. յինէն սկիզբն արար խոհակերն զառաջինն շրջեցուցանել. իսկ յորժամ առ երկրորդն մատեաւ շրջեցուցանել, հրաման ետու ի վերջնոյն առնել սկիզբն եւ ներքուստ ի վեր շրջեցուցանել, մի ոմն ի զօրականաց անտի բազմելոց ի մի-

ջին տեղւոջն, զբողոք բարձեալ ասէ, Զատ ամենեւին չիք իսկ հաւասարութիւն եթէ ի մէնջ որ ի միջիս կամք չառնիցէ զք սկիզբն։

Եւ իմ լուեալ տրտմեցայ եթէ նը-ւազեալ ինչ իւիք իցեն, վաղվաղակի կոչեցի զնա առ իս, եւ նա փութով ունկնդիր եղեւ։ Իսկ իբրեւ զոր շրջե-ցուցանէին եհաս առ մեզ, մանունքն մնացեալ էին. նա յայնմ վայրի ամե-նեւին իսկ տրտմեալ տխրեալ երեւէր եւ ասէր ցիւր անձն. Ոհ ոհ զի այժմ կոչեցայ գալ այսր. եւ ես ասէի թէ մի հոգար, զի վաղվաղակի ի մէնջ սկիզբն լինիցի եւ դու նախ զմեծն առնուցուս։ Ապա զերրորդն շրջեցուցանէին, եւ այն եւեթ մնացեալ էր. առ նա յետ իմ, եւ յորժամ առնոյր եւ երրորդն, եւ թը-ւեցաւ նմա թէ մեծ եւս քան զիւրն առ, ընկէց զոր առն զի այլ առցէ։

Իսկ խոհակերին կարծեալ, թէ չիցէ ինչ նմա պիտոյ խորտիկ, գնայր եւ շրջեցուցանէր մինչ չեւ էր նորա առեալ այլ։ Յայնմ վայրի այնպէս աղէտին չժուժեաց զի հանաւ ի նմանէ խորտիկն զոր առ, եւ որ ինչ նշխար կայր ի կե-րակրոյն, զայն իսքանչանալոյ անտի եւ ի ցասնլոյ ընդ բախտն զչարեալ տա-պալեաց։ Իսկ զօրագլուխն որ մօտ առ մեզ կայր, իբրեւ ետես ծափ գծափի հարկանէր եւ ուրախ լինէր ծաղու.

բայց ես, ասէ, հազալ պատճառէի. քանզի եւ ես չկարէի կարճել զծաղրն։ Ցուցանեմ քեզ, Կիւրոս, թէ մի ոք յընկերաց անտի այնպիսի ոք է։

Ընդ այն որպէս ի դէպ էր ծիծաղեցան. եւ այլ ոմն ի զօրավարաց անտի խօսել սկսաւ եւ ասէ. Այս այր ով Կիւրոս որպէս թուի իսկ խատի ումեք դիպեցաւ։ Իսկ ես, յորժամ ուսուցեալ զկարգս ճակատուցն առաքեցեր զմեզ, եւ պատուէր ետուր իւրաքանչիւր ումեք իւրում գնդին զոր ինչ միանգամ առ ի քէն ուսաք, ուսուցանել. այսպէս եւ ես, որպէս եւ այլքն առնէին, երթեալ ուսուցանէի գունդ մի. եւ կացուցեալ զզօրագլուխն յառաջ եւ ըստ նմանէ կարգէի այր մի երիտասարդ եւ զայլսն եւս մի ըստ միոջէ ըստ իւրաքանչիւր պատշաճի. ապա կացեալ հանդէպ դէտակն ունէի գնդին, եւ յորժամ այսպէս թուեցաւ ինձ թէ ժամ իսկ է, հրաման ետու խաղալ գնալ։

Իսկ այրն երիտասարդ քան զզօրագլուխն յառաջեալ ընթացաւ. եւ իմ տեսեալ ասէի, Ով այր դու զի՞նչ գործեսդ. եւ նա ասէ. Երթամ որպէս դուն հրամայեցեր. եւ ես ասեմ, թէ Ես ոչ քեզ միայն հրաման ետու գնալ այլ ամենեցուն իսկ։ Զորա զայս լուեալ դարձեալ առ գունդն ասէր.

Ազատեցէք, ասէ, զի պատուիրէ ամենեցուն խաղալ գնալ, եւ արքն ամենեքին անցեալ զզօրագլխաւն հասին առ իս։ Իբրեւ դարձուցանէր զնոսա զօրագլուխն, դժկամակ լինէին զայրանային եւ ասէին. թէ ո՞ւմ պարտ իցէ հնազանդել. զի մին արդ հրաման տայ գնալ եւ մեւսն՝ ոչ։ Եւ ես ժուժեցի այնմ ամենայնի հանդարտութեամբ, միւսանգամ զետեղեալ ասէի թէ մի ոք յայնցանէ որ յետոյ կայցեն, խաղայցէ ի տեղւոջէ, մինչ չեւ առաջնոյն խաղացեալ. եւ այնմ եւեթ միտ եդեալ նայիցին զի զառաջնոյն զկնի երթայցեն։

Եւ յորժամ կամեցեալ ուրուք ի Պարսս երթալ, եկն առ իս, եւ հրամայեաց տալ զթուղթն զոր գրեցի ի տուն իմ. եւ ես, քանզի զօրագլուխն գիտէր թէ ուր կայր հրովարտակն, հրաման ետու նմա երթալ բերել զթուղթն. մինչ դեռ նա երթայր, զհետ խաղայր զօրագլխին երիտասարդն զրահապատ հանդերձ սուսերաւն եւ իբրեւ ետես զնա այլ եւս գունդն ամենայն, խուռն դիմէին, եւ գային արքն բերէին զթուղթն։ Այսպէս, ասէ, իմ գունդն զամենայն ինչ որ ի քեն պատուիրեցաւ, հաստատուն ունին։

Ամենեքին որպէս ի դէպ իսկ էր ընդ ոպասաւորութիւն թղթոյն ծիծաղե-

ցան։ Իսկ Կիւրոս ասէր. Ո՜հ, որպիսի տրս բարեկամս ունիմք, եւ այնչափ հպատակ միտս ունին, մինչ զի սակաւիկ ինչ ռոճկաւ բաղում բարեկամս ի նոցանէ մարթիցի ստանալ։ Եւ այնչափ հլուք ոմանք են, զի մինչ չեւ գիտացեալ զհրամանն, հնազանդին։ Եւ չգիտեմ թէ որպիսի՛ զօրականս պարտ իցէ խնդրել առաւել քան զդոսա։

Ի միասին ծիծաղեալ ապա յարգէր զզօրականսն։ Դէպ եղեւ զի էր ոմն ի վրանի անդ ի զօրագլխաց անտի Ա.գ-զայիտադաս անուն, այր խիստ բարոյ-իւք. սա այսպիսի ինչ խօսէր. Թէ կարծիցե՞ս ասէ, ով Կիւրէ եթէ դդքա ճշմարիտ ասեն քեզ զայդ։ Ասէ Կիւրոս. Իսկ զի՞նչ կամիցին ստելովն. զինչ այլ ինչ ասէ, եթէ ոչ ծաղր կամին գործել, վասն որոյ եւ ասեն իսկ զայս ամենայն եւ ամբարտաւանեն։

Իսկ Կիւրոս Դովէա, ասէ, մի կոչեր ամբարտաւանս զդոսա, զի ինձ այսպէս թուի թէ ամբարտաւանն անուն ի վերայ այնոցիկ է որ կերպարանիցին ընչաւետագոյնս լինել եւ չիցեն, եւ որ քաջքն իցեն եւ խոստանայցեն առնել ինչ որում չիցեն բաւական. եւ այն յորժամ յայտ գայցէ եթէ առնլոյ վասն եւ շահելոյ առնիցեն։ Բայց որ զծաղրդ հնարին, ոչ յանձանց ինչ շահս եւ

ոչ ի վնաս լսելեացն կամ վասն վնասակարութեան իրիք. զիա՞րդ ոչ առաքինիս մանաւանդ եւ ուրախութեան պատճառս յիրաւի անուանիցին քան եթէ ամբարտաւանս։ Կիւրոս այսպէս զերաւունս ցուցանէր զայնոցիկ որ ետուն ծիծաղել։

Դարձեալ զօրագլուխն որ զուրախութեան պատմութիւն գնդին ճառեաց, ասէր Ովմ Ադղայիտադա եթէ մեր ջանացեալ էր լացուցանել զքեզ, կարի իսկ եպերէիր զմեզ, զոր օրինակ ոմանք եւ նուագօք եւ բանիւք վիպագործքն ճառս յարդարեն եւ յարտասուս փութան ածել. ուր եւ այժմ իսկ ինքնին գիտես եթէ կամիմք ուրախ առնել զքեզ եւ վնասել ոչ, սակայն եւ այնպէս անարդես շատ եւ անպատուես։

Ասէ Ադղայիտադաս, թէ Յիրաւի իսկ. քանզի բազում անգամ թուի ինձ թէ քան զայն որ հնարս հնարիցի նստել լալ բարեկամացն, յոռութեան գործ գործիցէ որ զծաղրն հնարիցի նոցա։ Դու գտանես եթէ զճշմարիտն խօսիմ եթէ ուղիղ ածիցես զմտաւ։ Լալով եւ աշխարանօք հարք որդւոց զզգաստութեան հրահանգսն հնարին, եւ վարդապետք, մանկտւոյ ընտիր ընտիր ուսումն, եւ օրէնք ստիպեն նստել եւ լալ, եւ յորդորեն յիրաւունսն։ Զի զայնցանէ որ զծաղրն մենքենայի-

ցեն կարիցե՞ս ինչ ասել թէ մարմնոցն օգուտ իցեն կամ զոգիսն խնամակալս գործիցեն կամ առաքինիս։

Ասէ այսպէս Պ. ըշտասպէս. Ով Աղղայիտադա, եթէ անսայցես դու ինձ, խրախուսեաց ի թշնամիս անդր, արա զայդ զոր մեծ իսկ համարիս, եւ գուն ի վերայ դնիջիր զի թշնամիքն նստեալ լայցեն. եւ բնաւ մեզ բարեկամաց, զանարդ ծաղրդ շնորհեսցես. քանզի գիտեմ թէ բազում ծաղր մթերեալ կայ ի քեզ. ոչ դու ի կիր արկեալ ծախես եւ ոչ բարեկամաց եւ ոչ օտարացն կամաւ տաս ծիծաղել. որպէս զի ոչ մի ինչ բարուրք գոն առ ի չշնորհելոյ քեզ մեզ ծաղր։ Աղղայիտադաս ասէ. Եւ դու դարձեալ ով Պ. ըշտասպէ ջանաս ի ծաղր ածել զիս։ Եւ զօրագլուխն ասէ. Այն ամենեւին իսկ անմտի գործ է. զի կարծեմ թէ հուր ումեք ի քէն դիւրին է հանել քան եթէ ծաղր։

Ընդ այն ամենեքին զքրքիջ բարձին զի գիտէին զբարսն նորա. եւ ինքն իսկ գլխովին Աղղայիտադաս ժպտէր։ Կիւրոս իբրեւ ետես զնա զուարճացեալ. Ապիրատութիւն գործես ասէ ով զօրագլուխ դու զի զայրդ առաքինի զեղծուցանես զի հաւանեցուցանեսդ ծիծաղել. եւ այն զի այնչափ ծաղու թշնամի իցէ։ Այս ցայս վայր ասացաւ։

Ապա խօսէր այսպէս Քրիւսանտաս. Բայց ես, ասէ, ով Կիւրոս եւ ամենեքին որ աստ կայք, զմտաւ ածեմ թէ եւ քաջք եւ ապաժամանք ելին ընդ մեզ. եւ եթէ լաւութիւն ինչ գործիցի, պահանջիցեն ամենեքին դոքա հասարակ բաժինս առնուլ։ Բայց ես յիրս մարդկօրէնս ոչ ինչ անհարթութիւն քան զայն չար համարիմ, չարի եւ բարւոյ զոյգ ի պատիւս վայելել։ Ապա այն Կիւրոս ասէ, Մեզ լաւ այսպէս է, արք, խորհուրդ ի ներքս արկանել ի զոր անդր, խորհել թէ որ հաճոյ թուիցի, եթէ զինչ բարութիւն յաշխատութեանցն դիքն տայցեն, այնմ զամենեսեան հասարակորդս առնել, եթէ նայեցեալ ընդ գործս արդեանց իւրաքանչիւր ուրուք, ըստ գործոցն նոյնպէս զպատիւ մեծարանացն կարգել դնել առաջի։

Ասէ Քրիւսանտաս. Ո՞չ ինչ պարտ իցէ արկանել ի մէջ վասն նորին բանս եւ չասել թէ այսպէս ես առնելոց. միթէ ո՞չ դու եւ զմրցութեան հրահանգսն, ասէ, կանխաւ ասացեր եւ զպարգեւսն։ Ասէ Կիւրոս. Այլ չէ այս այնմ նման. զի զոր ինչ ի պատերազմի ստանայցեն, թուի ինձ թէ առ հասարակ անձանց հաշուիցին. սակայն զիշխանութիւն զօրավարութեանն եւ յաշխարհէ իսկ ինձ համարին. որպէս զի

եթէ ոստիկանս կարգիցեմ չկարծեն ինչ եթէ զրկեմ։

Ասէ Պրիւանտաս. Եթէ կարծիցես թէ ի մի վայր եկեալ բազմութեանն, վճիռ տայցեն թէ մի իւրաքանչիւր հաւասար առնուցու, այլ ազնուագոյնքն եւ պատուովք եւ պարգեւօք առաւել լինիցին։ Կիւրոս ասէ. Ինձ թուի թէ յորժամ դուք ջատագով մնանիցէք, եւ զի ամօթ եւս իցէ ընդդէմ դառնալ թէ մի որ բազումն գործիցէ եւ հասարակաց շահ առնիցէ, նա եւ մեծամեծաց արժանի լինիցի։ Կարծեմ, ասէ, եւ չարացն այն պատշաճ թուիցի, առաւել լինել լաւացն։

Բայց Կիւրոս եւ վասն նոցին իսկ պատուակցացն կամէր ընդ վճիռն. զի եւ զնոսին ազնուագոյնս լինել կարծէր, եթէ տեսանիցեն զի եւ ինքեանք յարդեանցն դատիցին եւ ապա պատուոց հասանիցեն. նմա դիպող թուէր յայնժամ իսկ արկանել վասն նորին վճիռ, յորժամ եւ հանդիսապատիւքն իսկ տաղտկայինընդ ամբոխին հաւասարութիւնն. եւ այնպէս ամենեցուն որ ի վրանի անդ էին հաճոյ թուեցաւ, բանս վասն նորին ի ներքս արկանել. եւ ասէին թէ որ համարիցի ոք այր լինել, պարտ եւ պատշաճ է այնմ մնանել ջատագով։

Մի ոմն ի զօրագլխացն ժպտեցաւ եւ ասէ. Ես, ասէ, գիտեմ զայր մի ի խառնիճաղանճ զօրուէ այտի, որ հաւանեցուցանէ, որպէս թէ մի ընդ վայր ինչ այնպէս հաւասարութիւն լինիցի։ Ուստի այլ ոք ցնա թէ զումբ ասիցէ. Նա եւ պատասխանի թէ այրն մեր վրանակից է, որ յամենայնի իսկ եւ ի բնաւի խնդրէ առաւել ունել։ Այլ ոմն գարձեալ ասէր ցնա. Մի՛թէ եւ առաւել վաստակիցի։ Ոչ, ասէ. յայդմ եւեթ սուտ գտայ, զի ի վաստակս եւ յայլ եւս ինչ նոյնպիսիս, ամենեւին իսկ հանդարտագոյնս ցանգ թողու այնմ որ կամիցի, աւելի ինչ ունել։

Ասէ Կիւրոս. Ու ես գիտեմ ով արք զայնպիսի մարդիկ, որպիսի ինչ այժմ սա պատմէ, եթէ պարտ իցէ գործօն եւ հնազանդ զօրս ունել, մերժել զնոսա ի զօրաց անտի։ Զի թուի ինձ թէ մեծ մասն զօրացն, զհետ գան յո՛ոք ածիցէ զնոսա. լաւքն եւ առաքինիք ձեռն ի գործ արկանեն ի լաւութիւնսն տանել, իսկ չարքն եւ չարաչարք ի յոռիսն. նա աւանիկ բազում անգամ բազում միամտեալս անզգամքն գումարիցեն քան զժրագլուխսն։ Զանգի չարութիւն ընդ մօտաւոր իսկ ցանկութիւնսն յուզի անկեալ, զնոսին իսկ զցանկութիւնսն ունիցի հաւանեցուցիչս հաճեալ միա-

մտել ընդ նմա։ Իսկ առաքինութիւն քանզի ընդ ուղղորդն տանի, բնաւ իսկ չէ ձեռնհաս անդէն խառն ի խուռն ձգել կուտել։ Այլապէս եւս, եթէ ի-ցեն եւ ոմանք որ ի գրգռութիւն կոչի-ցեն, եւ այնուհետեւ եթէ ոմանք եւ անձնդիւրութեամբ եւ ծուլութեամբ զգածեալ իցեն, ես այսպէս համա-րիմ զնոցանէ եթէ պիծակաց պէս, ծախուքն եւեթ ինաս զովողացն առ-նիցեն։ Եւ որք չարաչար կցորդք վաս-տակոց իցեն եւ առ ագահել սաստիկք եւ անամօթք, նոքին եւ ի յոռու-թիւնան առաջնորդք լինիցին։ Զան-զի մարթեն բազում անգամ զչարու-թիւնն առաւելեալ ցուցանել։ Որպէս զի ամենեւին իսկ մերժելի են այնպի-սիքն ի մէնջ։

Բայց զայն ինչ ածիցէք զմտաւ թէ զգունդան զիարդ լնուցուք քաղաքա-ցեօք. այլ զոր օրինակ յորժամ երի-ւարս խնդրիցէք, զի ազնիւ երիւարքն իցեն, խնդրէք, եւ ոչ եթէ զի հայ-րենիք իցեն. նոյնպէս եւ արս յամե-նեցունց որք ձեզ հաճոյ թուիցին զօ-րութեամբ եւ պնդութեամբ եւ զարդ-ու, զնոսա առէք. նա եւ այս եւս վկայ է ինձ թէ այն բարւոք է, զի եւ ոչ կառք ուրեք երագ սուրայցեն յոր-ժամ յամրագնաց երիւարքն իցեն եւ ոչ ուղղորդ գնայցեն եթէ թերավարժք

լուծք ջորւոցն իցեն, եւ ոչ տան մարթ է շէն լինել որ չար ծառայիւքն վաբիցի. լաւ իցէ ծառայիւք կարօտ լինել քան յանիրաւացն աղմուկ կրել։ Ահա եւ զայս ի միտ առէք, ասէ, արք բարեկամք, զի ոչ այն եւեթ օգուտ գործիցի յորժամ չարքն ի միջոյ բառնայցին, զի չարք մերժեցան. այլ եւ ի մնացելոցն որք դեռ չարեօք լի իցեն, միւսանգամ ի չարեացն սրբիցին. եւ յորժամ զչարսն լաւքն տեսանիցեն արհամարհեալս եւ անարգեալս, յոյժ իսկ յօժարութեամբ զքաջութենէ բուռն հարկանիցեն։

Ահա զայս ասաց, եւ բարեկամացն ամենեցուն նոյն հաճոյ թուեցաւ եւ ըստ նմին օրինակի առնէին։ Ապա դարձեալ խաղալ սկսաւ Կիւրոս։ Դ. տես զի ոմն ի զօրագլխացն ածեալ էր բազմականակից եւ կոչնական զայր մի թաւ եւ տգեղ երեսօք, կարդաց զզօրագլուխն յականէ եւ ասէ այսպէս. Ով Սամբաւղա, ասէ, եւ դու ըստ յունական օրինակին, վասն զի գեղեցիկ է, շրջեցուցանես զպատանեակդ որ առ քեզ բազմեալ կայ։ Սամբաւղաս ասէ. Ուրախ լինիմ յորժամ ընդ նմա իցեմ եւ տեսանիցեմ զնա. իբրեւ զայն լուան խորանակիցքն խոնարհեալ մանր նայէին. եւ տեսեալ զառնն տեսին առաւել ժանդ, ամենեքին քրքջէին։

Մի ոմն անդուստ ասէ. Ով Սամ բաւղա զի՞նչ գործէ այրդ եւ զո՞ր ոպաս հարկանէ նա քեզ. եւ նա ասէ. Պատմեցից ձեզ ով արք։ Քանիցս անգամ թէ կոչեցի զնա եթէ գիշերի եթէ զցերեկ, ոչ երբեք ուրեք զանպարապութիւնն բարուրս արար, եւ ոչ հեղգացաւ հնազանդել, այլ դիմեալ գայր միշտ, եւ քանիցս անգամ իրս ինչ կամ գործս հրամայեցի դմա, ոչ ուրեք տեսի զնա թէ առանց քրտանց առնիցէ։ Արար եւ տասունս ամենեւին նոյնպիսիս ոչ բանիւ այլ արդեամբք յայտ արարեալ թէ ո՞րպէս պարտ իցէ լինել։ Ասէ ոմն. Ենթէ այդպէս իցէ ո՞չ համբուրես դու զնա որպէս եւ զազգակիցսն։ Ա՛ռ այն տգեղն ասէ. Ոչ, ասէ, աշխատասէր. քանզի եթէ համբուրել զիս կամիցի, շատ է նմա այն փոխանակ ընդ ամենայն մրցութեանցն հրահանգաց։

ԳԼՈՒԽ Գ.

Ասպէս մերթ ծաղու մերթ կարեւոր բանք եւ գործք ի վրանի անդ լինէին։ Եւ ապա զերրորդ նուէրսն արարեալ եւ յաղօթս կացեալ դիցն վասն բարեաց ինչ աւճան գտանելոյ, եւ մեկնեցան ի միմեանց երթալ յիւրաքանչիւր անկողինս։ Ի վաղիւ անդր Կիւրոս

զզօրսն ամենայն և մի վայր գումարէր, եւ սկիզբն առնէր խօսել այսպէս։

Աւրք բարեկամք պատերազմն մօտ կայ, քանզի մերձենան թշնամիքն, եւ պարգեւք յաղթութեան, եթէ մեք յաղթիցեմք, յայտ է թէ եւ թշնամիքն մեր իցեն եւ ամենայն բարութիւնք թշնամեացն։ Եւ եթէ մեք յաղթիցիմք, քանզի եւ զայն միշտ պարտ եւ պատշաճ է ասել, բնաւ իսկ արարք պարտելոցն որոց յաղթիցեն ցանգ յաղթութեան վարձք լինիցին։ Պարտ է ձեզ ի միտ առնուլ թէ յորժամ մարդիկն, որք կցորդք պատերազմին իցեն, զմտաւ ածիցեն իւրաքանչիւր յանձինս իւրեանց զի եթէ ոչ ինքն իսկ յօժարիցէ, ոչ մի ինչ ի պատշաճիցն լինիցի, վաղվաղակի բաղում ինչ եւ գեղեցիկ գործք գործիցին, եւ ոչ մի ինչ անգործ մնայցէ յայնմ ամենայնէ զոր պարտ իցէ վճարել։ Իսկ յորժամ իւրաքանչիւր ոք զմտաւ ածիցէ թէ է այլ ոք որ վճարիցէ եւ կռուիցի, թէպէտ եւ ինքն յուղղութիւն եւ ի ծուղութիւն հարեալ հատանիցի. այնպիսեացն, ասէ, ամենեւին իսկ համօրէն դժընդակքն ի վերայ հատանիցեն։ Եւ դիք իսկ զնոյն օրինակ առնիցեն ընդ նոսա, զի որոց չկամինն անձանց հրաման տալ ի լաւութիւնս վաստակել, զայլս հրամանատուս կա-

ցուցանեն նոցա։ Եւ արդ, ասէ, յաբուցեալ խօսեսցի ոք ասա վասն նորին իսկ այնորիկ, թէ զիարդ յառաքինութիւնս առաւելագոյն լինիցի մեզ թեւակոխել, արդեւք թէ որ կամիցի ոք վաստակել եւ վշտանալ շատ, բազում եւ պատուոյ հասանիցէ, եթէ յորժամ գիտիցեմքն թէ չիցէ ինչ խտիր յառաքինութիւնսն հատանել։ Վասնզի ամենեքին նոյնգունակ ի նոյն կշիռ պատիւ հասանիցեմք։

Յայնմ վայրի յոտն եկաց Բրիսանտաս, մի ոմն ի հանգիտապատուաց անտի, ոչ յաղթ ոք էր այրն եւ ոչ ուժգին տեսանելով, բայց ընտիր իմաստութեամբ, եւ խօսէր այսպէս ըստ սմին բանից։ Թուի ինձ ով Կիւրոս, թէ ոչ վասն զի զմտաւ ածեր, թէ պարտ է չարացն եւ լաւացն զկշիռ հասարակ ունել, յայն սակս ինչ արկեր զճառսդ, այլ կամիս իմն զչափ առնուլ զհանդէս տեսանել, եթէ իցէ ոք այր, որ կամիցի յայտ զանձնէ առնել թէ խորհիցի ոչ մի գործ լաւութեան գործել, եւ զոր ինչ այլքն քաջութեամբ վճարիցեն, նոցին հասարակորդ լինել եւ զնոյն բաժինս առնուլ։ Բայց ես, ասէ, ոտիւք չեմ ինչ թեթեւագնաց եւ ոչ ձեռօք հուժկու. եւ գիտեմ թէ նոքիմքք զոր ես իմով մարմնով գործիցեմ, ոչ առաջին ընտրիցիմ եւ

ոչ երկրորդ, թուի ինձ թէ եւ ոչ ի հա-
զարն իսկ, թերեւս եւ ի բեւրն
ոչ։ Եւ այնմ եւս խելամուտ հաս-
տատութեամբ եմ, զի թէպէտ եւ
հարուստքն իրս մեծամեծս վճարիցեն
զօրութեամբ, կայցէ եւ ինձ մասն մի
ինչ ի բարութենէ անտի որչափ ար-
ժանն իցէ։ Իսկ եթէ չարքն ոչ ինչ
գործ գործիցեն, եւ առաքինիքն եւ
հարուստքն անյօժարք լինիցին կաս-
կածիմ, ասէ, մի գուցէ մանաւանդ այ-
լոց ինչ իրիք եւ ոչ եթէ արարոց բաժ-
նի կցորդ աւելի քան զայն զոր կամիմն,
լինիցիմ։

Այս ինչ խօսեցաւ Քրիւսանտաս,
կանգնեցաւ կաց յետ նորա Փերաւղաս
պարսիկ ի խառնաղանճ ռամկէն, յաշ-
խարհի անդ ընտելակից Կիւրոսի, եւ
առաքինի այր, մարմնովն ոչինչ գծուծ,
եւ մտօքն չէր նման անտոհմ մարդոյ,
եւ խօսեցաւ այսպէս։

Եւ այսպէս հաշուիմ Կիւրոս եւ ամե-
նայն Պարսիկք՝ որ ասդ կայք, թէ
մեք ամենեքին հասարակ դիմելոց ի-
ցեմք վասն առաքինութեան պատերազ-
մել, զի տեսանեմ զամենեսին զմեզ
միով դարմանով զմարմինս կրթեալ,
եւ նմին հաղորդութեան զամենեսին
արժանի լիեալ, եւ նոյն բարութիւնք
մեր ամենեցուն առաջի կան։ Քանզի
հնազանդել իշխանացն հասարակաց

ամենեցուն է, եւ որ առանց բարբանաց վճարիցէ տեսանեմ զայնպիսին ի պատիւս հասեալ առ ի Կիւրոսէ. իսկ սաստիկ առ թշնամիսն լինել՝ ոչ եթէ միումն ի դէպ իցէ, եւ միւսումն ոչ, այլ ամենեցուն նոյն պատշաճական է։

Եւ այժմիկ, ասէ, մեզ պատերազմ ի դիմի հարկանի. եթէ տեսանիցեմ զամենայն մարդիկ ի բնէ իսկ խելամուտս որպէս եւ այլ եւս անասունք պատերազմի իրիք իւրաքանչիւր հմուտ են ոչ յայլմէ ինչ ումեքէ ուսեալ, այլ յախտարակաց, որպէս զուարակի եղջերօքն խեթիկել, եւ ձիոյն ամբակաւ, եւ շան երախօքն եւ վարազի ժանեօք։ Եւ գիտեն պահել զանձինս նոյնպիսիքն յորոց պարտն իցէ առաւել պահել. եւ այն զի ոչ ի վարդապետի ուրուք հրահանգս յաճախեալ իցեն։

Եւ ես ի մանկութենէ իսկ եւ իսկ գիտէի ի դիմի հարկանել այնորիկ, յորմէ թուէր ինձ հարկանել. եւ եթէ այլ ինչ ոչ ինչ ունէի, զձեռս եւեթ հանդէպ ունէի խափանել որչափ ինչ կարող էի, զայն որ հարկանիցէ։ Այսպէս առնէի իբր ոչ եթէ ուսեալ, այլ եւ վասն նորին իսկ գան ըմպէի թէ մի ի դիմի հարկանիցիմ։ Սուսեր պողովատիկ յորժամ համբրէն մանուկ էի, յափշտակէի ուր եւ տեսանէի, եւ ոչ յայլմէ ումեքէ զայն թէ զիարդ պարտ

իցէ զսուսերն ունել՝ ուսեալ, եթէ ոչ
ի բնութենէ, որպէս եւ ասեմ։ Արդ
գնոյն գործէի արգելեալ եւ ոչ եթէ
ուսեալ յումեքէ· զոր օրինակ եւ այլ
ինչ գոյ զոր յետ արգելլոյ հօր բնու-
թեամբ իսկ ի հարկէն գործէի։ Եւ
հարկանէի սուսերաւ զամենայն զոր ինչ
կարէի թագուցանել։ Այլ ոչ եթէ
բնութեամբ եւեթ էր զոր օրինակ գնալն
եւ ընթանալ, այլ եւ հեշտականու-
թիւն եւանոյն թուէր։

Եւ արդ որովհետեւ, ասէ, կայ մնայ
այս պատերազմ, յորում յօժարու-
թեան մանաւանդ եւ ոչ եթէ արուեստի
գործէ, զի՞արդ չիցէ մեզ յօժա-
րութեամբ ընդ պատուակիցն մրցել
ուր եւ առաքինութեանն պարգեւք
հասարակ առաջի կան. բայց ոչ նոյն-
պէս արկեալ կամք ի վիշտս, այլ սո-
քա զմեծարանաց կեանս կեան, որ
քան զամենայն կեանս հեշտականա-
գոյն իցէ, որ միայն կեանքն իցէ, իսկ
մեք զաշխատութեանն եւ զանարգանաց
եւ որպէս կարծեմ դժընդակագոյն քան
զամենայն կեանս է։ Մանաւանդ, ով
արք, սոյն իսկ յորդորագոյնս ի կռիւ
դրդռէ զիս ընդ նոսա, զի դատաւոր ի-
րաւունքիր Կիւրոս է, որ ոչ խանտաւո-
րութեամբ դատի։ Այլ դիցն իսկ եր-
դմամբ ասեմ թէ թուի ինձ եթէ զորս
ի լաւութեան տեսանիցէ Կիւրոս ոչ

ինչ ընդ հատ յիւրմէ անձնէ սիրիցէ։ Օյ տեսանեմք զնա թէ զոր ինչ ունիցի, տայ նոցա յօժարութեամբ առաւել քան եթէ ինքն ունի։

Գիտեմ, ասէ, զի մեծամտեն իմն դոքա թէ կրթեալ են ի քաղց եւ ի ծարաւ եւ ցրտոյ տոկալ, եւ գիտեն իսկ ոչ թէ զնոյնս մեք ի լաւագոյն վարդապետէ ուսեալ եմք եւ ոչ նոքա։ Բանզի այնր ամենայնի ազնուագոյն վարդապետ քան զՀարկն չիք որ մեզ զնոյնս ուսոյց ճշդրիտ։ Կրթեալ են նոքա զէն կրել, որոց ամենայն մարդիկ հնարագիւտ լինին զի դիւրինք առ կրել լինիցին։ Իսկ մեք, ասէ, ընդ մեծամեծ բեռամբք մտեալ ստիպեաք եւ գնալ եւ արշաւել, որպէս զի այժմ թուի ինձ թէ զզէնսն կրել թեւոց քաջ նման է եւ ոչ բեռանց։

Արդ եւ ես պատերազմեցայց եւ որպիսի ոք եւ իցեմ, ըստ արժանաւորութեան խնդրիցեմ պատուել. այսպէս գիտասջիր, ասէ, ով Կիւրէ. պարտ է եւ ձեզ ով արք զօրականք յանդրգնել դիմագրաւ ի կռիւդ ընդ խրատելոցդ այդոցիկ. զի արդ իսկ, ասէ, ըմբռնեալ են արքն յընկերահաշտեաց կռուին։ Սոյնգունակ ըստ սմին բանից խօսէր Փերաւղաս. յարեան կացին այլ եւս բազումք երկոցունց ջատագով մտանել։ Արդ հաճոյ թուեցաւ

իւրաքանչիւր ըստ անձնիւր արժանաւորութեան մեծարել, եւ Կիւրոսի գատաւոր լինել։

Այս ամենայն այսպէս վճարեցաւ։ Կիւրոս զողջոյն իսկ գունդն զօրագլխաւն հանդերձ տեսանէր զի կէս արանց գնդին յերկոցունց կողմանց հանդէպ միմեանց ճակատեալ, եւ զի երկոքին զրահապատք էին եւ սուսեր յահեակ ձեռն եւ կիսոցն տայր յաջ ձեռն գաւազանս ստուարս, եւ ցայլսն սաէր կոշտս բառնալ եւ ընկենուլ։ Եւ իբրեւ կազմեցան պատրաստեցան կացին, նշանակէր նոցա կռուել։ Յայնմ վայրի կէսք կոշտս ընկենուին եւ ի զրահն եւս եւ յապարսն հարկանէին եւ ի բարձս։ Իսկ իբրեւ համագունդ եղեն որ զգաւազանսն ունէին զոմանց բարձս, զայլոց ձեռս, զկիսոց պճղունս հարկանէին, եւ զայնոցիկ որ ի կոշտսն խոնարհէին զպարանոցս եւ զականջս հարկանէին։ Ապա դառնային հալածական առնէին, որ զգաւազանսն կրէին, եւ բազում ծաղու եւ խաղալով հարկանէին կարգաւ եւ այլքն եւս միւսանգամ զգաւազանսն առեալ զնոյն առնէին այնոցիկ որ զկոշտսն արկանէին։

Զարմանայր Կիւրոս ընդ զօրագլխին հնարագիտութիւն եւ ընդ նոցա հնազանդութիւնն, զի եւ կրթէին եւ ուրախ լինէին եւ զի յաղթեցին որք պար-

սից սպառազինութեանն նմանեալ էին։ Այսու ամենայնիւ զուարճացեալ յընթրիս կոչէր զնոսա, եւ տեսեալ ի վրանի անդ զոմանս ի նոցանէ, զի միոյն սրունք եւ միւսոյն ձեռք կապեալ էին, հարցանէր թէ զինչ անցք անցին. եւ նոքա ասէին թէ ի կոշտոյն խոցեցաք, եւ նա միւսանգամ եհարց, թէ արդեւք յորժամ խռնեցանն թէ հեռին էին, եւ նոքա ասեն թէ յորժամ ի բացեայ էաք. զի յորժամ ի միմեանս հասաք, ասէին, որ զգաւազանն տանէին, թէ խաղ իմն եւ խընճոյ էր։ Բայց որ ի գաւազանացն խոցեցան աղաղակէին թէ ոչ խաղ թուի նոցա հարկանելն ի հեռաստանէ, միանգամայն եւ ցուցանէին զգաւազանացն հարուածն եւ ի ձեռս եւ ի պարանոցս, ոմանք յերեսս իսկ, եւ յայնժամ որպէս ի դէպ էր, ծիծաղէին ի վերայ միմեանց. ի վաղիւ անդր լի էր դաշտն ամենեւին յայնցանէ որ նման նոցա էին. եւ միշտ իսկ իբրեւ ոչինչ եւս պիտանացու գործ ունէին, նովին խրատու վարէին։

Տեսեալ զայլ ոմն զօրագլուխ զի տանէր զգունդն ի գեւոյ անտի ի ճաշ, մի առ մի, եւ յորժամ դէպ թուէր նմա հրաման տայր հուսկ յետին գնդին զերրորդ եւ զչորրորդ գնդաւն անցեալ կալ ի ճակատուն։ Եւ իբրեւ կացին ի ճակատու զօրագլուխքն, հրաման եւ

յերկուս թեւս զվաշան տանել։ Այնու-
հետեւ տասնապետքն դային հասանէին
ի ճակատ անդր, եւ յորժամ ժամ
թուեցաւ նմա, հրամայեաց ի չորս
թեւս զվաշան տանել։ Այնպէս ապա
միւսանգամ հնգապետքն հասանէին զի
ի չորս չորս երթայցէ վաշան։ Իբրեւ
մնա ի դրունս խորանին եղեն, հրաման
տայր երկուս երկուս երթալ, եւ մու-
ծանէր զառաջին դունդն եւ երկրորդին
պատուիրէր գալ զնորին հետ, եւ եր-
րորդին եւ չորրորդին նոյնպէս պատուէր
տուեալ ի ներքս մուծանէր, եւ այնպէս
ի ներքս ածեալ յընթրիս բաղմեցոյց
որպէս մնանէինն։ Զարմացեալ Պիւրոսի
ընդ հանդարտութիւնն եւ ընդ ուսումն
եւ ընդ խնամն եւ ընդ հոգաբարձու-
թիւնս կոչեաց եւ զդունդն զայն յըն-
թրիս զօրագլխաւն հանդերձ։

Իր անդ եւ այլ զօրագլուխ որ յըն-
թրիս էր կոչեցեալ. Զիմ, ասէ, գունդ
ով Պիւրոս չկոչիցես ի վրանս։ Զի յոր-
ժամ յընթրիս գայցեն զայդ ամենայն
յայնժամ առնեն, եւ յորժամ զրաւ
լինիցի ի վրանի նստելոյ, եւ յետոյ
ուրեմն քան զամենայն վաշտս հանէ
զվաշան զայն վերջապահն, որ հուսկ
յետինս ունի զկարգեալ առաջինսն ի
պատերազմ. յետնոցա որ վերջապահն
է այլոյ վաշտու, եւ երրորդն եւ չոր-
րորդն նոյնպէս։ Զիարդ եւ երբ պարտ

իցէ ի թշնամեացն մեկնել գիտեմ եւ որպէս հեռանալ, եւ յորժամ ուրեք գնայցեմք, ես տանիմ, եւ առաջին գունդն առաջին, եւ երկրորդն որպէս պարտ իցէ եւ երրորդն եւ չորրորդն եւ վաշտուցն տասունքն եւ հինգքն մինչեւ հրաման տամ ես։ Եւ յորժամ, ասէ, յարեւմուտս երթայցեմք վերջապահն եւ յետինքն յառաջ անցանեն, սակայն ինձ անսան, որ յետոյն երթամ, զի ուսեալ են, եւ զհետ խաղալ եւ զանցանել, նոյնպէս հնազանդութեամբ։

Կիւրոս ասէ, եթէ զայդ միշտ առնէք։ Դանիցս անդամ, ասէ, ճաշ ուտեմք։ Այսուհետեւ, ասէ, եւ զձեզ կոչեցից, զի զգնդացն փոյթ յանձին ունիք եւ ի մերձենալ եւ ի հեռանալ, միանդամայն զի եւ զցայդ եւ զցերեկ, եւ զի զմարմինս շրջելով կրթէք, եւ ոգւոցն օգուտ գործէք ուսուցանելով։ Եւ արդ քանզի զամենայն կրկնակի առնէք, արժան է ձեզ կրկին եւ զխրախութիւնն առնել։ Ասէ զօրագլուխն. Մի ի միում աւուր, թէ ոչ եւ կրկին որովայնս տայցես մեզ։ Եւ յայնժամ զբաւ առնէին ի վրանին նստելոյ։ Ի վաղիւ անդր կոչեաց Կիւրոս զգունդն զայն, որպէս եւ խօսեցաւ, եւ ի միւսում եւս աւուրն։ Եւ այլոցն զայն զգացեալ, այնուհետեւ ամենեքին նմանօղ նախանձաւոր լինէին նոցա։

ԳԼՈՒԽ Դ

ԵՐԲԵՄՆ մինչ հարց եւ խնդիր առնէր Կիւրոս ամենեցուն զինուն զարդուն եւ կարգաց, պատգամաւոր եկն ի Կիպքսարայ, ասէ թէ եկեալ հասեալ կայ ի Ընդկաց հրեշտակութիւն, արդ հրաման տայ գալ քեզ վաղվաղակի։ Բերեալ եմ քեզ, ասէ, պատմուճան գեղեցիկ ի Կիպքսարայ. այսպէս կամի ասէ, զի զարդարեալ մեծապայծառ գայցես զի նշմարելոց են Ընդիկք, թէ որպէս գայցես։ Իբրեւ զայն լուաւ Կիւրոս պատուէր ետ զօրագլխին որ յառաջնում գնդին կայր, զի ի ճակատու իմն կայցէ, եւ մի մի ածեալ զգունդն զաջակողմն ունիցի, եւ պատուիրեաց նմա զնոյն եւ երկրորդ զօրագլխին պատմել, եւ հրաման ետ նոյնպէս ամենեցուն մի ըստ միոջէ ասել։

Եւ նոքա հաճեալք եւ հաւանեալք վաղվաղակի պատմէին, եւ առնէին զհրամանն։ Սակաւ ինչ ժամանակաւ կարգեցան կացին ճակատեալ երկերիւրայր. քանզի այնչափ էին զօրագլուխքն, եւ թանձրութիւնն հարեւր։ Եւ իբրեւ կարգեցան, հրաման ետ զհետ գալ որպէս ինքն տանիցի եւ անդէն ճեպեալ երթայր։ Ապա ի միտ առ եթէ փողոցն որ յարքունիսն տանի նուրբ եւ

անձուկ է առ ի չգնալոյ ընդ այն ամենեցուն ճակատեալ, Հրաման տուեալ առաջնոյ հազարաւորին եւ երկրորդ հազարաւորին խաղալ զառաջնոյն կնի եւ այսպէս մի ըստ միոջէ։

Ինքն անդադար տանէր, եւ այլ եւս հազարաւորքն գային կարգ ըստ կարգէ զառաջնոյն զհետ։ Ուռաքեաց երկուս սպասաւորս ի գլուխ փողոցին, որպէս զի թէ անդէտ ոք իցէ ազգ առնիցեն զոր ինչ պարան իցէ առնել։ Եւ իբրեւ հասին ի դուրս անդ Կիաքսարայ, Հրամայեաց առաջնոյ զօրագլխին յերկոտասան արանց թանձրութիւն կարգել զդունդն եւ զերկոտասանապետան ի ճակատու շուրջ զարքունեօքն կացուցանել. եւ Հրամայեաց զնոյն երկրորդին պատմել եւ նոյնպէս մի ըստ միոջէ։ Եւ նոքա ի գլուխ հանէին որպէս խօսեցաւն իսկ Կիւրոս։

Եմուտ նա առաջի Կիաքսարայ պարսիկ պատմուճանաւն առանց իրիք պաճուճանաց։ Տեսեալ զնա Կիաքսարայ, ընդ արագութիւնն զարմացաւ եւ ընդ յոռութիւն հանդերձին զայրացաւ եւ ասէ. Զի՞նչ իցէ այս, ով Կիւրոս. զի՞նչ գործեաղ զի այդպէս երեւիս դու Ընդկաց. ես կամէի, ասէ, թէ մեծապայծառ եւ լուսաւոր երեւէիր. զի եւ այն ինձ զարդ էր, քեռն իմոյ որդւոյ մեծավայելուչ երեւել։

Ասէ այն Կիւրոս ասէ. Իսկ զիա՞րդ ասէ, ով Կիաքսարէ, քաջ զարդարէի զքեզ, եթէ Ծիրանի զդեցեալ եւ ապարանջանս առեալ եւ մեհեւանդս եդեալ դանդաղէի հնազանդել քում հրամանին, եթէ այժմ զի այսչափ ինչ եւ այսպիսի զօրութեամբ այնպէս տագնապաւ հնազանդ եղէ քեզ վասն քեզ շուք դնելոյ, քրտամբք եւ փութով եւ ես ինքնին դլխովին զարդարեալ եմ եւ զքեզ զարդարեմ, եւ ցուցանեմ եւ զայլն ըստ նմին օրինակի հնազանդեալս արագ արագ քոց հրամանաց առանց դանդաղելոյ։ Կիւրոս զայս ինչ ասաց. եւ Կիաքսարէս զմտաւ ած եթէ ուղիղ իսկ խօսեցաւ եւ հրամայեաց զ՝Ենդիկսն բերել։

Ապին Ենդիկքն եւ ասեն, եթէ Ռաքեաց զմեզ արքայն Ենդկաց եւ հրամայեաց հարցանել թէ զմի՞ մարտ պատերազմի իցէ Պարսաց ընդ ասորեստանեւոյն, եւ յորժամ լսիցեմք ձեզ, հրաման ետ երթալ այսրէն առ ասորեստանեայն եւ նմա եւս զնոյն հարցանել. եւ ձեզ երկոցունցդ ասել թէ թագաւորն Ենդկաց ընդ իրաւունսն հայեցեալ, ընդ այնմ է որ զրկիցի։

Ասէ Կիաքսարէս. Եւ արդ լուարուք ինձ եթէ չզրկեմք զասորեստանեայն եւ ոչ իւիք. ցնա իսկ հարցէք յորժամ երթայցէք թէ զինչ ասիցէ։ Իսկ Կիւ-

րոս որ մնան կայր եհարց զԿիաքսարէս եթէ եւ ես, ասէ, առացիս ինչ զոր գիտիցեմ։ Եւ Կիաքսարէս հրաման ետ։ Դուք զոյց տուք ասէ, Ընդկաց թագաւորին այսպէս, եթէ ոչ այլազգ ինչ հաճոյ թուիցի Կիաքսարայ, թէ մեք ասեմք, եթէ զրկեալ ինչ ի մէնջ զանձն ասիցէ ասորեստանեայն, զԸնդկաց իսկ արքայն ընտրեմք դատաւոր։

Նոքա զայն լուեալ գնացին։ Եւ իբրեւ եկին Ընդիկքն խօսել սկսաւ Կիւրոս ընդ Կիաքսարեայ։ Ո Կիաքսարէ, յորժամ գայի, ոչ բազում դանձս առանձինն բերի յաշխարհէ, եւ որչափ էրն, բնաւ սակաւ ինչ մնայ յայնմանէ. քանզի ի զօրսն, ասէ, ծախեցի. թերեւս ընդ այն զարմանայցես, թէ զիաւրդ ծախեցի ես, ուր դու իսկ կերակրես զնոսա. գիտասջիր, ասէ, թէ ոչ այլ ինչ գործելով, բայց միայն պատուելով եւ շնորհելով յորժամ ցանկայր ոք ի զօրականացն։ Զի թուի ինձ թէ զամենեսին զորս կամիցի ոք բարւոք գործակիցս կատարել յամենայն իրս, եւս առաւել քաղցր իցէ գովելովն եւ բարի առնելով քաջալերս տալ քան եթէ տրտմեցուցանել եւ բռնադատել։ Իսկ զորս պատերազմական գործոց գործակիցս ոք կամիցի առնել յօժարս մտօք, ինձ թուի թէ զնոսա ամենեւին յորդորել պարտ է

բանիւք բարեօք եւ գործովք։ Վասնզի բարեկամն պարտ է լինել եւ ոչ թշնամիս այնոցիկ որ առանց բարբանաց զօրաւիգն լինելոց իցեն, ոչ ի բարուքթիւնս իշխանին խանտանալ եւ ոչ ի վիշտն մատն լինել։

Եւ զի զայս այսպէս գիտեմ, ընչիւք կարօտեմ։ Արդ յամենայնի ընդ քեզ հայել, դժպատեհ իմն է, քանզի գիտեմ թէ բազում ծախս առնես։ Այն որոյ արժան համարիմ առ հասարակ քեզ եւ ինձ զմտաւ ածել թէ զիարդ իցէ եթէ չպակասեսցին դանձք քո։ Զի եթէ դու առատ լինիցիս, գիտեմ թէ եւ ինձ լինիցի թողութիւն առնուլ, զի յայնպիսի ինչ առնուցում զի եւ քեզ լաւ իցէ եւ օգուտ յորժամ յայն ծախիցի։

Արդ իսկ երբեմն յիշեմ թէ լուայ ի քէն եթէ թագաւորն Հայոց անգոսնեաց զքեզ, այժմ զի լուաւ եթէ թշնամիք հասեալ գան ի վերայ մեր, ոչ զօր յղէ, եւ ոչ զհարկն զոր պարտէր, տայ։ Այսպէս իսկ առնէ, ասէ, ով Կիւրոս, մինչ զի եւ ես ի վարանս մտեալ տարակուսեալ կամ եթէ պարտ իցէ արդեւք զօրաժողով ի մարտ պատերազմի գումարել եւ սատիպեալ տագնապել, թէ լաւ իցէ առ ժամանակ մի թողուլ, զի մի եւ զսա յաւելուցումք ի վերայ այլոցն թշնամեացն։

Հարցանէր Կիւրոս թէ բնակութիւնք նոցա յամուր տեղիս իցեն եթէ ի դիւրի։ Եւ Կիաքսարէս ասէ. Բնակութիւնք նոցա չեն ամենեւին յամուրս, զի ես վասն նորին ոչ հեղգացայ։ Բայց լերինք կան նորա, մարթի անդր անկանել եւ վաղվաղակի ամրանալ, զի ոչ ինքն մարթիցի ի բուռն անկանել եւ ոչ առնուլ կրել որ ինչ անդ իցէ, թէ ոչ նստեալ ոք անդէն արդելեալ պաշարիցէ, որպէս իմ հայրն երբեմն արար։ Ապա ասէ Կիւրոս այսպէս. Այլ եթէ զիս կամիցիս առաքել, եւ յաւելուցուս ինձ հեծեալս որչափ բաւականն թուիցի, արարից հանդերձ աստուածովքն զի եւ զզօրսն առաքիցէ եւ զհարկն տայցէ քեզ. եւ ակն ունիմ թէ առաւել եւս բարեկամ մեզ լինիցի նա քան որչափ այժմն է։

Իսկ Կիաքսարէս ասէ. Ես եւս ակն ունիմ թէ նոքա առաւել առ քեզ եկեսցեն քան եթէ առ մեզ։ Վասնզի լսեմ թէ ոմանք ի մանկուց անտի նորա քո որսակիցք լեալ իցեն, թերեւս եւ միւսանգամ առ քեզ գայցեն եւ իբրեւ ոմանք ի նոցանէ ձեռս տայցեն, ամենայն ինչ վճարեսցի որպէս ինչ մեք կամիցիմք։ Ասէ Կիւրոս. Եւ արդ զիա՞րդ թուիցի քեզ, պատշաճ իցէ թագաւորանել դայն թէ այսպիսի ինչ խորհուրդ խորհիցիմք։ Ասէ Կիաքսարէս. Այո՛

եւ կարի քաջ, զի այսպէս մարթի նոցա անկանել ի բուռն, եւ եթէ յարձակեսցուք ի նոսա, անկազմք առանց պատրաստութեան ըմբռնիցին։

Եւ արդ լուր ասէ Կիւրոս, եթէ թըւեցայց ասել ինչ քեզ բան։ Խաղում անգամ ամենայն պարսիկ արամբք որ ընդ իս էին որսացայ զքոյդ աշխարհիդ լերամբք եւ զՀայաստան աշխարհին, եւ այրուձի եւս առեալ ի բարեկամաց ասատի, անդր հասի։ Ասէ Կիաքսարէս. Եթէ նոյնպիսի ինչ եւ այժմ առնիցես չլինիցիս կասկածելի. ապա թէ կարի իսկ առաւել զօրօք երեւիցիս որովք չիցես սովոր որսալ այնուհետեւ կասկածլինիցի։

Այլ մարթի, ասէ Կիւրոս, եւ պատճառս եւ բարուրս կազմել ասատէն որ չիցէ ինչ անհաւանութեան. եթէ պատմիցէ ոք անդ որպէս թէ ես որս ինչ մեծ կամիցիմ առնել եւ ի քէն, ասէ, խնդրիցեմ հեծեալս յայտ յանդիման։ Ասէ Կիաքսարէս. Խարուք խօսիս, եւ ես, ասէ, չառիցս յանձն տալ քեզ աւելի քան զսակաւս ոմանս, որպէս թէ ի պահական կամիցիմ երթալ որ առ Ասորեստանեաց աշխարհին կան. եւ արդարեւ, ասէ, կամիմ երթալ պատրաստել եւ ամրացուցանել։ Եւ դու զօրօքն հանդերձ որ ընդ քեզ իցեն որս առնիցես, եւ զերկուս աւուրս

ծախիցես։ Յղեցից քեզ բաւական այրուձի եւ հետեւակս յայնցանէ որ առ իս գումարեալ կայցեն զորս դու առցես եւ երթայցես վաղվաղակի. եւ ես հանդերձ այլովք եւս ջանացայց զօրօք մի ի բացեայ ի ձէնջ լինել, զի յորժամ ժամ եւ դէպ իցէ յայտնիցիմ։

Ապա վաղվաղակի գումարեաց Կիաքսարէս առ պահակին զայրուձին եւ զհետեւակազօրն, եւ սայլս ռոճկի արձակեաց ի ճանապարհ պահակապանացն։ Իսկ Կիւրոս վաղվաղակի զոհս ի վերայ ճանապարհին մատուցանէր, եւ առաքեալ խնդրէր ի Կիաքսարայ մանկունս հեծեալս յերիւարս. եւ նա թէպէտ եւ բնաւ բազումք իսկ կամէին, չէտ բազմաց երթալ զհետ։ Իբրեւ յառաջ մատեաւ Կիաքսարէս հետեւակ եւ ձիական զօրութեամբն ի ճանապարհ անդր պահակին, մատչէին նուէրքն Կիւրոսի վասն ողջանդամ անվնաս երթալոյ յաշխարհն Հայոց. եւ ապա զբանակն հանէր, որպէս թէ յորս կազմիցի։

Յորժամ երթայր անդէն յառաջնում վայրին նապաստակ մի յառնէր. եւ արծուոյ թռուցելոյ տեսեալ սրացեալ զնապաստակն յարձակեալ էհար զնա եւ յափշտակեալ ամբարձ տարաւ ի բլուր ինչ ոչ հեռի, եւ արար ընդառն իւր որպէս ինչ կամէր։ Կիւրոսի հայեցեալ ի նշան անդր, ուրախ եղեւ

եւ երկիր եպագ Ամրամազդայ թագաւորի, եւ ասէ ցայնոսիկ որ մօտն կային թէ որս բարուք լինիցի եթէ դիւքն կամիցին։

Եւ իբրեւ մօտ ի լերինն եղէն, անդէն որպէս սովորն էր որսայր, իսկ բազմամբոխ հետեւակացն եւ հեծելոց այնմ ուշ առնէին զի երթեալ զգազանն յիւրաքանչիւր տեղեացն յարուցանիցեն, եւ հեծեալքն եւ հետեւակքն քաջք զատան կացին, եւ զգազանաց յարուցելոց զհետ պնդէին, եւ վարազ շատ եւ եղջերուս եւ այծեմունս եւ ցիռս ըմբռնէին, զի բազում եւ այժմ ի տեղիսն յայնս կան էշք։

Իբրեւ հանգեան յորսոյ անտի մօտ հասեալ ի սահմանակողմն Ասայոց աշխարհին, ընթրիս առնէր, եւ ի վաղիւն իսկ եւ իսկ որս որսայր, մատուցեալ ի սահմանսն յոր դիմեալ երթայր. եւ յորժամ հանգեաւ, ընթրէր. եւ իբրեւ ազդ լիներ նմա զԱիաքսարայ զօրաց թէ մօտ ուրեմն են, առաքեաց առ նոսա պատուիրեաց մեկնել յիւրմէ իբրեւ երկու խրատաւոր եւ ճաշ ուտել. յառաջագոյն ի միտ առեալ թէ այն նպաստ ի դաղտնութիւնն լինիցի. եւ իբրեւ եկեր զճաշն, հրաման ետ իշխանին նոցա գալ առ իւր. եւ յետ ճաշուն կոչէր առ ինքն զՀազարապետսն. եւ իբրեւ եկին խօսեցաւ զայս ձեւ օրինակի բանից։

Ամբ բարեկամք, հայաստանեայն յառաջ ժամանակաւ թիկունք օգնականութեան էր եւ անսայր Կիաքսարայ, իսկ այժմ իբրեւ ազդ եղեւ նմա զթընամեայ գալոյ, անգոսնեայ ոչ զօրս առաքէ մեզ եւ ոչ զհարկն տայ ի դուրս. արդ զնա պարտ է որսալ, թէ կարող իցեմք. ինձ թուի թէ այսպիսի ինչ ի դէպ է առնել։ Զոր Արիւսանտա. յորժամ փոքր մի ի քուն լինիցիս առ դկէսս ի Պարսից ասսի. որ ընդ մեզ իցեն, եւ երթ դու ի լեռնակողմն, եւ հաս ի լերինսն, յորս ասեն թէ յորժամ երկուցեալ յումեքէ իցէ, անդր փախստական ելանէ. առաջնորդս ես տաց քեզ։

Արդ ասեն թէ թանձրախիտ եւսեն լերինքն, որպէս զի գուցէ յոյս չանկանելոյ ձեր յակն։ Սակայն քան զզօրսն յառաջագոյն արձակիցես արս պնդակազմս որ աւազակաց իսկ նման իցեն բազմութեամբ եւ հանդերձիւք, եւ եթէ պատահիցեն ոմանց ի Հայոց անտի, զկէսս ի նոցանէ ըմբռնեալ խափանեսցեն երթալ գոյժ տալ. իսկ զոր չկարիցեն ըմբռնել, ահ արկեալ արգել լինիցին տեսանելոյ նոցա զողջոյն իսկ բանակս զօրականաց, այլ իբրեւ զգողոց իմն խորհուրդ խորհեսցին։

Զոր, ասէ, այսպէս առնիջիր, եւ ես զտիւ առեալ զկէս հետեւակացն եւ

զամենայն այրուձին յուղի անկեալ երթայց ընդ դաշտակողմն վաղվաղակի յարքունիսն։ Եւ եթէ դիմադարձ ինձ լինիցի, յայտ է եթէ հասանէ այնուհետեւ կռուել. ապա թէ մերժիցի ի դաշտէ անտի, ապա յայտ իցէ եթէ պարտ է զհետ մտանել. իսկ եթէ փախստական մաղապուր ի լերինս անկանիցի, յայնմ վայրի, ասէ, քո իսկ գործ լիցի այնուհետեւ մի զոք ի հասելոց անտի առ քեզ արձակել։ Զրեսջիր թէ որպէս յորսսն մեք յուզակք եւ խնդրակք եմք, եւ դու ի վերայ ցանցացն. այս յուշ լիցի քեզ, թէ պարտ է աճապարել եւ զճանապարհս խնուլ մինչ չեւ գազանին շարժեալ ի տեղւոջէ անտի իւրմէ. եւ պարտ է զաւղել այնոցիկ որ ի վերայ երէսոյն կայցեն թէ չկամիցին զեկեալսն խրոտուցանել։

Բայց մի, ասէ, ո Քրիստոս, այնպիսի ինչ առներ, որպէս սովոր էիր վասն որսոյն գթոյ. քանզի բազում անգամ զգիշերն իսկ ողջոյն առանց ի քուն լինելոյ ի նոյն զբօսեալ էիր, այլ այժմիկ պարտ իսկ է թողուլ արանցն սակաւիկ ինչ ի քուն լինել զի մարթիցեն առնուլ վիճակ զքունն[1]. եւ մի դու, քանզի չգոն ընդ քեզ արք առաջնորդք, մոլորեալ շրջիցիս ի վերայ լերանցն, այլ ուր գազանքն վարիցին,

անդր երթեալ հասանիցես զի մի
եւ այժմիկ ընդ դժուարս եւ ընդ
անհետ ափափայս ի ճանապարհ ան-
կեալ գնայցես. այլ հրաման տուր դու
առաջնորդացն եթէ չիցէ բնաւ կարի
ինչ կարճոյ ճանապարհ, ընդ դիւրին
ճանապարհս տանիցին, քանզի զօրացն
դիւրին ճանապարհն երագ է։ Եւ մի,
վասն զի դու ուսեալ իցես ի վերայ
լերանց արշաւել, առաջնորդ լինիցիս
փութով առաջի ընթանալ, այլ որ-
չափ մարթիցի գէթ կնի խաղայցեն
զօրն, բայց սակաւիկ ինչ փութա յա-
ռաջ անցանել։ Լաւ է եւ զօրաւորացն
երբեմն քաջալերս մատուցանել համ-
բերողացն. յորժամ փութանակի ան-
ցանիցէ թեւն, ամենեքին իբրեւ յար-
շաւանի գնացողացն երեւիցին։

Այսպէս լուեալ Քրիւսանտայ եւ քա-
ջալերեալ ի հրամանաց անտի Կիւրոսի ա-
ռեալ առաջնորդս, երթեալ պատուիրէր
որ ինչ պիտոյն էր այնոցիկ որ ընդ նմա
իսկ երթալոց էին եւ հանդչէր։ Իբրեւ
ի քուն եղեն որչափ ինչ չափով թը-
ւէր, յուղի անկեալ երթայր ի լերինսն։
Իսկ Կիւրոս, իբրեւ տիւ եղեւ, հրեշտակս
արձակեաց առ Հայաստանեայն, եւ
պատուէր տայր նմա խօսել ըստ սմին
օրինակի բանից։ Կիւրոս, ով Հայաս-
տանեայդ, հրաման տայ քեզ այսպէս
առնել, զի վաղվաղակի իսկ առեալ

զՀարկն եւ զզօրականն եկեսցես. եւ եթէ հարցանիցէ թէ ուր իցեմ, զճշմարիտն պատմեսջիր, եթէ ի վերայ սահմանացն եմ. ապա թէ հարցանիցէ թէ գաՀմ ես. ասա եւ անդ զճշմարիտն թէ ոչ գիտեմ. եւ եթէ հարցանիցէ թէ ո՞րչափ իցեմք, հրաման տուր առաքել զոմն ընդ քեզ եւ ուսանել։

Զայս ամենայն պատուիրեալ առաքեաց զպատգամաւորն, զմտաւ ածեթէ այսպէս խնամով լինիցի քան եթէ առանց յառաջագոյն պատմելոյ երթեալ հասանիցէ, եւ ինքն կարգեալ ճակատեալ քաջ եւ ի գնալ զճանապարհն եւ ի տալ մարտ պատերազմի եթէ պիտոյ ինչ լինիցի, երթայր։ Պատուէր տայր զօրականացն մի զոք խուսել. եւ եթէ ոք ումեք ի Հայոց պատահեսցէ, քաջալերել եւ աղաչել վաճառս եւս զոր կամիցին, բերել ի տեղին յորում կանն, եթէ ռոճիկ ոք կամ ըմպելի կամիցի գնոց տալ։

ԵՐՐՈՐԴ

ԳԼԽՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԵՈՓՈՒԹԻՒՆՔ
ԿԻՒՐՈՍԻ ԽՐԱՏՈՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ
Գ. ԳՊՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա

Ա՛ՒՆՀ դեռ Կիւրոս զայնու էր, իբրեւ լուաւ Հայաստանեայն ի պատգամաւորէ անտի զբանսն Կիւրոսի, ապշեցաւ զահի հարաւ, զմտաւ ածեթէ զրկեաց զի զՀարկն եթող եւ զզօրն ոչ առաքեաց։ Եւ առաւել եւս երկընչէր թէ յայտնի լինելոց է եթէ արքունիս շինէ առ ի բաւական լինելոյ բախել ի մարտ պատերազմի, վասն այսր ամենայնի դանդաղեալ վեհերէր, առաքէր անդէն զիւր զօրսն գումարէր, եւ զկրտսեր որդին զՀ.աւարշ եւ զկանայսն յղէր ի լերինսն, զիւր կինն եւ զիւրոյ որդւոյն եւ զդստերսն, եւ զամենայն զզարդ եւ զսպաս մեծագին ընդ նոսա յղէր, եւ առաջնորդս եւս տայր նոցա. եւ ինքն անդէն դէտս արձակէր գիտել թէ զինչ գործիցէ Կիւրոս, եւ զորս եկեալ հասեալ կային

ի Հայոց անտի կարդէր եւ կաղմէր։ Վաղ այլք հասին եւ ասեն թէ ինքն իսկ Կիւրոս միանգամայն եհաս. յայնմ վայրի չիշխեաց ձեռնամուխ լինել, այլ անդէն խոյս տայր։

Իբրեւ տեսին զնա Հայք թէ այսպիսի ինչ առնէ. դիմեալ երթայր իւրաքանչիւր ոք յիւրս անդր, եւ կամէին իմն զինչս ի բաց կրել։ Իսկ Կիւրոս իբրեւ ետես զդաշտն լցեալ ի խուճապելոց եւ ի փախստէից, առաքեաց ասել թէ ոչ ումեք ի մնացելոց անդի թշնամի եմ, եւ եթէ ըմբռնիցեմ զոք ի փախստի, զնա թշնամի եւ հակառակորդ համարիցիմ։ Բազումք կացին մնացին. եւ ոմանք խոյս ետուն հանդերձ թագաւորաւն։ Իսկ որք ընդ կանացն երթեալ էին պատահեցին այնոցիկ որ ի լերինս անդ էին, եւ վաղվաղակի ճիչ բարձեալ գոչէին, եւ ի փախչելն շատք ըմբռնեցան ի նոցանէ։ Եւ ապա մանուկն եւ կանայքն եւ դստերքն ի բուռն անկան, եւ որչափ ինչ կարասի բերեալ էր ընդ նոսա. իսկ թագաւորն նոցա իբրեւ զդայ զերան որ եղեն, ի վարանս մտանէր տարակուսանայր թէ յոր վայր դիմիցէ, եւ ի բլուր ինչ փախստեայ մազապուր ելանէր։

Զայն տեսեալ Կիւրոսի բակ առեալ կայր զբլրովն զօրքն որ անդէն մնային եւ առ Քրիսանտաս յղեալ պա-

տուէր տայր զպահպանութիւն լերինն թողուլ եւ չուել գալ։ Մինչ դեռ զօրն Կիւրոսի գումարէր, նորա առաքեալ քարոզ առ Հայաստանեայն հարցանէր զայս պէս զսոյն դոյն։ Աղէ ասա դու ցիս, ասէ, ով Հայաստանեայդ, ա՞ստ արդեւք կամիցիս կալ մնալ, եւ ընդ ծարաւոյ մարտ եդեալ կռուել, եթէ ի հարթ տեղիս իջեալ ի դիւրոջ կռուել ընդ մեզ։ Նա պատասխանի Հայաստանեայն եթէ ոչ ընդ միում ի նոցանէ կամիմ տալ պատերազմ։ Միւսանգամ առաքեաց եհարց Կիւրոս. թէ հիմ նստիս այդր եւ ոչ իջանես։ Պարանեալ կամ, ասէ, թէ զինչ պարտ իցէ գործել։ Այլ չէ ինչ քեզ պարտ, ասէ, յանհնարս մտանել. քանզի համարձակ է քեզ, ասէ, իջանել ի դաշտ այսր։ Ո՞ ոք, ասէ, կայցէ իրաւարար։ Յայտ է թէ որում ետուանն դիքն, եւ առանց իսկ դատաստանի առնել ընդ քեզ զինչ եւ կամիցի։

Յայնմ վայրի Հայոյն ի միտ առեալ զտագնապ հարկին, էջ։ Իսկ Կիւրոսի ի մէջ առեալ զնա եւ զայլս եւս ամենայն, շուրջ կայր զօրօքն, քանզի համագունդ ի միում վայրի էին զօրքն։ Յայնմ վայրի երեց որդի Հայոյն Տիգրանէս ի տարաշխարհական ճանապարհէ հասեալ գայր, որ որսակից իսկ երբեմն լեալ էր Կիւրոսի. եւ իբրեւ լուաւ

զիրսն որ գործեցան, անդէն երթայր առ Կիւրոս այնպէս իսկ որպէս էրն։ Իբրեւ ետես զՀայրն եւ զմայրն եւ զիւրուրոյն կին վտարանդի ի գերութեան վարեալ, զարտասուս հարաւ որպէս ի դէպ էր իսկ։ Իսկ Կիւրոսի տեսեալ զնա, ոչ այլ ինչ մարդասիրութիւն արարեալ ընդ նմա ասէր. թէ ի դէպ ժամու հասեր, զի լուիցես դու ասա զիրաւունս որ վասն հօրն քո իցէ։ Իսկ եւ իսկ ի մի վայր կոչէր զզօրավարս Պարսից եւ Մարաց, կոչէր ի Հայոց անտի որ ի պատուականաց ոք անդ կայր, եւ զկանանին որ սայլակօքն հասեալ էին ոչ մերժեաց, այլ թող լսել։

Դու յորժամ պատշաճ էր սկիզբն արար խօսելոյ. Ով Հայաստանեայդ, ասէ, նախ խրատ տամ քեզ ի դատաստանի զճշմարիտն բարբառել. զի այս մի ինչ հեռի լիցի ի քէն, որ ամենեւին իսկ ատելութեան է։ Դիտասջիր զի սուտն խօսել արդահատանաց եւ ներելոյ իրիք թողութեան մարդկան արգել լինիցի։ Յետ այնորիկ, ասէ, մանկունքդ եւ կանայքդ իրագէտ ենամենայնի զոր քո գործեալ իցէ, եւ ի Հայոց անտի որ աստ կան։ Դթէ իմասցին թէ այլ ինչ իմն պատմես եւ ոչ զեղեալսն, համարեսցին թէ դու քեզէն քոյին դատապարտ զանձն առնիցես զբնաւ իսկ զյետին վնասս կրել։

եթէ եւ զճշմարիտն լսիցեմ։ Ասէ հարց, ասէ ով Կիւրոս, զինչ եւ կամիցիս, զի զճշմարիտն պատմեցից քեզ. զինչ ինչ վասն ճշմարտութեանն կամիցի լինել, լինիցի։

Պատմեա դու ցիս, ասէ, եւ՞ որ երբեմն մարտ պատերազմի ընդ Ժդահակայ ընդ հօր մօր իմոյ եւ ընդ այլոց եւս Մարաց։ Պատերազմեցայ, ասէ։ Ի պարտութիւն մատնեալ ի նմանէ խոստացար հարկ հարկանել եւ ընդ նմա ի մարտ պատերազմի դումարել ուր եւ հրաման տայցէ, եւ ամուրս մի ունել։ Այդպէս էր։ Իսկ արդ այժմ ոչ զհարկն հարկանես եւ ոչ զզօրն առաքես եւ զամուրսն պարսպես որմովք։ Զատութեան, ասէ, ցանկացայ. զի բարւոք թուի ինձ ազատանալ եւ որդւոց զազատութիւն թողուլ։ Կիւրոս, ասէ, Այս ուրեմն դեղեցիկ է կռուել զի մի ծառայ ոք երբեք լինիցի։ Եթէ պատերազմաւ ի պարտութիւն մատնեալ իցէ կամ այլ ինչ օրինակ ծառայ լեալ, ձեռն ի գործ արկանիցէ ի տերանց զանձն թափել։ Դու զայն ասա նախ թէ արդեւք զլաւ այր եւ զբարեգործ ի պատի՞ւ ածես, կամ զզրկող, թէ ըմբռնիցես, տանջե՞ս։ Տանջեմ, ասէ, քանզի չտաս ինձ ատել։

Ասէ Կիւրոս. Ասա դու հաւատեաւ այսպէս մի մի։ Եթէ իշխան ոք այր

իցէ եւ յանցանիցէ, թողուցո՞ւս իշ-
խել եթէ զայլ ոք ընդ այնր կացուցա-
նիցես։ Զայլ ոք, ասէ, կացուցանի-
ցեմ։ Իսկ արդ եթէ եւ կարասի եւս
բազում գուցէ նորա, տայցե՞ս մեծա-
նալ, եթէ ի տնանկութիւն եւ ի տա-
ռապանս իջուցանես։ Հանեմ, ասէ,
զոր ինչ ունիցի։ Ապա թէ ի միտ առ-
ցես թէ կապարճս դարձոյց յետս ե-
կաց նա յապստամբութիւն ի թշնա-
միս անդր, զի՞նչ գործիցես։ Պանա-
նեմ, ասէ. զի՞ իսկ սուտ յանդիմա-
նեալ մեռանիցիմ եւ ոչ զճշմարիտն
խօսելով։

Յայնմ վայրի իբրեւ զայս ամենայն
լուաւ որդեակն նորա, հան զխոյրն ի
գլխոյ իւրմէ եւ քակեաց ընկէց զվեր-
ջաւորսն փողփողեալս, եւ կանայքն
ճչէին կանչէին կառաչէին զերեսս ցտե-
ին որպէս թէ կորեաւ հայրն եւ ին-
քեանք ամենեքին կորեան սատակեցան։
Կիւրոս հրաման տայր լուռ լինել եւ
խօսէր միւսանգամ։ Թող, քո իրա-
ւունք այնպէս իցեն, իսկ մեզ զի՞ խրատ
տաս ըստ դմին իրաւանց առնել։ Լուռ
եւ եթ կայր Թագաւորն քանզի տարա-
կուսեալ էր թէ զինչ խրատ տայցէ
Կիւրոսի, սպանանե՞լ, եթէ զնոցին
հակառակն ուսուցանիցէ, զոր ինքն
իսկ ասաց թէ առնեմ։ Իսկ որդի նորա
Տիգրանէս հարցանէր զԿիւրոս, ասէ, Ա՞սա

դու ցիս Կիւրոս, որովհետեւ Հայրս թուի թէ վարանեալ կայ, տաց խրատ վասն Նորա զոր ինչ լաւագոյնն համարիցիմ։ Կիւրոս զմտաւ ած թէ յորժամ որսակից էր Նորա Տիգրանէս, էր ընդ նմա եւ ճարտար ոմն եւ զարմանալի թուէր Տիգրանայ. ցանկացաւ լսել նմա թէ զինչ ասելոց իցէ. եւ հրաման ետ խօսել զոր ինչ գիտիցէ։

Ասէ Տիգրանէս. Եթէ արդարեւ գովութեան համարիս զոր ինչ խորհեցաւ Հայրս կամ զոր գործեաց, ամենեւին խրատ տամ քեզ նմանօղ նմին լինել. ապա թէ յանցուցեալ թուիցի քեզ, խրատ տամ մի նմա նմանել։ Ասէ Կիւրոս զերաւն եւ զարժանն առնելով չնմանիցիմ այնմ որ յանցեաւ։ Այո այդ այդպէս է ասէ։ Ապա ուրեմն, ասէ, պատժելի է ըստ քում բանիդ զՀայրն քո, քանզի զայն որ զրկեացն, յիրաւի է տանջել։ Օ՜ր լաւ համարիցիս, ո Կիւրոս, առ քոյոյ բարութեան զպատիժն առնել եթէ առ ի քո ինաս։ Այնթէ անձամբ անձին ինձէն ասէ, այնպէս պատիժս պատուհասից ի վերայ ածիցեմ։ Ասէ Տիգրանէս դու իսկ առաւել ինասիցիս, եթէ զքոյսն կոտորես յայնժամ յորժամ մեծագնի իցէ քեզ ստանալ։ Ասէ Կիւրոս, Օ՜իարդ իցէ եթէ մեծագնիք լինիցին մարդիկն յորժամ յապիրատութիւն

ըմբռնիցին։ Թուի ինձ եթէ յայնժամ զգաստագոյնք լինիցին. զի ինձ այսպէս թուի Կիւրոս, թէ առանց ցածութեան չիք ինչ յայլմէ առաքինութենէ շահ. քանզի զի՞նչ օգուտ ումեք հուժկուն կամ քաջն իցէ որ ոչ ցածուն իցէ մտօք, կամ զի՞նչ օգուտ հեծեալն, զի՞նչ մեծատունն, զի՞նչ ճոխն ի քաղաքի. ցածութեամբ ամենայն բարեկամ պիտանի է, եւ ամենայն պաշտօնեայ ընտիր։

Այդ ասես, ասէ, որպէս թէ եւ քոյ հայրն ի միում աւուր աստ յայսմիկ յանմտութենէ անտի զգաստացաւ։ Այո ասէ։ Ապա ուրեմն կարիս ինձ ոգւոցն ասիցես զզգաստութիւնն իբրեւ ցաւս եւ ոչ ուսումն. քանզի ոչ ուրեք յանկարծակի յանմտութենէ ցածուն ոք առնիցի, եթէ պարտ եւ պատշաճ իցէ հանճարեղ լինել այնմ որ զգաստն լինելոց իցէ։ Տակաւին զայն ո՞չ գիտիցես ո Կիւրոս թէ այր մի որ առ անմտութեան ձեռնամուխ լինիցի ընդ այնմ որ զօրագոյն քան զնա իցէ ի մարտ պատերազմի բախել, յորժամ վատթարեալ ի պարտութիւն մատնիցի, անդէն յանմտութենէ անտի ցածնու. եւ դարձեալ չիցէ, ասէ, տեսեալ քո զքաղաք ի պատերազմ գրգռեալ ընդ այլում քաղաքի. որ պարտիցի ոք յանկարծակի փոխանակ մարտ եդեալ կռուելոյ, անասալ կամի քաղաքին այնմիկ։

Ասէ Կիւրոս. Դու զո՞ր պարտութիւն պատմես զՀօրդ, եւ այնպէս հաստատուն ցուցանես թէ զգաստացաւ։ Այն վատթարութիւն զոր եւ ինքն իսկ գիտէ, զի ազատութեանն տենչանօք ծառայ եղեւ որպէս չէրն երբեք ծառայեալ։ Դու զոր կարծեաց թէ պարտ իցէ թագուցանել կամ գողանալ կամ բռնաբարել ոչ մի ինչ ի նոցանէ բաւական եղեւ ի գլուխ հանել։ Դու գիտէ զքէն թէ որովք պատրելն կամէիր, այնպէս խաբեցեր, զոր օրինակ զկոյրս ոք կամ զՀամերս եւ զանկեալս ի մտաց պատրիցէ. եւ զոր ինչ պատշաճ համարէիր դու թագուցանել, հմուտ է թէ այնպէս թաքուցեր, զի զոր ամուր վայրան անձին համարէր, զայն դու անդէն զօղեալ արդելեր. եւ այնչափ գերիվերոյ եղեր նմին երագութեամբն քով, զի ի հեռաստանէ ճեպեալ եկիր բազում բանակօք մինչ չեւ նորա զիւր զօրսն գումարեալ։

Ասէ Կիւրոս. Այսպէս թուիցի քեզ թէ այնպիսի ինչ վատթարութիւն բաւական է զգաստացուցանել զմարդիկ, զայլս աղնուագոյնս քան զանձինս ճանաչել։ Ասէ Տիգրանէս. թէ յոյժ իսկ առաւել քան եթէ ի ճակատու ոք ի պարտութիւն մատներ. զի որ զօրութեամբ ապաժաման իցէ, համարիցի թէ յորժամ զմարմինն թեքիցէ

վերատին տայցէ մարտ պատերազմի. եւ քաղաք եթէ առցին, յորժամ զոբաւիգն օգնականութեան գտանիցեն միւսանգամ տայցեն մարտ պատերազմի. իսկ զորս ազնուագոյնս քան զանձինս հաշուիցին, նոցին բազում անգամ եւ առանց հարկի եւ տագնապի կամիցին հնազանդել։ Թուիս դու, ասէ, կարծել թէ շռայլեալքն զայնոսիկ որ եւս ցածունք քան զնոսա իցեն, չճանաչեն, եւ ոչ գողք որ ոչն գողանայցեն եւ ոչ սուտք զճշմարտութեան խօսողն, եւ ոչ զրկողք զայնոսիկ որք զիրաւանցն առնիցեն։ Ո՞չ գիտես, ասէ, թէ եւ քո հայր այժմ ստեաց եւ ոչ պահեաց զդաշնն որ ընդ մեզ էր, գիտէր թէ մեք ոչ իւիք զուխտիւք զոր եդ ընդ նմա Ս.ժդահակ, անցաք։ Այլ եւ ոչ եւ ես ինչ զայս ասեմ թէ ճանաչելն եւ եթէ զլաւագոյնսն ի զդաստուրթիւն ածիցէ, առանց վրէժս տալոյ ի ձեռն ազնուագունացն, որպէս եւ հայրս այժմ եառ։

Կիւրոս ասէ. Հայր քո կրեաց ոչ մի ինչ տակաւին վիշտս. գիտեմ զանգիտեաց թէ մի զբնաւ զյետին իսկ վիշտսն կրիցէ։ Տիգրանէս ասէ. Համարիցի՞ս եթէ գուցէ ինչ որ քան զսաստիկ ահն առաւել ի ծառայութիւն զմարդիկ վտարանդիցէ։ Զիցե՞ս ակահ զի որ երկաթոտն հարկանիցին որ

սաստիկ պատիժքն կարծին, սակայն կամին միւսանդամ ընդ նոսին մարտնչել։ Եւ որոց սաստիկ ահ եւ երկեւղ արկեալ իցէ մարդկան, նոցա եւ ոչ թէ յորժամ սփոփիցեն ողղբելով, յերեսան իշխեն նայել։ Դու զայն ասիցես, ասէ, թէ քան զչարչարելն արդեամբք, եւս չար ահն զմարդիկ տանջէ։

Եւ գիտեա դու, ասէ, թէ զճշմարիտն ասեմ։ Քանզի խելամուտ ես, ասէ, թէ որք յահի եւ յերկիւղի իցեն թէ մի վտարանդի յաշխարհէ լինիցին, եւ որք կռուելոց իցեն կասկածեալք սրտաբախ սրտաթունդ թէ մի վատթարեալ ի պարտութիւն մատնիցին, տրտում տխուր կան։ Եւ որ նաւակոծ լինիցին, եւ որ ի ծառայութենէ երկրնչիցին կամ ի պարաւանդաց զանգիտիցեն, նոքա ոչ ի կերակրիկն եւ ոչ ի կաթ մի քուն մարթեն վայելել։ Իսկ վտարանդիքն եւ որ վատթարեալքն իսկ իցեն, եւ որք ի ծառայութեան հարկի կայցեն, երբեմն մարթեն քաջ քան զաջողեալսն ուտել եւ ի քուն լինել։ Յայսմ ամենայնէ յայտ է ասէ որպիսի ինչ բեռն երկեւղն իցէ. զի եւ ոմանք առ ահի թէ մի ի բուռն անկեալ մեռանիցին, յառաջագոյն կանխեալ յահէ անտի մեռանին. կէսք դարահոս ի վախէ զանձինս արկանեն

եւ կիսոցն խեղդ ընդ անձն արկեալ, եւ այլք ընդ իւրեանց սուրն ելանեն։ Վասն զամենայն տաղնապ եւս չար երկեւղն զմիտսն խուճապէ։ Յի՞նչ միտս, ասէ, յի՞նչ խորհուրդս կարծիցես զհայր իմ, որ ոչ վասն իւրոյ անձինն եւեթ, այլ եւ վասն իմ եւ վասն կնոջն եւ վասն որդւոցն իւրոց ամենեցունց ծառայութեան յահի կայ։

Կիւրոս ասէ, Ինձ չէ ինչ անհաւատ թէ այժմ այնպիսի ինչ միտս ունիցի։ Բայց թուի ինձ թէ նոյն այր յորժամ ի փառաւորութեան իցէ, հպարտացեալ անգոսնիցէ եւ յորժամ ի թշուառութիւնս հասանիցէ, վաղվաղակի ցածնուցու եւ եթէ ամբառնայցի դարձեալ մեծամտեալ ամբարհաւաճիցէ, դարձեալ նենգութիւն նիւթիցէ։ Այո, ասէ, Կիւրոս, են ի միջի այնպիսի ինչ պատճառք մերոցն յանցանացն առ ի թերահաւատելոյ ի մէնջ։ Բայց գոյ քեզ հնար զպահակսն պատուարաւ եւ զամուրսն գրաւեալ ունել, եւ զայլ եւս ինչ զոր կամիցիս առնուլ հաւատ. եւ մեք, ասէ, ոչ ինչ ընդ այն տրամիցիմք կարի, քանզի յուշ լինիցի մեզ թէ այնր ամենայնի պատճառք մեք եմք։ Այսեթէ ումեք ի չյանցուցելոցն տայցես զնշխանութիւնն, դու իսկ թերահաւատ գտանիցիս. տես մի իցէ թէ եւ երախտիս ցուցանիցես եւ բա-

ըեկամ չհամարիցին զքեզ . եւ եթէ զգոյշ կամիցիս լինել ի թշնամի եւ ատելի լինելոյ, ապա մի լուծ ի վերայ դնիցես նոցա, զի մի անգոսնիցեն, տես մի պիտոյ լինիցի քեզ եւ զնոսա ի զգաստութիւն ածել առաւել եւս քան զմեզ։

Ասէ զայնպիսի սպասաւորս, ասէ, զորս գիտեմ թէ ի հարկէ սպասաւորութիւն հարկանեն, չախորժելով ի կիր արկեալ վարեմ։ Իսկ զորոց գիտեմ եթէ մտադիւրութեամբ եւ գթով զպատշաճսն կատարեն, թուի թէ նոցա, թէպէտ եւ յանցանիցեն եւս, դիւրին իցէ համբերել, քան եթէ ատելեայն որ լիովն զամենայն ի հարկէ վճարիցեն։ Առ այն Տիգրանէս ասէ. Յումէ՞ այնպիսի բարեկամութիւն կարիցես գտանել, որպիսի ինչ այժմ առ ի մէնջ մարթի ստանալ։ Յայնցանէ, ասէ, ակն ունիմ որոց ոչն երբեք թշնամի լիեալ իցէ, եթէ կամիցիմ երախտաւոր լինել նոցա որպէս դուն այժմիկ ինձ տաս հրաման առնել ձեզ երախտիս։

Մարթիցե՞ս, ասէ, ով Կիւրոս, այժմ ի ժամանակի ատ յայսմիկ գտանել զոք ում շնորհս առնիցես, որչափ հօրն իմում։ Եթէ յանկարծ տայցես ումեք յայնցանէ որոց չիցէ ինչ զրկեալ զքեզ, զարեւ տեսանել, զո՞ր շնորհ համարի-

ցիս թէ ունիցի քեզ։ Եւ զինչ, թէ եւ զորդիս եւս նորա եւ զկին չհանես, ո՞ ի՞նչ է որ վասն նորին քաջ սիրիցէ զքեզ քան զայն որ համարիցի եթէ վայելէր բառնալ նոցա յիւրմէ։ Եւ եթէ ոչ կալցի նա զ՝այսոց թագաւորութիւն, գիտիցես դու զոք որ եւս չար քան զմեզ տրտմիցի։ Ապա յայտ ուրեմն է թէ որ առաւելն տրտմիցի եթէ չկայցէ թագաւոր, նա եւ յորժամ զիշխանութիւնն առնուցու աւելի լինիցի քեզ շնորհակալ։ Եթէ փոյթ իցէ քեզ թէ մի զայս ամենայն խռովեալ եւ աղմկեալ թողցես յորժամ ի բաց մեկնեսցիս, միտ դիր. ասէ, ո՞ր ասա հանդարտութեամբ է, թէ նոր իցէ հարստութիւնն եթէ կայցէ մնայցէ ընդ ելականն։ Եւ եթէ փոյթ իցէ քեզ բազում զօրս հանել, զո՞ զոք համարիցիս հանդէս առնել զօրացն աջող քան զայն որոյ բազում անգամ արարեալ է։ Իսկ եթէ ինչ՞ պիտոյ իցեն քեզ, զումա՞ կարծիցես թէ քաջ մատուցանիցէ քան զնոյն, որ զամենայն իսկ արարան գիտէ։ Ով Կիւրէ, ասէ, զգոյշ լեր մի զմեզ մերժելով քեզոյն իսկ անձին մնաս գործիցես եւս աւելի քան զայն զոր հայրս ձեռնհաս էր քեզ մնասել։

Նա զայն խօսէր, եւ ունկն դնէր Կիւրոս ախորժելով, քանզի զմտաւ ածէր թէ ամենայն ի գլուխ ել, զոր

ինչ միանգամ յանձն առ Կիւրոսարայ առնել. զի յիշեաց եթէ ասէր, թէ եւս աւելի բարեկամ արարից զնա քան որչափ յառաջն էր։ Յայնմ հետէ հարցանէր նա զՀայաստանեայն. Եթէ յանձն առից ձեզ զայդ, ասա դու ցիս թէ որչափ զօրս առաքես, որչափ գանձս տաս ի պատերազմն։ Ասէ Հայաստանեայն. Ձկարեմ ինչ ասել առաւել միամիտ արդարութեամբ, բայց ցուցանել յանդիման զզօրս ամենայն որչափ են, եւ քո տեսեալ, քանի ինչ զօրս հաճոյ թուիցի քեզ տանել, տար. եւ որչափ թողուլ յաշխարհին պահպանութիւն, թող։ Նոյնպէս եւ վասն գանձուցն արժան է զամենայն ինչ որ է, ցուցանել, եւ դու գիտացեալ զայն ամենայն որչափ եւ կամիցիս տարցիս, եւ որչափ կամիցիս, թողցես։

Եւ Կիւրոս ասէ. Լեր ցոյց ինձ քանի զօրութիւն իցէ քո, ասա, որչափ ինչք։ Յայնմ վայրի ասէ. Հայոց ութ հազար հեծեալք են եւ հեւտեւակք չորք բեւրք։ Եւ ինչք, ասէ, գանձիւքն հանդերձ զոր հայրս թող, են ի համար արծաթոյ տաղանդք աւելի քան զերիս հազարս։ Իսկ Կիւրոս ոչ յապաղեաց այլ ասէ. Ոչ էս զօրացդ առաքեսջիր ընդ մեզ, քանզի Բաղդեացիք սահմանորդք պատերազմ տան ընդ ձեզ։

Իսկ յընչից անտի փոխանակ յիսուն տաղանդացն զոր հարկանէիր հարկս, երկպատիկ տայցես Կիւրոսայ, քանզի թողեր զհարկն։ Բայց ինձ, ասէ, տուր այլ եւս հարեւր քանքար փոխ, եւ ես խոստանամ քեզ, եթէ աստուած տայցէ, փոխանակ ընդ որոյ ինձ փոխ տայցես, կամ եւս բազմապատիկ առնիցեմ երախտիս, կամ զինչսն իսկ տաց համարով եթէ կարիցեմ, եւ եթէ ոչ կարիցեմ, ապա յայտնապէս իսկ երեւիցիմ եթէ չիցեմ ձեռնհաս, եւ անիրաւ յիրաւի ոչ դատիցիմ։ Ասէ հայաստանեայն. Ով Կիւրէ, մի այնպիսի ինչ խօսիր, ապա թէ ոչ չտաս ինձ համարձակել. այլ այսպէս համարեաց թէ զոր թողուսն, այն քո է, ոչ ինչ ընդհատ յայնցանէ զոր առեալ երթաս։

Ասէ Կիւրոս. Բայց զի զկինդ առցես քանի՞ ինչս տաս։ Որչափ ինչ, ասէ, կարող իցեմ։ Զի՞նչ տայցես եւ առ զմանկտիդ առնլոյ։ Զու ընդ նոցա, ասէ, որչափ ձեռնհաս իցեմ։ Կիւրոս ասէ, Այս ամենայն երկպատիկ իցէ քան զգոյսն քո։ Բայց դու եկ ասա ցիս ով Տիգրանէ, որչափ տայցես փրկանս վասն զկինդ առնլոյ. եւ նա նորոգ եւս ամուսնացեալ դիպեցաւ, եւ գուցէ անկեալ էր նորա ընդ կնոջն։ Զոյ, ասէ, Կիւրոս եթէ զանձն եւս հասանիցէ տալ փրկանս, տամ. զի մի յաղանուս-

թիւն անկանիցի։ Այսուհետեւ, ասէ, դու զքո կինդ ի բաց տար. չհամարիմ զնա ես ըմբռնեալ ի գերութեան, քանզի ոչ ուրեք հեռացար դու ի մէնջ։ Եւ դու ո հայաստանեայդ, առ տար ի բաց զկինդ եւ զմանկունսն եւ ոչ տայցես ընդ նոցա փրկանս, զի գիտասցեն եթէ ազատացեալք դան առ քեզ։ Այժմ ասէ, կերայք դուք ընթրիս առ իս, եւ յետ ընթրեացն լեցի կամակարութիւն երթալ յո կամ իցէ ձեր. ապա կացին անդէն։

Յետ ընթրեացն յորժամ ի վրանին էին, եհարց Կիւրոս ցՏիգրանէս եւ ասէ. Աղէ ասա դու ցիս, ո՞ւր է այրն այն որ որսակից էր մեր, եւ դու աւելի զարմանալի համարէիր զնա։ Ո՞չ իսկ, ասէ, հայր իմ սպան զնա։ Յո՞ր ապիրատութեան ըմբռնեալ։ Ասաց, թէ խարդաւանեաց նա զիս։ Բայց այսպէս լաւ եւ ընտիր էր նա զի եւ յորժամ մեռանելոցն էր, կոչեաց նա զիս առ իւր, ասէ. Մի դու ինչ ով Տիգրանէս, զի սպանանէ զիս, դժկամակ ընդ հայրդ լինիցիս, քանզի ոչ եթէ առ վատամտութեան ինչ զայն գործէ այլ առ անգիտութեան. զոր ինչ առ ի չգիտանս յանցանիցեն մարդիկ, զայն ամենայն ես ակամայ եւ ի հարկէ համարիմ։ Ընդ այն ասէ այսպէս Կիւրոս. Ո՛հ առնն։

Խօսեցաւ եւ թագաւորն Հայոց ըստ սոցին բանից այսպէս. Ով Կիւրոս որ զարս օտարոտիս ընդ իւրեանց կանանց ըմբռնիցեն, ոչ եթէ զայն ինչ պատճառեալ սպանանիցեն զնոսա զի զդաստագոյնս զկանայսն առնիցեն, այլ զի համարինն թէ բառնան նոքա զայն որ առ նոսա գուրթն էր, եւ նմին իրի իսկ թշնամութեամբ են ընդ նոսա։ Եւ ես, ասէ, խանտացայ ընդ նա, զի թուէր ինձ թէ տայցէ նա առաւել ընդ ինքն զարմանալ քան ընդ իս։ Եւ Կիւրոս ասէ. Թուի ինձ թէ մարդկօրէնս յանցուցեալ իցես, եւ դու Տիգրանէս, ներեա հօրն քում։

Ապա յետ զայս ամենայն ընդ միմեանս խօսելոյ եւ գուրթ եւ խնամ ցուցանելոյ, որպէս ի դէպ էր ի հաշտութենէ անտի, ելեալ ի դեսպական կանամբքն հանդերձ երթային ուրախութեամբ. եւ իբրեւ գային հասանէին յիւրեանս, ոմն զիմաստութիւնն Կաւոսի, ոմն զժուժկալութիւնն, եւ այլ ոմն զմեղմական զգօնութիւնն, մեւս ոմն զգեղն եւ զյաղթանդամութիւնն պատմէր։ Ընդ հարցանէր Տիգրանէս ցկինն, Եւ քեզ, ասէ, գեղեցիկ թըւեցաւ Կիւրոս։ Հայեցայ, ասէ, ընդ նա։ Ասէ Տիգրանէս. Իսկ ընդ ո՞ նայեցար։ Ընդ այն որ ասացն, ասէ, թէ զիմ իսկ անձն տամ փրկանս առ ի չլի-

նելոյ նորա աղախին։ Ապա որպէս ի դէպ իսկ էր, հանդեան առ միմեանս։

Ի վաղիւ անդր պատարագս առաքէր թագաւորն Հայոց Կիւրոսի եւ զօրացն ամենեցուն. եւ իւրոցն պատուէր տայր թէ որք ի մարտ պատերազմի երթալոց իցեն, եկեալ յանդիման լինիցին յերիր աւուր։ Եւ զինչն զոր ասաց Կիւրոս, երկպատիկ համարեցաւ ետ. իսկ Կիւրոս որչափ ասացեալն էր առ, եւ զայլն առաքեաց։ Հարցանէր թէ ո՞ք կայցէ զօրավար զօրացն, որդի՞ն եթէ ինքն։ Նոյն պատասխանի, հայրն ասէր, թէ զոր դուն հրամայիցես. եւ որդին, եթէ ես ոչ թողից զքեզ Կիւրոս, եւ ոչ թէ կապարճակիր եւս հասանիցէ լինել քեզ եւ գալ զկնի քո։ Եւ Կիւրոսի ծիծաղեալ ասէր. Քանոյ ասէ կամիցիս զի լուիցէ կինդ եթէ կահ կրես։ Այլ չիցէ ինչ ասէ պիտոյ լսել. ածից զնա, ասէ, զի մարթիցի տեսանել զոր ինչ ես գործեմ։ Ապա ուրեմն ժամ է ասէ, զկահ ժողովել։ Համարեաց, ասէ, թէ ժողովեալ զամենայն անօթ զոր հօր իմոյ տուեալ իցէ, հասեալ կամք։ Ապա զօրքն հիւրացեալ ննջեցին։

Գ Լ Ո Ի Խ Բ

Ի ՎԱՂԻՒՆ առեալ Կիւրոսի զՏիգրանէս եւ զընտիր ընտիր հեծելոցն Մարաց,

եւ ի բարեկամաց անտի իւրոց որչափ ի դէպ համարէր, պարզեալ անցանէր ընդ աշխարհն, նշմարէր տեսանել թէ ուր զպահակն շինիցէ, եւ ի բարձաւանդակ ինչ երթեալ, կայր հարցանէր զՏիգրանէս թէ որ լերինք ի լերանցն իցեն ուստի Բաղդեացիքն դիմեալ կապուտ կողոպուտ զաշխարհն առնիցեն. եւ Տիգրանէս եցոյց։ Եւ նա միւսանգամ հարցանէր թէ այժմ այն լերինք ամայի իցեն։ Ոչ, ասէ, այլ միշտ իսկ դէպք գոն նոցա որ այլոց գուշակեն, զոր ինչ տեսանեն։ Եւ զի՞նչ, ասէ, գործեն եթէ զգան։ Ընթանան, ասէ, ի բարձաւանդական որչափ իւրաքանչիւր ոք բաւական իցէ։ Օ՛յս ամենայն լուեալ Կիւրոսի, նայեցեալ տեսանէր զբազում կողմանս Հայաստան աշխարհին անապատ զի չեն ի գործ անկեալ վասն թշնամւոյն. եւ ապա դառնայր ի բանակ անդր, եւ յետ ընթրեացն ի քուն եղեն։

Ի վաղիւ անդր ինքն իսկ գլխովին Տիգրանէս եկեալ հասեալ կայր պնդակազմն, եւ չորեքհազար հեծեալք գումարեալ էին եւ բեւր աղեղնաւորք, եւ այլ եւս շերտաւորք նոյնչափ։ Իսկ Կիւրոս մինչ դեռ ի մի վայր ժողովէին, յաշտ առնէր, եւ իբրեւ բարւոք էին նուէրքն, կոչէր զՊարսից զօրավարս եւ զՄարաց. իբրեւ միահամուռ եկին կա-

ցին, այսպիսի ինչ ճառ արկեալ խօսէր։ Ամբ բարեկամք, լերինքս զոր նշմարեմք Բաղդեացւոց են. եթէ զսոսա ըմբռնիցեմք եւ լինիցի ի բարձու անդ մեր ամուրս, հարկ է այնուհետեւ երկոցունց իսկ եւ Հայոց եւ Բաղդէացւոց անսալ մեզ։ Արդ նուէրքն բարւոք են մեզ. իսկ առ ի վճարելոյ գործոյն այնմիկ մարդկօրէն յօժարութեամբ ոչ ինչ այնպէս մեծ զօրաւիգն օգնականութեան իցէ իբրեւ զերագութիւնն։ Զի եթէ աճապարիցեմք կանխել մինչ չեւ թշնամեացն դումարեալ լիցէ, եւ ելանեմք, կամ ամենեւին իսկ անջան պատերազմաւ ըմբռնիցեմք զբարձունսն, կամ սակաւաւորք իսկ եւ անզօրք թշնամիքն իցեն. եւ արդ չիք ինչ ի վաստակոց անտի դիւրագոյն եւ առանց վշտաց աշխատութիւն քան զժուժկալելն ի փութալն։ Այսուհետեւ ի զէն ընթացարուք. եւ դուք, Մարք, երթայք յահեակ կողման մերում. եւ դուք Հայք, կէսք յաջմէ եւ կէսքդ յառաջոյ ընթացարուք. եւ դուք հեծեալքդ ի թիկանց կուսէ եկայք ստէպ զհետ, զի վարեալ տանիցիք զմեզ ի վեր եւ մի տայցէք ումեք մեղկել։

Զայս ասէր Կիւրոս եւ վարեալ երթայր ուղղորդ զգունդսն կարգեալ։ Իսկ Բաղդեացիքն իբրեւ գիտացին թէ գիմեալ գան ի վեր. իսկ եւ իսկ վաղ-

վաղակի նշանակէին եւ զաղաղակ ե-
դեալ առ միմեանս գոչէին, եւ անդէն
առ միմեանս համագունդ միանգամայն
ժողովէին։ Իսկ Կիւրոս յորդորէր. Ո՛ռք
Պարսիկք, սոքա նշանակեն մեզ ճե-
պել. զի եթէ աճապարեսցուք ի վեր
ելանել, ոչ ինչ ստնանել կարիցէ թշնա-
մեացն բռնութիւնն։ Ունէին Ղաղդեա-
ցիքն ասպարս եւ սրբինս երկուս եր-
կուս. եւ պատմեն թէ նոքա պատե-
րազմօղք քան զամենեսին որ յաշ-
խարհի անդ են, իցեն. եւ վարձկանու-
թեամբ երթայցեն ի ճակատս, յորժամ
կարօտ ոք նոքօք իցէ. վասն զի պատե-
րազմօղք իսկ են եւ աղքատք եւ տա-
ռապեալք. քանզի եւ աշխարհն իսկ
նոցա լեռնային է. եւ սակաւ ինչ մասն
է յորում արարք դոն։

Իբրեւ որ շուրջ զԿիւրոսիւն էին ի
բարձաւանդակսն մօտ հասանէին, Տի-
գրանէս որ ընդ Կիւրոսի երթայր, ասէ.
Դիտեա՛ս, ասէ, զի ընդ հուպ իսկ հա-
սանէ կռուել, եւ Հայք չլինին դիմա-
կալ թշնամեացն. եւ Կիւրոս, ասէ, թէ
գիտեմ. եւ անդէն հրաման տայր Պար-
սից կազմ եւ պատրաստ լինել, զի ան-
դէն պիտոյ իցէ զհետ մտանել, քան-
զի Հայք փախստեամբն ածցեն զհա-
կառակորդս մինչ զի մօտ եկեսցեն հաս-
ցեն առ մեզ. ապա վարեալ խաղային
Հայք։ Իսկ ի Ղաղդեացւոց անտի որ

անդն կային, իբրեւ մօտ հասանէին Հայքն վաղվաղակի յարձակէին, որպէս սովորն էին, ի նոսա. եւ Հայք զոր օրինակ սովորքն իսկ էին, զդէմ ոչ կալան։

Իսկ իբրեւ Ռաղդեացիքն որ զՀետն պնդեալ էին տեսին զՀակառակորդսն սուսեր ի ձեռս դիմեալ ի վեր, ոմանք որ մօտն կային վաղվաղակի սատակէին, կէսք փախստեայ ելանէին, եւ կէսք ըմբռնեցան իսկ ի նոցանէ, եւ փութանակի զբարձունսն հասեալ ունէին։ Եւ իբրեւ հասին կալան զբարձաւանդակսն, որ շուրջ զԿիւրոսիւ էին հայեցեալ տեսանէին զՌաղդեացւոցն բնակութիւնսն եւ ազդ լինէր նոցա թէ ի մօտաւոր տանց անտի գնան փախստեայք։ Իբրեւ ամենայն զօրքն ի մի վայր հասին հրամայեաց Կիւրոս ճաշ ուտել. եւ իբրեւ ճաշեցին, ի միտ առեալ թէ յորում վայրի Ռաղդեացւոց դէտքն էին, տեղին ամուր է եւ յուռթի, անդէն որմ ածեալ պարսպէր պահակս, եւ Տիգրանայ հրաման տայր առաքել առ հայր իւր եւ պատուիրել թէ որչափ հիւսունք իցեն եւ գաղատոսք առեալ հասցէ։

Եւ թայր պատգամաւորն առ թագաւորն Հայոց, բայց Կիւրոս այնոքիւք որ մօտ էին, պարիսպ ածէր։ Յայնմ վայրի ածին առ Կիւրոս զգե-

բին կապեալ, եւ զոմանս եւս վիրաւորս, իբրեւ եւոես վաղվաղակի հրամայեաց զկապանսն լուծանել, եւ վիրաւորացն բժիշկս կոչել եւ դարման տանել։ Ապա խօսէր ընդ Բաղդէացւոցն, թէ եկեալ եմ ոչ զի կորուսանել ինչ զձեզ կամիցիմ, եւ ոչ կարօտեալ ինչ տալոյ պատերազմ, այլ զի կամիմ Հայոց եւ Բաղդեացւոց խաղաղութիւն առնել։ Արդ մինչ չեւ կալեալ բարձանցդ, գիտեմ զի ոչ ինչ դուք կարօտ խաղաղութեան էք, քանզի ձերն յամրի կայ, եւ զ Հայոցն ածէք բերէք տանիք։ Բայց այժմ տեսէք թէ յորում վայրի իցէք. արդ ես արձակեմ զձեզ ի տունս ձեր որ ըմբռնեցայքդ, եւ տամ ձեզ ընդ այլոց եւս Բաղդեացւոց խորհուրդ առնուլ, թէ կամիցիք տալ ընդ մեզ մարտ պատերազմի եթէ բարեկամս լինել։ Եթէ ընդ պատերազմ կամիցիք, մի գայցէք յետս առանց զինուց, եթէ իմաստունք իցէք։ Եթէ խաղաղութիւն ձեզ պիտոյ համարիցիք, եկայք առանց զինուց. եւ եթէ բարեկամք լինիջիք փոյթ լիցի ինձ այնուհետեւ զի ամենայն ինչ ձեր բարւոք իցէ։

Իբրեւ զայս լուան Բաղդէացիքն առաւել գովեցին եւ բուռն հարին զաջոյ ձեռանէ Կիւրոսի եւ մեկնեցան գնացին յիւրեանս։ Իսկ թագաւորն Հայոց իբրեւ լուաւ զկոչն Կիւրոսի եւ

զերս եւ զարուութիւնս առեալ զՀիւսունն եւ զայլն եւս ամենայն որչափ ինչ պիտոյն համարեցաւ, չու արար եկն առ Կիւրոս վաղվաղակի։ Յորժամ ետես զԿիւրոս ասէ. Ով Կիւրէ զիարդ մարդիկ սակաւ ինչ մարթեն ի հանդերձելոց անոտի կանուխ տեսանել եւ բազում ինչ ձեռնամուխ լինին ժտել եւ գործել։ Դանդի եւ իմ այժմ ձեռն ի գործ արկեալ ազատութեան հնարս մենքենայել, ծառայ եղէ որպէս ոչն լիեալ երբեք։ Դու ապա յորժամ եկաք անկաք ի բուռն, հաստատութեամբ կարծէաք թէ սատակեցաք կորեաք, իսկ այժմ հոյակապք եւ երեւելիք եղեաք որչափ ոչ երբեք լեալ էր մեր։ Զի որոց ոչ երբեք դադարեալ էր ի բազում չարիս մեզ առնելոյ, այնպէս տեսանեմ այժմ զնոսա որպէս են ըղձանայի։ Դու դու, ասէ, այդմ գիտակ լիջիր, Կիւրոս, թէ ես առ ի մերժելոյ զՀաղդէացիսդ ի բարձաւանդակաց աստի, բազմապատիկ ետու ինչս, քան զոր դուդ այժմ առ յինէն ունիս. եւ զոր խոստացար առնել բարութիւնս մեզ, յորժամ զինչն առնոյիր, ի գլուխս ելին։ Որպէս զի օգտեալք այլ եւս երախտեաց շնորհս քեզ ցուցանիցեմք, զորս ամօթ իսկ համարիմ չհատուցանել քեզ, եթէ արդարեւ չարք չիցեմք, եւ եթէ հատուցանիցեմք եւս ոչ այնպէս տր-

ժանի ինչ երախտագործիդ գտանի-
ցիմք այնպիսի ինչ արարեալ։

Օ՛այն խօսէր թագաւորն Հայոց, եւ
զային հասանէին Բաղդեացիքն, ա-
ղաչէին զԿիւրոս խաղաղութիւն առնել
ընդ նոսա. եւ Կիւրոս հարցանէր ցնո-
սա. Ընդէ՞ր կամ վասն ո՞յր, ով Բաղ-
դէացիք այժմիկ խաղաղութեան ցան-
կացեալ էք, բայց յայն սակս զի համա-
րիք իմն թէ եւս զգուշագոյն հասանի-
ցէ կեալ յետ խաղաղութեան լինելոյ
քան եթէ ի պատերազմի, քանզի եւ
մեք զդոյն ասէաք։ Ասեն Բաղդեա-
ցիքն թէ ունիմք այլ եւս ինչ։ Դունա
ասէ. Իսկ արդ զի՞նչ թէ եւ այլ եւս
բարութիւնք յաւելցին ի ձեզ խաղա-
ղութեամբն։ Առաւել եւս, ասեն,
քաջ ուրախ լինիցիմք։ Հի՞մ աղքատք
իցէք, ասէ, բայց զի չիք ձեր երկիր
քաջաբեր։ Յանձին կալան եւ զայն։
Կիւրոս ասէ. Կամիք տալ զմաքսն,
զի իշխանութիւն լիցի ձեզ զՀայոց
երկիրն ի գործ արկանել որչափ եւ
կամիցիք։ Ասեն Բաղդէացիքն եթէ
գիտիցեմք թէ չզրկիմք։

Իսկ դու ասէ, ով Հայաստանեայդ.
կամի՞ս եթէ որ այժմ դատարկ երկիրս
է արդիւնական լինիցի, եւ որ ի գործ
արկցեն տացեն զսակ համարոյն։ Ասէ
թագաւորն Հայոց թէ բազում օգուտ
է այն, քանզի բազմապատիկ յաճա-

խեսցէ հասն։ Դուք, ասէ, ով Քաղ-
դէացիք զաղնիւ լերինսն ունիք, կամիք
տալ արօտս զնոսա Հայոց, թէ որ ա-
րածենն հատուցանիցեն ձեզ զգինսն.
ասեն Քաղդեացիքն, թէ յաճախ օ-
գուտ շահիմք առանց վաստակոց։
Դու դու, ասէ, ով հայատանեայդ, կա-
միս զնոցա արօտս ի կիր արկեալ վա-
րել, ընդ սակաւիկ ինչ Քաղդեացւոց
շահից առաւել եւս յոյժ իցես շահելոց։
Այո, ասէ, եթէ կարիցեմք զգուշու-
թեամբ արածել։ Այնուհետեւ, ասէ,
զգուշութեամբ արածէք, եթէ զբար-
ձունսն ունիցիք թիկունս։ Ապա յանձն
առ թագաւորն Հայոց։

Այլ ասեն Քաղդէացիքն, թէ չկա-
րեմք մեք զգուշութեամբ ի գործ ար-
կանել ոչ եթէ զնոցա այլ ոչ թէ զմեր
իսկ երկիրն, եթէ զբարձաւանդակսն
նոքա ունիցին։ Ապա թէ ձեզ, ասէ,
բարձունքն թիկունք իցեն։ Մեզ, ա-
սեն, այսպէս բարւոք իցէ։ Ասէ թա-
գաւորն Հայոց. Բայց ոչ մեզ, ասէ,
յայնժամ լաւ իցէ, եթէ դոքա կալցին
զբարձունսն, մանաւանդ իսկ թէ պա-
րբսպեալ եւս իցէ։ Դու Կիւրոս ասէ. Եւ
արդ ես այսպիսի ինչ գործեցից, ոչ
միում ի ձէնջ տաց զբարձաւանդակսն,
այլ մեք պահիցեմք զնոսա. եթէ զրկի-
ցէ ոք ի ձէնջ, մեք ընդ նոսա որ զրկինն
լինիցիմք։

Իբրեւ լուան զայն երկոքեան, զովեցին եւ ասեն, թէ այնպէս եւեթ հաստատուն խաղաղութիւն լինիցի, եւ յետ այնորիկ հաւատ տային եւ առնոյին, եւ դաշինք ի միջի կռէին ազատս ի միմեանց լինել երկոցունց կողմանց, եւ ամուսնութեան եւ մշակութեան եւ ճարակաց եւ հասարակաց թիկանց օգնականութեան, եթէ զրկիցի ինչ մի կողմն։ Յայնժամ այսպէս վճարեցաւ, եւ այժմ նոյնպէս կան մնան որ յայնժամն եղեն ուխտք Քաղդէացւոց եւ Հայոց թագաւորին։ Եւ իբրեւ դաշինք ի միջի կատարէին, իսկ եւ իսկ երկոքին կողմանքն մտադեւր ածէին պարիսպ զպահանոցն, եւ զպէտս պէտս կարեւորս համօրէն ի ներքս տանէին։

Իբրեւ եհաս երեկոյն, զերկոսին կողմանան առնոյր ընդ իւր ուտել ընթրիս ի միասին իբրեւ բարեկամս։ Եւ յընթրիս անդ ասէ մի ոմն ի Քաղդէացւոց թէ ամենեցուն ի մէջ ցանկալի է այս ամենայն, բայց իցեն ոմանք ի Քաղդէացւոցն որք յաւէ եւ յաւարէ կեան եւ գործել չգիտեն, եւ կարեն իսկ ոչ. քանզի սովոր են ի պատերազմ կեալ։ Քանզի միշտ իսկ աւար հարկանէին եւ վարձկանք լինէին Հնդկաց թագաւորին, քանզի ընչաւէտ է, ասեն, այրն, բազում անգամ եւ Ամդա-

հակայ։ Եւ Կիւրոս ասէ. Ո՞ւ է, զի եւ ոչ այժմ իմ վարձկանք լինիցին, զի ես տաց այնչափ որչափ այլոց ուրուք չիք տուեալ երբեք աւելի ինչ։ Յանձն առին եւ ասեն թէ բազումք են որ կամին։

Եւ այսպէս ճառ արկեալ խօսէին ընդ միմեանս։ Իսկ Կիւրոս իբրեւ լուաւ եթէ Բաղդէացիքն բազում անգամ գնան առ արքայն Ինդկաց, յիշեաց եթէ եկեալ էին ի նմանէ լրտեսք ի Մարս լրտեսել զերս Մարացն եւ գնացին առ թշնամիսն, զի եւ զնոցայն տեսցեն, եւ կամեցաւ ուսանել թէ զինչ վասն նորա գործիցէ թագաւորն Ինդկաց։ Սկիզբն արար բանիցն այսպիսի ինչ օրինակ։ Ով Հայաստանեայդ եւ դուք Բաղդեացիքդ, ասացէք ցիս գոգէք, եթէ առաքիցեմ ես զոմն յիմոց աստի առ արքայն Ինդկաց, առաքիցէք եւ ի ձերոց այտի առաջնորդս ի ճանապարհին, որք լինիցին գործակից, զի առնիցի մեզ ի թագաւորէն Ինդկաց զոր ինչ ետն կամիմ։ Բանզի կամիմ ես թէ յաւելցին ինչք մեր. զի եւ զվարձն աննախանձ տաց որոց պարտ իցէ տալ, եւ մեծարել եւ պարգեւս արժանաւորաց ի զօրականացն բաշխել։ Վասն այսր ամենայնի կամիմ յաճախ ինչս ունել. դանձք պիտոյ են ինձ։ Ի ձերդ մտադիւրութիւն

անխայեմ, քանզի բարեկամն համարիմ զձեզ, բայց ի Հնդկաց թագաւորէն յօժարութեամբ առնում, եթէ տայցէ։ Արդ հրեշտակն, որում առաջնորդս իսկ տալ հրամայեմ ձեզ, եւ գործակիցս լինել; անդր երթեալ խօսեսցի այսպէս զսոյն ձեւ օրինակի բանից։

Կիւրոս առաքեաց զիս առ քեզ, Հնդկաց արքայ, ասէ. Դանձք պիտոյ են ինձ, զի առիս այլ եւս զօրս անդրստին ի Պարսից աշխարհէն. քանզի եւ առիս իսկ, ասէ։ Դու արդ եթէ յղեսցես զու նմա որչափ քեզ հաճոյ թուեսցի, եթէ վախճան բարութեան շնորհեսցեն նմա դիքն, ջան ի մտի ունիցի այսպէս առնել, զի դա՛ որ զշնորհսրդ առնիցես նմա, ի բարութեան իցես։ Նմն զայս ինչ ասիցէ։ Իսկ ձերովքն դուք որ ինչ օգուտ ձեզ թուիցի, զայն առաքեցէք։ Դու եթէ առնումք, ասէ, ի նմանէ, յառաւելութենէ անտի արկանիցեմք ի կիր, եթէ ոչ առնուցումք, գիտասցուք թէ եւ ոչ մի շնորհ նմա պարտիցիմք, այլ իշխանութիւն իցէ մեզ վասն նորա, առ ի մեր օգուտ զամենայն կարգել։

Այս ասէր Կիւրոսի, քանզի համարէր թէ որք երթանն ի Հայոց անտի եւ ի Բաղդեացւոց զայնպիսի ինչ պատմեսցեն զնմանէ, որպիսի ինչ եւ ինքն ցանկայր թէ ամենայն մարդիկ

խօսիցին զնմանէ եւ լուիցեն։ Ապա յորժամ պատշաճն էր, մեկնեցան ի միմեանց եւ հանդեան։

ԳԼՈՒԽ Գ

Ի ՎԱՂԻՒ անդր առաքէր Կիւրոս զպատգամաւորն պատուիրեալ որ ինչ յառաջագոյնն խօսեալ էր. իսկ թագաւորն Հայոց եւ Քաղդէացիքն յղէին ընդ նմա զորս բաւականս իսկ համարէին գործակից լինել եւ զպատշաճան զԿիւրոսէ խօսել։ Յայնմ հետէ ի գլուխ հանեալ Կիւրոս զպահակն բազում պահապանօք եւ ամենայն կարեւորն պիտոյիւք, եւ իշխան մար թողեալ նոցա, քանզի Կիաքսարայ իսկ զայն առաւել հաճոյ համարէր, ելեալ ի բաց գնայր հանդերձ մեւս եւս զօրօք զոր ունէր ընդ իւր ի գալն իւրում, եւ զոր ի Հայոց առ, եւ ի Քաղդէացւոց անտի չորս հազարս որ քան զայլսն ամենեսին աղնուագոյնք թուէին։

Իբրեւ ի շէնն էջ, ոչ ոք կայր ի ներքս ի Հայոց ոչ այր եւ ոչ կին, ամենեքին ընդ առաջ ելանէին, ուրախ լեալք ընդ խաղաղութիւնն, եւ բերէին ածէին առաջի թէ արժանի ինչ իւրաքանչիւր ոք ունէր։ Բայց թագաւորն Հայոց չլինէր ընդ այն դժկամակ, քանզի դիտէր թէ առաւել ուրախ առնի Կիւրոս

ընդ ամենեցունցն մեծարանս։ Եւ ապա ընդ առաջ ելանէր եւ կին թագաւորին Հայոց դստերօքն եւ կրտսեր որդւովն եւ օրիորդք թագաւորազունք, եւ հանդերձ այլով պատարագօք բերէր ոսկի զոր յառաջնում նուագին չառ յանձն ընդունել Կիւրոս։

Եւ Կիւրոսի տեսեալ ասէ. Ոչ եթէ այսպիսի ինչ առնիցէք, ասէ, զի ես վարձու անցեալ շրջեալ ընդ այս երախտիս առնիցեմ. այլ կին դու որ զինչդ զայդ ունիս զոր բերեաք, տար, եւ մի տայցես Հայոց թագաւորին զնոյն փորել հանել։ Առաքեա զորդին քո նոքիմբք գեղեցիկ յօրինեալ եւ կազմեալ ի մարտ պատերազմի։ Եւ ի մնացորդաց անտի ստացիր եւ քեզ եւ առնքում եւ դստերաց քոց եւ ուստերաց, զոր ստացեալ եւ նովին ընդ զարդ եկեալ բարուք եւ հեշտական զաշխարհս անցուցանիցեն. եւ բաւական լինիցի, ասէ, զդիակունս ընդ հողով ծածկելոյ, յորժամ իւրաքանչիւր ոք ի կենաց վճարիցի։

Այս ասեր եւ անցեալ երթայր։ Յուղարկ երթայր թագաւորն Հայոց եւ այլ եւս ամենայն մարդիկն եւ անուանեալ կոչէին զնա բարերար եւ երախտաւոր եւ այր ընտիր. եւ զայս առնէին մինչեւ յաշխարհէն արձակեցին։ Առաքեաց ընդ նմա թագաւորն Հայոց ա-

ելի զօրս զի խաղաղութիւն եղեւ յաշ-
խարհին։ Եւ այնպէս երթայր բազում
ընչիւք ոչ որովք առն եւեթ, այլ եւս
յաճախագոյն քան զնոցնս ամբարեալ
մթերս ի ձեռն կարգաց պարկեշտն
գնացից, առ առնլոյ յորժամ պիտոյ
լինիցի. եւ ապա զօրաժողով ի սահ-
մանսն եղեն։

Ի վաղիւ անդր զզօրսն եւ զգանձսն
առ Կիաքսարէս յղէր. եւ նա մօտ էր
որպէս եւ ասաց իսկ. ինքն ընդ Տի-
գրանայ եւ ընդ քաջացն Պարսից որս
առնէր ուր եւ երէոց պատահէին եւ
ուրախ լինէր։ Յորժամ ի Արս հա-
սանէր, զինչսն իւրոց հազարապետացն
տայր. որչափ բաւական իւրաքանչիւր
ումեք համարէր. որպէս զի եւ նոքա
պատուեսցեն եթէ մեծացուսցեն զո-
մանս յայնցանէ որ ընդ իւրեամբք ի-
ցեն։ Զանգի այսպէս իսկ համարէր,
եթէ իւրաքանչիւր զիւր մասն գոհու-
թեան արժանի առնիցէ, համօրէն իսկ
բարեաւք իցեն։ Եւ ինքն իսկ թէ լաւ
ինչ ուրեք տեսանէր ի զօրու, պարգեւս
արժանաւորացն տայր, զմտաւ ածեալ
թէ որ ինչ լաւութիւն զօրացն իցէ,
նովին ամենեւին ինքն զարդարիցի։ Եւ
յորժամ տայրն նոցա զոր առեալ էր,
խօսէր այսպիսի ինչ ի մէջ հազարապե-
տացն եւ զօրագլխացն եւ ամենեցուն
զոր պատուականս համարէր։

Ընք բարեկամք, մեզ թուի թէ այժմ ուրախութիւն իմն եկեալ հասեալ է, եւ գոյաւորութիւն եւս քան զեւս յաճախէ, քանզի ունիմք որով եւ պատուել մարթայցեմք զորս կամիցիմք պատուել. եւ ի պատիւս եւ ի մեծարանս վայելիցեն ամենեքին որպէս իւրաքանչիւր ոք արժանաւոր իցէ։ Ամենեւին զմտաւ ածցուք թէ որպիսի ինչ գործք այնպիսի բարութեանց իցեն պատճառք։ Զի եթէ միտ եդեալ նայիցիք, գտանէք թէ տքնելն ուր պիտոյ էր, եւ վաստակելն եւ ճեպել եւ չտալ տեղի հակառակորդացն։ Այսպէս պարտ եւ պատշաճ է այսուհետեւ արս ընտիրս լինել, ի միտ առեալ եթէ մեծամեծար հեշտականութիւն եւ լաւութիւնս մեծամեծս հնազանդութիւնն եւ ժուժկալութիւնն եւ որ ի դէպ ժամու աշխատութիւնք են եւ վիշտք, զայն նոքա մատուցանեն։

Զանզի զմտաւ ածէր Կիւրոս եթէ քաջ կազմեալ պատրաստեալ են զօրականացն անձինք առ զինուորութեան աշխատութեանց համբերել, եւ ոգիք նոցա առ քամահել զթշնամիսն, զի եւ խելամուտ եւս էին իւրաքանչիւր իւրում սպառազինութեանն պատշաճիցն, եւ զամենեսին իսկ տեսանէր կազմս հնազանդ իշխանացն լինել։ Նոքիմքեք իմն ցանկայր գործ ինչ ընդ

թշնամիս վճարել, ի միտ առեալ թէ ի
յամելն բազում անգամ եղծանիցի ինչ
ի գեղեցիկ կազմածոյ անտի իշխանացն։
Եւ հայեր եւս եթէ բազումք պարծին
այնոքիւք որովք միմեանց ոսոխ ելանեն,
եւ խանտան ընդ միմեանս զօրքն. եւ
վասն այսր ամենայնի իսկ կամէր տա-
նել զնոսա վաղվաղակի յերկիր թշնա-
մեացն, քանզի գիտէր թէ հասարա-
կաց վիշտք սիրելիս առնիցեն, եւ ոչ
եւս այնուհետեւ այնոցիկ որ զինուքն
զարդարեալ իցեն, չարակնիցեն եւ ոչ
որոց ի փառաւորութեան վայելիցեն,
այլ մանաւանդ յարդեն եւս այնպի-
սիքն եւ սիրեն զնմանիսն, զի համա-
րին իսկ զնոսա հասարակաց բարու-
թեան գործակիցս։

Նախ զզօրսն ապառազէն վառեալ
զարդարէր, կարգէր կազմէր աղնուա-
գոյն ճակատ յարդարէր. ապա ի մի
վայր կոչէր զիշխանս բիւրաւորացն եւ
զհազարապետսն եւ զզօրավարս եւ
զզօրագլուխս. քանզի նոքա զատ եւ
ուրոյն էին ի համարոյ անտի գնդացն։
Եւ յորժամ հասանէր զօրավարին հնա-
զանդ լինել կամ երթալ ազդ առնել
ինչ, ոչ եթէ անտէրունչ թողոյին,
այլ երկոտասանապետօքն եւ վեշտա-
սանապետօք բնաւ իսկ մնացեալքն
յարդարէին։ Իբրեւ եկին ժողովեցան
որ աւագքն էին, ածեալ ցուցանէր

նոցա որ ինչ բարեղքն էր, եւ ցուցանէր թէ ուր ամուր են եւ հկօր թիկունք օգնականութեանն։ Զի իբրեւ նոցա եւս արար ցանկալ գործել գործ ինչ, հրաման տայր այնուհետեւ երթալ ի գունդսն եւ ուսուցանել իւրաքանչիւր իւրոց զոր ինչ իւրն ուսուցեալ էր նոցա, եւ փութալ յօժարութիւն ամենեցուն ի միտս արկանել ի պատերազմ գնալոյ, զի մտադիւրագոյնս ամենեքին դիմեսցեն եւ ի վաղորդայն անդր հասեալ կայցեն ի դրունս Կիւրոսարայ։ Ապա երթեալ նոյնպէս առնէին։

Ի վաղիւ անդր եկին հասին որ աւագքն էին ի դրունսն։ Ընդ նոսա եմուտ եւ Կիւրոս առ Կիւրոսարէս, եւ սկիզբն առնէր խօսելոյ այսպէս։ Գիտեմ, ասէ, ո Կիւրոսարէ, թէ զոր ասելոց իցեմ, ոչ սակաւ ինչ հաճոյ թուիցի քեզ որպէս եւ մեզ։ Այլ թերեւս պատկառիցես ասել զի ծանրացեալ նեղեալ ինչ կարծիցիս զի կերակրեսն զմեզ, յորժամ յիշեսցես ասպատակ դնել։ Զանգի դու լուռ իսկ կաս, ես ընդ քո եւ ընդ մեր խօսեցայց։

Մեզ ամենեցուն այսպէս թուի. քանզի կազմեցաք պատրաստեցաք, մի՛ յորժամ հասանիցեն թշնամիք յաշխարհն մեր, յայնժամ կռուիցիմք, եւ մի նստիցիմք աստ անսալ մնալ նոցա, այլ խաղալ գնալ վաղվաղակի

յերկիր թշնամեաց։ Զի այժմ քան-
զի ի քում աշխարհին կամք բազում
ինչ ի քոյոց անտի ակամայ եղծանեմք
ի հարկէ։ Ապա թէ ի թշնամեաց եր-
կիր երթայցեմք զնոցայն խանդարեմք.
քանզի այժմ դու մեզ տաս համբարս
եւ առնես յաճախ ծախս. եթէ զօրա-
ժողով ի մարտ պատերազմի գնայցեմք,
ի թշնամեաց անտի կերակրիցիմք։ Դու
եթէ մեծ եւս ինչ վիշտք անդ լինե-
լոցէին քան ասա, թերեւս յիրաւի
զգուշութիւնն ընարէր ոք։ Բայց
այժմ ընդ մի համար է, թէպէտ ասա
կայցեմք թէպէտ ի նոցա երկիր երթեալ
ընդ առաջ պատահիցեմք նոցա։ Դու
մեք նոյնպիսիք իցեմք յորժամ պատե-
րազմիցիմք, եթէ յետ այսր գալոյ ի
դիմի հարկանիցիմք նոցա, եթէ ի նո-
սա երթեալ ճակատ յարդարիցեմք։

Յայժ իսկ ազնուագոյնք եւ զօրա-
գոյնք զօրականացն ոգիքն լինիցին ե-
թէ ի թշնամեաց վերայ երթայցեմք,
եւ ոչ ակամայ թուիցիմք տեսանել
զհակառակորդսն։ Դու կարի մանաւանդ
եւ նոքա ի մէնջ զահի հարկանիցին,
յորժամ լսիցեն թէ ոչ երկուցեալ զար-
հուրեցաք ի նոցանէ եւ ի մերում աշ-
խարհին նստաք, այլ յորժամ զդաստ
լինիցի մեզ զնոցանէ թէ մօտ հասեալ
կան, երթեալ պատահիցեմք նոցա,
զի վաղվաղակի իսկ գիրկ ընդ խառն

լինիցիմք, եւ մի մնայցեմք մինչեւ խան-
գարելոյ աշխարհիս մերում, այլ աճա-
պարեալ կապուտ կողոպուտ զաշխարհն
նոցա առնիցեմք։ Ա՛յս եւ զնոսա երկիւ-
ղածս առնիցեմք, եւ զմեզ իսկ համար-
ձակագոյնս. բազում իմն մեզ զայն ես
առաւելութիւն համարիմ, եւ զվիշտն
մեզ փոքր հաշուիմ եւ հակառակոր-
դացն մեծամեծ տագնապ, մանաւանդ
թէ յաճախ վիշտս։ Այրս ցանգ ասէր
եւ դու ասես եւ այլք ամենեքին խո-
ստանան, թէ պատերազմունք ի մտաց
ընտրին, քան թէ ի մարմնոյն ուժոյ։

Ա՛յս այսպէս զսոյն ձեւ խօսեցաւ։
Տայր պատասխանի Կիւքսարէս. թէ
նեղիմ ես ի կերակրելոյ զձեզ, չէք ինչ
կարծեօք։ Զ՚նալ յերկիր թշնամեաց
եւ ինձ ամենեւին բարեւք իսկ թուի
թէ իցէ։ Ասէ Կիւրոս. Արդ քանզի
զնոյն միտս ունիմք, ժողովեսցուք միան-
գամայն զկահ եւ զկազմած, եւ եթէ
հրամանք դիցն բարբառիցին փութա-
նակի երթալ, ելցուք վաղվաղակի։

Ապա զօրացն պատուէր տուեալ
զկահ եւ զկազմած ամփոփել, զոհս
մատուցանէր զառաջինն Արամազդայ
թագաւորի, ապա եւ այլոց եւս դիցն
աղաչէր հաշտ լինել, եւ զօրացն զօրա-
վար լինել եւ թիկունս եւ զօրաւիգն
օգնականութեան, եւ լաւութեանց
խրատիչս։ Ա՛ղքօք հանդերձ եւ զդիւ-

ցաղունսն աղաչէր եւ փարելի առնէր զԱ՛ստուած աշխարհին բնական եւ զենամակալս։ Եւ իբրեւ սրբեաց նուիրեաց, եւ գումարեալ կայր զօրն առ սահմանօքն, ապա հմայիւք մոտանէր յերկիրն թշնամեաց։ Եւ յորժամ անց տագնապաւ ընդ սահմանսն անդէն զերկիր հաշտ առնէր նուիրօք եւ զդիսն զոհիւք, եւ զդիւցազունս զԱ՛սորեստանեաց կողմանց բնակիչս ցածուցանէր։ Իբրեւ զայս առնէր, միւսանգամ զոհս գաւառական Ա՛րամազդայ մատուցանէր, եւ որ այլ ոք ի դիցն երեւեցաւ, չարար զնմանէ անփոյթ։

Իբրեւ ամենայն ինչ ի գլուխ ելանէր, իսկ եւ իսկ զհեռեւական յառաջ մատուցեալ ոչ բազում ճանապարհ, խաղացեալ երթային։ Եւ երիւարօքն ասպատակ եղեալ բազում եւ ազգի ազգի առ աւար ապուռ ժողովէին ապա այսրէն արշաւեալ գային եւ ունէին ընդ իւրեանս առատութեամբ զպէտսն կարեւորս, եւ կապուտ կողոպուտ զաշխարհն առնէին. եւ կային մնային թշնամեացն։ Յորժամ պատմեցաւ թէ մերձեցան թշնամիքն, եւ չեն քան զտասն աւուրց գնաց ճանապարհի ի բացեայ. ասէ յայնժամ Կիւրոս. Ո՛ Կիաքսարէ, ժամ է ընդ առաջ երթալ, եւ մի կարծիս տալ հակառակորդացն, եւ մի մերոցն եթէ առ ահի չհարկանիմք ի

դիմի. այլ յայտ յանդիման երեւիցիմք եթէ ոչ ակամայ մարտընչիմք։

Իբրեւ հաճոյ թուեցաւ այն Կիաքսարայ. այնպէս միշտ ճակատեալ երթային օր ըստ օրէ այնչափ որչափ հաճոյ թուէր նոցա. եւ ընթրիս ցանգ յարեւու անդ առնէին. իսկ կրակ գիշերայն ի բանակի չվառէին։ Վառէին առաջի բանակին զի նշմարիցեն ի ձեռն հրոյն եթէ մերձենայցեն ոմանք գիշերի, եւ ինքեանք մերձեցելոցն չերեւիցին։ Բազում անգամ եւ յետոյ կուսէ բանակին խարոյկ լուցանէին, վասն զթշնամին խաբելոյ. որպէս երբեմն լրտեսքն առաջին պահապանացն դիպէին. վասն յետուստ կողմանէ խարուկացն լուցանելոյ, եւս հեռագոյն ի բանակէ անտի համարէին լեալ։

Ասորեստանեայքն եւ որ ընդ նոսա էին, յորժամ մօտ միմեանց բանակքն եղեն, շուրջանակի փոս հատանէին, զոր եւ այժմ իսկ խուժ թագաւորքն առնեն յորժամ ի մարտ պատերազմի երթայցեն շուրջ փոս խորացուցանեն դիւրաւ վասն բազմաձեռնն լինելոյ։ Բանզի գիտեն թէ ձիական զօրն զցայդ խռովութեամբ է եւ անհաւան, մանաւանդ թէ խուժադուժ եւս իցէ։ Բանզի ունին նոքա զերբիւարսն ի մուրս արկեալ պարաւանդս ոտիցն. եւ եթէ հեծանել դք ի նոսա կամիցի, աշխա-

տուԹիւն է սանձս ի բերան դնել եւ դարմանել եւ զզբաղմն ազուցանել։ Իսկ յորժամ ինուս երիւարացն հեծանիցին, անցանել ընդ բանակն ամենեւին չեն իսկ հնար։ Վասն այսր ամենայնի նոքա եւ այլք եւս ամրուԹիւնս արկանեն շուրջանակի. եւ նոցա ԹուԹ ԹէՅապահովս իցեն, եւ իշխանուԹիւն ունիցին յորժամ կամիցին չպատերազմելոյ։

Այս առնէին եւ առ միմեանս հասանէին, եւ մօտեալք ի բացեայ էին յիրերաց որչափ ԹէՅ խրատսախ մի։ Ասորեստանեայքն այնպէս խաղային ի պատերազմ որպէս ճառեցաւ, շուրջ փոս հատեալ յերեւելւոջ։ Իսկ Կիւրոս որչափ ձեռնհաս էր յաներեւոյԹ տեղիս գեղս եւ հողաբլուրս ի հանդիպոյ անտի արկանէր, զի զմտաւ ածէր ԹէՅ ամենայն իրք պատերազմի որ յանկարծակի երեւիցին, ահագին հակառակորդացն լինիցին։ Դու զայն գիշեր որպէս վայել էր իսկ, առաջապահս կացուցեալ երկոցունց կողմանցն, ի քուն եղեն։

Ի վաղիւ անդր Ասորեստանեայն եւ Կրիւսոս եւ այլ եւս զօրավարք հանգուցանէին զզօրսն յամուր վայրի։ Կիւրոս եւ Կիաքսարէս ճակատեալ բակ առեալ կային շուրջանակի, զի յորժամ մօտ գայցեն Թշնամիքն, կռուիցին։

Իսկ իբրեւ յայտ եղեւ եթէ չելանեն հակառակորդք ընդ ամուրսն եւ ոչ տայցեն պատերազմ յաւուր յայնմիկ, կոչէր Կիաքսարէս զԿիւրոս եւ զամենայն աւագսն եւ խօսէր այսպէս: Ինձ բարեւոք իսկ թուի, ասէ, ով արք, որպէս կարգեալ եւ ճակատեալ դիպեցաք, այնպէս երթալ յամրութիւնսն արանցն, եւ յայտ առնել եթէ կամիմք կռուել: Բանդի այնպէս, ասէ, որովհետեւ նոքա չհարան ի դիմի, մերքն առաւել քաջալերեսցին ի վերայ երթալ, եւ թշնամեացն զյանդգնութիւնն տեսեալ, առաւել եւս զահի հարկանիցին ի մէջ:

Սմա այսպէս թուեցաւ: Բայց Կիւրոս ասէ. Մի, ասէ, այսպիսի ինչ առնիցեմք ո՛ Կիաքսարէ: Զի եթէ յայտ իսկ երթամք յո դու հրաման տաս, տեսցեն զմեզ թշնամիք յորժամ մօտ իցեմք եւ ոչ երկիցեն, տեսեալ եթէ ինքեանք յապահովս են չկրել ինչ վնաս: Եթէ ոչ ինչ գործ վճարեալ մեկնիմք, միւսանգամ հայեցեալ ընդ մեր բազմութիւնն որ կարի իսկ նուազագոյն քան զնոցայն է, յընչաց քերիցեն եւ վաղիւ ելանիցեն զօրութեամբ: Բայց այժմ, ասէ, գիտեն թէ մօտ եմք եւ ոչ տեսանեն զմեզ. զոյս ճարտար գիտեմ թէ ոչ քամահեն զմեզ, այլ հոգան եւ տատամնին թէ զինչ լցէ,

եւ ոչ դադարին իսկ զմէնջ խօսել։ Եւ յորժամ ելանիցեն, յայնժամ պարտ իցէ եւ մեզ երեւել նոցա եւ վաղվաղակի ի վերայ դիմել ըմբռնեալ նոցա յորում վայրի եւ յառաջագոյնն կամէաք։ Զայս իբրեւ առաց Կիւրոս, հաճոյ թուեցաւ Կիաքսարայ եւ այլոցն. եւ ապա ընթրիս արարեալ կարգէին կացուցանէին պահակապանս եւ խարոյկս բազումս առաջի պահապանացն վառեալ ննջէին։

Ի վաղիւ ի վաղորդայն անդր Կիւրոս թագ ի գլուխ զոհս մատուցանէր, հրամանս տայր եւ այլոցն եւս հանգիտապատուացն պսակաւորս կալ առընթեր զոհիցն եւ պատարագայ։ Իբրեւ զբաւ լինէր զենմանն, կոչեցեալ զնոսա միանգամայն ասէր. Արք, աստուածքն, որպէս իղձքն պատմեն եւ ինձ իսկ թուի կանխագոյն պատմեն թէ պատերազմ լինիցի, եւ յաղթութիւն շնորհեսցեն, եւ փրկութիւն նուիրօքն յառաջագոյն խոստանան։ Բայց ձեզ խրատ տալ թէ որպիսիս պարտ իցէ ի ժամանակի աստ յայսմիկ լինել, ես ամաչեմ, քանզի գիտեմ թէ նոցին եւ դուք հմուտ էք հանգոյն ինձ, ի նոսին կանխեալք ընդ նոյնս կրթեալք եւ վայելեալք յունկընդրութեանն եւ վայելէք իսպառ, յոր եւ են, որպէս զի յիրաւի իսկ եւ այլոց զնոյն ուսուցանիցէք։ Ապա թէ չիցէք ի միտ առեալ լուարուք։

Զի զորս նորոգ զօրաւիգն օգնակա-
նութեան ունիմք եւ փութամք հանգոյն
մեզ առնել, պարտ եւ պատշաճ է մեզ
յիշեցուցանել նոցա, թէ վասն էր ի Կի-
աքսարայ կերակրեցաք, յի՞նչ թեւակո-
խեցաք եւ ընդէր իսկ քաջալերեցաք եւ
մխիթարեցաք զնոսա, եւ յանձին կալան
առաքինի ախոյանս լինել։ Զայս յուշ
առնիցէք նոցա, եթէ օրս այս յայտ
առնիցէ թէ ի՞մ իմիք արժանի իւրա-
քանչիւր ոք ի մէնջ իցէ։ Զոր ինչ
անագան ուրեմն ուսանիցին մարդիկ.
չեն ինչ զարմանք եթէ ոմանց ի նոցանէ
յուշարար յիշատակի լինիցին պէտք.
բայց սիրելի էր թէ եւ ի թելադրու-
թենէ մարթէին արս առաքինիս լինել։
Եւ եթէ զայդ առնիցէք եւ զձեր իսկ
հանդէս առեալ հմուտ լինիցիք։ Զի
որ զայլսն մարթի ի ժամանակին յայն-
միկ աղնուագոյնս կատարել, նմանա-
գոյն եւ զիւրոյ անձինն գիտիցէ թէ կա-
տարեալ իսկ այր առաքինի է։ Իսկ որ
զայնր ամենայնի զյիշատակ յուշարար
ինքնին եւեթ ունիցի, եւ զնոյն սիրիցէ
յիրաւի այնուհետեւ թերակատար զան-
ձն հաշուիցի։ Յայն սակս, ասէ, ես չա-
սեմ նոցա, այլ ձեզ հրաման տամ ասել
զի եւ ձեզ հաճոյ լինել փութայցեն.
քանզի դուք մօտ իսկ էք նոցա. իւրա-
քանչիւր ոք իւրում բաժնին. գիտաս-
ջիք, ասէ, թէ մինչ խրախուսեալ

զանձինս ցուցանիցէք, սոցա եւ այլոց
եւս բազմաց ոչ բանիւք, այլ արդեամբք
իսկ ուսուցանիցէք համարձակել եւ
խրախուսել։

Եւ ապա հրամայէր երթալ ճաշ
ուտել պսակ ի գլուխ եւ զոհս մատու-
ցեալ գնալ ի գունդսն նովին պսակօքն։
Իբրեւ նոքա գնացին, միւսանգամ
զվերջապահսն առ հուր կոչէր, եւ խօ-
սէր ընդ նոսա ա սպիսի ինչ. Ուրք
Պարսիկք, դուք ի հ ինգիտապատուաց
անտի եղերուք, եւ ընտրեալ եւս էք
որք այլով ամենայնի, թէպէտ եւ
հանգոյն քաջացն իցէք, բայց տիւք
եւս իմաստնագոյնք։ Այսուհետեւ
զպատուական տեղին ունիք ոչ ինչ ընդ-
հատ ի հրամանատարացն։ Դուք քան-
զի յետոյ կուսէ էք, զընտիրսն յոր-
ժամ տեսանիցէք եւ հրամայիցէք նոցա
եւս աղնուագոյն գործիցէք։ Եւ եթէ
մեղկիցի ոք, դէտակն ունիցիք ի վերայ
նորա եւ մի համարձակեցուցանիցէք
նմա։ Զեզ իսկ պատշաճ է առաւել քան
այլսմ ումեք յաղթելն եւ վասն տիո-
ցըն եւ վասն ձորձոյն թանձրութեան։
Եւ եթէ որք յառաջոյ իցեն կոչիցեն
զձեզ գալ զհետ, անսացէք նոցա։ Եւ
զի մի յայնմ նուազեալ գտանիցիք ի
նոցանէ, անտուստ քաջալերս տայցէք
նոցա, վաղվաղակի ի թշնամիսն գնալ,
մեկնեցարուք եւ դուք, ասէ, եւ ճա-

շեալ ապա գնացէք հանդերձ այլովքն պսակաւորքք ի գունդսն։

Որք զԿիւրոսիւն էին, զայնու էին։ Ասորեստանեայքն իբրեւ կերան զճաշն, ելանէին յանդգնագոյնս եւ ճակատեալ կային սաստկութեամբ. կարդէր կազմէր թագաւորն եկեալ կառօք եւ անդրուարօք, եւ այսպիսի ինչ հրաման տայր. Որք ասորեստանեայք, այժմ պարտուպատշաճ է արս առաքինիս լինել, քանզի այժմ իսկ ի վերայ ոգւոց մերոց կուիւս է. եւ վասն երկրին յորումծնայք, վասն տանց յորս սնայք եւ ի վերայ կանանց եւ որդւոց եւ ամենայն արարոց զոր ստացեալ իցէք. զի եթէ յաղթիցէք, այնր ամենայնի տեարքք, զոր օրինակ յառաջն իսկ դուք լինիցիք։ Ապեթէ ի պարտութիւն մատնիցիք, գիտասջիք թէ զայն ամենայն վտարանդի թշնամեացն տայցէք։ Եւ արդ որ յաղթութեանն ցանկացեալ էք, կացէք պատերազմեցարուք։ Զանզի մորոսութիւն է թէ որք յաղթելն կամիցին զկոյր կողմանս մարմնոյն եւ զանդէնս եւ զանձեռս, զայն հակառակ թշնամեացն արկանիցեն յորժամ փախուցեալ երթայցեն։ Յիմար է եթէ կենդանի ոք կամիցի լինել եւ ի փախուստ մտաբերիցէ, որ գիտակն իցէ թէ որ յաղթեն ապրին, եւ քան զմնացեալսն առաւել փախստեայք մե-

ռանին։ Ընմիտ է եթէ ընչից ոք ցան-
կանայցէ եւ յանձին ունիցի ի պարտու-
թիւն մատնել։ Արանգի՞ ի՞նչ է որ ոչ
գիտիցէ թէ որք յաղթեանն զեւրեանցն
ապրեցուցանեն եւ զթշնամեացն պար-
տելոց առնուն։ Եւ որ ի պարտութիւնն
մատնիցին զանձինս եւ զամենայն ինչ
որ իւրեանց իցէ զայն ի բաց ընկեցեալ
ասան վտարանդի։

Աստորեստանեայն զայնու էր. իսկ
Կիւքսարէս առաքեալ առ Կիւրոս ա-
սէր թէ ժամ է ի թշնամիսն դիմել։
Արանգի այժմ, ասէ, եթէ սակաւք
եւս իցեն արտաքոյ ամրին, յորժամ
մօտն երթայցեմք, բաղում իցեն. եւ
արդ կայցեմք մնայցեմք մինչեւ առա-
ւել քան զմեզ լինիցին, այլ երթիցուք
մինչ դեռ դիւրին համարիցիմք յաղթել
նոցա։ Տայր պատասխանի Կիւրոս. Ո
Կիւքսարէ, եթէ ոչ աւելի քան զկէս
իսկ նոցա իցեն որ պարտիցին, դիտաս-
ջիր զի այսպէս խօսիցին զմէնջ թէ
երկեան ի բազմամբոխ բազմութենէ
եւ ձեռնամուխ ի սակաւաւորսն եղեն.
եւ ինքեանք չհամարիցին թէ ի պար-
տութիւն մատնեցան, այլ այլոյ պատե-
բազմի լինիցին պէտք. յորում թերեւս
քաջ պատսպարիցին քան այժմ զի
վտարանդիս տան մեզ զանձինս ընտրել
որպէս զի ընդ քանիս իսկ ի նոցանէ
կամիցիմք կռուել, կռուիցիմք։

Օ՛այն լուեալ հրեշտակացն զնացին. յայնմ վայրի դայր Քրիւսանտաս պարսիկ եւ ոմանք ի պատուակցաց անտի, բերէին հատուածեալս։ Եւ որպէս ի դէպ էր հարցանէր զհատուածեալսն զիւրաց թշնամեացն։ Եւ նոքա պատմէին թէ ելցեն հանդերձ զինուք եւ սպառազինօք, եւ ճակատեցուցանիցէ զնոսա թագաւորն արտաքս ելեալ, եւ բազում քաջալերս տայցէ որոց միշտն ելանեն արտաքս, որպէս պատմեցին, ասեն, որ լուանն։

Յայնմ վայրի ասէ Քրիւսանտաս. Իսկ արդ, ասէ, իցէ՞ ինչ եթէ եւ դու ի մի վայր կոչիցես, մինչ դեռ իցէ իշխանութիւն մխիթարելոյ, մի՞թէ եւ դու ոչ աղնուագոյն զզօրսն կատարիցես։ Եւ Կիւրոս ասէ. Ով Քրիւսանտա, մի տրտմեցուսցէ զքեզ Ասորեստանեայն քաջալերութիւնն, չէք ինչ ուրեք այնպէս դեղեցիկ թելադրութիւն որ զայնոսիկ որք չիցեն պիտանիք, նոյն օրին յորժամ լսիցեն, ընտիրս կատարիցէ, ոչ զաղեղնաւորս եթէ չիցեն յառաջագոյն ընդ նոյն կրթեալք եւ ոչ զտիգաւորս եւ ոչ զհեծեալս, նա եւ ոչ մարմինք անգամ բաւական լինիցին վաստակել, թէ ոչ կրթեալ յառաջագոյն իցեն։

Եւ Քրիւսանտաս ասէ. Շատ է, ասէ, Կիւրէ, եթէ զմիտս նոցա քա-

ջալերութեամբն աղնուագոյնս գոր-
ծեսցես։ Ասէ Կիւրոս. Ո՞ւթէ մարթ
ինչ իցէ, մի բան ճառեալ նոյն օրին
պատկառանօք լի առնել զոգիս լսո-
ղացն կամ ի քարուականացն կարճել
եւ յորդորել որպէս պարտ իցէ, գո-
վութեան եւ յարգանաց վասն զամե-
նայն աշխատութիւն եւ զհամօրէն
վիշտս յանձին ունել, եւ ունել զնոյն
հաստատութեամբ ի մտի եթէ ցանկա-
լի է ի ճակատու իսկ մեռանել քան
փախստեայ ապրել։ Ո՞չ ապաքէն եթէ
այնպիսի միտք ի մարդիկ լինելոց էին
եւ տեւականք եւս, նախ պարտ էր թէ
այսպիսի ինչ օրէնք էին, որովք լաւացն
եւ առաքինեացն մեծարոյ եւ ազատու-
թեան կեանք յարդարէին, իսկ չարացն
չուառ եւ ցաւագին եւ անկեաց կեանք
ի վերայ կային։ Բանզի եւ վարդա-
պետաց եւս եւ իշխանաց պարտ էր կալ
ի վերայ նոցա, որ ուղղորդ ցուցանիցեն
եւ ուսուցանիցեն եւ ընդելուցանիցեն
զնոյնս առնել, մինչեւ լինիցի նոցա
սերտիւ համարել թէ առաքինիքն եւ
փառաւորք արդարեւ յաջողութեան
են, իսկ չարքն եւ չարաբարոյք քան
զամենեսեան իսկ հիքագոյնք լինիցին։
Բանզի պարտուպատշաճ է այսպիսի
միտս ունել այնոցիկ որ քան զթշնա-
մեաց ահն աղնուագոյն զուսումն ըն-
ծայեցուցանելոց իցեն։

Եթէ յերթալն սպառազինօք ի մարտ պատերազմի, յորժամ բազումք առաջին ուսմանցն մուռայօնս արարեալ իցեն, յայնժամ մարթի ոք ճառ արկեալ յանկարծակի վաղվաղակի արս պատերազմօղս կատարել, ապա քան զամենայն ինչ դիւրագոյն էր եւ ուսանել եւ ուսուցանել զմեծն քան զամենայն առաքինութիւնս որ ի մարդիկ իցեն։ Օ՛չ ես, ասէ, եւ ոչ նոցա յանձն առնուի աւատալ թէ տեւեն բաւեն զորս այժմ ունիմք առ մեզ եւ կրթեմք զնոսա եթէ ոչ եւ զձեզ տեսանէի եկեալ հասեալ, որ եւ օրինակք նոցին լինիցիք, թէ որպէս պարտ իցէ լինել եւ թելադիր կարօղ էք լինել, եթէ զաւղիցեն իմն։ Իսկ զանխրատիցն, ասէ, բնաւ իսկ ամենեւին զարմանք ունիցին զիս ով Քրիսանտա, եթէ ինչ աւելի օգուտ առ ի քաջութիւն գործիցեն բանք բարուքք, քան այնոցիկ որոց զերաժիշտս չիք ուսեալ գեղեցիկ երգք ապուեստականաց օգուտ ի գուսանութիւնն իցէ։

Նոքա զայս ինչ ընդ միմեանս խօսէին. բայց Կիւրոսարէս միւսանգամ առաքեալ ասէր, եթէ սխալէ զի դեղերէ, եւ չտանի զզօրսն վաղվաղակի ի թշնամիս անդր. յայնժամ տայր Կիւրոս պատասխանի հրեշտակացն. Դիտասցէ, ասէ, զի դեռ եւս չեն արտաքոյ որ-

չափ պարտ իցէ. եւ զայս պատմեցէք նմա ամենեցուն առաջի։ Բայց սակայն քանզի նմա այնպէս հաճոյ թուի, հանիցս արտաքս. զայս ասէր եւ յաղօթս կացեալ դիցն զզօրսն հանէր։ Եւ իբրեւ սկսաւ տանել ասղնապաւ, ինքն առաջի ընթանայր եւ նոքա սուէպ զհետ գային յօրինուածուքեամբ, վասն խելամուտն լինելոյ եւ կրթելոյ խաղալ կարգաւ. եւ սաստկութեամբ եւս վասն առ միմեանս հակառակութեանն, եւ վասն կրթելոյ մարմնոցն յաշխատութիւնս, եւ վասն ամենեցուն իշխանացն յառաջակաց լենելոյ. եւ առաւել եւս յօժարութեամբ վասն հանճարեղ մտացն. քանզի խելամուտ իսկ էին եւ ի բազմաց հետէ նոյնպէս ուսեալ թէ առաւել զգուշութեան է եւ դիւրին ի հեռաստանէ ի դիմի հարկանել թշնամեացն ի բացուստ, մանաւանդ աղեղնաւորք եւ տիգաւորք եւ հեծելովք։

Մինչ դեռ արտաքոյ իսկ քան զնետընկէց մի էին, երեւեցուցանէր Կիւրոս դրօշ մի այսպէս. ԱՐԱՄԱԶԴ ԶԱՒՐԱՒԻԳՆ ԱՒԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ Է ԵՒ ԶԱՒՐԱՎԱՐ. եւ իբրեւ միսանգամ դառնայր գայր դրօշն, սկսանէր դիսակուրացուոց արուեստականս, եւ նոքա ամենեքին դիւցապաշտ մտօք միանգամայն նուագեալ հնչէին մեծագոչ բար-

բառով. քանզի յայնպիսումն ժամանակի որ դիւցապաշտքն են, դուն ինչ ի մարդկանէ երկրնչին։ Իբրեւ երդք արուեստականացն ի գլուխ ելին, միանգամայն յուղի անկեալ պատուակիցքն արթունք եւ զուարթունք եւ խրատեալք, զմիմեամբք հայէին, եւ զայնոսիկ որ առ ընթեր եւ առաջի երթային յանուանէ կարդային, ստէպ ստէպ ասէին. թէ Ա.ռէք արք բարեկամք, առէք արք քաջք, եւ զմիմեանս քաջալերէին գալ զկնի։ Եւ որ յետոյն երթային լուեալ ի նոցանէ անդրէն քաջալերս տային առաջնոցն առաջնորդել արութեամբ։ Լի էր զօրն Կաւոսի յօժարութեամբ պարծանօք զօրութեամբ համարձակութեամբ քաջալերութեամբ զդաստութեամբ հնազանդութեամբ. զոր դժընդակագոյն իսկ համարիմ հակառակորդացն։

Իսկ Ա.սորեստանեաց անտի որք ի կառացն մարտ եդեալ կռուէին, իբրեւ մօտ հասանէր պարսկական ամբոխն, ի կառան ելանէին եւ մեկնեալ երթային յիւրեանց ամբոխն։ Ա.ղեղնաւորք նոցա եւ տիգաւորք եւ պարսաւորք զնետսն արձակեցին մինչ չեւ ի միմեանս հասեալ, զի յորժամ խաղացեալ գային Պարսիկքն կոխէին զնետսն արձակեալս։ Խօսէր Կիւրոս. Ա.րք առաքինիք, այսուհետեւ եկեսցէ կացցէ ոք յառաջ

վաղվաղակի, եւ այլոց զնոյն պա-
տմեացէ։ Մինչ դեռ զայն բան միմեանց
աւանդէին, ոմանք առ յօժարութեան
եւ առ ճեպ ընդխառնելոյ սկսան ըն-
թանալ։ Միահամուռ ամենայն դունդն
զհետ երթայր արշաւեալ. եւ ինքն
իսկ Կիւրոս զընթացսն մոռացեալ, դի-
մեալ երթայր յարշաւանի եւ բարբա-
ռէր թէ ո՞ զհետ ելցէ, ո՞ր քաջ. ո՞ նախ
այր մի տապաստ արկանիցէ. եւ նոցա
լուեալ զնոյն երկրորդէին, եւ ընդ ա-
մենեսին որպէս նայն ասէր, նոյնպէս
դնայր, թէ ո՞ ոք առաքինի իցէ։

Այսպէս դիմեալ դային Պարսիկք,
իսկ հակառակորդքն այնուհետեւ չկա-
րէին տեւել մնալ, այլ շրջեալ փա-
խըստեայ յամուրն անկանէին, զհետ
մտեալ նոցա Պարսից ի մուտս անդ,
մինչ դեռ զմիմեանս մղէին ընկենուին
անդէն զբազումս սատակէին, եւ զան-
կեալսն ի փոսսն ոչք ի վերայ յարձակէ-
ին, կոտորէին զարս երիւարօքն։ Զան-
զի կառք ինչ ի կառացն ի փախստի անդ
ի հարկէ ի փոսսն անկանէին. զայն տե-
սեալ Մարացն հեծելոց ի թշնամեաց
այրուձին դիմեցին. նոքա իբրեւ խոտո-
րէին ի նոցանէ, յայնմ վայրի գերիւա-
րաց եւ զարանց լինէր զհետ մտանել,
եւ կոտորած յերկոցունց։

Իսկ ոչք ի ներքս յամրի անդ Ասո-
ւրեստանեացն կային ի գլուխ փոսին

չածէին իսկ զմտաւ նեռաձիգ լինել ի նոսա որ կոտորէինն, եւ կարէին իսկ ոչ վասն անհնարին տեսլեանն եւ վասն երկեղին։ Եւ վաղվաղակի իբրեւ ի միտառին թէ ոմանք ի Պարսից անտի դիմեն ի մուտս պատնիշին, մեկնէին եւ փախստական գնային ի դլխոց անտի, Իսկ իբրեւ տեսին կանայք Ասորեստանեացն եւ օգնականացն նոցա զփախուստն, անդէն ի բանակի անդ ձիչ բարձեալ գոչէին, եւ ընթանային զարհուրեալք, ոմանք եւ որդեակս եւս ունէին, եւ կէսքն մանկամարդք, զօձիս պատառեալք, եւ զերեսս ցտէին, խաղապատէին եւ աղաչէին զամենեսին ում եւ պատահէին մի փախչել եւ թողուլ զնոսա, այլ որդւոց եւ անձանց եւ նոցա իսկ ի դլխովքին զվրէժ խնդրել։ Յայնմ վայրի ինքեանք իսկ թագաւորքն հաւատարմօքն հանդերձ եկեալ կային ի մուտսն եւ ելեալ ի դլուխ փոսին եւ ինքնին մարտ եդեալ կռուէին եւ այլոց եւս տային քաջալերս զամենեսին յորդորելով։

Իբրեւ գիտաց Կիւրոս զերան որ եղեն, զանգիտեալ թէ դուցէ, եթէ ի ներքս բռնանայցեն, քանզի ասկաւաւորք են, ի բազմաց անտի վրիպակ ինչ հասանիցէ. հրաման ետ թէ ի բաց կացցեն արտաքոյ քան զնետընկէց մի, եւ հնազանդ ինիցին։

Ընդէն առնոյր ոք ի միտ թէ արդա-
րեւ խրատեալ էին հանգիտապատիւքն
որպէս պարտ եւ պատշաճ էր։ Վրանզի
նոքին վաղվաղակի հնազանդ լինէին,
եւ այլոց արագ արագ պատմէին. եւ
յորժամ արտաքոյ քան զնետընկէց մի
եղէն, կանգնեցան կացին ըստ իւրա-
քանչիւր տեղեաց քաջ քան զզուանդս
պարուցն, քանզի ճշդիւ գիտէին թէ
ուր իւրաքանչիւր ումեք հասանիցէ լի-
նել։

ՉՈՐՐՈՐԴ

ԴՊՐՈՒԹԻՒՆ

ՔՍԵՆՈՓՈՆՏԵԱՑ

ԿԻՐՈՍԻ ԽՐԱՏՈՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Գ. ԳՊՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Կացեալ Կիւրոսի սակաւ մի ինչ ժամանակ զօրքն իւրովք, եւ յայտ առնէր թէ պատրաստ լինիցին ի մարտ պատերազմի, եթէ կամիցի ելանել ոք ելցէ։ Իբրեւ ոչ ոք էլ, ի բաց տարաւ զնոսա որչափ ի գէպ թուէր նմա, եւ անդէն բանակ հարկանէր։ Պահապանս կացուցանէր, դէտս յառաջագոյն արձակէր, եւ կացեալ ի մէջ գետին՝ զիւր զօրն ի մի վայր կոչէր, եւ խօսէր պէս զայս գոյն օրինակի բանից։

Աւք պարսիկք նախ, զդիան իսկ յարգեալ գովեմ որչափ կարօղ եւ ձեռնհաս իցեմ, կարծեմ թէ եւ դուք եւս ամենեքին։ Քանզի յաղթութեան հասաք եւ փրկութեան. արդ պարտ եւ պատշաճ է գոհութիւնս նոքիմբք զոր ունիցիմք, դիցն կատարել։ Դս զամենեսին իսկ զձեզ դրուատեմ. քանզի

գործս որ գործեցաւ յամենեցունց ի ձէնջ բարեաւք եւ ի դլուխ. եւ եթէ յո-
բոց ակն կայցէ, հարցանիցիմ թէ ի՞մ իմիք արժանի իւրաքանչիւր ոք ի՞նչ
յայնժամ զանցնիւր պատիւն եւ բա-
նիւք եւ արդեամբք ջանայայց հատու-
ցանել։

Օ՛Բրիւսանտայ զօրագլխէ որ մնա
առ իս կայր, ինձ չէ ինչ պիտոյ զայլս
հարցանել, այլ եւ ինքնին գիտեմ թէ
որպիսի ոք էր. զի եւ զայլն ամենայն
զոր դուք ամենեքին արարէք, արար
եւ նա. եւ ապա յորժամ ես հրամայ-
եցի ի բաց մեկնել կարդայեալ զնա
յականէ, նա վերացուցեալ ունէր զսու-
սերն զի հարկանիցէ զթշնամին, լը-
եաւ ինձ վաղվաղակի, եւ թողեալ զոր
ինչ առնելոցն էր, զհրամանն առնէր։
Եւ ինքն դարձաւ եւ այլոց պատուի-
բեաց հաստատութեամբ. որպէս զի ճե-
պեցին արտաքոյ քան զնետընկէցս
զլօրսն հանել, մինչ չեւ իմացեալ
թշնամեացն թէ մեկնիմք եւ նեռս ար-
ձակեալ. զի եւ ինքն անվնաս եւ զիւրն
եւս առանց վնասու հնազանդութեամ-
բբն ապրեցոյց. բայց զայլսն, ասէ,
տեսանեմ խոցեալս, զորոց յորժամ
զմտաւ ածեմ, թէ յորում ժամանակի
խոցեցան, ապա զիմ միտս յայտ առ-
նիցեմ։ Օ՛Բրիւսանտաս զժիր ի պա-
տերազմի եւ զհանճարեղ եւ բաւական

կալ ընդ իշխանութեամբ եւ իշխել, հազարապետութեամբ պատուեմ։ Եւ եթէ այլ եւս ինչ բարութիւնք դիքն շնորհեսցեն, եւ ոչ յայնժամ մոռացայց զնա։

Եւ ձեզ ամենեցուն կամիմ ասէ, յիշեցուցանել։ Զոր ինչ այժմիկ տեսէք ի պատերազմի սատ յայսմիկ, զայն մի երբեք դադարիցէք ածել զմտաւ, զի յանձանց իսկ ձեզէն ընտրիցէք, թէ ո՞ր արդեւք, քաջութիւնն եթէ փախուստն զոգիսն ապրեցուցանիցէ, եւ թէ արդեւք որ մարտընչելն կամիցին դիւրապուր արագաղերծ լինիցին, թէ որ ոչն կամիցին մարտընչել. կամ թէ զո՞ր հեշտականութիւն յաղթելն բերիցէ։ Զայս ամենայն քաջ մարթէք ընտրել, քանզի զփորձ իսկ արդեանցն ունիք եւ զհանդէս իրացն, որ այն ինչ կատարեցան։ Եթէ զայս, ասէ, ցանգ զմտաւ ածիցէք, եւս ազնուագոյնք լինիցիք։ Այժմ իբրեւ սիրելիք դիցն եւ արք պիտանիք եւ ցածունք, կերայք ընթրիս, եւ զոհս դից մատուցէք, եւ սկիզբն արարէք երգոց արուեստականացն, եւ տեսջիք զայն որ հրամայեցաւն։

Զայս ասէր եւ հեծեալ յանդրբուար երթեալ հասանէր եւ եկեալ առ Պիաքսարէս, եւ ուրախ լինէր ընդ նմա որպէս պատշաճ էր, եւ տեսեալ որ ինչ անդ էր, եւ հարցեալ եթէ իցեն

ինչ պէտք դարձաւ յիւր բանակն։ Իսկ Կիւրոսեանքն ընթրիս արարեալ եւ պահապանս կացուցեալ, որպէս պարտիսկ էր, ի քուն եղեալ ննջէին։ Իսկ Ասորեստանեայքն յետ զօրավարին մեռանելոյ եւ դրեթէ ամենայն քաջացն, տրտմեալ էին ամենեքեան։ Եւ բազումք ի նոցանէ զցայդ դէմ եղեալ տարադէմ ի բանակէ անտի ի բաց գնային։ Զայն տեսեալ Կիւրոսի եւ այլոց եւս օգնականացն նոցա ամենեքին տրտմեալ տխրէին։ Զի ամենայն ինչ դըժընդակ էր. եւ առաւել յայն սակս տրտում եւ տխուր էին, զի ցեղն որ առաջնորդ էր զօրուն, կործանեալ վհատեալ թուէր։ Ապա թողուն զբանակն եւ մեկնեալ երթան դիշերի։

Իբրեւ տիւ եղեւ, եւ թափուր ի մարդկանէ երեւէր բանակ թշնամեացն, իսկ եւ իսկ Կիւրոս զՊարսիկս նախ անցոյց։ Թողեալ էր թշնամեացն հօտս բազումս եւ բազում նախիրս, եւ յոլով սայլք լցեալք բազմապատիկ բարութեամբք։ Բատ նմանէ անցին եւ որ զԿիաքսարեաւ Ծարքն էին, ամենեքին անդէն ճաշ կերան, եւ իբրեւ ճաշեցին, կոչեաց Կիւրոս զիւր զօրագլուխսն, եւ խօսեցաւ այսպիսի ինչ։

Որպիսի՞ ինչ բարութիւնս թողումք ով արք, աստուածոց իսկ տուեալ մեզ զնոսա։ Այժմ զի թշնամիք զահի

հարեալ ի մէնջ դիմեալ գնացին, դուք իսկ ինքնին տեսանէք, որք յամրի էին, եւ թողեալ ելին փախստեայք, զիարդ կարծիցէ ոք զնոցանէ եթէ հանդարտել կարիցեն թէ տեսանիցեն զմեզ ի դաշտագետին վայրի. որք մինչ չէինն մեզ հմուտ, չլինէին ժուժկալ, զի արդ եւ ուրդունակ այժմ տեւել բաւել կարիցեն, յորժամ ի պարտութիւն մատնեալ իցեն եւ բազում չարիս ի մէնջ կրեալ. որոց եւ քաջքն ի կենաց վճարեցան, որպէս որ անպիտանքն իցեն կամիցին մարտընչել ընդ մեզ։

Ասէ ոմն. Եւ արդ զի՞ է զի ոչ վաղվաղակի պնդիմք զհետ, ուր յայտնի իսկ եւ դուշակաւոր բարութիւնքն իցեն։ Եւ նա ասէ, եթէ ձիոց պէտք են մեզ. զի քաջք ի թշնամեաց անտի, զորս իդէպ էր ըմբռնել, կամ սատակել, նոքին ի վերայ երիւարաց գնան. զորս մեք հանդերձ աստուածովքն բաւական եմք ի փախուստ դարձուցանել, եւ զհետ մտեալ ըմբռնել ոչ կարեմք։ Իսկ ընդէր, ասեն, երթեալ առ Կիաքսարէս չասես զայդ։ Նա ասէ. Ամենեքին զհետ իմ եկայք, զի տեսցէ թէ ամենեցուն մեզ նոյն հաճոյ թուի։

Ապա բոլորեքին զկնի երթային եւ ասէին զոր ինչ միանգամ կարեւոր համարէին այնմ ամենայնի վասն որոյ աղաչէինն։ Բայց Իբրեւ չարակնէր իմն

Կիաքսարէս, քանզի նոքա սկիզբն ա-
ռարին բանիցն, սակայն այսպէս բար-
ուոք թուէր նմա մի միւսանգամ կալ ի
տաղնապի, զի եւ ինքն զուարճացեալ
էր եւ զբաղումս յայլոց եւս Ա՛ռաց
տեսանէր թէ զուարթացան զուարճա-
ցան, եւ արդ ասէր այսպէս։

Ո Կիւրէ, թէ քան զամենայն մար-
դիկ դուք Պարսիկք կրթեալ էք, եւ
ոչ առ մի ինչ ցանկութիւն անյագսլի-
նել, գիտացի. զի եւ տեսի եւ լուայ։
Ինձ թուի թէ յոյժ իսկ առաւել օ-
գուտ է ժուժկալս լինել ի մեծի ինչ
հեշտականութեան։ Օ՛ինչ ինչ քան
զաջողութիւն եւս մեծ հեշտականու-
թիւն մարդկան կայցէ, որ այժմիկ մեզ
ի գլուխս ել։ Դ՚ու արդ եթէ յորժամ ի
փառաւորութեան իցեմք իմաստու-
թեամբ մտօք զգուշասցուք փառաւո-
րութեանն, թերեւս կարիցեմք առանց
վշտաց յաջողեալք ի ծերութիւն հա-
սանել։ Իսկ եթէ անյագ վարիցիմք նո-
վաւ, փութայցեմք այնուհետեւ այլոց
եւս մի բան միոջէ զհետ մտանել. տե-
սէք մի վիշտս կրիցէք, զոր եւ զբազմաց
ասեն ի ծովու փաշաման կրել, քանզի
վասն շահիցս ինչ չկամեցան դադա-
րել ի նաւարկելոյ մինչեւ կորեանն. եւ
բազմաց յաղթութեան հասեալ, յոր-
ժամ այլոց եւս յաղթութեանց ուշ
արարին զառաջին յաղթութիւն յան-
ձանց մերժեցին։

Օ յ թշնամիքն եթէ նուազագոյնք քան զմեզ էին եւ փախչէին, թերեւս հալածելն զնուազունսն զգուշութեամբ էր։ Բայց այժմ զմտաւ ած, թէ ընդ քաներորդ բաժնի նոցա ամենեքին մարտ եղեալ յաղթեցաք. իսկ այլքն առանց կռուելոյ են, զորս եթէ չբրոնադատիցեմք պատերազմել, քանզի ոչ զմեզ գիտեն եւ ոչ զանձինս, առ տխմարութեան եւ մեղկութեան ի բաց գնան. իսկ եթէ գիտասցեն եթէ ի գնալն իւրեանց ի բաց ոչ սակաւ կրիցեն վիշտս, քան եթէ ի տեւելն եւ ի տոկալ, մի գուցէ բռնադատիցեմք զնոսա ի հարկէ թէպէտ եւ չկամիցին, առաքինիս լինել։ Ոչ, ասէ, դու աւելի ցանկացեալ ես զկանայսնոցա եւ զմանկունս ըմբռնել, քան նոքա պրծեալ ապրեցուցանել զնոսա։ Զմտաւ ած, թէ եւ վարագէ յորժամ յակն անկանիցին, թէպէտ եւ բազուքք եւս իցեն, խոճկորքն փախուցեալ երթան. իսկ յորժամ որսայ ոք ինչ ի խոճկորաց նորա, չփախչի, թէպէտ եւ մի խոճկոր իցէ, այլ յայն որ առնուլն փութայր, դիմէ։

Այժմ փակեալ զանձինս յամրութեան անդ դարանեալ կային, մինչ զի ընդ քանիս իսկ ի նոցանէ կամիցիմք կռուել կռուիցիմք. ապա թէ յարձակ վայրի մերձենայցեմք առ նոսա, եւ ի միտ առցեն թէ մեկնեալ եւ զատեալ

եմք, ոմանք յառաջոյ, որպէս եւ այժմ կռուիցին եւ կէսք ի կողմանէ, եւ այլք ի միւսմէ կողմանէ, եւ կէսք յետուստ կուսէ։ Տես մի իւրաքանչիւր ումեք ի մէնջ բազում աչայ եւ ձեռայ լինիցին պէտք։ Դուս ասէ, չկամիմ ես տեսեալ զԱրս զի յուրախութեան են, թէ յարուցեալ բռնադատիցեմ ի վիշտս երթալ։

Կիւրոս ասէ. Դու մի զոք բռնադատիցես, այլ զայնոսիկ որ կամին գալ զհետ իմ, տուր. թերեւս իսկ գայցեմք այսրէն եւ բերիցեմք քեզ եւ իւրաքանչիւր ումեք ի բարեկամացն քոց այնպիսի ինչ յորոյ վերայ ամենեքեան ուրախ առնիցիք։ Օ՛ի մեք զբաղմամբոխ բազմութեան զհետ ոչ մտանեմք, քանզի զիարդ իսկ ըմբռնիցեմք զնոսա. եւ եթէ իցէ ինչ մնացեալ յետս ի բանական, ըմբռնիցեմք. եւ եթէ իցէ ինչ մնացեալ զայն եկեալ բերցուք առ քեզ։ Օ՛մտաւ ած, ասէ, զի եւ մեք, քանզի դու իսկ աղաչեցեր եկաք զայն երկայն ճանապարհն, վասն զի քեզ կամեցաք շնորհս առնել, այսուհետեւ եւ քեզ յիրաւի է եթէ փոխարէն շնորհս առնիցես զի ունիցիմք ինչ ընդ մեզ յորժամ երթայցեմք յաշխարհն մեր, եւ մի ի դանձդ ամենեքին նայիցիմք։

Յայնժամ ասէ Կիաքսարէս. Եթէ յօժարեալ ուրուք զհետ քո գայցէ, ես

շնորհակալ եւս եմ քեզ։ Ընդ առաքեա, ասէ, ընդ իս զմի ոմն ի հաւատարմաց անտի, որ ասասցէ զամենայն զոր դուն հրամայիցես։ Ա՛ռ, ասէ, զոր ոք ի դոցանէ կամիցիս. անդ դիպեցաւ որ ասացն երբեմն թէ ազգակից եմ նորա եւ համբուրեաց։ Ասէ անդէն Կիւրոս. Սա, ասէ, բաւական է ինձ։ Նա ասէ, երթիցէ զհետ քո, եւ դու ասա թէ որ կամիցի երթայցէ ընդ Կիւրոսի։

Առեալ զայրն եւ գնաց. եւ իբրեւ շոգաւ, ասէ վաղվաղակի Կիւրոս։ Դու այժմ իսկ յայտ առնիցես թէ ճշմարիտ խօսեցար եթէ ուրախ լինիս յորժամ զիս տեսանես։ Ասէ մարն ոչ թողից զքեզ, եթէ զայդ ասես։ Իսկ Կիւրոս ասէ. Ասիցես եւ այլոց յօժարութեամբ։ Նորա երդուեալ Յարամազդ ասէ. արարիցս, ասէ, զի եւ դու խնդութեամբ նայիցիս ընդ իս։ Ապա առաքեալ ի Կիաքսարայ պատմեաց զամենայն փութով յօժարութեամբ Մարացն. եւ յաւել թէ եւ ոչ թողից զայրն ազնիւ եւ դեղեցիկ, եւ որ մեծ իսկ քան զամենայն է զծնեալն ի դիցն։

ԳԼՈՒԽ Բ

Մինչ դեռ զայն առնէր Կիւրոս, իբրեւ յաստուածակոյս կողմանէ հասին ի Վրկանացւոց հրեշտակք։ Վրկանացիքն սահմանորդք են Ասորեստանեացն, ազգ ոչ բազում. վասն որոյ եւ յԱսորեստանեայս ձեռս տուեալ էին. հեծեալք էին ի ժամանակին եւ այժմ հեծեալք են։ Յայն սակս իսկ ի կիր արկանեն զնոսա Ասորեստանեայքն, զոր օրինակ Դակեդեմոնացիք զԱկիրիտացիսն, ոչ ինչ զընդացեալ խնայեալ ի նոսա, ոչ յաշխատութիւնն եւ ոչ ի վիշտս. եւ յայնժամ հրաման տուեալ էին նոցա վերջապահս լինել, որք իբրեւ հազար երիւար էին, զի եթէ վիշտք ինչ յետուստ կուսէ հասանիցեն, նոքա փոխանակ ընդ նոցա վշտանայցեն։

Իսկ Վրկանացիքն քանզի հետուստ երթալոց էին, զկառն իւրեանց եւ զընտանիս յետոյ թողուին. քանզի բազումք յասիացւոց հանդերձ ընտանեօքն երթան ի մարտ պատերազմի, եւ յայնժամ նոյնպէս երթային ի պատերազմ Վրկանացիքն։ Բայց զմտաւածեալ թէ որպիսի վիշտք են զոր յԱսորեստանեաց անտի կրեն, եւ թէ այժմ մեռաւ զօրավար զօրաց նոցա, եւ վատթարեալ ի պարտութիւն մատնեցան,

եւ յաճախ երկեւղ է ի բանակի անդ, եւ օգնականք նոցա տրտմեալ եւ լքեալ են. իբրեւ զայս ամենայն ածին զմբոտաւ, լաւ թուեցաւ նոցա այժմիկ իսկ յետս կալ յապստամբութիւն, եթէ կամիցին կիւրոսեանքն համահաղոյն յարձակել. եւ առաքեն հրեշտակս առ Կիւրոս, քանզի ի պատերազմէ անտի մեծացաւ անուն նորա։

Եւ որ առաքեցանն ասեն ցԿիւրոս եթէ զԱսորեստանեայս յիրաւի ատեան. այժմ եթէ կամ լեցի ձեզ խաղալ ի վերայ նոցա, եւ մեք զօրաւիգն օգնականութեան եմք եւ առաջնորդք։ Եւ պատմէին եւս նոցա թէ որպէս իցեն իւք թշնամեացն, զի կամէին յօժարեցուցանել թէ երթայցէ նա ի պատերազմ։ Կիւրոս հարցանէր զնոսա. Համարիցի՞ք, ասէ, հասանել մեզ նոցա մինչ չեւ յամուր անկեալ նոցա. զի մեք առաւել վիշտս զայն համարիմք, զի վաղվաղակի պրծեալ գնայցեն ի մէնջ. զայս ասէր զի կամէր թէ նոքա վստահ լինիցին ի նոսա։ Նոքա տային պատասխանի թէ եւ վաղիւ եթէ ընդ այգն երթայցեն պնդակազմքն, հասցեն. քանզի յամբոխէ անտի եւ ի կառացն եւ ի սայլից պարապով երթան նոքա. եւ ասեն եւս թէ քանզի զառաջին գիշերն տքնեցան, այժմ առ սակաւ սակաւ երթան բանակքն։

Եւ Կիւրոս ասէ. Ունի՞ք ինչ նշանակ ցուցանել թէ հաւատարիմ են զոր խոսիքդ։ Պատանդս, ասեն, կամիմք առանէն իսկ գիշերայն երթալ բերել. միայն եւ դու ընդ մեզ գաշինս կռեսջիր եւ տուր ձեռն, զի տանիցիմք եւ այլոց զայն զոր ինչ առ ի քէն առնուցումք։ Ապա հաւատ տայր նոցա եթէ ի գլուխս հանիցեն զոր ասենն առ բարեկամս եւ հաւատարիմս ունել զնոսա, որպէս զի ոչ քան զՊարսիկսն եւ ոչ քան զՄարս նուազագոյնք իցեն առ նմա։ Եւ ցայժմ եւս գոյ տեսանել զԿրկանացիսն զի հաւատարիմք են եւ իշխանս ունին, զոր օրինակ եւ ի Պարսից եւ ի Մարաց որք արժանաւորքն թուիցին։

Իբրեւ ընթրիս կերան, հան զզօրսն մինչ դեռ եւս աւուր կայր, եւ Կրկանացւոցն հրաման եւ կալ մնալ զի ի միասին երթայցեն։ Ամենայն Պարսիկք որպէս ի դէպ էր, վաղվաղակի արտաքս ելին, եւ Տիգրանէս ունէր զիւր գունդն. ելին եւ ոմանք ի Մարացն վասն ի մանկութեան բարեկամս լինելոյ Կիւրոսի յորժամ մանուկն էր. կէսք վասն զարմանալի համարելոյ զբարս նորա զի յորսսն ընդ նմա իսկ լեալ էին. եւ կէսք վասն շնորհակալ լինելոյ, զի ըզմեծ երկեւղն որ շուրջ փեռէր ի բաց փարատեցոյց. եւ այլք քանզի ակն

ունէին թէ վասն զի պիտանի ոչ էր այրն, բախտաւոր լինիցի եւ մեծ իսկ յոյժ. եւ ոմանք, զի յորժամ ի Մարս անանէր, եթէ բարի ինչ ումեք էր ա-բարեալ, կամէին ընդ այնր առնել շնորհս: Բազմաց բազում ինչ բարու-թիւնս էր ընկալեալ առ ի հաւոյն մար-դասիրութեամբն. բազումք եւս քանզի զկ ոկանացիսն տեսին եւ բան եւս ի միջի լինէր եթէ ի բազում բարութիւն առաջնորդեսցեն, ելին եւ առնլոյ ինչ աղագաւ:

Եւ այնպէս գրեթէ ամենեքին իսկ Մարքն ելին, բայց ի նոցանէ որ ընդ Կիաքսարայ ի վրանի անդ դիպեցան. նոքա անդէն մնացին եւ նոցին սպասա-ւորքն. իսկ այլքն ամենեքին զուար-թութեամբ եւ յորդորագոյնս դիմեալ երթային, իբր ոչ եթէ ի հարկէ ինչ, այլ կամակար մտոք, վասն նմա շնորհս առնելոյ: Իբրեւ արտաքս ելին, նախ առ Մարսն երթեալ, յարգեալ գովէր զնոսա. եւ աղօթս եւս մատուցանէր զի առաւել հաշտ իցեն ընդ նոսա դիքն, եւ նոցին առաջնորդք լինիցին, եւ յետ այնորիկ զի եւ ինքն ձեռնհաս իցէ նո-ցա շնորհս ընդ այնր յօժարութեան հատուցանել: Ապա ասէր թէ առաջ-նորդեսցեն նոցա հետեւակքն, եւ հրա-ման ետ զնոցունց ատէպ զհետ խաղալ երիւարօք. եւ ուր դադարիցեն կամ

կայցեն ի ճանապարհի, պատուէր եւ նոցա թէ ոմանք եկեսցեն առ նա զի ծանիցեն զդէպն միշտ։

Ապա հրամայեաց առաջնորդել Կրկանացւոցն. եւ նոքա ընդէր ոչ բաւեսցնաս, ասեն, մինչեւ զպատանդսն ածիցեմք, զի եւ քո առեալ հաւատս ի մէնջ երթայցես. եւ զնմանէ ասեն տուեալ պատասխանի. Բանզի զմտաւ ածեմ, ասէ, թէ ունիմք ամենեքին հաւատս ի մեր իսկ անձինս եւ ի ձեռս։ Բանզի այսպէս կազմք եւ պատրաստք եմք, զի եթէ ճշմարիտք իցէք, բաւականք իցեմք երախտաւոր լինել ձեզ. իսկ թէ խաբեալ պատրեալ կացուցանիցէք, այսպէս իսկ համարիմ եթէ ոչ մեք ընդ ձեւք իցեմք, այլ մանաւանդ առաւել, եթէ դիք կամիցին, դուք ընդ մեւք լինիցիք։ Ո Կրկանացիք, որովհետեւ ասէք, եթէ ձերքն յետուստ երթան, յորժամ տեսանիցէք զնոսա, գուշակեցէք մեզ, եթէ ձերքն են, զի անխայեսցուք ի նոսա։

Այն լուեալ Կրկանացւոցն, առաջնորդ լինէին ճանապարհին, որպէս հրամայեացն, եւ ընդ մտացն կորովութիւն զարմացեալ էին, եւ այնուհետեւ ոչ Յոսորեստանեաց ոչ ի Ղիւդացւոց եւ ոչ ի նոցա օգնականաց զանգիտէին, այլ ընդ այն կասկածէին, թէ մի ամենեւին Կիւրոս սակաւիկ ինչ մէտ

կշռոց համարիցի զնոսա եթէ մօտ իցեն եթէ հեռի։ Եւ իբրեւ երթային, քանզի գիշեր էր, լուսոյ, ասեն, յերկնից Կիւրոսի եւ զօրացն յայտնի իսկ երեւել, որպէս զի ամենեցուն դողումն եւ սոսկումն առ աստուածութիւն անդր լինել, եւ քաջալերութիւն առ թշնամիս։ Բայց քանզի պնդակազմն եւ երագ զճանապարհն երթային, նման է եթէ ընդ բազում ճանապարհ անցին, եւ ընդ արշալուրջն մօտ գային հասանէին Վրկանացւոց զօրուն։

Իսկ իբրեւ գիտացին հրեշտակքն ասեն ցԿիւրոս թէ սոքա են մերքն, զի ի յետոյն լինելոյ ծանեաք, ասեն, եւ ի բազում նշուլիցն. ապա առաքէ զմեւս եւս զոմն ի նոցանէ առ նոսա, հրաման տուեալ ասել, եթէ բարեկամք իցեն վաղվաղակի ընդ առաջ եկեալ զձեռս ի վեր ամբառնայցեն։ Յղէր ընդ նմա եւ զոմանս յորոց ընդ իւրն էին, եւ հրամայեաց ասել ցՎրկանացիսն, թէ որպէս տեսանիցեն զնոսա մատուցեալս, եւ նոքա ըստ նմին օրինակի առնիցեն. եւ այնպէս մին ի հրեշտակաց անտի մնաց առ Կիւրոսի, եւ մեւսն առ Վրկանացիս երթեալ հասանէ։

Յայնմ վայրի կայր դէտ ակն ունէր Վրկանացւոցն Կիւրոս, թէ զինչ գործիցեն եւ կարգեաց կացոյց զզօրսն։ Մատեան առ նա Մարացն յառաջա-

կացքն եւ Տիգրանէս, Հարցանէին թէ զինչ հասանիցէ գործել։ Սա ասէ ցնոսա. Այս իսկ է մօտաւոր բանակ Վրկանացւոցն եւ երթայ մեւս եւս ի Հրեշտակաց անտի առ նոսա եւ ի մերոցն ոմանք ընդ նմա ասել եթէ բարեկամք իցեն ընդ առաջ եկեսցեն ամենեքին զձեռս ի վեր ամբարձեալ։ Արդ եթէ այնպէս գայցեն, ընկալարուք զնոսա յորում վայրի եւ իցէ իւրաքանչիւր ոք, եւ խրախուսեցէք. եթէ զէն վերացուցանիցեն կամ ի փախուստ մտաբերիցեն, նախ, ասէ ջանացարուք վաղվաղակի մի զոք ի նոցանէ թողուլ։

Սա զայս ինչ պատուիրէր, եւ Վրկանացւոց լուեալ ի Հրեշտակաց, ուրախ եղեն եւ սրացեալ եկին հասին երիւարօքն, զաջս որպէս ասացաւն, ի վեր կարկառեալ. եւ Մարք եւ Պարսիկք ընդունէին զնոսա եւ քաջալերէին։ Այնուհետեւ ասէ Կիւրոս. Մեք ո Վրկանացիք հաւատամք իսկ ի ձեզ, եւ ձեզ պարտ եւ պատշաճ է նոյնպիսի միտս զմէնջ ունել։ Բայց նախ, ասէ, զայն ասացէք մեզ թէ ո՞րչափ ի բացեայ իցեն աստի անդր վանք իշխանաց թշնամեացն եւ ամբոխն նոցա։ Սոքա տային պատասխանի թէ սակաւ ինչ աւելի քան զկէսասախ մի։

Արդ ասէ Կիւրոս. Ա՛ռէք. ասէ, արք Պարսիկք եւ Մարք եւ դուք Վրկա-

նացիք, զի եւ ընդ ձեզ իբրեւ ընդ օգ-
նականս եւ զոմանս խօսիմ. պարտ եւ
պատշաճ է առնուլ ի միտ թէ յայն հա-
սեալ կամք, զի եթէ ի մեղկութիւն
հատանիցիմք, ամենեւին իսկ բնաւին
դժընդակացն հանանիցեմք. քանզի
գիտեն հակառակորդքն թէ յԷր վերայ
երթամք. այլ եթէ սաստիկ ուժգնու-
թեամբ դիմեալ երթայցեմք ի վերայ
թշնամեացն, անդէն տեսանիցէք ըստ
օրինակի ծառայից փախստականաց
դտելոց, զոմանս զի աղաչիցեն, զկէսս
զի փախստեայ գնայցեն, եւ զայլս եւս
որք եւ զայն չկարիցեն ածել զմտաւ։
Քանզի ի պարտութիւն մատնեալ
տեսցեն զմեզ, եւ չկարծիցեն եթէ մեք
հասեալ իցեմք, անդէն ոչ ճակատեալք
եւ ոչ պատրաստեալք անկանիցին ի
բուռն։ Եւ արդ եթէ ուրախութեամբ
կամիցիմք ընթրիս ուտել եւ գիշերել,
եւ կեալ յայսմ հետէ, մի տացուք նո-
ցա պարապութիւն մի խորհել եւ մի
պատրաստել ինչ անձանց օգնականու-
թիւն. եւ ամենեւին իսկ մի գիտաս-
ցեն եթէ մարդիկ իցեմք. այլ համա-
րիցին թէ բնաւ ասպար եւ սուսեր եւ
թուր եւ հարուածք դայցեն հասանի-
ցեն։

Եւ դուք, ասէ, ով Կրկանայիք,
ձեզէն կանխեալ քան զմեզ յառաջա-
դոյն ընթացարուք, զի յերեւել ձերոց

զինուցն բազում ժամանակս ղօղեալ կայցեմք։ Եւ յորժամ առ բանակս թշնամեացն հասանիցեմ, դուք իւրաքանչիւր զգունդ հեծելոցն առ իս թողէք, որպէս զի եթէ պիտոյ ինչ լինիցի, կացեալ առ բանակին նոքօք վարիցիմ։ Իսկ որ իշխանք իցեն ի ձէնջ եւ ծերագոյնք ի գնդի անդ միաժողով գնայցեն, եթէ իմաստունք իցեն, զի մի ուրեք առմբոխի իմիք դիպեալ բռնադատիցին։ Բայց զմանկագոյնսն արձակեցէք զի զհետ պնդիցին. եւ նոքին կոտորեսցեն. զի այն իմն այժմ առաւել զգուշութեան է, նուազունս թողուլ ի թշնամեացն։

Իսկ եթէ լինիցի զբախտն մղել եւ յերկիր կործանել, զոր եւ բազում իշխանաց դէպք եռուն, պարտ է զգոյշ լինել մի ի յափշտակութիւն անդր ընթանալ. զի որ զայն առնիցէ, ոչ եւս այր իցէ այնուհետեւ, այլ կապարձակիր. եւ համարձակ է այնմ որ կամին իբրեւ ծառայ ի կիր արկեալ վարել զնա. բայց եւ զայն պատշաճ է ի միտ առնուլ թէ քան զյաղթութիւն չիք իսկ ինչ շահաւորագոյն։ Զի որ յաղթէն զբնաւ միանգամայն յափշտակէ, զարս եւ զկանայս եւ զինչս եւ զամենայն իսկ համարէն աշխարհն։ Ընդ այն եւ եթէ հայեցարուք. թէ զիարդ զյաղթութիւնն ողջ ապրեցուցանիցեմք, քանզի եւ ի նմին ապաս-

տանեալ կայ եւ այն որ յափշտակէ։ Եւ զայս յիշեսջիք յորժամ զհետ մտեալ հալածիցէք, դալ միւսանգամ առ իս, մինչ դեռ եւս աւուր կայցէ, զի յորժամ խաւարը լինիցի ոչ եւս ընդունիցիմք զդք։

Զայս ասացեալ, զիւրաքանչիւր ոք յանցնիւր գունդն առաքէր, եւ պատուէր տայր երթելոցն իւրաքանչիւր տասնապետացն զնոյն յայտ առնել զի ի ճակատու անդ տասնապետքն էին, զի լսիցեն, եւ հրամայէին տասնապետացն պատմել տասանցն։ Ապա յառաջեալ երթային վրկանացիքն, եւ ինքն ի միջի անդ գնայր ընդ Պարսիցն, եւ զայրուձին յերկուց կողմանց ճակատեցուցանէր։

Իբրեւ իրքն համարձակ յայտնեցան, ոմանք ի թշնամեաց անտի զարմացեալ կային ընդ իրսն որ երեւեցան, ոմանք վհատեալ լքանէին, կիսոց գոյժ տրուեալ եւ կիսոցն աղաղակ եդեալ գոչէին, ոմանք զերիւարսն լուծանէին զկահ եւ զկազմած ի մի վայր ժողովէին, ոմանք զզէնն եւ զզարդ ի ջորւոցն ընկենուին, այլք վառէին պատրաստէին, եւ կէսք սրացեալ երթային ի վերայ երիւարացն, եւ կէսք սանձս ի բերան դնէին, իսկ զկանայսն ի դեսպական ճեպէին, եւ զամենայն ինչ զմեծագին առնոյին, որպէս զի պրծեալ ապրեցուցանիցեն եւ

ոմանք որ զայնպիսի ինչ խուզէին, անդէն ի բուռն անկանէին, բայց բազումք ի փախուստ դարձան։ Այսպէս պարտ է համարել թէ այլ եւս բազում ինչ եւ ազգի ազգի արարին նոքա, բայց միայն պատերազմեցաւ ոք ոչ այլ առանց կռուոյ կորեան։

Իսկ Կրիւսոս Ղիւդացւոց թագաւոր, քանզի ժամանակ ամարայնւոյ էր, զկանայսն ժանուարօք յառաջագոյն արձակեաց գիշերի, զի դիւրաւ գնայցեն զճանապարհն ի ցուրտ, եւ ինքն առեալ զհեծեալսն զհետ երթայր. եւ զփռիւգացւոյն ասեն թէ զնոյն եւ նա արար, որ Եղղեսպոնտացւոց փռիւգաստանի իշխան էր։ Իբրեւ զգաստ եղեւ նոցա զփախստէիցն եւ զհասելոց առնոսա, հարցեալ զերացն որ եղեն, եւ ինքեանք տաղնապաւ փախստեայ գնային։ Իսկ զՊամրաց արքայն եւ զԱրաբացւոց, քանզի տակաւին մօտ էին եւ առանց զրահից, սպանին Կրկանացիքն. եւ մեծ մասն յԱսորեստանեաց եւ յԱրաբացւոց սպանելոցն էր, քանզի մտեալ իսկ էին յաշխարհն իւրեանց եւ վասն այնորիկ յամրագոյնս երթային զճանապարհն։

Բայց Սարքն եւ Կրկանացիքն, որպիսի ինչ ի դէպ էր ի յաղթութեանն առնել, զայն առնէին ի հալածելն։ Իսկ Կիւրոս հեծելոց որ առ իւրն մնացեալ էին, հրաման ետ շրջել շուրջ զբանա-

կաւն եւ եթէ զոմանս զինուք հանդերձ ելեալս տեսանիցեն, կոտորել. եւ մնացելոցն քարոզ կարդայր, թէ որք ի զօրացանտի թշնամեացն հեծեալքն իցեն կամ ասպարաւորք կամ աղեղնաւորք, ժողովեալ ի բաց տայցեն զզէնսն, եւ զերիւարսն ի վրանսն թողուցուն. եւ որ զայն ոչ առնիցէ, անդէն հարկանիցի կառափն նորա, եւ բակ առեալ պատեալ կային զգնդաւն եւ սուսերք ի ձեռս իւրեանց։ Եւ որոց զէնք էին ի բաց թօթափէին ի տեղի մի ուր հրամայեաց. եւ որոց հրաման տուեալ էր, այրեցին։

Բայց Կիւրոս զմտաւ ած եթէ ոչ ռոճիկ եւ ոչ ըմպելի ունին մինչ երթանն, եւ թէ առանց այնր ամենայնի չէք ինչ հնար ի պատերազմ երթալոյ եւ ոչ այլ ինչ գործ գործելոյ։ Զմտաւ ածեալ թէ զիա՞րդ վաղվաղակի եւ բարւոք իրքն վճարիցին, խորհեցաւ եթէ հարկ իսկ է համօրէն զօրուն լինել առն միում, ում հոգ ի մտի իցէ վասն վրանին եւ թէ ռոճիկքն պատրաստեալ կայցեն զօրացն հասելոյ։ Ապա գիտաց եթէ ի դէպ է թէ առաւել քան զամենեսին նոքա ըմբոնեալ իցեն ի բանակի անդ որք զկահ եւ զկազմած ժողովիցեն, քարոզ կարդայր զի եկեսցեն հասցեն ամենայն ոստիկանք, եւ ուր չիցէ յան-

ձանձիչ, որ Ծերագոյնն իցէ ի խորանի անդ, նա։ Ուրբաս իբրեւ տեսին թէ եւ տեարքն իսկ հնազանդ լինին, վաղվաղակի անսային։

Իբրեւ եկին, նախ հրամայեաց նոցա նստել որոց աւելի քան զերկուց ամսոց պաշարք էին ի վրանի անդ։ Յորժամ ետեսն զնոսա, անդէն հրամայեաց եւ նոցա որոց ամսոյ միոջ պաշար էր, նստել. ապա գրեթէ ամենեքին իսկ նստան։ Իբրեւ ի միտ առ զայս ամենայն, ասէր այսպէս ցնոսա. Ուրէք այսուհետեւ, ասէ, ո՞ւրք որ զձերոց իսկ զանձանց չարիս ատեայք, եւ երախտեաց ինչ առ ի մէնջ կամիք հասանել, յօժարութեամբ փոյթ յանձին կալայք, զի երկպատիկ յիւրաքանչիւր վրանս կերակուր եւ ըմպելի պատրաստական կայցէ տերանց եւ ծառայից, քան զոր օր ըստ օրէ պատրաստէք. եւ զայլ եւս ամենայն որ ինչ բարւոք հացկերոյթ յօրինիցէ, կազմեալ պատրաստեալ առնիցէք, զի անդէն իսկ եկեսցեն հասցեն ոչ յաղթելոցն իցեն, եւ պահանջեսցեն լիով ունել զբնաւ իսկ զկարեւորսն։ Զայս գիտասջիք, ասէ, եթէ լաւ իցէ ձեզ եթէ առանց տրանջելոյ զարսն ընդունիցիք։

Ուրբաս զայն լուեալ բազում փութով եւ յօժարութեամբ զհրամայեալսն ի գլուխ հանէին, եւ նորա միւս-

անդամ կոչեցեալ զզօրագլուխսն խոսէր այսպիսի ինչ օրինակ։ Ահաւասիկ բարեկամք, գիտեմք եթէ մարթի այժմ ձեզ յառաջագոյն իսկ մինչ դեռ հեռի իցեն նիզակակիցք ձեր, ճաշ ուտել, եւ ազգի ազգի կերակրովք եւ ըմպելեօք վարել. այլ չմոռի ինձ թէ այն ճաշ աւելի ինչ օգուտ իցէ մեզ քան զայն զի երեւիցիմք եթէ ունիմք հոգ ի մտի վասն նիզակակցաց մերոց. եւ ոչ խրախուութիւնն այն այնչափ ուժգնագոյնս կատարիցէ, որչափ եթէ կարող իցեմք զնիզակակիցսն մեր յորդորագոյնս առնել։ Ապա թէ արդ իսկ զնոցունց որ հալածիցենն եւ սպանանիցեն զթշնամիսն մեր, եւ մարտ եդեալ կռուիցին եթէ ընդ հակառակս ի կռիւ ոք կայցէ, կարծեցուցանիցեմք անփոյթ առնել, որպէս զի մինչ չեւ իսկ գիտացեալ եթէ զի՞նչ գործ գործիցեն, մեք ճաշ ուտիցեմք. մի իցէ եթէ անամօթք իսկ երեւիցիմք եւ տկարք եւ անզօրք լինիցիմք ի նիզակակցաց մերոց չքաւորեալք. այլ զվաստակաւորաց եւ զվերշտացելոց հոգ ի մտի ունել ումեք, զի յորժամ գայցեն, զկարեւորն պէտս գտանիցեն. այս սեղան քաջ ուրախ առնիցէ զմեզ, որպէս ես ասեմ, քան եթէ վաղվաղակի յորկորատութիւն հատանիցիմք։

Օ՛մտաւ ածէք, ասէ, թէ եւ ի նո-

ցանկ չէր պարտ ամաչել, սակայն եւ ոչ այնպէս վայելուչ էր զմայլութիւնն եւ ոչ արբեցութիւնն. զի չեւ եւս ի գլուխ ել զոր կամէաքն, այլ ամենայն այժմ տեւեալ բաւէ եւ կարօտ է մերով հոգաբարձութեամբ: Զի ունիմք ի բանակի սատ թշնամիս բազմապատիկ քան զմեզ, եւ զնոսա քակեալս ի միմեանց, յորոց թերեւս ի դէպ իցէ տակաւին զգոյշ լինել եւ պահել զնոսա, զի իցեն եւ որք զպիտոյից կարեւորաց մեզ սպասաւորութիւն հարկանիցեն: Դեռ եւս ի բացեայ են ի մէջ այրուձին, եւ տան հոգալ եթէ ուր իցեն, եւ եթէ գայցեն եւս, կայցե՞ն մնասցե՞ն: Որպէս զի, ով արք, ինձ այսպէս լաւ թուի եթէ այնչափ կերակուր եւ այնչափ ըմպելի պարտ իցէ առնուլ, որչափ ոք համարիցի առաւել օգուտ լինել առ ի մի քնով եւ մի ապշութեամբ լի լինելոյ:

Դուս գիտեմ ես, եթէ բաղում ինչք գոն ի զօրու անդ, եւ չեմ ինչ անտեղեակ թէ վասն զի հասարակաց են այնոցիկ որ ըմբռնիցին, մարթի մեզ առնուլ որչափ ինչ կամիցիմք, այլ ինձ չթուի շահաւորագոյն առնուլն քան զարդարն երեւել յաչս նոցա եւ նովին իմն շահել առաւել եւս գիրկս արկանել նոցա զմեզ: Ինձ հաճոյ թուի, ասէ, եւ զբաշխել կարաւոյն, յորժամ եկեսցեն, Մարաց եւ Պրկանաս-

ցուց եւ Տիգրանայ առնել յանձն։ Թէպէտ եւ բնաւ սակաւ ինչ մեզ տայցեն, շահ պարտ է համարել, զի վասն շահիցն յօժարագոյնս եւս կայցեն մնայցեն ընդ մեզ։ Զի այժմ ագահել, սակաւժամանակեան տայցէ մեզ զմեծութիւն. զի եթէ ժոյժ ունիցիմք զայն սատանայցեմք, ուստի մեծութիւնն ծնանի. այս իսկ է, որպէս ինձ թուի, որ զյաւիտենից մեծութիւնն մեզ եւ մերոցն ամենեցունց մարթի մատուցանել։ Թուի ինձ, ասէ, զի եւ յաշխարհի անդ մերում մեք վասն նորին իսկ կրթէաք, եւ ժուժկալս պորտոյ էաք եւ անդէպն շահից, զի յորժամ պիտոյ լինիցի, նոքօք մարթայցեմք յօգուտ վարել։ Զ՞ուր ի մեծամեծս եւս քան զսոյնս որ առաջիս կան զկարրատն ցուցանիցեմք, ես ոչ տեսանեմ։

Նա զայս ինչ խօսեցաւ։ Յանձն առ Կշտասպաս այր պարսիկ ի պատուակցաց անտի, եւ ասէ այսպէս. Քանզի անպատեհ է, ասէ, ով Կիւրէ, եթէ յորսսն բազում անգամ նօթի եւ անսուաղ համբերիցեմք, զի գազան ինչ արկանիցեմք ի բուռն, թերեւս եւ զփոքրագին իսկ, եւ այժմ մինչ զողջոյն իսկ փառաւորութիւնն կամիմք որսալ, եթէ արգել ինչ եւ խափան զայն առնիցեմք անձանց, որ չարաց մարդոց տիրէ, իսկ լաւացն հնազանդ լինի. եւ

արդ մի թուլցիմք առնել զոր մեզ չվայելիցէ։ Վ շտասպաս այսպէս յանձին կալաւ, եւ այլք եւս ամենեքին գովէին։ Եւ Կիւրոս ասէ. Ուռէք, ասէ, որովհետեւ միամտեալ եմք, առաքեցէք ամենեքին ի վաշտէ արս հինգ ի փուլթոցն. նոքա շուրջ երթայցեն, եւ զորս տեսանիցեն զի զուռճիկսն ամբարեն գովեսցեն, եւ զորս տեսանիցեն յանփուլթութեան տանջիցեն յանխնայ իբրեւ տեարք։

ԳԼՈՒԽ Գ

ԵՎՈՔԱ զայն առնէին. եւ ի Արաց անտի ոմանք հասեալ դարձուցանէին զկառան լցեալս, որովք կարօտ իսկ էին զօրքն, եւ ոմանք զժանուարս կանանց ազնուաց յորոց կէսք ճշմարիտ իսկ կանայք էին եւ կէսքն հարճք, զնոսա ըմբռնէին։ Վանզի եւ ցայժմ իսկ ամենայն Ասիացիքն յորժամ ի մարտ պատերազմի երթայցեն, առեալ զամենայն ինչ զմեծագին, երթան, ասեն իմն այսպէս, թէ առաւել եւս պատերազմիցին եթէ մօտ կայցեն սիրեցեալքն. զի նոցին իմն ասեն հարկ ի վերայ կայ վերակացու լինել յօժարութեամբ։ Արդ թերեւս այդ այդպէս իցէ, բայց թերեւս հեշտականութեանն իմն շնորհելով կամիցին առնել։

Բայց Կիւրոս տեսեալ զգործս Մարացն եւ Վրկանացւոց, իբրեւ մեղ իմն անձինն եւ իւրոցն գնէր, թէ այլք ի ժամանակին յայնմիկ անցուցանեն զնոքօք եւ ստանան ինչ, եւ ինքեանք կան մնան ի դատարկ վայրսն։ Զի եւ աւարօղքն ցուցանէին Կիւրոսի զոր ածէինն, եւ միւսանգամ երթային զայլս հալածել. զայս առնել, ասեն, հրաման առաք յիշխանացն։ Ի խոր խոցեալ կայր Կիւրոս, սակայն ունէր յանձին զայն ամենայն։ Ի մի վայր կոչէր զզօրագլուխսն, եւ կացեալ ուր մարթ էր լսելի լինել բանիցն ասացելոց, ասէր այսպէս։

Զէ մեծամեծ բարութիւնք առնին ամենայն Պարսից, եթէ ըմբռնիցեմք զոր երեւինս, մանաւանդ յիրաւի իսկ մեզ զի մեք գործին. զայն ամենեքին իսկ գիտեմք։ Բայց զիա՞րդ եւ ո՞ր գունակ մեք նոցա տեարք լինիցիմք որ չիցեմքն բաւական ստանալ զնոսա, եթէ չիցէ սեպհական այրուձի Պարսից, զայն ես դեռ եւս ոչ տեսանեմ։ Զմտաւ ածէք, ասէ, զի ունիմք մեք Պարսիկքս զէնս որովք զթշնամիսն ի յարձակել անդ իւրեանց ի փախուստ դարձուցանիցեմք։ Եւ յորժամ ի փախուստ դարձուցանիցեմք, զօրս հեծեալս կամ աղեղնաւորս կամ ասպարաւորս կամ տիգաւորս. մեք որ առանց երիւարաց իցեմք կարիցեմք ի փախստի կամ ըմբռ-

նել կամ սպանանել. ոչ՝ թէ ոչ ոչ ոչ

էր իրիք կարօտութիւն իցէ։ Բազում երիւարք կան ըմբռնեալ ի բանակի անդ եւ սանձք որով.ք նուաճին, եւ այլ եւս ամենայն որով.ք վարին որք զերիւարսն ունին. եւ ասպազէն եւս ունիմք, զրահս եւ սանձանց ամրութիւնս եւ տէգս, զոր եւ արձակել մարթեմք եւ ունել։ Իսկ զինչ պակաս իցէ. յայտ է եթէ արանց պէտք են. մանաւանդ զայն իսկ ունիմք, քանզի չիցէ ինչ այնպէս մեր, որպէս մեք մերոց իսկ անձանց։

Այլ թերեւս ասիցէ իսկ ոք, եթէ չեմք հմուտ. բայց եւ ոչ յայնցանէ որ այժմ գիտիցեն, մինչ չեւ ուսեալ, հմուտ էր ոք։ Թերեւս ասիցէ ոք եթէ ի մանկութեան ուսան. միթէ մանրկ-տին իմաստնագոյնք իցեն առ ուսանել զասացեալս եւ զցուցեալս, քան զարս. եւ ոյք իսկ, եթէ ուսանիցին, բաւականք եցեն մարմնով.ք ի գործ վաստակոց, մանկտին եթէ արք։ Ա՞յ եւ պարապութիւն եւս է մեզ ուսանել որ ոչ մանկտւոյ եւ ոչ այլոց արանց գոյ. քանզի չէ իսկ հարկ մեզ ուսանել նետաձիգ լինել զոր օրինակ մանկտին. զի այնմ յառաջագոյն իսկ խելամուտ եմք, եւ ոչ նիզակ առնուլ, քանզի եւ այնմ հմուտ եմք։ Ա՞յ եւ ոչ հանգոյն այլոց արանց, ոմանց մշակութեան պարապութիւնք են, եւ այլոց արուեստից հանգամանք, եւ կիսոց այլ ինչ տան

իրք։ Իսկ մեզ ի պատերազմն երթալ, ոչ պարապութիւն եւ եթէ, այլ եւ հարկ իսկ։

Եւ ոչ իբրեւ զայլ եւս բաղում իրս պատերազմի դժուարինք են, այլ եւ քաղցր եւս։ Ո՞չ ապաքէն հեշտակա-նագոյն իցէ ի ճանապարհի երիւար քան զհետիոտն ընթանալ. ոչ եւ ի փու-թալն քաղցր իցէ, վաղվաղակի առ բարեկամն հասանել, եթէ պիտոյ լի-նիցի, եւ արագ եթէ զմարդոյ եթէ զգազանի պարտ իցէ զհետ մտեալ հա-սանել. եւ այն եւս չիցէ՞ դիւրութեան զի զգէնն եւ զզարդն զոր պարտ իցէ կրել, զայն երիւարն խառն ընդ մեզ կրիցէ. քանզի եւ ունելն իսկ զէնս եւ տանելն նոյն է։ Եւ յորմէ առաւել ոք երկրնչիցի, այս է, թէ մի գուցէ եթէ հասանիցէ մեզ յառաջագոյն ի տաղ-նապի անկանել երիվարաւ մինչ չեւ ճշ-դրիտ ուսեալ զգործն, եւ այնուհետեւ ոչ հետեւակք իցեմք եւ ոչ քաջ հեծ-եալք։ Բայց եւ այն չէ ինչ առանց պաճարանաց. զի ուր եւ կամիցիմք մարթ է մեզ անդէն ընդ հետեւակացն իսկ կռուել. քանզի ոչ եթէ զհետե-ւակաց մարտսն մոռանայցեմք յորժամ յերիւար հեծանել ուսանիցիմք։

Կիւրոս այսպէս ըստ ամին բանից խօսէր։ Իսկ Վրիւանտաս յանձին կալեալ խօսէր այսպէս. Լա՛, ասէ, այն

չափ ցանկամ ուսանել յերիվար հեծանել, զի համարիմ եթէ յորժամ հեծեալ լինիցիմ, մարդ թռչուն լինիցիմ։ Զի ես այժմ սիրէի, թէ միայն յանդգնեալ դիմագրաւեալ զոյգ ընթանալ ընդ մարդոյ, իմով եւեթ անձամբ յաղթել կարիցիմ, եւ եթէ գազան տեսանիցեմ զի անցանիցէ, կարիցեմ ձգեալ աճապարել առ ի նիզակ առնուլ կամ նետաձիգ լինել մինչ չեւ ամենեւին հեռացեալ նորա։ Ապա թէ հեծեալ լինիցիմ, կարիցեմ սպանանել զայր յերկայնութենէ տեսլեան աչաց հայելոյ, եւ ձեռնհաս իցեմ, յորժամ գազանաց զհետ մտանիցեմ, զկէս ի մօտոյ խոցել եւ ըմբռնել եւ զկէս նիզակաւ հարկանել որպէս թէ կայցեն իսկ։ Զի եթէ երկու արագունք իցեն սակայն մօտ հասեալ միմեանց, իբրեւ կացեալ երեւիցին։

Զան զամենայն գազանսն, ասէ, առաւել զարմանալի զյուշկապարիկ գազանսն համարիմ, եթէ գուցեն։ Զի խորհիցին մարդկեղէն հանճարովն, եւ ձեռօք զարժանն վճարիցեն, եւ զձիոց երագութիւն եւ սաստկութիւն ունիցին մինչեւ զփախստականն սպանանել եւ զդիմակացն ի փախուստ դարձուցանել։ Արդ զայն ամենայն միանգամայն եւ ես եթէ հեծեալ լինիցիմ, յանձին բարձեալ բերիցեմ։ Զիննա-

մակալութիւնն ունիցիմ ամենեւին ի-
մովն մարդկեղէն մտօքն եւ ձեռամբք
զզէնսն կրիցեմ, եւ երիւարաւ զՀետ
մտանիցեմ, եւ զՀակառակորդն ի փա-
խուստ դարձուցանիցեմ երիւարին ուժ-
գնութեամբն, բայց ոչ եթէ ի բնէ
ինչ կապեալ կայցեմ որպէս ձիացուլքն
զի այս իսկ քան զբունն լաւ է։

Բանզի զձիացլուց կարծեմ թէ բա-
զում բարւոք գիւտից մարդկան չեն
Հմուտ թէ զիա՞րդ պարտ իցէ ի կիր ար-
կանել. եւ բազում Հեշտականութիւն
տնկեալ կայ ի բնութեան երիւարաց,
որպէս պարտ իցէ վայելել ի նոսա,
զայն ոչ գիտեն։ Բայց ես յորժամ
ուսանիցիմ յերիւար Հեծանել, յոր-
ժամ նստիցիմ ինուս երիւարաց, զձիա-
ցլու իրս վճարիցեմ, եւ յորժամ ի-
ջանիցեմ, ընթրիս ուտիցեմ եւ Հան-
դերձ ագանիցիմ եւ ննջիցեմ, որպէս
եւ այլ եւս մարդիկն։ Զի՞նչ այլ ինչ
իցեմ եթէ ոչ ձիացուլ, որ զատ իցեմ
եւ միւսանգամ կցիցիմ։

Եւ եւս աւելի, ասէ, ունիցիմ քան
զյուշկապարիկ գազանն. զի նա երկուք
աչօք տեսանիցէ, եւ երկուք ականջօք
լսիցէ. բայց ես չորիւք աչօք նշմարի-
ցեմ, եւ չորիւք ականջօք զգայցեմ։
Զի բազում ինչ ասեն ձիոյն յառա-
ջագոյն տեսեալ մարդկան յայտ առնել,
եւ բազում ինչ ականջօք յառաջագոյն

լուեալ գուշակել։ Արդ զիս, ասէ, գրեսջիր ընդ այնոսիկ որ ցանկանայցեն յերիւսար հեծանել։

Ասեն եւ այլքն ամենեքին թէ եւ զմեզ ընդ նոսա գրեսջիր։ Ապա, ասէ, Կիւրոս. Ոչ՝ինչ իցէ, որովհետեւ ամենեցուն այս հաճոյ թուի, եթէ օրէնս անձանց առնիցեմք թէ ամօթ է այնոցիկ որոց ես տաց երիւարս, եթէ երեւիցի գնացեալ հետիոտս, եթէ բաղում ճանապարհ հասանիցէ գնալ եթէ սակաւ, զի ամենեւին իսկ համարիցին զմեզ մարդիկ ձիացուլս իսկ լինել։ Նա զայս խօսէր, եւ ամենեքին միաբան գովէին։ Որպէս զի մինչեւ ցայժմ յայնմ ժամանակէ հետէ նոյնպէս վարին Պարսիկք, եւ ոչ ոք յազնուացն Պարսից կամակար երեւիցի ուրեք հետիոտս երթեալ։

Գ Լ Ո Ւ Խ Դ

Նոքա մինչ դեռ զբանիւքն էին։ Յորժամ հասարակ օր անցանէր, եկին հասին Արքն հեծեալք եւ Վրկանացիքն, երիւարս ի գերուԹեան վարեալ եւ զարս. զի որք զզէնսն ի ձեռս տային, ոչ սպանանէին։ Եւ իբրեւ մատեան, նախ եհարց զնոսա Կիւրոս թէ ամենեքին ողջ իցեն. եւ իբրեւ ասացին թէ ողջ եմք, այնուհետեւ հարցանէր

թէ զինչ գործ վճարիցեն. եւ նոքա կային պատմէին զոր ինչ գործեցինն, եւ որչափ արութեամբ քաջութեամբ իւրաքանչիւր, եւ մեծաբանէին։ Եւ նա լսէր զամենայն ախորժութեամբ զոր ինչ կամէինն ասել։ Ապա դրուատէր զնոսա այսպէս. Յայտ իսկ է, ասէ, եթէ արք քաջք եղերուք, քանզի մեծամեծք իսկ երեւիք եւ գեղեցիկք եւ երեւելիք քան զառաջինն։ Ապա հարցանէր ցնոսա թէ զո՞ր ճանապարհ գնային, եւ թէ բնակեալ իցէ աշխարհն. եւ նոքա պատմէին թէ ընդ բազում կողմանս անցաք եւ ամենեւին իսկ շէն է երկիրն, եւ լի է օգեօք եւ ուլօք եւ երընջովք եւ ձիովք եւ ցորենովք եւ ամենայն բարութեամբք։

Երկուս ինչս, ասէ, պարտ է մեզ հոգալ, զի յաղթօղ լինիցիմք այնոցիկ որ ունինն զնոսա, եւ զի ինքեանք անդէն կայցեն։ Քանզի շէն երկիր մեծագին ստացուած է, իսկ որ թափուր ի մարդկանէ իցէ, սին եւ թափուր ի բարութեանց իցէ։ Արդ գիտեմ, ասէ, զի զդիմադարձան սպանէք եւ ուղղութեամբ արարէք. քանզի դոյն իսկ ողջ գյաղթութիւնն պահիցէ, եւ զորս անձնատուրն եղեն գերիս առէք, զորս եթէ արձակիցեմք, զնոյն դարձեալ օգուտ գործիցեմք, որպէս ես կարծեմ։ Նախ զի ոչ զդուշանալ պի-

տոյ լենիցի մեզ եւ ոչ պահել զնոսա եւ ոչ կերակրել զնոսա, զի ոչ եթէ սո-վով սպանանիցեմք զնոսա։ Զի յոր-ժամ զնոսա արձակիցեմք զեւս բա-զումս վտարանդեալս ի գերութեան ունիցիմք. զի եթէ տիրիցեմք աշխար-հին, ամենեքին որ ի նմին աշխարհի բանակիցեն, գերի լենիցին։ Անաւանդ իսկ զի որ կենդանիս տեսանիցեն զնո-սա եւ արձակեալս, կացցեն եւ այլք եւ լաւ համարիցին հնազանդել քան պատերազմել։ Արդ ես այսպէս գիտեմ. ապա թէ այլ ինչ ազնուագոյն ոք տե-սանիցէ, ասասցէ։ Իսկ նոցա լուեալ յանձն առնոյին զդոյն առնել։

Ապա կոչեցեալ Կիւրոսի զգերին, ասէ այսպէս. Արք, ասէ, այժմիկ զի հնազանդեցարուք. մի ինչ չար լենիցի ձեզ այսուհետեւ եթէ նոյնպէս առնի-ցէք, ոչ մի ինչ չար լենիցի ձեզ, այլ ոչ նոյն տիրեսցէ ձեզ որ յառաջն տի-րէր։ Բնակեցարուք ի նոյն տունս, եւ զերկիր զնոյն արկէք ի գործ, եւ ընդ նոցին կանաց բնակեցարուք, եւ որդւոցն ձերոց իշխեցէք որպէս եւ այժմ. բայց միայն ընդ մեզ մի մարտնջիցիք եւ ոչ ընդ այլում ումեք. եւ եթէ զբր-կեսցէ ոք զձեզ, մեք փոխանակ ընդ ձեզ տացուք մարտ պատերազմի ընդ նոսա։

Եւ զի մի հրամայեսցէ ոք ձեզ զօ-ւրաժողով երթալ ի պատերազմ, զզէնս

առ մեզ բերէք, եւ որոց բերենն եղեցի խաղաղութիւն, եւ զոր խօսիմքն առանց նենգութեան խօսիմք. իսկ որ ոչն թողուցուն ի բաց զզէնս պատերազմի, մեք երթայցեմք ի վերայ նոցա ի պատերազմ: Եւ եթէ ոք ի ձէնջ մտադիւրութեամբ եկեսցէ առ մեզ եւ գործիցէ ինչ եւ ուսուցանիցէ, զնա մեք առ երախտաւորս եւ բարեկամս ունիցիմք եւ ոչ առ ծառայս: Այս, ասէ, դուք ի միտ առէք եւ այլոց զրոյց տուք. եւ եթէ մեք, ասէ, ընդ այս կամիցիմք, եւ ոմանք ոչ հնազանդեսցին, տարայք զմեզ ի վերայ նոցա, զի մեք նոցա իշխիցեմք եւ ոչ նոքա մեզ: Այս զայս ասէր, եւ նոքա երկիր պագին նմա, եւ յանձին կալան առնել այնպէս:

ԳԼՈՒԽ Ե

Իբրեւ նոքա գնային ասէ Կիւրոս. Ժամ է ով Մարք եւ Պարք ընթրիս ուտել մեզ ամենեցուն. պատրաստեսցին ձեզ պէտքն կարեւորք, որչափ մեք ձեռնհաս իցեմք: Այլ երթայք եւ առաքեցէք մեզ զարարելոյ հացիդ զկէն եւ լինիցի բաւական ձեզ եւ մեզ. խորտիկ մի յղեցէք եւ մի ըմպելի, զի ունիմք բաւականութեամբ առ մեզ պատ-

բաստեալ. եւ դուք, ասէ, Վրկանա-
ցիք, ածէք զդոսա ի վրանսն, զեշխանսն
ի մեծամեծ խորանս զոր եւ գիտէք
իսկ, եւ զայլսն որպէս ինչ ձեզ հաճոյ
թուիցի։ Եւ դուք ընթրիս կերայք,
ուր ձեզ քաղցր իցէ. քանզի ողջ իսկ
խորանք են ձեր կազմեալք պատրաս-
տեալք անդ որպէս եւ սոցա։ Բայց
զայս ինչ գիտասջիք թէ զարտաքինսն
մեզ հասանէ պահել գիշերի, եւ զորս
ի վրանսն իցեն, դուք տեսէք եւ զի-
նուք ի դիմի հարկանիցիք նոցա. քան-
զի որ ի վրանսն են դեռ եւս չեն մեր
բարեկամք։

Արքն եւ տիգրանեանքն լուացան,
զի ամենայն ինչ կազմ եւ պատրաստ
էր, եւ զհանդերձս փոխեալ, ընթրիս
ուտէին, եւ էր կերակուր երիւարաց
նոցա, եւ առաքէին Պարսից ի հացէ
անտի զկէսն, եւ խորտիկ ոչ առաքէին
եւ ոչ գինի, զի կարծեցին թէ ունին
կիւրոսեանքն, զի ասացն թէ խորտիկ
առատութեամբ ունիմք։ Բայց Կիւ-
րոս զայս ասէր, խորտիկ զքաղցն,
եւ ըմպելի ի գետոյն որ ընդ այն հոսէր։

Կիւրոս իբրեւ ընթրիս արար Պար-
սից, եւ խաւար եղեւ, զբազումն ի
նոցանէ հինդ հինդ եւ տասն տասն
արձակէր, եւ հրաման տայր շուրջանա-
կի զբանակաւն զօղել, զմտաւ ածեալ
թէ պահ լինիցի եթէ արտաքուստ ոք

մերձենայցէ, եւ եթէ արտաքս ոք գնայցէ հատուածեալ առնեալ ինչս, ի բուռն անկանիցի. եւ այնպէս ի գլուխ եկ. քանզի բազումք էին որ հատուած երթային եւ ըմբռնեցան բազումք։ Կիւրոս թոյլ ետ զի կարասին ըմբռնելեացն լինիցի, եւ զարան հրամայեաց սուր ի վերայ եդեալ կոտորել. որպէս զի յայնմ հետէ, եւ ոչ թէ կամէր ոք, զտանէր դիւրաւ զոք որ երթայցէ գիշերի. այսպէս կային Պարսիկքն։ Բայց Մարք արբենային եւ ուրախ լինէին եւ հարկանէին սրինգս եւ ամենայն ուրախութեամբ լի լինէին։ Զանզի բազում ինչ ի բուռն անկաւ, առ ի չգատարկանալոյ գործոյ այնոցիկ որ սկէինն։

Իսկ Կիաքսարէս Մարաց արքայ, ի գիշերին, յորում Կիւրոս գնաց, արբեցաւ հանդերձ նոքօք որ ի վրանի անդ էին իբրեւ ի փառաւոր յաղթութենէ անտի, եւ զայլոց եւս Մարաց կարծէր թէ ի բանակի անդ են բաց ի սակաւաւորացն, զի բազում աղմուկ լսէր. քանզի Մարաց ծառայքն յորժամ թողին զնոսա ուեարքն անհնարին ըմպէին եւ աղմկէին, մանաւանդ զի եւ ի բանակէ ասորեստանեցոյն զինի բազում եւ այլ նոյնպիսի ինչ առին։

Իբրեւ տիւն լուսացաւ եւ ոչ ոք ի դրունսն չոգաւ, բայց միայն որ ընդ

նմա իսկ ընթրիս կերան, եւ լսէր թէ թափեալ է բանակն ի Մարացն եւ ի հեծելոցն, եւ յորժամ ելն, ետես թէ այնպէս է, զայրացաւ Կիւրոսի եւ Մարացն, զի թողին զնա ամայի եւ գնացին. եւ անդէն վաղվաղակի, որպէս անագորոյն էր, ասեն, եւ ապախտաւոր մտօք, հրաման տայ միում ումեք ի մօտակացացն առնուլ զհեծեալսն որ առիւր իցեն եւ երթալ առ զօրն որ զԿիւրոսիւ էր, եւ ասել այսպէս։ Կարծէի ես, ասէ, զքէն ով Կիւրոս եթէ ոչ այնպէս անմտութեան խորհուրդ խորհիս դու զենէն։ Իսկ եթէ Կիւրոս այնպէս կամիցի, չհամարէի ձեզ ով Մարք եթէ կամիցիք թողուլ զիս. եւ այժմ եթէ Կիւրոսի այն կամ իցէ, կացցէ. իսկ եթէ ոչ. դուք վաղվաղակի իսկ հասէք։

Այդ հրաման ետ. եւ որ զհրամանն առ երթալ, ասէ. Իմարդ ես, տէր, դատանիցեմ զնոսա։ Իմարդ, ասէ, Կիւրոս եւ որ ընդ նմայն էին գնացին յորոց վերայ գնացինն։ Իմ լսեմ, ասէ, զոմանց Կրկանացւոց թէ ապստամբեցին ի թշնամեացն եւ եկեալ յետս առաջնորդք եղեն նոցա։ Իբրեւ զայս լուաւ Կիաքսարէս առաւել եւս ցասուցեալ ընդ Կիւրոս զի զայն չեհան նմա ի վեր, բազում տագնապաւ առաքէր առ Մարս զի զնա լոկ եւ թափուր առնիցէ. եւ եւս սաստկագոյն քան զա-

ռաջինն սպառնացեալ կոչէր զՍ՝արս. եւ առաքելոյն սպառնացաւ եթէ ոչ ասստկութեամբ պատմեսցէ։

Զնաց առաքեալն, առեալ ընդ իւր զՀեծեալս իւր իբրեւ հարեւր հեծեալ, տրտմեալ զի եւ ինքն ոչ չոգաւ ընդ Կիւրոսի. եւ իբրեւ գնացին ի ճանապարհ, եւ բաժանէին ճանապարհքն ի շաւղաց, մոլորեցան, եւ ոչ հասին ի բանակն Կիւրոսի մինչեւ պատահեալ նոցա ոմանց յՍորեստանեաց եւ բռնադատեալ զնոսա առաջնորդս լինել. եւ այնպէս երթեալ հասանէին զխարոյկս նշմարեալ զհասարակածաւ դիշերոյ։ Իբրեւ մօտ եղեն ի բանակ անդր, պահապանքն, որպէս ի Կիւրոսէ ասացեալ էր, ոչ թողին զնոսա ի ներքս յառաջ քան զօրն։ Իբրեւ տիւ ծագեաց, նախ զմոգսն կոչէր եւ հրաման տայր դիցն ըստ օրինացն հաշտ առնել վասն ի վերայ այնպիսի բարութեանցն։ Իբրեւ նոքա զայնու էին, նորա կոչեցեալ զպատուակիցսն, ասէ։

Ընդ յաճախագոյն բարութիւնս դիքն ցուցանեն. բայց մեք ով Պարսիկք սակաւաւորք եմք ի ժամանակիս յայսմիկ առ ի ժուժկալ լինելոյ նոցա. զի եթէ զոր ստացաքն, զայն ոչ պահիցեմք, միւսանգամ օտարաց լինիցի, եւ եթէ թողուցուցեմք զոմանս ի մէնջ արարոցն պահապանս, անգէն կարծիս տայցեմք

թէ ոչ գուցէ ինչ մեր զօրութիւն։ Արդ հաճոյ թուի ինձ վաղվաղակի երթալ միում ումեք ի մէնջ ի Պարսս եւ յայտ առնել զոր ինչ եան խօսիմ, եւ հրաման տալ փութանակի առաքել զօրս եթէ արդարեւ ցանկանայցեն Պարսիկք, զհարստութիւն Ասիացւոց աշխարհին եւ զշահս նոցա լինել։ Երթ, ասէ, դու ով ծերդ, եւ երթեալ խօսեաց զայս ամենայն, եւ թէ զզօրականացն զոր առաքեսցեն, յորժամ գայցեն առ իս, ինձ փոյթ լեցի այնուհետեւ վասն ուռճկի նոցա։ Եւ որ ինչ է մեր, զայն դու ինքնին տեսանես, ծածկիցես իսկ ի նոցանէ եւ ոչ մի. եւ եթէ առաքիցեմ ինչ ի նոցանէ ի Պարսս բարւոք եւ օրինօք առնիցեմ. զդիցն ցիմ հայրն հարց, եւ զհասարակաց իրաց ցիշխանսն։ Առաքեսցեն եւ լրտեսս իրացն զոր գործիցեմք եւ քննիչս զորոց հարցանիցեմք. եւ դու, ասէ, կազմ եւ պատրաստ լինիջիր. եւ զգունդն տար յուղարկաւոր։

Այպա զԱ՝արսն կոչէր, եւ եկեալ հասեալ կայր հրեշտակն Կիւրոսայ, եւ ամենեցուն լու ի լու զառ Կիւրոս ցասումն եւ առ Ա՝արս զսպառնալիսն պատմէր, եւ գլուխ իսկ ամենայնի ասէր եթէ հրաման է դառնալ գալ Ա՝արայ, թէպէտ եւ Կիւրոս կամիցի մնալ։ Ա՝արք իբրեւ լուան ի հրեշտակէ անտի

լուռ եղեն ի վարանս մտեալ թէ զիարդ պարտ իցէ անսաստել կոչելեացն, եւ երկուցեալ թէ որպէս ունկնդիր լինի-ցին այնմ որ սպառնայրն. մանաւանդ զի գիտէին զանազորոյն միտս նորա։

Բայց Կիւրոս ասէ. Ոչ իս ով պատգամաւոր, ո Արք ոչ ինչ զարմանք ունին եթէ Կիաքսարէս բազում թշնամիս յայնժամ տեսեալ, եւ զի չգիտէ զոր ինչ մեքն գործեմք, տաղտապի վասն մեր եւ վասն իւրոյ անձինն։ Այլ եթէ ազգ լինիցի նմա թէ բազումք ի թշնամեացն սատակեցան եւ ամենեքին քակտեալք եւ պառակտեալք են, նախ իսկ յերկեղէ անտի դադարիցէ, ապա ի միտ առցէ եթէ այժմ ամայի ոչ իցէ յորժամ բարեկամք նորա զթշնամիս նորա սատակիցեն։ Այլ եւ պարսաւանաց զիարդ իցեմ արժանի, ուր բարի առնիցեմ նմա. եւ ոչ զայս ամենայն ինքնակամն. այլ ես ածի զնա ի հաւան թոյլ տալ ինձ առնուլ զձեզ եւ երթալ։ Եւ դուք ոչ եթէ արշաւանի ցանկացեալ աենչացարուք եթէ ելանիցէք, եւ այժմ յետս դառնայցէք, այլ ինմանէ հրաման առէք ելանել ում ի ձէնջ չիցէ տաղտուկ։ Արդ ես ճարտար գիտեմ թէ այն ցասումն ի բարուքեանց աստի ցածնուցու եւ ընդ երկեղեն ի բաց փարատիցի։ Արդ այժմիկ ասէ, ով պատգամաւորդ հանգիր

քանզի վաստակեալ ես։ Դու մեք ով Պարսիկք, քանզի ակն ունիմք գալոյ թշնամեացն կամ ի մարտ պատերազմի կամ ի հնազանդութիւն, ազնուագոյնս ճակատեսցուք։ Զ.ի եթէ այնպէս երթայցեմք, ի դէպ է թէ առաւել եւս քաջ վճարիցեմք որ ինչ պիտոյն իցէ մեզ։ Դու, ասէ, որ Վրկանացւոց իշխանդ ես, դադարեա կաց պատուէր տուր զօրավարաց զօրաց քոց զզօրսն վառել։

Իսկ իբրեւ զայս ամենայն ի գլուխ հանեալ գայր վրկանացին, ասէ Կիւրոս։ Դս, ասէ, ով վրկանացիդ, ուրախ առնիմ յորժամ զգամ եթէ ոչ միայն զբարեկամութիւնն յայտ արարեալ գաս, այլ թուի ինձ թէ հանճար եւս եւ իմաստութիւն ունիցիս։ Դու զի մեզ օգուտ իցէ այն ամենայն, յայտ է. զի ինձ թշնամիք Ասորեստանեայքն են, այժմ քեզ եւս առաւել թշնամի է քան եթէ ինձ։ Այսպէս մեզ երկոցունցս խորհուրդ հասանէ խորհել թէ զիարդ յօգնականաց որ այժմ մօտ իցեն, մի ոք ապստամբիցէ. եւ զայս եւս եթէ կարիցեմք ի բուռն արկցուք։ Լուար դու զմարէն զի կոչեաց զայրուձին. եւ եթէ նոքա մեկնեսցին, որպէս մեք միայն հետեւակքս կայցեմք մնայցեմք, արդ այսպէս պարտ է առնել ինձ եւ քեզ, զի նա որ կոչեաց եւ

ինքն կամեսցի առ մեզ մնալ։ Զու դու Գոբրիաս վրան տուր նմա ուր եւ պարտիցէ եւ զամենայն զպիտոյան ունիցի. եւ ես փութացայց գործ ինչ ի ձեռն տալ նմա զոր ախորժելով գործիցէ եւ ոչ մեկնեսցի. եւ խօսեաց ընդ նմա թէ որչափ ինչ բարեկամաց ամենեցուն եթէ պատշաճքն ի գլուխ ելանիցեն։ Օ այս յորժամ առնիցես միւսանգամ եկ առ իս։

Զոգաւ վրկանացին եւ զմարն ածի վրան անդր եւ որ ի Պարսան երթալոց էր, անդէն կայր կազմ եւ պատրաստ, եւ Կիւրոս պատուիրեաց ասել ցՊարսիկան որ ինչ յայտ յառաջին բանսն եղեւ, եւ տալ Կիաքսարայ զգիրն, կամիմ, ասէ, զի զոր ինչ ի թղթի ասա գրեալ իցէ իմ, ընթեռնուցուս, զի գիտացեալ խոստովան լինիցիս եթէ ոք զքեզ վասն նոցին հարցանիցէ. եւ էին ի հրովարտակի անդ այսպիսի ինչ բանք։

Կիւրոս Կիաքսարայ ողջոյն։ Մեք զքեզ լոկ ոչ թողաք, քանզի ոչ եթէ յորժամ ժուժկալ ոք թշնամեաց լինիցի, յայնժամ թափուր ի բարեկամաց լինիցի. եւ ոչ զի մեկնեցաքն ի քէն դու ի վիշտս կաս եւ ի տագնապի. այլ որչափ առաւել հեռի իցեմք ի քէն, դոյնչափ յաճախագոյն քեզ զամրութիւնն գործիցեմք։ Զանզի ոչ եթէ

ի բարեկամաց անտի ոչք մօտն նստիցին աւելի ինչ յամրի զսիրելիսն առնիցեն այլ ոչք զԹշնամիս ի բաց մերժիցեն, նոքա զբարեկամն յապահովս կացուցանիցեն։ Մի՛ տդիր թէ որպիսի ոչ եղէ ես քեզ եւ դու որպիսի ոչ ինձ լինիս, զի ինձ մեղ դնես։ Այս ածի քեզ զօրաւիգն օգնականութեան, ոչ որչափ դուն հաւանեցուցեր, այլ որչափ ես ձեռնհաս եղէ յաճախագոյնս։ Դու ետուր ինձ յորժամ յերկրին խաղաղութեան էին, այնչափ որչափ կարող էի ածել ի հաւան, այժմ յերկրի աստ թշնամեաց, ոչ զայն որ կամիցի այլ զամենեսին իսկ կոչես։ Դանզի յայնժամ ձեզ պարտիմք շնորհս, եւ այժմ բռնադատես մոռանալ զքեզ, եւ այնոցիկ որ զհետ իմ եկին ջանալ զբնաւ իսկ զշնորհսն հատուցանել։ Դայց ես քեզ նման չկարեմ լինել. այլ եւ այժմ առաքեալ զզօրուէ ի Պարսս, պատուէր ետու թէ ոչք գայցենն առ իս, եթէ կարօտ ինչ նոքօք իցես, մինչ չեւ եկեալ նոցա առ մեզ, որպէս դուն կամիցիս, վարել նոքօք։ Դայց խրատ տամ քեզ, թէպէտ եւ կրտսեր եւս իցեմ, մի հանել զոր ետուրն, զի մի թշնամութիւնք քեզ փոխանակ շնորհացն հասանիցեն, եւ ոչ յորժամ կամիցիս թէ վաղվաղակի գայցէ ոչք առ քեզ առաքեսցես սպառնալիս, եւ մի ասել թէ լոկ մնա-

ցի եւ բազմաց սպառնալիս յաճախի-
ցես, զի մի ուսուցանիցես զնոսա չառ-
նել ինչ փոյթ այնուհետեւ զքէն։ Եւ
մեք փութասցուք հասանել յորժամ
վաղվաղակի ի գլուխ հանեալ վճարի-
ցեմք զոր ինչ քեզ եւ մեզ առհասա-
րակ բարութիւնս համարիցիմք. ողջ լեր։

Օ այս թուղթ տայցես դու նմա եւ
եթէ հարցանիցէ ինչ ի սոցանէ քեզ,
որպէս գրեալ կայ այնպէս ասա. զի եւ
զՊարսից պատուիրեմ քեզ որպէս եւ
գրեալ է. զայս ասէր նմա եւ տուեալ
զթուղթն տրճակէր պատուէր տուեալ
այնպէս ճեպել որպէս գիտէրն եթէ օ-
գուտ իսկ է վաղվաղակի հասանել։

Ապա հայեցեալ տեսանէր զամենե-
սեան զԿրկանացիսն եւ զայնոսիկ որ
զՏիգրանաւն էին։ Եւ Պարսիկքն սպա-
ռազէն վառեալ էին. եւ այլք ի մե-
տաւոր աշխարհացն երիւարս ածէին
եւ զէնս բերէին, եւ նա զասպարսն
ուր զառաջինսն ընկեցեալ էին, հրա-
մայեաց այնոցիկ որոց նոյն գործ էր
ընկենուլ եւ այրել որովք չէին իսկ ին-
քեանք կարօտ։ Բայց զերիվարսն հրա-
մայեաց կալ մնալ պահել բերելեացն
մինչեւ յայտ իմն առնիցի նոցա։ Իսկ
զիշխանս հեծելոցն եւ Կրկանացւոցն
կոչեցեալ խօսէր այսպէս։

Արք բարեկամք եւ պատերազմա-
կիցք, մի զարմանայցէք, ասէ, թէ բա-

զում անդամ կոչիցեմ զձեզ, քանզի նոր են որ առաջիս կան. հարկ է թէ աշխատութիւնս հասուցանիցեն, մինչեւ կայցեն կարգեալ յիւրաքանչիւր տեղւոջ։ Այժմ բազում կարասի է ձեր ի գերութենէ անտի եւ արք բազումք. եւ առ չգիտելոյ մեր թէ ո՞ր ի նոցանէ իւրաքանչիւր ուրուք ի մէնջ իցէ, եւ զի ոչ նոքա գիտեն ո՛ ոք իւրաքանչիւր ուրուք ի նոցանէ տէր իցէ, բնաւ չիք իսկ զբազումս ի նոցանէ տեսանել զպատշաճսն վճարեալս. բայց գրեթէ ամենեքին իսկ տարակուսեալ են եթէ զի՞նչ արժան իցէ առնել։ Եւ արդ զի մի այնպէս ինչ լինիցի, զայն սահմանիցէք։

Եւ որ ա՛ռ ոք վրան յորում գուցէ ամենայն ինչ բաւական, եւ կերակուր եւ ըմպելի եւ սպասաւորք եւ գահոյք եւ հանդերձք, եւ այլ ինչ ամենայն որով բարւոք բնակութիւն յօրինիցի զինուորութեան խորանին, անդ ոչ այլ ինչ պարտ է յաւելուած առնել, բայց այնմ որ առնու՝ գիտել թէ զայնցանէ իբրեւ զիւրոցն պարտիցի հոգ ի մտի ունել։ Իսկ որ ի վրանս կարօտութեան հասանիցէ բնակել, դուք տեսանիցէք զնոսա եւ զպակասութիւնն լնուցուք։ Գիտեմ թէ եւ բազում ինչ գոյ աւելորդ, քանզի զամենայն ինչ աւելի քան զմեր բազմութիւն ունէին թշնամիքն։ Եկին առ իս եւ գանձուց

կապարճակիրք Աւորեստանեաց թագաւորին եւ այլոց եւս հարստաց, որք ասէին թէ կայ առ նոսա ոսկի դրոշմաւոր եւ զհարկաց իմն խօսէին։

Արդ քարոզ կարդացէք թէ զայն ամենայն առ ձեզ բերցեն ուր եւ նրստիցիք, եւ ահ արկանիցէք այնմ որ առնիցէ զհրամանն։ Եւ դուք առէք տուք, հեծելոց զկրկինն եւ հետեւակի զլոկն, զի ունիցիք եթէ կարօտանայցէք իւիք եւ գնոց գնիցէք։ Իսկ ի վաճառս որ ի բանակի անդ իցեն, քարոզ կարդացէք, ասէ, մի ոք զրկեալ զլանայցէ. իսկ աշխարհաւանդիւքն եւ վաճառականք, զոր ինչ ունիցի իւրաքանչիւր ոք՝ տալ գնոց, եւ զայն կարգեալ եւ յօրինեալ, այլ բերել զի շէն լինիցի բանակս մեր։

Ընդքա անդէն քարոզ կարդային. իսկ Ա՛ստրքն եւ Վրկանացիք ասեն այսպէս։ Զի՞որ դ, ասեն, մեք առանց քո եւ քոյոցն բաժանիցեմք զայսոսիկ։ Կիւրոս անդէն տայր պատասխանի բանիցն։ Մինթէ այսպէս ածիցէք ասէ, զմտաւ թէ որ ինչ հասանիցէ գործել, յամենայնի պարտ է մեզ ամենեցուն մօտ լինել. եւ ոչ ես բաւական լինիցիմ ձեզ գործելով փոխանակ ձեր ինչ զոր պարտ իցէ, եւ ոչ դուք փոխանակ մեր, եւ զի՞որ այլազգ առաւել վաստակս եւ աշխատութիւն յանձին ու-

նիցիմք եւ դուն ինչ վճարիցեմք, եթէ ոչ այսպէս։ Այլ տեսէք, ասէ, զի մեք պահեցաք ձեզ զայսոսիկ, եւ դուք մեզ հաւատացէք թէ բարուք իսկ պահեցան։ Դուք դարձեալ բաժանեցէք եւ մեք հաւատասցուք ձեզ եթէ բարուք բաժանեցէք, եւ փութասցուք միմեանց առհասարակ լաւութիւն ինչ գործել։

Տեսէք, ասէ, նախ թէ որչափ երիւարք իցեն մեր եւ որչափ գայցեն։ Արդ եթէ զսոսա թողուցումք առանց հեծանելոյ, չիցեն ինչ մեզ օգուտ եւ աշխատութիւնս եւս հասուցանիցեն։ Իսկ եթէ հեծեալս նստուցանիցեմք ի վերայ նոցա, յաշխատութենէն զերծանիցիմք եւ զօրութիւնս յաւելուցումք նոցա։ Եթէ ունիցիք զայլ եւս ոմանս որոց տայցէք զնոսա, ընդ որոց քաղցր իցէ ձեզ վիշտս կրել եթէ հասանիցեն ինչ վիշտք ի վերայ, քան ընդ մեզ, նոցա տուք. եթէ զմեզ կամիցիք առաւել ձեռնկալուս ունել, մեզ տուք։ Քանզի եւ այժմ յորժամ առանց մեր դիմեալ ի տագնապի կայիք, բազում ահ հասուցէք մեզ թէ մի գուցէ վշտանայցէք ինչ, մանաւանդ թէ յամօթ արարէք զմեզ, զի չէաք անդ ուր դուք եւ եթէ առնուցումք երիւարս, զհետ եկեսցուք ձեր, եւ եթէ աւելի ինչ օգուտ գործիցեմք մարտուցեալ ձեւք

հանդերձ ի վերայ երիւարաց, ապա ոչ ինչ իւիք պակասեալ գտանիցիմք յուրախութենէ, իսկ եթէ հետեւակք իցեմք առաւել եւս թիկունք լինիցիմք ձեր, վաղվաղակի իջանիցեմք եւ հետի հասանիցեմք ձեզ զօրաւիդն. եւ մեք հնարեսցուք գտցուք ում տացուք զերիւարսն։

Նա զայս խօսէր, եւ նոքա տային պատասխանի. թէ Մ՝եք ո Կիւրէ ոչ արս ունիմք զոր ի նուս երիւարաց նատուցանիցեմք, եւ ոչ թէ ունէաք, որովհետեւ դու ընդ այս կամիս այլ ինչ նմին հակառակ ընտրէաք. եւ այժմ ասեն առեալ զերիւարսն արա որպէս թուի իսկ քեզ։ Ընդունիմ, ասէ. մեք հեծեալք լինիցիմք, եւ դուք բաժանիցէք որ ինչ հասարակաց իցէ։ Ընդ նախ, ասէ, դիցն ոլոշեցէք զոր ինչ մոգքն հրամայիցեն. եւ ապա ընտրեցէք Կիաքսարայ զոր ինչ կարծէք թէ առաւել հաճոյ իցէ նմա։

Նոքա ծիծաղեալ, ասեն, թէ զկանայս դեղեցիկս պարտ է զատանել։ Օ կանայս, ասէ, ընտրեսջիք եւ որ ինչ ձեզ հաճոյ թուիցի։ Եւ յորժամ որոշիցէք նմա, ո Կրկանացիք, ամենեցուն որ կամակար զհետ իմ եկին մի տայցէք տրտնջել ըստ ձերում կարի։ Եւ դուք ով Մ՝արք մեծարեսջիք զդոսա որք նախ զօրաւիդն օգնականութեան

եղեն, որպէս զի համարեսցին եթէ բարուք խորհուրդ խորհեցան զի բարեկամք մեր եղեն։ Ապանէք բաժին յամենայնէ եւ պատգամաւորին որ առ ի Կիւրոսարայ եկն, նմա եւ որոց ընդ նմա. եւ աղաչեցէք զի ընդ մեզ կայցէ, ասացէք թէ եւ ինձ նոյն բարուք թուի. զի եւ Կիւրոսարայ զճշմարիտն պատմեսցէ ի միտ առեալ զամենայն մի ըստ միոջէ։ Իսկ Պարսից որ ընդ իս իցեն, որչափ ինչ աւելորդ իցէ յետ քաջ կազմելոյ պատրաստելոյ ձեր, այն բաւական է. քանզի մեք հովասուն չենք այլ շինականութեամբ. մինչ զի թերեւս ծիծաղիցիք իսկ զմեզ եթէ մեծապայծառ ինչ հանդերձ ագանիցիմք. զոր օրինակ, ասէ, գիտեմ եթէ յաճախ ծաղր ածիցեմք ձեզ յորժամ յերիվարաց վերայ նստիցիմք. թուի ինձ թէ եւ յորժամ ի գետին անկանիցիմք։

Ապա գնացին նոքա ընտրել ծիծաղեալ ընդ բան հեծանելոյն։ Իսկ նա զզօրագլուխսն կոչեցեալ հրաման տայր զերիւարսն առնուլ եւ զերիւարացն կազմածս եւ զվարաւանդասպասսն եւ համարակարս առնուլ վիճակեալս գընդաց գնդաց։ Եւ ինքն իսկ Կիւրոս հրամայեաց ասել եթէ իցէ ոք Յասորեստանեաց կամ Յասուրոց, կամ Յրաբացւոց զօրուէն ծառայ այր կամ Մարաց կամ Պարսից կամ Բակտրիացւոց կամ

Կարիացւոց կամ Կիղիկեցւոց կամ Յունաց կամ այլուստ ուստեք նեղեալ բրունութեամբ ի մէջ գայցէ։ Եւ որք լուան քարոզութեանն ինքնակամ բաղումք երեւեցան։

Եւ նորա ընտրեալ զազնուագոյնսն ի նոցանէ տեսլեամբ, ասէր թէ յաղաստութիւն ելեալ կրեսցեն զդէնսն զոր տայցեն նոցա, եւ ինձ, ասէ, փոյթ լիցի, զի զռոճիկսն ունիցիք. եւ անդէն տարեալ առ զօրագլուխսն, յանձն արար նոցա եւ հրաման ետ ասպարս եւ նուրբ սուսերս տալ նոցա, զի առեալ զհետ գայցեն երիւարօք, եւ զռոճիկսն հանգոյն Պարսից որ ընդ իւրն իցեն առնուլ նոցա. եւ ինքեանք զրահապատք եւ արդնաւորք ցանգ յերիւարաց վերայ երթայցեն. եւ նախ ինքն սկսաւ առնել այնպէս. իսկ ի վերայ հետեւակաց պատուակցացն իւրաքանչիւր ոք փոխանակ իւր զայլ ոք իշխան կացուցանիցէ ի հանգիտապատուաց անտի։ Նոքա զայնու էին։

ԳԼՈՒԽ Զ

Յաջնմ ժամանակի Գովբրիաս աւորի հասանէր ծեր այր, երիւարաւ հանդերձ ասպասու հեծելոցն։ Ամենեքին ունէին ասպազէն, եւ որք կարգեալ էին առնուլ զդէնսն, հրամայէին զդե-

զարդունսն տալ զի այրեսցեն որպէս եւ զայլ եւս զէնսն։ Բայց Գովբրիաս ասէ. եթէ զԿիւրոս նախ կամիմ տեսանել, եւ սպասաւորքն զայլ եւս հեծեալս նորա թողին եւ զԳովբրիաս տարան առ Կիւրոս. նա իբրեւ եառեալ զԿիւրոս սկսաւ խօսել զայս գոյն օրինակի բանից։

Տէր, ես յազգէ ասորի եմ, է իմ պարիսպ ամուր, եւ բազում աշխարհաց տիրեմ, եւ հազար երիւար տայի թագաւորին Ասորեստանեաց եւ բարեկամ էի նմա առաւել։ Բայց քանզի նա ի ձէնջ մեռաւ որ այր պիտանի էր,նորին որդի զհարստութիւնն ունի որ ինձն թշնամի է, առ քեզ գամ եւ աղաչանօք անկանիմ առաջի քո, եւ տամ քեզ զանձն իմ ծառայ եւ պատերազմակից եւ խնդրեմ զի առցես զքէն վրիժու իմոյ, եւ զքեզ արարից որդեակ որչափ ինչ հնար գուցէ, քանզի անորդի եմ յարու մանկանէ։

Օ՛ի որ գեղեցիկն էր, տէր, եւ լաւ եւ պիտանի եւ զիս սիրէր եւ ինձ մեծարանս դնէր. զոր օրինակ որդի որ հօր շուք դնիցէ փառաւոր լինիցի, զնա այժմու թագաւորս, ի կոչել յայնժամու թագաւորին հօր այժմու թագաւորին զի զդուստրն տայցէ իմում որդւոյն, քանզի եւ ես առաքեցի մեծամտեալ իմն եթէ գոգցես արքայի

դստեր ամուսինլեալ տեսանիցեմ զորդեակն իմ. իսկ այժմու թագաւորս կոչեալ զնա յորս. թոյլ տայր նմա որս առնել ըստ զօրութեանն, զի առաւել ազնուագոյն քան զնա հեծեալ զանձն համարէր. եւ նա իբրեւ ընդ բարեկամի որս առնէր։ Իբրեւ արջ երեւեցաւ, երկոքին զհետ մտանէին, որ այժմ իշխանն է, նա նետ ձգեալ վրիպեաց. երանի թէ ոչ երբեք իսկ, բայց իմ որդին ձգեալ, որ չէր արժան կործանեաց զարջն եւ ապա տրտմեալ տխրեալ թագոյց զչարակնութիւնն։

Միւսանգամ յորժամ առիւծու պատահեաց դարձեալ նա սխալեաց, թուի թէ ոչ զարմանալի ինչ կրեաց եւ որդին իմ դարձեալ դիպեցուցեալ եհար զառեւծն, եւ ասէր թէ միով հարուածով երկիցս ձգեցի եւ կործանեցի երկիցս գազանս։ Յայնմ վայրի ոչ եւս ժոյժ ունէր նախանձու, այլ բուն մի գեղարդան յումեքէ յեկելոցն զհետ՝ յափշտակեալ ի զիստան հարեալ զմիայն եւ զսիրելի որդեակն իմ յարեւէ արկանէր, եւ ես հէքս զդիակն փոխանակ փեսային տարայ, եւ մինչ դեռ այն ինչ տեգք մուրուացն արձակէին զքաջ որդեակն իմ զսիրելի թաղեցի։ Եւ որ սպանն, որպէս թէ թշնամի այր սատակեցաւ, ոչ երբէք սարջացաւ, եւ ոչ փոխանակ չարու-

թեան գործոյն պատուի իրիք արժանի արար զայն որ ընդ հողով էր։

Այր նորա մորմոքէր յիմ վերայ եւ յայտնի իսկ տրտմէր ընդ իս ընդ վիշտն։ Արդ ես, եթէ նա կենդանի լեալ էր, ոչ երբեք գայի առ քեզ առ չարուոյ նորա, քանզի բազում գութ եւ խնամ անկանէր նորա ընդ իս եւ սպասաւորութիւն հարի նմա։ Բայց քանզի իսպանօղ անդր որդւոյս հաս իշխանութիւնն չկարեմ բարւոք միտս ունել ընդ նմա, եւ գիտեմ թէ եւ ոչ նա երբեք բարեկամ համարիցի զիս։ Քանզի գիտէ թէ որպիսի միտս ունիմ ընդ նմա եւ զի յառաջն զուարթութեամբ կեանս կէի, այժմ լոկ եւ թափուր մնացի եւ սգով զծերութիւնս ի գլուխս հանիցեմ։ Արդ եթէ դու զիս ընդունիցիս, կայցէ եւ ինձ ինչ ակնկալութիւն հասանելոյ խնդրել զվրէժ որդւոյ իմոյ սիրելւոյ, միւսանգամ մանկանալ թուիցիմ եւ ոչ ամօթով կեցցեմ եւ ոչ ի մահուս տրտմութեամբ վախճանիցիմ։

Նա զայս խօսէր եւ Կիւրոս տայր պատասխանի. Եթէ արդարեւ զնոյն ածես զմտաւ զոր ինչ խօսիս առ մեզ, ընդունիմ զքեզ որ աղաչեսդ եւ խոստանամ վրէժ առնուլ իսպանողէ անտի հանդերձ աստուծովքն։ Ասա դու ցիս, ասէ, եթէ զայդ ամենայն առնիցեմք

քեզ եւ զպարիսպդ թողցուք քեզ եւ զաշխարհն եւ զզէնս եւ զզօրականն զոր յառաջն ունէիր, դու մեզ զինչ ընդ այնր սպասաւորութիւն հարկանիցես։

Եւ նա ասէ. Զպարիսպն յորժամ կամիցիս տաց քեզ տուն բնակութեան, եւ զհարկ աշխարհին զոր նմա հարկանէի քեզ տաց. եւ ուր հասանիցէ ի պատերազմ երթալ, երթայց ընդ քեզ ի պատերազմ առեալ զզօրս աշխարհին։ Եւ եւ իմ, ասէ, դուստր կոյս սիրելի եւ ժամ է ամուսնութեան, զորմէ ես յառաջն կարծէի թէ այնմ որ այժմ թագաւորէ կին սնուցանեմ։ Բայց այժմ ինքն դուստրն իմ յոյժ արտասուելով պաղատի ինձ մի տալ զինքն այնմ որ զեղբայրն սպան, եւ ես նոյնպէս զմտաւ ածեմ։ Այժմ քեզ տամ խորհել վասն նորա այնպէս որպէս եւ ես վասն քո խորհիմ։

Ապա ասէ Կիւրոս. Վասն այսր ամենայնի, ասէ, ես ճշմարտութեամբ տամ քեզ զաջ իմ եւ առնում զաջ քո. դիքն եղիցին մեզ վկայք։ Իբրեւ այս ի գլուխ ել, հրաման ետ երթալ Գոբրիայ առեալ զզէնսն, եւ հարցանէր եթէ որչափ ինչ գնաց ճանապարհի իցէ առ նա, եթէ գայցէ. եւ նա ասէր եթէ վաղիւ ելցես ընդ արշալուրշն, ի միւսում աւուր առ մեզ լինիցիս։ Եւ

Գովբրիաս մեկնեցաւ թողեալ առաջնորդ մի։

Իսկ Մարացն հասեալ զոր ինչ մոգքըն ասացին ընտրել աստուածոցն տային ձեռն ի ձեռն մոգացն. եւ Կիւրոսի զատուցին զխորանն գեղեցիկ եւ զկինն շուշանացի, զորմէ քան զամենայն կանայս Ասիացւոցն պատմէին թէ գեղեցիկ է. եւ ապա Կիաքսարայ զերկրորդսն. եւ այլովք եւս նոյնպիսեօք որովք կարօտն էին լցուցանէին զանձինս զի ոչ իւիք կարօտեալ երթայցեն ի պատերազմ, զի ամենայն ինչ բազում էր։ Ասնուին եւ Վրկանացիք որոց կարօտ ինչ էին, բաժանակից առնէին զպատգամաւորն Կիաքսարայ, եւ զաւելորդ խորանսն որչափ էին, ետուն Կիւրոսի զի Պարսից լինի՛ցի եւ զդանձսն, ասեն, յորժամ բնաւն ժողովեցի, տացուք, եւ ետուն իսկ։

Ուրեքա զայս ինչ գործէին եւ խօսէին. եւ Կիւրոս հրամայեաց ընտանեացն Կիաքսարայ առնուլ եւ պահել զամենայն որ ինչ նորա էր։ Դու զոր տայք ինձ, յօժարութեամբ, ասէ, ընդունիմ. ի կիր արկցէ զնոսա որ առաւել կարօտեալ իցէ ի ձէնջ։ Ամն ի Մարաց անտի որ զգուսանութիւն սիրէր, ասէ. Ես, Կիւրէ, լուայ երիկունն զձայն արուեստականացն զոր դու ուսանէիր եւ քաղցրութեամբ լուայ, եւ եթէ տաս դու

ինձ զմի ոք ի նոցանէ, լաւ համարիցիմ երթալ ի մարտ պատերազմի քան երթէ ի տան մնալ։ Կիւրոս ասէ. Ես, ասէ, տամ քեզ. եւ առաւել շնորհակալ լինիցիմ քեզ զի խնդրեցեր յինէն, քան դու ինձ զի առնուսդ։ Զի այսպէս ծարաւի եմ շնորհս առնել ձեզ։ Ապա առ զնա այն որ խնդրեացն։

ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳՊՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐՈՒՆՈՎՐԵՆՏԵԱՅ

ԿԻՐՈՍԻ ԽՐԱՏՈՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա

Կոչեցեալ Կիւրոսի զԱրասպէս մար որ ի մանկութենէ ընկեր էր նորա, որում եւ զմարական պատմուճանն հանեալ ետ յորժամ յԱժդահակայ ի Պարսս մեկնէր, հրաման ետ նմա զի պահեսցէ նմա զկինն եւ զվրանն, եւ կինն էր Աբրադատայ Շաւշացւոց թագաւորի. եւ յորժամ ի բուռն անկաւ Ասորեստանեաց բանակն, այր նորա ոչ դիպեցաւ ի զօրու անդ, այլ առ Ռակտրիացւոց արքայն պատգամագնաց լեալ էր։ Առաքեաց զնա ասորեստանեայն վասն թիկանց օգնականութեան քանզի հեւր լեալ էր Ռակտրիացւոց թագաւորին։ Զսա հրամայեաց Կիւրոս Արասպայ պահել, մինչեւ ինքն առնուցու։

Արասպէս որ զհրամանն առ, հարցանէր. Տեսո՞ր, ասէ, ով Կիւրէ, զկինն

զոր պահել հրամայես։ Ասէ Կիւրոս Ոչ տեսի։ Դա, ասէ, տեսի յորժամ ընտրէի զնա քեզ, եւ կրկին անդամ յորժամ մտանէաք ի խորանն նորա զառաջինն ոչ ծանեաք զնա. զի ի դեռին անկեալ դնէր եւ ամենայն նաժիշտք զնովաւ էին. եւ ունէր հանդերձ հանգոյն աղախնացն. եւ իբրեւ կամեցաք գիտել թէ ո ոք տիկինն իցէ զամենեքումբք հայեցաք. եւ վաղվաղակի յայտնի իսկ զատաւ յայլոցն ամենեցունց, թէպէտ եւ նստեալ եւս ի հող եւ ծածկեալ երեւէր։ Իբրեւ հրաման տուաք նմա կանգնել կալ, յարեան ընդ նմա եւ ամենեքին որ զնովաւ էին։ Յայնմ վայրի նախ զանցուցանէր յաղթանդամութեամբն, ապա ուժգնութեամբն եւ քաջութեամբն եւ գեղեցկութեամբ, թէպէտ եւ ի գձձութեան կերպարանս կայր. եւ յայտնի երեւէին արտասուացն վիժելն զի ի հանդերձն հոսէին եւ յոտսն։ Իբրեւ ասաց որ ծերագոյնն էր ի մէջ, թէ քաջալերեաց ով կին դու. լսեմք թէ քո այրն գեղեցիկ է, բայց այժմ ընտրեմք զքեզ առն որ ոչ ի վայր իցէ քան զնա գեղով եւ ոչ մտօք եւ ոչ զօրութեամբ։ Այլ որպէս մեք համարիմք, թէպէտ եւ իցէ եւս այլ այր, սակայն եւ Կիւրոս արժանի զարմանալոյ է, եւ դու այսուհետեւ նորա լեցիս։

Իբրեւ լուաւ զայս կինն պատառէր զվերին պատմուճանն եւ մորմոքէր. եւ կառաչէին ընդ նմա նաժիշտքն։ Յայնմ վայրի մեծ մասն երեսաց նորա երեւէր պարանոցն եւ ձեռքն։ Ի միտ առ, ասէ, Կիւրոս, եթէ ինձ եւ այլոց ամենեցունց որ տեսին այսպէս թուեցաւ թէ ոչ երբեք ծնեալ իցէ կին մի համեմատ ի մահկանացուաց աստի մինչեւ զոր աշխարհին եւ դու տեսցես զնա։

Կիւրոս ասէ. Կարի իսկ սակաւ տեսից, ասէ, եթէ այնպիսի ոք է որպէս դու պատմես։ Հիմ, ասէ երիտասարդն։ Ոչ եթէ այժմ, ասէ, լուեալ ի քէն եթէ գեղեցիկ է, յանձին կալայց երթալ տեսանել, յորժամ ամենեւին չիցէ ինձ պարապութիւն, երկրնչիմ թէ մի կարի վաղվաղակի հաւանեցուսցէ նա զիս գալ տեսանել։ Եւ ապա թերեւս անփոյթ արարեալ զոր պարտն իցէ գործել, նստիցիմ հայիցիմ ընդ նա։

Իսկ երիտասարդն ծիծաղեալ ասէ, Համարիցիս, ասէ, ով Կիւրէ, եթէ բաւական իցէ գեղ մարդոյ բռնադատել զայն որ չկամիցի գործել արտաքոյ քան զլաւութիւն։ Ոչ եթէ այդ այդպէս էր, ասէ, զնոյն օրինակ զամենեսին ի հարկէ բռնադատէր։ Տես, ասէ, զկրակ, զիարդ զամենեսին զմի օրինակ կիզու. զի ի բնէ իսկ այնպէս է։ Իսկ ի գեղեցկաց, կիսոց ցանկանան եւ կի-

սոց ոչ, եւ այլ ոք այլում տեսնէայ. քանզի կամական է եւ ցանկայ իւրաքանչիւր ոք ում կամի։ Ոչ եղբայր քեռ ցանկայ, այլ այլ ոք նմին ցանկայ. եւ ոչ հայր դստեր, այլ այլ ոք դստերն. քանզի եւ ահ եւ օրէնք բաւական են զցանկութիւնն կարճել։ Եթէ օրէնք, ասէ, դնէին թէ որոց չիցէ կերեալ մի քաղցիցեն, եւ որոց չիք արբեալ մի ծարաւեսցին, եւ մի ձմերայնի մնել եւ մի ամարայնի տապանալ. ոչ մի ինչ օրէնք ձեռնհաս էին վճարել զի մարդիկ նոցին հնազանդ լինիցին. քանզի ի բնութենէ է ի նոցունց յաղթել. իսկ ցանկալն կամածին է. իւրաքանչիւր ոք ցանկայ այնմ որ ըստ իւրոց մտացն իցէ. որպէս հանդերձից եւ աւդոց։

Եւ արդ զիա՞րդ, ասէ, եթէ ար դարեւ կամածին ցանկալն էր, ո՞չ եւ դադարել մարթիցի յորժամ կամիցի ոք։ Եւ, ասէ, տեսի զի եւ լային եւս ի տրտմութենէ անտի վասն ցանկութեանն, եւ ծառայութիւն հարկանէին նոցին որոց ցանկայինն. որք եւ չար զծառայանալն համարէին յառաջ քան զցանկութիւնն. եւ բազում ինչ շնորհէին, յորոց չէր ինչ բարւոք նոցա զրկել եւ զլանալ. եւ ըղձանային եւս իբրեւ յախտէ իմեքէ զերծանել եւ չէին ձեռնհաս ապրել, այլ կապեալք

եւ կծեալք ի սաստիկ ինչ հարկէ իմեքէ առաւել քան յերկաթի կապանաց։ Տան զանձինս այնոցիկ որոց ցանկանանն, բաղում եւ ընդ վայր իսկ սպասաւորութիւն հարեալ։ Ա՛յս եւ ոչ ի բաց փախչել մտաբերեն որ այնպիսի ցաւովքն ծնգեալ են, այլ եւ պահեն եւս զայնսիկ որոց ցանկանանն զի մի ուրեք վտարանդի գնայցեն։

Ասէ երիտասարդն. Այնպէս, ասէ, առնեն. են իսկ, ասէ, այնպիսիքն ստահակք։ Վասն որոյ թուի ինձ թէ ցանգ իսկ եւ հանապազ ըղձանան թէ հէքք մեռանիցին, ուր բիւրապատիկ հնարք եւ հայթայթանք իցեն ի կենաց զերծանելոյ եւ ոչ զերծանիցին։ Ա՛ռքին իսկ եւ ի գողանալ մտաբերեն եւ յօտարայն ոչ կարճեն զձեռս, այլ յորժամ յափշտակիցեն ինչ կամ գողանայցեն, մեղադիր լինիս այնմ որ գողանան եւ յափշտակէ. եւ ոչ եթէ արգահատես, այլ եւ տանջես եւս։ Այոյնպէս, ասէ, եւ գեղեցիկքն ոչ եթէ բռնադատեն ի հարկէ ցանկալ անձանց, եւ ոչ ձգել զմարդիկ յոր ինչ չիցէ պարտ, այլ մարդք ժանդք ամենայն ցանկութեան չունին ժոյժ, եւ ապա մեղադիր ցանկութեանն լինին։ Բայց որ լաւքն եւ պիտանիք իցեն ցանկալ ցանկան ոսկւոյ եւ ազնիւ երիւարաց եւ կանաց գեղեցկաց, սակայն յայնմ ամենայնէ

դիւրաւ մարթեն ի բաց մերժել զանձինս զի մի հուպ երթայցեն նոցա արտաքոյ քան զարժանն։ Արդ ես, ասէ, տեսի զնա, եւ ամենեւին գեղեցիկ թուեցաւ ինձ, սակայն առ քեզ եմ, եւ յերիւար հեծանիմ, եւ զայլ եւս զպատշաճան վճարեմ։

Ասէ Կիւրոս. Թերեւս վաղվաղակի իսկ անցեր. զի մարթի եւ ի հուր ումեք հուպ լինել եւ ոչ իսկ եւ իսկ այրել եւ փայտք ոչ վաղվաղակի վառին։ Սակայն ես ոչ ի հուր հուպ լինիմ, եւ ոչ ի գեղեցիկսն պշնուիմ, եւ ոչ քեզ խրատ տամ ասէ, ով Արաձպա, զի տայցես աչաց քոց դեգերել ի գեղեցիկսն. զի հուր զմերձեցեալսն այրէ, իսկ գեղեցիկք եւ զայնոսիկ որ ի բացուստն նայիցին, բորբոքեն մինչեւ զգալոյ ցանկութեանն։ Արաջալերեաց, ասէ, ով Կիւրէ. եւ ոչ թէ չդադարիցեմ երբեք ի պշնլոյ, չլինիցիմ ժուժկալ առ առնելոյ ինչ յորոց չիցէ պատշաճ առնել։ Բարեւոք է, ասէ, զոր ասես, այսուհետեւ պահեա, զոր հրամայեմ իսկ քեզ եւ փոյթ լիցի քեզ զնմանէ. զի թերեւս ընաւ ի ժամանակի իմն մեզ կին լինիցի դա։

Այս ասացին եւ ի միմեանց մեկնեցան։ Իսկ երիտասարդն տեսեալ գեղեցիկ գկինն, եւ իմացեալ զլաւութիւն նորա, եւ զի պաշտէր եւս զնա, համա-

ըէր թէ շնորհս ինչ առնիցէ նմա, եւ իմացեալ եւս թէ չէ անշնորհակալ, այլ փոյթ յանձին ունի վասն իւրոցն գերդաստանկացն, զի գուցէ եկեղոցն որ ինչ պիտոյն իցէ. եւ եթէ երբեք խօթանայցէ, մի առնիցի ումեք կարօտ. յայսմ ամենայնէ գրաւեցաւ տենչանօք սակայն ոչ ինչ զարմանալի կիրս կրեայ: Այս ամենայնայսպէս վճարէր: Բայց Կիւրոսի կամեցեալ թէ ի Մարաց եւ ի պատերազմակցաց ոքք կամիցին մնալ ընդ իւր, մնայցեն, կոչէր ի մի վայր զամենայն զմեծամեծսն. իբրեւ եկին հասին, խօսէր այսպէս:

Այոք Մարք եւ ամենեքին որ աստդ կայք, ես զձեզ գիտեմ հաստատուն թեամբ եթէ ոչ ընչից կարօտեալք եւ էք ընդ իս. եւ ոչ Կիաքսարայ սպասաւորութիւն զայն համարէիք. այլ զի կամեցարուք ինձ շնորհս առնել եւ ինձ մեծարանս եղիք եւ շնորհակալ եւս եմ վասն նոցին, եթէ ոչ անիրաւ ինչ կամիցիմ գործել, բայց տակաւին թուի ինձ թէ չիք իմ կար արժանի հատուցանելոյ. եւ չհամարիմ զայն ամօթ ասել: Բայց եւ զայն եթէ կայցէք մնայցէք առ իս, հատուցից ձեզ, ամաչեմ ասել. զի կարծիս առնում թէ զայս յայն սակս ասիցեմ զի դուք յօժարեսջիք առ իս մնալ: Բայց ընդ այնր զայս ասեմ: Այս թէպէտ եւ դուք ան-

սայցէք Կիաքսարայ եւ մեկնեսջիք , սա-
կայն եթէ լաւութիւն ինչ գործի-
ցեմ, ջանացայց զի այնպէս առնիցեմ
որպէս զի եւ դուք յարգեալ գովիցէք
զիս։ Վասնզի եւ ոչ երթամ ի բաց,
այլ Կրկանացուոց որոց երդումն եւ աջ
եմոու, հաւատարիմ եղեց եւ ոչ երբեք
տայց զնոսա ի ձեռս։ Եւ Գովբրիայ որ
զայս ամենայն ետ մեզ զպարիսպն եւ
զաշխարհն եւ զզօրս ջանացայց առնել
զի մի ստրջասցի ի վերայ ճանապար-
հին որով եկն նա առ իս. եւ որ մեծ իսկ
քան զբնաւէ. յորժամ այնպէս յայտնի
իսկ բարութիւն շնորհեսցեն դիքն,
պարտ իցէ մեզ երկնչել ինոցանէ եւ ա-
մաչել, եթէ թողեալ զայս ամենայն ընդ
վայր գնայցեմք։ Եւ, ասէ, այսպէս ա-
ռարից բայց դուք որպէս գիտէք այն-
պէս առնիջիք. եւ ցիս ասացէք զինչ
ձեզ հաճոյ թուիցի։

Նա զայս խօսէր. եւ նախ այն որ
ասայն երբեմն թէ համազգի իցէ Կիւ-
րոսի, ասէր առ այն. Ես, ասէ, ար-
քայ. զի ինձ թուիս դու թէ ի բնէ իսկ
թագաւոր ծնեալ ես, ոչ ինչ ընդհատ
յայնմանէ որ ի բջիջն մեղուաց թա-
գաւոր ծնանիցի։ Զի սմա միշտ մե-
ղուքն կամակար հնազանդ լինիցին, ուր
եւ կայցէ, եւ չերթայ անտի ոք ի բաց,
եւ եթէ ուրեք ելանիցէ, ոչ ոք թողու
զնա։ Այսպէս անհնարին իմն ցան-

կութիւն է նոցա լինել ընդ իշխանութեամբ նորա. եւ առ քեզ նմին հանգոյն միտս ունին մարդիկս։ Զի եւ յորժամ ի մէնջ ի Պարսս մեկնեալ երթայիր, ով ոք մանուկ կամ ծեր ի Մարաց եթող զքեզ եւ ոչ եկն զհետ քո մինչեւ Աժդահակ դարձոյց զմեզ։ Եւ յորժամ ի Պարսից աշխարհէն եկիր մեզ յօդնականութիւն, գրեթէ զամենայն իսկ զքո բարեկամս տեսանէաք զի զհետ գային քո մտադիւրութեամբ։ Եւ յորժամ յօժարեցար գալ այսր ի պատերազմ, ամենայն Մարք կամաւ եկին զկնի քո։ Եւ այժմ այսպէս հաստատեալ եմք, զի ընդ քեզ յերկրի աստ թշնամեաց եմք եւ համաձակիմք, իսկ առանց քո եւ յաշխարհ իսկ մեր երթալ զանգիտեմք։ Այլք զիարդ առնելոց իցեն. զայն ինքեանք ընտրեսցեն. բայց ես Կիւրոս, եւ որոց եան իշխեմ կացցուք առ քեզ, եւ հայեցեալ ընդ քեզ համբերեսցուք եւ ժուժկալ լիցուք ի քէն երախտիս գտեալք։

Յետ այնորիկ Տիգրանէս խօսէր զայս գոյն օրինակ բանից. Դու, ասէ, Կիւրոս. մի ինչ զարմանայցես եթէ եսլուռ կամ, զի պատրաստ է անձն իմ ոչ զի խորհիցի այլ զի առնիցէ զոր ինչ դու հրաման տայցես։ Իսկ վրկանացին ասէ, Ես ով Մարք եթէ այժմ ի բաց գնայցէք, ասեմ թէ ի դից իրիք կամաց լի-

նիցի, որ չտայ ձեզ աւելագոյն փառաւորս լինել։ Ո՞ոք մարդկեղէն մտօք ի փախստեայ գնալ թշնամեացն դառնայցէ յետս, կամ յորժամ զզէնսն ի բաց տայցեն, ոչ առնուցու, եւ յորժամ զանձինս վտարանդիս տայցեն եւ զոր ինչ իւրեանց իցէ, եւ ոչ ընդունիցի, մանաւանդ իսկ զի եւ առաջնորդ եւս մեզ այնպիսի ոք իցէ, որ որպէս ինձն թուի եւ ի դիսն ամենայն երդնում, թէ առաւել ուրախ լինիցի յորժամ երախտիս մեզ առնիցէ, քան յորժամ զիւր իսկ անձն մեծացուցանիցէ։ Յետ այնորիկ ամենայն Ամբք խօսէին այսպիսի ինչ բանս. Դու, ո Կիւրէ. հաներ բերեր զմեզ. եւ յաշխարհն մեր, յորժամ քեզ ժամ թուիցի գնալոյ, ընդ քեզ տար զմեզ։ Զայն լուեալ Կիւրոսի եկաց յաղօթս. Ով մեծ Աստուածդ, խնդրեմ ի քէն տուր դու ինձ, այնոցիկ որ զիսն մեծարեն, յաղթել երախտեօք իմովք։

Ապա հրաման տայր այլոց կարգել կացուցանել պահապանս, եւ զանձամբ պատուել, եւ Պարսից հրամայէր բաժանել տալ զվրանսն, հեծելոցն զնոցին պատշաճսն, եւ հետեւակաց զոյն որ բաւականն իցէ նոցա, եւ կարգել զի ամենեքին որ ի վրանսն իցեն պատրաստեսցեն Պարսից ըստ գնդաց գնդաց զպէտսն եւ զերիւարսն դարմանեալ

մատուցցեն։ Պարսից մի այլ ինչ գործ լիցի եթէ ոչ վաստակել յիրս պատերազմի։

ԳԼՈՒԽ Բ

Զ ԱՑՆ օր այնպէս ի գլուխ հանին։ Ընդ առաւօտն վաղայարոյց եղեն, յուղի անկեալ երթային առ Գոբրիաս, Կիւրոս անդրուարաւ, եւ Պարսից հեծելովքն, եւ էին իբրեւ երկու հազարք։ Զկնի խաղային նոցա ասպարակիրք եւ սուսերակիրք նոցա նոյնչափ թուով եւ այլ եւս զօրն կարգեալ տողեալ երթայր։ Հրաման տայր իւրաքանչիւր ումեք ասել ցնոր պաշտօնեայսն իւրեանց թէ որ ոք ի նոցանէ յետոյ քան զվերջապահսն երեւիցի, կամ յառաջոյ ճակատուն, կամ ի կողմանց արտաքոյ քան զայնոսիկ որ ի գնդի անդ իցեն ըմբռնիցի, ի պատիժս մտանիցէ։ Յաւուրն երկրորդի ընդ երեկոյս հասին ի տեղին Գոբրիայ, եւ տեսանեն անխաբ զամուրն եւ զամենայն յարդարեալ պարսպովք, որպէս զի հարկ իցէ անհնարին սաստկութեամբ մարտ եդեալ կռուել. եւ զուարակս բազումս եւ բազում արջառ ի ներքոյ ամրին տեսանէին։

Առաքեալ Գոբրիայ հրամայեաց Կիւրոսի շուրջ գալ եւ տեսանել թէ ընդ

որ իցէ դիւրին մուտն, եւ ի ներքս եւս յղել առ նա զոմանս ի հաւատարմաց անտի որ զամենայն որ ինչ ի ներքս կայցէ, տեսեալ պատմեսցեն։ Ինքն իսկ Կիւրոս ճշմարտիւ կամէր տեսանել թէ գուցէ ուրեք կուիւ յորմունսն, եթէ սուտ երեւիցի Գոբրիաս, յամենայն կողմանց շուրջ գայր հայեցեալ տեսանէր զբնաւ ամուր անմատոյց։ Իսկ զորս առաքեաց առ Գոբրիաս, պատմէին Կիւրոսի թէ այնչափ բարութիւնք ի ներքս կան, որ ցաղգ մի մարդկան չպակասիցեն այնոցիկ որ ի ներքս իցեն։ Կիւրոս ի հոգս կայր թէ զինչ այն ինչ արդեւք իցէ։ Ինքն իսկ Գոբրիաս ել առ նա եւ զամենեսեան որ ի ներքս էին, հան, զոմանս զի գինի եւ ալեւր բերէին. եւ զայլս որք երինջս եւ խոզս եւ աւդիս եւ ուլս եւ եթէ ուտելի ինչ էր զամենայն բաւականութեամբ բերէին, զի բարեաք ընթրիս ուտիցեն ամենայն զօրն որ ընդ Կիւրոսի իցեն, եւ որք ի նոյն կարգեալ կային բաժանէին զամենայն եւ ընթրիս առնէին։

Իսկ Գոբրիաս, իբրեւ արքն արտաքս ելին, հրաման եառ Կիւրոսի ի ներքս մտանել որպէս զիարդ զգուշութեան համարէր։ Յառաջագոյն առաքեաց ի ներքս Կիւրոս դէտս եւ զօրս եւ ապա ինքն եմուտ։ Իբրեւ ի ներքս մտեցաւ բաց ունէր զդրունսն. կոչէր զամենայն

բարեկամս եւ զիշխանս որ ընդ իւրն էին։ Յորժամ ի ներքս էին, հանեալ Գոբրիայ տաշտս ոսկիս եւ բաժակս եւ բաժակակալս եւ զարդս եւ սպասս ազգի ազգիս եւ անչափ դահեկանս եւ զամենայն ինչ զգեղեցիկ, եւ զլուխ իսկ ամենայնի զդուստրն անհնարին գեղեցիկ եւ անդամայաղթ որ ի սուգ թախծեալ կայր վասն եղբօրն վաղամեռիկ լինելոյ, հանէր եւ խօսէր զայս ձեւ օրինակ բանից այսպէս. Ո Կիւրոս ես քեզ զդանձդ տամ, եւ զդուստրդ զայդ յանձանձեցից զի այնպէս իցէ որպէս դու կամիցիս. այսուհետեւ աղաչեմք, ես որպէս յառաջն իսկ, աղաչեմ զի առցես զքէն որդւոյ իմոյ, եւ սա այժմ աղաչէ զի զեղբօրն վրէժ խնդրեսցես։

Կիւրոս ասէ. Ես քեզ եւ յայնժամ խոստացայ, եթէ չստես, խնդրել զվրէժ քո. բայց քանզի այժմիկ ճշմարիտ տեսանեմ զքեզ, պարտ իսկ 'եմ խոստմանն։ Եւ դստերդ խոստանամ զդոյն առնել հանդերձ աստուածովքն. եւ զկարասիդ, ասէ, ես ընդունիմ եւ տամ զդոսա աղջկանդ եւ այնմ որ կին ա-բասցէ զնա։ Բայց պարգեւ մի առեալ երթամ ի քէն, ընդ որում ոչ որ ինչ ի Բաբիղացւոց աշխարհին իցէ, յորում բազում ինչ գոյ, առնում յանձն. եւ ոչ որ ընդ ամենայն տեղիս գոյ ընդ այնր յօժարութեամբ առեալ գնայցեմ։

Գոբրիաս զարմացեալ կայր թէ զինչ այն իցէ, եւ կասկածեալ թէ մի զդիւ-տերէն ասիցէ, այսպիսի ինչ հարցանէր. Եւ զի՞նչ ինչ այն իցէ, ասէ, ո Կիւրոս:

Կիւրոս տայր պատասխանի: Զանգի ով Գոբրիա, ասէ, ինձ թուի թէ իցեն բազումք ի մարդկանէ որ ամպարշտել չկամիցին եւ ոչ զրկել եւ ոչ ասուտ կամաւ խօսել, բայց վասն ոչ ուրուք կամելոյ յանձն առնել նոցա ոչ ինչս բազումս ոչ հարստութիւն ոչ պարիսպս ամուրս ոչ որդեակս ցանկալիս, մինչ չեւ յայտնիլեալ թէ որպիսիք ոք իցեն, անդէն մեռանին: Իսկ ինձ դու այժմիկ, պարիսպս ամուրս եւ պէսպէս մեծութիւն եւ զզօրան քո եւ զդուստրն քո արժանաւոր, տաս ի ձեռս, եւ յայտ արարեալ ցուցանես զիս ամենայն մարդկան, թէ ոչ ի հեւրան կամեցայ ամպարշտել եւ ոչ զրկել եւ զլանալ ընչից վասն, եւ ոչ ստել կամաւ ուխտիցն: Արդ ես մինչեւ այր արդարս իցեմ, եւ արդար կարծեալ ի մարդկանէ դրուատիցիմ, զայս ոչ ուրեք մոռացայց. այլ փութացայց ընդ այսր ամենայնի, մեծարել զքեզ ամենայն բարութեամբք: Մի երկընչիր, ասէ, եթէ չքաւորեսցիս գտանել այր մի դստերդ, ըստ արժանի նորա: Զանգի բազում եւ պիտանի պիտանի բարեկամք են իմ յորոց ո՛ ոք եւ իցէ առնիցէ զնա կին,

բայց թէ ունիցի ինչս այնչափ, որչափ տասդ կամ թէ այլ եւս բազմապատիկ քան զնոյն, զայն չկարեմ ասել. բայց դու զայս գիտասջիր, եթէ իցեն ոմանք ի նոցանէ, որք եթէ տայցես եւս նոցա զինչսն, ոչ փոքր ինչ աւելի վասն նորին գարմանայցեն ընդ քեզ։ Եւ ինձ նախանձ բերեն այժմ, եւ յաղօթս կան դիցն ամենեցուն, զի լինիցի նոցա յայտ առնել, թէ հաւատարիմք են բարեկամացն ոչ ինչ ընդհատ յինէն. իսկ ի թշնամեաց ոչ երբեք ի բաց կայցեն մինչ դեռ կենդանիքն իցեն եւ ոչ դիքն վնասիցեն։ Եւ քան զառաքինութիւն եւ զազնուական փառաւորութիւնն ոչ զամենայն ինչ զԱսորւոց քոյովքն հանդերձ եւ զԱսորեստանեաց նախամեծարս ընտրիցեն. գիտասջիր զի այսպիսի արք կան աստ նստեալ։

Իսկ Դոբրիաս ծիծաղեալ, Յոյց ինձ, ասէ, ով Կիւրէ, թէ ուր իցեն սոքա. խնդրիցեմ ի քէն միւսմ ումեք ի նոցանէ լինել ինձ որդեակ։ Օյս, ասէ, չէ ինչ պիտոյ ածել ի հաւան, այլ եթէ գայցես ընդ մեզ. դու իսկ քեզէն կարիցես եւ այլսմ ցուցանել զմի մի իւրաքանչիւր ի նոցանէ։ Օյս ամենայն ասաց եւ կալաւ զաջոյ Դոբրիայ եւ յարուցեալ երթայր, եւ զամենեսեան որ ընդ իւրն էին հանէր. եւ իբրեւ շատ աղաչեաց Դոբրիաս ի ներքս ընթրիս

ուտել եւ ոչ կամեցաւ, ի բանակի ուտէր ընթրիս, եւ զԳոբրիաս առ ընդ իւր յընթրիսն։

Ընկողմանեալ ի յարդի վերայ, հարցանէր զնա այսպէս. Ասա դու ցիս, ասէ, ով Գոբրիա, զի՞նչ կարծիս կարծիցես, քո՞ աւելի կազմածք իցեն եթէ իւրաքանչիւր ուրուք ի մէնջ։ Եւ նա ասէ. Դիտեմ զի բաղում եւս կազմածք գոն ձեր եւ գահոյք. եւ տուն մեծ քան զիմ ապարանս. որոց տուն երկիր եւ երկինք են, եւ գահոյք են ձեր որչափ խշտիք իցեն վերայ երկրի, եւ պատառս համարիք ոչ զոր խաշինքն ծնանին զասրն, այլ զոր բոյսս իսկ լերինք եւ դաշտք արձակեն։

Յայնժամ զառաջինն Գոբրիաս կերեալ ընթրիս ընդ նոսա տեսանէր զյուռութիւն կերակրոցն առաջի յօրինելոց, ի միտ առ թէ կարի ազատագոյնք են նոքա քան զնոսա քանզի նկատեալ տեսանէր զչափաւոր ուռճիկն։ Քանզի ոչ ի կերակուր ինչ եւ ոչ յըմպելի ակնարկէր աչօք իւրովք այր պարսիկ ի խրատելոց անտի, ոչ յափշտակելով եւ ոչ մտօք իսկ իւրովք, զի այնպէս իսկ միտս ունէին որպէս թէ չիցեն ի հացի։ Այլ զոր օրինակ հեծեալքն վասն ոչ խռովելոյ յերիւարացն վերայ, մարթեն եւ տեսանել եւ լսել եւ խօսել զարժանն ինչ, մինչ դեռ յերիւարսն

հեծեալ իցեն. նոյնպէս եւ նոքա ի հացի անդ այնպէս համարին թէ պարտ է հանճարեղս իսկ երեւել եւ ի չափոյն կալ. իսկ գրգռելն ի կերակրոց եւ յըմպելեաց, ամենեւին իսկ շնական եւ գազանաբարոյ թուի նոցա։

Ի միտ առ եթէ հարցանէին նոքա զմիմեանս այնպիսի ինչ որ ինչ ախորժելի էր հարցանել քան զչհարցանել. եւ զի դիտէին որ ինչ ախորժութեան էր դիտելն քան զչդիտել. եւ յորժամ խաղ առնէին կարի իսկ մեկուսի ի թշնամանաց էին եւ ի խայտառակս ինչ գործելոյ եւ յառ միմեանս զայրանալոյ. եւ մեծ իսկ քան զամենայն այն թուէր նմա, զի յարշաւանի էին եւ ոչ ումեք յայնցանէ որ ի նոյն վիշտս դիմեալ երթային, աւելի ինչ առաջի յօրինէր. այլ խրախութիւն զայն համարէին, թէ զայնոսիկ որ զօրաւիդն օգնականութեան լինելոց իցեն ազնուագոյնս յարդարիցեն։

Յորժամ յոտն եկաց Գոբրիաս երթալ յապարանսն, պատմեն այսպիսի ինչ ասացեալ, թէ Ոչ եւս այսուհետեւ զիս զարմանք ունիցին, ով Կիւրէ, եթէ ըմպելիս եւ հանդերձս եւ ոսկի աւելագոյն քան զձեզ ունիմք մեք. բայց մեք փոքու արժանի եմք քան զձեզ։ Ասէր հոգ ի մտի է եթէ յաճախեսցեն դոքա մեզ. դուք փոյթ

յանձին ունիք թէ ժուժկալք եւս լի-
նիցիք։ Եւ զայս ինչ խօսեցաւ։ Եւ
Կիւրոս ասէ. Ով Գոբրիա վաղորդայն
գայցես հասանիցես այսր հանդերձ հե-
ծելազօրու վառեալ, զարդարեալ սպա-
ռազէն, զի եւ զզօրս եւս զքո տե-
սանիցեմք, եւ ընդ աշխարհն քո շըր-
ջեցուցանիցես զմեզ, զի գիտասցուք
թէ զո՞ր պարտ իցէ երկիր բարեկամաց
համարել եւ զո՞ր թշնամեաց. ապա
զայս ասացեալ մեկնէին երկոքեան։

Իբրեւ տիւ եղեւ եկեալ հասանէր
Գոբրիաս առեալ զայրուձին, եւ ինքն
երթայր յառաջոյ։ Իսկ Կիւրոս, որպէս
ի դէպ իսկ է առն իշխանի, ոչ միայն
ուշ ունէր գնալոյ ճանապարհին, այլ
կանխագոյն դիտէր առեսանէր, եթէ
մարթ ինչ իցէ տկար եւ անզօր զթշնա-
միսն առնել, եւ զնոսա հզօրագոյնս։
Պոչեցեալ զվրկանացին եւ զԳոբրիաս,
զի գիտէր թէ նոքա մանաւանդ գիտեն
զոր ինչ պիտոյ իցէ նմա ուսանել։ Ինձ
թուի, ասէ, արք բարեկամք, թէ
ընդ ձեզ իբրեւ ընդ հաւատարիմս խոր-
հուրդ խորհեալ վասն պատերազմիս
այսորիկ, ոչ ինչ սխալեմ։ Զանզի
ձեզ մանաւանդ, քան ինձ հասանէ
զմտաւ ածել թէ զիա՞րդ ասորեստա-
նեայն չլինիցի մեզ գամագիտ։ Զանզի
ես, ասէ, եթէ վրիպիցիմ ի սոցանէ,
թերեւս գոյ այլ ուրեք շրջել. իսկ

ձեզ, եթէ նա յաղթիցէ, զընաւ իսկ ինչս օտարոտի լեալ տեսանեմ։ Օ՛խ եւ ինձ թշնամի է, ոչ եթէ զի ատեայ զիս, այլ համարի եթէ չէ նմա օգուտ մեզ մեծանալ։ Եւ վասն այնորիկ իսկ զօրաժողով գայ ի վերայ մեր ի մարտ պատերազմի։ Բայց զձեզ ատեայ, եւ համարի թէ ի ձէնջ զրկիցի։ Պատասխանի ետուն երկոքեան, թէ եւ մեզ այն նոյնպէս թուի եւ անհնարին հոգ ի մտի իցէ նոցա թէ զիա՞րդ իրքս որ առաջի կան ի գլուխ ելանիցեն։

Յայնմ վայրի սկսաւ խօսել այսպէս. Ասացէք ցիս գոգէք, զձեզ միայն թշնամիս համարի անձինն ասորեստանեայն, եթէ գիտէք եւ զայլ ոք նմին թշնամի։ Ասէ վրկանացին եթէ թշնամութեամբ են Կադուսիացիքն ազգ բազում եւ կաշմբուռն զօրաւոր։ Հակքն մեր իսկ արուարձանեայք որ բազում արիս յասորեստանուոյն կրեցին։ Բանզի ջանացաւ եւ զնոսա որպէս եւ զմեզ վանեալ վկանդել։ Ապա ուրեմն համարիք, ասէ, եթէ նոքա յօժարութեամբ մեւք հանդերձ խաղացեալ երթայցեն ի վերայ ասորեստանուոյն. ասեն. Ստադիւրագոյնս իսկ եթէ մարթայցեն խառնել ընդ մեզ. եւ զի՞նչ, ասէ, կրըճիմ իցէ խառնելոյ նոցա ընդ մեզ. Ասորեստանեայքն, ասեն, ազգն յորս այժմ ի ճանապարհ անկեալ երթաս։

Իբրեւ զայն լուաւ Կիւրոս. Ով Գոբրիա, ո՞չ դու, ասէ, բամբասես զերիտասարդդ, որ այժմիկ եկաց ի թագաւորութեան, թէ կարի իսկ ամբարտաւան ոք բարոյիւք է: Ասէ Գոբրիաս. քանզի եւ այնպիսի իսկ վիշտս կրեցի ի նմանէ: Ասէ Կիւրոս. արդեւք ի քեզ եւեթ նոյնպիսի գտաւ, եթէ եւ յայլս եւս ոմանս: Ասէ Գոբրիաս. եւ յայլս եւս բազումս: Բայց թէ զի՞արդ զանաւագսն թշնամանիցէ, զի՞ պիտոյ իցէ ասել: Զառն միոջ, որ հարստագոյն քան զիս էր, զորդին որ եւ ի մանկութենէ իսկ ընկեր էր իբրեւ զիմ որդին, յորժամ առ նմայն էր ի գինըմպելիսն առեալ կրճատէր, որպէս ոմանք պատմեցին, զի հարճ նորա յարդէր զնա թէ գեղեցիկ իցէ եւ երանի տայր այնմ որ նմա կին լինելոց էր: Եւ որպէս նա այժմ ասէ, թէ զչափ առ զիւրոյ հարճին. եւ նա այժմ ներքինի է եւ զիշխանութիւնն ունի, քանզի հայր նորա վախճանեցաւ:

Արդ համարիցիս, ասէ, եթէ եւ սա յօժարութեամբ հայիցի ընդ մեզ, եթէ գիտասցէ թէ նմա օգնական լինիցիմք: Ասէ Գոբրիաս. Զաջ իսկ գիտեմ եթէ դժուարին է նմա հայել կամ տեսանել: Զի՞արդ, ասէ Կիւրոս, զի եթէ կամիցի ոք հաղորդութիւն առնել ընդ նմա, պիտոյ է անդր իսկ ի

Բաբիղացւոց աշխարհն հասանել։ Եւ արդ զիարդ, ասէ, դժուարի՞ն ինչ իցէ այն։ Ասէ Գոբրիաս, զի գիտեմ, ասէ, եթէ բազմապատիկ զօր քան զոր դուն այժմ ունիս, ելանիցեն անտի։ Եւ գիտասջիր ասէ, թէ վասն այսր ամենայնի ոչ այժմ որպէս զառաջինն ըզգէնան ի բաց կրեն Ասորեստանեայքն եւ զերիւարսն տանին, զի որոց տեսին զզօրս քո, սակաւ թուեցաւ. եւ նոյն համբաւ յաճախէ։ Ինձ այսպէս թուի թէ առաւել լաւ է զգուշութեամբ գնալ զճանապարհն։

Կիւրոսի լուեալ զայս ամենայն ի Գոբրիայ, ասէ ցնա այսպէս. Բարեդք թուիս խօսել ով Գոբրիա, զի հրաման տաս զզգուշութեան ճանապարհն երթալ։ Արդ ես միտ եդեալ չկարեմ եւս առաւել զգուշաւոր ճանապարհ ածել զմտաւ քան զճանապարհն որ անդր իսկ ի Բաբիղոն է. եթէ անդ իցէ թշնամեացն զօրութիւնն, քանզի բազում իսկ զօրք են որպէս դու պատմես. եթէ քաջալերեալ համարձակեսցին, եւ ի մեր եւս վերայ ծանրանայցեն որպէս ինձ թուի։ Արդ եթէ ոչ տեսանիցեն զմեզ, այլ համարիցին զմէնջ թէ անհետ յաչաց եղեալք առ ահին նոցա, գիտեա, ասէ, եթէ յահէ անտի որ անկաւ ի նոսա, ապրեսցին, եւ ընդ այնր քաջալերութիւն հասանիցէ ի նոսա,

այնչափ յաճախագոյն որչափ բազում ժամանակս չտեսանիցեն նոքա զմեզ։ Ալ եթէ դիմեալ երթայցեմք ի վերայ նոցա, զբազումս իսկ ի նոցանէ գտանիցեմք զի դեռ եւս զսատակեալսն ի մէջ աշխարհ եդեալ լայցեն, եւ զբազումս որոց տակաւին պատեալ վէրքն իցեն զոր ի մերոց աստի առին. եւ ամենեքին ի մտի ունիցին զյանդգնութիւն զօրականաց այսր բանակի, եւ զիւրեանց փախուստն եւ զվիշտս։

Ի միտ առ ով Գոբրիա, թէ այս այսպէս է, որպէս բազում մարդիկ յորժամ խիզախեսցեն անընդդիմակաց միտս ցուցանիցեն, բայց յորժամ վհատիցին, որչափ բազումքն իցեն, դոյնչափ յաճախագոյն յապշութիւն կործանեալ ահն եւ երկեւղն շուրջ հասեալ փետէ, քանզի եւ ի բազում համբաւուց չարաց աճէ ահն. եւ ի յաճախ յոռութեան իրաց եւ ի բազում տրտում տխուր երեսաց վհատելոց միանգամայն գումարիցի։ Ինչ զի ի յաճախութենէ անտի երկեղին, չէ դիւրին բանիւք զահն շիջուցանել, եւ ածել ի թշնամեաց վերայ եւ յորդորել, եւ ոչ յախոյենիցն ի բաց տանել եւ փարաւազս տալ, այլ որչափ քաջալերել հրամայիցէ նոցա, դոյնչափ զանձինս ի տադնապի եւ ի տարակուսի լեալ համարիցին։

Սմին միտ դիցուք թէ որպիսի ինչ
իցէ. զի եթէ այնր էր ի մէջ պա-
տերազմողացն յաղթութիւն, ոյր բա-
զում ամբոխ էր, յիրաւի եւ դու զմէնջ
կասկածէիր, եւ մեք արդարեւ ի նե-
ղութեան էաք: Բայց եթէ որպէս
յառաջն իսկ նոյնպէս եւ այժմ ի քա-
ջութենէ պատերազմողացն պատերազ-
մունք ընտրիցին, եթէ խիզախեացես
ոչ ինչ սխալիցես. զի աստուածովքն
հանդերձ կարի իսկ բազմագոյնս առ ի
մէնջ գտանիցես որ ընդ պատերազմն
կամիցին քան առ ի նոցանէ:

Բայց զի եւս առաւել քաջալերես-
ցիս եւ զայս աճ զմտաւ, թէ հակառա-
կորդքն յոյժ իսկ նուազունք են այժմ
քան մինչ չեւ ի մէնջ ի պարտութիւն
մատնեալ. եւ եւս նուազագոյնք քան
յորժամ փախստեայ գնային ի մէնջ:
Իսկ մեք այժմ յաճախագոյնք եմք քան
յառաջն քանզի յաղթեցաք, եւ զօ-
րագոյնք եմք քանզի յաջողեաց մեզ.
եւ բազմագոյնք եմք քանզի դուք
յաւելայք ի մեզ. այսուհետեւ մի ան-
արդեր զքոյսն քանզի ընդ մեզ են:
Քանզի եւ որք զհետ գան այնոցիկ որ
յաղթեցինն քաջալերութեամբ գնան:
Մի եւ այս ինչ ասէ զաղանի իցէ ի
քէն թէ գոյ հնար եւ այժմ տեսանել
զմեզ հակառակորդացն. եւ ոչ ուրեք
պնդակազմք երեւիցիմք նոցա բայց յոր-

ժամ ի վերայ նոցա խաղայցեմք. արդ քանզի ես այսպէս ածեմ զմտաւ, տար զմեզ պարզ ուղիղ ի Բաբիղոն։

ԳԼՈՒԽ Գ

ԱՅՍՊԷՍ յուղի անկեալ յաւուրն չորրորդի ի սահմանս Դովբրիայ աշխարհին հասանէին. եւ յորժամ յերկրի թշնամեաց էին, կարգէր կացուցանէր առեալ ընդ իւր կարգաւ զհետեւակս եւ ի հեծելոց անտի զորս ինքն ի դէպ համարէր։ Եւ զայլ այրուձին արձակեաց ասպատակ դնել, եւ հրամայեաց զայնոսիկ որ զէն ունիցին այրել, իսկ զայլն եւ զխաշինս զոր ի բուռն արկանիցեն բերել առ ինքն։ Հրաման ետ եւ Պարսից ընդ նոսա ասպատակել. եւ գային բազումք ինոցանէ անկեալք յերիւարացն, եւ շատք առ եւ աւար բազում բերեալ։

Իբրեւ առաջի կայր աւարն, կոչեցեալ զնշխանս Մարացն եւ Վրկանացւոց եւ զպատուակիցսն ասէր. Հիւրացոյց զմեզ բազում բարութեամբք Դովբրիաս. արդ ասէ, եթէ ընտրեալ դիցն զօրինաւորսն եւ բանակին որ ինչ բաւական իցէ, զայլ առն եւ զաւարն նմա տայցեմք, բարուք առնիցեմք, զի իսկ եւ իսկ յայտնի լինիցիմք զի եւ զերախտաւորսն մեր փութամք դլել երախտեօք մերովք։ Իբ-

րեւ զայն լսէին, ամենեքեան դողէին, բոլորեքեան դրուատէին. եւ մի ոմն ասէր այսպէս։

Ընդասցուք զայս, ասէ, ով Կիւրէ, զի եւ ինձ թուիթէ Գոբրիաս աղքատս տառապեալս ոմանս համարէր զմեզ. զի ոչ դահեկանօք լցեալ գայաք եւ ոչ յոսկի նուագաց ըմպէաք։ Եթէ զայն առնիցեմք, ի միտ առցէ, ասէ, թէ եւ առանց ոսկւոյ մարթի առատս լինել։ Երթայք, ասէ, որ ինչ դիցն իցէ զայն մոգուցն տուք, եւ որչափ բաւական իցէ զօրուն որոշիցէք, եւ զայլն ամենայն կոչեցեալ զԳոբրիաս տուք նմա։ Առեալ նոցա որ ինչ պիտոյն էր, զամենայն Գովբրիայ եառուն։

Ապա երթայր ի Բաբեղացւոց աշխարհն ճակատեալ որպէս յորժամ պատերազմն էր։ Իբրեւ ոչ ելին ընդառաջ Ասորեստանեայքն, հրաման ետ Կիւրոս Գոբրիայ երթալ ասել, եթէ կամ իցէ թագաւորին ելեալ ի վերայ աշխարհին մարտընչել, ինքն իսկ ընդ նմա մարտընչիցի, ապա թէ ոչ խնդրիցէ զվրէժ երկրին, հարկ է այնոցիկ որ յաղթեցինն հնազանդ լինել։ Գոբրիաս մատուցեալ ի տեղի ինչ ուր ամուր էր, ասէր։ Եւ նա յղեաց պատասխանի այսպէս. Տէրն քո ասէ, Գոբրիաս, ոչ զի սպանի զորդին քո, ատրջանամ, այլ թէ ոչ եւ զքեզ առ նմին սպանի։

Եթէ մարտընչել կամիցիք, երթայք յերեսուն օր. զի այժմ չէք մեր պարապ, զի կազմ եւ պատրաստ լինիմք։ Գոբրիաս ասէ. Մի լիցի ասէ երբեք զբաւ այնց ըստրջանաց. քանզի յայտ է եթէ արտմեցուցանեմ ես զքեզ յորմէ հետէ այն զղջումն ունի զքեզ։

Գաբրիաս պատմեաց զբանս ասորեստանուոյն. եւ Կիւրոսի լուեալ. հան զզօրսն եւ կոչեցեալ զԳոբրիաս. ասա դուցիս, ասէ, ո՞չ ապաքէն ասէիր թէ եւ կրճատեալն յասորեստանուոյն ընդ մեզ լինիցի։ Այսպէս գիտեմ, ասէ. քանզի բազում անգամ ես եւ նա ճառարկեալ խօսէաք ընդ միմեանս։ Արդ յորժամ ի դէպ թուիցի քեզ մատիր առ նա. եւ նախ այնպէս արա որպէս զիարդ ինքն ասիցէ։ Ապա իբրեւ մերձ լինիցիս նմա, եթէ գիտես եթէ կամի մեր բարեկամ լինել նա, զայս ինչ մենքենայեսջիր զի անյայտ իցէ եթէ բարեկամ մեր է։ Քանզի ոչ աւելի ինչ բարութիւնս այլազգ ոք բարեկամացն կարիցէ առնել, բայց յորժամ հակառակորդ թուիցի. եւ ոչ թշնամեաց ոք աւելագոյն վնաս գործիցէ, այլ յորժամ բարեկամի կարծիս տայցէ։

Գիտեմ, ասէ. Գոբրիաս եթէ հնարի եւ Գադատաս մեծ ինչ եղեռն վնասու այժմու թագաւորին Ասորեստանեաց հասուցանել. այլ թէ իմ իմիք

ձեռնհաս իցէ, այնմ մեզ պարտէ միտ դնել։ Ասէ Կիւրոս. ասա դու ցիս ի բերդդ որ կայ հանդէպ երկրին, զումէ եւ դուք ասէք, թէ ընդդէմ Կ՚ըկանացւոց եւ Շակաց պարսպեցաւ, զի լինիցի աշխարհին պատուար պատերազմի, համարիցի՞ս թէ թողուցուն պահապանքն զնեբքինին մտանել անդր զօրք հանդերձ. յայտնի իսկ ասէ, եթէ առանց կարծեաց իցէ, զոր օրինակ այժմըս է, թողցեն անդր։

Արդ ասէ, առանց կարծեաց լինիցի, եթէ ես ի գեւղն նորա յարձակիցիմ որպէս թէ կամիցիմ առնուլ, եւ նա մարտ եդեալ կռուիցի զօրութեամբ, եւ առնուցում զնորա ինչ ես, եւ նա ընդ այնր առնուցու ի մէնջ զսմանս կամ զհրեշտակն առաքեալս յինէն առ նոսա զորոց ասէք թէ թշնամի են աստուծոյն, եւ որք ըմբռնիցինն ասիցեն եթէ ի բանակն երթամք, եւ սանդուղս առ ամուրն մատուցանիցեն։ Իսկ նեբքինեսոյն լուեալ պատճառիցի թէ մօտ երթայ, զի զայն ամենայն կամի յայտ առնել։ Եւ Գոբրիաս ասէ. Եթէ այսպէս լինիցի, գիտեմ հաստատութեամբ եթէ երթայց առ նա եւ աղաչեցից զնա կալ մնալ, մինչեւ դու մեկնեսցիս։

Ասէ Կիւրոս. եթէ միանգամ մտանիցէ կարիցէ՞ տալ ի ձեռն մեր զդեղն.

ի դէպ է, ասէ Գոբրիաս, քանզի եթէ ի ներքուստ նա պատրաստիցի եւ դու արտաքուստ սաստկագոյնս հարկանիցես։ Եւ արդ երթ, ասէ, եւ փութա եւ ուստ զայս ամենայն եւ ի գլուխ հանեալ եկեսցես. եւ առ հաւատչայ նմա ոչ ասիցես եւ ոչ ցուցանիցես մեծ եւս ինչ քան զորս դու իսկ ինքնին առ ի մէնջ առեր։

Ապա չոգաւ Գոբրիաս. իբրեւ լուսաւոր ետես զնա ներքինին, միաբաներ ընդ նմա, եւ դաշինս կռէր որպէս պարտ իսկ էր։ Եւ իբրեւ պատմեաց Գոբրիաս եթէ ամենայն ինչ որ պատուիրեցաւ ներքինւոյն հաստատութեամբ ի գլուխ եալ. ի վաղիւ անդր մօտ երթայր Կիւրոս, բայց Գադատաս մարտ եղեալ կռուէր. եւ զոր առն Կիւրոս այն դեւղ էր, զորմէ Գադատաս ասաց։ Իսկ ի հրեշտակաց անտի զոր Կիւրոս առաքեաց պատուիրեալ թէ յո՞ երթայցեն, զոմանս թող Գադատաս պրծանել զի զզօրսն ածցեն եւ զսանդուղսն բերիցեն. եւ զոմանս կալեալ հարցանէր բազմաց առաջի։ Իբրեւ լուաւ թէ վասն էր երթան, վաղվաղակի կազմեալ որպէս թէ զբոյց տայցէ, գիշերի յուղի անկեալ երթայր։ Եւ գլուխ ամենայնի, հաւատարիմ եղեալ եթէ մտանէ անդր յամուրն օգնական լինել. եւ առ ժամանակ մի

ընդ պահապանացն կազմէր պատրաստէր զոր ինչ կարէրն։ Իսկ իբրեւ եմուտ Կիւրոս, զգեւոյն ի բուռն առնոյր եւ գործակից զառ ի Կիւրոսէ առեալ գերին առնէր։

Իբրեւ այն վճարեցաւ, վաղվաղակի Դադատաս ներքինի զներքինսն կարգէր կացուցանէր եւ ելանէր առ Կիւրոս. եւ օրինօք երկիր պագեալ ասէ. Ուրախ լեր Կիւրէ. այլ ուրախ լինիմ, ասէ, զի դու աստուածովք հանդերձ ոչ միայն հրաման տաս, այլ եւ հարկեսես եւս ուրախ լինել։ Դիտասջիր, ասէ, զի ես մեծ ինչ համարիմ զգեւոյդ զայդ թողուլ խաղաղ նիզակակցաց որ աստ իցեն։ Ով Դադատա, եբարձ ի քէն ասորեստանեայն զորդեծնութիւնն, բայց չկարաց զրկել զքեզ ի բարեկամս ստանալոյ։ Դիտասջիր զի գործովդ այդուիկ զմեզ բարեկամս արարեր, որք եթէ կարօղ իցեմք, ջանասցուք ձեռընտու եւ օգնական եւ խնամակալ լինել քեզ որպէս եթէ որդիս եւ թոռունս ծնեալ էիր։

Նա զայս ինչ խօսեցաւ։ Յայնմ վայրի Ս.ՐԿԱՆԱՑԻՆ այն ինչ զգաստ լեալ զերացն որ եղեն, ընթացաւ առ Կիւրոս եւ բուռն հարեալ զաջոյ նորա, ասէ. Մեծամեծար բարութիւն բարեկամաց դու Կիւրոս, զի բազում իմն դոհութեան պարտապան զիս դիցն

առնես, զի ածինն զկս առ քեզ։ Այսուհետեւ երթ, ասէ, Կիւրոս եւ առեալ զգեւղն ոյր վասն համբուրես զկս, այնպէս յարդարեսջիր զի ձերում աղդին բաղմագին լինիցի եւ այլոց նիզակակցաց, մանաւանդ իսկ ասէ այսմ Գադատայ որ առ եւ ետ մեզ։

Եւ արդ զիա՞րդ, ասէ, վրկանացին, որովհետեւ Կադուսիացիք գան եւ Շակքն եւ իմ քաղաքացիքն, կոչեսցո՞ւք արդեւք եւ զնա, զի առհասարակ խորհուրդ խորհեսցուք ամենեքին, որոց անկ իցէ, թէ ո՞րպէս յօգուտ ի կիր արկանիցեմք զամուրս պահպանացն։ Ընդ այն եւ Կիւրոս հաճեցաւ։ Իբրեւ ի մի վայր եկին որոց յանձն էր ամուրն խորհեցան առհասարակ պահել, որոց օգուտ իսկ էր եթէ այն ի խաղաղութեան լինէր, զի իւրեանց պատուար պատերազմի լինիցի եւ ընդդէմ Ասորեստանեաց պարիսպ ամրութեան։

Գ.Ժ. Իբրեւ այն կատարեցաւ առաւել եւս յօժարագոյնս երթային ընդ նմա ի մարտ պատերազմի Կադուսիացիք եւ Շակք եւ Վրկանացիք, եւ անդէն բանակ գումարէր, ի Կադուսիացւոց ասպարաւորք երկու բեւր եւ հեծեալք չորեքհազարք. իսկ ի Շակաց աղեղնաւորք բեւր մի, եւ աղեղնաւորք հեծեալք երկուհազարք. եւ Վրկանացիք հետեւակս որչափ բաւական էին յղէին

եւ յաւելին հեծեալս երկու հազար։ Զանգի յառաջն բազում հեծեալք յաշխարհին Թողան, զի Կադուսիացիքն եւ Շակք Ասորեստանեաց թշնամիք էին։ Որչափ ժամանակս հոգայր ինքնին Կիւրոս խնամակալութեան ամրին, բազումք Ասորեստանեաց որ ի գեղսն յայնս էին զերիւարսն ի բաց տանէին եւ կրէին զզէնսն երկուցեալ յամենայն մօտաւոր բնակացն։

Ապա գայ առ Կիւրոս Դադատաս եւ ասէ, եթէ հասին նմա հրեշտակք թէ Ասորեստանեայն յորժամ գիտաց զերս ամրին, դժկամակ եղեւ, եւ կազմեցաւ արշաւել յերկիր նորա։ Արդ եթէ թողուցուս զիս ով Կիւրէ ըզպարիսպն ջանայայց ապրեցուցանել. իսկ զայլսն փոքունս համարիմ։ Եւ Կիւրոս ասէ. եթէ այժմ երթայցես, ե՞րբ յաշխարհի անդ իցես. եւ Դադատաս ասէ. յաւուրն երրորդի յիմում երկրին ընթրիս արարից։ Մի՞թէ համարիցիս եթէ հասեալ անդէն ըմբռնիցէ ասորեստանեայն։ Գիտեմ, ասէ, եթէ հասցէ։ Զի փուլթասցի որչափ դու ի բացեայ լեալ թուիցիս։ Իսկ ես, ասէ, Կիւրոս ի քաներորդո՞ւմ աւուր զօրքն անդր հասանիցեմ։ Եւ այն ասէ Դադատաս. Բազում, տէր, զօրս ունիս, եւ չկարես ի վեց կամ յեւթն աւուրց ընդհատ գալ ի

բնակութիւն իմ։ Արդ դու, ասէ Կիւ-
րոս, երթ վաղվաղակի, եւ ես որչափ
մարթ իցէ ընթացայց զճանապարհս։
Գադատաս գնաց. եւ Կիւրոս կո-
չէր միանգամայն զամենայն իշխանս
նիզակակցացն. եկին հասին բազումք
եւ պիտանիք. ընդ որոց խօսէր Կիւրոս
այսպէս. Արք նիզակակիցք, Գադա-
տաս այնպիսի ինչ վճարեաց որ ամե-
նեցուն իսկ մեծարոյ թուի, եւ այն
մինչ չեւ բարի ինչ ի մէնջ գտեալ։
Այժմ զասորեստանեւոյն պատմի ար-
շաւել յերկիր նորա, յայտ է եթէ
կամի վրէժ խնդրել ի նմանէ զի առաւել
իմն վնասեալ համարի ի նմանէ. թեր-
եւս եւ զայն զմտաւ ածիցէ, թէ որ
առ մեզ ապստամբեալ գան, ոչ մի ինչ
վիշտս ի նմանէ վշտանան, իսկ որք ընդ
նմա իցեն ի մէնջ կորընչին, զի վաղվա-
ղակի իսկ ի դէպ է թէ ոչ ոք կամիցի
ընդ նմա լինել։ Արդ այժմիկ ով արք,
գործ ինչ բարւոք համարիմ գործել.
եթէ յօժարագոյնս Գադատայ օգնա-
կան լինիցիմք առն երախտաւորի, եւ
յիրաւի եւ յարժանի գործիցեմք զի
շնորհս փոխարէն հատուցանիցեմք, եւ
որպէս ինձ թուի եւ զանձանց իսկ
օգուտն գործիցեմք։ Զի եթէ ամե-
նեցուն երեւիցիմք յաղթել մերոցն
ալկաց գուն գործեալ չարչարել զնոսա
եւ անցուցանել բարութեամբք զերախ-

տաւորքն, ի դէպ է յայնմ ամենայնէ բազմաց կամել բարեկամս լինել. եւ ոչ ումեք ցանկալ թշնամի լինել։ Ապա թէ թուիցիմք զԱդամայ անփոյթ առնել, որովք բանիւք զայլն կարիցեմք ածել ի հաւան շնորհել ինչ մեզ։ Օ՜իա՞րդ իշխիցեմք զանձինս յարգել. որպէս նայել ոք ի մէնջ կարիցէ ընդ Ադամայս. եթէ ի պարտութիւն մատնիցիմք ի նմանէ որ զերախտիսն արար, այսչափքս յառնէ միոջէ, եւ այն յորժամ յայնպիսի չափու իցէ։

Ահա զայս ասէր եւ ամենեքին յանձն առնոյին զնոյն. Առէք, ասէ, այսուհետեւ, որովհետեւ եւ ձեզ դոյն հաճոյ թուի, թողցուք ջորւովք եւ դեսպակովք երթալ այնոցիկ որ պատեհքն իցեն։ Զոբբիաս իշխեսցէ նոցա եւ առաջնորդեսցէ նոցա, քանզի եւ ճանապարհացն հմուտ է. եւ այլով ամենայնիւ բաւական, եւ մեք հարուստ երիւարքք եւ արամբքք երթայցեմք, զերիցս աւուրց պէտս առեալ։ Որչափ թեթեւադոյնս կազմիցեմք եւ անարգս դոյնչափ յապա աւուրս քաղցրադոյն ճաշ եւ ընթրիս ուտիցեմք եւ ննջիցեմք։

Բայց այժմ. ասէ, այսպէս երթիցուք զճանապարհն։ Ահա դու Քրիւանանտա տար զզրահապատսն, զի հարթ եւ հաւասար է ճանապարհն. եւ զամենայն զօրադլուխն ի ճակատու ունիցիս.

եւ իւրաքանչիւր գունդ մի առ մի երթիցէ. զի յորժամ միահամուռն կայցեմք, արագ եւ զգուշութեամբ երթայցեմք։ Եւ յայն սակս, ասէ, զզրահաւորսն հրամայեմ տանել, զի քան զամենայն զօրսն նոյնն ծանրագոյն է։ Յետ երթալոյ ծանուն, հարկ է դիւրաւ բնաւ իսկ նուազիցն զհետ խաղալ։ Եւ յորժամ որ արագագոյնն իցէ երթայցէ յառաջոյ ի գիշերի, չեն ինչ զարմանք, թէ խախտիցի բանակն։ Զի որ յառաջոյ կարգեալ կայցէ, ի բաց սրանայցէ։

Յետ նոցա Արտաւազդ զասպարաւորսն եւ զաղեղնաւորսն Պարսից տանիցի։ Յետ նոցա Անդրամիաս մարզ Ասարաց հետեւակն. յետ նոցա Եմբաս զՀայոց հետեւակն. եւ յետ նոցա Արտուքաս զԱրկանացիսն. յետ նոցա Թամբրադաս զՇակաց հետեւակն. յետ այնոցիկ Դամատաս զԿադուսիացիսն։ Ածցին սոքա ամենեքին եւ ունիցին զզօրագլուխն ի ճակատուն յաջմէ զասպարաւորսն եւ յահեկէ զաղեղնաւորս իւրոյ գնդին, զի յորժամ այսպէս երթայցեն պիտանացուք լինիցին։ Եւ յետ նոցա, ասէ, որ ամենեցուն կապարձակիրքն գնայցեն։ Եւ իշխանք նոցա, զամենեցունց հոգայցեն, զի ամենայնիւ կազմ եւ պատրաստ լինիցին մինչ չեւ ասպատակ եղեալ, եւ ընդ

այգն ընդ առաւօտն կազմածովք հան-
դերձ ի կարգեալ տեղին հասանիցեն
եւ զի կարգաւ զՀետ գայցեն։

Յետ զենակրաց գնդին, ասէ, զՊար-
սիկսն հեծեալս Մադատաս պարսիկ
տանիցի, եւ նա ունիցի զՀարիւրապետս
հեծելոցն ի ճակատուն։ Իսկ հարիւ-
րապետան տարցի զգունդն ուրոյն որպէս
հետեւակապետքն։ Յետ նոցա Ռամ-
բակաս մար, ըստ նմին օրինակի զիւր հե-
ծեալսն. յետ նոցա դու ով Տիգրանէ,
զքո այրուձին, եւ այլ պետք հեծե-
լոցն եւ այնոքիկ ընդ որոց իւրաքանչիւր
ոք հասանէ առ մեզ։ Յետ նոցա
Շակք երթիցեն։ Զոր օրինակ յետոյ
եկին Կադուսիացիքն, յետոյ տարցին
զզօրս։ Եւ դու Աղկեւնա որ տանիս զնո-
սա, հոգ յանձին կալջիր ի ժամանակիս
յայսմիկ զամենեցունց որ յետոյ իցեն,
եւ մի զոք թողցես յետոյ քան զՀե-
ծեալսն քո։

Հոգացարուք լուիկ երթալ, իշ-
խանք եւ ամենայն իմաստունքդ։ Զի
ի գիշերի մանաւանդ հարկ է ականջք,
քան աչօք զբնաւ զգալ եւ վճարել.
քանզի եւ խռովութիւն առաւել է ի
գիշերի քան ի տուընջեան եւ դժուա-
րին առ ցածնուլ, նմին իրի պարտ է
ի լռութիւն կրթել եւ զկարգս պահել.
եւ զցայգութեան պահն, յորժամ
գիշերի ուրեք երթալոց իցէք միշտ

պարտ է կարճագոյնս եւ բազմագոյնս առնել. զի մի զոք պահպանութեանն տքնութիւն յորժամ յաճախ իցէ վնասիցէ ի ճանապարհի։ Այլ յորժամ ժամ իցէ ի ճանապարհ երթալոյ, նշանակել թեւին։ Առեալ ձեր զամենայն որ ինչ պիտոյն է, եկայք ի ճանապարհ Բաբիղացւոց քաղաքին. եւ որ երթայցեն հանապազ, զայն որ յետոյ գայցէ քաջալերեցէ գալ զկնի։

Ապա երթային ի վրանսն, եւ ի գնալն խօսէին ընդ միմեանս թէ զիարդ ուշեղ իցէ Կիւրոս, որոց հրամայէրն, որպէս յականէ յանուանէ պատուիրէր։ Եւ Կիւրոս խնամով զնոյն գործէր։ Զի ամենեւին իսկ զարմանք թուէին նմա, եթէ արուեստիցն ճարտարապետքն գիտիցեն իւրաքանչիւր զիւրոց ճարտարութեան գործեաց զանուանսն, եւ բժիշկ այր գիտիցէ զգործւոյնեւ զդեղոց որովք վարիցին ամենեցուն զյորչորչանսն։ Իսկ զօրավար այնպէս ապուշ իցէ, որպէս զի չգիտիցէ զզօրավարացն որ ընդ իւրեւ իցեն, զանուանսն, զորս պարտ իցէ նմա գործիս ի կիր արկեալ վարել. եւ յորժամ ըմբռնել ինչ կամիցի կամ պահել կամ քաջալերել կամ ահ արկանել. եւ յորժամ պատուել զոք երբեք կամիցի, վայելուչ իմն կարծէր նմա յանուանէ կոչել։

Այսպէս թուէր նմա թէ որ համարինն յիշխանէ անտի առաւել փութան զի լաւութիւն ինչ գործեալ յակն անկանիցին, եւ ի խայտառակ ինչ գործելոյ եւս աւելի յօժարիցեն մերժել զանձինս։ Եւ զայն եւս ապուշ մտաց համարէր թէ յորժամ կամիցի ոք եթէ վճարեսցի ինչ, այնպէս հրաման տայցէ. որպէս ի տան իշխանք ոմանք հրամայիցեն թէ երթայցէ ոք զկնոջ, փայտ ոք հատանիցէ։ Զի յորժամ այնպէս հրաման առնուին թուէր նմա թէ ընդ միմեանս նայիցին ամենեքեան եւ ոչ ոք զհրամանն ի գլուխ հանիցէ, եւ ամենեքին մեղադրութեամբ իցեն, եւ ոչ ոք ամօթ գյանցանան համարիցի, թերեւս եւ երկիցէ իսկ ոչ, վասն ընդ բազմաց զբամբասանան ունելոյ։ Վասն այսր ամենայնի ինքն զամենեսին՝ անուանէր յորժամ հրամանն տայր։

Կիւրոս զայսմ ամենայնէ այսպէս ածէր զմտաւ։ Յայնժամ զօրքն ընթրիս կերեալ եւ պահապանս կացուցեալ եւ պատրաստեալ ամենայնիւ որ ինչ պիտոյն էր, ննջէին։ Եւ յորժամ էր ի մէջ գիշերի, նշանակէր թեւին, եւ Կիւրոս ասէր Արիւանտայ թէ կայցէ ի ճանապարհի անդ առաջի զօրուն, եւ առեալ զսպասաւորսն որ շուրջ կիւրեւ էին ելանէր։ Յետ սակաւ ինչ ժամանակի գայր հասանէր Արիւան-

տաս ածեալ զզբահաւորսն։ Սմա տրեալ Կիւրոսի առաջնորդս ճանապարհին պատուիրէր երթալ հանդարտմինչեւ հրեշտակ հասանիցէ. քանզի չեւ եւս ամենեքեան ի ճանապարհի էին. եւ ինքն կայր ի նմին տեղւոջ եւ զհասեալն յղէր յառաջ կարգաւ, եւ առ յետնեալն առաքէր կոչել։

Իբրեւ ամենեքին ի ճանապարհի էին առաքէր առ Քրիւսանտաս հեծեալս, ասել եթէ ամենեքին ի ճանապարհի են, արդ տար փութանակի. եւ ինքն երթեալ յառաջակողմն երիւարաւն հանդարտիկ նայէր ընդ կարգսն, եւ զոր տեսանէր կարգեալս յարդարեալս եւ զի լուռ երթային, մատուցեալ առնոսա, ոչք իցեն հարցանէր, եւ իբրեւ ի միտ առնոյր՝ գովէր. ապա թէ զոմանց զգայր թէ խռովեալ են, ընդ պատճառս խռովութեանն նայէր եւ ջանայր զաղմուկն ցածուցանել։

Մի ինչ միայն մնաց ի ցայգութեան հոգաբարձութենէ նորա, զի յառաջ իսկ քան զամենայն բանակ ոչ բաղում հետեւակս պնդակազմս առաքէր, որ երեւէին Քրիւսանտայ եւ զնա նշմարէին զի ականջալուր լեալ եւ այլազգ կարիցեն զգալ ինչ, յայտ առնիցեն Քրիւսանտայ որ ինչ ի դէպ թուիցի։ Բայց իշխան եւ հրամանատար մի ոք էր, որ եւ զնոսա յարդարէր. եւ որ արժանաւոր ինչ

էր, զայն նշանակէր, եւ որ չէրն արժանաւոր ինչ, չլինէր տաղտուկ ասելովն. զցայգ այսպէս երթային։

Իբրեւ տիւ եղեւ զԿադուսիացւոց հեծեալսն, զի նոցին եւ հետեւակքն յետոյ երթային, եթող առ նոսա, զի եւ սոքա լուկք ի հեծելոց երթայցեն։ Իսկ այլոցն հրամայեաց յառաջակողմն երթալ. քանզի եւ հակառակորդքն յառաջակողմանն էին, որպէս զի թէ հակառակ ինչ պատահիցէ նոցա անդէն ինքեանք յանձանց զօրութենէ կռուիցին, եւ եթէ փախստեայ ինչ ուրեք տեսանիցէ, պատրաստութեամբ զհետ մտեալ հալածիցէ։ Դու էին հանապազ կարգեալ ճակատեալ, եթէ պիտոյ լինիցի զհետ մտանել այնոցիկ որոց պարտ իցէ զհետ մտանել եւ որոց պարտ իցէ առ իւր մնալ։ Ամենայն իսկ կարգին ոչ երբեք թոյլ տայր քակել։ Այսպէս տանէր Կիւրոս զբանակն։ Բայց ինքն ոչ եթէ ի միում վայրի կայր այլ եւ ընդ այս եւ ընդ այն կողմն շուրջ եկեալ տեսանէր եւ հոգայր եթէ կարօտ ինչ իւիք էին։

ԳԼՈՒԽ Դ

ՈՐ զԿիւրոսիւն էին այսպէս յուղի անկեալ երթային։ Իսկ ի Գադատայ հեծելոց անտի մի ոմն յարանց զօրաւորաց, իբրեւ ետես զնա ապստամբեալ յասորեստանուոյն, զմտաւ ած թէ նա յորժամ վիշտս ինչ վշտանայցէ, ինքն առնուցու յասորեստանուոյ անտի զամենայն որ ինչ Գադատայն էր։ Այպա առաքէ զմի ոմն յիւրոց հաւատարմացն առ ասորեստանեայն եւ պատուէր տայր այնմ որ երթային թէ յորժամ հասանիցէ յերկրին Գադատայ բանակին Ասորեստանեաց, ասասցէ ասորեստանուոյն, զի եթէ կամիցի դարանակալ լինել ըմբռնիցէ զԳադատաս եւ զորս ընդ նմա իցեն։ Եւ պատուիրէր յայտ առնել թէ որչափ զօր ունիցի Գադատաս Կիւրոս ոչ դայ զհետ նորա, եւ զճանապարհն ընդ որ մատչելոց էր, յայտ առնէր։ Ուրամայեաց եւ գերդաստանկացն զի առաւել հաւատարիմ թուիցի, զպարիսպն, զոր ինքն ի Գադատայ երկրին ունէր տալ ի ձեռս ասորեստանուոյն եւ զամենայն որ ի նմա իցէ։ Եւ ես եկից ասէ, եթէ կարիցեմ, սպանեալ զԳադատաս, ապա թէ ոչ այնուհետեւ ընդ ասորեստանուոյն եղէց։

Իբրեւ որ ի դոյն իսկ կարգեալ կայր

երթեալ վաղվաղակի առ ասորեստա-
նեայն հասանէր եւ յայտ առնէր վասն
որոց եկեալն էր. նորա լուեալ իսկ եւ
իսկ ի գեւղ անդր հասանէր, առեալ
երիւարս եւ կառս բազումս անդէն ի
գեղսն նատէր դարանակալ։ Գ.ադա-
տաս յորժամ մօտ ի գեւղսն էր, առա-
քէր զոմանս յառաջագոյն խուզել ըզ-
վայրսն. բայց ասորեստանեայն իբրեւ
գիտաց թէ մօտ են խուզակքն, հրաման
տայր երկուց կամ երից կառաց եւ սա-
կաւ հեծելոց ելանել փախչել մաղա-
պուր. որպէս թէ երկեան զահի հարան
քանզի սակաւաւորք էին։ Իսկ խըն-
դրակքն իբրեւ զայն տեսին, ինքեանք
զհետ մտանէին, եւ ակնարկէին Գ.ա-
դատայ. եւ նորա պատրեալ սաստկու-
թեամբ հալածական տանէր։ Ասորես-
տանեայքն, յորժամ թուեցաւն նոցա
թէ ըմբռնիցի այսուհետեւ Գ.ադատաս,
վաղվաղակի յարեան ի դարանէ անտի։

Իսկ որոց զԳ.ադատաւն էին տեսեալ,
որպէս ի դէպ էր փախստեայ գնային
բայց նոքա զհետ պնդեալ ստէպ հա-
լածէին։ Յայնմ վայրի որ զնենգու-
թիւնն խորամանգեաց Գ.ադատայ հար-
կանէր գնա անդէն, թէպէտ եւ յաղ-
դոյ վիրացն սխալեաց, սակայն եհար
գնա յուսան եւ խոցեաց եւ ինքն պրն-
դեալ երթայր ընդ հալածչացն. եւ ի-
բրեւ յայտ եկն թէ ո ոք էր, միան-

գամայն ընդ Ասորեստանեացն տագնապաւ արշաւէր երիւարաւն զՀետ մոռեալ թագաւորաւն Հանդերձ։ Յայտ է թէ որոց յայնժամ յամրագնաց երիւարքն էին յերագագունաց ըմբռնէին։ Ամենայն այրուձին Զադատայլուծեալ պարտասեալ էին վասն ի ճանապարհէն վաստակելոյ. եւ իբրեւ տեսին զի գայր Կիւրոս Հանդերձ բանակաւն, այսպէս իսկ պարտ է ածել զմտաւ եթէ ուրախութեամբ եւ ցնծութեամբ իբրեւ ի նաւահանգիստ ի կարեձմեռն ձմերայնւոյ հասին առ նոսա։

Զ Կիւրոս անդէն զառաջինն զարմանք ունէին. իբրեւ գիտաց զերան, որչափ նոքա միահամուռ ընդդէմ գային, եւ ինքն հակառակ ընդդէմ զզօրսն դունդագունդ տանէր։ Իբրեւ ծանեան հակառակորդքն զոր ինչ եղեւ, ի փախուստ դարձան. անդ հրաման ետ Կիւրոս այնոցիկ որ ի դոյն իսկ կարգեալ կային զՀետ մտանել, եւ ինքն զկնի գայր ընդ այլոցն որպէս օգուտն թըւէր։ Յայնմ վայրի ըմբռնեցան կառք եւ ոմանք ի կառավարացն անկեալ կործանէին, ոմանք ի դառնալն եւ ոմանք այլ իմն ազդ. եւ ոմանք կրճատեալ ի հեծելոց անտի ի բուռն անկանէին։ Եւ զայլ եւս բազումն կոտորէին եւ զայն որ զԶադատայն եՀար։ Բայց ի հետեւակացն Ասորեստանեաց ոչք զԶադա-

տայ գեղն պաշարեալ դիպեցան, կէսք յամուր անդր որ ի Դադատայ ապստամբեաց, անկանէին, եւ կէսք աճապարեալ ի քաղաք ինչ յաղթ ասորեստանոյն անկանէին. եւ ինքն իսկ գլխովին ասորեստանեայն կառօք եւ երիւարօք փախստական անդր դիմէր։

Յորժամ զայս ամենայն ի գլուխ հան Կիւրոս, մեկնեալ երթայր յերկիրն Դադատայ եւ հրաման տուեալ որոց պարտն էր հրաման տալ վասն գերւոյն, վաղվաղակի յուղի անկանէր զի երթեալ տեսանիցէ զԴադատաս, թէ զիարդ իցէ ի վիրէ անտի. եւ մինչ դեռ նախաղացեալ գայր, Դադատաս պատեալ զվէրն ընդ առաջ ելանէր։ Տեսեալ զնա Կիւրոսի զուարճացեալ լինէր յանձն իւր եւ ասէր. Ես գայի առ քեզ տեսանել թէ որպէս իցես։

Ասէ Դադատաս, ես ասէ եկի միւսանգամ տեսանել զքեզ, եթէ որպիսի ինչ իցէ տեսիլ կերպարանաց քոց, որ այսպիսի ոգի ունիս, եւ գիտեմ իսկ եթէ ոչ իմիք կարօտեալ, եւ ոչ խոստացար իսկ ինձ զայս առնել, ոչ թէ երախտիս ինչ յինէն գտեալ առանձինն եւ ոչ մի, այլ զի բարեկամաց օգուտ ինչ արարի. այնպէս յօժարութեամբ օգնական իմ եղեր. որպէս զի այժմ որչափ յիս ապաստանէ կորուսեալ եմ, բայց որչափ ի քեզ ապաս-

տան իցէ ողջ իսկ ապրիցեմ։ Ով Կիւ-
րոս եթէ որպէս իսկզբանն էի եւ որ-
դիս ծնանէի, ոչ գիտեմ եթէ ստա-
նայի երբեք որդեակ որ այսպիսի միտ
առ իս ունիցի. եւ այլ եւս որդիս տե-
սի եւ զայս արքայ Ասորեստանեաց,
որ առաւել իսկ զիւր հայրն տրտմե-
ցոյց, քան զքեզ այժմ կարիցէ տրտ-
մեցուցանել։

Եւ Կիւրոս ասէ այսպէս. Ով Գա-
դատա զմեծ եւս իմն զարմանս թո-
ղեալ ընդ իս ես այժմ զարմացեալ։ Ասէ
Գադատաս. եւ զինչ այն զարմանալիք
իցեն։ Զի այնչափ արք, ասէ, զուն
գործեցին վասն քո ի Պարսից եւ ի
Մարաց եւ ի Վրկանացւոց եւ ամենե-
քին որ աստ էին ի Հայոց եւ ի Շակաց
եւ Կադուսիացւոց։ Եւ Գադատաս
յաղօթս կայր. Ով Աբրամազդ, ասէ,
եւ նոցա բազում բարութիւնս շնոր-
հեսցեն դիքն, եւ աւելագոյն այնմ որ
այնր ամենայնի պատճառք եղեւ, զիեւ
նոքա նոյնպիսի լինիցին։ Որպէս զի եւ
զորս դու գովես ով Կիւրոս, ասպնջա-
կանութեամբ ընդունիցիմք զնոսա, ըն-
կալ զպարգեւս զոր ես կարող իցեմ
պարգեւել. եւ բազում պարգեւս ածէր
զի որ կամիցին զոհս մատուցանիցէ, եւ
ասպնջական լինել բանակին արժանի
գեղեցիկ գործելոցն եւ ի գլուխ ելելոց։

Կադուսիացին վերջապահ էր եւ ոչ

հաղորդեցաւ ի պնդելն զՀետ։ Իբրեւ կամեցաւ եւ նա մեծ ինչ գործ վճարել, ոչ ինչ պատմեալ Կիւրոսի ասպատակ դնէին յերկիրն որ առ Բաբիղացւոց աշխարհին կայ. եւ ցան ասա անդ վարատեալ երիվարաց նոցա, ելանէր ասորեստանեայն ի քաղաքէ անտի իւրմէ յոր փախուցեալն էր, եւ պատահէր նոցա, քանզի ճակատեալ էին զօրք նորա։ Իբրեւ դիտաց թէ միայն են Կադուսիացիքն ի վերայ դիմէր, եւ զիշխան Կադուսիացւոցն սատակէր եւ զայլս բազումս եւ բազում երիւարս ի Կադուսիացւոց առնոյր, եւ եթէ դիպէր այնոցիկ որ զառն եւ զաւարն կրէին հանէր ի նոցանէ։ Եւ ասորեստանեայն զՀետ մտեալ մինչեւ ցայն վայր զոր ամուր համարէր այսրէն դառնայր. իսկ Կադուսիացիքն ընդ երեկոյս պրծեալ ապրէին անկեալ ի բանակ անդր։

Կիւրոսի իբրեւ զգաստ լինէր զերացրն որ եղեն, ընդ առաջ երթայր Կադուսիացւոցն, եւ զոր ոք խոցեալ տեսանէր, առնոյր զնա եւ առ Գադատաս առաքէր զի դարմանեսցի, եւ զայլսն վրանակիցս առնէր, եւ հոգ առնէր զի զպէտսն կարեւորս ունիցին, առեալ ընդ իւր եւ ի պատուակցացն Պարսից։ Օ՛ի յայնպիսի ինչ իրս որ պիտանիքն իսկ իցեն վաստակոցն կցորդ կամին լինել. բայց ինքն յայտնի իսկ նեղէր սաս-

տիկ, քանզի մինչ դեռ այլքն ընթրէին, զի ժամ իսկ էր յայնժամ ընթրեացն, դեռ եւս Կիւրոս սպասաւորքն հանդերձ եւ բժշկքն ոչ զոք առանց խնամոց թողոյր, այլ կամ ինքնին իսկ տեսանէր, կամ թէ ինքն չկարէր վճարել, յայտնի իսկ դարմանիչս առաքէր, եւ այնպէս ապա ի քուն եղեալ ննջեցին։

Վաղվաղակի իբրեւ տիւ եղեւ քարոզ կարդայր գալ ի մի վայր ժողովել իշխանացն եւ ամենայն Կադուսիացւոցն. եւ խօսէր զայս գոյն օրինակի բանից։ Ահք բարեկամք, վիշտք մարդկօրէնք են որ հասին. զի յանցանել որ մարդիկ իցեն, ինձ թուի թէ չէ ինչ զարմանալոյ։ Բայց արժան է յայսմ ամենայնէ իրաց որ եղենս ի բարութեան իմիք վայելել եւ ուսանել մի երբեք ուրեք քան զզօրս թշնամեացն տկար եւ անզօրն զօրութեան քակել ի բովանդակ զօրացն։ Ոչ զայս, ասէ, ասեմ, որպէս թէ չիցէ պարտ երբեք սակաւ զօրօք երթալ յո պիտոյն իցէ քան որով այժմն չոգաւ կադուսիացին, այլ եթէ ոք հաղորդութիւն ընդ այնմ որ բաւական իցէ օգնական լինել ունիցի եւ դիմեալ երթայցէ, մարթի պատրել, հնար է եւ մնացելովքն ըզթշնամիսն խաբեալ պատրեալ կացուցանել եւ այլուր դարձուցանել զնոսա։

Պարթի եւ այլ եւս ինչ իրա՝ ի վերայ թշնամեացն խորամանկել եւ զբարեկամս յամուր զգուշութեան կացուցանել։ Այսպէս եւ ոչ որ որոշիցին ի բաց մեկնիցի, այլ կախեալ կայցէ զպընդութենէ զօրութեանն. իսկ որ ի բաց ուրեք մեկնեալ գնայցէ, եւ չունիցի հաղորդութիւն ուր ուրեք եւ իցէ, ոչ ինչ ընդհատ յայնմանէ կրիցէ, եթէ միայն միայնակ էր երթեալ ի մարտ պատերազմի։ Այլ ընդ այսր, ասէ, եթէ դից այն կամ իցէ, առցուք վրէժս ի թշնամեաց ոչ յետ բազում ժամանակի։ Այլ եթէ վաղվաղակի ճաշիցէք, տարայց զձեզ անդր ուր իրքն կատարեցան, եւ զվախճանեալսն թաղեսցուք, եւ ցուցցուք հակառակորդացն թէ ուր յաղթելն կարծեցին, ինքին վայրի այլք զօրագոյնք քան զնոսա գտան, եթէ Աստուած կամեսցի. որպէս զի մի եւ ընդ տեղին ուրախութեամբ հայիցին ուր կոտորեցին զնիզակակիցս մեր։ Եթէ ոչ ի դիմի հարկանիցին մեր, այրեսցուք զհանգրուանս նոցա եւ յաւեր դարձուսցուք զերկիրն, զի մի իցէ թէ տեսեալ զոր ընդ մեզն արարին ուրախ լինիցին, այլ ընդ իւրեանց վիշտսն նայեցեալ ծանրացեալ նեղեսցին։ Ամենեքին երթեալ ճաշեցէք, բայց դուք ով Կադուսիացիք, նախ երթեալ ընտրեցէք ձեզ իշխան, որպէս օրէնք ի-

ցեն ձեր, որ Հոգասցի զձէնջ ընդ դիցն եւ ընդ մեզ, եթէ կարօտիցիք իւիք։ Եւ յորժամ ընտրիցէք եւ ճաշիցէք առաքեցէք առ իս զընտրեալն։

Նոքա զայն գործէին. եւ Կիւրոս իբրեւ եհան զզօրսն, եւ հաստատեաց կացոյց ի գնդին զընտիր ընտիրս ի Կադուսիացւոցն, հրամայեաց մօտ առ իւր տանել զգունդն, որպէս զի, ասէ, եթէ կարող իցեմք քաջալերս արանցն տայցեմք. եւ այնպէս յուղի անկեալ երթային եւ եկեալ թաղէին զԿադուսիացիսն, եւ զվայրսն ապականէին. զայս արարեալ մեկնէին, եւ զպէտս պէտս առեալ յերկրէ անտի թշնամեացն միւսանգամ մեկնէին յերկիրն Գադատայ։

Իբրեւ զայս ած զմտաւ թէ որ ապրստամբեցինն եւ եկին առ նա, քանզի առ Բաբիղացւոց աշխարհին են, չարչարեսցին եթէ ոչ ինքն հանապազ մօտ իցէ, ապա ի թշնամեաց անտի զորս արձակէրն, հրամայէր ասել ցասորեստանեայն եւ ինքն իսկ քարոզ առաքէր առ նա ասել այսպէս. թէ զայնոսիկ որ զերկիր ի գործ արկանեն չզրկեմ, եթէ եւ դու կամեսցիս թողուլ մշակացն ապստամբացն գործել զգործ մրշակութեան։ Բայց դու, ասէ, եթէ խափանել կամիս զսակաւաւորս ոմանս խափանեսցես. քանզի սակաւ իսկ եր-

կիր ապոտամբելոցն եւ եկելոց առ իս. եւ ես բազում երկիր թողի, զի արդիւնս քեզ բերիցէ։ Իսկ ի կթել պտղոցն եթէ պատերազմ իցէ, ինձ թուի թէ որ յաղթէն, զայն նա տարցի. ապա թէ խաղաղութիւն լինիցի, յայտ է եթէ դու քաղեսցես։ Այց եթէ ոք յիմոց աստի քեզ զէն վերացուսցէ, կամ ի քոյոցն՝ ինձ, զնոցա, ասէ, որչափ ձեռնհաս իցեմք, վրէժ առցուք։

Այս պատուիրեալ քարոզին առաքէր։ Ասորեստանեայքն իբրեւ լուան, ածէին ի հաւան զթագաւորն շնորհել եւ պակաս առնել զպատերազմն։ Այց ասորեստանեայն դրդեալ ի համազգեաց անտի, եւ իւր իսկ ընդ այն կամեցեալ, յանձն առ. եւ դաշինք ի միջի կռէին, թէ մշակացն խաղաղութիւն լինիցի, եւ զինակրաց՝ պատերազմ։ Այս ինչ վասն սատարացն ի գլուխ հան Կիւրոս. հրաման տայր իւրոցն բարեկամացն զարօտս անանոնոցն, եթէ կամիցին, իւրոց զօրացն առնիցեն յանձն. տանէին եւ զառ եւ զաւար թշնամեացն ուստի եւ կամէին, զի հեշտ լինիցի նիզակակցացն արշաւանն։ Այ թէպէտ եւ նոյն վիշտք ի վերայ կային, բայց ի թշնամեացն կերակրելն թեթեւագոյն իմն զպատերազմն ցուցանէր։

Իբրեւ պատրաստ լինէր Կիւրոս, զի

երթայցէ, զայր հասանէր Գադատաս, բազում եւ ազգի ազգի պատարագս բերեալ իբրեւ ի մեծ տանէ եւ ընտիր ընտիր երիւարաց յիւրոց հեծելոցն, որոց՝ վասն նենգութեանն չհաւատայր։ Իբրեւ մերձ եղեւ, խօսէր այսպէս. Ով Կիւրոս այժմիկ զայս բերեմ քեզ, զի ի ժամանակիս յայսմիկ վարիցիս նոքօք թէ պիտոյ ինչ լինիցին. համարեաց, ասէ, թէ եւ այլն ամենայն որ ինչ իմ է, այն քո է։ Օ ի չէք եւ չէ իսկ երբեք որ յինէն ծնաւ, ում թողից զիմ տունս. այլ հարկ է, ասէ, ընդ իս յորժամ վախճանիմն, ամենեւին շինջանել ազգատոհմին մերոյ եւ անուանն. երդմնի լինիմ, ասէ, ես ի դիսն ով Կիւրէ, որ զամենայն տեսանեն եւ ըզբնաւ լսեն, թէ ոչ անիրաւ ինչ եւ ոչ ծանականաց ինչ բանս խօսեցայ կամ գործեցի, եւ զայս կրեցի. զայս ասէր եւ զիւր բախտն արտասուէր, եւ ոչ ես կարէր աւելի ինչ ասել։

Եւ Կիւրոսի լուեալ ի խոր խոցեալ խօսէր այսպէս. Ծերիւարսն, ասէ, առնում, զի քեզ օգուտ գործեցից, տրեալ զնոսա որոց մտադիւրադոյնք այժմ քան զքեզ իցեն, որպէս երեւի իսկ։ Եւ որում եւ յառաջագոյն իսկ ցանկացեալ էի, զՊարսից այրուձին բովանդակիցեմ հեծեալս բեւր մի. իսկ զայլ ես ինչսն դու տար պահեա, ա-

սէ, մինչեւ տեսանիցես զիս, զի տրեալ պարգեւս ընդ պարգեւացն ոչ պարտեցայց ի քէն։ Ապա թէ ինչ աւելի տուեալ երթայցես քան զայն զոր յինէն առեր, չգիտեմ թէ զիարդ ոչ յամօթ լինիցիմ։

Զադատաս ասէ. Հաւատամ, ասէ, քանզի տեսանեմ իսկ զկարգս քո. բայց տես թէ բաւական իցեմ պահել։ Քանզի մինչ բարեկամքն էաք ասորեստանուոյն, զի ազնուադոյն իմն թըւէր կալուած հօր իմոյ, քան ի մեծ քաղաք անդր Բաբիղացւոց մօտ էր, որչափ ինչ շահս մարթ էր ի յաղթ քաղաքէ անտի առնուլ, ի նոյն վայելէաք, եւ եթէ աղմուկ ինչ կամ խռովութիւն հասանէր դառնայաք յաշխարհն մեր եւ մեկուսի էաք յայնմ ամենայնէ։ Բայց այժմ քանզի թշնամիք եմք, յայտ է թէ յորժամ դու մեկնիցիս, եւ մեք եւ ամենայն տուն մեր նենգիցիմք. եւ թուի ինձ տրտմութեամբ կեանս կեցցեմք, զի բնաւ զմերձաւորսն իսկ մեր թշնամիս ունիցիմք եւ զօրագոյնս քան զմեզ տեսանիցեմք։

Թերեւս ասիցես իսկ, թէ զմէ՞ ոչ խորհեցար մինչ չեւ ապստամբեալ։ Օ՛ի անձն, ով Կիւրէ, վասն թշնամւոյն եւ ցասմանն ոչ ընդ զգուշութիւն հայէր, այլ ցանգ իսկ եւ միշտ այսպիսի ինչ երկնէր. թէ երբ հասանիցէ վրէժ

առնուլ ի դիցն եւ ի մարդկան թշնամւոյն, որ չդադարեն յատելութենէ, իբր ոչ եթէ զի զրկեաց ոք ինչ զնա, այլ յորժամ կարծիս զումեքէ կարծիցէ լաւ քան զինքն լինել։ Ինձ այսպէս իսկ թուի թէ քանզի ինքն չէ պիտանի, ապա վատթարագոյնս քան զինքն թիկունս ունիցի։ Դ. եթէ աղնուագոյն քան զնա երեւիցի, քաջալերեաց, ասէ, ով Կիւրէ, ոչ հասցէ ընդ առն այնմիկ քաջի ի կռիւ կալ. այլ ինքն իսկ բաւական լինիցի հնարս ինչ նմա մենքենայել, մինչեւ բարձցէ զայն որ աղնուագոյն քան զինքն է. բայց ի նեղելն զիս, ինձ թուի թէ եւ վատթարօքն հզօրագոյն լինիցի։

Կիւրոսի որ զայս ամենայն լուաւ արժանի հոգաբարձութեան բանքն թըւեցան, եւ անդէն ասէր. Իսկ արդ զիարդ, ասէ, ով Գադատա ոչ դու զպարիսպն պահապանօք ամրացուցեր, զի ի զգուշութեան իցես յորժամ մտանիցես ի նոսա. եւ դու ոչ ապաքէն ընդ մեզ ի պատերազմ գումարեալ ես, զի թէ դիքն, որպէս եւ այժմ իսկ, ընդ մեզ իցեն, նա ի քէն զանգիտիցէ եւ ոչ դու ի նմանէ։ Արդ որ ինչ քաղցրն իցէ քեզ տեսանել ի քոյոց անտի կամ ընդ որում ախորժիցես լինել, առ եւ եկ ընդ իս, զի դու ինձ, որպէս ինձ թուի, ամենեւին պիտանացու լինիցիս.

ես եւ որչափ թէ կարող եւ ձեռնհաս իցեմ գուն գործիցեմ, պիտանացու քեզ լինել։ Օչայս լուեալ Գադատայ ոգի առեալ կազդուրէր եւ ասէր. Արդ, ասէ, մարթիցիմ ճեպել պատրաստել մինչ չեւ քո ելեալ իցէ, զի կամիմ, ասէ, եւ զմայր իմ ածել ընդ իս։ Ա-ճապարեսցես, ասէ, զի կացից մնացից մինչեւ դու ասիցես թէ բարւոք է։

Ապա երթեալ Գադատայ պահ եդ պարսպին Կիւրոսիւ հանդերձ զոր ամ-բացոյցն իսկ, եւ զամենայն կազմէր պա-տրաստէր, որովք շինիցի տուն մի մեծ. առնոյր եւ յիւրոց հաւատարմաց անտի որովք կարօտն էր եւ զբազումս յորոց թերահաւատն էր, բռնադատեալ կի-սոցն ի նոցանէ եւ զկանայս ընդ իւր-եանս ածել, եւ կիսոց եւ զքորսն զի ընդ նոսա կապեալ գրաւիցէ զնոսա. եւ զԳադատաս առ Կիւրոս ընդ այնոսիկ որ զիւրեաւն էին եւ երթայր, զի ճա-նապարհացն ցուցիչ լինիցի եւ ջրոց եւ ճարակի եւ հացի, որպէս զի միշտ իսկ ի պարարտութիւնս գնայցեն։

Իբրեւ երթեալ զԴաբիղացւոց աշ-խարհն նշմարէր, թուեցաւ նմա թէ ճանապարհն զոր երթայր անդր իսկ ի քաղաքորմն տանիցի, կոչեցեալ նորա զԳոբրիաս եւ զԳադատաս, հարցա-նէր եթէ գուցէ՞ այլ ճանապարհ, զի մի բնաւ մօտ ի պարիսպ անդր տանիցի։

Եւ Գոբրիաս ասէ. Զն տէր եւ բաղում են ճանապարհք, այլ ես կարծէի եթէ կամիցիս հուպ երթալ ի քաղաքն զի ցուցանիցես նոցա զզօրսն քո, թէ բազում զօրք են քո եւ գեղեցիկք։ Զանազի յորժամ սակաւ զօրսն ունէիր, մատեար ի պարիսպ անդր եւ տեսանէին զմեզ զի ոչ բազում էաք, եւ այժմ կազմեալ պատրաստեալ որպէս ասացն առ քեզ պատրաստ լինիցի ի պատերազմ, գիտեմ թէ յորժամ զքո զօրս տեսանիցէ, միւսանգամ իւրքն առանց կազմութեան թուիցին։

Կիւրոս ասէ. Ոչարմանս իմն առնես, ով Գոբրիա, թէ ի ժամանակի յորժամ յոյժ իսկ սակաւ զօրս առեալ երթայի, անդր իսկ ի պարիսպն մատչէի, եւ այժմ բազմագոյն զօրս ունիմ եւ չկամիմ տանել ի պարիսպն։ Բայց մի ինչ պանչասցիս, ասէ, քանզի ոչ եթէ նոյն իցէ մօտն տանել եւ հեռացուցանել. զի մօտ ամենեքին տանին, այնպէս ճակատեալք որպէս համարինն թէ աղնըւագոյն պատերազմն լինիցի։ Բայց որ ցածունքն եւ իմաստունքն իցեն զգուշութեամբ ի բաց մեկնին եւ ոչ եթէ արագութեամբ. հարկ իսկ է սայլեցն ակաղձելոց մի ըստ միոջէ անցանել, բայց պարտ է զայն ամենայն վառելովք եւ սպառազինօք թագուցանել, եւ ոչ ուրեք մերկս ի զինուց երեւել

կապարձակրացն առաջի հակառակորդաց։ Արդ հարկ է այնոցիկ որ այնպէսն գնայցեն առաջի տկարացն զպատերազմօղսն կարգել. եւ այնուհետեւ եթէ կամիցին ի պարապէ անտի միահամուռ ի վերայ անկանել ուր ուրեք եւ խառնիցին, սաստկագոյնս ընդխառնիցին քան զայնոցիկ որ անցանիցենն։

Նոքա քանզի երկայնաձիգ տողեալ երթայցեն, դանդաղագոյնք լինիցին թիկունք օգնականութեանն, եւ նոքա ի պարապէ անտի վաղվաղակի դիմեալ ի վերայ մօտաւորացն միւսանգամ այսրէն դառնայցեն։ Իսկ եթէ ոչ սակաւ հեռացեալ երթայցեմք քան որչափ թէ կարիցեն տեսանել զմեզ եւ մեք ձգտեալ երթայցեմք, զբազմամբոխ բազմութիւն մեր նշամարիցեն. եւ ի զինուց եւ ի զարդուց առ միմեանս միմեամբք հիւսելոց բնաւ իսկ ամբոխ անհնարին երեւիցի։ Եւ եթէ այնպէս երթայցեմք եւ լռիկ գայցեն ի մեր վերայ, ի բազմաց հետէ յառաջագոյն տեսեալ զնոսա ոչ առանց պատրաստութեան անկանիցիմք ի բուռն։ Առնաւանդ թէ, ասէ, ով արք, եւ ոչ ձեռնամուխ իսկ լինիցին յորժամ հասանիցէ հեռագոյն մեկնել ի պարապէն՝ եթէ ոչ բովանդակ իսկ զօրաք կարծիցեն ամենայն բանակին յաղթել. զի ահագին է ի դիմի հարկանելն։

Իբրեւ զայս ասէր հաճոյ թուեցաւ որոյ անդն էին, եւ Դոբրիաս որպէս հրաման ետ տանել, տանէր։ Իբրեւ զանցանէին զօրքն զքաղաքաւն, միշտ զվերջին բանակն ամրագոյն յարդարէր, եւ այնպէս մեկնեալ երթայր եւ եկեալ հասանէր ի սահմանակողմն Ասորեստանեացն եւ Արաբացն ուստի ելեալն էր. անդ քանզի երեք պահակք էին Ասորեստանեացն, զմին ի նոցանէ զտկարագոյն յարձակեալ անդէն առնոյր բռնի, բայց յերկուց անտի երկնչէր Կիւրոս, իսկ Դադատաս հաճեաց զմիտս պահապանացն տալ զամուրսն ի ձեռս։

ԳԼՈՒԽ Ե

Իբրեւ այս ամենայն ի գլուխ ել, առաքէ առ Կիաքսարէս, պատուէր տայ չու առնել գալ ի բանակն զի վասն ամրականացն զոր ըմբռնեցին խորհուրդ խորհեսցին թէ զինչ ինչ պարտ իցէ առնել, եւ զի տեսեալ զզօրսն եւ վասն այլոցն եւս խրատտու լինիցի որ ինչ արժան իցէ յայնմ հետէ գործել։ Եթէ հրամայեսցէ. ասա, ասէ, թէ ես եկիցս առ նա բանակել։ Եւ չոքաւ հրեշտակն պատմել։ Եւ Կիւրոս հրամայեաց յայնժամ Դադատայ զվերանն Ասորեստանոյն, զոր Կիաքսարայ ընտրեցին Արաբն, քաջ պատրաստել այլովք եւս կազմա-

ծովք կոր ունէր, եւ զերկուս կանայսն մուծանել ի սենեակ անդր վրանին եւ նոքօք հանդերձ եւ զարուեստականսն որ ընտրեալ էին Կիաքսարայ։ Նոքա վաղ զայն գործէին, իսկ որ առաքեցաւն առ Կիաքսարէս, իբրեւ ասաց զհրամայեալսն, լուեալ Կիաքսարայ, գիտաց եթէ լաւ է բանակին կալ ի մէջ սահմանացն, զի եւ Պարսիկքն զորս կոչեաց Կիւրոս, գային հասանէին, եւ էին քառասուն բեւրք աղեղնաւորաց եւ ասպարաւորաց։ Արդ տեսեալ զնոսա եթէ բազում ինչ մնաս գործեն Մարաց աշխարհին, զի առաւել լաւ համարէր ապրել ի նոցանէ, քան այլ ամբոխ ի ներքս ընդունել։ Որ ի Պարսից աշխարհէն ածէր զզօրն, հարցանէր զԿիաքսարէս, ըստ Կիւրոսի պատուիրանին, եթէ զօրաց ինչ պէտք իցեն նմա. իբրեւ ասաց թէ չեն պէտք, նոյն օրին յորժամ լուաւ թէ Կիւրոս մօտ է, չոքաւ առ նա տարեալ զզօրն։ Բայց Կիաքսարէս ի վաղիւ անդր յուղի անկեալ գայր մնացեալ Մարաց հեծելովքն։ Իբրեւ զգաց Կիւրոս թէ մօտ գայ նա, առեալ զՊարսիկ հեծեալսն որ բազում էին եւ զամենայն Մարսն եւ զՀայս եւ զԿիլիկեանացիս, եւ յայլոց նիզակակցաց զքաջ հեծեալսն եւ զքաջ վառեալս ընդ առաջ երթայր եւ ցուցանէր Կիաքսարայ զզօրսն։

Կիաքսարէս իբրեւ ետես թէ զԿիւրոսի բազումք եւ քաջք զհետ երթեալ էին, իսկ ընդ իւր սակաւ ինչ սպասք էին անարգանս իմն անձինն համարեցաւ եւ դժկամակ լիներ ընդ այն։ Եւ իբրեւ իջեալ Կիւրոսի յերիւարէ անտի մատչէր զի համբուրեսցէ զնա ըստ օրինացն, էջ Կիաքսարէս յերիւարէ անտի, եւ զերեսս ի բաց դարձոյց, եւ համբուրեաց ոչ, եւ յայտնի լինէր թէ արտասուէր։ Ապա հրաման ետ Կիւրոս այլոց ամենեցուն ի բաց գնալ եւ դադարել. եւ ինքն բուռն հարեալ զաջոյ Կիաքսարայ, եւ հանեալ զնա արտաքոյ ճանապարհին ընդ արմաւենեօքն, եւ զմարական կտաւսն հրամայէր տարածանել եւ նստուցանէր զնա, եւ ինքն առ նմին նստեալ հարցանէր այսպէս։

Ասա դու ցիս, ասէ, ով քեռի, թէ հի՞մ ընդ իս ցասուցեալ ես, եւ զի՞նչ ինչ դժնդակութիւն տեսեր, զի այնպէս դժկամակ լինիցիս։ Յայնմ վայրի տայր պատասխանի Կիաքսարէս այսպէս։ Օ՛մտաւ ածի թէ ի հաւուց եւ ի նախնեաց եւ ի հարց թագաւորաց ծնայ եւ ես թագաւոր կացի, բայց տեսանեմ զի ես անարգանօք եւ առանց մեծարանաց երթամ, եւ դու իմով սպասու եւ այլ եւս զօրօք մեծավայելուչ հասեալ կաս. զայս ի թշնամեաց անգամ կրել ծանր համարիմ, եւ եւս առաւել

դժընդակագոյն յայնցանէ յորոց չէր պարտ այնպիսի ինչ կրել։ Քանզի լաւ համարիմ բեւր անգամ ընդ հողով մտանել, քան այնպէս անարգ երեւել եւ տեսանել զիմն, զի անփոյթ առնիցեն զինէն եւ ծիծաղիցին զինեւ։ Քանզի ոչ եթէ այնմ ինչ տգէտ իցեմ, ասէ, եթէ ոչ դու մեծ քան զիս իցես, այլ եւ իմ ծառայքն սաստիկ դիմադարձ ինձ լինիցին, եւ կազմ իցեն առ առաւելագոյն զմեզ լակելոյ, քան եթէ յինէն վշտանալոյ։

Եւ մինչ դեռ ասէր զայս առաւել եւս պարտեալ լինէր յարտասուացն, մինչեւ եւ զԿիւրոս համբուրէր եւ լի լինէին աչք նորա արտասուօք։ Պնդեալ սակաւիկ մի այսպիսի ինչ խօսէր Կիւրոս։ Օ՜այս, ասէ, ով Կիաքսարէ, ոչ ճշմարտութեամբ ասացեր եւ ոչ առնուս իսկ ուղղորդ ի միտ զի համարիսդ եթէ իմով իսկ գալստեամբս կազմեցան Մարք առ ի բաւական լինել լակել զքեզ։ Ընդ քեզ ոչ զարմանամ թէ ի ցասման եղեր եւ երկեար. եթէ յիրաւի տրըտմեալ իցես ընդ նոսա, եթէ յանիրաւի զայն թողից։ Օ՜ի գիտեմ եթէ ծանրացեալ նեղիցիս եթէ լսիցես յինէն թէ ես ընդ նոցա իրաւունս տայցեմ։ Բայց առն իշխանի զայրանալ ի վերայ ամենայն իշխանաւորացն, այն իսկ ինձ մեծ յանցանք թուին. քանզի հարկ է թէ

վասն զբաղումն երկեցուցանելոյ, բաղում թշնամիս առնիցէ. եւ ընդ ամենեսին սրտմտելովն, ամենեցուն նոցա միաբանութիւն արկանիցէ։ Որոց աղագաւ ես ոչ առաքեցի առանց իմ զնոսա, երկուցեալ թէ մի այնպիսի ինչ լինիցի քո ցասմամբն զի զամենեսին զմեզ տրտմեցուցանիցէ. արդ այդ ամենայն մինչ դեռ ես մօտս իցեմ աստուածովք հանդերձ զգուշութեամբ վճարիցի։ Բայց զի համարիսդ թէ զբրկիս ի մէնջ. արդարեւ ես ընդ այն ամենեւին դժկամակ իսկ եղէ, եթէ բաղում բարեկամս պիտանիս առնել թեւակոխիցեմ եւ ապա կարծիս առնուցում թէ զնորին հակառակն գործիցեմ։

Այլ զի մի, ասէ, ընդ վայր մեղադիր մեզ տայցեմք լինել, այլ եթէ հնար ինչ իցէ, ստոյգ հայեսցուք ոճով թէ որպիսի ինչ առ ի մէնջ վնասն իցէ։ Դու զարդար պատճառան ի մէջ մատուցիր. զի եթէ չար ինչ գործ գործեալ իցէ իմ, յանձին կալայց եթէ զբկեցի, ապա թէ ոչ մի ինչ չար գործեալ է իմ կամ խորհեալ. ո՞չ եւ դու խոստանայցես թէ ոչ ինչ զբկեցար յինէն։ Հարկ է, ասէ, յանձն առնուլ։ Իսկ թէ եւ լաւ ինչ գործեալ երեւիցիմ եւ յօժարեալ գործել որչափ աւելագոյնն ձեռնհաս իցեմ, ոչ մանաւանդ գովութեան ար-

ժանի թուիցիմ եւ ոչ պարսաւանաց։ Յիրաւի, ասէ։

Ասէ Կիւրոս, Ուն առ այսուհետեւ դիտեսցուք տեսցուք զամենայն ինչ զոր իմ գործեալ իցէ զմի մի գործ իւրաքանչիւր. զի այնպէս յայտ առաւել լինիցի թէ զինչ լաւութեան գործ ի նոցանէ իցէ եւ որ յոռութեան։ Այց իսկզբանէ իսկ արարից սկիզբն եթէ եւ քեզ շատ եւ բաւական թուեսցի։ Վանզի քեզ յորժամ ազգն եղեւ թէ բազում հակառակորդք գումարեցան, եւ ի վերայ քո եւ ի վերայ քոյոյ աշխարհինդիմեալ գան, իսկ եւ իսկ վաղվաղակի առաքէիր ի Պարսից աշխարհն խնդրել թիկունս օգնականութեան, եւ առ իս իսկ առաձինն, եւ աղաչէիր եւս փութալ ինքնին իսկ գալ զօրավար եթէ գայցեն ոմանք ի Պարսից անտի։ Արդ միթէ ոչ իսկ անասցի քեզ եւ եկի եւ բերի ընդ իս արս բազումս եւ պիտանիս որչափ բաւական էի։ Ասկիր, ասէ։

Այսուհետեւ նախ ասա դու ցիս, թէ ապիրատութիւն ինչ արդեւք ըստգտեր դու զիմ, թէ մանաւանդ երախտիս գտեր։ Ասէ Կիաքսարէս, յայտ իմն է, թէ յայսմ ամենայնէ երախտիս գտի։ Վանզի զինչ էր, ասէ, յորժամ թշնամիքն գային եւ կռուել հասանէր ընդ նոսա, տեսեր դու զիս յայնժամ

յաշխատութենէ իմէքէ ի բաց կացեալ կամ անխայեալ։ Ոչ, ասէ, ոչ։ Եւ զի՞նչ, ասէ, յորժամ յետ մեր լինելոյ յաղթութեանն ասուածովքն եւ մերժելոյ թշնամեացն, աղաչէի ես զքեզ զի առ հասարակ զհետ պնդիցեմք նոցա եւ հասարակ վրէժ խնդրեսցուք, եւ առ հասարակ թէպէտ լաւ ինչ թէպէտ յոռի դէպք տայցեն, զայն շահիցիմք։ Ունիցի՞ս ինչ դոքօք առաւելութիւն առ ի բամբասելոյ զիս։

Լուռ եւեթ կայր Կիւաքսարէս՝ բայց Կիւրոս միւսանգամ խօսէր այսպէս. Բայց որովհետեւ լաւ համարիս լուռ իսկ լինել քան տալ պատասխանի, զայն ասա եթէ զրկեցա՞ր ինչ, զի յորժամ քեզ ոչ զգուշութեան թուէր զհետ մտանել, քեզ չետու լինել հաղորդակից վշտացն, եւ աղաչեցի ես զքեզ առաքել զայրուձիդ ի քոյոց այտի. զի եթէ եւ զայդ խնդրելով զրկեցի ինչ մանաւանդ իսկ զի եւ ետու եւս զանձն քեզ զօրաւիդն օգնականութեան, այն առ ի քէն իսկ յայտ արարեալ ցուցցի։

Իբրեւ առ այն եւս լուռ լինէր Կիւաքսարէս։ Եթէ եւ ոչ այդմ բանի կամիցիս տալ պատասխանի, զայն ասա դուցիս, միթէ բնաւ զլացա՞ց ես ինչ զքեզ, զի յորժամ դու ետուրն ինձ պատասխանի, եթէ ոչ կամիմ անդէն զԱ՛ռս բռնադատել ի վիշտս, զի տեսանեմն

զնոսա թէ զուարճացան զուարթացան. միթէ չար ինչ գործեցի քեզ զի ոչ ցասեայս. եւ յայնր վերայ միւսանգամ խնդրէի ի քէն քան զոր հեշտ ինչ չիցես ձեռնհաս տալ ինձ եւ ոչ դիւրագոյն ինչ քան զնոյն հրամայել Ս՝արաց։ Զի խնդրեցի թէ որ կամին զհետիմ գալ, տացես ինձ։ Զայդ ի քէն ընկալեալ ոչ այլ ինչ գործ գործեցի թէ ոչ հաւանեցուցանէի զնոսա. արդ երթեալ հաւանեցուցանէի զնոսա եւ զորոց զմիտան հաճեցի, զնոսա առեալ յուղի անկայ քո իսկ թոյլն տալով։ Եթէ զայս մեղադրութեան արժանի համարիցիս, ապա եւ ոչ զոր տայցես դու ումեք ինչ, որպէս ի դէպ իսկ է, առանց բամբասանաց իցէ առնուլ ի քէն։ Այսպէս իսկ գնացեալ երթայաք։

Եւ յորժամ գնացաքն, զինչ գործ վճարեցաւ որ չիցէ յայտնի եւ երեւելի. ո՞չ ապաքէն բանակ հակառակորդաց առաւ, ո՞չ բազմագոյնք յայնցանէ որ ի վերայ քո եկին սատակեցան։ Ա՞ստ մինչ դեռ կենդանիքն իսկ էին հակառակորդքն, ո՞չ ապաքէն բազումք ի զինուց մերկացան, եւ յոլովք յերիւրացս զրկեցան. եւ զինչս այնոցիկ որք յառաջն զքոյսն տանէին կրէին, այժմ տեսանես թէ քո իսկ բարեկամք ունին, զկէսս քեզ բերեն եւ զկէսս անձանց առնուն ընդ|քոյով իշխանութեամբ։

Իսկ որ մեծ քան զամենայն եւ գեղեցիկ է, զքո երկիրն մեծացեալ տեսանես, եւ զթշնամեացն նուազեալ. եւ զպահական առեալ եւ զքո իսկ զպահական որ յառաջն վտարանդի լեալ էին Մասորւոց իշխանութիւնն, այժմ նմին հակառակ ընդ քոյով ձեռամբ է։ Բայց չգիտեմ թէ զիա՞րդ ասիցեմ թէ կամիմ ուսանել թէ որ չար իցէ ի սոցանէ կամ որ բարի. բայց լսելոյ, ասէ, ամենեւին չիք իսկ արդել. ասա զինչ զմտաւ ածես վասն այսր ամենայնի։

Այս ասաց Կիւրոս եւ դադարեաց։ Խօսեցաւ Կիաքսարէս այսպէս. Ով Կիւրոս ոչ գիտեմ թէ զիա՞րդ պարտ իցէ ասել թէ զոր ինչ գործեցերն, այն գործ չարութեան է։ Բայց գիտա, ասէ, թէ այս ամենայն բարութիւնք այսպիսի իսկ են զի որչափ առաւելուցուն դոյնչափ ծանր իցեն ինձ։ Զի ես զքո իսկ աշխարհն կամէի իմով զօրու մեծացուցանել քան եթէ զիմն ի քէն այնպէս մեծացեալ տեսանել. զի քեզ, որ զայդ առնես փառք են, բայց ինձ անարգանք են։ Եւ գանձս, ասէ, ես լաւ համարիմ պարգեւել քեզ, քան առնուլ ի քէն զոր դու այժմիկ տաս ինձ։ Զի զգամ թէ նոքիմքք մեծանամ ի քէն, որովք աղքատանամն։ Եւ եթէ զիմ հնազանդեալս տեսանէի, սակաւ ինչ ինաստեալ ի քէն, խուն ինչ տրտմէի,

քան այժմ տեսեալ զի մեծամեծ բարութիւնս գտին։ Թէ զայս ամենայն, ասէ, ապախտաւոր մտօք կարծիցիմ ածել զմտաւ, մի յիս զայս այլ ի քեզ իսկ դարձո զբնաւ տեսանել թէ որպիսի ինչ երեւիցի։ Զի եթէ շունս ոք, զոր դուն պարարէիր վասն անձին եւ քոյոցն պահպանութեան, զնոսա ողոքելով, եւս ծանօթագոյնս անձին քան քեզ առնիցէ, ուրա՞խ ինչ ընդ ողոքանսն լինէիր։

Եւ եթէ փոքր ինչ այդ քեզ թուիցի, եւ զայն ած զմտաւ, եթէ զքո իսկ ոք զպաշտօնեայսն, զոր դու պահպանութեան եւ սպասու վասն ստացար, այնպէս կազմիցէ զնոսա, զի նորա մանաւանդ, քան եթէ քո կամիցին լինել, միթէ շնորհակա՞լ ինչ ընդ այնր երախտեաց լինէիր։ Եւ որում առաւել իմն խնամ ունին մարդիկ եւ ընտանեբար սպաս հարկանեն, եթէ զքո կին ոք այնպէս ածիցէ զիւրեւ, որպէս զի ընդ նա առաւել քան ընդ քեզ տնկանիցի կնոջն գութն, ուրա՞խ ինչ ընդ բարերարութիւնն լինէիր. եւ ճարտար գիտեմ թէ քան զամենեսեան առաւել զբկիցէ զքեզ զայն առնելով։ Եւ զի զայն ասացից որ առաւել հանգոյն իմոց վըշտացս իցէ, եթէ զորս ածերն իսկ զՊարսիկս այնպէս ոք ողոքէր, որպէս զի ախորժէին գնորա զհետ երթալ, քան զքո

կնի, բարեկամ արդեաք համարէիր զնա. թուի ինձ եթէ ոչ. այլ առաւել թշնամի քան եթէ զբաղումն ի նոցանէ էր կոտորեալ։ Եւ զինչ եթէ ի քոց բարեկամաց ոք, յորժամ մարդասիրութեամբ բարբառէր, թէ առ յիմոց այսոր որչափ կամիս, եւ զայն լուեալ երթայր առնոյր ոք զամենայն որչափ ինչ կարէր, եւ նա քոյովքն մեծանայցէ, դու եւ ոչ սակաւ ինչ ունիցիս զոր ի կիր արկանիցես. կարիցե՞ս զայնպիսի բարեկամ առանց բամբասանաց հաշուել։

Բայց ես այժմ եթէ ոչ զայսոսիկ, սակայն այնպիսի ինչ ի քէն կրեալ համարիմ։ Զի դու ճշմարիտ իսկ ասես եթէ յորժամ ասացի ես թէ որ կամինն տար, առեալ զամենայն զօրս իմ գնացեր, եւ զիս լոկ եւ թափուր թողեր։ Եւ այժմ զոր իմով զօրու առեր. զայն ինձ ածես, եւ զիմ երկիրն իմով զօրօք մեծացուցանես։ Եւ ես քանզի չեմ ինչ պատճառք բարութեանցն, ցուցանիցեմ զանձն իբրեւ կին մի զի բարիս յայլոց մարդկանէ գտանիցեմ եւ յիմոց հնազանդելոց իսկ։ Զոր այր առաքինի երեւեցիս, ես եւ իշխանութեան արժանի չիցեմ. արդ այս ամենայն քեզ երախտիք կարծիցին ով Կիւրէ։ Զիտասջիր, ասէ, զի եթէ խնամածէիր ինչ ինձ, ապա զգոյշ լեալ էր քո ոչ յիմեքէ այնպէս զլանալ զիս, որ-

պէս ի պատուոյ եւ ի մեծարանաց։ Զի ինձ զի՞նչ շահ իցէ, երկրին ընդարձակել եւ ինձ յանարգութիւն հասանել. զի ես ոչ եթէ Արաց յայն սակս իշխեցի զի ազնուագոյն քան զնոսա զամենեսին էի, այլ առաւել զի համարեցան նոքա զմեզ ամենեւին լաւ քան զանձինս։

Եւ Կիւրոս մինչ դեռ խօսէրն իսկ, ասէ. Ով քեռի, քանզի յառաջագոյն շնորհս արարի քեզ, եւ դու այժմիկ շնորհ հեսջիր վասն որոց աղաչեմն զքեզ. դադարեա, ասէ, ինձ մեղս դնելոյ. եւ յորժամ զհանդէս առնուցուս զմերթէ որպիսի միաս ընդ քեզ ունիցիմք, եթէ թուիցի քեզ թէ որ ինչ գործ գործեցաւ յինէն, առ ի քո օգուտ արարաւ, ի համբուրել իմ զքեզ, եւ դու համբուրեսջիր զիս եւ երախտաւոր եւ բարերար համարեսջիր, ապա եթէ այլազգ ինչ գտանիցես յայնժամ ինձ մեղ դնիջիր։ Ասէ Կիաքսարէս. Թերեւս քաջ խօսիս. եւ ես այսպէս արարիցս։ Ասէ Կիւրոս. Եւ արդ զիարդ, միթէ համբուրեցի՞ց զքեզ. Եթէ դու կամիս, ասէ։ Եւ ո՞չ զերեսս դարձուցանիցես յինէն, որպէս եւ այժմ իսկ. Ոչ դարձուցից, ասէ, զերեսս. եւ նա համբուրեաց զնա։

Իբրեւ տեսին Արքք եւ Պարսիկք եւ այլք բազումք. քանզի ամենեցուն հոգ

ի մտի էր թէ զինչ ինչ յայնմ ամենայնէ լինիցի, վաղվաղակի իսկ ուրախ եղեն եւ զուարթացան։ Կիաքսարէս եւ Կիւրոս յերիւսար հեծեալ գային, եւ Ս՝արք զհետ երթային Կիաքսարայ, քանզի այնպէս իսկ հրաման տուեալ էր նոցա Կիւրոսի. եւ զկնի Կիւրոսի Պարսիկքն, եւ զհետ նոցա այլքն, եւ յորժամ հասանէին ի բանակն եւ կացուցին զԿիաքսարէս ի պատրաստեալ խորանն որոց հրամայեալն էր, եւ կազմեցին Կիաքսարայ զպէտսն կարեւորս։ Բայց Ս՝արք որչափ ժամանակս յառաջ քան ընթրիսն պարապորդ էր Կիաքսարէս, երթային առ նա ոմանք ինքնին յանձանց իսկ, եւ բազմագոյնք զի հրամայեալ էր ի Կիւրոսէ, եւ տանէին պատարագս. ոմն զքաջ տակառապետ, ոմն զամ՝ճաբեր եւ մեւս ոմն զհացարար եւ ոմն զարուեստական եւ մեւսն ըմպելիս եւ այլ ոք հանդերձ գեղեցիկ։ Նաամենայն ոք զմի ինչ յորոց ըմբռնեացն տայր նմա պարգեւս. որպէս զի փոխել Կիաքսարայ ի մտաց անտի եթէ Կիւրոս ոչ ի բաց դարձոյց զնոսա ի նմանէ եւ ոչ Ս՝արք սակաւ ինչ քան զառաջինն անսային նմա։

Իսկ իբրեւ ընթրեացն ժամն էր, կոչեցեալ Կիաքսարէս զԿիւրոս աղաչէր թէ վասն զի բազում այն ժամանակ էր զի չէր տեսեալ նորա զնա, ընդ իւր ըն-

թրեսցէ։ Պիւրոս ասէր, Մի դու ինչ զայդ հրաման տար, ով Կիաքսարէ. չտեսանե՞ս զի դոքա որ զմեզ կան, ամենեքին զմէնջ կախեալ կան։ Եւ արդ ոչ բարեդք առնիցեմ, եթէ զնոցանէ անփոյթ առնիցեմ, եւ իմում յօժարութեան պաշտօն կարծիցիմ առնել։ Օրականք, եթէ զմտաւ ածիցեն թէ չառնի ինչ փոյթ զնոցանէ, որ լաւքն իցեն, շատ տրտմիցին եւ որ յոռիքն իցեն առաւել եւս թշնամանիցեն։ Բայց դու ասէ, մանաւանդ զի երկար եւս ճանապարհ եկիր, ընթրեա. եւ որք պատուէնն զքեզ ընկալ զնոսա եւ արա խրախութիւնն նոցա. զի եւ զքեզ քաջալերեսցեն, եւ ես երթեալ վասն որոյ ասէին, դարձայց։ Վաղիւ, ասէ, ընդ առաւօտն այսրէն ի քո դրունսն հասանիցեն ամենայն աւագանին, զի խորհուրդ խորհեսցուք ընդ քեզ, թէ զինչ պարտ իցէ յայսմ հետէ առնել. դու մեզ խօսեաց վասն այսորիկ թէ արդեւք բարեդք թուիցի երթալ ի մարտ պատերազմի, թէ ի դէպ իցէ զզօրսն արձակել։

Ապա Կիաքսարէս զընթրեօքն էր։ Իսկ Պիւրոս ժողովեալ ի բարեկամաց անտի զայնոսիկ որ բաւականքն էին խորհել, եւ դորձակից լինել եթէ պիտոյ ինչ լինէր, խօսէր այսպէս ըստ սմին բանից։ Ընդ բարեկամք, զոր ինչ յա-

ռաջն ըղձանայաք, եկն եհաս աստուա-
ծովքն. զի ուր ուրեք եւ գնայցեմք,
տիրիցեմք երկրին, եւ զԹշնամիսն տե-
սանիցեմք պակասեալս, եւ զմեզ յա-
ճախագոյնս եւ զօրագոյնս։ Այլ եթէ
տակաւին կամիցին նիզակակիցքն, որ
այժմ ի մեզ յաւելան, կալ մնալ, եւ
առաւել եւս գործ կարեմք վճարել,
եթէ ի դէպ իցէ բռնադատել, եթէ
պատշաճ իցէ հաւանեցուցանել։ Արդ զի
կալն բազմաց ի մերոց նիզակակցաց հա-
ճոյ թուիցի, ոչ իմ ինչ առաւել գործ
է հնարելն։ Այլ զոր օրինակ յորժամ
մարտընչել հասանիցէ, որ զբազումս
ձերբակալ առնէ, ուժգնագոյն կարծի,
նոյնպէս յորժամ խորհրդականութեան
պէտք ուրեք իցեն, որ զյոլովագոյնն
ընդ մեզ միաբանեսցէ, նա յիրաւի խո-
սող ոք եւ ոչ եթէ ժրագլուխ ընտրիցի։
Բայց մի որպէս թէ ցոյց ինչ մեզ զբան-
սն առնիցէք, եւ թէ զինչ ինչ առ իւ-
րաքանչիւր ոք ի նոցանէ ասիցէք, զայն
ածէք զմտաւ. այլ պատրաստեսջիք հա-
ճել հաւանեցուցանել զմի մի ի նոցա-
նէ, մինչ զի որովք գործենն յայտ առ-
նիցեն, եթէ հաւանեցան. ձեզ զայդմ
ամենայնէ փոյթ լիցի. իսկ ես զի զոռ-
ճիկսն ունիցին զօրականքն վասն ընդ
պատերազմն կամելոյ, զայնմանէ ջանա-
ցայց հոգալ որչափ ինչ կարօղ իցեմ։

ՎԵՑԵՐՈՐԴ

ԴՊՐՈՒԹՒՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԻՐՈՍԻ ԽՐԱՏՈՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ Յ. ԳՐՊՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա

Զ՝ԱՑՆ օր այնպէս անցուցանէին եւ ընթրեալ հանդչէին։ Ի վաղիւ անդր ընդ այդն ընդ առաւօտն դային հասանէին ի դրունսն Կիւաքսարայ ամենայն թիկունք օգնականութեանն։ Արդ մինչ դեռ Կիւաքսարէս ընդ զարդ դայր, զի լուաւ եթէ ամբոխ բազում ի դրունսն եկն, յայնժամ բարեկամքն ածէին առ Կիւրոս, կէսք զԿադուսիացիսն որ աղաչէին իսկ զնա կալ մնալ, կէսք զԿ՝ըկանացին, այլ ոմն զԳոբրիաս, եւ մեւս զՇակաս եւ Կշտասպէս զԳադատաս ներքինի որ աղաչէրն զԿիւրոս մնալ։

Յայնմ վայրի գիտաց Կիւրոս թէ Գադատաս յառաջագոյն իսկ յահէն սատակի թէ մի գուցէ արձակեսցի բանակն, ծաղու ասէ. Ով Գադատա յայտնի իսկ է, ասէ, թէ ի Կշտասպայ այտի դրդեալ խօսիս զոր խօսիդ։ Գադա-

տաս կարկառեալ զձեռս յերկինս երդմնի լինէր, թէ ոչ ի Կ շտասպեայ դրդեալ գիտէ զոր գիտէ։ Ասէ գիտեմ, ասէ, զի եթէ դուք ի բաց գնայցէք, որ ինչ իմ իցէ, ամենեւին իսկ խարխաբեալ կործանիցի, եւ վասն այնորիկ իսկ եւ ես մատեայ առ նա հարցանել, թէ գիտիցէ՞ եթէ յինչ միտս յոր խորհուրդս իցես վասն զզօրսն արձակելոյ։

Կիւրոս ասէ. Ուրեմն յանիրաւի իսկ, որպէս նման իսկ է, զԿ շտասպէս բամբասեմ։ Կ շտասպէս ասէ. Յանիրաւի, ասէ, ով Կիւրոս. քանզի դիմադարձ լինէի Գադատայ թէ չիցէ քեզ մարթ մնալ, եւ ասէի թէ հայրդ կոչէ զքեզ։ Կիւրոս ասէ. Ո՞ւ ինչ խօսիդ. եւ զայդ եւս իշխեցեր ասատէն ամենեւին իսկ ի վերհանել, թէպէտ ես կամէի թէպէտ ոչ։ Զանգի տեսի զքեզ, ասէ, ցանկացեալ երթալ շրջել երեւելի ի Պարսից աշխարհին. եւ ցուցանել մի ըստ միոջէ հօրդ, թէ զիարդ զինչ գործ վճարեցեր։ Կիւրոս ասէ. Դու ոչ ցանկանայցես երթալ յաշխարհդ։ Ասէ Կ շտասպէս. Ոչ մեկնիմ, այլ մնամ եւ լինիմ զօրավար զօրաց մինչեւ առնիցեմ զԳադատաս տէր ասորեստանուոյն։

Այս խաղս ընդ միմեանս խաղային խնամով։ Ապա Կիւքսարէս լուսաւոր մեծապայծառ զարդարեալ ելանէր, ի վերայ մարական աթոռոյն նստէր։ Ի-

բրեւ ամենեքին միանգամայն որոց պար-
տըն էր մտանել մտին, եւ լռութիւն
լինէր, խօսել սկսաւ Կիաքսարէս այս-
պիսի ինչ օրինակ. Ա.ըք նիզակակիցք,
Թերեւս քանզի ասատ դիպեցայ, եւ
քան զԿիւրոս երիցագոյն եմ, ի դէպ է
ինձ առնել սկիզբն բանիցն: Ինձ դի-
պող Թուի, ասէ, նախ վասն այնորիկ
արկանել խօսս, Թէ արդեւք հաճոյ
Թուիցի երթալ տակաւին զօրաժողով
ի մարտ պատերազմի, եթէ արձակել
զզօրս: Խօսեսցի ոք վասն նորին իսկ այ-
նորիկ Թէ զինչ ածիցէ զմտաւ:

Ապա նախ խօսէր վրկանացին: Ա.ըք
պատերազմակիցք, ոչ գիտեմ, ասէ,
եթէ պէտք ինչ իցեն բանից ուր ար-
դիւնք իսկ իրացն յայտ զլաւն առնի-
ցեն: Քանզի ամենեքին համագունդ
միաժողով երթայցեմք, աւելի եղերս
եւ ոճիրս Թշնամեացն գործիցեմք,
քան եթէ կրիցեմք ի նոցանէ վիշտս:
Իսկ յորժամ մեկուսի ի միմեանց լի-
նիցիմք, նոքին ի կիր արկանիցեն զմեզ,
որպէս ինչ նոցա հաճոյ Թուեսցի եւ
մեզ դժընդակ:

Յետ նորա ասէ կադուսիացին: Ա.ըք
զինչ ասիցեմք, ասէ, վասն մեկնելոյ
իւրաքանչիւր ումեք յերկիր իւր եւ զա-
տանելոյ, ուր եւ ոչ երթելոցն ի պա-
տերազմ, որպէս յայտ է օգուտ ինչ է
զատանելն: Ոչ բազում այն ժամա-

նակք են զի մեք ուրոյն ի մերմէ բաղմամբոխ բաղմութենէ, չոգաք ի մարտ պատերազմի, եւ վրէժս առուաք որպէս եւ դուք իսկ գիտէք։

Յետ նորա Արտաւազդ, որ ասացն երբեմն թէ ազգակից եմ Կիւրոսի, ասէ այսպէս։ Ես, ասէ, ով Կիւրոսարէ, այսու զատ եմ յայնցանէ որ յառաջ քան զքս խօսեցան. զի սոքա ասեն տեւել եւ երթալ ի պատերազմ, բայց ես ասեմ թէ յորժամ երթայցեմք յաշխարհն մեր, ի պատերազմ երթայցեմք, քանզի ես բազում անգամ յօգնականութիւն երթայի յորժամ զմեր ինչ կրէին եւ վասն պահակացն նոցա, զի նենգ իմն գործէին, բազում անգամ իմ իսկ գործ էր, թէպէտ պահապանք էի, երկրնչէի. եւ զայդ առնէի զիմսն իսկ ծախելով։ Բայց այժմ ունիմք զպահակս նոցա, զնոցայն ուտեմ, ըզթրշնամեացն ըմպեմ։ Որ ինչ յաշխարհին մերում իցէ, պատերազմ իցէ, իսկ սոքա տօն. ինձ ոչ բարւոք թուի քակել զտօնավաճառ շահիցս։

Յետ նորա Գոբրիաս ասէ, Ես, ով արք պատերազմակիցք, մինչեւ ցայս վայր գովեմ զաչն Կիւրոսի, զի ոչ մի ինչ ստեաց յորոց խոստացաւն. այլ եթէ մեկնեսցի եւս յերկրէ աստի, յայտէ եթէ հանդիցէ ասորեստանեայն եւ չտայցէ զպատիժս այնր ամենայնի

որովք ձեռն արկ զրկել զձեզ եւ որովք ինձն վնաս գործեաց. եւ ես միւսանգամ տայցեմք վրէժս զի ձեզ բարեկամն եղէ։

Յետ նոցա ամենեցուն ասէ Կիւրոս. Ով արք, եւ յինէն չէ ծածկեալ թէ յորժամ զզօրսն արձակիցեմք, մերքն տկարագոյնք լինիցին, եւ հակառակորդքն միւսանգամ մեծանայցեն։ Զի զէնք եթէ բարձան ի նոցանէ, այլ զէնս գործիցեն. թէպէտ յերիւարաց զրկեցան, վաղվաղակի դարձեալ այլ երիւարս ստանայցեն։ Եւ փոխանակ ընդ մեռելոցն այլք ի չափ հասանիցեն եւ մի ըստ միոջէ ծնանիցին։ Որպէս զի չեն ինչ զարմանք եթէ արագ արագ միւսանգամ մեզ աշխատութիւն մարթիցեն հասուցանել։

Զի՞մ ես հրաման ետու Կիպքսարայ խօսս արկանել վասն արձակելոյ զօրուն, զի երկրնչիմ իմն յայնմանէ որ գալոցն իցէ։ Զանգի տեսանեմ զախոյանսն մօտ եկեալ հասեալ, ընդ որոց մեք եթէ այնպէս ի դիմի հարկանիցիմք, չկարիցեմք կռուել. զի ձմեռն հասանէ, թէպէտ եւ յարկք են մեր, այլ ոչ երիվարացն եւ ոչ սպասաւորացն եւ ոչ խառնիճաղանճ բազմութեան զօրականացն։ Զանց նոցա մեք չկարեմք երթալ ի մարտ պատերազմի. եւ համբարք սպառեցան ուր ուրեք լու-

ծաք։ Իսկ ուր ոչն հասաք, վասն ի մէնջ երկրնչելոյ, պնդեալ պաշարեալ կան յամուրսն, որպէս զի նոքա ունել ունին, բայց մեք չկարեմք առնուլ։ Արդ ո՞ք այնպէս սաստիկ իցէ որ ընդ քաղց եւ ընդ ցուրտ կարիցէ կռուել եւ երթալ ի պատերազմ։

Արդ եթէ այսպէս երթայցեմք ի պատերազմ, ես ասեմ թէ պարտ է կամաւ իսկ մանաւանդ արձակել ըզ-զօրսն, քան յակամայ կամս յանհնար հնարից քակել։ Այլ եթէ կամիցիմք տակաւին տալ պատերազմ, ես ասեմ թէ եւ զայս ինչ եւս պարտ իցէ առնել, փուրթալ վաղվաղակի իսկ զբա-զումս յամուր ամուր վայրաց նոցա թա-փել ի նոցանէ, եւ մեզ բազում ա-մուրս գործել։ Զի եթէ այն լինիցի, զհամբարսն յաճախագոյնս ունիցին, որք յոլովագոյնն կարիցեն առնուլ եւ մթերել եւ յարդել արկեալ պաշարես-ցին որ նուազագոյնն ունիցին։ Բայց այժմ չեմք ինչ ընդհատ յայնցանէ որ ի համատարած ծովուն նաւարկիցեն. քանզի եւ նոքա նաւարկեն միշտ, այլ ոչ ընդ որ նաւեսցեն թողուն ինչ անձանց, քան ընդ որ չիցեն նաւեալ։ Այլ ե-թէ պահակք լինիցին մեր, նոքին հա-նիցեն զերկիր թշնամեացն, եւ ամե-նայն ինչ մեր ի խաղաղութեան իցէ։

Բայց թերեւս ոմանք ի ձէնջ երկընչեցին, թէ հեռագոյն ի ձերոց աշխարհացն հասանիցէ պահ դնել, մի ինչ ընդ այն տատամսիցիք։ Զի մեք թէպէտ եւ յաշխարհէ ի տար աշխարհ եկեալ իցեմք, յանձն առնուցումք զերկիրս մօտաւորս թշնամեացն պահել։ Իսկ դուք զսահմանս Ասորեստանեաց աշխարհին որ մօտ ձեզ իցեն, զնոսա ստացարուք եւ ի գործ արկէք։ Զի եթէ մեք զմօտաւոր վայրսն նոցա կարիցեմք պահել եւ ապրեցուցանել, ի բազում խաղաղութեան, դուք որ ըզվայրսն զհեռաւորս ունիցիք, կեցցէք։ Վասնզի ոչ եթէ մարթիցեն զիւրեանց մօտաւորսն չարեաց անփոյթ արարեալ, ձեզ հեռաւորացդ նենգել։

Իբրեւ այս ամենայն ճառեցաւ, ամենեքին յարուցեալ միաբան յօժարութեամբ յանձին կալան. յանձն առ եւ Կիաքսարէս։ Եւ Գադատաս եւ Գոբրիաս երկոքին զպարիսպսն իւրեանց, եթէ հրաման տայցեն պատերազմակիցքն, յանձն առին ամրացուցանել, որպէս զի եւ նոքին խաղաղութեան երկիր նիզակակից ընկերացն լինիցին։ Պիւրոս իբրեւ եառեալ զամենեսեան յօժարեալս առնել զոր ինչ ասացն, ասէ. Արդ եթէ կամիցիմք ի գլուխ հանել զոր ինչ միանգամ ասացաք եթէ պարտ իսկ է առնել, հարկ է վաղվաղակի մեն-

քենայս պատրաստել առ ի քակել զհակառակորդացն պարիսպն, եւ որ-
մաշէն գաղատոսս առ ի կազմելոյ մեզ աշտարակս ամուրս։ Ապա խոստանայր
Կիաքսարէս թէ ինքն տացէ գործել մենքենայս, եւ Դադատաս եւ Դոբրիաս
խոստացան եւ Տիգրանէս եւս. ինքն իսկ Կիւրոս յանձն առ փութալ այլ եւս
մենքենայս կազմել։ Իբրեւ այն վճա-
րեցաւ մենքենագործս խնդրէին, եւ
պատրաստէին իւրաքանչիւր առ մեն-
քենայսն որ ինչ պիտոյն էր. եւ կացու-
ցին եւս արս ի նոյն բաւականքս։

Կիւրոս իբրեւ գիտաց եթէ կայ դե-
գերել ի նոսա, կարգէր կացուցանէր
զզօրսն ուր առաջագոյնն թուէր եւ դիւ-
րին էր կրել անդր որ ինչ պիտոյն էր
կրելոյ. եւ որ ինչ ամրութեան կարօտ
էր, այնպէս յարդարէր զի միշտ իսկ ի
զգուշութեան կայցեն, թէպէտ եւ հե-
ռացեալ եւս երբեմն ի զօրութենէ անտի
բանակին էին։ Հանդերձ նոքիմբք
հարցանէր եւս զայնոսիկ զորոց գիտէր
թէ վայրացն հմուտ են, եթէ ուստի՞
աւելագոյն շահս զօրքն շահիցին, եւ
միշտ իսկ ի ճարակս հանէր, զի յաճա-
խագոյն առնուցու զհամբարս բանակին,
զի առաւել առողջագոյնք լինիցին եւ
ուժգնագոյնք վաստակեալք ի ճանա-
պարհաց անտի եւ զի ի տանել զկարգսն
մի մոռացին։

Կիւրոս զայնու էր. իսկ ի Բաբիղա-
ցւոց աշխարհէն որոց անձամբ զանձինս
վտարանդի տուեալ էր եւ ըմբռնեալ,
զայս ինչ զրոյց տային եթէ ասորես-
տանեայն ի Ղիւդացւոց աշխարհն չո-
գաւ, բազում տաղանտս արծաթոյ եւ
ոսկւոյ տարեալ եւ այլ եւս ստացուածս
եւ սպասս ազգիազգիս։ Արդ ամբոխ
զօրացն կարծէր եթէ երկուցեալ զինչսն
ի պահ անդէն դնիցէ. բայց Կիւրոս գի-
տաց եթէ գնաց գումարել հակառա-
կորդս եթէ կարիցէ ինչ, պատրաստէր
զանձն սաստկագոյնս, զի տակաւին
մարտնչել իսկ հասանէր, եւ ընդոյր զՊար-
սից այրուձին. առնոյր եւ ի գերւոյն եւ
զոմանս ի բարեկամացն հեծեալս։
Պանդի յամենեցունց ընդունէր եւ մեր-
ժէր ինչ ոչ եթէ զէն ոք գեղեցիկ տայր
եթէ երիւար։

Պազմէր եւ կառս ի գերեացն կառաց
այլուստ ուստէք ուստի կարէրն, եւ զա-
ռաջին զտրովացի կառսն եւ զԿիւրենա-
ցւոց կառսն որ ցայժմ կան, բարձ ի մի-
ջոյ. զի զառաջին ժամանակն որ ի Մա-
րաց եւ Ասորւոց եւ Արաբացւոց աշ-
խարհին եւ ամենեքին իսկ որ ի կողմանս
Ասիացւոց էին այնպիսի կառս արկանէին
ի կիր, որպէս այժմ Կիւրենացիքն։
Զմտաւ ածթէ ընտիր ընտիր զօրացն,
յորժամ աղնուազոյնք ի կառսն իցեն,
յաղեղնաւորաց կարգի իցէ եւ ոչ մեծ

ինչ նպաստ ի յաղթութիւնն լինիցի։ Զի երեքարեւր կառք երեքհարեւր մարտիկ պատերազմօղս մատուցանեն, եւ նոքին հազար եւ երկերիւր երիվարս վարեն, եւ երեքհարեւր կառավարք են նոցա, որպէս ի դէպ իցէ, յորս առաել յուսան քաջքն. բայց նոքա ոչ մի ինչ ամենեւին կարեն հակառակորդացն մեղանչել։

Արդ զայն կառս եբարձ ի միջոյ, եւ փոխանակ նոցա պատերազմի կառս կազմեաց հաստ անուովք, զի մի դիւրաւ խորտակեսցի եւ երկայն ծայրիւք զի մի ամենայն լայնութիւնն կործանեսցի, եւ աթոռ վանդակակապ կառավարացն գործէր իբրեւ զաշտարակ ի հաստաբեստ փայտից, եւ բարձրաբերձ բարձրութիւն նոցա մինչեւ ցդիրկս կառավարին, զի կարիցեն զոանձացն ունել զերիւարացն ի վերոյ աթոռոցն, եւ զկառավարսն ամենեւին զրահապատ պատենազէն զարդարէր, բայց միայն յաչացն. դներ եւ զերանդիս երկաթիս առ անուոցն յաջմէ եւ յահեկէ անուոցն, եւ այլ եւս զերանդիս ի խոնարհ ի ներքոյ անուոցն որ ի գետին հայիցին զի մխեսցին ի հակառակորդս կառացն։ Որպէս զայդ ամենայն կազմեաց պատրաստեաց յայնժամ Կիւրոս, եւ բստանմին օրինակի մինչեւ ցայժմ վարեն զկառսն որ յերկրի Թագաւորին իցեն։ Զին նորա եւ ուղղք

բազումք առ ի բարեկամաց ժողովեալ
եւ ի գերուԹենէ անտի։

Այս այսպէս վճարէր։ Բայց իբրեւ
կամէր առաքել զոմն գէտ ի Ղիւդաստան
եւ ուսանել Թէ զինչ գործիցէ ասորեա-
տանեայն, պատեհ Թուեցաւ նմա Ա-
բասպայ երԹալ, այն որ զկինն գեղեցիկ
պահէր. քանզի այս անդք անցին ընդ
Աբասպաս։ Ամբոնեալ կնոջն տենչա-
նօք հարկ համարեցաւ արկանել խօսս
ընդ նմա վասն լինելոյ ընդ նմա, եւ նա
չառնոյր յանձն, քանզի հաւատարիմ
առն իւրում Թէպէտ եւ հեռի եւս էր,
քանզի սաստիկ սիրէր զնա, բայց չլի-
նէր ամբաստան զԱբասպայ առաջի Կիւ-
րոսի, քանզի չկամէր զարս բարեկամն
ընդ միմեանս արկանել։ Իսկ Աբասպէս
իբրեւ կամեցաւ սպաս առնել հասանել
այնմ զոր խորհէրն, սպառնացաւ կնոջն,
Եթէ ոչ կամիցի իւրով կամաւ, ակամայ
զնոյն առնիցէ։ Յայնմ հետէ կինն քան-
զի երկեաւ ի բռնութենէ անտի, ոչ
Թագոյց այնուհետեւ, այլ առաքէ զներ-
քինին առ Կիւրոս, եւ հրաման տայ պա-
տմել զամենայն։

Նա իբրեւ լուաւ, ծիծաղեալ ի վերայ
նորա զի վերագոյն քան զցանկութիւն
լինել ասէր, առաքէ զԱբատաւազ ընդ
ներքինւոյն, եւ հրամայէ ասել նմա մի
բռնազբօսել զայնպիսի կին, իսկ հաւա-
նեցուցանել Եթէ կարիցէ, ոչ արդե-

լում ասէ։ Երթեալ Աբրահամայ առ Աբասպաս, թշնամանս դնէր նմա, անուանէր աւանդ զկինն եւ ասէր զամպարշտութիւն նորա, զապիրատութիւնն եւ զանխառնութիւնն, մինչ շատ արտասուել Աբասպայ առ տրտմութեանն եւ յամօթոյն կորանալ եւ յահէն տագնապել մի գուցէ եւ ի Կիւրոսէ կրիցէ ինչ։

Զայս իմացեալ Կիւրոսի, կոչեաց զնա եւ միայն ընդ միայն խօսէր. Տեսանեմ զքեզ, ասէ, ով Աբասպա, յինէն երկուցեալ եւ ամօթով տագնապեալ. արդ դադարեա յայնմ ամենայնէ։ Քանզի եւ զդից լսեմ ի ցանկութենէ ի պարտութիւն մատնեալ, գիտեմ եւ զմարդիկ որ առաւել հանճարեղքն թուէին այնպիսի ինչ կրեալ ի տենչանաց։ Բայց այդր գործոյ պատճառք ես իսկ եմ, զի փակեցի զքեզ ընդ այնպիսի իրաց ընդ որում չմարթի կռուել։ Եւ Աբասպաս ասէ. Դու ով Կիւրէ, զայդ այսպէս գործես որպէս եւ զայլ եւս բազում ինչ իրս, քանզի զգօն եւ հանդարտ ես եւ ներող եւ արդահատող մարդկօրէն յանցանաց։ Բայց զիս, ասէ, այլ մարդիկ տրտմութեամբ նեղեն, քանզի սփռեցաւ շշունջ վշտաց իմոց, թշնամիք ուրախ լինին ի վերայ իմ, եւ բարեկամք մատուցեալ խրատ տան մերժել զանձն եւ հեռանալ, զի

մի ինչ կրիցեմ ի քէն զի զրկեցիս զքեզ։

Կիւրոս ասէ. Գիտասջիր դու ով Արասպա, եթէ դովին կարծեօք մարթես դու ինձ մեծ ինչ շնորհս առնել, եւ նիզակակցաց յաճախագոյն օգուտ։ Ասէ Արասպաս. Ցիւ եթէ ի դէպ ժամու լինիցիմ քեզ պիտանացու։ Արդ եթէ կերպարանեալ, ասէ, որպէս թէ հատուած գնալ կամիցիս յինէն երթայցես առ թշնամիսն, թուի ինձ թէ հաւատարիմ երեւիցիս դու թշնամեացն։ Ասէ Արասպաս, Գիտեմ, թէ եւ ի բարեկամաց տարածանիցի համբաւն, թէ փախստեայ գնամ ի քէն։ Ապա եկեսցես, ասէ, առ մեզ զամենայն ինչ տեսեալ զթշնամեացն։ Թուի ինձ թէ բանից եւ խորհրդոց հաղորդ առնիցեն զքեզ վասն համարելոյ զքեզ. մինչեւ ոչ մի ինչ ծածկեսցի ի քէն յորոց կամիցիմք գիտել։ Արդ այժմիկ իսկ, ասէ, յուզի անկեալ երթայց. քանզի եւ այս մի ինչ նշանակ հաւատարիմ լինելոյ է, կարծեցուցանելն թէ ես ինչ կրելոց էի ի քէն եւ ի բաց փախեայ։

Որիթէ կարիցէս, ասէ, թողուլ զգեղեցիկ Պանթիայն։ Հաստատութեամբ, ասէ, ով Կիւրոս երկուս ոգիս ունիմ. այժմիկ իսկ զայսմանէ ճարտարմտեցի յետ անիրաւ իմաստութեան ցանկութեանն, զի ոչ եթէ մին մերթ բարի

իցէ եւ մերթ չար, եւ ոչ լաւութեան եւ յոռութեան գործոց միանգամայն ցանկանայցէ. եւ զնոյնս կամիցի եւ չկամիցի գործել. ապա յայտ ուրեմն է եթէ երկու ոգիք են, եւ յորժամ առատ ոգին գլէ, լաւութեան գործք գործին, իսկ յորժամ յոռին յաղթիցէ ծանականաց իրք վճարին: Դ. այժմ քանզի զքեզ զօրաւիդն օգնականութեան առ, լաւն առաւել իշխէ:

Ասէ Կիւրոս. Այսուհետեւ եթէ հաճոյ թուեսցի քեզ երթալ, այսպէս պարտ է առնել, զի եւ նոցա հաւատարիմ լինիցիս. պատմեա նոցա որ ինչ առ մեզ իցէ, եւ այնպէս պատմեսջիր, զի որ ինչ առ ի քէն ասիցի, առաւել արգել եւ խափան լինիցի այնմ, զոր գործելն կամիցի. եւ լինիցի խափան, եթէ ասիցես թէ պատրաստ լինիմք յարձակել ուրեք ի վայրաց նոցա: Զի յորժամ զայն լսիցեն, եւ ոչ զբնաւին իսկ զզօրութիւնն գումարեսցեն, իւրաքանչիւր ուրուք երկուցեալ վասն ընտանեացն: Դ. մնա, ասէ, առ նոսա բազում ժամանակս զի զինչ առնեսն յորժամ մնա առ մեզ հասանիցեն, զայն իսկ մանաւանդ դիպող է մեզ գիտել. եւ խրատ եւս տուր նոցա ճակատ յարդարել ուր ազնուագոյնն թուիցի: Զի յորժամ դու մեկնիցիս, թէպէտ եւ գիտիցես դու զկարգս նոցա, հարկ

է այնպէս իսկ ճակատել նոցա. քան-
զի ոչ կամիցին զճակատսն փոփոխել,
եւ եթէ յայլ ինչ ճակատ փոխիցեն,
վաղվաղակի իսկ աղմկիցին։

Արասպայ այնպէս երթեալ, ա-
ռեալ ընդ իւր զծառայսն հաւատարիմս
եւ պատմեալ ոմանց զոր ինչ օգուտ ի-
րացն կարծէր, գնայր։ Իսկ Պանթիայ
իբրեւ ազդ եղեւ եթէ Արասպաս գնաց,
առաքեաց առ Կիւրոս, ասէր. Մի տըր-
տմիր ով Կիւրոս եթէ Արասպաս առ
թշնամիս երթայ։ Զի թոյլ տայցես
ինձ առաքել առ այրն իմ, յանձն առ-
նում քեզ թէ եկեսցէ առ քեզ եւ
քան զԱրասպաս հաւատարիմ բարե-
կամ իցէ, եւ զօրս որչափ մարթիցի
առնուլ եւ գալ առ քեզ։ Զանգի եւ
հայր այժմու թագաւորին բարեկամ էր
նորա. եւ որ այժմ թագաւորեաց,
ձեռն արկ երբեմն զհս եւ զայրն իմ ի
միմեանց քակել։ Արդ քանզի գնա
թշնամանիչ համարի, գիտեմ եթէ յօ-
ժարութեամբ առ այր մի որպիսի ոք
դու իցես, անկեալ զերծանիցի։

Զայս լուեալ Կիւրոսի հրամայէ ա-
ռաքել առ այրն. եւ նա առաքեաց։
Իբրեւ գիտաց Աբրադատէս զառ ի կնո-
ջէն նշանակն, եւ զայլոց եւս իրաց
լուաւ, անդէն գայր առ Կիւրոս, առ-
եալ երիւարս իբրեւ երկու հազար։ Իսկ
իբրեւ եհաս ի Պարսից դէտսն, առաքէ

առ Կիւրոս ասել թէ ո ոք իցէ։ Եւ Կիւրոս իսկ եւ իսկ հրաման տայ ածել զնա առ կինն։ Յորժամ տեսին զմիմեանս կինն եւ Աբրադատէս, ողջոյն եառուն միմեանց որպէս ի դէպէր։ Ապա պատմէ Պանթիա զԿիւրոսի սրբութիւնն եւ զզգաստութիւնն, եւ զառնախնամն։ Իսկ Աբրադատայ լուեալ ասէ. Եւ արդ զի՞նչ առնիցեմ, ով Պանթիա, զի ընդ քո եւ ընդ իմ հատուցանիցեմ Կիւրոսի շնորհս։ Զինչ այլ ինչ, ասէ, բայց զի ջանայցես փութով յօժարութեամբ այնպիսի ոք առ նա գտանել, որպիսի ոք նա առ քեզ գտաւ։

Ապա երթայ առ Կիւրոս Աբրադատէս, եւ իբրեւ ետես նա զնա, բուռն հարեալ զաջոյ նորա ասէր. Ընդ բարեացն զոր արարեր մեզ ով Կիւրոս, զինչ ասիցեմ մեծ եւս ինչ, բայց զի բարեկամ տամ քեզ զանձն իմ եւ պաշտօնեայ եւ նիզակակից. եւ յոր ինչ տեսանիցեմ զքեզ փութացեալ, բարեգործակից լինել ջանայցեմ։ Եւ Կիւրոս ասէ. Եւ ես ընդունիմ, եւ թողում զքեզ, ասէ, ընթրել այժմ ընդ կնոջդ։ Եւ անդէն առ իս պարտ է քեզ բնակել ընդ քոց եւ իմոց բարեկամաց։

Յետ այնորիկ տեսեալ Աբրադատայ զԿիւրոս աշխատ լեալ վասն գերանդաղէն կառացն, եւ վասն զբահապատ

երիւարացն եւ հեծելոց, ջանայր հաբեւր կառս յիւրոց հեծելոցն հանգոյնս նմին ի գլուխ հանել. եւ ինքն կազմ եւ պատրաստ լինէր առաջնորդ լինել նոցա. եւ լծէր զիւր կառսն ի չորից սամեաց եւ յուլթ ձիոց։ Իսկ Պանթիա կին նորա յիւրոց ընչից գործէր նմա զբահս ոսկեզօծս եւ սաղաւարտ ոսկի. նոյնպէս բազկաց արկանելիս. եւ զերիւարս կառացն ամենեւին պղնձի արկանելեաք կազմէր։

Աբրադատէս զայս ինչ գործէր։ Իսկ Կիւրոսի տեսեալ զչորից սամեաց կառսն ի միտ առ եթէ մարթի եւ յուլթից սամեաց գործել, որպէս զի ուլթ լծովք երընջոց տանել զներքին շինուածն մենքենայիցն։ Եւ էր այն երեքուղկեան յերկրէ անուով ք հանդերձ. զի այնպիսի աշտարակք յորժամ երթայցեն կարգաւ մեծ իմն օգնականութիւն իւրում ճակատուն թուիցին լինել, եւ առաւել վնաս գնդի թշնամեացն։ Աբրար եւ ի վերայ շինուածոց ճեմելիս եւ մահարձանս կազմեալ յօրինէր եւ ի վերայ իւրաքանչիւր աշտարակացն քսան քսան սպառազէնս կացուցանէր։

Իբրեւ ամենայն կարգէր եւ յարդարէր որ վասն աշտարակացն ինչ էր, զչափ առնոյր զվարելոյն. եւ յոյժ իսկ դիւրագոյն տանէին ուլթ լուծքն զաշտարակն եւ զարան որ ի վերայ աշտարակին

էին քան զբեռնաբարձ լուծս կառացն քանզի դոյր լծոյն կշիռ իբրեւ քսան եւ հինգ քանքար. իսկ աշտարակին, քանզի իբրեւ վրանի թանձրութիւն էր փայտիցն. եւ քսան քսան վառեալ սպառազէն եւ քսան քսան զէնք էին, նոքիմբք լինէր պակաս քան զհնգետասան տաղանդ հասանել տանել իւրաքանչիւր լծոյ։ Իբրեւ գիտաց թէ դիւրին իցէ վարելս, պատրաստ լինէր զի զաշտարական զօրօքն հանդերձ տարցի, զմտաւ ածեալ թէ ի պատերազմի առաւելութիւն լինիցի եւ փրկութիւն եւ աջողութիւն։

ԳԼՈՒԽ Բ

ՅԱՑՆՍ ժամանակի եկին եւ ի Ընդկաց որ զգանձսն բերէին, եւ պատմէին նմա եթէ զայս ինչ պատուիրեաց Ընդկաց արքայն։ Դս, Կիւրոս, ուրախ եմ զի պատմես դու ինձ որովք կարօտ իցես. եւ կամիմ քո իսկ հեւր լինել, եւ առաքեմ ես քեզ գանձս, եւ եթէ այլ եւս պիտոյ լինիցի, առաքեա. զի հրամայեալ է իմոցն առնել զոր ինչ դուն հրամայեսցես։

Կիւրոսի լուեալ ասէ. Ընդման տամ ձեզ, ասէ, զի որք մնալոց իցէք, ասէն բնակեցարուք պահել զկարասին, եւ կեալ որպէս զիարդ ձեզ հաճոյ թը-

ւիցի. եւ երէք ի ձէնջ երթեալ առ հա-
կառակորդսն իբրեւ ի Ընդկաց թա-
գաւորէ վասն թիկանց օգնականու-
թեան, եւ ի միտ առեալ որ ինչ անդն
իցէ, զոր ինչ խօսինն եւ գործեն, վաղ-
վաղակի զբոյց տուք ինձ եւ արքային
Ընդկաց. եւ եթէ զայդ սպասաւո-
րութիւն քաջ հարկանիցէք ինձ, ա-
ռաւել եւս վասն նորին շնորհակալ ե-
ղէց ձեզ, քան եթէ զի եկայք բերէք
ինձ գանձս: Օ՛ի դէտք ծառայից նմանք
ոչ ինչ այլ ինչ մարթեն գիտել եւ պատ-
մել, բայց զոր ամենեքինն գիտեն: Բայց
այսպիսի արք, որպիսիք ոք դուք իցէք,
բազում անգամ եւ զխորհուրդս առնու-
ցուն ի միտ:

Իսկ Ընդկաց, քաղցրութեամբ լը-
ւեալ եւ հիւրացեալ յայնժամ առ Կիւ-
րոսի, ի վաղիւ անդր կազմեալ պա-
տրաստեալ յուղի անկանէին, եւ խոս-
տանային եթէ բազում ինչ ուսեալ ի
թշնամեացն, որչափ հնար իցէ, ե-
կեսցեն վաղվաղակի: Կիւրոս մեծավայ-
ելուչ զճակատն պատրաստէր, քան-
զի ոչ ինչ փոքր ինչ կամէր վճարել այրն:
Եւ ոչ եթէ զայն եւեթ որ Նիզակա-
կցացն հաճոյ թուէր, հոգայր, այլ եւ
զմիմեամբք զբարեկամն արկանէր, զի
իւրաքանչիւր քաջ վառեալ եւ հե-
ծեալ երեւիցին, եւ արագունք յաղեղն
եւ ինեան եւ աշխատասէր միտս ունիցին:

Այս ամենայն յարդարէր յորս հանեալ, եւ զառաքինիսն մեծարեալ պատուով։ Տեսանէր եւ զիշխանսն զի վասն նորին հոգ ի մտի ունէին, թէ զիարդ քաջք զօրականքն լինիցին, եւ զնոսա գովելով դրդռէր, եւ շնորհս եւս առնելով նոցա զոր ինչ միանգամ կարէրն։ Եթէ երբեմն զոհս մատուցանէր եւ տօն կատարէր, եւ ի նմին տօնի որ ինչ վասն պատերազմի հանդէս առնիցեն մարդիկ, այնր ամենայնի մրցութեան հրահանգս առնէր, եւ պարգեւս որոց յաղթիցեն բաշխէր, եւ բազում ուրախութիւն էր ի բանակի անդ։

Զրեթէ ամենայն ինչ եւ ի գլուխ, զոր կամէրն Կիւրոս ունել եւ երթալ ի պատերազմ բայց ի մենքենայիցն. քանզի Պարսից հեծեալքն բեւրք եղեն, եւ կառքն գերանդազէնք, զոր ինքն կազմէր, հարեւր կառք բովանդակեցան, եւ զորս Աբրադատէս շաւշացի ձեռն ի գործ արկ կազմել հանգոյնն Կիւրոսի, եւ նոքին բովանդակեցան այլ եւս հարեւր։ Եւ հաճեաց Կիւրոս զԿիաքսարէս՝ զմարական կառն ի նոյն օրինակ փոփոխել ի տրովացի եւ ի զիբէացի կառաց. զումարեցան եւ նոքա միանգամայն այլ եւս հարեւր։ Եւ ի վերայ ուղտուցն կարգեալ կային երկու երկու աղեղնաւորք առ մի մի ուղտ։

Մեծ մասն զօրացն այնպիսի ինչ միտս ունէր, որպէս թէ բնաւ յաղթեցին իսկ. եւ համարէին թէ որ ինչ թշնամեացն իցէ, այն ոչ ինչ է։

Մինչ դեռ այնպիսի միտսն ունէին, եկին հասին Ընդիկք ի թշնամեաց անտի զոր առաքեալ էր Կիւրոսի լրտեսել, եւ պատմէին եթէ Կրիւսոս սպարապետ եւ ամենեցուն զօրավար ընտրեցաւ ի թշնամեացն, եւ հրաման տուաւ ամենայն նիզակակից թագաւորաց համօրէն զօրօք միանգամայն գալ հասանել, եւ գանձս բազումս ընդ իւրեանս բերել, եւ զայն կշռել, առ վարձելոյ զոր կարօղ իցեն վարձել, եւ պարգեւս որոց պարտ իցէ բաշխել, եւ վարձել զբազումս ի Թրակացւոց սուսերաւորաց, եւ Եգիպտացւոց նաւարկել գալ. զԹիւ համարոյն ասէին երկոտասան բեւր լեալ ասպար ի ձեռն եւ յաղթ տիգօք եւ գեղարդեամբք զոր եւ ցայժմ ունին, եւ սուսերով. նաւարկել եւ Կիպրացւոց զօրուն եւ հասանել ամենայն Կիլիկեցւոց եւ Փռիւգացւոց եւ Ղիկայոնացւոց եւ Պափղագոնացւոց եւ Գամրաց եւ Արաբացւոց եւ Փիւնիկեցւոց եւ ընդ իշխանի Բաբիղացւոց աշխարհին, Ասորեստանեացն եւ Յոնիացւոց եւ Եւողացւոց եւ զրեթէ ամենեցուն իսկ Յունաց ասիացւոց հարկել զհետ երթալ Կրիւսոսի. եւ առա-

քել Կրիւսոսի ի Ղակեդեմոն վասն թիկանց օգնականութեան. եւ զոր գումարել զՊակտողոն գետով, եւ հանդերձել կանխագոյն երթալ նոցա ի Թիւբաւա, եւ արդ եւս ժողով բարբարոսացն ատորին Ասորւոց, որ ընդ թագաւորաւն իցեն, անդ է. եւ ամենեցուն պատմել թէ զվաճառսն անդր բերիցեն։ Եւ գրեթէ զնոյն պատմէին եւ գերեալքն. քանզի փոյթ ի մտի ունէր Կիւրոս զի ըմբռնեսցին ոմանք յորոց իմասցի ինչ. առաքէր եւ դէտս հանգոյն ծառայից իբրեւ վտարանդիս։

Արդ իբրեւ լուաւ զայս ամենայն բանակն Կիւրոսի, ամենայն ոք ի հոգս էր, որպէս ի դէպ էր իսկ, հանդարտագոյնք լռեալ երեւէին որպէս չէին սովոր. եւ բազումք բնաւ իսկ չերեւէին զուարթունք, բակ առեալ ժողովէին, եւ լի էր ամենայն այնոքիւք որ զմիմեանս վասն նոցին հարցանէին եւ խօսէին ընդ միմեանս։ Իբրեւ ազդ լինէր Կիւրոսի եթէ ահ մածեաւ զզօրքն, ի մի վայր կոչէր զիշխանս զօրացն, եւ զամենեսին որոց ի վհատելն համարէր թէ ինչս ինչ գործիցի, եւ ի յօժարելն օգուտ։ Յառաջագոյն պատուիրէր եւ սպասաւորացն թէ յորժամ այլ ոք ի վառելոցն մատուցեալ կամիցի ունկն դնել բանիցն, մի արգելուլ։ Իբրեւ ի մի վայր եկին, խօսէր այսպէս։

Ընդ նիզակակիցք, ես կոչեցի զձեզ, զի տեսի զոմանս ի ձէնջ, յորժամ զբոյցք հասին ի թշնամեաց անտի, ամենեւին հանգոյնս զարհուրելոց մարդկան։ Զի ինձ զարմանք իսկ թուին եթէ ոք ի ձէնջ, քանզի զհակառակորդաց ասեն թէ գումարին, զանդիտիցէ. զի այժմ մեք յաճախագոյն գումարեալ եմք, քան ի ժամանակի զի յաղթեցաք մեք նոցա, եւ եւս աղնուագոյն ընդ աստուածոց այժմիկ կազմեցաք, քան յառաջնում նուագին. զայս տեսեալ ոչ խրախուսիցէք։ Զի՞նչ ինչ գործիցէք, որ այժմիկ իսկ զարհուրեալ էք, եթէ պատմիցեն ոմանք որ ինչ առ մեզս իցէ։ Դու նախ իսկ լուարուք, ասէ, զի որ յառաջագոյնն յաղթեցին մեզ, նոքին միւսանգամ գան, եւ ունին ի մտի զյաղթութիւնն զոր երբեմն յաղթեցին. եւ ապա որք քակեցինն զյարձակումն աղեղնաւորացն եւ տիգաւորացն, նոքին այժմ գան, եւ այլք եւս բազումք նոցին նմանք. եւ ապա զոր օրինակ նոքա վառեալք յաղթեցին յայնժամ հետեւակաց, նոյնպէս եւ այժմ հեծեալք նոցա պատրաստեալք մատչին առ հեծեալս, եւ զաղեղունսն եւ զտէգսն զայն ի բաց ընկեցին, եւ զհզօր ասպարսն առեալ իւրաքանչիւր ոք ի նոցանէ խորհի գալ հասանել, զի ի մօտոյ տացէ պատե-

բաղմ։ Եւ կառք եւս արշաւիցին, որ ոչ այնպէս կացցեն ետեղակալ զոր օրինակ յառաջն իբրեւ ի փախուստ դարձեալ, այլ երիւարք որ ի կառսն լծեալ իցեն, զրահապատք իցեն, եւ կառավարք ի վանդակակապ մարտկոցսն ի վերայ աշտարակացն կայցեն, եւ բնաւ վերին կողմն զրահապատ պատենազէն սաղաւարտեալ, եւ գերանդիս երկաթիս աղեսեալ ընդ անիւսն, զի եւ նոքին իսկ եւ իսկ դիմեսցեն ի գունդս թշնամեացն։ Ուղղք եւս են նոցա, յորոց զմին հարեւր ձիք չհանդարտիցեն տեսանել։ Եւ աշտարակօք հասանիցեն, յորոց իւրեանց զօրացն օգնականք լինիցին եւ զձեզ ձգեալ արգելուցուն կռուել ի հարթ յողորկ վայրի։

Եթէ զայդ ամենայն պատմեր ոք ձեզ զթշնամեացն, որ այժմդ երկուցեալ էք, զի՞նչ գործէիք։ Յորժամ պատմեցին ձեզ եթէ Կրիւսոս ի թշնամեաց զօրավար ընտրեցաւ, որ այնչափ ապաժամանն քան զԱսորիսն գտաւ, զի Ասորիք յորժամ ի կռուի ի պարտութիւն մատնեալ փախստեայ ելանէին, Կրիւսոսի տեսեալ զպարտեալսն, փոխանակ ձեռնտու նիզակակցացն լինելոյ փախստեայ գնայր։ Եւ յետ այսորիկ պատմի թէ հակառակորդքն չհամարին բաւական լինել մեզ կռուելոյ, եւ զայլս վարձին որպէս թէ քաջ պա-

տերազմիցին նոքա փոխանակ նոցա, քան եթէ ինքեանք։ Այլ եթէ ոմանց այսպիսի ինչ ամենայն ահագին թուի-ցի, եւ մերքն խարխուլք, ասեմ թէ պարտ է զնոսա, ով արք, արձակել ի թշնամի անդր։ Վասնզի եթէ անդ իցեն յոյժ իսկ առաւել օգուտ մեզ ի-ցեն քան յորժամ մօտն կայցեն։

Իբրեւ զայս խօսեցաւ Կիւրոս, յոտն եկաց Արիւսանտաս պարսիկ եւ խօսէր այսպէս. Ո Կիւրոս, մի ինչ զարմանար եթէ ոմանք տրտմեցան լուեալ զզրոյց-սն։ Վասնզի ոչ եթէ որ երկընչինն այնպէս կացցեն, այլ որ ծանրացեալ նեղիցին։ Զոր օրինակ, ասէ, եթէ իցեն ոմանք որ կամիցին եւ ուտիցեն ճաշ, եւ պատմեսցի գործ ինչ զոր յա-ռաջ իսկ քան զճաշն հարկ իցէ գոր-ծել, ինձ թուի թէ ոչ ոք զուարճա-նայցէ յորժամ զայն լսիցէ։ Նոյնպէս եւ մեք այսուհետեւ համարեալ թէ մեծանալոց իցեմք, իբրեւ լուաք թէ է եւ այլ ինչ գործ, զոր պարտ իցէ վճարել, միանգամայն տրտմեցաք, իբր ոչ եթէ զի երկեաք իսկ, այլ զգործն կամիմք գործել. զի ոչ եթէ վասն Ա-սորեստանի եւեթ կռուիցիմք, ուր բա-զում ցորեան է եւ արջառ եւ արմաւե-նիք մրգաբերք, այլ եւ վասն Ղիւդա-ցւոց աշխարհին. անդ է բազում գինի եւ թուզ յաճախ եւ շատ ձիթապտուղ,

եւ ծով գնովաւ պատի, ընդ որ բաղում գան բարուքիւնք զոր ուրուք չէք տեսեալ։ Այդ ամենայն, ասէ, զմտաւ ածեալ, մի ինչ այսուհետեւ նեղեցիմք, այլ առաւել եւս խրախուսիցեմք, զի վաղ ի նոսին իսկ ի Ղիւդացւոց բարուքիւնսն վայելիցեմք։

Եւ զայս ասէր. եւ ամենայն նիզակակիցքն ուրախ եղեն, եւ յանձին կալան զամենայն զբանսն։ Ասէ Կիւրոս. Ով արք, ինձ այսպէս հաճոյ թուի, վաղվաղակի իսկ երթալ ի վերայ նոցա, զի նախ աճապարեսցուք քան զնոսա հասանել, եթէ կարիցեմք, ուր եւ ժողովեսցին համբաւք նոցա։ Յետ այնորիկ որչափ թէ վաղ երթայցեմք, դոյնչափ սակաւ ինչ գտանիցեմք մօտ առ նոսա, եւ բազում ինչ հեռի ի նոցանէ։ Եւ այսպէս ասեմ. ապա թէ այլազգ ինչ ոք խորհեսցի կամ զգուշաւոր կամ դիւրագոյն ինչ մեզ, խօսեսցի։ Իբրեւ բազումք միաբանեցին եթէ պարտ է վաղվաղակի իսկ երթալ ի թշնամեաց վերայ, եւ չէր ոք որ դիմադարձ լինէր, ապա սկիզբն արար Կիւրոս բանից այսպիսի ինչ օրինակ։

Արք պատերազմակիցք, ոգիք եւ մարմինք եւ զէնք որով վարելն պարտ էր, ի բազում ժամանակաց կազմեցան պատրաստեցան. այժմիկ պարտ եւ պատշաճ է զհամբարսն ի ճանապարհ

պատրաստել մեզ՝ եւ չորքոտանեաց զոր
ի գործ արկեալ վարիցեմք, ոչ ինչ պա-
կաս յաւուրց քսանից։ Քանզի իմ
զմտաւ ածեալ գտանեմ աւելի քան
զհնգետասան աւուրց ճանապարհ լեալ
յորում ոչ ինչ ի պիտոյիցն գտանի-
ցեմք։ Քանզի աղիս բազում յաւելաւ
եւ ի մէնջ եւ ի թշնամեաց, որչափ մարթ
էր։ Արդ պարտ է բազում թոշակ պատ-
րաստել, զի առանց թոշակի ոչ կռուել
մարթեմք, եւ ոչ կեալ իսկ. եւ գինի
այնչափ պարտ է իւրաքանչիւր ումեք
ունել, որչափ բաւական լինիցի ընդելա-
ցուցանելոյ զմեզ ջուր ըմպել. քանզի
մեծ մասն ճանապարհին առանց գի-
նւոյ է, յոր եթէ բնաւ բազում գինի
պատրաստիցեմք, չառնիցի բաւական։
Արդ զի մի յորժամ յանկարծակի ա-
ռանց գինւոյ լինիցիմք, յախտ անկա-
նիցիմք, այսպէս պարտ է առնել։ Այժմ
իսկ ի հացի անդէն սկիզբն առնիցեմք
ըմպելոյ ջուր։

Զի յորժամ զայս առնիցեմք, ոչ
կարի փոփոխիցիմք. զի որ փոխինդն
ուտիցէ, միշտ ընդ ջուր խառնեալ կե-
րիցէ. եւ որ հաց ուտիցէ, ի ջուր թըր-
ջեալ կերիցէ զհացն եւ ամենայն ե-
փոյք բազում անգամ ջրով կուզմիցին։
Իսկ յետ հացին եթէ գինի ըմպիցեմք,
ոչ մի ինչ պակաս գտանիցեն ոգիքն
եւ հանդարտիցեն. եւ յետ այնորիկ

եւ զայն յետ ընթրեացն պարտ է բառնալ, մինչեւ ջրմպուք ուսանիցիմք։ Զի որ առ սակաւ սակաւ փոփոխումն է, զամենայն իսկ բնութիւնն պատրաստէ ժուժկալ լինել փոփոխմանցն։ Ուսուցանէ եւ Աստուած յորժամ տակաւ հանիցէ զմեզ ի կարեաձեռն ձմերայնոյն, հանդարտել տօթոյ սաստկութեան, եւ ի տօթոյն ի սաստիկ ձմեռն. որում պարտ եւ պատշաճ է նմանօրդս լինել, եւ յոր հասանիցէ երթալ, յառաջագոյն ընդելեալ հասանել։

Եւ զծանրութիւն կազմածոյ մահճացն ընդ կարեւոր պիտոյիցն առէք. զի ոռճիկքն աւելորդք ոչ անպիտանք լինիցին, եւ եթէ անկողնոց կարօտ լինիցիք, մի երկընչիցիք թէ ոչ քաղցր ի քուն լինիցիք. ապա թէ ոչ, ինձ դիք մեզ։ Բայց դոյր բազում ձորձ գուցէ, բազում իւիք օգնական լինիցի անձինն եթէ առողջ իցէ եւ եթէ յոյժ խօթացեալ։ Եւ խորտիկս պարտ է հանդերձել. որ աւելագոյնթթուք եւ փոթոթահամք եւ յաղեալք իցեն, զի նոքին ի հաց յորդորիցեն, եւ բազում ժամանակս բաւական լինիցին։ Յորժամ ի տեղիս հասանիցեմք ուր ի դէպ իցէ մեզ առնուլ ցորեան, պարտ է ձեռաց աղօրիս անտի պատրաստել, որովք հաց գործիցեմք. զի այն իմն թեթեւագոյն իսկ քան զամենայն գործիս հացարա-

բաց է։ Պարտ է հանդերձել եւ որ ինչ պիտոյ լինիցի հիւանդոտ մարդկան։ Զի նոցա ծանրութիւնն փոքր է. եւ եթէ այնպիսի ինչ դէպք լինիցին առաւել պիտոյ լինիցի։

Պարտ է եւ փոկս ունել. զի բազում ինչ եւ մարդկան եւ երիվարաց փոկովք կախին. յորոց ի խորտակելն եւ ի խզելն հարկ է դատարկ կալ, եթէ ոք չունիցի լուծս։ Եւ որ ուսեալ ոք իցէ սուսեր սրել, բարւոք է եւ զսուսեր սրել չմոռանալ եւ զյեսան ընդ իւր տանել. զի որ զնիզակն սրիցէ, նա եւ զոդիան սրիցէ. քանզի ամօթ իսկ է, թէ որ զնիզակն սրիցէ, ինքն անպիտան իցէ. պարտ է եւ փայտս բազումս ի կառս եւ ի սայլս ունել, զի բազում իրաց կարեւորք են։

Պարտ է եւ զկարեւոր կարեւոր գործիս վասն այնր ամենայնի ունել։ Քանզի ոչ եթէ ամենայն ուրեք ձեռագէտք մօտ կայցեն, եւ որ զօր մի տեւիցէ, չեն բաւական զայն սակաւք ոմանք գործել։ Պարտ է եւ դակու եւ ուրագ ըստ կառաց կառաց ունել եւ ըստ գրաստու գրաստու դանակ եւ գերանդի։ Զի այս ամենայն եւ առանձինն պիտանացու է իւրաքանչիւր ումեք, եւ բազում անգամ հասարակաց օգուտ լինիցի։ Եւ զկերակրոյն պէտսն զօրավարքդ վառելոցն հարցէք ցայնոսիկ որք ընդ

ձեռք իցեն։ Քանզի չէ պարտ զանց առնել որով ոք կարօտանայցէ ի նոցանէ, քանզի եւ մեք նոքիմբք կարօտ լինիցիմք։

Որչափ գրաստս հրաման տամ ունել, դուք իշխանք կրելեաց կազմածոցն, հարցէք խնդրեցէք, եւ որ ոչ ունիցի ստիպեցէք պատրաստել։ Եւ դուք ռահվիրայիցն իշխանք, ունիք գրեալ յինէն զխոտեալսն եւ զմերժեալս ի տիգաւորացն եւ յաղեղնաւորացն եւ ի պարսաւորաց։ Արդ զնոսա որ ի տիգաւորացն իցեն, մայրեւորութեան դակու առնուլ եւ երթալ ի մարտ պատերազմի, եւ որք յաղեղնաւորացն իցեն եւ որք ի պարսաւորացն՝ դանակ։ Սոցա առեալ զայն ամենայն յառաջ քան զսայլսն համագունդ երթայցեն, որպէս զի թէ պիտոյ ինչ լինիցի ճանապարհացն, վաղվաղակի ի գործ ճեպիցէք, եւ ես եթէ կարօտանայցեմ իւիք, տեսից եթէ ուստի պարտ իցէ առնուլ եւ նոքօք վարել։ Տարայց եւ զորս ի զինուորութեան տիս իցեն գործեօք պղնձեօք եւ հիւսունս եւ դերձակս, որպէս զի որ ինչ պէտք լինիցին ի պատերազմի այնպիսի ճարտարութեանց, մի ինչ պակաս իցէ։ Եւ ի բաց կայցեն նոքա ի գնդէ վառելոցն, եւ որ ինչ խելամտութիւն ունիցին վարձու արբա-

նեկեալ այնմ որ կամիցի, կայցէ ի կարգին։

Ապա եթէ վաճառական ոք կամիցի զհետ գալ վաճառել ինչ, զյառաջագոյն ճառելոց աւուրց պէտսն ունիցի, իսկ եթէ ըմբռնիցի վաճառեալ ինչ, ի բնաւէ անկանիցի։ Այլ յորժամ անցանիցեն աւուրքն այնոքիկ, վաճարեսցէ որպէս զիարդ կամիցի։ Եւ որ ի վաճառականաց ոք առաւել վաճառս առեալ գայցէ, այնպիսին ի նիզակակցաց եւ առ յինէն պարգեւաց եւ մեծարանաց հասանիցէ։ Իսկ եթէ համարիցի թէ ինչք պիտոյ են առ ի գինս, ծանօթս եւ ընտանիս ածեալ առ իս, գայցէ ընդ բանակին եւ առցէ յորոց մեքն ունիմք։

Եւ զայս յառաջագոյն պատմեմ, եթէ ոք եւ այլ ինչ պիտոյ տեսանիցէ նշանակեսցէ ինձ. եւ դուք երթեալ կազմեցարուք պատրաստեցարուք, ես վասն արշաւանիս զոհս մատուցից, եւ եթէ բարուք հրամանք դիցն իցեն, նշանակեսցուք։ Պարտ է ամենեցուն առընթեր կալ առեալ զայն ամենայն, զորոց յառաջագոյն ասացաք ի տեղւոջ ուր հրամայեալ իցէ զօրավարացն. եւ դուք ով զօրավարք իւրաքանչիւր զիւր գունդ յարդարիցէ, եւ ամենեքին եկայք առ իս զի իւրաքանչիւր ոք ի ձէնջ զիւր տեղի առցէ։

Գ. ԼՈՒԽ Գ.

Օ՛ԱՑՆ լուեալ նոցա հանդերձէին. եւ ինքն զոհս մատուցանէր. եւ իբրեւ բարուք նուէրքն էին, խաղայր գնայր զօրքք հանդերձ, եւ յառաջնում աւուր մօտագոյնս բանակ հարկանէր, որպէս զի թէ մոռացեալ ինչ ուրուք իցէ, երթայցէ. եւ եթէ ի միտ առցէ ոք թէ կարօտ է իւիք, հանդերձեսցէ: Կիաքսարեայ առեալ զերիր մասն Ա՛արացն, եկաց անդէն, զի մի աշխարհն անապատ լինիցի: Իսկ Կիւրոս յուզի անկեալ երթայր տագնապաւ զայրուձին առաջի արկեալ, եւ յառաջ իսկ քան զնոսա յուզակս եւ դէտս միշտ ի դիտանոցսն հանէր: Յետ նոցա գային կահք եւ կազմածք. ուր դաշտային էր, բազում ամբոխ լինէր սայլից եւ կազմածոց: Եւ յետուստ զհետ խաղայր ճակատն եւ եթէ կահ ինչ ի կահուցն մնայր, ոչք յառաջեալ երթային յիշխանաց անտի, հոգային զի մի արգել ինչ երթալոյն լինիցի:

Իսկ ուր նուրբ եւ նեղ ճանապարհն էր, ի մէջ առեալ վառելոցն զկազմածսն աստի եւ անտի երթային: Եւ եթէ խոչ ինչ պատահէր, ի զօրաց անտի, որ ի նոյն կարգեալ կային, հոգային: Եւ երթային գունդքն բազում անգամ

առեալ ընդ իւրեանս զկահսն եւ զկազ-
մածս։ Քանզի հրաման տուեալ էր
ամենեցուն որ զկահսն տանէին, զի ի-
րաքանչիւր ոք ընդ իւրում գնդին եր-
թայցէ, եթէ ոչ կարեւոր ինչ հարկ
խափան լինիցի. եւ որ զկազմածսն
կրէր առեալ զնշանակ հազարապետին
գնայր, որ ծանօթ իսկ էր իւրում գընդ-
դին։ Որպէս զի համագունդ միահոյլ
գումարեալ երթային, եւ իրաքանչիւր
ոք զիւրայոցն սաստիկ հոգայր զի մի
յետնեալ մնայցեն. եւ քանզի այսպէս
առնէին, ոչ զմիմեանս խնդրել հասա-
նէր, եւ ամենայն ինչ մօտ էր եւ ողջ,
եւ վաղվաղակի զպիտոյսն գտանէին զօ-
րականքն։

Իսկ իբրեւ դէտքն որ յառաջագոյն
արձակեցան, տեսանէին ի դաշտի արս
որ ճարակ եւ փայտս առնոյին, եւ տե-
սեալ գրասատս որ զայլ եւս նոյնպիսի
կրէին, եւ արածէին, եւ ի հեռաստա-
նէ նշմարեին զի ծուխ կամ փոշի մրբը-
կեալ վերանայր, յայնմ ամենայնէ գի-
տացին թէ անդ ուրեք մօտ իցէ բանակ
թշնամեացն։ Արդ վաղվաղակի իշխան
դիտիցն յղէ զսմն պատմել զայն ամե-
նայն Կիւրոսի։ Եւ նորա զայն լուեալ
հրաման ետ նոցա կալ անդէն ի դի-
տանոցսն եւ որ ինչ նոր միշտ տեսա-
նիցեն, պատմել։ Բայց զգունդս հե-
ծելոցն առաքեաց յառաջակողմն, եւ

հրամայեաց ջանալ ըմբռնել զոմանս յարանցն որ ի վերայ դաշտին իցեն, զի հաստատութեամբ զճշմարիտն ուսանիցի։

Որ զհրամանն առին ի գլուխս հանին. եւ ինքն զայլ զօրսն անդէն զետեղէր զի պատրաստեսցեն որ ինչ պիտոյն թուիցի, մինչ չեւ ամենեւին ի մի վայր գումարեալ իցէ. եւ նախ պատուիրեաց ճաշել, եւ ապա կալ ի մէջ գնդացն եւ որ զինչ հրաման տացի զայնու ածել զմիտս։ Իբրեւ ճաշեցին ի մի վայր կոչէր զհեծելոց եւ զհետեւակաց եւ զկառաց առաջնորդս եւ զմենքենայից եւ զայնոսիկ որ զկահսն տանէին զիշխանսն եւ զսայլեցն. եւ նոքա ժողովեցան։ Իսկ որ ի դաշտ անդր ընթացան, ըմբռնեալ արս ածէին. եւ ըմբռնեալքն իբրեւ հարցան ի Կիւրոսէ, ասէին թէ ի բանակէ անտի գամք եւ մեկնեցաք ոմանք վասն ճարակի եւ կէսք վասն փայտից անցեալ զառաջապահքն. զի վասն յաճախութեան զօրացն ամենայն ինչ անօսր է։

Այն լուեալ Կիւրոսի ասէ. Ո՞րչափ հեռի է աստի բանակն. նոքա ասեն. Իբրեւ երկու խրասախ։ Յետ այնորիկ հարցանէր Կիւրոս թէ իցէ՞ ինչ զմէնջ համբաւ առ նոսա. ասեն. Բազում համբաւ է թէ մօտ իսկ հասեալ կայք։ Եւ արդ զիարդ, ուրա՞խ ինչ եղեն յոր-

ժամ լուանն. զայս հարցանէր վասն մօտակացացն։ Նոքա ասեն. ոչ ուրախ եղեն, այլ մանաւանդ տրտմեցան։ Ա-սէ Կիւրոս. Այժմ զի՞նչ գործեն։ Պար-գեալ ճակատին, ասեն, եւ երէկ եւ եռանդ զնոյն գործէին։ Կիւրոս ասէ. Ո՞ է որ ճակատեցուցանէ։ Եւ նոքա ասեն. Ինքնին իսկ Կրիւսոս, եւ ընդ նմա յոյն ոք այր եւ այլ ոք մար. բայց զմարէն պատմէր թէ ի ձէնչ իսկ եկն հատուած։ Եւ Կիւրոս ասէ. Ով Ա-րամազդ մեծ, լեցի ինձ ըմբռնել զնա, որպէս ես կամիցիմ. յայնմ հետէ հրա-մայեաց զգերին ի բաց տանել, եւ դարձաւ առ այնոսիկ որ մօտն կային որպէս թէ խօսեսցի ինչ։

Յայնմ վայրի այլ ոք ի դիտիցն հա-սանէր, պատմէր եթէ գունդ մի ատուար հեծելոց ի դաշտի երեւին. եւ մեք, ասէ, նկատեմք եթէ գան նոքա, կամե-ցեալ տեսանել զբանակս, զի յառա-ջագոյն իսկ քան զգունդն զայն այլ հեծեալք իբրեւ երեսուն տագնապաւ ի մեզ իսկ հասանեն։ Թերեւս կամին ըմբռնել, եթէ կարիցեն, զդիտանոցն. եւ մեք տասունք եւեթ եմք ի վերայ դիտանոցին։ Կիւրոս հրաման ետ հե-ծելոցն, որ միշտ զիւրեւն էին, երթալ մինչեւ ցդիտանոցն անյայտ ի թշնա-մեաց, եւ անդէն ունել զդադարիկն։ Յորժամ մեր տասունքն, ասէ, թող-

ցեն զդիտանոցն, յարուցեալ ի վերայ անկանիցիք ելելոցն ի դիտանոց անդր. եւ զի զձեզ մի նեղիցեն ի մեծ գնդէ անտի, ընդ առաջ ել դու, ասէ, ով Վշտասպա, զՀազարաւորս հեծելոցն առեալ. եւ երեւեսցիս առաջի հակառակորդաց գնդին։ Եւ ոչ ուրեք յանյայտ տեղիս զՀետ մտանիցես դու նոցա, այլ իբրեւ հոգայցես զի կացցեն մնասցեն դէտքն, դարձիր այսրէն։ Իսկ եթէ կարկառեալ ոմանց զաջս գայցեն առ մեզ, սիրով ընկալարուք զարսն։

Վշտասպաս երթեալ վառէր. եւ սպասաւորք գային հասանէին վաղվաղակի որպէս հրամանատուեալ էր։ Պատահէր նոցա ի մէջ դիտիցն Արասպաս պաշտօնէիւք հանդերձ, որ յառաջագոյն իսկ առաքեցաւ լրտեսել, որ պահապանն էր կնոջն շաւշացւոյ։ Ընդ Կիւրոս իբրեւ ետես զնա, յարուցեալ յաթոռոյ անտի ընդ առաջ ելանէր նորա եւ ընդունէր. եւ այլքն որպէս ի դէպ էր, քանզի ոչ ինչ գիտէին սքանչացեալ էին ընդ իրան, մինչ ասաց Կիւրոս. Արք բարեկամք այր մի քաջ գայ առ մեզ, զի այժմիկ պարտ եւ պատշաճ է ամենայն մարդկան գիտել զգործս նորա։ Նա ոչ յամօթոյ իմեքէ վատթարեալ չոգաւ եւ ոչ յինէն երկուցեալ այլ յինէն առաքեցաւ զի ի միտ առեալ զերս թշնամեացն, ճշդիւ գտակաւ զար-

դարն պատմեցէ։ Արդ զոր ինչ խոստացայ ես քեզ, ով Արասպա, յիշեմ. եւ հատուցից հանդերձ այսու ամենայնիւ։ Արժան է եւ ձեզ ամենեցուն, ով արք, դմա մեծարանս դնել իբրեւ առն քաջի։ Զի վասն մերոյն բարութեանցն ի վիշտս մխեցաւ, եւ կրեաց յանձին զմեղադրութիւնն որով ծանրացեալ նեղէր։

Ապա ամենեքին ողջոյն ետուն Արասպայ եւ ընկալան։ Եւ յասել անդ Կիւրոսի թէ շատ իցէ այս. այլ զոր ինչ ի դէպ իցէ մեզ գիտել, զայն, ասէ, պատմեա ով Արասպա, եւ մի զճշմարտութիւնն նուազեցուցանէր զերայց թշնամեացն։ Զի լաւագոյն լաւ է մեծամեծս կարծել եւ փոքր տեսանել, քան փոքր լուեալ մեծամեծս ինչ գտանել։ Ասէ Արասպաս Ջանայի ճշգրիտ տեսանել. քանզի մօտ երթեալ զճակատսն յարդարէի։ Ասէ Կիւրոս. Ապա ուրեմն ոչ զբաղմութիւն եւեթ գիտես, այլ եւ զնոցին կարգսն։ Ասէ Արասպաս. Ես եւ զայդ գիտեմ, թէ որպէս խորհիցին տալ պատերազմ։ Ասէ Կիւրոս. Սակայն զբաղմութիւնն նախ ասա դու համառօտս։ Զոքա ասէ, կարգեալ կան երեսուն առ երեսուն ի թանձրութիւն եւ հետեւակք եւ հեծեալք, բաց յԵգիպտացւոցն։ Եւ գրաւեալ ունին նոքա իբրեւ քառասուն վտաւան. զի ա-

մենեւին իսկ հոգ ի մտի էր իմ առ ի դիտելոյ թէ ո՞րչափ վայրս գրաւեալ ունիցին։

Ասէ Կիւրոս. Ասա զիա՞րդ կայցեն ճակատեալ Եգիպտացիքն. զի ասացեր թէ բայց Եգիպտացւոցն։ Ասասբեւրապետքն ամենայն ուրեք զիւրաքանչիւր բիւրաւորս հարեւր հարեւր ճակատեցուցանէին. զի այն իմն ասէին օրէնք են ճակատուց յաշխարհին նոցա։ Բայց Կրիւսոս մանաւանդ ակամայ իսկ թող նոցա այնպէս ճակատել. զի կամէր ճակատ յարդարել անդր քան զքո բանակդ։ Ասէ Կիւրոս. Իսկ զմի՞ զայնցանկանայր։ Ի աւելորդաւն, ասէ, շուրջ պատեալ պաշարեալ փակիցէ։

Կիւրոս ասէ. Ցակաւին զայն ոչ գիտեն թէ որ շուրջն պատէն, պատիցին շուրջ։ Որ ինչ ի դէպ էր ուսանել ի քէն, լուաք. բայց ձեզ ով արք, այսպէս պարտեւ պատշաճէ առնել։ Յորժամ աստի երթայցէք, զդուշացարուք երիւարաց ձերոց եւ զինու եւ զարդու, քանզի բազում անգամ փոքր ինչ կարօտութեամբ, եւ այրն եւ երիւարն եւ կառքն անպիտանք լինիցին։ Վաղիւ վաղորդայն, մինչ դեռ ես զոհս մատուցանիցեմ, նախ պարտէ ճաշել եւ արանց եւ երիւարաց. որպէս զի զոր ինչ ցանդ դիպող իցէ առնել, մի այնր պէտք լինիցին։ Յետ այնորիկ դու, ասէ, Ա-

բասպա, զաջ թեւն կալ որպէս ունիսն, եւ դուք բիւրապետք որպէս այժմ ունիք։ Զի մարտին լինելոյ, այնուհետեւ եւ ոչ միում կառաց ժամ լինիցի զերիւարսն փոփոխել։ Պատմեցէք եւ հազարապետացն կալ ի գնդին, զիւրաքանչիւր վաշտս ընդ երկուս զատուցեալ. եւ վաշտն էր իւրաքանչիւր քսան եւ հինգ։

Ասէ ոմն ի բիւրապետացն. Թուիցիմք քեզ, ասէ, Կիւրոս, թէ այսչափ առ այնչափ կարգեալ, բաւական լինիցիմք առ այնչափ թանձրախիտ ճակատն։ Եւ Կիւրոս ասէ. Թանձրագոյն ճակատք որ չկարիցեն հասանել զենուց հակառակորդացն, զինչ թուիցին քեզ, ասէ, կարիցեն վնասել ինչ թշնամեացն կամ օգուտ նիզակակցացն լինել։ Զի ես, ասէ, զվառեալսն զայնոսիկ որ հարեւր առ հարեւր կարգեալ կայցեն, կամիմ թէ բեւր առ բեւր կարգեալ էին. զի այնպէս ընդ ոակաւաւորաց հասցէ մեզ կռուել։ Բայց ես որչափ թանձր յարդարիցեմ զճակատն, թուի ինձ թէ ողջոյն իսկ գունդն ի գործ վաստակիցի, եւ ինքն զօրաւիգն օգնականութեան ինքեան լինիցի։ Զտիգաւորսն յետ զրահաւորացն կարգեցից, եւ յետ տիզաւորացն զաղեղնաւորս։ Բանզի՞ ոք իցէ որ յառաջոյ կարգիցէ զնոսա, ուր եւ ին-

քեանք իսկ գլխովին խոստանայցեն թէ ոչ կուուոյ իրիք մարթեն ի մօտոյ հանդարտել։ Իսկ եթէ զզրահապատն առաջի ունիցին, ժուժկալ լինիցին. ոմանց զտէգսն արձակելով եւ այլոց նետաձիգ լինելով անդր քան զամենեսին որ յառաջոյ կայցեն, հարկանեն զթշնամիսն։ Եւ եթէ լլկէ ինչ ոք զհակառակորդսն, յայտ է եթէ նովին զնիզակակիցսն թեթեւացուցանէ։

Եւ ի կատարած կարգեցիր զնոսա որ յետ ամենեցուն կոչիցին. զի զոր օրինակ տուն առանց քարանց չիցէ ամուր, եւ ոչ առանց այնոցիկ որ զձեղունն գործիցեն, օգուտ ինչ են. նոյնպէս եւ ոչ ճակատ, ոչ առանց առաջնոցն եւ ոչ առանց վերջնոց, եթէ չիցեն քաջք, օգուտ ինչ է։ Այլ դու, ասէ, որպէս հրաման տամ այնպէս կարգեցէք, եւ դուք որ ասպարաւորաց իշխանք էք, յետ նոցա նոյնպէս զվաշտսն կացուցանիցէք, եւ աղեղնաւորացն իշխանք յետ ասպարաւորացն։ Եւ դու որ իշխեսդ այնոցիկ որ յետոյ քան զամենեսին իցեն, եւ զվերջինսն ունիս. պատուէր տուր քոյոցն զի իւրաքանչիւր ոք իւրոցն զդոյշ լինիցի. եւ որ զպատշաճսն գործիցեն զնոսա յորդորել, եւ վհատելոցն սաստիկ ըսպառնալ։ Այս թէ ոք յետս դառնայցէ եւ կամիցի մատն լինել, մահու

պատիժս կրիցէ։ Զի յառաջակացացն այն գործ է քաջալերել զայնոսիկ որ զՀետն գայցեն եւ բանիւք եւ արդեամբք։ Իսկ ձեզ որ յետոյ իսկ քան զամենեսին ճակատեալ իցէք, աւելագոյն քան զԹշնամիսն պարտ է վատացն երկեղուկս արկանել։

Դուք զայդ ինչ արարէք։ Բայց դու, Աբրադատա, որ իշխեսդ վերակացուաց մենքենայիցն, այսպէս առնիջիր զի լուծքն որ զսպասաւորսն եւ զմարդկոցսն տանիցին զՀետ երթայցեն մօտ առ ճակատուն։ Եւ դու Դաւուքէ որ կապարճակրացն, որ ի վերայ աշտարակացն եւ ի վերայ մենքենայիցն են, իշխես, տար զամենայն զայնպիսի զօր. եւ սպասաւորք քո սաստկագոյնս տանջիցեն զնոսա որ յառաջ քան զժամանակն գնայցեն, կամ յետնեալ գտանիցին։ Եւ դու Կարդուքէ, որ սայլիցն իշխես որ զկանայսն տանին, կացո զնոսա ի կատարածին յետ կրելեաց կազմածոցն։ Զի յորժամ այս ամենայն զՀետ խաղացեալ գայցէ, բազմամբոխ բազմութեան կարծիս տայցէ, եւ գուցէ մեզ համարձակութիւն դարանակալ նստել, եւ զԹշնամիսն, եթէ կամիցին բակ առնուլ, բռնադատիցէ մեծ եւս իմն շրջանս կատարել։ Եւ որչափ մեծ վայրս շուրջ պատիցեն, դոյնչափ հարկ է թէ տկարագոյնք լինիցին։

Եւ դուք այսպէս առնիջիք։ Իսկ դու, Արտաւազդ եւ Արտագերսա, երկոքեան զՀազարաւորս հետեւակացն որ ընդ ձեզ են յետ նոցա ունիցիք։ Եւ դու ո՛ փառնուքէ, եւ Ասիադատա, ըզհեծելոց հազարաւորսն որոց երկոքեան իշխէք, մի ի մէջ ճակատուն կարգիցէք, այլ յետուստ կողմանէ սայլիցն սպառազէն վառեցարուք, եւ ապա եկայք առ մեզ ընդ այլոց եւս զօրավարացն։ Այսպէս պարտ է կազմ եւ պատրաստ լինել ձեզ, որպէս թէ զառաջին ձեզ իսկ հասանիցէ մարտընչել։ Եւ՝ որ իշխեսդ արանցն, որ յուղտուց վերայ հեծեալ իցեն, յետոյ սայլիցն կարգեալ կայցես, եւ արա զոր ինչ հրամայիցէ քեզ Արտագերսաս։ Դուք որ կառացն առաջնորդք իցէք, արկէք վիճակ, եւ ում ի ձէնջ վիճակ ելանիցէ, նա հարեւր կառօքն հանդերձ կացցէ յառաջ քան զճակատն. իսկ այլ եւս հարիւրաւորք կառացն, մին յաջակողմն բանակին անցեալ կայցէ եւ զՀետ խաղացեալ երթայցէ ճակատուն յետ թեւին, եւ մեւսն ի ձախակողմն կուսէ։

Այսպէս կարգէր կազմէր Կիւրոս. Աբրադատէս Շաւշացւոց արքայ ասէ. Ես, ասէ, Կիւրոս, կամաւ առնում յանձնզգունդն որ հանդէպ ընդդիմակաց ճակատուն իցէ, ունել, եթէ ոչ

այլ ինչ քեզ հաճոյ թուիցի։ Կիւրոս զարմացեալ ընդ նա եւ բուռն հարեալ զաջոյ նորա եւ ցՊարսիկսն որ ի վերայ այլոց կառայն էին հարցանէր. Ո՞ի՞թէ եւ դուք, ասէ, տայցէք թոյլ. եւ ի՞բրեւ ետուն նոքա պատասխանի թէ չէ բարուք զայն թողուլ, արկանէր վիճակս ի մէջ նոցա, եւ առնոյր վիճակ Աբրադատէս որպէս յանձին կալեալ էր. եւ եղեւ ընդդէմ Եգիպտացւոցն։ Ապա մեկնեալ եւ հոգացեալ զորոց ասացին, ընթրիս առնէին եւ պահապանս կացուցեալ ննջէին։

ԳԼՈՒԽ Դ

Ի վաղիւ անդր ընդ այդն զոհս մատուցանէր Կիւրոս. եւ այլ ամենայն զօրն, իբրեւ ճաշեցին եւ նուիրեցին նուէրս, անդէն վառէին զարդարէին բազում դեղեցիկ պարեգօտիւք զրահապատ պատենազէնք, սաղաւարտաւորք։ Վառէին եւ զերիւարսն ի ճակատսն եւ ի բարձսն եւ զկարթս միաձիոցն եւ զկառամուտսն կողմանոցօք. որպէս զի ի պղնձապատ վառելոցն փայլատակունք շողային, եւ գոյնագոյն փիւնիկեցի նաբոտուք երփն երփն հարկանէր բանակն։ Եւ Աբրադատայ էին կառք չորից սամեայ եւ ութ երիւարաց մեծապայծառ զարդարեալ։ Եւ քանզի կամէր ըզ-

կուսի զրահն որպէս գաւառական իմն էր նմա, ընդ անձն արկանել, մատուցեալ տայր նմա Պանթիա ոսկի սաղաւարտ փողփողեալ եւ բազկաց արկանելիս, եւ ապարանջանս լայնեալս վասն ձեռացն եւ պարեգօտ ծիրանի պճղնաւոր ի ներքոյ եւ վերջաւորս ներկեալ կապուտակ երկնագոյն նարօտուք. զայս ամենայն գործեաց գաղտ յառնէ անտի իւրմէ չափեալ զզէնսն նորա։

Նորա տեսեալ զարմանայր եւ հարցանէր Պանթիա. Ով կին դու, զքո զարդդ հատեալ զէնս ինձ գործեցեր։ Ասէ Պանթիա. սակայն ոչ նոքիմք որք մեծագինքն էին, զի դու ինձ, եթէ եւ այլոց երեւեսցիս որպիսի ոք ինձ թուիս թէ իցես, մեծ իմն զարդ լինիցիս։ Իբրեւ զայս տսէր, զզէնսն ադուցանէր. թէպէտ եւ ծածկել եւս ջանայր, արտասուք ընդ այտսն վիժէին։ Իսկ Աբրադատաս քանզի եւ յառաջն արժանի տեսանելոյ էր, յորժամ նովին զինուք վառեցաւ, եւս գեղեցիկ եւ լուսաւոր երեւէր, զի յախտարակաց գեղեցիկ էր. առեալ ի կառավարէ անտի զկառսն պատրաստ լինէր ի կառսն ելանել։

Յայնմ վայրի Պանթիա հրաման տուեալ մեկնել ամենեցուն մօտակացայն, խօսէր. Ով Աբրադատա, եթէ այլ ոք երբեք ուրեք կին զիւր այրն ա-

ռաւել, քան զիւր անձն մեծարեաց, թուի ինձ ի միտ առնուլ քեզ, եթէ եւ ես մի ոմն ի նոցանէ եմ։ Եւ զի՞ իսկ պիտոյ իցէ մի ըստ միոջէ ասել. զի արդիւնք իսկ իրացն թուի ինձ թէ առաւել հաւանեցուցանիցեն քան զբանսըս որ այժմ ճառեալ պատմեցան։ Բայց սակայն ես ինքնին որ այսպիսի միտս ընդ քեզ ունիմ, որպէս դու իսկ գիտես, երդմնի լինիմ յիմ եւ ի քո գուութն թէ կամիմ ընդ քեզ, յորժամ այր քաջ լինիցիս, առ հասարակ ի հող մտանել, քան ընդ քեզ ամօթալից կեանս կեալ։ Այսպէս ես զքեզ եւ զիս արժանի համարեցայ առաւել գեղեցկացն։ Եւ Կիւրոսի մեծ ինչ շնորհս պարտիմք, զի որ դերիս էի, իւր ընտրեաց զիս, եւ ոչ աղախին կամեցաւ ստանալ զիս, եւ ոչ ազատակին անարգութեան անուամբ. այլ պահեաց քեզ իբրեւ զկին եղբօր։ Եւ յայնր վերայ ի ժամանակի զի Աբրասպաս յետս եկաց ի նմանէ, որ պահեացն իսկ զիս, խոստացայ նմա, եթէ թոյլ տայցէ նա ինձ առաքել առ քեզ, դաս դու, եւ քան զԱբրասպաս յոյժ իսկ հաւատարիմ եւ աղնուագոյն լինիս։

Նա զայս ինչ խօսեցաւ. իսկ Աբրադատայ զարմացեալ ընդ բանսն ձեռն ղգլխովն արկանէր եւ հայեցեալ ընդ երկինս յաղօթս եկաց այսպէս. Աբրա-

մազդ մեծ, տուր ինձ Պանթիայ արժանի այր երեւել, եւ Կիւրոսի արժանաւոր բարեկամ, որ պատուեացն իսկ զմեզ։ Իբրեւ զայն խօսէր ընդ դրունս աթոռոյ կառացն։ Իբրեւ յետ ելանելոյ նորա փակեաց զդուռնն կառավարն, քանզի չկարէր Պանթիա այլազգ ինչ այնուհետեւ համբուրել զնա, զդուռնն համբուրեաց։ Եւ յառաջեալ երթային կառքն, իսկ նա գաղտագողի երթեալ հասանէր առ նա, մինչեւ դարձեալ ի Թիկունս կոյս եւ տեսեալ զնա Աբրադատայ ասէր. Քաջալերեաց Պանթիա, ողջոյն ընդ քեզ, երթ։ Ապա առեալ զնա ներքինեացն եւ նաժըշտացն տանէին զնա ի դեսպակն, եւ նստուցեալ զնա ի գահոյան ծածկեցին վրանաւն։ Իսկ մարդիկն թէպէտ եւ գեղեցիկ էր տեսիլն Աբրադատայ եւ կառացն, չկարացին տեսանել զնա մինչ չեւ մեկնեալ Պանթիայ։

Յորժամ զնուէրսն կատարեաց Կիւրոս, եւ բանակն կարգեցաւ ճակատեցաւ, որպէս պատուէր տուեալ էր, եւ ունէր դիտանոցս մի ըստ միոջէ, զզօրավարսն ի մի վայր գումարէր եւ խօսէր այսպէս։ Արք բարեկամք եւ նիզակակիցք, զզոհսն մեզ դիքն ցուցանեն, որպէս յայնժամ զառաջին յաղթութիւնն շնորհեցին։ Բայց ես կամիմ յուշ առնել ձեզ զայն՝ զոր եթէ ունի-

ցիք դուք ի մտի կարի յօժարագոյնք ի պատերազմ երթայցէք։ Բանզի թեքեալ եւ կրթեալ էք դուք ի պատերազմ առաւել քան զհակառակորդսն, եւ առ միմեանս սնայք եւ զարգացայք ի նմին բազում ժամանակս առաւել քան զթշնամիսն, մանաւանդ զի եւ յաղթեալ եւս էք։ Իսկ ի թշնամեաց անտի բազումք ընդ նոսա ի պարտութիւն մատնեցան. իսկ ի թշնամեաց անտի որք յերկոցունց իսկ կողմանց ոչ կռուեցան, ոմանք գիտեն եթէ զմատնտուսն առ իւրեանս ունին։ Բայց դուք որ ընդ մեզ էք, գիտէք եթէ ընդ նոսա մտանէք ի պատերազմ որ օգնական կամիցին նիզակակցացն լինել։ Եւ ի դէպ է թէ որ վստահ ի միմեանս իցեն միաբան մտօք կացցեն ի մարտ պատերազմի, իսկ որ չիցենն վստահ, հարկ է խորհել թէ զիարդ իւրաքանչիւր ոք վաղվաղակի ի բաց սրանայցէ։

Երթիցուք ի վերայ թշնամեացն, որ կառս վառեալս ունիմք առ անզէն կառս թշնամեացն, որպէս են մեր հեծեալք եւ երիւարք վառեալք առ անզէնսն զի մօտ կռուիցիմք, եւ ընդ այլոց հետեւակաց իբրեւ ընդ առաջնոցն մարտ եղեալ կռուիցիմք։ Եգիպտացիք զնոյն օրինակ վառեալ են, զնոյն ձեւ ճակատեալ զի յաղթ վահանս ու-

նին որպէս զի չկարեն ինչ գործ վճարել եւ ոչ տեսանել ինչ. զի հարեւր առ հարեւր ճակատեալ կան, յայտ է թէ միմեանց խափան պատերազմելոյ լինիցին բնաւ բաց ի սակաւուց անտի: Եթէ մղելով համարիցին մերժել, նախ պարտ է նոցա զերիւարաց զդէմ ունել եւ զերկաթոյն որ յերիւարաց անտի սասակագոյն լինիցի. եւ եթէ ժուժայցէ ոք, զեռ կարիցէ ընդ երիւարացն եւ ընդ ճակատուն եւ ընդ աշտարակացն ոգորել. զի որք ի վերայ աշտարակացն իցեն, մեզ օգնական լինիցին, եւ զթշնամիսն հարեալ յանհնար հնարս փոխանակ ընդ կռուելոյն հասուցանիցեն: Եւ եթէ տակաւին կարօտ ինչ իւիք համարիցիք լինել, ասացէք ցիս, զի աստուածովքն ոչ յիմէքէ չքաւորիցիմք. եւ եթէ խօսել ինչ ոք կամիցի, խօսեսցի. ապա թէ ոչ երթեալ առ դրունսն եւ յաղօթս կացեալ դիցն, որոց զոհս իսկ մատուցաք, երթայք ի գունդսն. իւրաքանչիւր ոք յիշեսցէ զայնոսիկ որ ընդ իւրն իցեն, որպէս ես զձեզ, եւ ցուցանիցէ ոք զանձն իշխանաւորացն արժանս իշխանութեան, եւ առանց երկեղի կերպարանս ցուցանիցէ եւ դէմս երեսաց եւ բանս:

ԵՒԹՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԻՐՈՍԻ ԽՐԱՏՈՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Ի ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա

Ցոքա աղօթս դիցն մատուցեալ դարձան առ գունդսն։ Իսկ Կիւրոսի եւ որոց զնովաւն էին մատուցանէին սպասաւորքն կերակուր եւ ըմպելի, մինչ դեռ զնուիրօքն իսկ էին։ Եւ Կիւրոս որպէս կացեալ կայր, այնպէս սկսեալ ճաշէր, եւ տայր միշտ այնմ ում առաւել պիտոյ էր. նուիրեալ եւ կացեալ յաղօթս ըմպէր. եւ այլքն որ շուրջ զնովաւ էին նոյնպէս առնէին։ Յետ այնորիկ խնդրէր ի գաւառական Ամրամազդայ զօրավար լինել եւ զօրաւիգն օգնականութեան, եւ հեծանէր ի նուս երիւարին. եւ հրաման տայր որոց շուրջն կային։ Ամենեքին սպառազէն վառեալ կային. որ զԿիւրոսիւն էին Կիւրոսի իսկ զինուքն փիւնիկեցի պարեգօտիւքն երկաթակուռ պղնձապատ զրահիւքն եւ սաղաւարտիւք, վերջիւք սպիտակովք

եւ սուսերովք եւ թրովք. եւ երիւաբացն ճակատք եւ բարձք եւ կողք պըզընձապատք. եւ արանցն նոյնպիսի ինչ զարդք պղնձիք էին։ Այնչափ եւեթ զատ էին զէնքն Կիւրոսի զի այլոցն զէնք օծեալ էին ոսկւովք երանգօք. իսկ զէնքն Կիւրոսի իբրեւ հայելի ի բաց փայլէին։

Իբրեւ հեծաւն, եւ կայր նայէր թէ յո երթալոց իցէ, որոտումն բարբառեցաւ յաջակողմն կուսէ. եւ նա ասէ. Ոչ հետ քո եկեսցուք, Արամազդ մեծ. եւ խաղացեալ երթայր, առեալ ընդ աջմէ զԲրիւսանտաս եւ զայրուձին, եւ ի ձախմէ զԱրասամբան եւ զհետեւական, եւ հրաման տայր հայել ի նշան անդր զի կշիռ հասարակ զհետ խաղայցեն. եւ էր դրաւշն արծուենշան ոսկիապատ տարածեալ երկայն գեղարդան, եւ այժմ եւս կայ պահի նոյնն նշանակ Պարսից արքային։ Եւ մինչ չեւ տեսեալ զթշնամիսն երիցս անգամ զզօրսն հանդոյց։

Մինչ դեռ յառաջեալ երթային իբրեւ քսան վտաւանս, եւ սկսան զթշնամեաց բանակն ի հանդիպոյ անտի նշմարել։ Իբրեւ ամենեքին երեւէին միմեանց, եւ զմտաւ ածէին թշնամիքն յերկոցունց կողմանց անցանել անդր քան զճակատն, կացուցանէին զիւրեանց ճակատն, քանզի չգոյր այլ ինչ ազդ շուրջ պատեալ պաշարել. զի իբրեւ զդամոյ

յաջմէ եւ յահեկէ զգունդն գործէին եւ ամենայն ուստեք մարտ եղեալ կը-ռուէին։

Զայնտեսեալ Կիւրոսի, չեկաց յետս այլ նոյնպէս խաղացեալ երթայր, ի միտ առ թէ ի հեռաստանէ պատեալ յաջմէ եւ յահեկէ, երկայնեն տարա-ծանեն զթեւան։ Առնուս ի միտ, ասէ, ով Քրիւսանտա թէ աստստին իսկ կա-մին պատել։ Առնում, ասէ, ի միտ, եւ զարմանք ունին զիս, զի թուի թէ ի բաց քակեն զթեւան առանց յիւ ը-եանց ճակատուէ։ Ասէ Կիւրոս եւ ի մեր-մէ իսկ ճակատուէ ի բաց տանին։ Զինչ այն յայտ առնիցէ. յայտ է, ասէ, եթէ հուպ լինիցին թեւքն մեզ, մինչ դեռ ճակատն հեռի իցէ, յարձակիցիմք ի նոսա։ Ասէ Քրիսանտաս. Իսկ զիարդ կարիցեն օգնական լինել այր եղբօր, եթէ այնպէս հեռացեալք ի միմեանց իցեն։ Ասէ Կիւրոս. Յայտ է եթէ յոր-ժամ թեւքն ելեալ կայցեն ի հանդէպ կողմն մերոյ բանակին կողմանն, դառ-նայցեն ի ճակատ անդր եւ ամենայն ուս-տեք ի մեզ դիմիցեն, զի յամենայն կողմանց պատերազմիցիս ընդ մեզ։

Ասէ Քրիւսանտաս. Ս իթէ քեզ բարեւոք թուիցի խորհուրդս։ Ա՛ռ այն ասէ, զոր տեսանեն քաջ խորհին. եւ առ որս ոչն տեսանեն տակաւին, չարա-չար. քան եթէ թեւ առ թեւ հաս-

եալ էր նոցա առ մեզ։ Բայց դու, ասէ, Ամրշամ, հանդարտագոյնս ած զՀե-տեւական որպէս զիսս տեսանես. եւ դու Քրիսանտա առեալ զայրուձին զնոյն կշիռ հասարակ երթ զՀետ. եւ ես անդր գնամ ուստի դիպող թուիցի սկիզբն առնել մարտին, եւ յորժամ անցանի-ցեմն տեսանիցեմ զամենայն թէ զիարդ իցէ։ Եւ յորժամ անդր գնայցեմք եւ մօտ առ միմեանս հասանիցեմք եւ ըս-կսայց երգս, եւ դուք զկնի կցեցէք։ Եւ ձեռնամուխ ի թշնամիսն լինիցիմք, զգայցէք. զի ոչ եթէ սակաւ ինչ աղ-մուկ լինիցի. դիմեսցէ անդէն եւ Ամ-բրադատէս ի թշնամիս կառոյն հան-դերձ. զի այդպէս իսկ ասացի նմա. եւ ձեզ պարտ է առեալ զկառսն զՀետ գալ, զի այնպէս խառվիցեմք զթշնա-միսն եւ ի վերայ անկանիցիմք. հասից եւ ես վաղվաղակի զՀետ մտեալ արանցն եթէ աստուածք կամիցին։

Այս ասէր եւ դրաւշս կանգնեալ եթէ Ամրամազդ կեցուցիչ եւ զօրավար յուզի անկեալ երթայր, եւ ընդ մէջ կառայն եւ զրահաւորացն անցեալ, ի-բրեւ հայեցեալ տեսանէր զոմանս ի գնդէ անտի, մերթ ասէր. Ով արք, զի-արդ քաղցր եւ հեշտական իցէ տեսա-նել զերեսս ձեր. եւ մերթ ասէր. Ցմտաւ ածէք արք, եթէ այժմ մարտ պատերազմի է ոչ միայն վասն յաղ-

թուլթեան այսր աւուր, այլ եւ վասն առաջին յաղթութեանն զոր յաղթեցէք եւ վասն համօրէն իսկ աջողութեան։ Եւ առ այլսն մատուցեալ ասէր. Ով արք այսուհետեւ դիցն չէ արժան մեղադիր լինել, քանզի ետուն մեզ ի ձեռս բազում բարութիւնս ստանալ. բայց դուք քաջ լերուք։

Իսկ առ այլսն այսպիսի ինչ. Ով արք, յո՞ր գեղեցիկ ուրախութիւն երբեք մարթեմք կոչել զանձինս թէ ոչ ի սոյն. զի այժմիկ համարձակութիւն է, եթէ արք քաջք լինիցիք, բազում բարութիւնս իրերաց մատուցանել։ Դարձեալ եւ առ այլսն. թուի ինձ եթէ գիտիցէք, ով արք, եթէ այժմիկ հատուցմունք առաջի կան որոց յաղթեն, զհետ մտանել, հարկանել, կոտորել, բարութիւնս առնել, բարութիւնս լսել, ազատս լինել, իշխել. իսկ վատացն յայտ է եթէ նոցին հակառակքն։ Եւ արդ որ ոք զիւր իսկ անձն սիրիցէ, ընդ իս մարտիցէ. զի ես չտամ կամաւ չարի իմիք լինել եւ ոչ ամօթոյ։ Յորժամ մատեաւ առ ոմանս ի նոցանէ որ յառաջագոյն իսկ ընդ նմա պատերազմեցան, ասէ. Ա՛ռ ձեզ զինչ պարտ իցէ խօսել, զի դուք հմուտ էք թէ որպէս քաջքն եւ առաքինիք ի պատերազմունս զօրն անցուցանեն, եւ ո՛րպէս վատքն։

Եւ իբրեւ մեկնեալ չոքաւ առ Ա՛-

բրադատէս, եկաց։ Աբրադատայ տրեալ կառավարին զերասանական, եկն առնա. ընթացան եւ այլք ի մօտ ճակատելոցն եւ ի հետեւակաց անտի եւ ի կառավարացն. եւ Կիւրոս ի մերձենալն նոցա խօսէր այսպէս. Զոր օրինակ ըղձանայիր, ով Աբրադատա, արժանի արարին զքեզ դիւքն եւ զորս ընդ քեզ են լինել յառաջակացս նիզակակցացն։ Զոր զայս ինչ զմտաւ ածէ, յորժամ պատերազմել հասանիցէ քեզ, եթէ Պարսիկքն տեսանեն զձեզ եւ զհետ եկեսցեն ձեր. եւ ոչ թողուցուն զձեզ միայն մարտընչել։ Աբրադատէս ասէ. Թուի ինձ թէ ամենայն ինչ մեր բարւոք է. բայց զկողմանցն հոգամ, զի զթեւս թշնամեացն զօրագոյն տեսանեմ ձրգեալ երկայնեալ կառօք եւ ազգի ազգի զօրօք. իսկ ի մէնջ ոչ ինչ այլ ինչ ճակատեալ կայցէ ընդդէմ նոցա, բայց միայն կառքն. որպէս զի ես, ասէ, եթէ ոչ պատահեալ էր իմ այսմ գնդի, ամաչէի աստէն կալ. այսպէս յամրի թուիմ լեալ։

Եւ Կիւրոս ասէ. Եթէ քոյքն բարւոք են, համարձակեաց ի վերայ նոցա. քանզի ես աստուածովքն ցուցիչ քեզ թափեալս ի թշնամեաց զկողմանսն, եւ վկայեմ թէ ոչ յարձակիցիս դու ի թշնամիսն մինչ չեւ ի փախուստ դարձեալ տեսանիցես զնոսա յորոց երկրն-

չիսն. այսպէս մեծամեծս կոտորէր յորժամ պատերազմն իսկ լինելոց էր. ապա թէ ոչ չխօսէր մեծաբանս. բայց յորժամ տեսանիցես զնոսա ի փախստի եւ զիս համարեաց եկեալ հասեալ, եւ խաղա ի վերայ արանցն. զի յայնժամ զախոյանսն տեսանիցես ի վատութիւն հատեալ եւ զորս ընդ քեզ իցեն առաքինիս։ Այլ մինչ դեռ պարապ իցէ քո, ով Աբրադատա, անցեալ զքո կառօքդ յորդորեսջիր զորս ընդ քեզ իցեն յարձակել. երեսօք քաջալերեսջիր եւ յուսովք թեթեւացո։ Եւ զի քաջք քան զամենեսին որ ի վերայ կառացն իցեն, երեւիցիք, արկ ի մէջ նոցա հակառակութիւն։ Գիտասջիր զի եթէ այդ ի գլուխ ելանիցէ ամենեքին այնուհետեւ ասիցեն թէ քան զքաջութիւն շահաւորագոյն ինչ չէք։

Աբրադատաս ելեալ շրջէր եւ վճարէր զամենայն։ Գարձեալ մեկնեցաւ Կիւրոս եկն ի ձախակողմն, ուր Վշտասպան էր հանդերձ կիսով Պարսից հեծելոցն, կարդայր զնա եւ ասէր. Վշտասպա, տեսանե՞ս այժմիկ զգործ քոյ երագութեանն. քանզի այժմ եթէ ա՛ճապարիցեմք կանխեալ յառաջ քան զթշնամիսն կոտորել, ոչ ոք ի մէնջ ան կանիցի։ Վշտասպաս ծիծաղեալ ասէ. Զայնցանէ որ հանդէպ մեր կայցեն, մեզ փոյթ լիցի, իսկ զայնցանէ որ

ի կողմանէ իցեն այլոց, հրաման տուր զի մի եւ նոքա պարապորդք լինիցին։ Եւ Կիւրոս ասէ, Նա երթամ իսկ։ Ով Կ ըշտասպա զայս ած զմտաւ, եթէ ում ի մէջ տայցեն դիքն զյաղթութիւնն, եթէ մնայցէ ուրեք թշնամի, միշտ ի դիմի հարկանիցիմ այնր որ պատերազմիցի։

Զայս խօսէր եւ ելեալ երթայր, եւ իբրեւ երթեալ հասանէր ի կողմն անդր եւ առ իշխան կառացն, ասէր ցնա. Նա գամ օգնական լինել ձեզ, այլ յորժամ զգայցէք զմէնջ եթէ յետուստ յարձակեցաք, յայնժամ եւ դուք փութացեալ ընդ մէջ թշնամեացն յարձակեալ երթայցէք. զի կարի իսկ յամուր զգուշութեան լինիցիք, յորժամ արտաքոյ իցէք քան ի ներքս ըմբռնեալք։ Իբրեւ մօտ հասանէր յետուստ սայլիցն, հրաման տայր Ադրատադերսեայ եւ Փառնուքայ առնուլ զՀազարաւորս հետեւակացն եւ զՀեծելոցն եւ կալ անդէն։ Յորժամ, ասէ, զգաստ լինիցիք զինէն թէ դիմեցի ի վերայ այնոցիկ որ յաջում թեւի իցեն, ապա եւ դուք ձեռնամուխ լերուք որոց ընդդէմ ձեր կան։ Պատերազմեցարուք, ասէ, ընդ թեւին որ տկարակողմն իցէ զօրացն. եւ կալարուք դուք զճակատն զի զօրադոյնք լինիցիք. եւ որպէս նշմարէք իսկ, վերջինք քան զամենայն հակառակորդսն հեծեալքն են. արձակեցէք ի նոսա

զգունդս ուղտուցն. գիտասջիք զի մինչ
չեւ իսկ պատերազմեալ, ծաղը եւ ծա-
նակ զթշնամիսն տեսանիցէք։

Իբրեւ զայս ամենայն ի գլուխ հանէր
Կիւրոս, չոգաւ եհաս յառաջակողմն։
Արիւսոս համարեցաւ եթէ մօտագոյն
է թշնամեացն գունդն յորում ինքն
վարեալ երթայր քան զթեւսն սփը-
ռեալս, ամբարձնշանակ թեւոց, այնու-
հետեւ յառաջ մի խարեալ այլ զտեղեաւն
իսկ դառնալ. իբրեւ կարգեցին կացին
ամենեքին եւ հայէին ի բանակ անդր
Կիւրոսի, նշանակէր նոցա երթալ ի
թշնամիսն, եւ այնպէս երեք գունդք
դիմեցին ի վերայ զօրացն Կիւրոսի, մին
հանդէպ երեսաց եւ մին յաջակողմն
եւ միւսն ի ձախակողմն, մինչեւ բա-
զում ահ եւ երկեւղ հասանէր զօրացն
Կիւրոսի։ Զոր օրինակ փոքր ինչ աղիւս
ի մեծ աղիւս դնիցի, նոյնպէս եւ բա-
նակն Կիւրոսի ամենայն ուստեք պատ-
եալ պաշարէր ի թշնամեաց անտի շուր-
ջանակի, հեծելովք եւ վառելովք եւ
ասպարակրօք եւ աղեղնաւորօք եւ կա-
ռօք, բայց միայն յետուստ կողմանէ։

Սակայն իբրեւ պատուէր ետ Կիւրոս
դարձան ամենեքին հանդէպ թշնա-
մեաց, եւ էր ամենայն ուրեք լռութիւն
ի հոգալոյ անտի զլինելոցն։ Իբրեւ
ժամ թուեցաւ Կիւրոսի, սկիզբն առնէր
երգոցն եւ միաբան բարբառով հնչէր

ամենայն զօրն։ Յետ այնորիկ Ենիաղ-
եայ աղաղակ բարձեալ գոչէին. յարեաւ
Կիւրոս, եւ իսկ եւ իսկ վաղվաղակի ընդ
հեծելոցն զԹշնամիսն յայնմ կողմանէ
ի բուռն առնոյր, եւ վաղվաղակի իսկ
խումբ գործեալ ընդխառնէր ի պատե-
րազմն։ Եւ հետեւակքն կարդեալք ճա-
կատեալք ստէպ զհետ գային, եւ ան-
կանէին զնոքօք յաջմէ եւ յահեկէ, զի
զօրագոյնք քան զնոսա լինիցին. զի
գնդաւն ի վերայ Թեւին անկանէին.
մինչեւ վաղվաղակի սաստիկ փախուստ
Թշնամեացն լինէր։

Իբրեւ զգաստ լինէր Աբրադերսեայ
Թէ Կիւրոս գործէ, յարձակեցաւ եւ
նա յահեակ կողմն զուղտսն առաջի
արկեալ, որպէս հրամայեաց Կիւրոս։ Եւ
երիւարքն չհարկանէին ի դիմի, այլ կի-
ոոցն զայրացեալ փախստեայ գնացին
եւ կէսք ոստոստեալ իմն խայտային.
եւ այլք ընդ միմեանս հարկանէին. քան-
զի յուղտուցն այսպիսի ինչ կրեն երի-
ւարքն։ Բայց Աբրադերսէս քանզի
ճակատեալ ունէր զայնոսիկ որ ընդ իւրն
էին, ճակատեալ ի վերայ խռովելոցն
անկանէր. եւ զկառն որ ընդ աջմէ եւ
ընդ ահեկէ էին միւսանգամ արձակէր.
եւ բազում կառք ի կառացն փախու-
ցեալ յայնցանէ որ ի Թեւ անդր դիմէ-
ին սատակէին. եւ շատք ի նոցանէ պր-
ծեալ ի կառացն ըմբռնէին։

Եւ Աբրադատէս ոչ եւս այնուհետեւ դանդաղէր սաստիկ զաղաղակ եդեալ եթէ. Աբք բարեկամք ելէք զհետ իմ. եւ դիմեալ երթայր, եւ ոչ երիւարացն ինչ անխայէր, այլ հարկանէր խթանաւն. յարձակեցան ընդ նմա եւ այլ եւս կառավարքք, եւ փախուցեալ երթային իսկ եւ իսկ ի նոցանէ կառքն, կիսոցն առեալ զայնոսիկ որ ի կառն ելեալ էին եւ կիսոցն լքեալ։ Բայց Աբրադատէս ուղղորդ նոքօք յԵգիպտացւոց ճակատն դիմէր, հանդերձ նոքօք որ մօտ առ նմին իսկ կային ճակատեալ։ Արդ բազում եւ այլ ուստեք յայտ է եթէ չէ զօրագոյն ճակատն եթէ ոչ յորժամ ի բարեկամաց նիզակակցաց գումարեալ իցէ, բայց եւ ի ժամանակի աստ յայտմիկ յայտ արարեալ ցուցաւ. քանզի որ ընկերքն էին նորա եւ բազմականակիցք, ընդ նմին յարձակէին. իսկ այլ եւս կառավարքք, տեսին զԵգիպտացիսն բազմապատիկ կարգօք տեւեալ բաւեալ, խոտորեցուցին զկառն ի փախստեայս անդր եւ պնդեալ երթային զկնի նոցա։

Իսկ աբրադատեանքն քանզի ի տեղւոջն ուր դիմեալ էին չկարէին Եգիպտացիքն ի միմեանց զատանել, վասն կալոյ նոցա աստի եւ անտի, զկանգնաւորսն սաստկութեամբ երիւարացն հարեալ կործանէին եւ զանկեալսն կոտո-

րէին, զնոսա եւ զզէնս նոցա, զերիւարս եւ զանիւան։ Եւ ուր հասանէին գերանդիքն գբնաւ բռնութեամբ հատանէին եւ զզէնս եւ զմարմինս։ Եւ յայնմ անհնարին խռովութեան ի բազում շեղջ շեղջ կուտելոյ ընդ միմեանս հարկանէին անիւքն, եւ Աբրադատէս անկանէր, եւ որ ընդ նմա իսկ մխեալ էին, անդէն առաքինացան եւ մեռան պատառ պատառ կոտորեալ։ Պարսիկքն որ զհետ երթեալ էին նոցա, յոր Աբրադատէս եւ որք ընդ նմայն էին դիմեցին, անդր անկան եւ խռովեալ կոտորէին զնոսա։

Ուր վատթարեցանն Եգիպտացիքն եւ բազումք իսկ էին, երթային դէպ ուղիղ առ Պարսիկսն. յայնմ վայրի անհնարին պատերազմ էր տիգաց եւ դեղարդեանց եւ նետից եւ սուսերաց։ Բայց գլէին Եգիպտացիքն եւ բազմութեամբն եւ զինուքն, քանզի սաստիկ եւ երկայն դեղարդունք էին նոցա, զոր եւ ցայժմ իսկ ունին, եւ վահանք առաւել քան զզրահսն եւ ծածկեն զմարմինս, եւ առ մղել օգնական լինին եւ զուսոց կան կախեալ։

Արդ զվահանսն առ միմեանս աղխեալ երթային եւ մղէին։ Իսկ Պարսիկքն չկարէին հարկանել ի դիմի, որպէս ի ծայրս ձեռացն ասպարս ունիցին, այլ ոտն ոտն մեկնէին հարկանէին եւ հա-

ր՝ալք լինէին, մինչեւ հասին ի մեն-
քենայսն։ Բայց իբրեւ եկին անդր միւս-
անգամ յաշտարակացն հարեալ լինէ-
ին Եգիպտացիքն. եւ որք յետ ամենե-
ցուն էին չտային փախչել ոչ աղեղնա-
ւորացն եւ ոչ տիգաւորաց, այլ զսու-
սերսն պողովատիկս կարկառեալ ստի-
պէին նետաձիգ լինել։ Ընդ էր բազում
կոտորած մարդկան, շաչիւն զինուց շա-
ռաչիւն նետից ոտնաձայն վահանաւոր
վառելոցն. եւ գոչիւն անհնարին կիսոց
որ զմիմեանս կարդայցեն եւ կիսոց որ
քաջալերս տայցեն, եւ այլոց որ զդիան
կոչիցեն։

Յայնմ վայրի Կիւրոս զհետ մը-
տեալ այնոցիկ որ հանդէպ իւր կային, ե-
կեալ հասանէր, իբրեւ ետես թէ Պար-
սիկք ի տեղւոջէն խաղացին, ի խոր խո-
ցէր. ի միտ առնոյր թէ չմարթի ուստեք
վաղվաղակի զթնամիսն խափանել յեր-
թալոյ անտի յառաջ, եթէ ոչ յետուստ
կողմանէ պատիցին զնոքօք. պատուէր
տուեալ որոց ընդ իւրն էին զհետ գալ։
Իսկ Եգիպտացիքն իբրեւ զգացին, զա-
ղաղակ եդեալ գոչէին եթէ յետուստ
թշնամիք կան եւ դառնային ի կողման-
սն. յայնմ վայրի խառն պատերազմէին
հեծեալք եւ հետեւակք։ Ընկաւ ոմն
ընդ երիւարաւն Կիւրոսի, եւ իբրեւ կո-
խան լինէր, զէն վերացոյց հար զպորտ
երիւարի նորա. եւ երիւարն խոցեալ ի

դեղեւեալն իւրում ընկենոյր զԿիւրոս։ Ընդ առնոյր ոք ի միտ, քանի լաւ ի-ցէ սիրելի լինել իշխանին իշխանաւո-րացն. քանզի ամենեքին վաղվաղակի աղաղակեցեն հասին կռուեցան, մղեալ եւ մղէին, խոցեալ եւ խոցէին. եւ վա-զեալ ուրուք յերիւարէն իսպասաւո-րացն Կիւրոսի, հան զնա յիւր երիւարն։

Իբրեւ հեծաւ Կիւրոս, տեսանէր ա-մենայն ուստեք հարեալ զԵգիպտացիսն զի եւ Վշտասպաս հասեալ էր հանդերձ հեծելովքն Պարսից, եւ Քրիւսանտաս։ Այլ չետ նոցա այնուհետեւ մնել ի ճակատ Եգիպտացւոցն, այլ հրամայ-եաց արտաքուստ արտաքս նետս ընկե-նուլ։ Իբրեւ շրջեցաւ ի մենքենայսն կա-մեցաւ յաշտարակ ինչ ելանել դիտել եթէ գուցէ ուրեք այլ ինչ գունդ թշնա-մեաց եւ պատերազմիցի. եւ իբրեւ ել, ետես լցեալ զդաշտն երիւարօք եւ մարդ-կաւ եւ կառօք, փախստէիւք եւ պըն-դելովք զհետ նոցա. յաղթողքն եւ յաղթելովք. զի թշնամիքն փախըս-տեայ դիմէին, եւ իւրքն յաղթէին։ Իսկ ի պարտելոցն ոչ ուրեք զոք այնուհետեւ կարէր տեսանել բաց յԵգիպտացւոցն. նոքա իբրեւ յանհնարս մտանէին շուրջ բակ առեալ մինչեւ ամենեւին զինուց իսկ երեւել, ընդ վահանօքն նստէին, եւ գործէին ինչ ոչ այնուհետեւ, եւ բազում վիշտս եւ աղէտս կրէին։

Զարմացեալ Կիւրոսի ընդ նոսա, եւ ողորմեալ զի այնպիսի արք քաջ կորընչին, ի բաց մերժեաց զամենեսեան որ շուրջանակի մարտընչէին, եւ չետ թոյլ այնուհետեւ ումեք մարտընչել. եւ քարոզ եւս առաքէ առ նոսա հարցանել. թէ արդեւք համօրէն կորընչել կամիցին վասն այնոցիկ որ նոցա մատն եղեն, եթէ փրկել քաջութեամբ. նոքա ետուն պատասխանի. իսկ զիա՞րդ ապրիցիմք մեք քաջ անուամբ։ Ասէ Կիւրոս միւսանգամ. զի մեք զձեզ եւ եթէ տեսանեմք զի կայք կամիք մարտ եդեալ կռուել ընդ մեզ։ Ասեն անտուստ Եգիպտացիքն. Զի՞նչ ինչ լաւութիւն գործեալ եւ ապրիցիմք. եւ Կիւրոս ասէ ցնոսա. Եթէ ոչ ուրուք ի նիզակակցաց ձերոց մատն եւ տուր լեալ ապրիցիք եւ զդէն եւ զզարդ զայն մեզ տայցէք, եւ բարեկամք լինիցիք որք կամին զի դուք ողջ իցէք, ուր մարթիցի սատակել իսկ զձեզ։

Զայս լուեալ հարցանէին. Եթէ բարեկամք լինիցիմք ձեր, եւ իւիք վարելոյ զմեզ արժանի առնիցէք։ Եւ պատասխանի Կիւրոս. Բարիս գործելոյ եւ երախտիս գտանելոյ։ Հարցանէին միւսանգամ Եգիպտացիքն. Զո՞ր երախտիս։ Եւ այն ասէ Կիւրոս. Վարձս տաց ձեզ աւելի քան որչափ այժմ առնուք, ցորքան ժամանակս պատե-

բազմն ելեալ։ Իսկ խաղաղութեան լինելոյ, այնմ որ կամիցի ի ձէնջ առ իս մնալ, տաց վայրս եւ քաղաքս եւ կանայս եւ գերդաստանս։ Լուեալ զայն Եգիպտացւոցն, աղաչեցին Թողութիւն առնել նոցա երթալոյ ի մարտ պատերազմի ի վերայ Կրիւսոսի. եւ այնմ եւ եթ ասէին ներել, բայց զայնն ամենայն յանձին կալան, եռուն հաւատ եւ առին։ Եւ Եգիպտացիքն որ յայնժամ մնացին, ցայժմ եւս կան հաւատարիմ թագաւորին։ Կիւրոս ետ նոցա քաղաքս զվերնակողմանցն, եւ ցայժմ քաղաքքն անուանեալ կոչին Եգիպտացւոց, զԼարիսան եւ զԿիւղենէ առ Կիւմեայ ծովեզերեայ, զոր եւ այժմ նոքա ունին։ Այս ամենայն իբրեւ վճարեաց Կիւրոս ընդ խաւար երթեալ ի Թիւրիբարիս բանակ հարկանէր։

Յայնմ մարտի Եգիպտացիք միայն ի թշնամեաց անտի մեծարոյ եղեն. եւ յայնցանէ որ ընդ Կաւոսի էին Պարսից այրուձին զօրագոյն երեւէր. որպէս զի եւ այժմ կայ պահի սպառազինութիւնն զոր ի ժամանակին յայնմիկ կազմեաց Կիւրոս հեծելոցն. հաճոյ թուեցան յոյժ եւ կառքն գերանդազէնք, մինչ զի եւ այժմ գոն նոյնք այժմու թագաւորիս։ Բայց ուղտքն ահ արկին միայն երիւարացն. այլ հեծեալքն ի վերայ նոցա ոչ զոք կոտորեցին, եւ

ոչ ինքեանք ի հեծելոց անտի սատա-
կեցան. զի ոչ մօտէր ի նոսա երիւար.
եւ պիտանացու իսկ թուեցաւ լինել։
Բայց զի ոչ ոք քաջ եւ առաքինի կամի
ուզտ մնուցանել, զի նովաւ երթայցէ,
եւ ոչ կրթել եթէ պատերազմիցի ի
նոցանէ. այնպէս առեալ միւսանգամ
զիւրեանց կերպարանսն կան ի մէջ բեռ-
նակրացն։ Եւ որ զԿիւրոսիւն էին յետ
ընթրեացն պահապանս կացուցեալ որ-
պէս արժան էր, ի քուն լինէին։

ԳԼՈՒԽ Բ

ԿՐԻՍՈՍ վաղվաղակի զօրօքն փա-
խըստեայ ի Սարդիացւոց քաղաքն դի-
մէր. եւ այլ եւս ազգք ուր եւ հասանէին
մեկնէին գիշերայն մօտագոյն ընդ ճա-
նապարհ աշխարհին իւրեանց։ Իբրեւ
տիւ լինէր, անդէն խաղայր գնայր Կիւ-
րոս ի վերայ Սարդիացւոցն. իբրեւ ե-
հաս ի պարիսպ անդր որ ի Սարդիա-
ցւոց աշխարհին, զմենքենայսն կան-
գնէր որպէս թէ զորման բախիցէ, եւ
սանդուղս կազմէր։ Մինչ դեռ զայն
գործէր, ընդ զօրագոյն կողմն Սար-
դիացւոց ամրին հանէր զԲաղդեացիսն
եւ զՊարսիկս յորժամ գիշեր ի վերայ
հասեալ կայր։ Եւ առաջնորդէր նոցա
այր պարսիկ ծառայ լեալ ուրուք ի պա-
հապանաց ի բարձրաւանդակի քաղա-

քին, եւ ուսեալ իջանել ի գետն եւ ելանել։ Եւ իբրեւ յայտնի լինէր, եթէ առաւ ամուրն, ամենայն Ղիւդացիքն փախստեայ գնային ի պարսպէ անտի, ուր եւ հասանէր իւրաքանչիւր։ Կիւրոս եմուտ յաւուր յայնմիկ ի քաղաքն, եւ պատուէր ետ մի ումեք խաղալ ի գնդէ անտի։

Բայց Կրիւսոս արդելեալ փակեալ յարքունիսն առ Կիւրոս գոչէր. իսկ Կիւրոս թողեալ պահապանս Կրիւսոսի, ինքն երթայր յամուր անդր, եւ իբրեւ ետես զՊարսիկսն զի պահէին զամուրն որպէս արժան իսկ էր, եւ զԲաղդեացւոց զէնսն թափուրս, քանզի ի տանց յափշտակութիւնս դիմեցին, իսկ եւ իսկ կոչէր ի մի վայր զիշխանս նոցա ի բաց լինել վաղվաղակի ի զօրաց անտի։ Օ՛ւ չկարեմ, ասէ, հանդարտել զի որք առանց կարգաց եղեն, առաւել ընչաւէտք լինիցին։ Զիտասջիք, ասէ, զի պատրաստեալ էի ես զձեզ որ ընդ իս ի պատերազմ եկայք, երանելիս քան զամենայն Բաղդեացիսն առնել։ Բայց այժմ, ասէ, մի ինչ զարմանայցէք եթէ որք զօրագոյն քան զձեզ պատահիցէ ձեզ ի մեկնելն ձեր աստի։

Լուեալ զայն Բաղդեացւոցն աղաչէին եւ պաղատէին դադարել ի բարկութենէ անտի, եւ յանձն առնոյին զկարասին ամենեւին ի բաց տալ։ Եւ

նա ասէր. թէ չեն ինչ այնր պէտք, այլ եթէ կամիք, ասէ, զի զիջանիցիմ ի սրբոմուլթենէ աստի, տուք ի բաց զամենայն զոր առէք, այնոցիկ որ զբերդդ պահեն։ Զի եթէ զգայցեն այլ եւս զօրքն եթէ առաւել առնուն որկան ի յարդարեալ կարգին, ամենայն ինչ ի դէպ ելանիցէ։ Այնպէս առնէին Բաղդեացիքն որպէս հրաման ետ Կիւրոս. եւ առնոյին հնազանդեալքն բազում ինչս։ Իսկ Կիւրոս բանակ հարեալ իւրոց զօրացն ուր պատեհ թուէր ի քաղաքի պատուէս տայր կալ զինուք եւ ճաշել։

Զայս ամենայն վճարեալ հրաման ետ ածել առ իւր զԿիւրոս։ Կրիւսոս իբրեւ ետես զԿիւրոս. Ողջ եր տէր, ասէ, զի զայդ անուն ետուն այսուհետեւ դէպքն քեզ ունել եւ ինձ յորջորջել։ Դու դու, ասէ, ողջ լեր ով Կրիւսէ, քանզի երկոքեան մարդիկ եմք. կամիս ով Կրիւսէ խրատ ինչ տալ ինձ։ Կամէի, ասէ, ով Կիւրոս բարութիւն ինչ գտանել քեզ, զի այն եւ ինձ օգուտ լինիցի։ Այսուհետեւ լուր, ասէ, ով Կրիւսէ, զի իմ տեսեալ զզօրս քո ի բազում աշխատութիւն եւ ի վիշաս, զի այժմ համարին թէ ունին զքաղաք մեծագանձ Ասիացւոց աշխարհին յետ Բաբիղոն քաղաքի, արժան համարին օգուտ ինչ գտանել զօրաց։ Զանզի գիտեմ, ասէ, զի եթէ ոչ շահս ինչ առցեն զվաստակոցն, չկա-

րեմ զնոսա բաղում ժամանակս ի հնա-
զանդութեան առնել։ Արդ չկամիմ
թողլ քալ նոցա յափշտակել զքաղաքն
զի քաղաքն ի բաց ապականի. եւ գի-
տեմ թէ ի յափշտակութեանն յոռիքն
առաւել մեծանան։

Այն լուեալ Կրիւսոսի ասէր. թողլ
տուր ինձ, ասէ, խօսել առ Ղիւդացիսն
առ որս ես կամիցիմ, եթէ շնորհեսցես
ինձ յաղաչել իմում մի առնել յափշ-
տակութիւն եւ մի թողուլ անհետ յա-
չաց կորընչել մանկտւոյ եւ կանաց. ես
խոստանամ քեզ ընդ այնր թէ ի Ղիւ-
դացւոց կամաւ տացի քեզ ամենայն որ
ինչ բարի եւ գեղեցիկ իցէ ի Սարդիա-
ցւոց աշխարհին. զի եթէ զայս լսիցեն,
գիտեմ եթէ բերցեն զամենայն որ ինչ
անդ գեղեցիկ ստացուած իցէ առն եւ
կնոջ. եւ զնոյն օրինակ ի հերուն բաղում
եւ գեղեցիկ արարով քաղաքս միւսանգամ լի
իցէ քաղաքն. այլ եթէ յափշտակիցես,
ապա եւ ճարտարաց արուեստքն յորոց
ասեն թէ բարութեանցն աղբերք են,
ապականեալ եղծանիցին։ Արթ է
քեզ որ տեսերդ զայն ամենայն, երթալ
եւս եւ վասն յափշտակութեանն խոր-
հուրդ առնուլ։ Նախ զիմոց իսկ գանձուց
առաքեա, եւ առցեն պահապանքն քո
պահապանաց անտի իմոց։

Յանձն առ Կիւրոս այսպէս առնել
որպէս խօսեցաւ Կրիւսոս։ Բայց զայն,

ասէ, Կրիւսէ, պատմեա ինձ թէ զիա՞րդ
ի գլուխ ելին որ ի Դեղփիս հրամանքն
եղեն. զԱպողոնեայ ասեն թէ պաշտօն
առնու ի քէն, եւ զամենայն ինչ առ-
նես նմին անսալով։ Պամէի, ասէ, այս-
պիսի ինչ լինել ով Կիւրոս. բայց այժմ
ամենեւին զնոցին հակառակն անդէն
իսկ իսկզբանն գործեալ մատեայ առ
Ապողոն։ Ասէ Կիւրոս. Զիա՞րդ կամ
որպէս, յայտ արա, զի ամենեւին իսկ
նորանշան ինչ իրս պատմես։

Զի յառաջնում իսկ նուագին, ասէ,
անփոյթ արարի հարցանել զդիան եթէ
զի՞նչ ինչ պիտոյ իցէ ինձ, եւ զհանդէս
տեսի նորա եթէ կարիցէ ճշմարիտ խօ-
սել։ Եւ այն ոչ զի աստուած, ասէ,
այլ մարդիկ լաւք եւ առաքինիք յոր-
ժամ զիտիցեն եթէ չթուին հաւատա-
րիմք, չսիրեն զթերահաւատեալսն։
Բայց իբրեւ ի միտ առի եթէ անպա-
տեհ իրս գործեցի եւ ի Դեղփեաց հե-
ռի էի առաքեցի զորդւոցն իմոց։ Ես
զառաջինն չետ ինձ պատասխանի։ Ի-
բրեւ բազում նուէրս ոսկիս եւ արծա-
թիս բազումն առաքեցի, եւ զոհս մա-
տուցի, ապա հաշտ արարի զնա, որպէս
կարծէի. յայնժամ ետ ինձ պատաս-
խանի յորժամ հարցի զնա թէ զի՞նչ
գործիցեմ զի մանկունք լինիցին իմ։
Եւ ասէր. թէ Եղիցին. եւ եղեն. քան-
զի եւ ոչ զայն ստեայց, բայց իբրեւ

ծնան ոչ ինչ օգուտ եղեն։ Զի մին համր մնաց, եւ մեւսն ազնուադոյն եղեալ անդէն ի մատաղ հասակի սատակէր։ Զու իբրեւ նեղեալ էի ընդ վիշտս մանկանցն, միւսանգամ յղեմ եւ հարցանեմ զդիսն եթէ զինչ գործեցից զի զմնացեալ կեանսս հանիցեմ ի գլուխս. եւ նա ետ պատասխանի

ԵԹԷ ԶՔՈ ԻՍԿ ԱՆԶՆ ԾԱՆԻՑԵՍ ՓԱՌԱՒՈՐ ԼԻՆԻՑԻՍ ԿՐԻՍԷ։

Իբրեւ լուայ զբղձութիւնն ուրախ եղէ. զի համարէի եթէ դիւրին ինչ հրամայեաց ինձ եւ զփառաւորութիւնն ետ. զի համարէին թէ յայլոց մարթի զկէսս ճանաչել եւ զկէսս ոչ. իսկ զանձն թէ ո՛ ոք է, ամենայն ումեք մարդոյ համարէի գիտել։ Զու յետ այնր ժամանակի մինչ դեռ հանդարտեալ կայի, ոչ ինչ մեղ դնէի դիպաց պատահելոց յետ մահու մանկանն։ Բայց իբրեւ հաւանեցայ ասորեստանուոյն երթալ ի վերայ ձեր ի մարտ պատերազմի, յամենայն վիշտս երթայի, բայց պրծեալ ապրէի ոչ ինչ չարիս կրեալ. այլ եւ ոչ վասն այնր ամենայնի եպերեմ զդիսն։ Զի իբրեւ գիտացի զանձնէ թէ չեմ բաւական տալ մարտ պատերազմի ընդ ձեզ, անվնաս ելանէի աստուածոմն եւ ես եւ որ ընդ իսն էին։ Իսկ այժմ միւսան-

գամ ի մօտաւոր մեծութենէ աստի քայքայեալ, եւ յայնցանէ որ աղաչէին զիս վերակացու լինել եւ ի պատարագացն զոր տային ինձ եւ ի մարդկանէ որ ստակէին ինձ եւ ասէին, զի եթէ ես կամիցիմ իշխել, ամենեքին հնազանդ լինիցին ինձ, եւ մեծ քան զամենայն մարդիկ լինիցիմ։ Յայսց բանից հպարտացեալ, իբրեւ ընտրեցին զիս թագաւորք որ շուրջանակի բնակեալ էին ոստիկան պատերազմին, յանձն առի զզօրավարութիւնն որպէս թէ բաւական իցեմ մեծ քան զամենեսին լինել։ Ոչ ծանեայ զանձն զի համարէի բաւական լինել պատերազմել ընդ քեզ, նախ որ ի դիցն իսկ ծնեալ ես եւ ապա ի թագաւորաց, եւ ապա յառաքինութիւն թեւակոխեալ։ Բայց զիմոցնախնեաց լսեմ թէ որ նախ թագաւորեաց, թագաւոր էր եւ աղատ։ Արդ քանզի զայն անգիտացայ, յիրաւի ասէ, զպատիժն ունիմ։ Այլ այժմ, ասէ, ո՛ Կիւրոս ճանաչեմ զանձն, դու տակաւին ճշմարիտ համարիցիս զԱ.պողոն, եթէ յաջողեալ լինիցիմ եթէ զանձն ծանիցեմ։ Ոչ քեզ յայն սակս հարցանեմ զի թուիս ինձ ազնուագոյնս նկատել զայն ի ժամանակիս յայսմիկ. զի եւ առնել ձեռնհաս ես։

Եւ Կիւրոս ասէ. Խորհուրդ տուր ինձ վասն սորին, ով Կրիւսէ։ Ոչ իմ

զմտաւ ածեալ զառաջին փառաւորութիւն քո ողորմիմ քեզ, եւ տաց քեզ զկինդ զոր ունիս եւ զդստերսդ, զի լսեմ թէ են քո եւ բարեկամք եւ եւ պաշտօնեայք, եւ սեղան որպէս էր իսկ քո. զկռիւս եւ զպատերազմունս բառնամ ի քէն։ Ասէ Կրիւսոս այսուհետեւ դու մի ինչ խորհեսցիս տալ ինձ պատասխանի վասն իմոյ փառաւորութեանն։ Զիասեմ ես քեզ, եթէզայս ամենայն առնիցես դու ինձ զոր ասես, զոր այլք երանելի կեանս համարիցին, որոց եւ ես իսկ հաւանիմ, զնոյն կեանս եւ ես կեցցեմ։ Եւ Կիւրոս ասէ։ ո՞ է որ զայն երանելի կեանս ունիցի։ Կին իմ, ասէ, Կիւրէ, քանզի նա բարութեանցն եւ փափկութեանցն եւ ուրախութեանց ամենայնի զնոյն հաղորդէր ինձ. իսկ հոգոցն թէ զիարդ այս ամենայն լինիցի եւ պատերազմի եւ կռուոյ չէր ինչ նորա հաղորդութիւն. եւ դու թուիս ինձ թէ այսպէս կազմիցես զիս, որպէս եւ զկինն զոր ես առաւել քան զամենայն մարդիկ սիրէի. որպէս զի այլ եւս գոհութեանց պարտապան թուիցիմ Ապողոնեայ։ Լուեալ Կիւրոսի զբանս նորա ընդ մտադիւրութիւնն զարմացաւ. եւ ուր եւ գնայր Կիւրոս, բերէին եւ զնա զի պիտանի իմն հաշուէր զնա իւր, եւ զգուշաւոր եւս այնպէս համարէր. ապա եւ ննջեցին։

ԳԼՈՒԽ Գ

Ի վաղիւ անդր կոչեցեալ Կիւրոսի զբարեկամս եւ զզօրավարս զօրացն, ո-մանց ի նոցանէ Հրաման տայր զդանձ-սըն առնուլ, եւ ոմանց որ ինչ ինչս տայցէ նոցա Կրիւսոս, նախ դիցն Հա-նեալ, որչափ մոգքն Հրամայեցին, եւ ապա զայլ կարասին առնուլ եւ յար-կեղս եդեալ ի սայլսն ընուլ, եւ բերել զսայլսն յո եւ երթայցեն. զի յորժամ ժամանակ ի դէպ լինիցի առցեն իւրա-քանչիւր զարժանն. եւ նոքա նոյնպէս առնէին։ Կիւրոսի կոչեցեալ զոմանս իսպասաւորացն որ անդ կային. Ասա-ցէք ինձ, ասէ, գոգէք, եառնս ոք ի ձէնջ զԱբրադատէս. քանզի զարմա-ցեալ եմ, ասէ, զի որ յառաջն յա-ճախէր առ մեզ, այժմ ոչ ուրեք ե-րեւի։ Եւ պատասխանի ոմն իսպասա-ւորաց անտի, եթէ Տէր, չէ կենդանի, այլ ի ճակատուն մեռաւ, արկեալ ըզ-կառան ի մէջ Եգիպտացւոցն. իսկ այլքն բաց յընկերաց նորա, խոտորեցան որ-պէս պատմեն, յորժամ զկարգս Ե-գիպտացւոցն տեսին. եւ այժմ եւս, ասէ, ասեն, թէ նորին կին հան ըզ-դիակն եւ եդեալ ի դեսպակ անդր ո-րով ինքն դայր, եբեր զնա այսր ուրեմն առ Պակտոլոն գետ. եւ զներքինեացն

եւ զծառայիցն նորա, ասեն, փորեալ
ի վերայ բլրի իրիք դիակալ տապան
վախճանելոյն, եւ զկնոջէն պատմեն
թէ ի գեռին նստիցի եւ զարդարիցէ
զայրն զարդուքն զոր ունիցի եւ զգլու-
խըն ի ծնգայն վերայ ունիցի։

Օչայս իբրեւ լուաւ Կիւրոս, հար ըզ-
կողս իւր եւ իսկ եւ իսկ վազեալ յե-
րիւարն առեալ հազար հեծեալս եր-
թայր ի կարասիան։ Բրաման տայր Գա-
գատայ եւ Գոմբրիայ զոր ինչ կարիցեն
առնուլ զարդ գեղեցիկ առն բարեկամի
վախճանելոյ առեալ զհետ պնդեսցին։
Եւ որ ոք ունէր հօտս եւ անդեայս եւ
երիւարս, ընդ իւր տանիցի, պատուիրէր
նմա եւ այլ եւս բազում խաչինս բե-
րել ուր եւ համարիցի զնա լեալ. զի
զենցէ Մբրադատայ։ Իբրեւ եռեսս ըզ-
կինն ի հոլ նստեալ եւ դիակն եդեալ
կայր, արտասուեաց ընդ վիշտն եւ ա-
սէ. Ո՜հ առաքինի ոգի, գնացեր թող-
եալ զմեզ. եւ բուռն եհար զաջոյ ձե-
ռանէ նորա, եւ զայն սուսերաւ ի բաց
հատեալ էր Եգիպտացւոցն։

Օչոր տեսեալ Կիւրոսի առաւել եւս
ի խոր խոցէր, եւ կինն ճիչ բարձեալ
գուժէր, եւ առեալ ի Կիւրոսէ համ-
բուրեաց զձեռնն, եւ մինչանդամ որ-
չափ մարթ էր ի միմեանս յարէր եւ ա-
սէր. Եւ այլ եւս անդամք նորա նոյն-
պէս են Կիւրոս, այլ զի՞ պիտոյ իցէ

քեզ տեսանել. զայս, ասէ, գիտեմ եթէ վասն իմ կրեաց զայնպիսի վիշտս, թերեւս եւ ոչ դուն ինչ եւ վասն քո ով Կիւրոս. զի ես յիմարս ստէպ քաջալերեցի զնա այսպէս իսկ առնել զի քեզ բարեկամ ընտիր երեւիցի. գիտեմ թէ ինքն չածէր ինչ զայն զմտաւ եթէ զինչ գործ գործիցէ, այլ թէ զինչ գործիցէ զի քեզ շնորհ առնիցէ։ Արդ նա, ասէ, առանց պարսաւանաց վախճանեցաւ, եւ ես որ քաջալերս իսկ եատու նմա, նստիմ առ նմին կենդանի։

Կիւրոս վայր մի լռիկ արտասուս արկանէր, ապա բարբառէր. Սա, ով կին, գեղեցիկ վախճան կալաւ, քանզի յաղթութեամբ վախճանեցաւ. բայց դու առեալ զսոսա յինէն զարդարեա զնա. եկեալ հասեալ էր Գոբրիասն եւ Գադատասն, բազում գեղեցիկ զարդ բերեալ. եւ ապա ասէ. Գիտասջիր թէ եւ ոչ յայլոց եւս պատուոց անմեծար լինիցի. այլ եւ բազումք յիշատակարանքստ ձերում արժանի դրոշեսցեն եւ զենցեն ի վերայ նոցա որպէս ի դէպ իցէ առն քաջի, եւ դու, ասէ, ոչ թափուր լինիցիս այլ ես քեզ վասն զգաստութեանդ եւ ամենայն քաջութեանդ մեծարանս եդիցս, եւ կացուցիցս զոք որ տարցի զքեզ ուր ուրեք դու կամիցիս. միայն, ասէ, յայտ արա առ ի՛ոք ախորժիցես երթալ։ Եւ Պանթիա ասէ. Քաջալե-

րեաց, ասէ, ով Կիւրէ, ոչ թագուցիս
ի քէն թէ առ ո՞ կամիցիմ երթալ։

Իբրեւ զայս խօսեցաւ Կիւրոս ի բաց
չոգաւ ողորմեալ ի վերայ կնոջն թէ
յորմէ առնէ զրկեցաւ, եւ ի վերայ առնն
թէ որպիսի կին ելթող եւ ոչ տեսանի-
ցէ. իսկ կինն հրամայեաց ներքինեացն
ի բաց գնալ, մինչեւ, ասէ, ես աշխար
եդեալ լայցեմ զնա որպէս կամիցիմ.
եւ դայեկին ասէր թէ մնա, եւ պա-
տուէր եա նմա թէ յորժամ մեռանիցի,
զնա եւ զայրն միով հանդերձիւ պատի-
ցէ։ Իբրեւ շատ աղաչեաց դայեակն մի
առնել զայն, եւ ոչ ինչ օգուտ լինէր
եւ դժկամակ լեալ տեսանէր, նստեալ
զլալ հարկանել։ Նա, քանզի զդաշոյնն
յառաջագոյն պատրաստեալ էր, մը-
խեաց յանձն իւր, եւ զգլուխ իւր ի վերայ
բարձից առնն եդեալ մեռանէր, եւ դայ-
եակն սուգ առեալ զերկոսեան պատէր
որպէս պատուէր տուեալ էր Պանթիայ,

Կիւրոս իբրեւ զդայր զգործ կնոջն,
զահի հարեալ չոգաւ եթէ կարիցէ օ-
գնել ինչ։ Իսկ ներքինեացն տեսեալ
զնրան որ եղեն եւ երեք ներքինիք էին,
հանեալ եւ նոցա եւ զդաշոյնսն ին-
քեանք անձանց առնէին, կացեալք ի տե-
զուոջն յորում հրամայեաց նոցա. եւ
այժմ եւս ասեն թէ յիշատակարանն
կայ կարկառ լեալ մինչեւ ցներքինիսն
եւ ի վերայ վերնոյ արձանին առնն եւ

կնոջն անուանք դրոշմեալ կան սասրի դրով, եւ ի խոնարհ պատմին լեալ ե-ւ ի ս արձանս եւ ի վերայ սեանցն գրեալ

ՆԵՐՔԻՆԵԱՑ

Կիւրոս իբրեւ ժամ չոգաւ, զարմանայր ընդ կինն եւ աշխարեալ ի բաց գնայր, եւ հոգայր զնոցանէ որպէս ի դէպ էր, զի ամենեւին բարուքեանց հասանիցեն, եւ շիրիմ բարձրաբերձ շինեցաւ, որպէս ասեն։

ԳԼՈՒԽ Դ

ԱՊԱ ի մարտ պատերազմի ընդ միմեանս Կարիացիքն գրգռէին, զի բնակութիւնս յամուր տեղիս ունէին, եւ երկոքին կողմանքն կոչէին զԿիւրոս։ Բայց Կիւրոս ինքն կայր մնայր ի Սարդիացւոց աշխարհին, մենքենայս գործէր եւ խոյս, զի զչհնազանդելոցն զպարիսպսն խարխարեալ կործանեսցէ։ Զ.Զ-դուսիոս զայր պարսիկ ոչ անմիտ եւ ոչ անտեղեակ պատերազմի եւ ամենեւին իսկ առաքինի, առաքէ ի Կարիա տրեալ զօրս։ Եւ Կիլիկեցիք եւ Կիպրացիք մտադիւրագոյնս երթային ընդ նմա ի մարտ պատերազմի վասն որոյ ոչ առաքէր երբեք պարսիկ Կուսակալ Կիլիկեցւոց եւ ոչ Կիւպրացւոց, այլ բաւա-

կան լինէին բանակքն որ թագաւորէին. բայց առնոյր հարկ, եւ վասն զօրաց յորժամ պիտոյ լինէր, հրամայէր նոցա։

Եւ Աղուսեայ առեալ զզօրն ի Կաբաստան հասանէր, եւ յերկոցունց կողմանց Կարիացւոցն գային հասանէին առ նա պատրաստեալք ընդունել ի պարիսպն առ չարչոյ իւրեանց հակառակորդացն։ Իսկ Աղուսիոս առ երկոսին կողմանան զայս ինչ առնէր։ Արդար խօսիք, ասէ, ընդ որոց խօսէրն, պարտ է ասէ թագուցանել ձեզ ի հակառակորդաց թէ բարեկամք եղերուք, զի այնպէս յանպատրաստից ի վերայ անկանիցիք հակառակորդացն ձերոց. եւ աղաչէր զի հաւատք լինիցին, եւ Կարիացիք երդմնի լինէին առանց նենգութեան ընդունել զնոսա ի պարիսպն, եւ առ ի բարութիւն Կիւրոսի եւ Պարսից. եւ ես կամիմ, ասէ, երդնուլ առանց նենգութեան մտանել ի պարիսպսն եւ ի բարիս ընդունելեացն։

Իբրեւ զայս առնէր, ի նմին իսկ դիշերի ընդ երկոցունց դաշինս կռէր գաղտ յերկոցունց կողմանց, եւ ի նմին իսկ դիշերի մտանէր ի պարիսպն եւ առնոյր զամուր երկոցունց. եւ ի լուսանալ աւուրն, նստեալ ի միջի զօրօքն հանդերձ, կոչէր յերկոցունց կողմանց զաւազան։ Նոցա հայեցեալ ընդ միմեանս,

զայրացան ի միտ առեալ եթէ երկոքին կողմանքն խաբեցան։ Բայց Ադուսիոս խօսէր այսպէս։ Եւ ձեզ ով արք երդմնի եղէ առանց նենգութեան մտանել ի պարիսպն եւ յօգուտ ընդունելեացն. արդ եթէ սատակեմ զկողմն մի ի ձէնջ, համարիցիմ թէ առ չարւոյ Կարիացւոցն մտի։ Ապա եթէ խաղաղութիւն առնիցեմ ձեզ, եւ ամրութիւն երկոցունց կողմանցդ զերկիր ի գործ արկանելոյ, համարիմ վասն ձերոյ օգտի եկեալ։ Եւ արդ պարտ եւ պատշաճէ յօրէ աստի յայսմանէ բարեկամութիւն ընդ միմեանս խառնել, եւ անկասկած զերկիր գործել, տալ որդեակս եւ առնուլ ի միմեանց. եթէ արտաքոյ քան զայսոսիկ զրկել ոք մտաբերիցէ, նոցա եւ մեք եւ Կիւրոս թշնամիք լիցիմք։

Յայնմ հետեւ բաց էին դրունք պարսպացն, խճողեալ էին ճանապարհք յերթելոց առ միմեանս, լի էին գեղքն սատարօք, առհասարակ տօնս առնէին, խաղաղութեամբ եւ խնդութեամբ լի էր ամենայն երկիրն։ Յայնմ վայրի գային հասանէին ի Կիւրոսէ հարցանել եթէ զօրաց ինչ պէտք իցեն կամ մենքենայից։ Տայր պատասխանի Ադուսիոս եթէ զզօրսն որ ասա իցեն մարթի եւ այլուր ի գործ արկեալ վարել. եւ իբրեւ զայս ասէր զզօրսն հանէր եւ թողոյր պահապանս յամուրսն։ Բայց Կարիա-

ցիքն մատուցեալ աղաչէին կալ նմա անդէն, եւ իբրեւ ոչ կամեցաւ, առաքեցին առ Կիւրոս. եւ աղաչէին առաքել նոցա զԱդուսիոս շահապ։

Իսկ Կիւրոս ի ժամանակին յայնմիկ առաքեալ էր զԿ շտասպէս զի տարցի զօր ի Փռիւգաստան եւ յԱղղեսպոնտոս։ Այլ իբրեւ եկն Ադուսիոս, հրամայեաց նմա գնալ ուր Կ շտասպաս գնայցէ, զի առաւել հնազանդ լինիցին Կ շտասպայ յորժամ լսիցեն թէ այլ զօր մօտ հասեալ է։ Յոյնք որ զեղերբ ծովուն բնակէին բազում պատարագս տուեալ առ ի չընդունելոյ զխուժան ի պարիսպս, եւ յանձն առին հարկ հարկանել, եւ երթալ ի պատերազմ ուր Կիւրոս հրամայիցէ։ Իսկ թագաւորն Փռիւգացւոց կազմէր պատրաստէր զի կալցի զամուրսն եւ անսասցիցէ եւ այնպէս իսկ պատմէր։ Իբրեւ ի բաց կացին ի նմանէ հաղարապետքն եւ լոկ մնաց, անկաւ ի բուռն Կ շտասպայ, յանձն եղեալ Կիւրոսի։ Եւ Կ շտասպայ թողեալ յամուրսն ստուար պահապանս ի Պարսից մեկնեալ երթայր առեալ ընդ իւրոցն բազում հեծեալս եւ ասպարաւորս ի Փռիւգացւոց անտի։ Բայց Կիւրոսի պատուէր տուեալ էր Ադուսեայ, զի յորժամ հասցէ առ Կ շտասպէս, զայնոսիկ որ ի Փռիւգացւոց ընդ իւրեանս կամիցին ածել զինուք, եւ զայնոսիկ որ

մարտընչելն ցանկանայցեն, հանեալ ի նոցանէ զերիւարսն եւ զզէնս հրաման տալ պարսս առնուլ եւ գալ ետէպ զՀետ։

Եւ նոքա առնէին այնպէս։ Կիւրոս խաղաց գնաց ի Սարդիացւոց կողմանց. թողեալ բազում հետեւակ պահապանս ի Սարդիացւոց աշխարհին, առեալ եւ զԿրիւսոս, եւ բազում սայլս պէսպէս եւ ազգիազգի ընչից. մատեաւ եւ Կրիւսոս գրեալ ճշդիւ գտակաւ որ ինչ կայրն յիւրաքանչիւր սայլի, եւ զգիրն մատուցեալ տայր ցԿիւրոս եւ ասէր. Ոչայդ առեալ, ասէ, ով Կիւրոս, գիտասցես թէ ո՞ուղիղ աւանդեսցէ զոր բերէ եւ ո՞ ոչ։ Կիւրոս ասէ. Դու բարուք առնես ո՞ Կրիւսոս, զի տեսուչ լինիս. բայց նոքա՛ տանին զկարասին որք արժանի իցեն ունելոյ զնոսա. որպէս զի թէ գողանան ինչ, զիւրեանց գողասցին. իբրեւ զայս ասէր, տայր զգիրն բարեկամացն եւ իշխանացն զի գիտասցեն թէ ո՞յք յոստիկանաց անտի ողջ աւանդեսցեն նոցա եւ ոյք ոչ։

Տանէր եւ ի Ղիւդացւոց անտի զոր վառեալ տեսանէր զինուք եւ երիւարօք եւ կառօք, եւ դուն գործեալ առնել զամենայն որ ինչ համարէին թէ հաճոյ իցէ նմա, եւ զսոսա զինուք հանդերձ։ Իսկ որք ակամայ զՀետ եկեալ էին, զերիւարս նոցա Պարսից տայր, որք յառա-

ջնումն իսկ երթեալ էին ընդ նմա ի ճա-
կատս, եւ զզէնսն պրէր եւ բռնագա-
տէր զնոսա առնուլ պարսատիկս եւ դալ
զհետ, եւ զամենեսին իսկ զանզէնսն
յայնցանէ որ ձեռս ետուն ի նա ատիպէր
տագնապէր պարսաւորս լինել, զմտաւ
ածեալ թէ այն զէն ծառայութեան զէն
է։ Զի յորժամ խառն ընդ այլոց զօ-
րութեանց պարսաւորք հասեալ կայցեն
յոյժ օգուտ լինիցին։ Եւ ինքեանք առ-
անձինն եւ ոչ ամենեքին միանգամայն
պարսաւորքն բնաւ զդէմ ունիցին սա-
կաւաւորաց յարձակելոց զինու եւ զար-
դու։

Իբրեւ դիմեալ երթայր ի Բաբեղոն,
վանէր վկանդէր զՓռիւգացիսն որ ի մե-
ծի աշխարհին Փռիւգացւոց էին, վանէր
եւ զԴամիրս, հնազանդէր եւ զԱրա-
բացիս։ Յամենայն զինուց անտի սպա-
ռազէն վառէր հեծեալս ի Պարսից ոչ
ինչ սխալ ի չորից բիւրուց, եւ բազում
երիւարս ի դերեւոյ անտի տայր նիզա-
կակցացն ամենեցուն, եւ դայր հասա-
նէր յաշխարհն Բաբիղացւոց ածեալ
բազում այրուձի, եւ աղեղնաւորս եւ
տիգաւորս բազումս եւ պարսաւորս ան-
թիւ անհամար։

ԳԼՈՒԽ Ե

Իբրեւ առ Բաբելոն քաղաքի էր, Կիւրոս, կարգէր կացուցանէր զամենայն զօրսն զքաղաքաւն ապա ինքնին երթեալ շրջէր զքաղաքաւ բարեկամօք եւ նիզակակցացն յաւադօք, եւ յորժամ հայեցեալ տեսանէր զպարիսպն, պատրաստ լինէր ի բաց տանել ի քաղաքէ անտի զզօրսն։ Բայց մատուցեալ ոմն ի փախստէից անտի ասէր, թէ գուն գործեալ ի վերայ դիմիցեն յորժամ զզօրսն ի բաց տանիցիս։ Զի հայեցեալ ասէ, նոցա ի պարսպէ անտի, տկար եւ անզօր թուէր նոցա բանակս, եւ ընդ այնր չէն ինչ զարմանք։ Վասնզի յորժամ զյաղթ պարսպաւ պատիցի ճակատն, հարկ է թէ ի սակաւ ինչ թանձրութիւն լինիցի։

Արդ լուեալ զայն Կիւրոսի, կացեալ ի մէջ զօրացն իւրայովքն հանդերձ, պատուէր տայր ծայր ի ծայր յերկոցունց կողմանց վառեալքն պարզիցեն զճակատն եւ մեկնել ի կողմն ուր բանակն կայցէ, մինչեւ յերկուց կողմանց ի միմեանս եւ ի միջավայրսն եկեալ հասանիցեն ծայրքն։ Իբրեւ զայն ձեւ օրինակի կատարէր. որ կայինն վաղվաղակի համարձակագոյնք լինէին, զի կրկնակի ի թանձրութիւն եղեն, եւ որ մեկնէին, ըստ

նային օրինակի քաջալերեալք մեկնէին։ Օ՛ի իսկ եւ իսկ որ կայինն ի նոցանէ երթային մօտ առ թշնամիսն, եւ յորժամ եկեալ յերկոցունց կողմանց զծայրսն ի միմեանս խառնէին, բակ առեալ կային պնդակազմ, կէսքն քակեալք եւ պառակտեալք անդէն ի միմեանց վասն այնոցիկ որ յառաջոյ արձանացեալք ի տեղւոջն կային, ի միմեանս եկեալ մօտէին վասն յետնոցն

Ի սփռել տարածանել այնպէս ճակատուն, հարկ էր առաջնոցն եւ վերջնոցն քաջս եւ առաքինիս լինել, եւ ի միջի անդ զվատսն եւ զապաժամանս կարգել։ Եւ յորժամ այնպէս կայցէ կարգն եւ առ պատերազմ կազմ դտանիցի եւ ոչ փախչել իսկ կարիցէ։ Իսկ այրուձին եւ մերկքն ի թեւոց անտի, միշտ իսկ մօտ առ իշխանն, այնչափ զի թանձրանայր իսկ ճակատն կրկին։ Եւ ապա իբրեւ այնպէս խառնեալ կային, ոմն ոմն ի բաց մեկնէին մինչեւ չհասանէին նետքն ի պարսպէ անտի։ Իբրեւ ի նետիցն ապրեցան, դարձան. եւ զառաջինն սակաւ ինչ քայլս յառաջ մատուցեալ, ընդ վահանօք մտանէին եւ կային մնայէին ի պարիսպն եւ որչափ հեռանային, դոյնչափ խուն ինչ փոփոխէին։ Իբրեւ թուեցաւ թէ յամրի են միագունդ երթեալ ի վրանն հասանէին։

Իբրեւ բանակ հարին, ի մի վայր կոչէր Կիւրոս զաւագանին եւ խօսէր. Ընդ նիզակակիցք հայեցաք շուրջանակի ի քաղաքն, ոչ գիտեմ եթէ մարթիցի ոք զայնպիսի ամուր պարիսպս եւ բարձրաշէնս առնուլ ի մարտ մատուցեալ. բայց որչափ բաղում իցեն մարդիկս որ կայցեն ի քաղաքի անդ, քանզի ոչ ելանեն պատերազմել, դոյնչափ վաղվաղակի սովով ըմբռնեսցուք զնոսա։ Եթէ ոչ այլ ինչ պայման կարիցէք ասել, այսպէս պարտ է պատեալ պաշարել զարան որպէս եւ ասացի իսկ։

Արիւանտաս ասէ. Դիտեմ, ասէ, այս ոչ ընդ մէջ քաղաքիդ հոսէ, որ աւելի քան զերկու վտաւան լայնութիւն է։ Ասէ Գոբրիաս. Եւ խորութիւն այնչափ է, որչափ թէ երկու արք ի միմեանց վերայ կայցեն չկարիցեն կալ ի վերայ ջուրցն։ Զինչ զի գետովն եւս քաջ ամուր է քաղաքն քան եթէ պարիսպքն։ Եւ Կիւրոս ասէ. Ոչ այս, ասէ, ով Արիւանտա թողցուք որ առաւել քան զմեր կարս իցէ. պարտ եւ պատշաճ է ձեզ վաղվաղակի չափել իւրաքանչիւր զանցնիւր բաժինն եւ փոս լայն եւ խոր փորել, զի ոակաւաւոր պահապանաց պէտք լինիցին եւ ոչ բազմաց խափանել։

Ապա չափեալ շուրջանակի զպարիսպքն, թողոյր ի դետոյ անտի վայրս

որչափ բաւական էր մեծամեծ մարտկոցացն, փորէր ատի եւ անտի պարսպին փոս մեծ, եւ զհողն ընկենոյին առ իւրեանս, եւ նախ բրգունս ի վերայ գետոյն կազմէր, արմաւենիս արկեալ զհիմունսն, զի ոչ փոքր քան զարտավար բարձրութիւն էր արմաւենեացն, քանզի ամաւենիք եւս բարձրաբերձ քան զսորա բուսանին երկայնութեամբ։ Զի արմաւենիք յորժամ ի ծանրութենէ ճնշիցին, ի վեր կոյս կորացեալ գոգին իբրեւ զեշս համեստեալս։ Եւ յայն սակս իսկ արկանէր զնոսա ի ներքոյ, զի կարծեցուցանիցէ պստրաստ լինել պաշարել զքաղաքն. զի թէ եւ գետնդիմեսցէ ի փոսն մի քակեսցէ զաշտարական։ Պանգնէր եւ այլ եւս բազում աշտարակս ի վերայ կարկառին, զի բազում պահապանաց տեղիք իցեն։

Նոքա զայն գործէին, եւ որք ի պարսպի անդ էին ծաղր առնէին զպաշարմամբն, որպէս թէ աւելի քան զքսան ամաց համբարս ունիցին. զայս լուեալ Կիւրոսի, զզօրն յերկոտասան բաժինս բաժանէր, զի մի մի ամիս ի տարւոջն իւրաքանչիւր բաժինն պահեսցէ։ Իսկ բաբեղացւոց զայն լուեալ եւս առաւել ծաղր առնէին, քանզի զմտաւ ածէին եթէ Փռիւգացիք եւ Ղիւկիացիք եւ Ասրաբացիք եւ Գամիրք պահեսցեն զնոսա, զորոց զամենեցունց համարէին

մտադիւրութեամբ լինել ընդ նոսա եւ
ոչ ընդ Պարսիկսն. եւ փոսք փորեալ
եւ պեղեալ էին։ Իբրեւ ազդ եղեւ Կիւ-
րոս թէ տուն է ի Բաբեղոն, յորում ա-
մենայն Բաբեղոնացիքն զողջոյն իսկ ըզ-
ցայգն ուտեն եւ ըմպեն, անդէն ի նմին
գիշերի վաղվաղակի իբրեւ խաւարեղեւ,
առեալ բազում մարդիկ, բանայր զփո-
սըն ի գետ անդր։ Իբրեւ այն եղեւ ան-
ցանէր ջուրն զցայգ ընդ փոսսն. իսկ
ճանապարհ գետոյն գնացք մարդկան
լինէր։

Իբրեւ եղեւ այնպէս գետն, պատու-
էր տայր Կիւրոս հազարապետացն Պար-
սից հետեւակաց եւ հեծելոց ընդ եր-
կուս զհազարսն զատուցանել եւ առնա
հասանել, եւ այլոց նիզակակցաց հրա-
մայէր երթալ ստէպ զհետ նոցա ճա-
կատեալ որպէս զառաջինսն. եւ նոքա
վաղվաղակի հասանէին. նորա հանեալ
անդէն ի ցամաք անդր գետոյն զսպա-
սաւորսն եւ զհետեւակս եւ զհեծ-
եալս, հրամանն տայր դիտել եթէ գնացք
իցեն հուն գետոյն. իբրեւ զբոյց եառուն
եթէ գնացք են, յայնմ վայրի կոչեցեալ
զզօրավարս հետեւակացն եւ հեծելոց
խօսէր այսպէս։

Արք բարեկամք, գետդ եառ մեզ ճա-
նապարհ ի քաղաք այդր, եւ մեք քա-
ջալերեալ մտցուք, մի ինչ երկիցուք ի
ներքս անդ, զմտաւ ածեալ եթէ նոքա

յորոց վերայ երթամք այնք են, յորոց մեք, յորժամ զօրաւիգն օգնականութեան անձանց ունէին եւ ամենեքին սկէին արթունք եւ զուարթունք եւ սպառազէն վառեալ ճակատեալ կային յաղթեցաք։ Այժմ դիմեալ երթամք ի վերայ նոցա, ի ժամու յորում բազումք ի նոցանէ ի քուն կան եւ նիրհեն եւ շատք իսկ ի նոցանէ արբեանն, եւ ամենեքին անկարգք առանց ճակատելոյ են։ Եւ յորժամ զգայցեն զմէնջ եթէ ի ներքս եմք, յոյժ իսկ առաւել քան այժմ անպիտանք լինիցին ի սքանչանալոյ անտի։ Ապա թէ զայս որ ասիցէ զմտաւ, զումէ ասենն թէ ահագին իմն է այնոցիկ որ ի քաղաք ուրեք մտանիցեն, թէ մի ի վերայ տանեացն ելեալ աստի անտի նետս արձակիցեն այնու մանաւանդ քաջալերեցարուք. զի եթէ ելանիցեն ոմանք ի վերայ ապարանիցն, ունիմք մեք զօրաւիգն օգնականութեան զդիսն Աֆեստոս. եւ դիւրին առ այրել են արտաքին հրապարակք դրանց նոցա, զի յարմաւենեաց գործեալ են դրունքն եւ ի նաւթի ծեփածոյ. եւ մեք բազում ջահս ունիմք որ վաղվաղակի իսկ բազում հուր լուցանեն, եւ յաճախ այրելիս եւ խծուծ, որ վաղ բազում բոց յորդեալ տոչորիցեն. որպէս զի հարկ իցէ կամ փախչել այնոցիկ որ ի վերայ ապարանիցն

իցեն կամ վաղվաղակի այրել։ Այլ առէք զէնս, առաջնորդեցիք ձեզ աստուածովքն, եւ դուք ասէ, ով Դադատա եւ Գովբրիա, զճանապարհն ցուցէք, քանզի հմուտ էք. եւ յորժամ ի Ներքս մխիցիմք, փութանակի տարայք յարքունիսն։ Ասեն գովբրիանքն թէ չէ ինչ զարմանալի, զի եւ դրունք արքունի ապարանիցն բաց են, զի ամենայն քաղաք ի խրախութեան է ի գիշերիս յայսմիկ. բայց պահապանացն պատահիցեն առաջի դրանցն քանզի հանապազ անդէն կուրդեալ կան։ Ասէ Կիւրոս. Զէ պարտ դանդաղել այլ երթալ զի առանց պատրաստութեան ըմբռնիցեմք զարան։

Իբրեւ այս ամենայն ճառեցաւ, յուզի անկեալ երթային, եւ ի պատահելոցն ոմանք հարեալ մեռանէին եւ ոմանք միւսանգամ փախստեայ ի Ներքս դիմէին եւ այլոց բողոք բարձեալ դոչէին։ Իսկ գովբրիանքն ընդ նոսա աղաղակէին որպէս թէ եւ նոքա զեղխեալ իցեն եւ երթեալ հասանէին զարքունի ապարանօքն. եւ որք ընդ Գովբրիայն եւ ընդ Դադատայն կարդեալ էին գտին աղխեալ զդրունս ապարանիցն արքունի. իսկ որոց վասն պահապանացն հրաման առեալ էր, հասանէին անկանէին ի վերայ պահապանացն որոց սաստիկ արբեալ էր, եւ

վաղվաղակի իբրեւ թշնամիք պատա-
հէին նոցա։ Իբրեւ գոչիւն եւ ոտնա-
ձայն լինէր, եւ աղմուկն ի ներքս լսելի
լինէր, հրաման տայր թագաւորն տեսա-
նել թէ զի՞նչ իրք իցեն, եւ բացեալ
ոմանց զդրունսն ընթացեալ երթային
արտաքս։

Իսկ գաղատեանքն իբրեւ տեսին բաց
զդրունսն, ի ներքս մխեցան, եւ զհետ
մտեալ նոցա մինչ դեռ միւսանգամ ի
ներքս դիմէին եւ հարկանէին եւ հա-
սանէին ի թագաւոր անդր. գտանեն
զնա յոտն կացեալ եւ ունէր ի ձեռին
իւրում զդաշոյնն մերկացեալ. զնա բա-
զումք որ ընդ Գաղատայ եւ ընդ Գով-
բրիայ էին ձերբակալ առնէին. եւ որ
ընդ նմայն էին սատակէին, ոմն ընդ-
դէմ դառնայր, ոմն փախուցեալ ելա-
նէր եւ այլ ոմն ապրէր որով իւիք կա-
ցող էր։ Կիւրոս զգունդս հեծելոցն ի
ճանապարհն առաքէր եւ պատուէր
տայր զի զորս արտաքոյ ըմբռնիցեն,
սպանանիցեն. եւ որ գիտիցեն ասորե-
րէն, պատուէր տացեն որոց յապա-
րանսն իցեն ի ներքս մնալ։ Իսկ եթէ
արտաքոյ ոք ըմբռնիցի, մեռցի։ Եւ
նոքա առնէին այնպէս։ Գային հասա-
նէին Գաղատաս եւ Գովբրիաս, եւ նախ
դիցն երկիր պագանէին, զի առին զքէն
վրիժու պղծագործ թագաւորին, եւ
ապա փարէին զոտիւք եւ զձեռօք Կիւ-

րոսի, ի խնդութենէ զարատսուս հա-
րեալ, եւ ուրախ լինէին։

Իբրեւ տիւ եղեւ, եւ զգացին որ ի
միջնաբերդին էին թէ առաւ քաղաքն
եւ մեռաւ Թագաւորն, զամուրան ի
ձեռս տային։ Կիւրոս առնոյր անդէն
զմիջնաբերդն եւ առաքէր ի նոսա պա-
հապանս, եւ Թոյլ տայր զդիակունսն
օծանել որոց վայել իսկ էր. եւ քա-
ղաքացն հրաման տայր քարող կարդալ
ամենայն Բաբիղացւոց զզէնսն ի բաց
տալ. իսկ ուր գտանիցին զէնք ի տունս
տունս, ամենեքին որ յապարանս անդ
իցեն մեռանիցին։ Եւ նոքա բերէին
տային. Կիւրոս դնէր զնոսա յամուրան
զի պատրաստ կայցեն եԹէ պիտոյ ինչ
երբեք լինիցին։

Յորժամ այդ ամենայն ի գլուխ ե-
լանէր, նախ զմոգսն կոչէր, քանզի քա-
ղաքն առաւ, եւ հրամայէր նուէր դիցն
եւ մեհեանս ընտրել. եւ յայնմ հետէ
տայր նոցա եւ ապարանս, զորս եւ կը-
ցորդս իսկ համարէր իրացն վճարելոց։
Այնպէս բաշխէր զի որ ընտիրն էր,
այն լաւացն տացի. եւ եԹէ համարես-
ցի ոք Թէ սակաւ ինչ առ, հրամայեաց
գալ եւ յայտ առնել։ Պատուէր տայր
Բաբիղացւոց զերկիր ի գործ արկանել
եւ զհարկսն տալ, եւ պաշտօն հարկա-
նել այնոցիկ որոց եղեւ յանձն իւրա-
քանչիւր ոք ի նոցանէ։ Իսկ ցՊարսիկսն

եւ ցնոսա որ կցորդն էին եւ ի նիզակակցաց անտի որ կամիցին մնալ առ նա, պատուէր տայր իբրեւ տեսաւ ընդ այնոսիկ զորս ըմբռնեցին, խօսել։

Յայնմ հետէ ցանկայր Կիւրոս, զի եւ ինքն կազմիցէ որպէս վայել իցէ առն թագաւորի. հաճոյ թուեցաւ նմա զայն բարեկամացն խորհրդով առնել, զի մի նախանձ անկանիցի, եւ անօսր երեւիցի եւ մեծապայծառ եւ լուսաւոր։ Արդ այսպիսի ինչ հայթայթանօք հնարէր. ընդ առաւօտն կացեալ ի տեղւոջ ուրնմայն պատեհ թուէր, ընդունէր զնա որ կամէր խօսել ինչ ընդ նոսա եւ պատասխանի տուեալ արձակէր։ Արդիւն իբրեւ գիտացին եթէ ընդունի, եկեալ հեղեալ զեղեալ ամբոխն զմիմեամբք ելանէր վասն մօտագոյնս մատչելոյ, եւ բազում աղմուկ եւ կռիւ էր, եւ սպասաւորքն որչափ ձեռնհաս էին ընտրէին եւ ապա թոյլ տային։

Երբեմն յորժամ ոմն ի բարեկամաց անտի զամբոխն ի բաց մղեալ՝ երեւէր, կարկառեալ Կիւրոսի զձեռնն, առ ինքն առնոյր զնոսա եւ խօսէր այսպէս. Արք բարեկամք, դադարեցէք բաւեցէք, մինչեւ զամբոխն պարզեսցուք, եւ ապա հանդարտութեամբ ժողովիցիմք։ Այսին մնային բարեկամքն եւ ամբոխն եւս քան զեւս խռնէր, մինչեւ ճեպեաց երեկոյն մինչ չեւ պարապեալ նորա ժո-

ղովել առ բարեկամն։ Ապա ասէ Կիւ-
րոս. Ապաքէն ժամ է, ասէ, ով արք,
այժմ ի միմեանց մեկնելոյ, վաղիւ վա-
ղորդայն եկայք, զի եւ ես կամիմ խօ-
սել ինչ ընդ ձեզ, զայն լուեալ բարե-
կամացն ուրախութեամբ ճեպեալ եր-
թային, տուեալ տոյժս պատժոց յա-
մենայն կարեւորն պիտոյից եւ ապա
այնպէս ննջեցին։

Բայց ի վաղիւ անդր եկեալ հասեալ
կայր ի նոյն տեղի, եւ եւս աւելի բազմ-
ամբոխ ժողովք մարդկան բակ առեալ
կային որ կամէին մերձենալ եւ կանխա-
դոյն քան զբարեկամն հասեալ էին։
Կիւրոսի կարգեալ կացուցեալ շուրջ
զիւրեւ շուրջանակի ի սուսերաւորացն
Պարսից, դուռ եւ պատուէր տայր մի
ումեք հուպ լինել, բայց բարեկա-
մացն եւ իշխանացն Պարսից եւ նի-
զակակցացն։ Իբրեւ նոքա ի մի վայր
եկին, խօսէր ընդ նոսա այսպէս։

Արք բարեկամք եւ նիզակակիցք
չկարեմք մեղադիր ինչ դիցն լինել, թէ
զոր ինչ խնդրեցաք, մինչեւ ցայժմ
չհանին զայն ի գլուխ։ Այլ եթէ այս-
պիսի ինչ իցէ զմեծամեծն վճարել,
որպէս զի չիցէ մարթ ոչ զանձամբ պա-
րապել եւ ոչ ընդ բարեկամաց ուրախ
լինել, եւ ես հրաման տամ ընդ այն-
պիսի փառաւորութիւն ուրախ լինել։
Այ երէկ, ասէ, ի միտ առէք, զի վա-

զորդայն սկիզբն արարեալ լսելոյ մարտուցելոցն, ոչ հանգեաք յառաջ քան զերեկոյն, եւ այժմ տեսանեմք զնոսա եւ զայլս եւս բազումս յերեկի եկելոցն զի մեզ աշխատութիւն հասուցանեն։ Արդ եթէ ի վայր ոք քան զնոսա զանձն ունիցի, համարիմ եթէ սակաւ ինչ ձեզ ընդ իս հաղորդութիւն լինիցի եւ փոքր ինչ իմ ընդ ձեզ տղերս. բայց զիմն ես ճարտար գիտեմ եթէ չիք իմ ընդ ձեզ այնուհետեւ հաղորդութիւն։ Դուս, ասէ, եւ այլ ինչ ծաղու իրս ածեմ զմտաւ. զի ես ընդ ձեզ որպէս ի դէպ իցէ այնպիսի միտս ունիմ։ Յայնցանէ որ շուրջն կան կամ զմի ոք ճանաչեմ կամ ոչ զոք. եւ նոքա ամենեքին այնպէս պատրաստեալ են, զի եթէ յաղթեսցեն ձեզ մղելով, յառաջագոյն իսկ քան զձեզ զոր ինչ կամինն, վճարիցեն առ իս. բայց ես արժան համարէի, եթէ կամիցի խնդրել ոք ինչ յինէն, պաշտօն առնել ձեզ իմոց բարեկամցս աղաչեցեալ վասն նուաճութեան։ Արդ թերեւս ասիցէ ոք, թէ հիմ իսկզբանէ զայն ոչ կազմէի, այլ ցուցանէի զանձն ի միջի։ Զի գիտէ եթէ այնպիսի իսկ են պատերազմացն իրք, զի չիցէ արժան յեռնել իշխանին ոչ առ գիտել զոր պարտն իցէ գիտել, եւ ոչ ի գործել զոր ինչ դիպող իցէ գործել։ Դու եթէ անօսր

երեւեսցին զօրավարքն, եւ այսպէս համարէի եթէ զբազում իւիք զոր պարտ իցէ վճարել, զանց առնիցեն։ Բայց այժմ քանզի աշխատութեան պատերազմն հանդեաւ, այսպէս թուի ինձ թէ եւ անձն իմ արժան համարի հանգրստեան իմիք հասանել։ Ընդ քանզի վարանեալ կամ թէ զինչ ինչ հասանիցէ առնել, զի ի հանգստեան իցեմք եւ մեք եւ այլքն որոց պարտ իցէ մեզ տածիչս լինել, խրատ տացէ զինչ ոք օգուտ համարիցի։

Կիւրոս զայս ձեւ օրինակի խօսէր. յետ նորա յոտն կացեալ Արտաւազայ որ ասացն երբեմն թէ համազգի իցէ, եւ ասէ. Բարեւք գործ գործեցեր, ասէ, ո Կիւրոս, եւ սկիզբն արար բանիցն։ Զի ես, մինչ դու համօրէն մատաղ էիր հասակաւ, ցանկացայ բարեկամ լինել, եւ իբրեւ տեսի զքեզ ոչ ինչ կարօտեալ իւիք, տաղտկայի մատչել առ քեզ. իսկ իբրեւ ինեւ կարօտեալ դիպեցար փութով յօժարութեամբ պատմել Արաց զբանս Կիաքսարեայ, զմտաւ ածի եթէ այնու յօժարութեամբ օգնական քեզ լինիցիմ, ընտանի լինիցիմ քո, եւ համարձակ իցէ ինձ խօսել ընդ քեզ որչափ ժամանակս եւ կամիցիմ եւ զայն ամենայն վճարեցի, մինչեւ եւ քո իսկ յարգեալ դովել։ Յետ այնորիկ Ղկանացիք զա-

ուաջինն մեր բարեկամք եղեն մինչ
չգոյր զօրաւիգն օգնականութեան, որ-
պէս զի միայն ոչ յանձինս ըստան-
ձնեալ շրջեցուցանէաք առ գութն։ Եւ
յետ այնորիկ իբրեւ առաւ բանակ թըշ-
նամեացն, չգոյր քեզ պարապ զինեւ
գալ, եւ ես ներէի քեզ։ Ապա Գո-
բրիաս բարեկամ եղեւ մեր եւ ես ու-
բախ լինէի եւ ապա Գադատաս, եւ
դժուարին էր այնուհետեւ գալ խօսել
ընդ քեզ։ Բայց իբրեւ Շակք եւ
Կադուսիացիք զօրաւիգն օգնականու-
թեան եղեն յիրաւի իսկ պարտ եւ
պատշաճ էր պաշտօն հարկանել եւ ո-
ղբել զնոսա. քանզի եւ նոքա ի քո
սպասաւորութեան կային։ Իբրեւ ե-
կաք միւսանգամ ուստի ելեալն էաք
տեսեալ զքեզ զի զերիւաբօք եւ զկա-
ռօք եւ զմենքենայիւք էիր, համարէի
թէ յորժամ յայնմ ամենայնէ դա-
սարկասցիս, ապա զմեզ դայցես։
Բայց իբրեւ անդէն գուժկան հասա-
ներ գոյժ տալ թէ ամենայն մարդիկ ի
մեր վերայ գումարեցան, ի միտ առի
թէ այն եւս մեծ է։ Գիտէի թէ յոր-
ժամ այն ամենայն բարւոք ի գլուխ ե-
լանիցէ, բազում իմ եւ քո հաղորդու-
թիւն լինիցի։ Այժմ յաղթեցաք մե-
ծի պատերազմին եւ զՍարդիացիս եւ
զՍրիւսոս ընդ ձեռամբ նուաճեալ ու-
նիմք եւ զԲաբիղոն առաք եւ զամե-

նայն վանեալ վկանդեցաք։ Բայց ի Մի՛հր երդուեալ է իմ, երէկ եթէ ոչ ընդ բազմաց ոդորէի, չկարէի իսկ մատչել առ քեզ։ Բայց իբրեւ դու ընկալար զիս, եւ հրամայեցեր կալ մնալ առ քեզ, ընդ քեզ անսուաղ եւ առանց ջրոյ զօրն ողջոյն կայի։ Այժմ եթէ մարթ ինչ իցէ թէ որ ընտիրքս իցեմք, բազում մասն ընդ քեզ ունիցիմք, բարւոք է. ապա թէ ոչ՝ խօսեցայց ես առ ի քէն, թէ ամենեքին մեկնեալ ի բաց զնայցեն ի քէն, բաց ի մէնջ որ իսկզբանէ բարեկամք իցեմք։

Յայնժամ ծիծաղեցաւ Կիւրոս եւ այլք եւս բազումք։ Յարեաւ Բրիւսանտաս պարսիկ եւ ասէր այսպէս. Յառաջն ով Կիւրոս, անդէն յիրաւի եւ յարժանի յերեւելւոջ զանձն ցուցանէիր վասն որոց ասացերդ. զի չէր ինչ քեզ պիտոյ ողբել զմեզ, քանզի մեք եւ վասն մերոց իսկ անձանց գայաք. եւ պիտոյ էր ամենեւին բազմութիւն ստանալ զի յանձին ունիցին յօժարութեամբ վաստակել եւ վշտանալ ընդ քեզ։ Այլ այժմ քանզի ոչ զայն եւ եթէ ունիս, այլ եւ զայլս եւս մարթես ստանալ, զորս ի դէպ համարիցիս ստանալ. արժան է զի ապարանք լինիցին քո։ Զո՞ր վայելչութիւն իշխանութեան վայելիցես, եթէ միայն անմասն իցես ի մերմէ զաւառէ, քան զոր սրբազոյն աշ-

խարհ ի մարդիկ չէք եւ ոչ հեշտ, եւ ոչ քան զնոյն ընտանեգոյն երկիր գոյ։ Դ։ մեզ իսկ, ասէ չիցէ ի դէպ ամաչել, եթէ զքեզ տեսանիցեմք արտաքոյ ժուժկալ եղեալ եւ մեք յիւրաքանչիւր տունս գնայցեմք եւ առաւել քան զքեզ թրուիցիմք. իբրեւ զայս խօսեցաւ Պրիւսանտաս, բազումք յանձն առնոյին ըստ բանիցն այնոցիկ հաճեալք եւ հաւանեալք։

Ապա գայ մտանէ յարքունիսն, եւ զԱրդիացւոց կարասին անդէն որոց բերեալն էր, տային։ Իբրեւ եմուտ Կիւրոս նախ Աստեայ զոհս մատուցանէր եւ ապա Աբրամազդայ թագաւորի, եւ որ այլում ումեք դից մոգքն պատուիրէին։ Զայս արարեալ, ապա զայլ եւս իրս սկսաւ յարդարել։ Զմտաւ ածեալ եթէ ձեռնամուխ լինի բազում մարդկան իշխել, եւ կամի բնակել ի մեծի եւ ի հոյակապ քաղաքի քան զամենայն քաղաքս, եւ թէ այնպիսի քաղաք զի քան զայն քաղաք թշնամի մարդոյ չէք. զայս ածեալ զմտաւ գիտաց թէ անձնապահաց պէտք իցեն։ Զան զի գիտէր թէ ոչ ուրեք մարդիկ առաւել դիւրին առ ըմբռնել են, քան ի կերակուրս եւ յըմպելիս եւ ի լուանալն եւ յընկողմանելն եւ ի քունն լինել. դիտէր տեսանէր թէ կարիցէ զոմանս ի հաւատարմացն զիւրեւ ածել։

Զմտաւ ած թէ չիք ոք հաւատարիմ այր որ զայլ ոք քաջ սիրիցէ քան զայն որ պահպանութեան կարօտ իցէ։ Արդ զայնցանէ որ որդեակս ունէին կամ կանայս կամ դուստս, գիտաց եթէ ի բնէ իսկ բռնադատին առաւել սիրել զնոսա։ Եւ զի ետես զներքինիսն յայնմ ամենայնէ անկեալ, զմտաւ ած թէ առաւել իմն համարիցին նոքա զնոսա որք կարօղքն իցեն մեծարանս առնել եւ ձեռնտու լինել եթէ զրկեալ իւիք իցեն եւ պատիւս եւ մեծարանս նոցա շնորհել. եւ ոչ կարծէր իսկ զումեքէ թէ անցուցանիցէ զնովաւ երախտիս առնելով նոցա։ Զանդերձ սոքիմբք, քանզի անմեծարքեն ներքինիքն առ յայլոց մարդկանէ, եւ յայն սակս իսկ տեառն օգնականութեամբ կարօտ են։ Քանզի չիք իսկ ոք որ արժան համարիցի ամենայնիւ քան զներքինին առաւելուլ թէ ոչ այլ ինչ ազնիւ գործ վճարիցէ։ Զոր հաւատարիմ տեառնն իցէ չէ արգել ներքինւոյ յաւադութիւն հասանել։

Իսկ զոր կարծիցէ ոք թէ ներքինիքն անզօրք են, նա չգրէր զայն ինչ, եւ նշանակ ընծայանայր նմա եւ յայլոց եւս անասնոցն, զի ամենի երիւարք մալեալք ցածնուն ի քասքնելոյն եւ ի խայտալոյ, բայց քաջք են եւ պատերազմօղք. եւ ցուլք յորժամ մալեցին ի մեծամտելոյ եւ յանսաստն գազա-

նութենէ զիջեալ ցածնուն, բայց յուժ-
գնութենէ չանկանին եւ ի գործոնն լի-
նելոյ. եւ շունչ ըստ նմին օրինակի դա-
դարեն զտեարսն թողուլ յորժամ մա-
լեցին, եւ առ պահպանութիւն եւ յոր-
սրս չառնին ապաժամանք։ Նոյնդունակ
զգօնագոյնք լինիցին եթէ յայնմ ցան-
կութենէ անկանիցին, բայց ոչ դան-
դաղեալք ի հրամանն եւ ոչ դոյզն հե-
ծեալք են, եւ ոչ դոյզն աղեղնաւորք,
եւ ոչ դոյզն մեծարեալք պատուով։

Եւ գուշակաւորք ի պատերազմունսն
լինին եւ յորս, եթէ ունին հակառա-
կութիւն յանձինս. իսկ զհաւատարիմն
լինելոյ ի տերանցն մեռանել բազում
անգամ զհանդէս ցուցին. զի ոչ ոք
գործ հաւատարիմ եցոյց ի տերանցն
վիշտս քան զներքինիսն։ Եւ եթէ
նուազեալ ի մարմնոյ զօրութենէ կար-
ծիցեն, երկաթն ի պատերազմի զանզօրսն
հզօրացն հանգոյնս կատարէ։ Այս
ածեալ զմտաւ սկիզբն ի դռնապանացն
առնէր եւ զամենայն պաշտօնեայսն որ
զանձամբ էին առնէր ներքինիս։

Զմտաւ ածեալ թէ չէ բաւական
այն պահպանութիւն առ բազմամբոխ
ժողովս թշնամեացն, դիտէր տեսանէր
զոմանս հաւատարմագոյն քան զայլսն զի
կացուցանիցէ պահապանս զարքունեաց-
քին։ Արդ քանզի գիտէր թէ որ ի Պար-
սից աշխարհին են, չարաչար կեանս կե-

ան առ աղքատութեան տառապա-
նաց, եւ աշխատութեամբ վասն ինքնա-
գործոն լինելոյ, զմտաւ ածելիք նոքա
առաւել կամիցին կալ առ իւր։ Արդ առ-
նու նա ի նոցանէ բեւր տիգաւոր որշուրջ
զցայգ եւ զցերեկ պահէին յարքունիսն
յորժամ ի ներքս դադարեալ կայր. եւ
յորժամ ելանիցէ ուրեք, ասսի եւ ան-
տի կարգեալ տողեալ երթայցեն։ Խոր-
հեցաւ թէ ողջոյն իսկ Բաբեղացւոց աշ-
խարհին պարտ է բազում պահապանս
կացուցանել, թէպէտ եւ ինքն անդէն
դիպիցի, թէպէտ եւ դէմ եղեալ տա-
ղաղէմ ի տար աշխարհ երթայցէ. կա-
ցոյց եւ ի Բաբեղոնի պահապանս բա-
զումս. եւ վարձս նոցա Բաբիղացւոցն
հրամայէր տալ, զի կամէր իմն զնոսա
թէ առանց պաճարանաց իցեն, զի յան-
արգութիւն հասեալ հպատակագոյնք
լինիցին։

Պահն որ զնովաւ էր եւ որ ի Բաբի-
ղացւոց աշխարհին կացուցաւ, ցայժմ
նոյնպէս կայ պահի։ Զմտաւ ածեալ
թէ զիարդ եւ որգունակ կայցէ ի հաս-
տի ամենայն իշխանութիւնն, եւ այլ եւս
ի նոյն հարստութիւն յաւելցի, խորհե-
ցաւ թէ վարձկանքն այնոքիկ ոչ եթէ
այնչափ ազնուագոյնք են քան զամե-
նայն հնազանդեալսն, որչափ նուազա-
գոյնք իցեն։ Գիտաց թէ զքաջսն առ
իւր պարտ է ունել որ տայցեն նմա իշ-

խել աստուածովքն, եւ թէ պարտիսկ է հոգալ թէ մի յառաքինութեան հրահանգաց հանդիցեն։ Եւ զի մի հրաման տալ կարծեցուցանիցէ, այլ զի ինքեանք յանձանց իսկ իմացեալ թէ նոյն լաւ է, այնպէս կանխեալք զառաքինութենէ փոյթ յանձին ունիցին, ժողովէր զպատուակիցսն եւ զամենեսին որ աւագքն էին եւ պիտանացուք թըւէին կցորդս վաստակոցն եւ բարութեանցն լինելոյ։ Եւ իբրեւ ժողովեցան խօսէր այսպէս զսոյն ձեւ օրինակի բանից։

Ամբ բարեկամք եւ պատերազմակիցք, բազմապատիկ գոհութիւն դիցն, զի ետուն մեզ որոց արժանին համարէաք։ Վասնզի ունիմք այժմ երկիր բազում եւ առատ, եւ են որ ի գործ տրկեալ զերկիր լինիցին մեզ համբարակք. ունիմք եւ ապարանս եւ ինոսին կազմածս եւ ոչ ոք ի ձէնջ որ զայն ամենայն ունիցի համարիցի զօտարին ունել. քանզի օրէնք յաւիտենականք են յամենայն մարդիկ, թէ յորժամ քաղաք թշնամեաց առցի, առնլեացն են եւ մարմինք որ ի քաղաքի անդ իցեն եւ ինչք. եւ արդ ոչ ապիրատութեամբ ունիցիք զոր ինչ ունիցիքն, այլ մարդասիրութեամբ ոչ հանէք եթէ թողէք ինչ ունել նոցա։

Բայց վասն իրացն որ յետ այսորիկ իցեն, ես այսպէս ածեմ զմտաւ եթէ

յուղութիւն եւ յանպիտանութիւն զառածանիցեմք եւ ի չարաց մարդոց անձընդիւրութիւն, որ համարիցին թէ վաստակելն թշուառութիւն է, եւ զանվաստակ կեանսն կեալ՝ դիւրութիւն, վաղվաղակի անարդք եւ անպիտանք անձանց լինիցիմք, եւ երագ երագ յամենայն իսկ ի բարութեանց անկանիցիմք։ Վասնզի չէ բաւական արս առաքինիս լինել, առ առաքինիս լինելոյ մինչեւ ցվախճան, եթէ ոչ իսպառ ոք զառաքինութենէ փոյթ առնիցէ։ Այլ զոր օրինակ այլ եւս ճարտարացն աբուեստքն եթէ անփոյթ առնիցին փոքրագինք լինիցին, եւ քաջ մարմինք, յորժամ ի դիւրութիւն ոք հատանիցի, յոռանան. ըստ նմին օրինակի եւ ցածութիւն եւ ժուժկալութիւն եւ ուժգնութիւն, յորժամ զհրահանգս ոք նոցա յանձնէ մերժիցէ, այնուհետեւ միւսանգամ յոռութիւն եւ յանշահութիւն կործանիցի։

Եւ արդ պարտ եւ պատշաճ է եւ ոչ ի մօտաւոր հեշտականութիւնն ընթանալ խառն ի խուռն։ Վասնզի մեծ իմն գործ համարիմ իշխանութիւն մի յօրինել, եւ եւս իմն մեծ, պահել զիշխանութիւնն. զի առնուլն բազում անգամ եւ այնմ որ ի վսեր եկեալ յանդգնիցի, դէպ լինի. բայց զառեալն ունել յակաստանի, ոչ այնուհետեւ առանց

զգաստութեան եւ ոչ առանց ժուժ-
կալութեան եւ ոչ առանց բազում հո-
գաբարձութեան լինիցի։ Եւ մեզ որ
զայս ամենայն գիտեմք, այժմիկ պարտ
եւ պատշաճ է եւս առաւել յառաքի-
նութիւն թեւակոխել, քան մինչ չեւ
մեր ստացեալ զբարութիւնն. ի միտ
առեալ թէ յորժամ բազում ինչ ոք
ունիցի, առաւել չարակնիցեն եւ նեն-
գիցեն եւ թշնամիք լինիցին, մանաւանդ
եթէ ի չկամելոցն զարարսն եւ զսպա-
սաւորութիւնն ունիցի, որպէս մեքն
ունիմք։

Արդ զդիցն այսպէս պարտ է համա-
րել թէ ընդ մեզ իսկ են, զի ոչ եթէ
նենգելով յանիրաւի ինչ ունիցիմք, այլ
յորժամ մեզ նենգութիւն լինէր, վրէժ
խնդրեցաք. բայց յետ այսորիկ մեր
գործ է լաւութիւնս ցուցանել. այն
իսկ է զի ազնուագոյնք քան զիշխա-
նաւորսն լինիցիմք եւ արժանի իշխանու-
թեանն համարիցիմք։ Եւ արդ տօթոյ
եւ ցրտոյ եւ կերակրոց եւ ըմպելեաց
եւ վաստակոց եւ քնոյ հարկ է հաղորդս
առնել զնոսա. բայց յորժամ հաղոր-
դակիցս զնոսա առնիցեմք, պարտ է
փութալ նոքիմբք նախ ազնուագոյնս
քան զնոսա երեւել. իսկ պատերազմի
խելամտութեան եւ կրթութեան ա-
մենեւին չառնել զնոսա հաղորդս, զորս
մեզ մշակս եւ հարկատուս կամիմք ստա-

նալ, այլ պարտ եւ պատշաճ է նովին իսկ հրահանգօք դլել զնոսա, ի միտ առեալ եթէ զսոսա ազատութեան եւ փառաւորութեան գործիս մարդկան դիքն ետուն։ Եւ զոր օրինակ զզէնսն հանաք ի նոցանէ, այսպէս մեզ պարտ եւ պատշաճ է մի երբեք ի զինուց դատարկանալ. զմտաւ ածեալ եթէ որ միշտն մօտ իցեն զինուց, նոցին հուպ իցէ զոր ինչ կամիցին։

Ապեթէ այսպիսի ինչ ածիցէ ոք զմտաւ եթէ զի՞նչ շահ եղեւ մեզ վճարել զամենայն որ ինչ ցանկայաք, եթէ տակաւին պարտ իցէ ժուժկալ լինել ի քաղցնուլ եւ ի ծարաւել եւ ի հոգալ եւ ի վաստակել։ Այն պարտ է ի միտ առնուլ թէ այնչափ առաւել ուրախ առնեն բարութիւնքն, որչափ առաւել վաստակեալ ոք ի բարութիւնսն հասանիցէ. զի աշխատութիւնք քաջացն խորտիկք են։ Եւ առանց կարօտութեամբ հասանելոյ իմիք, ոչ ինչ այնպէս բազմապատիկ յարդարիցի մինչեւ հեշտ եւ քաղցր լինել։ Որոց առաւել իմն ցանկանան մարդիկ, զայն մեզ դիքն պատրաստեցին, այլ զի հեշտականք նոյնք թուիցին, ինքն իսկ ոք հեշտական անձինն կազմիցէ. այնպիսի այր այնչափ առաւել իցէ քան զկարօտեալսն կենօք որչափ քաղցեալ ոք քաղցը կերակուր գտանիցէ, եւ յորժամ

ծարաւի իցէ յանոյշ ըմպելիս վայելիցէ, եւ կարօտ լեալ հանգստեան, քաղցր ի քուն լինիցի։ Վասն այսր ամենայնի ասեմ թէ այժմիկ պարտ եւ պատշաճ է ի լաւութիւն յօժարել, զի ի բարութիւնն ուրախութեամբ վայելիցեմք, եւ զի ի դժընդակ չարեացն որ քան զբնաւ դաժանագոյն իցէ անփորձ իցեմք։ Քանզի ոչ եթէ չառնուլն ինչ զբարիսն այնպէս դժընդակ իցէ, որպէս յետ առնլոյն անկանել, տրտմութեան է։

Եւ զայն եւս ածէք զմտաւ թէ զոր պատճառս եւ բարուրս ունիցիմք զի անպիտանք քան զառաջինն յօժարիցեմք լինել. արդեւք զի իշխեմքն. այլ չէ ի դէպ իշխանին ի վայր քան զիշխանաւորսն լինել. այլ զի այժմիկ փառաւորագոյնք թուիմք քան յառաջն, վասն այնորիկ ինչ ասիցէ ոք համարձակեցուցանել փառաւորութեան զվատութիւնն։ Այլ քանզի ծառայս ստացեալք, տանջեսցուք զնոսա եթէ յոռութիւն հարեալ հատանիցին. եւ զի՞նչ ի դէպ իցէ, զի որ ինքն չար իցէ, յոռութեան վասն կամ դիւրութեան զայլս տանջիցէ։

Այսուհետեւ եւ զայս զմտաւ ածիցէք, եթէ պատրաստեցաք զբազումս անուցանել եւ զմերոց տանց պահպանս եւ զանձանց։ Հիարդ չիցեն քարուա-

կանք, եթէ զայլս սպասաւորս փրկու-
թեան եւ կենաց համարիցիմք, եւ մեք
անձանց չլինիցիմք սպասաւորք։ Պարտ
եւ պատշաճ է ի միտ առնուլ եթէ այլ
ինչ այնպէս պահպանութիւն չէք, որ-
պէս ինքնին իսկ անձամբ ումեք ընտիր
լինել, զի այնմ պարտ է առ երի իսկ
ընթանալ։ Այլ այնմ որ լոկ յառա-
քինութենէ իցէ չէ ի դէպ այլում իմիք
բարւոյ լինել։

Իսկ արդ զի՞նչ պարտ իցէ առնել եւ
ո՞ւր յառաքինութիւն թեւակոխել եւ
յորո՞ւմ վայրի ընդ հրահանգս ելանել.
ոչ ինչ նոր ասիցեմ ով արք, այլ զոր
օրինակ ի Պարսս յիշխանացն վանսն
պատուակիրքն կան, այնպէս պարտ է
եւ ձեզ ամենեցուն հանգիտապա-
տուացս որ աստ իցէք, որ ինչ անդէն կըր-
թութիւն իցէ ի նոյնս կրթել, եւ ձեզ
մնտ կալ եւ տեսանել զիս եւ ի միտ առ-
նուլ եթէ փութով եւ հոգաբարձու-
թեամբ վճարիցեմ զոր ինչ պարտն իցէ
վճարել։ Եւ ես ձեզ միտ եդեալ նայի-
ցիմ, եւ զորս տեսանիցեմ ի լաւու-
թիւնս կրթեալ, զնոսա շուք եդեալ
մեծարիցեմ. եւ զմանկտի, եթէ լինի-
ցին մեր, աստէն խրատեսցուք։ Զի
եւ մեք ազնուագոյնք լինիցիմք եթէ
կամիցիմք մանկուոյ ազնուագոյն ա-
ռակ օրինակի զանձինս ընծայեցուցա-
նել։ Եւ այնուհետեւ մանկտին եւ ոչ

թէ կամիցին, դիւրաւ կարիցեն յոռանալ, յորժամ ոչ մի ինչ աղտեղի տեսանիցեն եւ ոչ լսիցեն ի բարուք հրահանգսն ցանդորդեալք։

ՈՒԹԵՐՈՐԴ

ԳՊՐՈՒԹՒՒՆ

ՔԱՂԵՑՈՓՈՒՆՏԵԱՆՑ

ԿԻՐՈՍԻ ԽՐԱՏՈՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Ը. ԳՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա

Կիրոս զայս ձեւ օրինակ խօսէր. յետ նորա յարեաւ եկաց Քրիւսանտաս եւ ասէ այսպէս. Բազում անգամ ով արք, եւ այլովք բազմօք ի միտ առի եթէ իշխան առատ չէ ինչ ընդհատ ի հօրէ բարւոյ. զի հարք խնամակալ լինին որդւոյ թէ մի բարութիւնք պակասեսցեն ի նոցանէ: Թուի ինձ թէ մեզ խրատ տայցէ Կիւրոս որովք քաջ փառաւորեալք զկեանս անցուցանիցեմք: Զորմէ ինձ թուի թէ պիտոյ է յայտ առաւել առնել. յայդ իսկ փութամ զի զայնոսիկ որ չիցեն ակահ ուսուցանիցեմ: Զմտաւ ածէք թէ ո՞ր քաղաք թշնամեաց յանհնազանդից առաւ, եւ ո՞ր աշխարհ յանհաւատից պահեցաւ, եւ ո՞ր բանակ անսասանելոցն յաղթութեան եհաս, եւ զիա՞րդ աւելագոյն ի պարտութիւն մատնիցին ի պատերազ-

մունս մարդիկ, բայց յորժամ սկիզբն առնիցեն իւրաքանչիւր զանձին փրկութիւն խորհել։ Զի՞նչ այլ ինչ լաւութիւն վճարիցի յայնցանէ որ չհնազանդիցին լաւագունացն. ո՞ր քաղաքք օրինօք շինեցան, կամ ո՞ր տունք ապրեցան, ո՞րպէս նաւք ուրեք երթեալ հասանիցեն։ Եւ մեք զոր ինչ բարութիւնսն այժմ ունիմք ի՞ւ իւիք այլով առաւել վճարեցաք, բայց իշխանին հնազանդ լինելով։ Զի վասն այնորիկ իսկ զցայգ եւ զցերեկ արագ արագ յոպարտն էր, հասաք, եւ յորժամ միանգամայն զհետ խաղացեալ երթայաք իշխանին, առանց ի դիմի հարկանելոյ էաք, ի ճակատելն ոչ մի ինչ թերակատար թողաք։ Այսուհետեւ եթէ իշխանութեան հնազանդ լինել մեծ իմն օգուտ իցէ առ արութիւնս վճարելոյ, գիտասջիք թէ դոյն իսկ եւ ի պահպանութիւն այնր ամենայնի որում պահպանութիւնն պիտոյ իցէ, առաւել օգուտ է։

Յառաջագոյն բազումք էին որ իշխէին մեզ, եւ մեք ումեք ոչ իշխէաք. բայց այժմ այնպէս հանդերձեցարուք ամենեքեան որ աստ կայք, զի իշխէք ոմանք բազմաց եւ ոմանք սակաւուց։ Զոր օրինակ արժան համարիցիք տիրել որոց ընդ ձեւք իցեն, նոյնպէս եւ մեք հնազանդեսցուք որոց ի դէպ իցէ

հնազանդ լինել։ Այնչափ ինչ պարտ է մեզ ի ծառայից ընդհատ լինել, որչափ զի ծառայք յակամայ կամս տերանց արբանեկութիւն հարկանիցեն։ Իսկ մեք քանզի համարիմք եթէ ազատք իցեմք, պարտ եւ պատշաճ է կամակար առնել որ ինչ մեծարոյն իցէ։ Եւ գտանիցէք, ասէ, զի քաղաք առանց միահեծան իշխանութեան, շինիցի. բայց որ իշխանացն կամիցի հնազանդ լինել, թէ եւ բռնադատիցի ի բռնութենէ բռնազբօսիկ ինչ իրաց, չտայցէ ի թշնամիս ձեռն։ Արդ հասեալ կամք, որպէս պատուէր տայ Կիւրոս ի վանս յայս, կրթեսցուք ամենայնիւ որով մարթեմքն գրաւել զայն որ ինչ պարտն իցէ. տայցեմք զանձինս Կիւրոսի ի գործ արկեալ վարել յինչ պարտն իցէ։ Քանզի եւ զայն պատշաճ է գիտել թէ չմարթի Կիւրոս գտանել ինչ զոր յիւր օգուտ արկանիցէ ի կիր, եւ ոչ ի մեր շահ. քանզի նոյն շահք մեր առաջի կան եւ նոյն թշնամիք։

Իբրեւ զայս խօսեցաւ Քրիւանտաս, ապա այլ եւս բազումք յարեան ի Պարսից եւ ի Նիզակակցացն, զնոյն խօսել։ Եւ հաճոյ թուեցաւ պատուականացն ցանգ ի դրունսն լինել, եւ մատուցանել զանձինս ի կիր արկանել յինչ կամ իցէ, մինչեւ արձակիցէ Կիւրոս։ Որպէս ի ժամանակին հաճոյ թուեցաւ, ըստ

նմին օրինակի եւ ցայժմ առնեն որ Ասիացւոց աշխարհին ընդ թագաւորաւն են, զի ի պաշտաման կան դրանց իշխանացն։ Եւ որպէս ի ճառիս յայտ արարեալ ցուցանիցի, Կիւրոս կազմեաց պատրաստեցաւ իւր եւ Պարսից պահել զիշխանութիւնն, զնոյն օրէնս եւ որ յետ նորա թագաւորք կացին մի ըստ միոջէ, մինչեւ ցայժմ պահեն։ Եւ այս այնպէս որպէս եւ յայլ եւս իրս. յորժամ որ գլխաւորն իցէ ազնուագոյն իցէ, յստակ մտօք օրէնքն ի գլուխ ելանիցեն. այլ յորժամ ապաժամանն գլխաւորն իցէ, անզգամութեամբ։ Այնուհետեւ կանխէին ի դրունսն Կիւրոսի պատուականքն երիւարօք եւ գեղարդեամբք. այսպէս հաճոյթուեցաւ ամենայն քաջացն, յայնցանէ որ ընդ նմա իսկ վանեալ վկանդեցին զիշխանութիւնն։

Այլոց եւս իրաց հոգաբարձուս կացուցանէր Կիւրոս. եւ էին նորա հասից ընդունելիք եւ ծախից բաշխիչք եւ գործոց ոստիկանք եւ պահապանք ասարոց եւ ռոճկաց յանձանձիչք. եւ երիւարաց եւ պառականւոյ դարմանիչս կացուցանէր, զորոց համարէրն եթէ ազնուագոյն մատուցանիցեն նմա զճարակաւորսն ի գործ արկեալ վարել. իսկ զորս ուրախութեան եւ փառաւորութեան պահապանս համարէր

ինքն իսկ դէտ ակն ունէր նոցա, զի ազնուագոյնք լինիցին, եւ ոչ զայնր հոգաբարձութիւն այլոց հրամայէր, այլ իւր իսկ զայն՝ գործ հաշուէր։ Վասնզի հմուտ էր եթէ երբեք ուրեք պատերազմի պէտք լինիցին, ի նոցունց հասանէր առնուլ զիւրեւ, որոց մեծամեծ տագնապք հասեալ իցեն, եւ ըզզօրագլուխս հետեւակաց եւ հեծելոց ի նոցանէ կամէր կացուցանել։ Եւ եթէ զօրավարք ուրեք պիտոյ լինէին առանց իւր, գիտէր թէ ի նոցունց իսկ արժան է առաքել։

Եւ քաղաքաց եւս եւ ողջոյն իսկ ազգաց պահապանս եւ նախարարս կամէր զոմանս ի նոցանէ կարգել, եւ ի նոցունց զոմանս հրեշտակագնացս առաքել. զոր մեծ իսկ իրս համարէր առ հասանելոյ առանց պատերազմի այնմ ամենայնի որ ինչ պիտոյն իցէ։ Զմտաւ ածէր թէ յորժամ չիցեն նոյնպիսիք որպիսիս պարտ իցէ լինել այնոցիկ յորոց ձեռն բազում մեծամեծ գործք եւ արուութիւնք կատարելոց իցեն, այնուհետեւ ամենայն ինչ որ իւր իցէ չարաչար ի գլուխս ելանիցէ։ Եպեթէ այնպիսիք իցեն որպիսիս պատշաճ իցէ գտանել. ամենայն իմիք համարէր ի դէպ վճարել. Արդ զայս ի միտ առեալ, նմին դարմանոյ պատկառ կայր։ Զնոյն հրահանգս առաքինութեանն

եւ անձինն իսկ պատշաճ համարէր. քանզի չհամարէր արժան, զի որ ինքն չիցէ այնպիսի ոք որպիսի ի դէպ իցէ լինել, զայլս ի գործս բարութեան յորդորիցէ։ Իբրեւ զայս խորհէր, զմտաւ ածէր եթէ նախ պարապութեան պէտք են, եթէ զլաւութեանց կամիցի փոյթ յանձին ունել։ Զհասից եւ զմտից անփոյթ առնել չհամարէր ի դէպ, զմտաւ ածեալ եթէ հարկ լինիցի բազում ծախս ծախել ի մեծայաղթ իշխանութեանն։

Զարձեալ, քանզի բազում արարք էին, գիտէր եթէ ցանգ զնոցունց զմտաւ ածել չտայ պարապել եւ զամենեցունցն կենաց փոյթ յանձին ունել։ Զան այնորիկ զմտաւ ածէր թէ զիարդ տեսչութիւնքն բարիոք մատակարարեսցին եւ առնիցի պարապութիւն, միտ եդեալ նայէր ընդ զօրականացն կարգս։ Զանզի բազում անգամ տանապետք զտասանց հոգայցեն եւ զօրագլուխք զտասնապետացն, եւ հազարապետքն զզօրագլխացն եւ բիւրապետք զհազարապետացն, եւ այնպէս ոչ իցէ որ առանց խնամակալութեան լինիցի, եւ ոչ թէ բնաւ իսկ ամենեւին բազում բեւրք մարդկան իցեն։ Յորժամ զօրավար այր կամիցի ի կիր զզօրսն արկանել, շատ եւ բաւական է եթէ բիւրապետացն հրաման տայցէ։

Ըստնոցին օրինակի նոյնպէս եւ զտան խնամակալութեան իրս բովանդակեայ Կիւրոս. մինչ զի յորժամ ընդ սակաւուց խօսէր Կիւրոս, ոչ մի ինչ ի տան իրաց անխնամ մնայր։ Եւ այնուհետեւ ունէր պարապ առաւել քան զայլ ոք որ զտան միոջ եւ զնաւու միոջ հոգաբարձութիւն յանձին ունիցի։ Այսպէս կարգեալ եւ հաստատեալ զիւրս ամենայն, ուսուցանէր եւ որոց զիւրեւն էին նովին կարգօք վարել։ Զպարապութիւնն այնպէս պատրաստէր անձին եւ որոց շուրջ զիւրեւ էին։

Սկիզբն առնէր այնուհետեւ զիւր զուսոցն կարգել յօրինել թէ որպիսիս պարտ իցեն լինել։ Որ բաւական էին այլոց վաստակովք կերակրել եւ ոչ գայթին ի դրունսն զնոսա խնդրէր, զի որ գան չար ինչ գործ չառնուն յանձն գործել վասն առ իշխանին կալոյ, եւ վասն գիտակ լինելոյ թէ յակն անկանին ազնուագունացն որ ինչ եւ գործիցեն։ Իսկ որք ոչն գայթին կամ անխառնութեամբ իւիք կամ ապիրատութեամբ կամ անփոյթ առնելով համարէր հեռացեալ զնոսա։ Արդ զայս զմտաւ ածեալ, բռնադատէր այնպիսեացն գալ։ Զի ումեմն յառաւել բարեկամաց անտի իւրոց հրամայէր զնորայն որ ոչ յաճախէր առնուլ, եւ ասել թէ զիւրն առնու։ Իբրեւ այն լինէր,

իսկ եւ իսկ վաղվաղակի գային հասա-
նէին զրկեալքն որպէս թէ խուեցան։

Բայց Կիւրոս բազում ժամանակս
չպարապէր այնպիսեաց լսել. եւ յոր-
ժամ լսէրն նոցա, բազում ժամանակս
ի ձիգ արկանէր զիրաւունս դատաս-
տանացն. զայս առնէր զի կամէր ընդ-
ելուզանել զնոսա գալ եւ պաշտօն հար-
կանել, եւ ոչ թշնամութեամբ որպէս
պատիժս պատուհասից ի վերայ ածե-
լով այնպէս բռնադատէր գալ։ Մի
պայման վարդապետութեան գալոյ՝ այս
էր նորա. եւ մեւս եւս պայման զդիւ-
բինան եւ զշահաւորսն հրամայել եկե-
լոցն. եւ այլ եւս դարձեալ մի ինչ եր-
բեք մեկնելոցն տալ բաժինս։ Դ՝ որ
մեծ եւս օրինակ բռնադատելոյ էր, ե-
թէ չանսայր ոք իմիք, հանեալ ի նմա-
նէ զոր ինչ ունէրն, այլում տայր զում-
կարծէր թէ մարթի ի դէպ ժամուհա-
սանել, եւ այնպէս փոխանակ անպիտա-
նութեանն բարեկամ պիտանի լինէր
նմա։ Յուզէ եւ այժմու թագաւորս
եթէ չիցէ ուրուք եկեալ յայնցանէ ո-
րոց անկ իցէ գալ։

Այսպէս զնայր Կիւրոս ընդ չեկելոցն։
Իսկ զայնցանէ որ զանձինս մատուցա-
նիցեն այսպէս իսկ համարէր, յաճա-
խագոյն ի գործս լաւութեան յորդո-
րել, եթէ ինքն որ նոցա թագաւորն
էր, ջանայր զանձն իշխանաւորացն ա-

ռաւել քան զամենեսեան վառեալ ի զարդ առաքինութեանն ցուցանէր։ Քանզի ի միտ առնոյր թէ եւ ի ձեռն օրինացն դրելոց աղնուագոյնք լինիցին մարդիկ, բայց զլաւ թագաւոր՝ հայեցող օրէնս մարդկան համարէր, զի եւ հրաման տալ կարող է եւ զստահակեալսն տեսանել եւ լսել։ Այսպէս ածեալ զմտաւ, նախ զդիցն իսկ ցուցանէր զանձն ճգունս յանձն առեալ ի ժամանակին յայնմիկ, քանզի փառաւորագոյն էր։ Եւ յայնմ ժամանակի զառաջինն կարգեցան կացին մոգքն հնչել նուագել դիցն ընդ առաւօտն, եւ զոհս օր ըստ օրէ մատուցանել որոց դիցն մոգքն պատուէր տայցեն։ Որ յայնժամ հաստատեցաւ եկաց եւ ցայժմ եւս կայ պահի յայնմանէ որ մի ըստ միոջէ ցանգ թագաւոր կայցէ։ Արդ այսու ամենայնի նմանող լինէին նմա եւ այլք Պարսիկք, զի համարէին թէ փառաւոր լիցին թէ դիցն պաշտօն հարկանիցեն, զոր օրինակ որ փառաւորն քան զամենեսին էր եւ իշխէր. եւ համարէին եթէ Կիւրոսի հաճոյ լինիցին թէ զայն առնիցեն։

Իսկ Կիւրոս զդիւցապաշտութիւն այնոցիկ որ ընդ իւրն էին եւ անձին շահ հաշուէր, մոռխորհ եղեալ զոր օրինակ որ ընդ դիւցապաշտացն մանաւանդ կամիցին նաւարկել եւ ոչ ընդ այնոսիկ որոց ինչ ամպարշտեալ իցէ։

Եւ հանդերձ նոքիմբք զմտաւ ածէր, եթէ ամենայն հաղորդակիցքն դիւցապաշտք իցեն, դուն ուրեք ունիցին յանձին վնաս ինչ միմեանց կամ նմին առնել, քանզի բարերար եւ երախտաւոր հաղորդակցացն համարիցի։ Նա յայտ արարեալ եւ զայն թէ մեծ իմն համարիցի չլինել զրկօղ ոչ բարեկամի եւ ոչ նիզակակցի, այլ ասատկութեամբ ընդ իրաւունսն հայեցեալ կամէր եւ զայլսն յանպատեհ շահից մերժել, եւ իրաւամբք եւ արդարութեամբ կամել մեծանալ. եւ համարէր ամենեցուն ակն ածել եւ պատկառել, եթէ ինքն իսկ յայտնապէս յամենեցունց այնպէս ակն ածիցէ, զի ոչ խօսիցի կամ գործիցէ ինչ աղտեղի։

Եւ զի այս այսպէս է եւ անտի յայտ լինէր, զի ոչ եթէ զայր թագաւոր, այլ եւ յորոց ոչն երկնչին առաւել ի պատկառելն նոցա ակն ածիցեն մարդիկ, քան ի չպատկառելն։ Եւ ի կանաց որ հայինն, ակն ածեն յորժամ զգայցեն զնոցանէ թէ ամաչեն։ Պարձեալ համարէր աւելագոյն հաստատուն լինել հնազանդութեան ի նոսա որ զիւրեւն էին, եթէ զհնազանդեալսն առանց բարրանաց յայտ յանդիման մեծամեծար մեծարիցէ առաւել քան զայնոսիկ, որ զմեծավաստակ առաքինութիւնսն թուիցին ընծայեցուցանել։

Եւ ըստ այնմ զոր գիտէր նոյնպէս եւ
ի գլուխ հանեալ վճարէր։

Ահա եւ զիւր ցածութիւնն յայտ ա-
րարեալ ի նոյն զամենեսին կրթէր։ Զի
թէ որում համարձակ իցէ ծածուկ կալ
զնա տեսանիցեն զգաստացեալ, եւս
առաւել անաւագքն ոչ ինչ գործ ծա-
նականաց յայտնի յանձին ունիցին գոր-
ծել։ Իսկ զամօթխածութիւն եւ զցա-
ծութիւն այնու ընտրէր, զի ամօթլե-
ածքն ի յայտնի ինչ ծանականաց խոր-
շեցին, իսկ ցածունքն եւ յանյայտիցն։
Նոյնպէս եւ ի ժուժկալութեան վարժս
համարէր առաւել կրթել, եթէ ին-
քնին իսկ ի գլխովին ցուցանէր զանձն
ոչ յանկարծադէպ ցանկութեամբքն
ձգեալ ի լաւացն, այլ կամեցեալ նախ
ի ճգունս մտանել հանդերձ պատշա-
ճութեամբ յառաջ քան զխրախու-
թիւնն։ Արդ քանզի այսպիսի ոք
էր, ի դրունս բազում յօրինուածութիւն
յոռութեանցն առնէր. տեղի տալոյ
աղնուագունացն, եւ բազում ակնա-
ծութիւն եւ ցածութիւն առ միմեանս.
եւ զտանէիր անդ ոչ զոք ցասուցեալ
աղաղակաւ, եւ ոչ ուրախ եղեալ եւ ծա-
նակ կայցէ ծաղուս եւ քրքջիցէ. այլ յոր-
ժամ նշմարիցես զնոսա, համարիցիս ար-
դարեւ զբարուոք կեանս կեցեալ։ Զայս
ինչ ի դրունսն առնէին եւ զսոյնս տե-
սանէին։

Բայց վասն պատերազմացն կրթութեան յորս հանէր զայնոսիկ որոց պատշաճ համարէր ի նոյնս թեւակոխել։ Զի զորսն ամենեւին իսկ քաջ կրթութիւն պատերազմացն համարէր, եւ ստոյգ հրահանգս առնեւձիոյ։ Զի նոյն եւ ի պէսպէս տեղիս ուսուցանէ հեծանել վասն զէրէոյ փախստէից զհետ արշաւելոյ, եւ յերիւարաց անտի գործօնս եւ ժիրս կազմէ վասն պարծանաց եւ ցանկութեամբ ըմբռնելոյ։ Եւ աստէն իսկ մանաւանդ ընդելուզանէր զհաղորդակիցսն հանդարտել տանել ժուժկալութեամբ եւ երկոց եւ վաստակոց, ցրտահար եւ խորշակառ լինել քաղցնուլ եւ ծարաւել։ Նա եւ այժմ եւս թագաւորն եւ այլք որ զթագաւորաւն են, առնեն։

Ընդ զի այսպէս համարէր թէ չէ անկ ումեք իշխանութիւն, որ քան զիշխանաւորսն չիցէ ազնուագոյն, ամենեցուն իսկ յայտ յայժմու բանիցս ասացելոց է, եւ զի այսպէս զորս զիւրեւն էին, կրթելով, առաւել եւս ինքն ժուժկալութեան ճգունս ցուցանէր եւ ճարտարութիւնս պատերազմի եւ կրթութիւնս։ Զի եւ զայլսն յորս տանէր յորժամ ոչ հարկ ինչ ի վերայ կայր ի տան մնալոյ։ Բայց ինքն եւ յորժամ հարկ գոյր ի տան կալոյ, որսայր զգազանսն որ ի բուրատանսն պարա-

րէին. եւ ոչ ինքն երբեք յառաջ քան զ.քրանելն ընթրիս ուտէր, եւ ոչ ե-
րիւարացն առանց ի հրահանգան կրթելոյ, խար արկանէր։ Ի նոյն որսս հր-
բաւիրէր զեշխանսն որ շուրջ զիւրեւ էին. քանզի ինքն կարի ընտիր էր ամենայն
գործով.ք քաջութեան, նոյնպէս եւ որ զնովաւն կային վասն հանապազն
կրթելոյ։ Ա.յսպիսի ինչ առակ օրինակի զանձն ընծայեցուցանէր։ Ա՛նդերձ
սոքիմ.ք եւ այլոց ոմանց զորս աւելագոյն տեսանէր լաւութեանց զհետ մրտեալ, զնոսա մեծապարգեւ մեծապատիւ մեծարէր, իշխանութիւնս եւ բարձս շնորհէր, որպէս զի ամենեցուն նախանձուկս արկանիցէ զի իւրաքանչիւր ոք քաջ երեւիցի Կիւրոսի։

Մեղ թուի ի միտ առնուլ զԿիւրոսէ եթէ ոչ այնու եւեթ պատշաճ համարէր իշխանաւորացն ընդհատ յիշխանաւորացն լինել զի ազնուագոյնք քան զնոսա իցեն, այլ եւ պատրել եւս պատշաճ համարէր զնոսա։ Վասն այնորիկ յորժամ յօժարեաց զմարական պատմուճան ագանել, եւ զհաղորդակիցսն հաւանեցոյց զնոյն արկանել. զի թուեցաւ նմա թէ այն պատմուճան ծածկիցէ, եթէ պակաս ինչ ոք ի մարմնի ունիցի, եւ դեղեցիկս եւ անդամայաղթս ցուցանիցէ։ Զի այնպիսի օգս ուշնին, յորս մարթիցի թագչել եթէ արկա-

նիցի ինչ ի ներքս առ ի մեծամեծս քան որչափ իցեն կարծեցուցանելոյ։ Թողոյր եւ ծարիր յաչս ամանալ, զի գեղեցիկք եւ ծաւիք երեւիցին աչօք քան որչափ իցեն, եւ զի գունաւորք երեւիցին քան զբնութիւնն։ Կրթեաց եւ մի յայտ թքանել եւ մի զերեսս դարձուցանել տեսանել ինչ, որպէս թէ ոչ զարմանայցեն ընդ իրս ինչ։ Բայց զայսմ ամենայնէ համարէր նը-պաստ լինել ինչ առ ի չերեւելոյ արհամարհ այնոցիկ որ ընդ իշխանութեամբ իցեն։

Որոց միանգամ պարտ էր իւրեւ իշխանս լինել, այսպէս կրթութեամբ յարդարէր եւ լուսաւոր վերակացութեամբն։ Իսկ զորս ի ծառայութիւն պատրաստէր, զնոսա չյորդորէր ի վաստակս ինչ ազատացն աշխատութեանց, եւ ոչ յանձանձէր զէն ստանալ։ Բայց հոգայր թէ մի անսուաղ եւ առանց ջրոյ երբեք իցեն վասն ազատացն կրթութեան։ Զի եւ յորժամ հալածիցեն զգազանսն հեծելով ի դաշտս հրամայէր նոցա հաց տանել յորսն. իսկ յազատացն ոչ ումեք։ Եւ յորժամ դէպ լինէր ճանապարհ գնալ, ածէր զնոսա առ ջուրս որպէս զգրաստսն. եւ յորժամ ժամ լինէր ճաշու, մնայր նոցա մինչեւ ուտիցեն ինչ, զի մի նքթիցին։ Մինչ զի եւ նոքին գնա, որպէս եւ

աւագքն, հայր կոչէին, զի հոգ ի մտի ունէր զնոցանէ, որպէս միշտ իսկ եւ հանապազ առանց ինչ ընդ բանս ածելոյ ծառայք կայցեն։

Սամօրէն իսկ Պարսից տէրութեան այսպէս ամրութիւն յարդարէր. եւ անձինն յաճախագոյն քաջալերս մատուցանէր թէ ի վանելոյ անտի եւ ի կործանելոյց չհասանիցէ վնաս ինչ վշտանալ։ Զանգի անգօրս համարէր զնոսա եւ անկարգս տեսանէր, եւ հանդերձ նոքիմբք ոչ ոք ի նոցանէ մերձենայր առ նա ոչ զցայգ եւ ոչ զցերեկ։ Իսկ զոր քաջս համարէր, եւ վառեալս եւ գումարեալս տեսանէր, գիտէր թէ ոմանք ի նոցանէ հեծելոց զօրավարքք եղեն, եւ ոմանք հետեւակաց առաջնորդք կացին։ Բայց զբազմաց ի նոցանէ զդայր թէ ունին հոգս ի մտի որպէս թէ բաւական իցեն իշխել. եւ նոքին մօտ երթային առ պահապանս նորա եւ ի նոցանէ բազումք բազում անգամ մատչէին առ Կիւրոս. քանզի հարկ ի վերայ կայր թէ եւ զնոսա արկանիցէ ի կիր. արդ ի նոցունց տագնապ էր վնաս ինչ կրել նմա բազում օրինակօք։ Այնուհետեւ զմտաւ ածեալ թէ զիարդ լինիցի նմա ապրել ի վշտացն. իսկ չհանելն ի նոցանէ զզէնսն եւ անզօրս առնել չհամարէր օգուտ, եւ առանց իրաւանց համարէր եւ քակումն

իշխանութեան. դարձեալ չթողուլ զնոսա մերձենալ եւ յայտնի իսկ թերահաւատել ի նոցանէ, սկիզբն համարէր պատերազմի։ Բայց մի ինչ փոխանակ ընդ այնր ամենայնի խորհեցաւ առ իւր ամրութիւն ի դէպ եւ վայելուչ, եթէ մարթիցի զքաջն իւր բարեկամս առնել առաւել քան միմեանց։

ԳԼՈՒԽ Բ

ԱՐԴ թէ զիարդ սիրելի եղեւ, զայն ջանասցուք պատմել։ Վասնզի նախ միշտ իսկ յամենայն ժամանակի մարդասիրութիւն ցուցանէր որչափ ինչ կարող էր։ Զմտաւ ածեալ թէ զոր օրինակ չէ դիւրին զայնոսիկ որ ատելութեան կարծիս տայցեն սիրել եւ միտս բարիս ընդ չարիմացայն ունել, նոյնպէս եւ որ ճանաչիցին եթէ սիրեն եւ բարեւոք միտս ունին, չէ մարթ եթէ ատելի լինիցին այնոցիկ որ համարին եթէ սիրեցեալ են։ Մինչ չէրն ձեռնհաս ընչիւք երախտաւոր լինել, խնամակալ լինելով որոց ընդ իւրն էին, եւ ճգամբք եւ ուրախակից բարութեանցն լինելով եւ ծանրացեալ նեղեալ ընդ վիշտսն, ջանայր զնոցա գութս որսալ։

Իսկ իբրեւ եհաս նմա եւ ընչիւք բարերարութիւն ցուցանել. նախ, քանզի չիք ինչ բարերարութիւն մարդկան առ

միմեանս քաղցրքան զկերակրոց եւ ըմ-
պելեաց բաշխոյս։ Այս ածեալ զմը-
տաւ, նախ վասն իւրոյ իսկ սեղանոյ
հրաման տայր, զի որովք խորտովք ինքն
կերակրիցի, զհանգոյնս նոցին միշտ առ-
նմա յօրինեալ դնել զի տայցէ բաղում
մարդկան. եւ որ ինչ յօրինեալ կայր,
այն ամենայն, բաց յորոց ինքն եւ բազ-
մականակից քն ուտէին, տայր հանա-
պազ այնոցիկ ի բարեկամացն որոց կա-
մէր յիշատակս ցուցանել, կամ գութ
եւ խնամ։ Առաքէր եւ ցայնոսիկ զորս
աղնուագոյնս համարէր ի պահպանու-
թիւնս կամ ի սպասաւորութիւնս կամ
յայլ եւս ինչ իրս եւ յարութիւնս։ Այ
զայն իմն յայտ առնէր, եթէ որ ի շնորհս
ինչ կամիցի առնել ոչ ծածկիցի։

Պատուէր եւ զիւր եւս սեպհականն
ի սեղանոյ անտի, յորժամ յարգէրն
զոք, եւ զամենայն կերակուր զիւրոցն
սեպհականացն առ իւրում սեղանոյն
յօրինէր, զի համարէր իբրեւ զմանկունս
զիւրեւ ածել։ Եւ եթէ կամէր ոմանց
ի բարեկամացն ի բազմաց պաշտօն առ-
նուլ եւ նոցա առաքէր ի սեղանոյ ան-
տի իւրմէ։ Բանզի եւ այժմ իսկ որոց
տեսանեն առաքեալ ի սեղանոյ թա-
գաւորին, նոցա առաւել ի սպասու կան
ամենեքեան։ Այ համարին եթէ նո-
քա պատուականք իցեն եւ բաւական
իցեն ընդունել եթէ խնդրիցեն ինչ։

Ոչ եթէ վասն նոցին եւեթ որ ասա-
ցանն, ուրախ առնեն խորտիկքն առա-
քեալք յարքայէ, այլ արդարեւ բա-
զում անուշութիւնս ունիցին որ ի սե-
ղանոյ թագաւորին առաքիցին։

Ընդ այնր եւս չեն ինչ զարմանք.
զի որպէս այլ ճարտարութիւնք ի քա-
ղաքս մեծամեծս հոյակապք են. եւ խոր-
տիկքն արքայի ազնուագոյն կազմին.
զի ի փոքր քաղաքսն նոքին գահոյս
կազմիցեն եւ դուռն եւ արօր եւ սեղան.
բազում անգամ եւ նոյն դուն լինիցի,
եւ յաջողեալ համարիցի եթէ եւ այն-
պէս գտանիցէ զոմանս որ տայցեն նմին
գործս, որ բաւական լինիցին զնա անու-
ցանելոյ։ Արդ չիք հնար մարդոյ որ զբա-
զում արուեստս ճարտարացն գործիցէ,
զենաւ գեղեցիկ գործիցէ։ Իսկ ի քա-
ղաքս մեծամեծս, վասն բազմաց իւրա-
քանչիւր ումեք կարօտելոց բաւական է
իւրաքանչիւր մի արուեստառ ի մնանել։
Նա աւանիկ բազում անգամ եւ մին
բովանդակ, զի ոմն առնի օգս գործիցէ,
եւ մեւսն կանանց կաւշիկս։ Դու է որ ի
կաւշիկսն եւեթ կարելոյ կերակրիցի, եւ
ոմն հերձլո

Այլն անցք եւ ընդ կերակուրսն անցանեն։ Զի որ ինչն անկողինս արկանիցէ, սեղանն յարդարիցէ, աղայցէ, ազգի ազգի խորտիկս գործիցէ, ինձ թուի թէ հարկ է այնպիսումն զամենայն խառն ի խուռն որպէս ինչ դիպիցի, առնել։ Իսկ ուր միումն գործ իցէ միս եփել եւ միւսումն խորովել, եւ այլում ձուկն եփել եւ այլում հաց գործել, բայց ոչ պէսպէս ազգի ազգի, այլ շատ եւ բաւական իցէ եթէ զմի կերպարանս բարուք ցուցանիցէ. այնուհետեւ հարկ է զի այնպէս առնիցին որ յոյժ իսկ ընտիր իցեն։ Այսպէս կարգեալ զսպաս կերակրոցն անցանէր զանցանէր զամենեքումբք։

Եւ զի այլովք եւս ամենեքումբք պաշտօն առնելով գլեր, զայն այժմիկ պատմեսցուք։ Զի թէպէտ եւ առաւել էր քան զամենայն մարդ բազում հասն առնելով, եւս առաւել առաւելոյր այնու զի բազում պարգեւս մարդկան բաշխէր։ Այնմ սկիզբն առնէր Կիւրոս, եւ տակաւին կայ բաւէ ցայժմ ի թագաւորսն պարգեւացն առատութիւն։ Զանգի ոյր բարեկամք ընչաւէտք որպէս զՊարսից թագաւորին. ո՞ք զարդարիցէ զնուրսն պատմուճանօք գեղեցիկ քան զթագաւորն։ Եւ ոյր այնպիսի պարգեւք իցեն որպէս ինչ են պարգեւք թագաւորին, ապարան-

ջանք եւ քայդք եւ երիւարք ոսկեսանձք. քանզի չէ իշխանութիւն զայն ունել ուրում չիցէ տուեալ թագաւորին։ Զումմ պատմեցաւ եթէ պարգեւացն յաճախութեամբ զիւր իսկ անձն եւ ընտրել փոխանակ ընդ եղբարց եւ ընդ հարց եւ ընդ որդւոց։ Ո՞ այլ ոք մարթաց զթշնամեաց հեռացելոց բազում ամաց ճանապարհաւ վրէժ խընդրել, որպէս Պարսից թագաւորն։ Ո՞ այլ ոք վանեալ վկանդեալ զիշխանութիւնն յիշխանաւորացն հայր անուանեալ վախճանէր, բայց Կիւրոս։ Եւ այն անուն յայտ է թէ երախտաւորի յորջորջումն է եւ ոչ այնր որ հանիցէ ինչ յումեքէ։

Ի միտ առնումք թէ զանուանեալ աչս եւ ականջս թագաւորի, ոչ եթէ այլով ինչ իւիք ստացաւ, բայց պարգեւօքն եւ պատուոցն մեծարանօք։ Զի զնոսա որք պատմէին զոր ինչ ի դէպն էր նմա գիտել, մեծամեծն պարգեւելով, զբազում մարդիկ յորդորէր յականջալուրս լսել եւ ականատեսելինել այնմ զոր ինչ արժան էր պատմել թագաւորին. եւ այնուհետեւ բազում աչք համարեցան արքայի եւ բազում ականջք։ Ապա թէ համարիցի ոք թէ մի ակն ընտիր է թագաւորի, անուղղայս ածիցէ զմտաւ. զի մին սակաւ ինչ հասանիցէ տեսանել եւ լսել. եւ այլոցն իբրեւ

հրաման լինէրանվոյթ առնել եթէ մի-
ում ումեք այն հրամայեալ էր։ Նա եւ
զումէ գիտասցեն թէ ակն է նա թա-
գաւորին, ի միտ առցեն եթէ պարտ
է եւ ի նմանէ զզոյշ լինել։ Բայց չէ
այնպէս, այլ ամենայն ումեք, որ ասիցէ
լսել ինչ կամ տեսանել արժանի հո-
գաբարձութեան լսէ թագաւորն։Ա ասն
այնորիկ բազում ականջք են թա-
գաւորի, եւ բազում աչք հաշուին, եւ
ամենայն ուրեք երկրնչին խօսել զան-
դէպսն թագաւորին, որպէս թէ նմա
լու ի լու խօսեսցին, եւ զանդիտեն
զանպատշաճան առնել, որպէս թէ նա
առընթեր կայցէ. եւ չիշխէր ոք ինչ
չար խօսել զԱիւրոսէ իբրեւ առաջի ա-
չաց թագաւորին որ հանապազ մօտի-
ցեն. ամենեքին այսպիսի միտս ունէին։
Այլ թէ զինչ պատճառք իցեն այնպի-
սի միտս ունելոյ մարդկան առ նա, ոչ
այլ ինչ գիտեմ, բայց զի մեծամեծս ընդ
մանուանցն շնորհէր։

Ընդ անցուցանելոյ զամենեքումբք
պարգեւացն յաճախութեամբ, յոր-
ժամ ընչաւետագոյնն էր, չէն ինչ զար-
մանք. բայց պաշտամամբքն եւ դար-
մանով.ք գերիվերոյ բարեկամացն լինել
առն թագաւորի, այն զարմանալի է։
Ասեն թէ ոչ յիմեքէ յորժամ պարտէրն,
յամօթ լինէր որպէս ի բարեկամացն
սպասուէ։ Եւ բանք եւս յիշատակին

թէ ասէր նա այսպէս, եթէ Քաջ հովուի եւ քաջ թագաւորի գործք հանգոյն միմեանց իցեն. զի պարտէ, ասէ, հովուի խաշանցն դիւրութիւն առնել, եւ ապա ի կիր արկանել զնոսա. զի այն իսկ է խաշանցն յաջողութիւն։ Նոյնգունակ եւ թագաւոր յորժամ բարեզէն եւ երջանիկ զքաղաքս եւ զմարդիկ առնիցէ, պարտ է նոքօք վարել։ Արդ եթէ այնպիսի միտս ունէր ոչ ինչ են զարմանք եթէ ի վէգ եկեալ հակառակէր ամենայն մարդկան գերիվերոյ խնամակալութեամբ լինել։

Եւ գեղեցիկ ինչ առակ օրինակի, ասեն, յայտ արարեալ Կիւրոսի՝ Կրիւսոսի, յորժամ միտս դնէր նմա թէ բազումն տալով աղքատ եւ տառապեալ լինիցիս, ուր մարթ իցէ քեզ միոյ միայնոյ առն բազում գանձս ոսկւոյ մթերեալ դնել զեմեղ։ Եւ զԿիւրոսէ, ասեն, հարցեալ. Ո՞րչափ կարծիցես թէ էին իմ գանձք, եթէ ժողովէի ոսկի որպէս դուն խրատ տաս, յորմէ հետէ եմ յիշխանութեան ատ յայսմիկ։ Կրիւսոս ասէ, Բազում ինչ յաճախութիւն։ Եւ Կիւրոս ասէ, Ուն առ առաքեա այր մի ընդ Վշտասպայ յոր դու առաւել հաւատաս. եւ դու Վշտասպա, ասէ, երթ առ բարեկամն, զոգ ցնոսա թէ պիտոյ է ինձ ոսկի առ գործ ինչ, քանզի արդարեւ պիտոյ է,

հրաման տուր նոցա, թէ որչափ իւրաքանչիւր ոք ձեռնհաս իցէ, բերցէ ինձ ինչս, եւ գրել կնքել եւ տալ զհրովարտակն ցպաշտօնեայն Կրիւսոսի զի տարցի։

Եւ զայս զոր ասացն գրեալ կնքեալ տայր ձեռն ի ձեռն ցԿշտասպաս տանել առ բարեկամն. եւ առ ամենեսին գրէր եւ զԿշտասպաս իբրեւ զիւր բարեկամ ընդունել։ Իբրեւ չոգաւ եբեր ապասաւորն Կրիւսոսի զթուղթն, ասէ Կշտասպաս. Ընքա՛յ Կիւրոս, պարտ է եւ զիս մեծատուն հաշուել, քանզի բազում պարգեւօք եկի վասն թղթոցն քոց։ Կիւրոս ասէ. Այո մի գանձ է մեր Կրիւսէ. դու զայլոցն ածջիր ըզմտաւ, եւ ի միտ առ թէ որչափ գանձք պատրաստական կայցեն եթէ պէտք ինչ լինիցին ի կիր արկանելոյ։ Ասեն մտախորհ լեալ Կրիւսեայ բազմապատիկ գտանէր քան զայն զոր ասացն լինել ի գանձսն Կիւրոսի եթէ ժողովեսցէ։ Իբրեւ այս այսպէս յայտնի լինէր, պատմեն թէ սկսաւ խօսել Կիւրոս։

Տեսանե՞ս, ասէ, Կրիւսէ, թէ գոն եւ իմ գանձք, այլ դու հրամայես ինձ զգանձսն առ իս ժողովել եւ նոքօք ատելի եւ նախանձելի լինել եւ պահապանս վարձու ի վերայ կացուցանել եւ նոցա հաւատալ։ Բայց ես զբարեկամս մեծատունս առնելով, զնոսա համա-

րիմ գանձս եւ իմ եւ մերոցն բարու-
թեանցն հաւատարիմ պահապանս քան
եթէ պահապանս վարձկանս կացու-
ցանիցեմ։ Ասացից եւ այլ եւս ինչ
քեզ, Ով Կրիւսէ, զոր դիքն արկին ի
միտս մարդկան եւ արարին զմի օրինակ
զամենեսին աղքատս եւ տնանկս, այնմ
եւ ոչ ես մարթիցեմ գերիվերոյ լի-
նել, եւ ես ոչ յագիմ կարասւով, որ-
պէս եւ այլքն։ Բայց այնու թուիմ
ընդհատ ի բազմաց, զի ոմանք, յոր-
ժամ աւելի քան զբաւականն ստանայ-
ցեն զկէսսն ի նոցանէ փորեալ թագու-
ցանեն, զկէսսն ցեցակեր մեցամէս առ-
նիցեն. եւ զկէսսն համարելովն եւ չա-
փելով եւ կշռելով եւ թօթափելով
եւ պահելով զբօսեալ են։ Սակայն եւ
յորժամ ի ներքս ունիցին ոչ կերիցեն
առաւել զոր կարիցենն հանդարտել,
քանզի պայթին պարպատին, եւ ոչ
հանդերձ զանձամբ արկանիցեն առաւել
քան զոր մարթիցենն տանել քանզի
հեղձնուն մղձկին այլ զաւելորդ ինչսն
զբօսանս ունին։ Բայց ես դիցն ար-
բանեկութիւն հարկանեմ եւ ցանգ ա-
ռաւել եւս խնդրեմ։ Եւ յորժամ
ստանայցեմ, զոր ինչ աւելի քան ըզ-
բաւականն տեսանիցեմ, նոքիմբք զկա-
րօտութիւնս բարեկամաց ընում եւ մե-
ծացուցանելովն զմարդիկ եւ երախ-
տաւորն լինելով գութ խնամ անկանի-

ցի նոցա ընդ իս. եւ ի նոցունց շահիցիմ ամրութիւն եւ փառաւորութիւն. եւ ոչ ցեցակեր փոտոտակեր լինիցի եւ ոչ յորդեալ ապականիցի եւ փառաւորութիւնն որչափ յաճախագոյն լինիցի, դոյնչափ եւ մեծապայծառ եւ գեղեցիկ եւ առ կրեալ թեթեւագոյն լինիցի, բազում անգամ եւ զկրելիսն իւր թեթեւագոյնս ցուցանիցէ։ Բայց զի եւ զայս ի միտ առցես, ասէ, թէ ես ոչ զայնոսիկ որ զբազումն ունիցին եւ բազում ինչ պահիցեն երանեալ եւ երջանիկ համարիմ. զի թէ այնպէս ինչ էր, ապա որ պարսպացն պահ ունիցին բարեշէնք եւ երջանիկք իցեն, զի զամենայն ինչ որ ի քաղաքսն են, պահեն. այլ որ բազում արարս կարիցէ ստանալ իրաւամբք եւ արդարութեամբ, եւ բազում ինչ ի կիր արկանել զատաշաճութեամբ, զնա ես յաջողեալ համարիմ եւ ընչիւքն։ Եւ յայտ էր թէ ըստ բանիցն զոր խօսէր նոյնպէս եւ վճարէր։

Հանդերձ սոքիմբք նայէր ընդ բազումս ի մարդկանէ, զի յորժամ առողջքն իցեն, կազմ եւ պատրաստ լինին զի զպէտսն կարեւորս ունիցին եւ կարգեն դնեն զպիտոյսն ի կերակուր ողջոցն։ Բայց զայնմանէ չտեսանէր հոգ յանձին կալեալ թէ յորժամ խօթանայցեն, առ ընթեր կայցեն պատ-

շաճ դարմանքն։ Արդ հաճոյ թուեցաւ նմա եւ ի սոյնս աշխատ լինել, բժիշկս ճարտարս առ ինքն ժողովէր, եւ որ ինչ միանգամ գործի պիտանացուոք ասիցէ նմին կամ դեղ կամ կերակուր կամ ըմպելի, ոչ ինչ էր յայնցանէ զոր ոչ պատրաստեալ գանձէր առ իւր, եւ յորժամ հիւանդանայր ոք յայնցանէ որոց ի դէպ էր պաշտօն առնել, այցելու լինէր եւ տայր զամենայն որ ինչ պիտոյ լինէր, եւ բժշկացն շնորհակալ լինէր, յորժամ բուժէր ոք զոք։ Այս եւ այսպիսի ինչ բազում հնարս հնարէր առ ճոխանալոյ առ նոքօք յորոց սիրելն կամէր։

Բանզի մրցութեան հրահանգս պատուիրէր եւ վարձս առաջի դնէր եւ կամէր նախանձուկս արկանել վասն բարեացն գործոց, այն ամենայն դրուատիք էին Կիւրոսի այնու՝ զի փոյթ ի մտի ունէր, թէ զիարդ յառաքինութիւն թեւակոխիցի։ Այց քաջացն գուսպարածքն կագս եւ հակառակութիւն ի միմեանս արկանէին։ Եւ հանդերձ նոքիմբք, իբրեւ օրէնս հաստատէր Կիւրոս թէ յորժամ պէտք ինչ ընտրութեան լինիցին, թէպէտ ի դատաստանս թէպէտ ի մրցութիւնսն, որոց ընտրութեան պէտք իցեն միաբան առ դատաւորսն երթայցեն։ Արդ յայտ է թէ երկոքին ախոյեանքն դէտակն ունիցին

դատաւորացն եւ առաւել բարեկամն դատաւորաց։ Նոր ոչն յաղթեաց, ընդ յաղթօղն խանտայցէ, եւ զայնոսիկ որ ոչ զինքն ընտրեցին, ատիցէ։ Պարձեալ եւ որ յաղթիցէն՝ իրաւամբք համարիցի յաղթել, որպէս ոչ ուրեք պարտապան իցէ շնորհակալ լինել։ Նա որ կամիցին զմիմեամբք ելանել ի բարեկամութեանն Կիւրոսի, որպէս այլքն ի քաղաքս, նոյնպէս եւ նոքա միմեանց չարակնիցեն։ Որպէս զի բազումք զմիմեանց կամիցին վտարանդիս լինել, քան եթէ միմեանց լինել գործակից ի բարիս։ Այս ամենայն յայտ առնիցէ՝ թէ հայթայթանօք հնարէր, թէ լաւքն ամենեքին զնա քաջ սիրիցեն քան զմիմեանս։

Գ Լ Ո Ւ Խ Գ

Այժմ պատմեսցուք թէ զիաւրդ զառաջինն չուեաց Կիւրոս յարքունեացն։ Վանդի եւ չուոյ մեծապայծառ փառաւորութիւն, մի ինչ արուեստ թուի յարուեստիցն մենքենայաւորութեան, չերեւելոյ արհամարհ իշխանութեանն։ Նախ իսկ յառաջ քան զչուն կոչեցեալ առ իւր զիշխանսն Պարսից եւ այլոց ազգաց, տայր նոցա զմարական պատմուճանսն, եւ յայնժամ նախ մարական հանդերձ ազան Պարսիկք, եւ ի

տալն ասէր ցնոսա եթէ կամիմ երթալ
ի մեհեանս որ ընտրեցան դիցն, եւ զոհս
ընդ նոսա մատուցանել։ Արդ եկայք,
ասէ, ի դրունս, զարդարեալ դովին
պատմուճանօք։ յառաջ քան զծագել
արեգական, եւ կարգեալ կայցէք առ իս
որպէս պատուէր տայցէ ձեզ փե-
րաւղաս Պարսիկ։ Եւ յորժամ ես եր-
թայցեմ, ասէ, զհետ գայցէք ի տեղւոջ
յորում ասացաւն ձեզ։ Ապա թէ ու-
մեք ի ձէնջ թուիցի այլազգ եւս գե-
ղեցիկ քան զսոյն լինել, յորժամ միւս-
անգամ երթայցեմք, ասասցէ ինձ։
Օ՛ի որպէս զիարդ գեղեցիկ եւ վայե-
լուչ թուիցի ձեզ, նոյնպէս պարտ է
զբնաւ կարգել եւ յօրինել։

Իսկ իբրեւ տայր աղնուականացն
զգեղեցիկ գեղեցիկ պատմուճանսն,
հանէր եւ այլ եւս մարական պատմու-
ճանս. քանզի բազում պատմուճան
պատրաստեալ ունէր. ոչ ինչ անխայ-
եալ ոչ ի Ծիրանի եւ ոչ ի շիկակար-
միրն եւ ոչ յորդան կարմիր եւ ոչ ի ձորձան
կերպասս։ Բաշխեալ ի նոցանէ միում
միում ի զօրավարացն, հրաման տայր
նոցա նոքօք զարդարել զիւրեանց բա-
րեկամսն, որպէս եսս, ասէ, զարդա-
րեմ զձեզ։ Եւ ոմն ի մօտակացացն
հարցանէր. Դու, ասէ, ե՞րբ զարդարի-
ցիս. եւ տայր պատասխանի. ո՞չ այժմ,

ասէ, ձեզ ընդ զարդ եկեալ թուիցիմ. զի զարդարեմս զձեզ։ Եթէ կարիցեմ, ասէ, ձեզ բարեկամացդ բարի առնել, զոր պատմուճան եւ ունիցիմ, նովին գեղեցիկ երեւիցիմ։

Նոքա երթեալ կոչէին զբարեկամս եւ զարդարէին պատմուճանօքն։ Իսկ Կիւրոս քանզի գիտէր թէ Փերաւղաս որ ի ռամկէ անտի էր, հանճարեղ է եւ իմաստուն եւ աղնուական, եւ թէ չառնէր անփոյթ՝ առնել նմա շնորհս, որ երբեմն եւ վասն զիւրաքանչիւր ոք ըստ արժանաւորութեանն պատուելոյ խրատ տայր, զնա կոչեալ, խորհուրդ առնոյր ընդ նմա թէ զիա՞րդ լաւիմաց ացն վայելուչ ցուցանիցէ զչուն եւ թշնամեացն ահագին։ Եւ իբրեւ զմտաւածին եւ իրքն հաճոյ թուէին, հրամանն տայր Փերաւղայ հոգալ, զի այնպէս լինիցի վաղիւ չուն, որպէս հաճոյ թուեցաւ։ Նա, ասէ, պատուէր ետու ամենեցուն՝ քեզ հնազանդ լինել վասն կարգի չուոյդ։ Բայց զի յօժարագոյնս լուիցեն քեզ, յորժամ պատուէր տայցես, առ տար, ասէ, զպարեգօտսդ զայդոսիկ առաջնորդաց տիգաւորացն։ Եւ զտառատոկս զայդոսիկ զհեծելոց՝ առաջնորդի հեծելոցն տուր, եւ առաջնորդաց կառաց զայլ պարեգօտս։

Եւ նա առեալ տանէր, իսկ առաջնորդքն իբրեւ տեսին ասեն. Մեծ ես դու

փերաւղա, քանզի եւ մեղ հրամայեաց-
ցես զոր ինչ պարտ իցէ առնել։ Ոչ, ասէ, փերաւղաս, ոչ միայն ոչ երեւի այլ
եւ բեռինս եւս կրիցեմ։ Այժմ բերեմ
երկուս տառատոկս զմին քեզ եւ զմին
այլում. բայց դու զոր ի նոցանէ կամիցիս, առ. ապա որ զձորձն առնոյր, զնա-
խանձն մոռացեալ, խորհուրդ առնոյր
ընդ նմա թէ զոր առնուցու. նա խրատ
տայր թէ որ ազնուագոյն իցէ եւ ասէր. Եթէ ամբաստան լինիցիս զինէն,
եթէ յընտիր արարի քեզ, միւսանգամ յորժամ սպասաւոր լինիցիմ,
այլազգ սպասաւորիցեմ։ Փերաւղաս
տուեալ այնպէս, որպէս հրաման առեալ էր, անդէն հոգայր զչուոյն, զի
ամենեւին գեղեցիկ եւ վայելուչ լինիցի։

Իբրեւ եկն օր վաղուին ամենայն ինչ
յարդարեալ կայր. յառաջ քան զծագել տուընջեանն, կարգեալ տողեալ
կային աստի եւ անտի ճանապարհին,
որպէս եւ այժմ կան ընդ որ կոյս
թագաւորն գնալոց իցէ. եւ ի ներքս
չէ մարթ ումեք մտանել ի չպատուաւորացն։ Խարազանաւորք կային
որ հարկանէին եթէ ամբոխ ինչ ոք
կացուցանէր. բայց նախ չորեքհազարք տիգաւորաց կային առաջի դրանցն
չորք չորք, եւ երկու հազարք աստի
եւ անտի դրացն. հասեալ կայ-
ին ամենայն այրուձին իջեալ յե-

բիւարաց անտի հանեալ զձեռս ի գրա-
տիցն, որպէս եւ ցայժմ հանեն յոր-
ժամ թագաւորն նայիցի։ Պային յաջ-
մէ ճանապարհացն Պարսիկքն եւ՝ այլ
եւս նիզակակիցք ի ձախմէ, այնպէս եւ
կառացն կէս յայսմ կողմանէ, եւ կէս
յայնմ։

Իբրեւ բացան դրունք արքունի ա-
պարանիցն, նախ երթային Ռրամազ-
դայ ցուլք գեղեցիկք չորք չորք. եւ ո-
րոց միանգամ յայլոց եւս դից մոգքն
պատուիրեցին։ Զի այսպէս համարին
Պարսիկք թէ պարտ է մանաւանդ վասն
դիցն զճարտարապետս արուեստիցն ի
գործ արկեալ վարել, քան վասն
այլոց ինչ իրաց։ Յետ զուարակացն
ձիք երթային պատարագք արեգական։
Յետ նոցա կառք սպիտակք ոսկւովք
լծովք, պսակաւորք մեհենական Ռրա-
մազդայ։

Յետ այնորիկ կառք արեգական սպի-
տակ եւ նոյն պսակեալ որպէս զառա-
ջինն, յետ նորա այլ եւս երրորդ
կառք խաղային, եւ երիվարքն ծածկ-
եալ յորդան կարմիր, եւ զհետ գային
արք որ հուր առաջի նորա ի վերայ
յաղթ կրակարանի տանէին։

Յետ նոցա ինքն իսկ դլխովին Կիւ-
րոս յայտնէր ի դրանցն անտի կառօք,
ունէր խոյր ի գլուխ ուղղորդ եւ պարե-
գօտ ծիրանի կէս սպիտակ, եւ այլում

չէր համարձակ կէս ոպիտակ ազանել. եւ զբարձիւքն արկանել բեհեզեղէնս նարօտուք եւ ձորձ համակ ծիրանի. եւ ունէր ապարաւշ զկուրիւն եւ նորին համազգիք զնոյն նշանակ ունէին, եւ զդոյն ցայժմ ունին, եւ ձեռքն արտաքոյ քան զԹեզանիան էին, եւ գնայր առ նմին կառավար յաղԹանդամ, այլ փոքր էր քան զնա կամ զի արդարեւ մեծ էր եւ կամ այլազգ ինչ, բայց Կիւրոս կարի իսկ յաղԹ երեւէր։ Եւ ամենեքին իբրեւ տեսանէին, երկիր պագանէին, կամ զի հրաման առեալ էր ոմանց սկիզբն առնել երկրպագութեանն կամ սքանչացեալք ընդ կազմուԹիւնն, եւ վասն մեծ եւ գեղեցիկ երեւելոյ Կիւրոսի։ Եւ յառաջն ոչ ոք ի Պարսից երկիր պագանէր Կիւրոսի։

Իբրեւ խաղային կառքն Կիւրոսի, երԹային եւ չորեքհազար տիգաւորքն, եւ առ նոքօք զհետ գային երկու հազարքն աստի անտի կառացն. զհետ գային որ շուրջ զնովաւ իշխանքն էին երիվարօք, զարդարեալք նիզակօք իբրեւ զերեքհարիւր։ Եւ գային երիվարք որ ընեալ էին Կիւրոսի ոսկեանձք ծածկեալք ի գաւազանաձեւ ձորձոյ իբրեւ զերկերիւր։ Եւ յետ նոցա երկու հազար տիգաւորք։ Յետ նոցա բեւր հեծեալք ամենայն ուրեք

հարեւր հարեւր կարգեալ կային. եւ առաջնորդէր նոցա Բրիւանտաս։ Յետ այնորիկ այլ եւս բեւր հեծեալք Պարսից նոյնպէս կարգեալք, եւ առաջնորդէր նոցա Վշտասպէս եւ յետ նոցա այլ բիւրաւորք ըստ նմին օրինակի. եւ առաջնորդէր նոցա Դատամաս, եւ յետ նոցա այլք, եւ Գադատաս առաջնորդէր նոցա։ Յետ նոցա Մարք հեծեալք, յետ նոցա Հայք, յետոյ Վրկանացիք եւ յետ նոցա Կադուսիացիք եւ յետ նոցա Շակք. եւ յետ հեծելոցն կառք չորք չորք կարգեալք, եւ առաջնորդէր նոցա Արտաբատէս պարսիկ։

Եւ յերթալն նորա բազում մարդիկ զհետ անկեալ երթային արտաքոյ դրաւշուցն, եւ խնդրէին ամենեքին իրս ինչ ի Կիւրոսէ։ Առաքեալ առ նոսա զոմանս յիշխանաց անտի որք յերկոցունց կողմանց կառացն երիս երիս զհետ դային նորա վասն զրոյց իսկ տալոյ, հրաման տայր ասել ցնոսա, եթէ խնդրիցէ ոք ինչ ի նմանէ, պատմեսցէ միում ումեք յիշխանացն զոր ինչ ոք կամիցի, եւ նոքա, ասէ, ասասցեն ցիս։ Երթեալքն անդէն իսկ եւ իսկ առ հեծեալսն դային, եւ խորհուրդ առնոյին թէ առ ո՞ երթիցէ իւրաքանչիւր ոք ի նոցանէ։ Իսկ Կիւրոս ի բարեկամաց անտի զորս միանգամ կամէր առաւել պաշտօն առնուլ ի

մարդկանէ, զնոսա յղեալ, զոմն առ ինքն կոչէր զիւրաքանչիւր մի ըստ միոջէ, խօսէր ընդ նոսա այսպէս. Եթէ ոք ասասցէ ինչ ձեզ, յայնցանէ որ զհետ մեր գան, որ ոչինչ խօսել թուիցի, մի ունկն դնիցէք նմա. իսկ որ իրաւացիս խնդրիցէ պատմեցէք ինձ զի հասարակ խորհուրդ ի մէջ առեալ վճարեսցուք:

Այլք յորժամ կոչեցեալ լինէին, ունկնդիր եղեալ տաղնապաւ հասանէին մեծացուցեալ զիշխանութիւնն Կիւրոսի, եւ յայտ արարեալ եթէ միտագոյնս հնազանդ լինիցին: Դայիփառնէս ոմն անուն էր խիստ բարոյիւք, համարէր եթէ ոչ վաղվաղակի հնազանդիցի, ազատ թուիցի: Օգացեալ զայն Կիւրոսի մինչ չեւ մատուցեալ նորա եւ խօսեցեալ ընդ նմա, յղեալ զոմն յիշխանաց անտի, հրամայէր առել ցնա, եթէ չես ինչ այսուհետեւ պիտոյ, եւ այնուհետեւ ոչ կոչէր: Իսկ որ յետոյն քան զնա կոչեցաւ յառաջեաց վաղագոյն քան զնա. եւ Կիւրոս ետ նմա պարգեւս երիւար մի յեկելոցն զհետ, եւ հրամայեաց միում ումեք յիշխանացն ածել զնա յո եւ կամիցի: Եւ որոց տեսին մեծարոյ իմն նոյն թուեցաւ. եւ առաւել բազումք ի մարդկանէ պաշտէին զնա:

Իբրեւ գային հասանէին ի մեհեանն, զոհս Ուրամազդայ մատուցանէին եւ

զցուլսն առնէին ողջակէզս, ապա եւ արեգական երիւարս ողջակէզս առնէին. յետ այնորիկ եւ հողոյ զենեալ, որպէս մոգուցն հրաման տուեալ էր, առնէին, ապա դիւցազանց որ զԱսորւոց աշխարհն ունէին։ Եւ յետ այնր ամենայնի, քանզի դեղեցիկ էր վայրն, սկսան ի դրանց անտի տագնապաւ զերիւարսն արշաւեցուցանել։ Արդ ինքն ընդ Պարսից ընթացեալ յաղթէր. քանզի յաճախագոյն ի ձիոցն հրահանգս կըրթեալ էր։ Իսկ ի Մարաց անտի յաղթէր Արտաբատէս, քանզի երիւար տուեալ էր նմա Կիւրոս. եւ յԱսորեաց՝ վերակացուն. եւ ի Հայոց՝ Տիգրանէս. ի Վրկանացւոց՝ որդի Հազարապետին։ Իսկ ի Շակաց այր մի զօրական եթող երիւարաւն զայլ երիւարսն մօտ ի կէս արշաւանին։

Յայնմ վայրի եհարց, ասեն, Կիւրոս ցպատանեակն, եթէ փոխանակիցէ՞ զթագաւորութիւն ընդ երիւարին. եւ նորա պատասխանի տուեալ թէ Ձառնուի յանձն զթագաւորութիւնն, բայց կամէի շնորհս յառնէ բարւոյ դառնել։ Եւ Կիւրոս ասէ. Ես կամիմ ցուցանել քեզ զտեղին, յոր եթէ արկանիցես ինչ խառն ի խուռն, ոչ վրիպիցիս յառնէ բարւոյ։ Ասէ շակացին. Ընաւ իսկ ցոյց ինձ, զի ամբարձեալ արկանիցեմ զկոշտն։ Կիւրոս ցուցանէր նմա,

ուր էին բաղմամբոխ բարեկամացն, եւ նա զկոշտն ընկէց եւ երթեալ պատահէր փերաւղայ, զի պատմէր ինչ յայնժամ փերաւղաս հրամայեալ ի Կիւրոսէ։ Եւ իբրեւ հարաւ եւ ոչ դարձաւ յետս, այլ երթայր յոր հրաման առեալ էր երթալոյ. ի վեր հայեցեալ շակացւոյն հարցանէր, թէ ո՞ւմ դիպեցաւ։ Ոչ ումեք՝, ասէ, ի մօտակացացն։ Ասէ պատանեակն. բայց ո՞չ ի հեռացելոց անտի։ Ասէ Կիւրոս, նմա պատահեցար, որ առ կառօքն արշաւեցուցանէր զերիւարն։ Իսկ զի՞արդ, ասէ, ոչ դարձաւ յետս։ Եւ Կիւրոս ասէ, քանզի շամշեալ ոմն է, որպէս երեւի իսկ։

Լուեալ պատանեկին, երթայր տեսանել թէ ո՛ էր, եւ գտանէ զփերաւղաս որոյ փոշւով եւ արեամբ եւ ապաժուժաւ լի մուրուքն էին։ Զանգի հատեալ հոսէր յբռընգացն արիւնն եւ իբրեւ մերձ լինէր, հարցանէր զնա թէ հատա՞ւ, եւ նա ետ պատասխանի, թէ Որպէս տեսանես։ Տամ քեզ, ասէ, զերիւարս զայս։ Եւ նա հարցանէր թէ ընդ էր իրիք. ապա պատմէր շակացին զերան, եւ գլուխ իսկ ամենայնի ասէր, թուի ինձ թէ ոչ վրիպեցայ յառնէ բարւոյ։ Եւ փերաւղաս ասէ. եթէ ցածուն միտս ունէիր ապա մեծամեծս քան զայս տայիր։ Բայց այժմ եւ ես յանձն առնում։ Եւ դիցն, ասէ, յաղօթս կամ,

որք եռուն ինձ հարկանել ի քէն, տայ-
ցեն ինձ, չատրջանալ քեզ վասն այսր
պարգեւիդ. եւ այժմ երթ, ասէ, երիւա-
ռաւ իմով, եւ վաղվաղակի եկից առ
քեզ. նոքա այնպէս ի միմեանց մեկնե-
ցան։

Իսկ ի Կաղուսիացւոց Ռաթոնիկէս
յաղթեաց։ Արձակէր եւ կառս մի ըստ
միոջէ, եւ որոց յաղթիցեն՝ տայր զուա-
ռակս, զի զենեալ կերիցեն, եւ ըմպելիս։
Արդ ինքն առնոյր զզուարակն յաղ-
թութեան պարգեւ, եւ զիւր մասն
ըմպելեացն տայր փերաւղայ, քանզի
հաճոյ թուեցաւ նմա կարդ չուոյն յար-
քունի ապարանից անտի։ Որպէս յայն-
ժամ առ Կիւրոսիւ կարգեցաւ չուն,
նոյնպէս է եւ այժմ չու թագաւորին,
բայց նուէրք ոչ գոն, յորժամ ոչ զոհի-
ցէ։ Իբրեւ այն ամենայն յանդ ելանէր,
գային հասանէին միւսանգամ ի քա-
ղաքն, եւ որոց ապարանք տուեալ էին,
ի տունս մեկնէին, եւ որոց չէր տուեալ
ի բանակն։

Պոչեցեալ փերաւղայ զշակացին որ
զերիւարն իսկ եռ նմա, ասպնջական
լինէր, եւ բազում ինչ տայր առատու-
թեամբ, եւ յորժամ ընթրէիին, զըմ-
պելիսն զոր առ ի Կիւրոսէ, ընոյր եւ մա-
տուցանէր նմա։ Շ ակացւոյն տեսեալ
զգահոյսն գեղեցիկս՝ եւ բազում գեղե-
ցիկ կազմած եւ գերդաստանս բազումս.

Ասա դու ցիս, ասէ, ո՛ փերաւղա, միթէ եւ ի քոյ աշխարհին ի մեծատանց ոք էիր. եւ փերաւղաս ասէ. Յորմ՞ մեծատանց, յայտ է թէ յայնցանէ որ ի ձեռացն արուեստէ կեան։ Զի զիս հայրն իմ խրատեաց խրատ մանկուոյ, ինքնին դոյզն ինչ գործեալ եւ անուցեալ։ Դու յորժամ մանկիկն եղէ, քանզի չկարէր անուցանել զդատարկս, տարաւ զիս յագարակ եւ պատուէր ետ գործել։ Ընդ ես կերակրէի զնա մինչեւ կենդանի էր. ես փորէի եւ սերմանէի զփոքրիկ ագարակիկն, բայց չէր ագարակն յոռի, այլ քան զամենայն անդս եւ ագարակս արդար. զի զսերմն զոր ընդունէր, բարուք եւ արդարութեամբ տայր. բայց տոկոսիս ոչ ինչ այնպէս բազում. երբեմն առ ազնուականութեանն երկպատիկ տայր զոր առնոյրն։ Արդ ես յաշխարհին այսպիսի կեանս կէի. իսկ այժմ զայս ամենայն զոր տեսանես, Կիւրոս ետ ինձ։

Ասէ շակացին. Երանելի ես դու այլովք ամենեքումբք, եւ այնու զի յաղքատութենէ մեծատուն եղեր։ Զի թուի ինձ թէ վասն այնորիկ հեշտականագոյն իցէ քեզ մեծանալ, զի յորժամ աղքատն էիր ընչիւք, մեծացար։ Դու փերաւղաս ասէ. Միթէ այնպէս ինչ կարծիցես, եթէ այնչափ հեշտ կեանքս կեցեմ, որչափ աւելի արարս ստա-

նայցեմ. չգիտես, ասէ, եթէ ուտեմ եւ ըմպեմ եւ ննջեմ, ոչ եթէ այժմ քաղցրագոյն քան երբեմն յորժամ աղքատն էիր եւ տառապեալ։ Եւ քանզի ամենայն այդ յաճախեաց, այսչափ ինչ շահիմ, զի պարտ իցէ առաւելագոյն պահ ունել, եւ այլոց աւելի բաշխել տալ, եւ զբազմաց հոգ ի մտի ունել, եւ զբազում իւիք զբօսնուլ։ Զանգի բազում ծառայք հաց խնդրեն յինէն, եւ յոլովք գինի, եւ բազմագոյնք ձորձ, եւ ոմանք բժշկաց կարօտանան։ Եւ գայ բերէ ոմն կամ զգազանաբեկան ի խաշանցն, կամ յանդուոյ զդարահոս անկեալն ի վախէ կամ թէ ախտ ցաւոց յանասունն անկանիցի։ Մինչ զի թըւի ինձ թէ այժմ վասն բազումն ունելոյ առաւել տրտմիցիմ, քան եթէ յառաջն վասն սակաւիկ ինչ ունելոյ։

Ասէ շակացին. Ամլ յորժամ ողջն իցեն տեսեալ զբազումն, բազմապատիկ քան զիս ուրախ առնիցին։ Փերաւզաս ասէ. Ոչ այնպէս հեշտական իցէ զինչն ունել, որպէս տրտմութեան իցէ յընչիցն անկանել. ի միտ առցես եթէ ճշմարիտ խօսիմ, զի ի մեծատանց ոչ ոք տագնապի առ հեշտականութեանն տքնել. իսկ յայնցանէ որ անկանիցին յիմէքէ զոք տեսանիցես եթէ կարիցէ ի քուն լինել ի տրտմութենէ անտի։ Ասէ շակացին. Եւ ոչ յայն-

ցանէ որ առնուն ինչ տեսանիցես զոք առ խնդութեան ննջեալ։ Այդ, ասէ, ճշմարտութեամբ ասես, զի եթէ ունելն ինչ այնպէս, որպէս զառնուլն քաղցր էր, յոյժ իսկ ընդհատ յաղքատաց էին փառաւորութեամբ մեծատունքն. եւ հարկ է, ասէ, զի որ բազումն ունիցի, շատ ծախիցէ եւ ի դիս եւ ի բարեկամս եւ ի հեւրս։ Արդ որ ուժգին ոք ուրախ ընդ ինչս լինիցի, դիտասջիր թէ եւ ի ծախելն յոյժ տրտմիցի։

Ասէ Շակաս. Ես չեմ յայնցանէ, այլ եւ զայն փառաւորութիւն համարիմ բազում ինչ ունել եւ բազում ինչ ծախել։ Ասէ Փերաւղաս. Ոչ ապաքէն վաղվաղակի երեւելի եղեր եւ զիս փառաւոր արարեր. զայս ամենայն, ասէ, առ եւ ստացիր, եւ արկ որպէս զնարդ կամիս ի կիր։ Եւ զիս իբրեւ զհեւր կերակրեա եւ եւս նուազագոյն քան զհեւր։ Այ շատ իցէ ինձ թէ զոր ինչ դու ունիցիս, նոցին հաղորդ իցեմ։ Ասէ Շակաս. Խաղ ուրեմն առնես։ Փերաւղայ երդմնի լեալ ասէ. թէ Ոչ ընդ խաղ խօսիմ. եւ այլ եւս ինչ խնդրեցից քեզ ի Կիւրոսէ, մի կալ ի պաշտաման ի դրունս Կիւրոսի եւ ոչ երթալ ի մարտ պատերազմի։ Այդ դու մեծատուն ի տան կայցես, եւ ես զայն ամենայն վճարեցից ընդ քո եւ ընդ իմ. եւ եթէ բարութիւնս ինչ առնուս վասն Կիւ-

բոսի ոպաս հարկանելոյ կամ ի պատե-
բազմէ իմեքէ, բերից առ քեզ զի եւս
բազմաց իշխեսցես։ Մինչն փարատեա
յինէն զհոգս. զի պարապ առից յայսմ
ամենայնէ, թուի ինձ թէ եւ ինձ եւ
Պիւրոսի բազում իւիք պիտանի լինիցիս։

Եբրեւ այս բանք այսպէս ճառէին,
նա փառաւոր զանձն համարէր զի բա-
զում ընչից իշխէր, եւ սա դարձեալ
երանելի լեալ կարծէր, թէ ունիցի յան-
ձանձիչ որ տայցէ նմա պարապել եւ
վճարել որ ինչ հեշտական իցէ։ Դուէին
փերաւղայ բարք ընկերասէրք, եւ ոչ
մի ինչ նմա այնպէս քաղցր եւ հեշտ եւ
շահաւոր թուէր, որպէս մարդկան ի
ոպասու կալ. զի քան զբնաւ իսկ զան-
ասունս ազնուագոյն զմարդն համարէր
եւ վայելուչ, զի տեսանէր թէ որք դը-
րուատ յումեքէ գտանիցեն, յօժարա-
գոյնս զնոսա փոխարէն յարդեալ գո-
վիցեն, եւ որք շնորհս ինչ գտանիցեն,
փութայցեն ընդ այնր շնորհել, եւ թէ
զորոց գիտիցեն բարւոք միտս ունել,
ընդ նոցա բարեմիտս իցեն. եւ զորոց
գիտիցեն թէ սիրեն զնոսա, չկարիցեն
ատել զնոսա. գիտէր թէ հարց եւ մարց
առաւել քան զամենայն գազանս կա-
միցին ոպասաւորութիւն հարկանել,
եւ յորժամ կենդանի իցեն եւ յոր-
ժամ վախճանիցին. իսկ այլ եւս անա-
ասունք գժգոհք քան զմարդիկ են։

Վասն այնորիկ առաւելագոյն ուրախ լինէր փերաւղաս, զի համարձակ իցէ նմա զերծեալ ի հոգոց այլոց արարոցն, զբարեկամքն գալ։ Ուրախ լինէր եւ Շակաս, զի յորժամ բազում ինչ ունէր, բազում ինչ արկանելոց էր ի կիր։ Սիրէր Շակաս զփերաւղաս, զի ցանգ բերէր ինչ. եւ նա զՇակաս, զի կամեցաւ զամենայն առնուլ, եւ միշտ զբազմաց հոգացեալ ոչ ինչ անպարապութիւն նմա մատուցանէր։ Եւ սոքա ըստ այնմ օրինակի կային։

ԳԼՈՒԽ Դ

Ի ԲՐԵՒ զզոհսն մատոյց Կիւրոս, առնէր հայկերոյթ յաղթութեանն, կոչէր ի բարեկամաց անտի որ առաւել կամէին ընդ նորա մեծանալ, եւ մտադիւրութեամբ մեծարանս դնէին։ Կոչէր ընդ նոսա եւ զԱրտաւազդ մար եւ զՑիգրանէս հայ եւ զվրկանացի հազարապետն եւ զԳոբրիաս։ Իսկ Գադատաս իշխան էր իշխանաց նորա, եւ որպէս նայն յօրինեալ էր, կարգեալ կայր ի ներքս ամենայն հացն։ Եւ մինչ դեռ ուտէին ընդ նմա ոմանք, Գադատաս ոչ բազմէր, այլ հոգայր. բայց յորժամ չէին անդ նոքա, ուտէր ընդ նմա, քանզի ուրախ լինէր յորժամ կայրն ընդ նմա։

Նա ընդ այնր մեծամեծար մեծարէր ի Կիւրոսէ, եւ վասն Կիւրոսի եւ յայլոց եւս։

Իբրեւ եկին կոչնականքն յընթրիսն, ոչ եթէ ուր դէպ լինէր բազմեցուցանէր զնոսա. այլ զոր ոք առաւելն իմն պատուէր ի ձախմէ, զի այն դիւրին իմն առնենգել է քան զաջն. եւ զերկրորդն յաջմէ, եւ զերրորդն դարձեալ ընդ ահեկէ, եւ զչորրորդն յաջմէ, եւ եթէ բազումք եւս իցեն, զնոյն ձեւ օրինակի կարգէր։ Նա ի դէպ իսկ թուէր նմա յայտ առնել, թէ որպէս զիւրաքանչիւր ոք ի նոցանէ պատուիցէ։ Զի ուր համարիցին մարդիկ թէ որ ազնուագոյնն իցէ ոչ յարգիցի եւ ոչ հատուցումն առնուցու. անդ ոչ ինչ ընդ հակառակս ելեալ ի կռիւ ինչ ընդ միմեանս կայցեն։ Իսկ ուր առաւելեալ ազնուագոյն երեւիցի, անդէն ամենեցուն իսկ յօժարագոյնս գուպարածք կայցեն։

Կիւրոս այսպէս ճշգրիտ ցուցանէր զհարստացեալսն առ իւր իսկ եւ իսկ ի բարձիցն սկիզբն արարեալ եւ յառընթեր կալոյ։ Բայց ոչ անմահս զկարգեալ բարձսն հաստատէր, այլ օրէնս կարգէր լաւութեանցն գործովք զմիմեամբք ոսոխել ի պատուական աթոռսն. եւ եթէ ի վատութիւն ոք հատանիցի, յանարգութիւն իջանել։ Նա զյառաջադէմն ի բարձի, որոյ ոչ առաւել լաւ-

ութիւնք էին ամօթ համարէր առ իւր երեւել։ Այս ամենայն որ առ Կիւրոսիւ եղեւ, լսեմք թէ տակաւին եւ ցայժմ բաւիցէ։

Եւ իբրեւ բազմէին, ոչ զարմանալի ինչ թուէր Գոբրիայ յաճախութիւն ամենայնի առ առն միում որ բազմաց իշխէր. այլ այն թէ Կիւրոս որ այնպէս մեծամեծս վճարեաց, եթէ քաղցր ինչ առնոյր, ոչ ինքն միայն համօրէն ուսառէր, այլ զմօտակացսն աղաչէր նմին հաղորդ լինել, բազում անգամ տեսանէր զի եւ բացական բարեկամացն զայն որով ուրախն լեալ էր, առաքէր։ Որպէս զի յորժամ ուտէինն եւ ամենայն ինչ առատ էր, եւ առաքէր Կիւրոս ի սեղանոյ անտի, ասէ Գոբրիաս. Ես ով Կիւրոս, յառաջագոյն համարէի թէ այնու առաւել ընտիր քան զամենայն մարդիկ իցես զի գոռ պատերազմող իցես։ Բայց այժմ իմ ի դիսն երդուեալ է, թէ թուի ինձ բայ մարդասիրութեամբ քան զօրավարութեամբ ազնուագոյն իցես։ Ասէ Կիւրոս. Ես հեշտական է մարդասիրութեան գործս ցուցանել քան զզօրավարութեան։ Ասէ Գոբրիաս. Ոչ իարդ։ Օ՛ի նոքօք, ասէ, զմարդիկ հասանէ չարչարել, եւ սաքօք բարիս մարդկան առնել։

Ապա իբրեւ ընդ դինիս մտին, հարցանէր Վշտասպաս զԿիւրոս. Մի՞թէ

ծանրացեալ նեղեցիս ընդ իս, ասէ, եթէ հարցից զքեզ զոր կամիմն գիտել ի քէն։ Նմին հակառակ, ասէ, ծանրանամ եթէ ազդ լինիցի ինչ թէ լուռ լինիս հարցանել զոր կամիցիս ինչ։ Ազէ դու եկ ասա ցիս, ասէ, երբ կոչեցեր դու զիս եւ ոչ եկի։ Գոսվեմ զքեզ։ Ի հնազանդելն դանդաղագոյն հնազանդեցայ։ Եւ ոչ այնպէս։ Եւ զհրամայեալ ինչ ոչ վճարեցի։ Ձեմ, ասէ, մեղադիր։ Եւ զոր վճարէի, էր ինչ երբեք ուրեք զոր իմ չիցէ ի գլուխս հանեալ փուքթով յօժարութեամբ եւ քո ստգտեալ իցէ զիս։ Ասէ Կիւրոս. զայդ ամենեւին իսկ ոչ։ Իսկ ընդէր, ասէ, ով Կիւրէ, Վրիւսանտաս շրջեաց զմիտս քո, զի ի պատուական ամթոռ ի վերոյ քան զիս բազմեացի։ Ասէ Կիւրոս. Եթէ ասիցեմ։ Ասէ Վշտասպաս. Ասա։ Բայց դու, ասէ, նեղեցիս յորժամ զճշմարիտն լսիցես։ Ուրախ լինիմ, ասէ, եթէ տեսանիցեմ թէ ոչ զլացեալ զրկիմ։

Այս Վրիւսանտաս, ասէ, նախ ոչ կոչոյ անսայր բաւէր, այլ մինչ չեւ իսկ կոչեցեալ գայր հասանէր մերոցն վասն։ Եւ յետ այնորիկ ոչ միայն զհրամայեալն, այլ եւ զոր ինչ ինքն ի միտ առնոյր թէ բարւոք է առնել մեզ, զայն յանձնէ վճարէր։ Եւ յորժամ ասել ինչ ցնիղակակիցս հասանէր, զոր ինչ

համարէրն եթէ վայելեցէ ինձ ասել, թելադիր լինէր ինձ. եւ եթէ ազդ լինէր նմա զինէն թէ կամիցիմ եթէ նիզակակիցք գիտասցեն եւ ինքնին ամաչիցեմ զանձնէ ասել, այնպէս զնոցունց խօսէր, որպէս թէ զիւր իսկ խորհուրդս յայտ կամիցի առնել։ Օ՞ինչ արգել իցէ ի դոսա թէ քան զիս ազնուագոյն իցէ նա ինձ. եւ զանձնէ, ասէ, ցանգ թէ ամենայն որ ինչ գոյ, այն շատ եւ բաւական է. բայց հանապազ զմտաւ ածէ եթէ զինչ շահ յաւելցի ինձ։ Ընդ բարութիւնս իմ եւս քաջ քան զիս յաւրանայ եւ ուրախ առնի։ Վ շտապաս ասէ. Երդնում յերա, ով Կիւրոս, զի ուրախ լինիմ զի հարցի զայդ քեզ։ Ասէ Կիւրոս. Ո՞վ։ Օ՞ի եւ ես ջանացայց զդոյն առնել։ Մի՞ուն եւ եթ, ասէ, տգէտ եմ, թէ զիա՞րդ յայտ երեւիցիմ եթէ խնդամ ընդ բարութիւնս քո. միթէ ծափ զծափի հարկանե՞լ կամ ծիծաղե՞լ պարտիցէ, կամ զի՞նչ գործել։ Արտաւազ ասէ. Կաքաւել պարտէ ըստ Պարսից օրինակին։ Յետ այնորիկ ծիծաղեցան։

Իբրեւ խրախութիւնն յերկարէր, հարցանէր Կիւրոս զԳոբրիաս. Ողէ եկ ասա դու ցիս, ասէ, ով Գոբրիա, այժմիկ յօժարիցես տալ միում ի սոցանէ զդուստրդ, քան յորժամ զառաջինն եկիր առ մեզ։ Ասէ Գովբրիաս. Մի՞թէ

եւ ես ասիցեմ զճշմարիտն։ Ասէ Կիւ-
րոս. Ասա քանզի չիք ինչ հարցուած
որ ստուգեան կարօտանայցէ։ Այսու-
հետեւ, ասէ, գիտասջիր եթէ առաւել
եւս յօժարութեամբ կամիմ։ Ասէ Կիւ-
րոս. Թէ կարիցես ասել եթէ ընդէր։
Այո՛ ասէ։ Ասա։ Զի յայնժամ, ա-
սէ, տեսանէի զնոսա զի աշխատու-
թեանց եւ վշտաց յօժարագոյնս տա-
նէին, եւ այժմիկ տեսանեմ զի ցածուն
մտօք զբարութիւնսն կրեն։ Զուի ինձ,
ով Կիւրոս եթէ եւս իմն դժուարին է
գտանել այր մի որ առաքինի ի բարու-
թիւնսն իցէ, քան եթէ ի վիշտսն կրել։
Զի նոքա զբազումս ի խայտառականս
ածիցեն, եւ սոքա զամենեսին ի զգաս-
տութիւն։

Եւ Կիւրոս ասէ. Լուար Վշտասպա
զԳոբրիայ բանսն։ Այո՛, ասէ, եւ եթէ
բազում ինչ այսպիսիս յաճախիցէ խօ-
սել, նոքիմբք մանաւանդ զիս ընկալուչ
դստերն առնուցու քան եթէ բազում
ըմպելիս ցուցանիցէ։ Ասէ Գոբրիաս.
Ես իմ բազում բանք այսպիսի ի մա-
տենի գրեալ, զայն ամենայն տաց քեզ
թէ զդուստրն իմ կին առնիցես. եւ զնը-
ւագսն, ասէ, քանզի չունիս յանձին,
ոչ գիտեմ թէ Բրիւսանտայ տաց, քան-
զի եւ զբարձդ ի քէն յափշտակեաց։
Կիւրոս ասէ. Վշտասպա եւ այլք ամե-
նեքին որ ասա կայք, դուք թէ ինձ ազդ

առնիցէք յորժամ ոք ի ձէնջ կին մտաբերիցէ առնել, ի միտ առեալ գիտասցէ որպէս եւ ես ձեզ գործակից լինիցիմ։

Եւ Գոբրիաս ասէ. եթէ զդուստրն ոք կամիցի տալ, ցո՞ ոք պարտ իցէ ասել։ Ասէ Կիւրոս. Յիս. զի բնաւ այնմ աբուեստի, ասէ, անհնարին խելամուտ եմ։ Ասէ Վրիւսանտաս. Որո՞ւմ աբուեստի։ Գիտել թէ որ հարսանիք իւրաքանչիւր ուժէք պատշաճ իցեն։ Վրիւսանտաս ասէ. Աղէ ասա, որպիսի՞ինչ ոք կին ինձ պատշաճ համարիցիս։ Նախ, ասէ, զփոքր, քանզի եւ դու իսկ փոքր ես, եւ եթէ յաղթանդամ կին առնիցես եթէ երբեք յորժամ կայցէ ուղղորդ չկարիցես հասանել։

Յետ այնորիկ մատուցանէր Տիգրանայ զարդս եւ պատուիրէր տալ կնոջն, զի քաջութեամբ ընդ առնն եկն ի պատերազմ։ Իսկ Արտաւազայ բաժակ ոսկի տայր, եւ վրկանացուոյն երիւար եւ այլ եւս ինչ բազում եւ գեղեցիկ. եւ քեզ ասէ, Գոբրիա, տաց այր մի դրստերն քում։ Ասէ Կ շտասպաս. զիս տայցես, զի եւ զմատեանն առիցս։ Ասէ Կիւրոս զո՞ն քո ինչ արժանի աղջկանն։ Ան իմ, ասէ, բազում գանձուց մթերք։ Ասէ Կիւրոս. Իսկ ո՞ւր իցէ քո այն գոյաւորութիւն։ Ընդ, ասէ, ուր եւ դու նստիս եւ բարեկամ իմ

ես։ Ասէ Գոբրիաս. Շատ է ինձ. եւ վաղվաղակի ձգեալ զաջ ձեռն, տուր ասէ, Կիւրոս, զի ես առնում յանձն։

Կիւրոսի առեալ զաջ ձեռն Կ.շտասպայ տայր ցԳոբրիաս. եւ նա ընկալաւ։ Ապա բազում գեղեցիկ գեղեցիկ պարգեւս տայր Կ.շտասպայ, զի առաքիցէ օրիորդին, եւ համբուրեաց զՔրիւսանտաս ի մատչելն։ Եւ Ս.րատաւազ ասէ. Ո՞չ ի միոջէ ոսկւոյ ինձ զբաժակն ետուր Կիւրոս, եւ Քրիւսանտայ զպարգեւն։ Եւ քեզ ասէ, տայ։ Նա հարցանէր թէ երբ։ Յերեսներորդում, ասէ, ամի. եւ դու այսպէս իսկ հաստատեալ կայցես թէ ես ցայնժամ կացիս մնացիս եւ ոչ մեռայց։ Եւ այնպէս արձակեցաւ յայնժամ ժողովն։ Նոքա իբրեւ յոտն կացին, յարեաւ եւ Կիւրոս եւ երթայր յուղարկաւոր մինչեւ ցդուրսն։

Ի վաղիւ անդր զնիզակակիցսն որք կամէին, ի տունս առաքէր, բայց միայն որք առ նմա իսկ կամէին բնակել։ Եւ տայր նոցա երկիր եւ ապարանս, եւ ցայժմ նոցին մնացելոց զաւակն ունի. եւ մեծ մասն ի նոցանէ ի Մարաց եւ ի Կ.ըկանացւոց է։ Իսկ հեռացելոցն բազում ինչ պարգեւէր, եւ զիշխանսն եւ զզօրականս առանց տրտնջելոյ արձակէր յիւրմէ։ Ապա տայր եւ զօրացն որ զիւրեւ էին|ինչս, որչափ ի Մարդիացւոցն առ։ Իսկ բիւրապետացն եւ իւրոց սպա-

սաւորացն տայր զընտիր ընտիր իրաց ըստ իւրաքանչիւր արժանաւորութեանն, եւ զայլն ամենայն բաշխէր. եւ տուեալ զբաժինսն իւրաքանչիւր ումեք ի բիւրապետացն եւ յանձանձիչս կացուցանէր զնոսա բաժանել որպէս եւ նայն բաժանեաց նոցա։ Եւ զայլ եւս գանձսն ըստ իւրաքանչիւր արժանի տային. սպարապետն փորձեալ զիշխանսն որ ընդ իւրեւ իցեն, եւ վեցապետքն քննեալ զիւրեանց զօրականսն։ Եւ այնպէս ամենեքին առնոյին զարդար մասնն։

Իբրեւ զտուրսն առին, կէսք այսպիսի ինչ զԿիւրոսէ խօսէին, թէ ինքն բազում ինչ ունի, զի իւրաքանչիւր ումեք ի մէնջ այսչափ ինչ տայ. եւ կէսք ի նոցանէ ասէին. Չի՞նչ ինչ բազում ունիցի. ո՞չ այն բարք են Կիւրոսի բնաւ ինչս իսկ ժողովել, այլ տալով մանաւանդ քան ստանալով ուրախ առնի։ Իբրեւ բանք ի Կիւրոս հասանէին, եւ կարծիքն որ զնմանէ կարծէին, զբարեկամն ի մի վայր գումարէր եւ զամենայն աւագսն, եւ խօսէր այսպիսի ինչ օրինակ։

Արք բարեկամք, տեսի մարդիկ, որ այսպէս կամէին կարծեցուցանել թէ առաւել ունիցին քան զոր ունիցին, զի համարէին թէ այնպէս առատք երեւիցին։ Բայց ինձ թուի, ասէ, թէ

նոքա յետս ընդդէմ իմն այնր զոր կա-
մինն՝ ուշ եդեալ երթայցեն։ Զի որ
բազումն ունել կարծեցուցանեն, եւ ոչ
արժանի ըստ գոյաւորութեանն օգուտ
բարեկամացն գործիցեն, թուի ինձ թէ
անազատիկ միտս ունիցին։ Լցեն, ա-
սէ, որք կամիցին թագուցանել թէ որ-
չափ ինչ ունիցին, եւ սոքա չարաբարոյ
եւ վնասիչ բարեկամացն թուիցին։ Զի
առ չգիտել ընչիցն բազում անգամ ա-
ղաչեցեալ ոչ խոստանան բարեկամք ըն-
կերացն իւրեանց, այլ պատրեն։ Այց
ինձ միամտութեան թուի, թէ զիւր
զօրութիւն ոք յայտ ածիցէ, եւ ըստ
նմին ի լաւութեան ճգունս յորդորիցի։
Այսուհետեւ եւ ես, ասէ, ինչ զոր մար-
թիցի տեսանել յիմոց արարոց աստի,
զայն ցուցից ձեզ, եւ զոր չիցէ հնար
տեսանելոյ, պատմեցից։

Զայս ասէր, եւ բազում գեղեցիկ
ստացուածս ցուցանէր, եւ զմթերսն
զոր չէր դիւրին տեսանել պատմէր, եւ
ի կատարած ասէր այսպէս. Արժան է
զայս ամենայն, ոչ իմ ինչ մանաւանդ
համարել քան եթէ ձեր։ Արանզի ես
զայդ ամենայն մթերեմ, իբր ոչ եթէ
զի ես ինչ ծախիցեմ եւ ոչ զի ես մա-
շիցեմ, նա եւ կարիցեմ իսկ ոչ, այլ զի
հանապազ յորժամ լաւութիւն ինչ ոք
ի ձէնջ վճարիցէ, տաց. եւ եթէ կարօտ
ոք ի ձէնջ իւիք իցէ, եկեսցէ առ իս

եւ առցէ որ ինչ պիտոյն իցէ։ Զայս գոյն օրինակի բանքն ճառեցան։

ԳԼՈՒԽ Ե

ԻՐԵՒ ետես թէ քաջ կարգեցան հաստատեցան իբք Բաբեղացւոց աշխարհին կամէր ի բաց գնալ. կազմէր պատրաստէր ի Պարսս երթալ, եւ այլոց հրաման տայր։ Իբրեւ բաւական զամենայն զպէտսն պատրաստէր չու առնէր խաղայր գնայր։ Բայց եւ զայս պատմեսցուք թէ զիարդ բազում ամբոխ էր եւ յօրինեալ կարգօք կազմէր եւ միւսանգամ զկահ եւ զկազմած ժողովէր, եւ վաղվաղակի զետեղէր ուր պիտոյ էր։ Զանգի յորում վայրի բանակ հարկանէր թագաւորն, ամենեքին որ զթագաւորաւն էին, զիւրաքանչիւր խորանսն առեալ բանակէին եւ ամարայնի եւ ձմերայնի։

Իսկ եւ իսկ այսպիսի ինչ օրէնս կարգէր Կիւրոս ընդ արեւելակողմն զվրանն կանգնել. ապա կարգէր հրամանաւնախ՝ թէ պարտ է սպասաւորաց արքունական խորանին ի բացեայ բնակել. յետ այնորիկ զաջակողմնն յայտ առնէր, եւ ամ՛ճաբերացն զահեակն, երիւարաց զաջն, եւ այլոց գրաստուց զձախ. եւ զայլն եւս ամենայն կարգէր եւ յարդարէր, առ ի գիտելոյ իւրաքանչիւր զիւր տեղի եւ չափովք եւ վայրօք։

Յորժամ զկահ եւ զկազմած ժողովեցեն, կարգեն դնեն իւրաքանչիւր զկազմածն, որոց հրամայեալ իցէ ի կիր արկանել. եւ ոմանք ի գրաստուց վերայ դնեն։ Որպէս զի ամենեքին որ զկահն տանիցին, երթայցեն յոր կարգեալ իցեն, տանել. եւ ամենեքին դնիցեն յիւրեանց գրաստուց վերայ։ Այնպէս նոյն միժամ բաւական է ամբառնալոյ միում խորանի եւ բազում վրանաց։ Եւ վասն հանդերձանացնոյնպէս է. եւ վասն պատրաստելոյ զամենայն պաշարս ի ժամու, որպէս հրաման տուեալ իցէ իւրաքանչիւր ումեք առնել. նմին իրի իսկ նոյն ժամանակ շատ եւ բաւական է միում եւ բազմաց գործել։ Եւ զոր օրինակ պաշարայն պաշտօնեայք իւրաքանչիւր զպատշաճ վայրսն ունէին, նոյնպէս եւ վառելոցն ի բանակին պատեհ իւրաքանչիւր զինուց զարդուց տեղիքն էին, եւ թէ ո՞ր այն տեղիքն իցեն գիտէին, եւ ամենեքին առանց այսր անդր հարկանելոյ յանցնիւր տեղիս երթային։

Զանգի լաւ եւ բարուք համարէր Կիւրոս զի եւ ի տան յարդարումն լինիցի. որպէս զի թէ որում պիտոյ ինչ լինիցի, յայտ իցէ թէ ուր երթայցէ առնուլ։ Բայց եւս առաւել գեղեցիկ համարէր զզօրականաց գնդի յօրինուածս, զի որչափ երագագոյնք իցեն ժամք

դիպօղք գործոյ պատերազմի, զոյնչափ եւս մեծ սխալ լինիցի յայնցանէ, որ ի նոսին յետնեալ զտանիցին։ Իսկ ի նոցանէ որ ի ժամու հասանիցեն, բազում գործս մեծամեծս ի նոցունց վճռեալ ի պատերազմունս տեսանէր. վասն այնորիկ առաւել փոյթ յանձին ունէր զյօրինուածոց։

Եւ ինքն իսկ նախ զանձն կացուցանէր ի մէջ զօրականացն բանակի, որպէս թէ այն տեղի ամուր իցէ։ Եւ ապա զՀաւատարիմն որպէս սովորն էր, շուրջ զնուրեւ դումարէր։ Ընդ նոսա բակ առեալ կային այրուձին եւ կառավարքն, քանզի եւ նոցա ամուր տեղիս պիտոյ համարէր, զի ոչ մի զէն ունին որով կռուիցին յորժամ բանակիցեն, այլ բազում ժամանակ պիտոյ իցէ առ սպառազինութիւն, եթէ կամիցին ելանել վասն իրիք օգտի։ Ընդ աջմէ եւ ընդ ահեկէ նորա եւ հեծելազօրուն շերտաւորացն տեղի էր. եւ յառաջոյ աղեղնաւորաց, եւ յետուստ նորա հեծելոցն։

Զվառեալսն եւ զայնոսիկ որ զյաղթ սուսերսն ունէին, ամենեւին շուրջանակի իբրեւ պարիսպ ունէր, զի եթէ պիտոյ ինչ լինիցի կազմել հեծելոցն, մնացականքն առաջի կայցեն եւ տայցեն զգուշութեամբ վառել։ Ենջէինի գրնդի անդ վառեալքն եւ շերտաւորքն եւ

աղեղնաւորքն, զի եւ ի դիշերաց, եթէ պէտք իմն լինիցին, իբրեւ զվառեալսն կազմ եւ պատրաստ իցեն յարձակելոցն ի դիմի հարկանել. նոյնպէս եւ աղեղնաւորքն եւ շերտաւորքն անդր քան զվառեալսն, եւ եթէ մօտ գայցեն ոմանք, պատրաստութեամբ հարկանիցին ի դիմի եւ նետալից առնիցեն։ Ունէին եւ դրաւշս ամենայն իշխանք ի վերայ վրանացն։

Իսկ սպասաւորքն, որպէս ի քաղաքս քաղաքս, որ զգաստագոյնքն իցեն դիտեն զբազմաց ապարանս, մանաւանդ զաւագացն. նոյնպէս եւ ի բանակս տեղեաց զօրավարացն հմուտ էին Կիւրոսի սպասաւորքն, եւ զդրաւշս ճանաչէին թէ որ դրաւշ իցէ իւրաքանչիւր։ Որպէս զի եթէ կամէր զոք Կիւրոս, ոչ եթէ երթային խնդրէին, այլ ի կարճոյ ընթանային առ իւրաքանչիւր ոք ինոցանէ։ Եւ վասն ցեղընտիր ի միմեանց զատանելոյ, առաւել եւս յայտնի լինէր եթէ ոք բարւոք կարգեալ կայր, եւ եթէ ոչ ի դլուխ հանէր ոք զհրամանն։ Եւ յորժամ այսպէսն կայցեն, համարէր այսպէս թէ գիշերի ոք եւ կամ ցերեկ ի վերայ դիմիցէ, իբրեւ ի դարան ի զօրսն անկանիցին որ դիմիցենն։

Եւ ճակատու կարգս ոչ զայն եւ եթէ համարէր, եթէ ձգել երկայնել ոք դիւրաւ զճակատն կարիցէ կամ թանձրա-

ցուցանել կամ ի թեւէ ի ճակատս կա-
ցուցանել, կամ յերեւել թշնամեացն
կամ յաջմէ կամ յահեկէ կամ յետուստ
կողմանէ, դէպ ուղիղ պարզել. այլ եւ
ցրուել եւս յորժամ պիտոյ իցէ, կարգս
ճակատու համարէր, եւ կարգել կացու-
ցանել զեւրաքանչիւր մասն, ուր առ-
աւել օգուտ լինիցի, եւ վաղվաղել ուր
ճեպելն պարտ իցէ. զայս ամենայն եւ
զայսպիսի առն զօրավարի համարէր, եւ
զայնմ ամենայնէ զմի օրինակ փոյթ յան-
ձին ունէր. եւ ի ճանապարհն հանա-
պազ ըստ դիպացն պատահելոց կար-
գեալ գնայր. իսկ ի բանակելն բաղում
անգամ դադարէր ըստ այնմ օրինակի
որպէս կանխագոյն ճառեցաւ:

Եւ իբրեւ երթեալ հասանէին ի Պա-
ղեստան, խոտորեցաւ Կիւրոս առ Կիա-
քսարէս. իբրեւ ողջոյն եառուն միմեանց,
նախ ասէ Կիւրոս ցԿիաքսարէս, եթէ
ընտրեալ է նմա տուն ի Բաբեղոնի եւ
տաճար, զի յորժամ անդր երթայցես
իբրեւ ի քո ապարանս իջանիցես. եւ
ապա բաղում պատարագս տայր նմա
եւ յաճախ բարութիւնս. եւ Կիաքսա-
րէս ընկալաւ զնոսա եւ առաքէր առ նա
զդուստրն, որ պսակ ոսկի եւ ապարան-
ջանս բերէր եւ քայռս եւ մարական
պատմուճան գեղեցիկ անհնարին, եւ
աղջիկն պսակէր զԿիւրոս:

Կիաքսարէս ասէ. Տամ եւ զդա քեզ կնութեան որ իմ դուստր է, եւ քո հայրն՝ կին արար զիմոյ հօրս դուստրն՝ յորմէ դու իսկ ծնար։ Եւ սա է, որում դու բազում անգամ, յորժամ մանուկն էիր եւ առ մեզ էիր, սնուցիչ լինէիր։ Եւ յորժամ հարցանէր ոք զնա թէ ո՞ւմ առն լինիցիս, ասէր թէ Կիւրոսի։ Տամ նմա թագաւորութիւն զբնաւ իսկ զԱրաստան քանզի չէք իմ արու մանուկ ճշմարիտ։ Եւ զայս ինչ խօսեցաւ, եւ Կիւրոս տայր անդէն պատասխանի, Ոչ զգոն գովեմ եւ զաղջիկն եւ զպատարագան, բայց կամիմ, ասէ, հօրս եւ մօրս կամաք յանձն առնուլ քեզ զայդ, այսպէս խօսեցաւ Կիւրոս, սակայն զամենայն ինչ պարգեւէր աղջկանն զոր ինչ հաճոյն համարէր Կիաքսարայ. զայս իբրեւ արար, յուղի անկեալ երթայր ի Պարսից աշխարհն։

Իբրեւ գայր հասանէր ի սահմանակողմն Պարսից աշխարհին, թող զզօրս իւր, եւ ինքն բարեկամաքն հանդերձ երթայր ի քաղաքն բերեալ նուէրս, մինչ զի բաւական իցեն ամենայն Պարսից յաղել եւ ուտել։ Եւ բերէր պատարագս որ հօրն եւ մօրն վայել էին եւ այլոց բարեկամացն, եւ որ իշխանացն վայել էին եւ ծերոցն եւ ամենեցուն հանդիսապատուացն։ Տայր եւ ամենեցուն Պարսից զոր ինչ եւ այժմ տայցեն յորժամ

թագաւոր այր ի Պարսս հասանիցէ։ Ապա ժողովէր Կամբիւսէս զծերսն Պարսից եւ զիշխանս տանուտեարս. կոչէր եւ զԿիւրոս եւ խօսէր այսպիսի ինչ։

Արք պարսիկք եւ դու Կիւրէ, նմանագոյնս ընդ ձեզ երկոցունցդ մտադիւրութեամբ եմ. քանզի ձեզ թագաւորեմ, եւ դու Կիւրոս, որդեակ իմ ես։ Եւ արդ իրաւունս համարիմ թէ զոր երկոցունց կողմանց բարութիւնս կարծիցեմ զայն ի մէջ բերեալ ասիցեմ։ Զի յանցեալ ժամանակսն, դուք զԿիւրոս մեծացուցէք, տուեալ զօրս, եւ նմին զօրավար զԿիւրոս կացուցեալ։ Եւ Կիւրոսի զօրավար լեալ զօրացն աստուածովքն, փառաւորս զմեզ ով Պարսիկք յամենայն մարդիկ արար, եւ պատուական ես ի բնաւ յասիացւոց աշխարհիս. եւ յերթելոցն ընդ նմա ի պատերազմ զքաջսն մեծացոյց, եւ բազմաց վարձս եւ կերակուր պատրաստեաց։ Եւ հաստատեաց կացոյց Պարսից այրուձի եւ արար հաղորդութիւն Պարսից ընդ դաշտաց։ Արդ եթէ այսուհետեւ այսպիսի միտս ունիցիք, բազում բարութեանց պատճառք միմեանց լինիցիք։ Այլ եթէ կամ դու Կիւրոս վերացեալ բարձրացեալ ի մօտաւոր դիպաց աստի, ձեռն արկանիցես եւ Պարսից իշխել ժլատութեամբ եւ այլոցն, կամ դուք ով քաղաքացիք նախանձ բերեալ ընդ զօրու-

թիւն նորա, ջանայցէք քակել զնա յիշ-
խանութենէ, գիտասջիք եթէ արգել
եւ խափան միմեանց բազում բարու-
թեանց լինիցիք։

Եւ արդ զի մի այն լինիցի, այլ բա-
րութիւնքն, հաճոյ թուի ինձ, ասէ,
ձեզ առհասարակ զոհս մատուցանել,
եւ զդիան վկայս կացուցեալ դաշինս ընդ
միմեանս կռել, քեզ Կիւրոս, եթէ ու-
րուք զօր ի վերայ գումարեալ խաղայ-
ցէ ի մարտ պատերազմի ի վերայ Պար-
սից աշխարհիս կամ զօրէնսն քակել
ջանայցէ, ամենայն զօրութեամբ օգ-
նական լինել, եւ ձեզ Կիւրոսի որ ինչ
հրամայիցէ։ Եւ մինչ դեռ ես կենդանի
իցեմ, իմ լինիցի ի Պարսս թագաւորու-
թիւնն։ Բայց յորժամ ես վախճանե-
ցայց, յայտ է եթէ Կիւրոսի լինիցի,
եթէ կեցցէ։ Եւ յորժամ նա ի Պարսս
եկեալ հասանիցէ, սուրբ եղիջիք թէ
նա փոխանակ ձեր զենցէ պատարագս,
զոր ես այժմ յաղեմ։ Իսկ եթէ ի տար
աշխարհ երթայցէ, բարւոք առնիցէք
եթէ յաղգէ անտի, որ ձեզ ազնուա-
գոյն թուի, նա կատարեսցէ զձօնիս
դիցն։

Իբրեւ զայս խօսեցաւ Կամբիւսէս,
հաճոյ թուեցաւ Կիւրոսի եւ աւագացն
Պարսից. ուխտս հաստատէին դաշինս
կռէին եւ զդիան վկայս կոչէին. եւ ցայժմ
զնոյն կատարեն առ միմեանս Պարսիկք

եւ թագաւորն։ Իբրեւ այս ամենայն վճարէր, ի բաց գնայր Կիւրոս. եւ ի գնալն իբրեւ եհաս ի Ս՝արս, որպէս հաճոյ թուեցաւ հօրն եւ մօրն, կին արար զդուստրն Կիաքսարայ։ Զորմէ եւ այժմ համբաւ է թէ ամենեւին գեղեցիկ էր. բայց ոմանք ի պատմագրաց ասեն թէ զմօրն քոյր կին արար, այլ բնաւ ի պառաւութեան լեալ էր աղջիկն։ Դ՝ այեա հարսանեացն, անդէն վաղվաղակի առեալ չու առնէր։

ԳԼՈՒԽ Զ

ՅՈՐԴԱՄ էրն ի Բաբեղոնի, հաճոյ թուեցաւ նախարարս յազգն վանեալս առաքել։ Բայց զպահապանսն որ յամուրսն էին եւ զհաղարապետս պահապանաց աշխարհին չկամէր թէ այլուսմ ումեք քան զինքն հնազանդեացին։ Զայսմ ամենայնէ հոգայր, զմտաւ ածեալ զի եթէ ի նախարարացն ոք առմեծութեան եւ բազմամբոխ յաճախութեան մարդկան անգոսնիցէ, եւ չհաւանել մտաբերիցէ, իսկ եւ իսկ հակառակորդս յաշխարհին ունիցի։ Ուրդ իբրեւ զայս կամէր առնել, խորհեցաւ կոչել միանգամայն նախ զաւագանին, եւ պատմել զի գիտասցեն թէ վասն որոյ երթայցեն որ երթայցենն։ Բանզի համարեցաւ թէ այնպէս դիւրագոյն

համբերիցեն։ Բայց յորժամ կայցէ դք իշխան, եւ ազդ չլինիցի նմա այն, դժկամակ լինիցի զմտաւ ածեալ ե- թէ վասն թերահաւատելոյ ի նա այն եղեւ։

Վասն այնորիկ ժողովեալ խօսէր ընդ նոսա այսպէս. Դրք բարեկամք, են մեր ի քաղաքն վանեալս վկան- դեալս պահապանք եւ պէտք պահապա- նաց զորս երբեմն թողաք. յորժամ ի բաց գնայի հրաման ետու նոցա, մի յայլ ինչ գործ մնել, բայց զպարիսպն պահել։ Արդ չմերժեմ զնոսա յիշխա- նութենէ անտի, զի բարւոք պահեցին որ ինչ հրամայեցաւն։ Բայց հաճոյ թուի ինձ այլ եւս կուսակալս առաքել որ բնակչացն իշխեսցեն, եւ զհարկ աշխարհին առեալ, տայցեն պահապա- նացն զվարձն, եւ որ ինչ պիտոյ իցէ յայն ծախեսցեն։ Եւ կամիմ զի որոց անդն իցեն ի ձէնջ, եւ որոց ես գործ ի ձեռն տամ առաքեալ ի գործ ինչ յազգն յայնոսիկ, զատանիցին վայրք եւ տունք անդէն, զի անդէն հարկս հարկանիցեն նոցա, եւ յորժամ երթայ- ցեն անդր, կարիցեն ի տունս ագանել։

Այս ասէր, եւ տայր բազմաց ի բարեկամաց անտի յամենայն քաղաքն վանեալս տունս եւ հնազանդեալս. եւ ցայժմ եւս նոցին որդւոց եւ թոռանց եւ թոռին թոռանց այնոցիկ որ յայն-

ժամն առին, են վայրքն յայլ եւ յայլ երկրի, եւ ինքեանք առ Թագաւորին բնակեն։ Պարտ եւ պատշաճ է, ասէ, նախարարացն Երթելոց ի գաւառան յայնոսիկ, այնպէս նայել ընդ մեզ, զի որ ինչ յիւրաքանչիւր երկրի գեղեցիկ եւ բարի իցէ, յուշ լինիցի նոցա եւ եւ այսր առաքել, զի որ ասաս իցեմք վայելիցեմք ի բարութիւնան որ ամենայն ուրեք իցեն. քանզի եթէ եւ վիշտք ինչ ուրեք իցեն, մեզ հասանիցէ պաշտպանել։

Այս ասացեալ ապա զբանան հանդուցանէր։ Եւ յետոյ զորս ծանեաւ ի բարեկամաց անտի, եթէ ցանկան երթալ ըստ բանիցն ասացելոց, ընտրեալ ի նոցանէ զպիտանագոյնսն, առաքէր կուսակալս. յաշխարհն Արաբացւոց զԱՐեգաղիւբոս եւ ի Դամիրս զԱրտաբատաս, եւ յաշխարհն Փռիւգացւոց ի մեծն զԱրտակամաս, ի Ղիւկիացւոց եւ Յոնիացւոց զՔրիւսանտաս, եւ ի Կարիա զԱդուսիոս, որպէս խնդրեցինն. իսկ ի Փռիւգաստան որ կայ առ երի Եղղեսպոնտոս ծովու, եւ յԱւոզիդա զՓառնուքոս։ Բայց Կիղիկեցւոց աշխարհին եւ Կիւպրացւոց եւ Պափղագոնացւոց ոչ առաքէր շահապ պարսիկ, քանզի կամակար եկին ընդ նմա ի պատերազմ ի վերայ Բաբեղացւոց քաղաքին. բայց հարկս եւ նոցա հրամայէր հարկանել։

Եւ որպէս յայնժամ կարգեաց Կիւ-
րոս, ըստ նմին օրինակի գոն եւ այժմ
ի միջնաբերդին պահապանք թագաւո-
րին, եւ հազարապետք պահապա-
նացն ի թագաւորէ անտի կարգեալ
կան, եւ գրեալ են մի ըստ միոջէ ի թա-
գաւորէն։ Պատուէր տայր նախարա-
բացն առաքելոց, զի որչափ մարթիցի,
զոր ինչ տեսանիցեն եթէ նայն առնի-
ցէ, ամենայնի նմանօղ լինիցին, զառա-
ջինն հեծելազօրս կացուցանել ի Պար-
սից եւ ի նիզակակցաց անտի երթելոց
զհետ նոցա եւ կառավարս եւս։ Իսկ
որ երկիր եւ տաճար առնուցուն, ստի-
պել զնոսա յորսս երթալ եւ զցածու-
թենէ փոյթ յանձին կալեալ, մատու-
ցանել զանձինս նախարարին ի կիր ար-
կանել եթէ պէտք ինչ իցեն։ Խրա-
տել զմանկունսն ծնեալս յորսս, որպէս
եւ առ նմա իսկ։ Եւ ինքն նախարարն
հանիցէ յորս զայնոսիկ որ ի դրունսն
իցեն, եւ կրթել զանձն եւ զիւրսն ի
մարտ պատերազմի։

Որ ոք, ասէ, ըստ համարոյ զօ-
րութեանն, բազում կառս եւ բազում
քաջ երիւարս ինձ ցուցանիցէ, զնս
ես իբրեւ առաքինի նիզակակից եւ որ-
պէս բարեւոք պահապան Պարսից եւ ի-
մոյ իշխանութեանս, մեծարեցի։ Լիցին
եւ առ ձեզ աթոռք, որպէս ենն առ
իս, եւ քաջքն նախամեծար պա-

տուեալք. եւ սեղան, որպէս եւ իմն որ կերակրիցէ նախ զընտանեական, եւ յետ այնորիկ բաւական իցէ բարեկամաց բաշխել տալ, եւ մեծարել զայն որ լաւութիւն ինչ օր ըստ օրէ գործիցէ։ Ստացարուք եւ դրախտս եւ երէ անուցէք, եւ մի դուք երբեք առանց աշխատութեան հաց առաջի դնիցէք, եւ մի երիւարաց առանց ի հանդիսի անցանելոյ խար արկանիցէք։ Վասանզի մի եմ չկարեմ ես մարդկեղէն զօրութեամբ զամենեցուն ձեր բարիս հոգալ, այլ պարտ եւ պատշաճ է ինձ որ քաջս իցեմ, ընդ քաջացն որ առ իս իցեն, ձեզ օգնական լինել. եւ դուք նոյն օրինակ որ քաջքդ իցէք, ընդ որոց առ ձեզդ իցեն, ինձ թիկունք օգնականութեան լինիցիք։ Կամէի թէ եւ զայս ածէիք զմտաւ եթէ յայսմ ամենայնէ զոր այժմիկ ձեզ հրամայեմ, ոչ ինչ ծառայից պատուիրեմ. եւ զոր ձեզդ ասեմ թէ պարտ է առնել եւ ես փութամ զամենայն առնել, որպէս ես ձեզ հրաման տամ նմանօղ ինձ լինել, նոյնպէս եւ դուք այնոցիկ որ ըստ ձէնջ ունիցին իշխանութիւն, ուսուցէք՝ ձեզ նմանօղ նախանձաւոր լինել։

Այս յայնժամ Կիւրոս կարգեաց եւ ցայժմ տակաւին նովին օրինակաւ ամենայն պահպանութիւնք որ ընդ թագաւորաւն իցեն, նոյնպէս պահին,

եւ դրունք իշխանացն զնոյն օրինակ պաշտօն առնուն. եւ ամենայն տունք մեծամեծք եւ փոքունք նոյնպէս բնակեալ են. եւ ամենայն քաջք ի դրացեացն աթոռովք նախամեծար պատուին, եւ համօրէն ճանապարհք ըստ նմին օրինակի կարգեալ յարդարին, եւ ամենեւին բովանդակեալ ի գլուխ ելանեն բազում գործք սակաւ վերակացուօք։ Եւ զայս ասացեալ թէ որպէս պարտ իցէ առնել իւրաքանչիւր ումեք, եւ յաւելեալ իւրաքանչիւր զօրս, արձակէր. եւ պատուէր տայր ամենեցուն կազմ եւ պատրաստ լինել զի ի գալ ամին միւսոյ պատերազմ լինիցի եւ հանդէս համարոյ արանց եւ զինուց եւ երիւարաց եւ կառաց։

Ի միտ առաք եւ զայս եթէ Կիւրոս այնմ արար սկիզբն, որպէս ասեն, եւ ցայժմ տեւեալ բաւէ։ Զի երթայր ասպատակաւ ամի ամի զօրօք որ եթէ ի նախարարաց անտի ոք օգնականութեամբ կարօտ իցէ, օգնական լինիցի. եւ եթէ անգոսնեալ ամբարտաւանիցէ, ի կարգ ածիցէ. եւ եթէ կամ անփոյթ ոք առնիցէ զհարկն հարկանել, կամ բնակչացն պահունել, կամ զի երկիրն արդիւնս ծնուցանիցէ, կամ թէ մի ինչ ի հրամայելոցն թողուցու, զայն ամենայն յարդարիցէ. եւ եթէ չիցէ ինքն ձեռնհաս ազդ ա-

բասցէ թագաւորին։ Եւ նորա լուեալ խորհուրդ առցէ վասն անսաստելոյն. եւ որ բազում անգամ ասիցին եթէ արքայորդի իջանէ, եթէ թագաւորի եղբայր իջանէ, եթէ ակն թագաւորի իջանէ, եւ երբեմն չերեւիցին, նոքա յայնցանէ են որ ասպատակաւ արշաւին։ Զի իւրաքանչիւր ոք ի նոցանէ դառնայ այսրէն յորժամ արքայ հրաման տայցէ։

Ասաք եւ զայլ ինչ հնարս նորա առ ի մեծութիւն իշխանութեան իւրոյ, որով վաղվաղակի ազդ լինիցի նմա զամենեւին հեռաւորացն թէ զինչ լինիցի։ Զանգի զմտաւ ածեալ թէ որչափ ճանապարհ հարկանիցէ երիւար եթէ զցերեկ գնայցէ, եւ ըստ նմին անջրպետութեան ասպաստանս գործէր, եւ երիւարս ի նոսին կացուցանէր եւ նոցին խնամակալս. եւ այր մի ի վերայ իւրաքանչիւր տեղեացն կարգէր, որ բաւական իցէ առնուլ զբերեալ դիրան, եւ առնուլ զերիւարսն վաստակեալս եւ զայլ երիւարս նորոգ առաքել։ Եւ երբեք զի եւ ոչ զցայգ, ասեն, դադարիցեն գնալ, այլ ցայգութեան պատգամաւորին փոխանակել ցերեկութեանն. եւ յորժամ այն, ասեն, այնպէս լինիցի, ոմանք վաղագոյն քան զկորդան զայն ճանապարհ ի գլուխ հանիցեն. ապա թէ զայն ստեն, բայց թէ քան զմար-

դկան հետիոտիւք գնացս արագագոյն է, այն յայտ է. քանզի եւ այս բարուք է զբնաւ վաղվաղակի զգալ եւ արագ արագ հոգալ։

Իբրեւ այն ամենայն անցանէր, զզօրսն ի Բաբեղոն գումարէր, եւ լեալ, ասեն, նորա երկոտասան բեւրս հեծելազօրու եւ երկու հազար կառս գերանդազէնս, եւ վեց հարեւր բեւրս հետեւակաց։ Իբրեւ այն ամենայն հանդերձեցաւ կազմեցաւ, դիմեալ երթայր ասպատակաւ յորում, ասեն, վանեալ վկանդեալ զամենայն ազգս որ ի մտիցն Ասորւոց բնակեն մինչեւ ցծովն կարմիր։ Եւ յետ այնորիկ, ասեն, որ Ընդիպտոս ասպատակն է՝ եղեւ, եւ վկանդէր աշխարհն Ընդիպտացւոց։ Եւ յայնմ հետէ իւր իշխանութեան սահմանս անջրպետ արկեալ որոշէր, յարեւելից կուսէ ծովն կարմիր, ի հարաւոյ Ընքսինոս ծով, եւ յարեւմտից Կիպրացւոց եւ Ընդիպտացւոց աշխարհն, եւ առ հիւսիսի երկիրն Ընթուոպացւոց։ Եւ ի ծագաց անտի կողմանցն այնոցիկ կէսք վասն տօթոյն դժուարին առ բնակութիւն են, եւ կէսք վասն սառամանեացն, եւ կէսք վասն ջուրցն եւ այլք առ անջրդութեանն։

Ինքն քանզի ի նոցա միջի էր, ի ժամանակս ձմերայնոյն կայր ի Բաբիղոնի եւթն ամիսս, զի մարմանդ տեղիքն

էին, եւ գարնայնի զերիս ամիսս ի Շուշ քաղաքի, եւ ի ժամանակս ամառայնոյն զերկուս ամիսս Ակբատանայոց աշխարհին։ Եւ քանզի այնպէս, ասեն, առնէր, ցանգ կայր ի ժամանակս գարնայնոյն։ Եւ այսպիսի իսկ միտս ընդ նա մարդիկն ունէին, զի ամենայն ազգ նուազութիւն իմն իւր համարէր, եթէ չառաքէր Կիւրոսի որ ինչ գեղեցիկ ինչ յաշխարհին բուսանէր կամ անանէր կամ ի ճարտարացն գործէր. նոյնպէս եւ ամենայն քաղաք եւ ամենայն ոք առանձինն մեծատուն լինել կարծէր եթէ շնորհէր ինչ Կիւրոսի. քանզի եւ Կիւրոս առեալ յիւրաքանչիւր ումեքէ զայս զոր առատութեամբ իսկ ունէին որ տայինն, եւ ընդ այնր տայր զայն որով անօսրացեալ գիտէր զնոսա։

ԳԼՈՒԽ Է

Եւ ապա իբրեւ յառաջադէմ ժամանակն լինէր, եւ Կիւրոս ծերացեալ հասանէր ի Պարսս եւթներորդ անգամ յետ իշխանութեանն. եւ հայր նորա եւ մայր կանխագոյն իսկ, որպէս ի դէպ էր, վախճանեալ էին։ Կիւրոս զոհս ի մեհենին ըստ օրինացն մատուցանէր, եւ առաջնորդէր պարուցն Պարսից ըստ հայրենի կարգացն, եւ ամենեցուն տայր պարգեւս որպէս սովորն էր։ Ի քուն

եղեալ յարքունեան այսպիսի ինչ երազ տեսանէր. թուէր իմն նմա այսպէս, թէ մատուցեալ ումն ազնուագոյն քան զմարդկեղէն կարգս, ասէ. Պատրաստեաց Կիւրոս զի առ դիսն երթաս։ Այն երազ տեսեալ զարթեաւ, եւ գրեթէ կարծէր տեսանել եթէ կենաց վախճան եկեալ հասեալ կայ։ Ընդէն իսկ եւ իսկ վաղվաղակի առեալ նուէրս զոհս գաւառական Արամազդայ մատուցանէր եւ արեգական եւ այլոց եւսդիցն ի վերայ բարձաւանդակացն, որպէս Պարսիկքն մատուցանեն զոհս, եւ մատուցեալ կայր յաղօթս ձեւ զայս օրինակ. Արամազդ հայրենի, եւ արեգակնդ եւ ամենայն իսկ համօրէն դիք, ընկալարուք զդոսա եւ զնուէրս բաղմաց եւ գեղեցիկ իրացս այսոցիկ եւ արուեստեանց, եւ զգոհութիւնս զի գուշակեցէք դուք ինձ նուիրօք եւ նշանօք երկնից եւ հմայիւք եւ համբաւուք զոր ինչ պարտն էր առնել եւ որ ինչ չէր պատշաճ։ Յաճախագոյն գոհութիւն ձեզ, զի եւ ես ծանեայց զձեր խնամակալութիւն, ոչ երբեք ուրեք ընդ փառաւորութիւնս ի վեր քան զմարդ մեծամտեալ հպարտացայ։ Խնդրեմ ես ի ձէնջ տալ եւ այժմ որդւոց իմոց եւ կնոջ եւ բարեկամաց եւ ազգի իմում փառաւորութիւն, եւ ինձ որպիսի ինչ կեանս եւ տուք, նոյնպէս եւ վախճան շնորհել։

Այս արարեալ ապա դայր յապարանսն եւ կամէր հանգչել եւ անդէն ընկողմանէր։ Իբրեւ ժամն հասանէր, որ կարգեալ կային մատուցեալ հրամայէին լուանալ։ Եւ նա ասէր թէ հանգչիմ ուրախութեամբ։ Իսկ որ կարգեալն էին յորժամ ժամ իսկ էր, ընթրիս առաջի յօրինեալ դնէին, բայց անձն նորա ոչ մերձեցաւ ի խորտիկսն, եւ թուէր նմա ծարաւի լինել եւ արբ յօժարութեամբ։ Իբրեւ ի վաղիւ անդր նոյն անցք ընդ նա անցանէին եւ յերրորդումն աւուր, կոչէր զորդիսն, որք զհետ եկեալ դիպեցան նորա եւ ի Պարսս էին. կոչէր եւ զբարեկամսն եւ զիշխանս Պարսից. եւ իբրեւ ամենեքին հասեալ կային, սկիզբն առնէր բանից այսպիսի ինչ օրինակ։

Որդեակք իմ եւ ամենայն բարեկամք որ այսր հասեալ կայք, ինձ կենաց կատարած եկեալ հասեալ կայ. ի բազում ինչ իրաց զայդ հաւաստեաւ եւ ճշդիւր դիտեմ։ Բայց ձեզ, յորժամ վախճանեցայց, պարտ եւ պատշաճ է իբրեւ զփառաւորէ ումեքէ զինէն խօսել եւ գործել զամենայն։ Զի եւ յորժամ մանուկն էի, որ ինչ ի մանկունս լաւութիւնքն համարիցին թուի ինձ թէ շահեցայ. եւ իբրեւ ի չափ հասի, զայն որ յերիտասարդն էր. եւ յորժամ եղէ այր կատարեալ զայն որ յարսն էր։

Դու ի յառաջադէմն լինել ժամանակացն ցանգ իսկ եւ հանապազ աճեցեալ եւ զարգացեալ տեսանէին զզօրութիւն իմ։ Որպէս զի չզգայի իսկ երբեք եթէ ծերութիւն իմ քան զերիտասարդութիւն տկարագոյն իցէ, եւ չգիտեմ թէ ձեռն արկի եւ ցանկացայ իմիք եւ ոչ հասի, եւ զբարեկամս տեսի ինեւ փառաւորեալս եւ զթշնամիս ընդ ինեւ ի ծառայութիւն վտարանդեալ, եւ զաղդ իմ եւ զտոհմ որ յառաջագոյն արհամարհն էր Ասիացւոց աշխարհիս, այժմ թողում նախամեծար մեծարեալ. եւ յորոց տացայն չգիտեմ ինչ զոր իմ չէիցէ պահեալ։ Թէպէտ եւ յանցեալ ժամանակի անդ զամենայն վճարէի այնպէս որպէս իմ միտք կամէին, բայց ահն որ խուճապէր թէ մի գուցէ յառ յապա ժամանակն տեսանիցեմ կամ լսիցեմ կամ կրիցեմ ինչ դժընդակս, չտայր ամենեւին մեծամտել եւ ոչ տարածանել զանձն եւ ուրախ լինել։ Բայց այժմ եթէ վախճանեցայց, թողում զձեզ, որդեակք, կենդանիս, զձեզ եւ տուն ինձ դիքն ծնանել, թողում զաղդ եւ զտոհմ եւ զբարեկամս ի փառաւորութիւնս։ Օ՜իմ՞դ եւ ես ոչ յիրաւի երանելի համարիցիմ, եւ մշանջենաւոր ժամանակաւք հասանիցեմ յիշատակի։

Այլ պարտ եւ պատշաճ է զարքայութիւնն յայտնագոյն իսկ թողուլ.

զի մի յորժամ երկմտութեամբ իցէ, աշխատութիւն ձեզ հասուցանիցէ։ Բայց ես այժմ մի օրինակ զերկոսին զձեզ սիրեմ որդեակք. իսկ զխորհել եւ առաջնորդել յոր ինչ ի դէպ թուիցի, զայն նմա որ անդրանիկն իցէ, հրամայեմ, որ եւ բազում իրաց հմուտ է, որպէս ի դէպ իսկ իցէ։ Խրատեցայ եւ ես նոյնպէս յաշխարհէ ատոի իմէ եւ ձեր, տեղի տալ երիցագունաց, ոչ միայն եղբայր եղբօր, այլ եւ քաղաքացեաց ի ճանապարհի եւ ի նստել եւ ի խօսել։ Եւ զձեզ, որդեակք, իսկզ՞ան է նոյնպէս խրատեցի, զծերսն նախ մեծարել, եւ քան զմանկագոյնսն նախամեծար լինել։ Արդ ինձ իբրեւ թէ զհին ինչ եւ զընդելական եւ զօրինաւոր խօսիցիմ, այնպէս անսացէք։ Եւ դու Կամբիւսէ, կալ զթագաւորութիւնն, զի դիքն տան եւ ես տամ որչափ ինչ յինէն կուսէ իցէ։ Եւ քեզ տամ Ցանաւոքսարէ լինել շահապ նախարարապետ Մարաց եւ Հայոց եւ երրորդ Կադուսիացւոց. զայս տամ քեզ, եւ համարիմ զմեծ եւս իշխանութիւն եւ զանուն թագաւորութեան երիցուն թողուլ, բայց քեզ զանտրտումն փառաւորութիւն։ Վասնզի որոմ մարդկեղէն ուրախութեան կարօտ իցես ես ոչ նշմարեմ, ամենայն որ ինչ կարծի թէ ուրախ զմարդիկ առնիցէ, անդ կայ։

իսկ ցանկալն վճարել որ ինչ դժուարին առ վճարել իցէ, եւ զբազմաց իրաց հոգալ եւ չկարել ունել հանդարտութիւն, խթեալ ի հակառակութենէ անտի եւ ի նախանձաւորն լինելոյ իմոց գործոց, եւ նենգ գործել եւ նենգել. հարկ է թէ այս ամենայն գնա չար տագնապիցէ որ թագաւորելոցն իցէ եւ ոչ զքեզ. գիտասջիր զի նոքին չտան պարապութիւն ուրախ լինելոյ:

Արդ դու զայդ ի միտ առ Կամբիւսէս, թէ ոչ այս ոսկի գաւազան է, որ ողջ զթագաւորութիւնն պահիցէ. բարեկամք հաւատարիմք ճշմարիտ եւ անսխալ գաւազան թագաւորաց: Որ ի համարիր թէ ի բնէ իսկ ծնանիցին մարդիկ հաւատարիմ, զի եթէ այնպէս ինչ էր, նոքին եւ ամենեցուն հաւատարիմք երեւէին, զոր օրինակ եւ այլ ինչ եւս ամենայն որ ի բնէ ծնանիցին ամենեցուն նոյնք երեւիցին, այլ պարտ է իւրաքանչիւր ումեք իւրում անձինն հաւատարիմս յարդարել: Բայց ոչ ումեք դոյ բռնութեամբ ստանալ զնոսա, այլ մանաւանդ բարերարութեամբ: Արդ եթէ եւ զայլս ոմանս ջանայցես պահապանս թագաւորութեան կացուցանել, մի ուստեք նախ առնիցես սկիզբն, այլ որ աստստին իսկ ի միոջէ տեղւոյ ծընեալ իցէ. եւ արք քաղաքացիք քան զօտարոտինսն ընտանեգոյնք եւ հայա-

կիցք լինիցին։ Որ ի նմին զաւակէ ծը-
նեալ իցեն եւ ի նմին մօրէ սնեալ, եւ ի
նմին տան աճեցեալ եւ զարդացեալ,
եւ ի նոցին ծնողաց սիրեցեալ, եւ զնոյն
մայր եւ զնոյն հայր կարդայցեն, զի-
ա՞րդ չիցեն նոքին քան զամենեսին ըն-
տանեգոյնք։

Եւ արդ զոր ինչ բարութիւնս դիցն
շնորհեալ իցէ առ ընտանութիւն եղ-
բարց մի ընդունայնս առնիցէք, այլ ի
նոցունց իսկ վերայ անդէն շինեցէք զայլ
եւս սիրոյն արդիւնս. եւ այնպէս միշտ
իսկ առանց զմիմեամբք անցուցանելոյ
իցեն գութք ձեր. անձին խնամ ունի-
ցի որ զեղբօրէ հոգայցէ. քանզի ո՞ւմ
ումեք այլում եղբայր մեծացեալ այն-
պէս օգուտ իցէ, որպէս եղբօր. եւ ո՞
այլ ոք մեծարիցէ այնպէս զայր մեծա-
զօր, իբրեւ զեղբայր. եւ զո՞ ոք երկընչի-
ցի զրկել ոք յորժամ մեծ իցէ եղբայրն,
որպէս զեղբայր։ Մի ոք վաղվաղակի
քան զքեզ ունկնդիր լինիցի նմա եւ մի
յօժարագոյնս քան զքեզ հասանիցէ.
քանզի ոչ ումեք առաւել ընտանի իցեն
բարիք եւ չարիք նորա քան քեզ։ Ա՛յ
եւ զայս ած զմտաւ թէ ո՛ւմ շնորհես
եւ յումո՞ակն ունիս հասանել եւս մե-
ծամեծաց թէ ոչ ի սմանէ. եւ ո՛ւմ օգ-
նական եղեալ պատերազմակից զօրաւոր
զնա առցես փոխարէն։ Զ՞ո ոք չսիրել
առաւել ամօթոյ իցէ քան զեղբայր.

զո ոք քան զամենեսին նախամեծար առնել լաւ իցէ, բայց զեղբայր։ Եթէ միայն եղբայր, ով Կամբիւսէ, առաջին իցէ առ եղբօր, ոչ ինչ հասանիցէ առ յայլոց նախանձ կամ թշնամութիւն, բայց, որդեակք, զմիմեանս պատուեցէք եթէ այն կամ իցէ ձեր եւ ինձ շնորհել ինչ։

Քանզի ոչ եթէ կարծիցէք այնմ իմն խելամուտ հաստատութեամբ լինել եթէ ես այսուհետեւ ոչ ինչ լինիցիմ, յորժամ ի մարդկեղէն կենաց ասի վճարիցիմ. քանզի եւ ոչ այժմ զիմ միտս տեսանէիք, այլ ի գործոյ անտի զոր գործէի, նոքիմբք առնոյիք ի միտ թէ է։ Տակաւին չառէք ի միտ թէ զբկելոցն ոգիքն՝ որպիսի՛ ինչ ահ եւ երկեւղ ի ծանրագործ սպանօղն արկանիցեն, եւ զո՛ր նենգագործս ի վերայ պրղծոցն արձակիցեն։ Համարիցի՛ք եթէ մարթ իցէ տեւել մնալ պատուոց մեռելոցն, եթէ չէին ինչ իրիք տեարք նոցա ոգիքն։ Ոչ, որդեակ, ես ոչ երբեք ուրեք յանձն առի, եթէ ոգիքն մինչ դեռ ի մահկանացու մարմնի իցեն, կեցցեն, եւ յորժամ ի մարմնոյ զերծանիցին, մեռանիցին։ Քանզի տեսանեմ թէ եւ մահկանացու մարմինք որչափ ինչ ժամանակս ոգիքն ի նոսին իցեն, կենդանի երեւիցին. եւ ոչ զայն առի յանձն թէ անիմաստ ոգիքն լինի-

ցին յորժամ յանիմաստ մարմնոյ աստի մեկուսի լինիցին։ Այլ յորժամ անխառն եւ պարզ եւ յստակ եւ սուրբ միտքն ընտրիցին, յայնժամ ապա ի դէպ է թէ իմաստնագոյնք լինիցին։ Իսկ ի մարդոյն քակել, յայտ է թէ իւրաքանչիւր մասն յիւր համացեղսն գնայ բաց յոգւոցն, զի ոգիքն եւեթ ոչ յորժամ մօտ իցեն եւ ոչ յորժամ հեռի, երեւիցին։ Զմտաւ ածէք, ասէ, թէ եւս դրացի մարդկօրէն մահու քան զքուն չիք. բայց մարդոյ ոգին յայնժամ աստուածեղէն երեւի եւ ի նմին ժամանակի ի հանդերձելոց անտի կանխաւ տեսանէ ինչ. քանզի յայնժամ որպէս նման իսկ է, առաւել յազատութիւն ելանէ։

Թէ այս այսպէս իցէ, որպէս ինձ թուի, եւ ոգիքն զմարմին թողուն, պատկառեալ յոգւոյ աստի իմէ արարէք զոր ինչ աղաչեմս։ Ապա թէ չիցէ այնպէս, այլ ոգիքն որ ի մարմնի կայցեն ընդ նմին մեռանիցին, սակայն ի դիցն որ միշտ իսկ են եւ զբնաւ նշմարեն եւ ամենայնի ձեռնհաս են, որք եւ զբնաւի իսկ զկարդ անխարխար եւ անծերական եւ անսխալ ունին, եւ անճառ եւ անպատում ի գեղեցկութենէ եւ ի մեծութենէ, ի նոցանէ երկուցեալ մի ինչ ամպարիշտ մի ինչ անսուրբ գործիցէք եւ խորհիցիք։ Բայց յետ դիցն ի համօրէն իսկ մարդկան ազգէ որ հանապազն

ծնանիցի, ակն ածէք։ Վասնզի ոչ է-
թէ թանձրամած խաւարաւ ծածկեն
զձեզ դիքն, այլ հարկ է յայտ յանդի-
ման ամենեցուն ցանգ կենդանի լինել
մերոցն գործոցն. որք եթէ սրբագոյնք
եւ արտաքոյ քան զապիրատուութիւն
երեւիցին, հզօրս զձեզ յամենայն մար-
դկան միջի ցուցանիցեն։ Ապա եթէ ան-
իրաւ ինչ ի վերայ միմեանց խորհիցիք,
չհամարիցիք յամենայն մարդկանէ այ-
նուհետեւ արժանի հաւատարմութեան։
Վասնզի ոչ ոք այնուհետեւ կարիցէ
հաւատալ ձեզ, եւ ոչ թէ ամենեւին յօ-
ժարիցի եւս, յորժամ տեսանիցէ զըր-
կեալ զայն որում անկ իցէ աւելագոյն
գութ եւ խնամ։

Եւ արդ շատ է զի ուսուցի զձեզ թէ
որգունակ պարտ եւ պատշաճ իցէ առ
միմեանս լինել. ապա թէ ոչ՝ ի նախ-
նեաց անտի ուսարուք, քանզի այն
վարդապետութիւն ազնուագոյն է.
քանզի բազում հարք եւ մարք կային
մնացին սիրելիք որդւոց եւ շատք եւս
սիրելիք եղբարց. իսկ ոմանք ի նոցանէ
եւ զնոցին հակառական միմեանց գոր-
ծեցին։ Եւ արդ որոց միանգամ հա-
մարիցիք լեալ նպաստաւորս, զնոսին
ընտրեալ եւ ընդ նոյնս յօժարեալ,
խորհուրդ ուղղութեան խորհիցիք։
Թերեւս զայսմ ամենայնէ շատ եւ բա-
ւական իցէ։ Բայց զիմ դին, որդեակք

յորժամ վախճանիցիմ մի յոսկւոջ դնիցէք եւ մի յարծաթ եւ մի յայլում իմիք, այլ վաղվաղակի իսկ տուք հողոյ. քանզի զինչ քան զայն երանելի կայցէ, քան ընդ հողոյ խառնել, որ զամենայն դեղեցկութիւն եւ զբոլոր բարութիւն բուսուցանէ եւ պարարէ։ Դու ես մարդասէր իսկ եղէ, եւ այժմ յօժարութեամբ կամիմ հաղորդել այնմ որ բարերար եւ երախտագործ մարդկան իցէ։

Այլ թուի, ասէ, ինձ թէ ոդիքս նրւազեն ուստի ամենեւին առնէ սկիզբն պակասելոյ որպէս յայտ իսկ է։ Դ՝թէ ոք ի ձէնջ կամիցի մերձենալ յաջ իմ. կամ զաչս իմ, մինչ դեռ կենդանի իցեմ կամիցի տեսանել, մատիցէ։ Իսկ յորժամ ծածկիցիմ ես, խնդրեմ ի ձէնջ, որդեակք, մի ոք այնուհետեւ տեսանիցէ զմարմին իմ, եւ ոչ դուք իսկ գլխովին։ Բայց զամենայն Պարսիկս եւ զնիզակակիցս կոչեցէք առ իմոյ յիշատակի, ուրախակից ինձ լինել, զի յամրի լինիցիմ առ ի չկարելոյ այսուհետեւ կրել ինչ վիշտս, թէպէտ ընդ աստուածեղինին չիցեմ, թէպէտ ոչ ինչ իցեմ։ Դու ոք գայցեն բարիս առնիցէք նոցա որչափ արժանի առն փառաւորի համարիցիք եւ յուղարկեցէք. եւ գլուխ իսկ ամենայնի զայս, ասէ, յիշեցէք զինէն, թէ յորժամ բարեկամաց երախտաւորք լինիցիք եւ

զԹշնամիս կարիցէք պատժել։ Ողջ լե-
ցուք որդեակք իմ սիրելիք, եւ մօր ձե-
ռամ պատմեցէք իբրեւ յինէն եւ ա-
մենայն բարեկամք որ մօտ էք եւ որ հե-
ռի, ողջ լիջիք. իբրեւ զայս ասէր,
տայր ամենեցուն զաջն. ծածկեալ եւ
այնպէս վախճանէր։

ԳԼՈՒԽ Ը

Զ՝ գեղեցիկ եւ յաղթ քան զամե-
նայն թագաւորութիւն Ասիացւոց աշ-
խարհին Կիւրոսի արքայութիւնն եղեւ,
ինքն իսկ ի մօտոյ վկայէ անձինն։ Ո-
րոշէր սահմանօք յարեւելից ի կարմիր
ծովէ եւ ի հարաւոյ Եւքսինոս ծովու,
եւ յարեւմտից Կիւպրացւոց եւ Եգի-
պտացւոց աշխարհաւն, եւ ի հիւսւսոյ ի
կողմանցն Եթիոպացւոց։ Թէպէտ եւ
այսչափ թագաւորութիւն էր միոյ կա-
մաք Կիւրոսի վարէր. եւ նա զորս ընդ
իւրեւն էին իբրեւ զիւրուրոյն որդիս
մեծարէր եւ ողոքէր. որ ընդ իշխանու-
թեամբն էին Կիւրոսի իբրեւ հօր պաշ-
տօն հարկանէին։ Բայց իբրեւ Կիւրոս
վախճանէր, անդէն իսկ եւ իսկ վաղվա-
ղակի նոքին իսկ որդիքն ի ճակատս
զրգռէին, եւ վաղվաղակի կապարճս
դարձուցանէին յետս կային յապստամ-
բութիւն քաղաքի եւ ազգք եւ ազինք,
եւ ամենայն ինչ ի յոռութիւն զառա-

ծանէր։ Բայց զի ճշմարիտ իսկ խօսիմ, յաստուածականացն իսկ առնիցեմ ըս-կիզբն յանդիման կացուցանել։

Վասնզի գիտեմ եթէ յառաջագոյն թագաւորն եւ որ ընդ նովաւ էին, եւ նոցին, որ զյետին իսկ չարիսն գործէին, եթէ երդմնի եւ դաշնաւոր լեալ էին, զերդմունսն պահէին, եւ եթէ աչ տրւեալ էին, հաստատուն պահէին։ Եւ եթէ այնպիսիք չէին, եւ այնպիսի՛ կարծիս տային. ոչ ոք յանձն առնոյր հաւատալ նոցա, զոր օրինակ եւ ոչ այժմ հաւատայ ոք այսուհետեւ, քանզի յայտնի եղեւ ամպարշտութիւն նոցա։ Այսպէս եւ ոչ յայնժամ հաւատացին զօրավարք զօրայն որ ընդ Կիւրոսի իսկ արշաւեալ երթային։ Բայց այժմ առաջին կարգաց նոցա հաւատացեալ է-տուն ի ձեռս զանձինս եւ ածեալ առ թագաւոր անդր գլխատեցան։ Նա եւ բազումք իսկ ի խուժադուժ բարբարոսաց անտի որ ընդ նմա գնացին զօրաժողով ի մարտ պատերազմի, այլք այլով ինչ իրօք պատրեալ կորեան։

Բայց այժմ կարի եւս իմն դժնդակագոյնք են. քանզի յառաջն եթէ ի վիշտս ոք վասն թագաւորի մտանէր, կամ քաղաք մի կամ ազգ մի ընդ ձեռամբ նուաճէր կամ թէ այլ ինչ լաւութիւն վճարէր, նոքա էին որ մեծարեալ լինէին։ Իսկ այժմ թէ ոք, որպէս

Միթրիդատէսն որ հօրն Արիոբարզանեայ մատն եղեւ, եւ որպէս Ղեւոմիթրէսն որ զկին եւ զորդիս եւ զբարեկամացն մանկունս պատանդս առ Եգիպտացւոյն եթող, եւ զմեծամեծ երդմամբք անց եւ թագաւորին կարծեցաւ օգուտ ինչ առնել. նոքին իցեն որ մեծամեծարն մեծարիցին պատուովք։ Ընդ այն հայեցեալ ամենեցուն որ յասիացւոց աշխարհին էին, յամպարըշտութիւն եւ յապիրատութիւն զառաջան. զի որպիսիք որք վերակացուքն լինիցին, նոյնպիսիք բազում անդամ եւ որ ընդ նոքօք իցեն, լինիցին. եւ ապիրատագոյնք քան զառաջինն այժմ եղեն։

Իսկ յինչսն քան զնոյն եւս ապիրատագոյնք. քանզի ոչ եթէ որոց բազում ինչ յանցուցեալ իցէ, այլ որոց չիցէ զոք զրկեալ, զնոսա ըմբռնեալ շտապ տագնապի ի վերայ հասուցանեն յանիրաւի ինչս տուժել. որպէս զի որ բազում ինչսն ունիցին ոչ ինչ ընդհատ ի զրկողաց երկնչիցին։ Եւ ոչ ընդ հղօրագունացն յանձն առնուն կռուել, եւ ոչ համարձակին գումարել ի պատերազմ արքունի։ Վասն այնորիկ իսկ որ տացէ զք ընդ նոսա ճակատս, համարձակ իցէ ամենեցուն անդէն ի նոցին աշխարհին զիարդուպէտ ըստ իւրեանց հեշտի շրջել առանց մարտից պատե-

բազմաց վասն նոցին ի դիսն ամպարշտելոյ եւ զմարդիկ զրկելոյ։ Այնպէս ամենեւին իսկ վատթարագոյն այժմ միտք են նոցա. քան յառաջն։

Եւ զի ոչ զմարմնոցն կրթութենէ փոյթ յանձին ունիցին որպէս զառաջինն, զայն պատմեցից։ Վանգի օրէնք էին նոցա մի թքանել եւ մի ի վեր փրսխել. եւ յայտ է եթէ ոչ վասն ի խոնաւ անդր մարմնոյն խնայելոյ օրէնքն կային, այլ կամէին թէ աշխատութեամբք եւ քրտամբք պնդակազմն իցեն մարմինքն. բայց այժմ կայ պահի չթքանելն եւ չփսխել ի վեր, իսկ զվաստակելոյ ոչ ուրեք գոյ խնամ։ Եւ օրէնք էին նոցա յառաջագոյն մի անգամ հաց ուտել. զի զօրն ողջոյն ի կիր արկանիցեն ի գործս եւ ի վաստակել. իսկ այժմ կայ մնայ միանգամն ուտել. բայց սկիզբն առնեն հացին յայնժամ յորժամ ճաշիցեն որք ընդ այգն ճաշեն, եւ մինչեւ ցայն վայր ուտեն եւ ըմպեն, յորժամ սովորն իցեն ննջել որ անագանն ննջիցեն։

Եւ օրէնք էին նոցա մի դաշխուրանս ի գինըմպելիսն մուծանել. յայտ է եթէ համարէին իմն թէ շատն չըմպել չտայ մարմնոցն եւ մտացն սխալակել։ Բայց այժմ չմուծանելն կայ, իսկ ըմպել այնչափ ըմպեն, զի փոխանակ ընդ մուծանելոյն ինքեանք ի բաց հանիցին,

յորժամ ոչ եւս այնուհետեւ կարիցեն ուղղորդ ելանել։ Այլ եւ այն իմն գաւառական էր նոցա, զմիջոցաւ ճանապարհի ոչ ուտել եւ ոչ ըմպել, եւ ոչ երեւել իսկ յայտնի թէ առնիցեն ի պիտոյից անտի ինչ։ Նա եւ այժմ եւս ի նոցունց կարճեն զանձինս. բայց այնչափ կարճ ճանապարհ առնեն, զի չեն ինչ զարմանք կարճել ի կարեւոր պիտոյիցն։

Այլ եւ յորսս յառաջագոյն այնչափ ելանէին, մինչ զի բաւական լինէին որսքըն նոցա եւ երիւարացն ի հրահանգս կրթութեան։ Բայց իբրեւ Արտաշէս արքայ եւ որք ընդ նմայն էին ի գինւոյն պարտութիւն մատնէին, այնուհետեւ ոչ նոյնպէս ինքեանք ելանէին, եւ ոչ զայլս հանէին յորսս։ Եւ որք աշխատասէրք լեալք եւ հանդերձ հեծելովք որ զիւրեամբքք էին որս առնէին յայտ յանդիման խանտային ընդ նոսա եւ իբրեւ ազնուագոյնս քան զանձինս ատէին զնոսա։ Այլ զմանկտին ի դրունս խրատել, այն ցայժմ կայ պահի. բայց զձիոցն հրահանգս ուսանել չէք ի միջի, վասն չերթալոյ անդր ուր երեւեալք փառաւոր եւ քաջանուն լինիցին։ Եւ զի մանկտին լուեալ անդ յառաջագոյն զդատաստանն իրաւամբքք դատեալ, իրաւունս եւ արդարութիւն ուսանել, եւ այն ամենեւին իսկ փոփոխեցաւ։

Քանզի քաջիկ իսկ տեսանեն եթէ յաղ-
թեն որ առաւելն տան։ Այլ եւ զբու-
սոց երկրի զգօրութիւն մանկտին յա-
ռաջագոյն ուսանէին զի յօգտութիւնս
վարիցեն եւ ի վնասակարացն մերժիցին։
Բայց այժմ զնոցնս ուսանին զի աւելա-
գոյն վնաս գործիցեն։ Արդ ոչ ուրեք
յաճախագոյն մեռանիցին եւ ապակա-
նիցին ի դեղոց բայց անդ։

Այլ եւ այժմ կարի գիրգք եւ բա-
րեկեցիկք են, քան առ Կիւրոսի, քանզի
ի ժամանակին յայն Պարսից խրատու եւ
ժուժկալութեամբ վարէին բայց Մարաց
պատմուճանաւեւ փառաւորութեամբն։
Իսկ այժմ զՊարսից ճգունան նշմարեն
ի միջոյ բարձեալ, զՄարաց թուղամորթ
անառակութիւն պահեալ։ Յայտ կա-
միմ առնել զգրգութիւնս նոցա։ Քան-
զի նախ չէ բաւական նոցա զգահոյսն
փափուկս տարածանել, այլ եւ զմահ-
ճայն ոտն ի վերայ տախտակամած
յատակացն դնիցեն որպէս զի մի ի յա-
տակսն յենուցու, այլ տեղի տայցեն
յատակքն. եւ որ ինչ եփիցի վասն սե-
ղանոյ, որչափ յառաջագոյն գտեալ
իցէ ոչ մի ինչ ի նոցանէ մերժեն, այլ
եւ ցանգ իսկ եւ միշտ նորոգ հայթայ-
թանս հնարին. նոյնգունակ եւ խոր-
տիկքն. քանզի եւ նորագործս երկո-
ցունցն ստանան։

Նոյնպէս ամերայնի ոչ միայն զդլուխ եւ զմարմին եւ զոտս բաւական իցէ նոցա ծածկել, այլ եւ ի ծայրս ձեռացն ձեռս թաւս ունիցին: Նոյնպէս ամարայնի չիցեն շատ նոցա ոչ ծառոցն ստուերքն եւ ոչ քարանցն հովանիք. այլ ի նոսին այլ եւս հովանոցակս անձանց հնարին մարդիկ. եւ տաշտս եւ բաժակ թէ շատ ունիցին, նոքին իմն փառաւորք երեւիցին. իսկ եթէ յայտնի իսկ յապիրատութենէ հնարեալ իցեն, զայն ինչ չհամարիցին ամօթ: Զանգի յոյժ իսկ ստուարացան ի նոսա ապիրատութիւն եւ զաւշաքաղութիւն: Այլ յառաջն եւ այն իմն գաւառական էր նոցա թէ յորժամ հետիոտս գնայցեն մի յակն անկանիցին, ոչ վասն այլ ինչ իրաց, բայց զի քաջ հեծեալք լինիցին: Իսկ այժմ յոլովագոյն կազմած ի վերայ երիւարացն ունիցին քան ի վերայ մահճաց: Զանգի ոչ եթէ զերիվարաց ինչ փոյթ է նոցա որպէս ի փափուկսն նստելոյ:

Օ. Իսարդ չիցէ յիրաւի թէ այժմ ամենեւին ի պատերազմունսն վատթարագոյնք քան զառաջինսն իցեն, որոց յանցեալ ժամանակսն թուի ինձ թէ գաւառական օրէնք էին, զի ոչք երկիր ունէին, յերկրէ անտի տայցեն հեծեալս, եւ ոչք երթայցեն իսկ ի պատերազմ եւ ոչք պահպանիցինն, եթէ հասանիցէ տալ մարտ պատերազմի ի

վերայ աշխարհին, վարձկանք լինիցին։ Բայց այժմ դռնապանս եւ հացարարս եւ ամճաբերս եւ տակառապետս համարին, եւ որ սեղան առաջի յօրինիցեն եւ բառնայցեն եւ ննջեցուցանիցեն եւ զարթուցանիցեն եւ զարդարիչս՝ որ օծանիցեն եւ կոկեալ ողորկիցեն, եւ այլ եւս բազում ինչ նատեալ համարին։ Զ.սոսա զամենեսին արարին հեծեալս հարուստքն զի առցեն իւրեանց վարձս։ Արդ բազմամբոխ բազմութիւն ի նոցանէ երեւիցի, բայց չէք ի նոցանէ օգուտ ի պատերազմիս ոչ մի. եւ յայտ նոքին իսկ արդիւնք իրացն առնիցեն։ Բանզի յաշխարհի անդ նոցա դիւրագոյն թշնամիքն շրջին քան բարեկամք նոցա։

Զ.ի եւ Կիւրոս զբաւ առնէր ի հեռաստանէ նետիւք կռուելոյ եւ ագուցեալ զբահս նոցա եւ երիւարաց նոցա, եւ մի մի ասպար իւրաքանչիւր ումեք տուեալ ի ձեռս, անդէն ի մօտոյ մարտ եդեալ կռուէր։ Իսկ այժմ ոչ ի հեռաստանէ մարտնչին եւ ոչ առ միմեանս եկեալ կռուին։ Ունել ունին հետեւակքն սուսեր եւ դանակ եւ սակուր որպէս առ Կիւրոսիւ յորժամ տայցեն պատերազմ, բայց ձեռնամուխ լինել եւ ոչ սոքա ունին յանձին. եւ ոչ գերանդաղէն կառօքն այսուհետեւ վարին յայն՝ վասն որոյ գործեացն զնոսա Կիւ-

րոս. քանզի կառավարք էին նոցա մեծացեալ պատուոցն մեծարանօք եւ քաջք եւ առաքինիք որ յարձակեալ անկանիցին ի մէջ զինուց եւ սպառազինաց։

Իսկ այժմուքս եւ ճանաչեն իսկ ոչ զայնոսիկ որ ի վերայ կառացն իցեն. համարին յանձինս իւրեանց թէ չկրըթեալք հանդոյն կրթելոցն լինիցին։ Եւ ոմանք յարձակին մինչ չեւ ի թշնամիսն հասեալ, կէսք կամաւ իսկ դիմեն եւ կէսք ի բաց սրանան։ Որպէս զի յորժամ առանց կառավարաց լուծքն իցեն բազում անգամ վիշտս բարեկամացն եւ ոչ թշնամեացն հասուցանիցեն։ Բայց քանզի եւ ինքեանք գիտեն թէ որպիսի ինչ կար պատերազմի իցէ նոցա, տեղի տան. եւ ոչ ոք այսուհետեւ առանց Յունաց ի մարտ պատերազմի գրգռի, ոչ յորժամ միմեանց ճակատ տայցեն, եւ ոչ յորժամ Յոյնք զօրաժողով ընդ նոսա մարտ եղեալ կռուիցին. նա աւանիկ եւ ընդ Յոյնս իսկ ընդ Յունաց կամին տալ պատերազմ։

Թուի ինձ թէ զոր ինչ ի մտին եդի, հանի իսկ ի գլուխ։ Քանզի զՊարսից եւ զայնցանէ որ ընդ նոսա իցեն, խոստացայ յայտ առնել թէ առ դիսն ամպարշտագոյնք են եւ առ ազգակիցսն պղծագոյնք եւ առ այլսն անիրաւք, եւ ի պատերազմ այժմ ապաժամանք քան

յառաջն։ Ապեթէ զնոցին ինչ զհակառակոն ոք ածիցէ զմտաւ, միտ եդեալ նայիցի ընդ գործս իսկ նոցա եւ գտանէ թէ նոքին իսկ վկայք իմոց բանից լինիցին։